

# Megraget

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Zartarian, Roupen (1874-1915). Megraget. 1914.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'œuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

\*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

\*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici pour accéder aux tarifs et à la licence](#)

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

\*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

\*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter [reutilisation@bnf.fr](mailto:reutilisation@bnf.fr).



Ռ. ՋԱՐԴԱՐԵԱՆ



Զ. ԳԻՐՔ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿԱՐԳԵՐՈՒ ՀԱՄԱՐ

[Բ. Տպագրութիւն]


ԼՈՒՍԱՆԵՐ

Հրատարակչական Ընկերութիւն



Թիւ 9





Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

41473606

# Մ Ե Ղ Ր Ա Գ Ե Տ

Զ. Գ Ի Ր Ք


[ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿԱՐԳԵՐՈՒ ՇԱՄԱՐ]

ԼՈՒՍԱՂԲԻՒՐ

Հրատարակչական Ընկերություն



Թիւ 9



Կ. ԳՈՒԼԻՍ

ՏԳՈՐԱՆ «ՍԱՆՃԱԳՃԵԱՆ»

1914

Չ 4 7 2 9

2008-155289



ԼՈՒՍԱՂԲԻՐ

Հրատարակչական Ընկերություն

== ՕՆՆԻ-ՃԻՐԱՅՐ ==

Կ. Պոլիս, Ասմա Ալթը, Ճամբր Խան Ն<sup>0</sup> 6-8

## ԱՅՍ ԳՐՔԻՆ ՆՊԱՏԱԿԸ



**Մեղադատներու շարքին վերջին հատորն է այս, սահմանուած բարձրագոյն քացուցիչ կարգերու եւ միջնակարգ վարժարաններու: Այս ձեռնարկին նպատակն եղած է Մտքի եւ Արուեստի գեղեցկութիւններուն առջեւ զմայլումի հրաւիրել մեր նորահաս սերունդը, եւ այդ զմայլումի ստեղծագործ ազդեցութեան տակ՝ բեղմնաւորել աւսոր միտքն ու հոգին: Այս պատճառով, ամփոփուած են այս հաւաքածուին մէջ ո՛չ միայն թրքահայ եւ սուսահայ գրականութեան գեղեցկագոյն էջերը, այլեւ հաւասարապէս ձառագայթներ օտար գրականութիւններէ եւ մասնաւորաբար թուրք ժամանակակից գրողներու Մտքէն:**

Գեղեցկութիւնն ըմբռնելու համար կայ միայն մէկ միջոց,— գալ դէմ յանդիման անոր հետ, զմայլիլ եւ անով լեցնել միտքն ու հոգին: Գրագիտութեան չոր կանոնները ունայն են ու ամուլ: Պէտք չէ երբեք մոռնալ որ՝ այդ կանոնները դոյսութիւն ունեցած են ոչ թէ Գրականութեան ստեղծումէն առաջ, այլ անոր ստեղծումէն ետքը, շատ վերջը միայն արուեստի հրաշակերտներուն երեւան դալէն՝ որոնք իրենց կազմութեան ատեն, ոչ մէկ կանոն ու օրէնք ունեցած են իբրեւ ուղեցոյց՝ բացի ստեղծագործ հանձարէն: Գրականութեան ուսուցչին պարտքն է ուրեմն փոխանակ ապարդիւն կանոններ սորվեցնելու ուսանողին, անոր ընդհամարել տալ միայն Գեղեցկութիւնը՝ իր զգեցած զանազան ձեւերուն մէջ. ցոյց տալ թէ ի՛նչպէս կրցած են ըմբռնել զայն զանազան Արուեստագէտներ, ի՛նչ միջոցներու դիմած են զայն արտայայտելու համար, ո՛ր կողմերէն նայած են Բնութեան եւ Կեանքին՝ տեսնելու համար այն, ինչ որ ուրիշներ կա՛մ բնաւ չեն տեսած կամ տեսած են անոր մէկ մասը,— քանի որ Գեղեցկութեան դաշտը անհունապէս ընդարձակ է եւ լայն, եւ ամէն մէկ իմացակա՛նութիւն կարող է նոր բան մը գտնել եւ նոր բան մը հաղորդել տիեզերական Խորհուրդներէն:

Ահա թէ ի՛նչու կը հրաւիրենք ուսուցիչները՝ մէկ կողմ դնել գրագիտական կանոններու աննպատակ ծանրաբեռնումը տղուն մտքին վրայ եւ տրամադրելի ժամերը նուիրել գեղեցիկ էջերու ընթերցման

ու գեղեցկագիտական վերլուծման<sup>(1)</sup>, անոնցմով թաթալելու համար լոյսին բացուող իմացականութիւնները: Բաւական է որ գեղեցկութեան ճառագայթ մը իյնայ ընդունակ հոգիներու խորքը, անիկա պիտի արթնցնէ անոնց մէջ ինչ որ կայ կենսալից եւ պիտի մղէ վերթիւնը:

Գրագիտական կանոններէ աւելի մենք կ'աւաջարկենք ուսուցանել գրական սեռերու ծագման եւ զարգացման պատմութիւնը, ցոյց տալով այսպէս Արուեստին զանազան ձեւերը եւ անոնց կրած բարեշրջական փուլերը: Այս նպատակով ներկայ հաւաքածուին վերջը փորձած ենք ուրուագծել այդպիսի ծրագիր մը, թողլով որ գրականութեան դասախօսները ընդլայնեն զայն եւ դարձնեն կենդանի՝ իւրաքանչիւր սեռին համար վեր առնելով օրինակներ եւ վերլուծելով զանոնք ուսանողներուն հետ միասին:

Կովկասահայ գրականութիւնը պահած ենք իր սեփական բարբառով եւ իր լեզուական աւանձնայատուկ դրօշմով: Եւ այս բանին վրայ կը հրաւիրենք թրքահայ ուսուցիչներուն մասնաւոր ուշադրութիւնը: Հայ նոր գրականութիւնը մշակուած է ու կը զարգանայ երկու ուրոյն բարբառներու՝ Թիֆլիսի եւ Ա. Պոլսի հայերէնին միջոցով: Անոնցմէ իւրաքանչիւրը ունի իր քերականական որոշ կազմութիւնը եւ իր յատուկ նկարագիրը, որոնք պէտք է խնամով ուսուցուին հայ վարժարաններուն մէջ՝ որպէս զի կարելի ըլլայ Հայութեան երկու ամէնակարեւոր հատուածներուն միջեւ մտաւորական հաղորդակցութիւնը դարձնել հեշտ ու սերտ, եւ, մտաւոր գործունէութիւնը ներգոր ու արդասաբեր:

Հայ երկու բարբառներով մշակուած գրականութիւններուն ամբողջութիւնն ու միութիւնն է որ կը ներկայացնէ հայ Միտքը: Որքան մեծ տաղանդներ արտայայտուած են թրքահայ, նոյնքան եւ կովկասահայ բարբառին միջոցով. ցեղը, քաղաքական եւ այլ պայմաններու ազդեցութեան տակ, ինչ որ յաջողած չէ յայտնագործել թրքահայաստանի մէջ, յաջողած է զայն ընել Կովկասի մէջ, ու փոխադարձաբար: Մէկը կը լրացնէ միւսը, եւ շատ անգամ մէկը կը սրբագրէ միւսը: Ատենը եկած է ուրեմն որ, լրացուցիչ դասարաններու եւ միջնակարգ վարժարաններու մէջ, հաւասար հոգածութեամբ եւ հաւասար չափով աւանդուին երկու քոյր գրականութիւնները, նկատելով զանոնք անբաժան մասեր իրարմէ:

Առաջին անգամն ըլլալով նաեւ հայերէն հաւաքածուի մը մէջ, որպիսին է այս գիրքը, ջանացած ենք ներկայացնել մեր բնակակից մէկ կարեւոր ցեղին—Թուրքին—միտքը, աւելի շատ տեղ տալով ժամանակա-


(1) Այդ վերլուծման առիթով միայն յիշատակել, անհրաժեշտ գրագիտական կանոնը, ո՛չ թէ իբրեւ չոր կանոններու դաս, այլ իբրեւ բացատրութիւնը միայն արուեստին:

կից գրական դէմքերու: Կարող է այս նախափորձը ըլլալ անկատար, բայց երբեք զուրկ շահեկանութենէ: Պատմական եւ քաղաքական ճակատագրով միացած երկու ժողովուրդներ, որոնք կ'ապրին կողք կողքի եւ կը գործեն միասին, հարկ է որ զիրար ճանչնան մանաւանդ մտաւորապէս: Այդ փոխադարձ ճանաչողութիւնը պիտի օգնէ չնջելու շատ մը նախապաշարումներ եւ անհասկացողութիւններ, որոնք մեծ մասով հետեւանք են երկու ցեղերու միջեւ մտաւորական հաղորդակցութեան մը պակասին: Գրականութիւնն է մէկը այն միջոցներէն, որ կարող պիտի ըլլայ կամաց կամաց ներդաշնակութիւն ստեղծել երկու բնակակից ցեղերու հոգեբանութեան մէջ, կուտակուած դառնութիւնները չքացնելով ու անոնց տեղ ստեղծելով աւելի մարդկային, աւելի ազնիւ եւ երկու ժողովուրդներուն յառաջդիմութեանը ծառայող աւելի գիտակից զգացումներ:

Օտար գրական դաշտօրայքէն, լայնատարած եւ բազմաբեղուն, քաղած ենք միայն մէկ քանիները ամէնէն յարգի ծաղիկներէն, ցանկալով մեր նորահաս սերունդին տալ **Մեղրագետին** միջոցով, դոնէ կտոր մը խորիսխ, պատրաստուած բոլոր երկիրներու մտաւոր ծաղկաստանէն: Արուեստն ու Միտքը հայրենիք չունին, հարկ է անոնց լոյսին առջեւ լայնօրէն բանալ մեր տղոց իմացականութիւնները, որոնք որքան աւելի ողողուին այդ լոյսով՝ այնքան աւելի պիտի դառնան կենսալից եւ յուռթի:

1914, Ապրիլ 15

Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆ







## Պ Ա Պ Կ Է Պ Ս Ա Կ



Սիրելի՛ թոռնիկ, ես նորէն և կրկին քեզ պիտի պատկեմ, դու մի՛ կարծեր որ եկեղեցւոյ կամ քահանայի պատկ քեզ բաւական է : Այո՛, հոգեւորապէս և Աստուծոյ օրէնքով բաւական է և շատ : Բայց եթէ Պապիկ այդ պատկին վրայ իր պատկ չդնէ, դու անօթի կը մեռնիս : Ահա աղօթարան բացուեցաւ . հրաման արա մշակներուն, թող գութան սարքին, տանին գեղի մօտի խօզան աւաղարտ . պէտք է այժմէն վարինք, աղբնք այն արար և գարունը բանջարեղինաց պարտէզ աննք :

Լծեցէ՛ք գութան . դու տես հիմի, թոռնիկ, թէ ինչպէս պիտի պատկեմ քեզ : Գնա նախ գոմշուկներուն և եղներուն ճակատներ համբուրէ, արի գութանին մածին քով խոնարհիք գետին՝ մայրենի հող համբուրէ . ձեռքս մածին վրայ դրած եմ, համբուրէ՛ Պապկէ ձեռք և մածը . ահա քառասուն տար-

ուան մաճկայ Պապիկ, այսօր քեզ կը յանձնէ մաճկայութեան վսեմագոյն պաշտօնը, զոր Տէր Աստուած Աղամայ մեր մեծ Պապիէն տուաւ, որ գործէ երկիր և պահէ:

Յորևնաբոյսէ հիւսուած մի սիրուն, գեղեցիկ, բոլորակ պսակ շինեմ իմ ձեռքովս քեզ համար. բէր գլուխդ, Թոռնի՛կ, դնեմ այս իմ պսակ. և այս պսակը, Պապիէդ պսակն և յիշատակն է, երբեք չվերցնես գլխէդ մինչև մահուանդ օրը: Եւ երբ դու էլ կը ծերանաս Պապիէ պէս, այդ պսակ քո անդրանիկ որդւոյդ գլուխ դիր, և այսպէս որդւոյ որդի թող շարունակէ: Այդ պսակին խորհուրդ բացատրեմ քեզ, որ լաւ բնութենա և անեղծ պահես այս աւուր յիշատակ քո մաքին մէջ:

Աղնի՛ւ Թոռնիկ, իմ խորհրդաւոր պսակիս նշանակութիւն այս է. քահանան քեզ պսակեց Շուշանին հետ. Պապիկն այսօր քեզ կը պսակէ հողին հետ, գութանին հետ, դաշտի մշակութեան հետ: Եւ ինչպէս Շուշանին հետ կապեց քեզ քահանան, և դու տէր ես մինչև ի մահ, կարող չես զինքը թողուլ, նոյնպէս եւս Պապիկը քեզ պսակելով կը կապէ մայրենի երկրին հետ, որ յաւիտեան չպիտի թողուս և որ մեր հայրենի պատրեհական սեպհականութիւն է: Աղամն ստաց և մարդիկ կ'ասեն, թէ՛ կինը մարդոց կեանքն է. միթէ՛ հողն էլ մարդոց կեանքը չէ՞. մարդիկ աշխարհիս վրայ հացով կ'ապրին: Շուշան քեզ զաւակներ պիտի բերէ. հողն էլ ձեզ հաց պիտի տայ, դաշտի մէջ արածող կովն ու ոչխար՝ ձեզ առատ-առատ կաթ պիտի տան. կաթէն իւղ ու պանիր կը շինէք. այս ամէն բարիքներուն վայելքը հողէն չէ՞:

Այժմ, Թոռնի՛կ, ասա՛ մշակներուն՝ առնեն գութան և տաւարներ, դառնանք երթանք տուն, մայրիկիդ և Շուշանին պէտք է յայտնեմ դաշտի պսակի խորհուրդ:

Մտիկ արէ՛ք որ խօսիմ ձեզ, բարի՛ տանտիկին և Շուշան: Ես այսօր, նոր փեսայ Թոռնիկ տարի դաշտ. գութան լծել տուի, մաճը Թոռնիկին ձեռք տուի, ձեռքս գլխուն վրայ

դնելով՝ նահապետական օրհնութիւն կարգացի, և զինքը կրկին անգամ հողագործութեան հետ պսակեցի, հողին և գութանին հետ կապեցի. և գիտէ՞ք գուք, որ Պապկէ պսակն անքակտելի պէտք է լինի: Թոռնիկ այժմ երկու կին ունի, իմացէ՛ք, մի կինը Շուշանն է, որու հետ պսակուեցաւ սուրբ ամուսնութեամբ. մի կինն ալ հայրենատուր ժառանգութեան հողն է, որուն հետ ես կապեցի Հայր Աբրահամու օրհնութեամբ: Շուշանը զաւակներ պիտի բերէ Թոռնիկին համար, հողն ալ հայ պիտի տայ բոլոր ընտանեաց համար: Կ'աղօթեմ որ Աստուած պահէ Շուշանը և շատ ապրի. բայց Շուշանը մահկանացու է, թէ մեռնի, Թոռնիկ մի ուրիշ Շուշան ալ կը գտնէ: Իսկ եթէ հողը մեռնի, էն ժամանակ բոլոր Պապկէ տանն ընտանիք միասին կը մեռնին: Եւ ի՞նչպէս կը մեռնի հողը, որ Աղամէն մինչեւ էս օր կայ ու կը մնայ անմահ: Պօսիմ ձեզի թէ հողն ի՞նչպէս կը մեռնի. — այն անբախտ օրը, երբ Թոռնիկ ձեռքը մաճէն քաշելով՝ հողագործութիւն չի շարունակեր, կամ հարստանալով կը բարձրամտի՝ այլեւս ամօթ կը համարի գիւղին մէջ կամ գիւղական ընկերութեան հետ ապրիլ, կը թողու գիւղն ու հող՝ կ'երթայ քաղաքացի կը լինի: Եւ կամ դժբախտ օրեր կը հասնին իր վրայ, երբ յուսալով թէ շատ հողեր ունի, պարտք անելով իրարու վրայ կը բարդէ, պարտատէրն հողերը կը գրաւէ, ո՛հ, Թոռնիկն անհող կը մնայ:

Ահա այն օր հողը Թոռնիկին համար կը մեռնի, գրաւողին համար կենդանի կը մնայ: Այն օր, այս՛, Պապկէ տան ճրագ կը մարի, Թոռնիկ տանուտէր՝ վարձաւոր մշակ կը լինի: Աւա՛ղ, Պապկէ հարս, նապելի Շուշան՝ պիտի երթայ հացթուխ լինի գիւղին մէջ, իրիկուան մը քանի հաց գոգնոցին մէջ դնելով՝ բերէ իր ձօրկներուն: Թոռնիկին մայր, բարի տանտիկին, դու Պապկէ ետեւէն մեռիր, որ չտեսնես այն օր:

Կ'ըսե՞ս, Թոռնիկ. ա՛հ, Պապիկ. ի՞նչ չար գուշակութիւն կ'անես Թոռնիկիդ վրայ, բերանդ բարի բաց: Ո՛չ, Թոռնիկ, Աստուած չ'ընէ որ գուշակութիւնը ձեր վրայ կատարուի: Ես

կ'աղօթեմ որ դուք այն սեւ օրը չտեսնաք . ասոր համար այն սեւ աւուր ասուր կեանքի պատկեր նկարեցի ձեր աչքի առաջ , որպէս զի անսնաս ու յիշես Պապուդ հեռատես գուշակութիւնը , ամբողջ գորութեամբդ աշխատիս հողը ձեռքէ չհանել . ոչ միայն հողը քեզ պէտք է , որ հայ կուտայ քեզ , երբ աշխարհիս վրայ կ'ապրիս , այլ և անոր համար , Աստուած շատ արեւ տայ քեզի , որ երբ մեռնիս՝ գերեզմանիդ համար ալ երկու կանգուն հող պէտք է . չգիտե՞ս դու , մարդիկ գերեզմանի հողին վրայ ալ կը կուռին . վա՛յ անոր , որ կը մեռնի և թողուելու տեղ չունի , զի գերեզմանի հողն եւս մարդուն համար մի սեպհական իրաւունք է : Ասել կ'ուզեմ , Թոռնի՛կ , մարդ էր ծնած օրէն հողով կ'ապրի , և երբ մեռնի , դարձեալ հող պէտք է , որ անոր տակ թաղուի :

Այսպէս , Թոռնի՛կ , հողը պէտք է կեանքին և մահուան օրը , ասոր համար Պապիկը քեզ հողին հետ կատկեց ու պատկեց , որ պինդ գրկես հողը , շթաղուս որ ուրիշներ ձեռքէդ յափշտակեն , դու անհող մնաս , սորուկ լինիս , երթաս ուրիշի դռներ վարձկան մշակ դառնաս , և էն ժամանակ ձեր վրայ կատարուի Պապիէ կախարդ գուշակութիւն . և դու խեղաբերելով յիշես , աւա՛ղ , ես տանուտէր էի , նահապետ Պապիէս խրատներուն մտիկ չ'ըրի , այժմ անառակ օրդ ինչ պէ՞ս՝ վարձկան մշակ եղայ , թողլով իմ ոչխարներու հօտ , ուրիշներու նախիր կ'արածեմ . և շարաթր մի անգամ դռնէ դուռ շրջելով նախրահայ կը ժողովեմ :

Է՛ , սիրելի՛ Թոռնիկ , բաւական եղաւ , աւարտենք դաշտի սրակ և դաշտի դասերս : Ես պէտք է պատմեմ նաեւ գեղի էրէցուն և գեղացւոց , թող աշխարհ իմանայ թէ Առճակու Պապիկ էսպէս մի տարօրինակ բան արած է . իր Թոռնիկ նոր լիեսան տարեր է դաշտ՝ հողին ու գութանին վրայ պսակեր է . մարդ չգիտեր ի՞նչ պսակ է այդ , որ առանց քահանայի , առանց խաչի և Աւետարանի ու ժողովուրդի վկայութեան դաշտի մէջ կատարուեր է :

Թող մեր գիւղացիք այսպէս դատաստան ընեն . Թոռնի՛կ ,



բաւական է, որ դու լաւ հասկցար այս պատկին խորհուրդը . ես կը մեռնիմ, դու ողջ կը մնաս՝ կը տեսնաս յետոյ, գեղացին էլ կը հասկընայ և ողորմիս կուտայ Պապիկ հոգւոյն :

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

**ԽՐԻՄԵԱՆ ՄԿՐՏԻԶ (ՀԱՅՐԻԿ) (1820 – 1907).** – Խրիմեան Հայրիկ նոյնքան ինքնատիպ է՝ որպէս եկեղեցական ու գործիչ, որքան



գրող եւ բանաստեղծ: Առաջին ռահ-վիրան է գաւառական գրականութեան, ինքն հիմնած ըլլալով, 70ական թուականներուն, «Արծիւ Վասպուրականի»-ն եւ տպագրական մամուլ՝ Վանի մէջ: Իր գործերը կը բաժնուին երկու մասի, գրաբար եւ աշխարհաբար: Գրաբարներն են՝ Հրաշխակ Արարատեան եւ Հրաշխակ Երկրին Աւետեաց բանաստեղծական գոհարները: Աշխարհաբարներն են՝ Սիրաբ եւ Սամուէր, Գրախի Ընտանիք, Պապիկ եւ Թոռնիկ՝ գրուած ժողովուրդին համար եւ հովուերգական անկեղծ ջերմութեամբ մը: Վանգոյժ եւ Հայգոյժը ողբերգութիւններ են, խաչի ճառը եւ Մարգարիտ Արխայուրեան Երկնիցը՝ կրօնական ճառեր, ու ժամանակ եւ Խորհուրդի իւրը՝ փ՛լիսոփայական խորհրդածութիւններ:

Խրիմեան Հայրիկ բանաստեղծ է ամէն բանէ առաջ, այնպէս որ քնարական ոգին զգալի է իր բոլոր արձակներուն մէջ անգամ: Ոճը ինքնատիպ, լեզուն նոյնքան եւ զգացումները հաւասարապէս:

Եղած է Պատրիարք Կ. Պոլսոյ, ապա աքսորուած է՝ Համիտեան կառավարութեան կողմէ Երուսաղէմ, ուրկէ առաջնորդուեցաւ էջմիածնի Կաթողիկոսական աթոռը: Ծնած է Վան եւ մեռած էջմիածին:





## ԼՈՒՍՆԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՑ ՀԱՅՈՑ



Այ իմ լուսնակ գեղեցիկ, աստուածավառ դու լապտեր,  
 Զոր առաջնորդ գիշերուան դրաւ երկինքն ինքն Տէր .  
 Կոյր մթութեան աչք անսիակ, սրտիս ալ դու աչք կուտաս,  
 Երբ շողշողուն շղթայով կախուած շարժիս իմ վրաս :  
 Քու թեղն՝ երկնից արծաթէն հիւսած, պատրոյզդ ալ ոսկի,  
 Աղամանդէ կայծակներ սիրես աստղերդ չորս դի .  
 Եդի մեղրի նման կաթ մի ամանէդ յիս թափած  
 Կու խաղաղէ կրքերս զինչ ալիք լնիս հանդարտած :  
 Ռհ, ո՞նց պայծառ էիր դուն կենացդ երկրորդ գիշերին,  
 Երբ նոր քաշուած Աստուծոյ ճախարակէն ընդ երկին .  
 Ռհ, ո՞նց փայլուն էր քո լոյսն երբ առաջին այն անգամ  
 Գիշերագուարն պլպլուլիլըն ձգեց ձայն երկնահամ .  
 Շունչը պայծառ քեզ նման հովտէ հոսիտ կու խաղայր .  
 Հեզիկ հոսով թունդ ելած մաքուր առուակը հեւար .  
 Չկար ականջ հողեղէն որ զայն լսէր ու փառք տար .  
 Միայն հրեշտակք լսէին եւ շարժէին զքեզ վար .  
 Եւ դուն լռիկ չափեցիր անամպ երկնից կէս բոլոր ;  
 Ծով ու ցամաքի վարագոյր բացիր, ներքեւ մտար խոր՝  
 Երբ արեգակը կուգար հրեղէն ոտքովն յօդս ի վազ,  
 Արշալոյսի ցօղ սիրէր եւ առաւօտն հրամագ... :  
 Կացի՛ր, արեւ, յետ կացիր, մ'ե՛լներ երկինքդ կապոյտ,  
 Թող լուսնեկիդ ի ման զալ դեռ ի մէջ թուխ ամպերուդ .  
 Կա՛ց, կա՛ց, լո՛ւսնակ դու առաջ, լեռնէ ի լեռ սարէ սար,  
 Մէջ ձորերուս խորերուս անցի՛ր յուշիկ հաւասար .  
 Հետ քեզ ունիմ ես զանգատ, քեզ Նահապետն ունի բան,  
 Սիրտն երկուք է ճեղքուած, եւ ցաւերն, ո՛հ, զանազան :  
 Պայծա՛ռ լուսնակ, մի՛ փախչիր, թէ տրտմութեան լսես ձայն,  
 Ցաւած սրտի մխիթարանք ես դու կանգնել երկինքն այն .  
 Ման զաս երկիրն Եդեմայ, բայց ոչ ի հինն այն գիշեր,  
 Երբ երջանիկ էր դեռ մարդ, լոկ սէր ու կեանք կը յիշէր .



ձերմակ նաճանչդ յայնժամ տաք էր ջրերուն ու ծաղկանց,  
 Ուր որ կաթէր քու շաղիկ՝ կենդանութիւն էր անանց...  
 Գարծիր նայէ հիմ ի վայր, նայէ ի փէշ սարերուս,  
 Նայէ ի տափ տանարիս, եւ ի հողրանք գեղերուս...  
 Ա՛հ, գերեզմանքն են Հայոց, որ ոչ եւս են աշխարհի,  
 Մաշած նշխարք մեր հարանց՝ թաղուած ի խոր խաւարի:

Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ

**ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ (ՆԱՀԱՊԵՏ) (1820 - 1901)** —  
 Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան այն մեծաշուք դէմքն է  
 Հ. Ղեւոնդ Ալիշան՝ որուն մտքի լոյսը  
 ճաճանչած է երկար ատեն թէ՛ թրքա-  
 հայ եւ թէ ռուսահայ գրականու-  
 թեանց վրայ, որուն հայրենասիրական  
 շունչը եւ քերթուածներուն տաքու-  
 թիւնը ծաւալած են, տարիներ ու տա-  
 րիներ, 19րդ դարու մեր ազգային եւ  
 մտաւորական վերածնութեան արշա-  
 լոյսին մէջէն: Ալիշան, որպէս բազմա-  
 հմուտ քննասէր, խորապէս հետա-  
 դատած ըլլալով մեր երգիչներու եւ  
 միջնադարեան աշուղներու ոգին ու  
 ձեւը, կրցած է իր աշխարհաբար քեր-  
 թուածներուն մէջ՝ տալ իր քնարեր-  
 գութեան եւ իր լեզուին աշուղական  
 միամտութիւն, անկեղծութիւն եւ հա-  
 յադրոշմ քաղցրութիւն:



Ալիշան թողած է հայ գրակա-  
 նութեան՝ բազմաձեւ եւ հարուստ  
 ժառանգութիւն մը. իր Արարաքը,  
 Սխուանը, Շիրակը, Հայաստանը, Հայրուսակը եւ Հայոց հերանուսակաւ  
 Կրօնը՝ պատմական եւ ազգագրական ուսումնասիրութեանց պատկա-  
 ռազդու աշխատութիւններ են: Յուշիկի Հայրենեացը գրուած է նոյն  
 հայրենասիրական խանդավառ շունչով, իսկ Նուագքը կը պարունակէ  
 իր քնարական քերթուածները: Ալիշանի գործերուն թիւը կը հասնի  
 70ի, որոնցմէ 23ը դեռ անտիպ կը մնան:

Ծնած է Պոլիս եւ մեռած Վենետիկի Ս. Ղազարու կղզին:



## «ԵՍ ԻՆՁ ԸՆԵՄ ՀՈԳԻՈՎ»



Չմեռուլան անուշ կիրակիներէն էր, ցուրտ օդով մը որ աւելի քաղցր կ'ընէ տունը մնալու ետական հաճոյքը: Տան վարի սղտիկ սենեակին մէջ, ուր վառարանին տաքութեամբը թուլցած միմտորար ապրիլը հաճելի կ'ընէր այդ ստերիմ ու սպահով եղիութեան մէջ, երկու եղբայր մինակ մնացեր էին: Չարմայր սեղանին առջեւ անցած՝ պատմութեան գիրք մը կը կարդար, առասպելի աշխարհին սրտներուն մէջ մտորած: Պատուհանին առջեւ, սղտիկ Տրդատը, իր խաղալիները առած, լուրջ բան մը ընելու խորունկ ձեւով մը՝ անոնցմով կը զբաղէր:

Տրտում երգ մը երկնցաւ փողոցին ծայրէն. թաւ ձայնի կտորներ լայն ողբերգ մը կը թռցնէին՝ որ հովին մէջ կտոր կտոր կ'ըլլար: Տրդատ ականջ դրաւ: Չայները մօտեցան, խունկի հոտ մը մինչեւ սենեակին ներսը մտաւ, եկեղեցիի քաղցրութիւն մը բերաւ հան, ու պատուհանին առաջքը, թափօր մը երեւցաւ, խաչերով, մամերով, սեւազգեստ մարդերով: Յուզարկաւորութիւն մըն էր:

Տրդատ, զարմացած, նայեցաւ: Առջի անգամն էր որ իր կեանքին մէջ կը հանդիպէր այս տեսարանին: Չհասկցաւ զայն: Եւ ընազդարար, տղոց անյագ և բռնաւոր հետաքրքրութեամբը.

— Չարմայր, պոռայ, ի՞նչ է աս:

Չարմայր, դժգոհ իր ընթերցումին գինովութենէն սթափուելուն, գլուխը վեր առաւ, վայրկեան մը նայեցաւ, ու՝

— Մեռել է, մրմնջեց:

Յետոյ գլուխը գրքին վրայ կախեց նորէն:

Տրդատ, ապշած, դուրս կը նայէր. փողոցին վարի ծայրը, դեռ կ'երեւային սեւ մարդերը, և խաչը որ անոնց վերեւ օդին մէջ կը ցցուէր. ու ձայները լալագին, կ'երկննային փողոցին մէջ:



Մեռե՛լ :

Վախ մը չէր զգացածը , բայց անհանգստութիւն մը՝  
չհասկցուած բանէն , անծանօթին առջեւ վրդովուամբ :

— Ի՞նչ ըսել է մեռել :

— Զարմայր գիրքը ձգեց : Պզտիկին հարցումը իր ծի-  
ծաղը շարժած էր : Բզէ՛զ . դեռ չէր գիտեր :

Ու բացաարեց անոր .

— Ատ մարդիկը հիմա գերեզման կը տանին կոր մարդ  
մը որ մեռած է : Ատ մարդը ա՛լ չ'պիտի ապրի , ա՛լ աշխարհի  
վրայ չ'պիտի պալտի , ա՛լ պիտի չուտէ , պիտի չխօսի , պիտի  
չսուսնէ . . . :

Տրդատ , աչուրները բացած , մտիկ կ'ընէր : Խաղալիկ  
մը զոր ձեռքը բռնել էր , վար ինկաւ :

— Ի՞նչ , հիմա ատ մարդը ա՛լ պիտի չքայլէ՞ :

— Չէ՛ , հողին մէջ պիտի դնեն զայն , վրան ալ քար մը :  
Եւ հողին մէջ որդերը պիտի ուտեն անոր մարմինը : Աչքերը ,  
թեւերը , ոտքերը պիտի փրթին , հալին , և մինակ ոսկորները  
պիտի մնան :

— Ամէն մարդ ասանկ պիտի ըլլայ . ե՞ս ալ ասանկ պի-  
տի ըլլամ :

— Դուն ալ , ես ալ , հայրիկն ալ , մայրիկն ալ :

Ահագին սարսափ մը ցցուել էր Տրդատին պզտիկ հո-  
գիին մէջ , և այդ թարմ իմացականութիւնը՝ առաջին անգամ  
բաղխելով ջնջումի գաղափարին , կը ճզմուէր անկից : Չկրցաւ  
դիմանալ , ու վախու՛ն , սկսաւ լալ :

Զարմայր անոր քով եկաւ , անոր վախէն զուարճա-  
նալով :

— Խե՛նդ ես , Տրդա՛տ . վախնալու բան չկայ . դեռ շատ  
ատեն ունինք մեռնելու :

Տրդատ կու լար , սիրտը այնչափ կտարած՝ որչափ եթէ իր  
խաղալիկներէն մէկը կորսուած ըլլար :

Լացին ձայնէն մայրը վար վազեց :

Տրդատ , դայն տեսնելով , լացը շատցուց . թեւերը անոր վզին անցուց , ու գլուխը անոր երեսին դնելով :

— Մայրի՛կ , կը հեծկտար , ես պիտի մեռնիմ եղեր , դուն պիտի մեռնիս եղեր , ա՛լ պիտի չքալենք եղեր , ա՛լ պիտի չխօսինք եղեր . . . իրա՞ւ է . . . :

Զարմայր բացատրեց . ու մայրիկը , յուզուած , պզտիկը կուրծքին վրայ սեղմեց , և ըսաւ անոր , համբոյրներու մէջ .

— Մի՛ վախնար , աղա՛ս . մեռնելէն ետքը , նորէն պիտի ապրինք : Աս աշխարհէն ետքը ուրիշ աշխարհ մը պիտի երթանք : Մեր մարմինը պիտի մեռնի , բայց հոգինիս անդին պիտի երթայ :

Տրդատ լացը դադրեցուցեր էր :

— Հոգին . . . :

Քիչ մը խորհեցաւ , և հարցուց .

— Մինակ հոգի՞ս պիտի երթայ անդին . հասկա գլո՞ւխս , հասկա թեւե՞րս , հասկա սաքե՞րս :

— Անոնք հոգին մէջ պիտի մնան : Հոգին պիտի երթայ մինակ :

Այն ատեն , ճշմարիտ յուսահատութիւն մըն էր որ պայթեցաւ խեղճ պզտիկին միամիտ սրտէն :

— Ի՛նչ . . . ըսել է ա՛լ պիտի մայրիկը չտեսնե՞մ , ա՛լ հայրիկիս ձեռքը պիտի չքոնե՞մ , ալ պիտի չքալե՞մ , ալ կերակուր պիտի չուտե՞մ . . . է՛ , ի՛նչ ընեմ : Հոգիով ի՛նչ ընեմ ես :

Ու լացը նորէն սկսաւ , կատաղի , խորունկ , անյոյս լաց մը այս անգամ : Եւ մայրիկը , որ պատասխան չէր գտնիր , զգաց որ իր աչքերն ալ կը թրջէին :

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

**ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ.**— Ժամանակակից հայ գրականութեան միակ վարպետը՝ որպէս դեղագէտ-քննադատ, եւ առաջին ներկայացուցիչը, թրքահայ գրականութեան մէջ, Լըքոնդ տը Լիլեան բանաստեղծութեան: Իր լեզուն՝ դիւրաթեք, պատկերալից, գունաւոր եւ կատարեալ՝ կը մնայ միշտ տիպար եւ ընդօրինակելի: Զօպանեան Զօպանեան թուականներուն՝ թրքահայ քնարերգութեան մէջ կը բանայ նոր



Թուական մը, մտցնելով անոր մէջ իրապաշտ շունչը եւ նկարագրական կենդանի արուեստ մը, հակազդելով քնարական ուժմանթիզմին: Աշխատակցած է, որպէս գրական-քննադատ եւ գրական աշխատակից, Պոլսոյ նախկին Հայրենիք օրաթերթին, եւ հրատարակած է մինչեւ 96 թուականը՝ Ծաղիկ կիսամսեայ գրական հանդէսը: Ապա հաստատուելով Փարիզ՝ երկար տարիներ հրատարակած է իր Անահիտ պարբերականը, գրական, գեղարուեստական եւ ուսումնասիրական բաժիններով:



Իր առաջին հրատարակութիւններն են՝ Արշարոյսի Չայներ, Թուրքի Փառք, Թըրքոռումներ, Պետրոս Դուրեանի կենսագրութիւնը: Ֆրանսայի մայրաքաղաքին մէջ իր հիմնական նպատակներէն մէկն է եղած ծանօթացնել նաեւ հայ գրականութիւնը՝ օտարներուն, եւ այս ուղղութեամբ Հայ Յեղին մատուցած է խիստ մեծ ծառայութիւն: Ինք էր որ թէ՛ Հայութեան եւ թէ՛ օտարներուն լիակատար կերպով ծանօթացուց նահապետ-Քուչակ միջնադարեան հայ աշուղը, մէկը ամէնէն ինքնատիպ ու հոյակապ հայ երգիչներէն: Զօպանեան Ֆրանսերէն լեզուով հրատարակած է, ուրիշներու մէջ, նաեւ «Les Massacres d'Arménie», «Poèmes Arméniens anciens et modernes», «Chants populaires arméniens», «Les Trouvères arméniens», «L'Arménie, son histoire, sa littérature, son rôle en Orient», ինչպէս նաեւ հայերէն լեզուով՝ Նահապետ Քուչակի Դիւանը, Մկրտիչ Պեշկապաշեանի կեանքն ու գործերը, Մկրտիչ Պեշկապաշեանի ֆերբուածներն ու նաոները, իր Քերբուածներու հաւաքածուն, Նադաշ Յովնաթան Աշուղը եւ թարգմանութիւններ:





## Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Ն Ե Ր

Քրսանըչորս անդրիներ, ամէնքն ալ դիք ու աստուած ,  
 Բէլլու լերան սուր կատարն հին դարերուն հաստատուած՝  
 Դեռ կենսալից , տիրական , դեռ յաղթական ու հզօր  
 Կ'իշխեն , կ'ապրին , կը նային երկինքն ի վեր ամէն օր :

Երկինքն , ուրկէ Արեւն իր մաքրութեամբը տեւական  
 Կ'օծէ զիրենք՝ բերելով կեանք ու շնորհք բաւական  
 Այն վայրերուն ուր երբեմն Ամբոխն իբրեւ սուրբ նըւէր  
 Գիրկ զիրկ ծաղիկ , օրհնութիւն եւ պաշտամունք կը բերէր :

Քրսանըչորս աստուածներ բազինին մէջ տ ըխրամած ,  
 Ամայի ու աւերակ այդ բարձունքէն անկասկած  
 Դեռ կըսպասեն հըսկելով որ յապաղած Բուրմն իրեն  
 Անկեղծ զղջումն ունենայ եւ աղօթել զայ նորէն :

Շահապետներն ի զո՛ւր , բայց , անթարթ աչքով կը նային .  
 Մարդկային սիրտն հիմա հետտ արբեցութեան երկնային ,  
 Ականջ չի տար , չի լըսեր հին բարձրութեան յաղթապանծ ,  
 Շատունց մոռցած է աստուածն ու իր հրաշքն անթափանց :

Կատարներէն լուսազօծ այդ դարաւոր ու խոպան՝  
 Ուր կը կենան դիք իբրեւ բընակիչ ու պահապան ,  
 Լոկ արծիւներ կը թըռչին ահակըռինչ , թեւաբախ ,  
 Եւ իրկուններ մերթ հըպարտ , արհամարհոտ ու անվախ՝

Կ'երթան թառած կը նստին գլխուն վրայ մեծաշուք՝  
 Լըքուած , անտէր աստուծոյ մ'եւ մտամփոփ , անշըշուկ  
 Կը մըտմըտան , կը խորհին՝ երբ թեւերէն իրենց լայն ,  
 Հովը կ'անցնի սուրալով , սանտրըրուելով տըտմածայն :

Նրւիրական Բագինն ու մեծ աստուածներն յաղթական,  
 Խաղալիկ են արդ հովուն, ամպին, անգղին զաղթական,  
 Եւ երբեմնի աղօթքին, սուրբ փառքերուն տեղհիմա  
 Լոկ լրուութիւն ամայի, մահուան քունը կը մընայ:

Ռ՛վ հեզնութիւն, սակայն, հո՛տ աստուածներուն քով մինակ  
 Խաշնարած մը ծընրադիր, ժամանակէն անգիտակ,  
 Սըրինգ մ՛ունի բերանը եւ անխրոով, անարգել  
 Մեծ դարերու ձայնը դեռ կը յամառի դաշներգել:

Եւ ոչխարներն հրմայուած սուրբ Բագինին, Տանարին  
 Խորհուրդովն ու ահովն այն, աչքով գետնին կը յառին՝  
 Ոմանք հանգիստ մակաղած, ոմանք ծըռած կամ կանգուն,  
 Մըտիկ կ'ընեն Հովիւին աստուածային երգն՝ անքուն:

Աստուածայի՛ն, երկնաշո՛ւնչ նուագն, այո՛, այդ մանկան՝  
 Զո՛ր կը լսեն դիք անխօս՝ տէր զիտութեանց մոգական  
 Եւ իրենց լուռ հանութեամբ, թոյլ կուտան որ տեւէ միշտ  
 Քանի կեանքը կը ծաղկի դաշտերուն մէջ բազմավիշտ:

Որովհետեւ հարկ է որ տրրտմաթախիծ ու մըռայլ  
 Հոգիները բարձրանան բագինն ի վեր լուսափայլ,  
 Պարմանիներ հա՛րկ է որ՝ հաւատացեալ ուխտաւոր՝  
 Տանին իրենց ուժասպառ տրկար սրբութիւն ախտաւոր

Դէպի լեռը քաւութեան փողփողումի՛, արեւի,  
 Եւ շընորհքի, փրկութեան, երանութեան ծարաւի՝  
 Առնեն օծումն ու դառնան՝ հանդամրտ, խաղաղ, երջանիկ՝  
 Գեղի աղբիւրն հայրենի, հայրենի տ՛ունն ու տանիք:

Ռ՛վ աստուածներ, նըշանակ խորհրդա՛ւոր ու մըթին,  
 Ժամանակին, Անցեալին, Աղջամուղջին ու Մութին՝  
 Որ արբեցաք սափորէն անմահութեան ձեզ պահուած  
 Եւ ձեզ հետ ալ այս տրդան՝ դաշտի անհո՛գ խաշնարած:

# Մ Ե Ղ Ա Յ , Տ Է Ր

( Ն Ո Ր Ա Վ Է Պ )

## 1

Առաւօտեան ժամերգութիւնը նոր կը սկսէր. մթութեան մէջ կորսուած դեկտեմբերի առաւօտ մը, ցուրտ ու խոնաւ. կոչնակը օդին ու փուքին մէջ կ'արձակէր իր ընդհատ վայելներ, մինչդեռ թափուր եկեղեցին պանդուխտ քահանային ձայնովը կ'արթննար, կը սարսուար իր քարակոփ պատերուն ու կամարներուն մէջ:

Տէրտէրը՝ կ'երկնցնէր իր աղօթքը, սպասելով բարեպաշտներուն որ չէին դար. վասն զի ո՞վ կուգար եկեղեցի, ձմեռ ու լուր օր մը, այս չուսցող առաւօտով:

Քահանան շուրջառը ուսին, իր ժամերգութիւնը կը շարունակէր.

«Տէ՛ր, զի բազում եղեն մեղք իմ և բազում անօրէնութիւնք իմ:»

Խուլ ու տարտամ ձայնով մը որ տիրող կէս մթութեան կը յարմարէր, անտարբէր իր շուրջի միայնութեան, և անըզգայ ձայնագրի մը պէս արտասանելով աղօթքին սուները, իրեն համար քսան տարուան սովորութիւն մը:

Յետոյ երկրորդ ստուեր մը տեսնուեցաւ իր քովը. լուսարարն էր, այս որմերուն պահապանը, անոնց պէս ամուր իր պաշտօնին մէջ, սիրելով այս ստուերները, այս լքումը և կամարներէն կախուած կամ սուրբերու պատկերներուն առջև հաստատուած կանթեղները՝ որ իր հիւանդագին զաւակներն էին գրեթէ, փութալով անոնց քով, մէկէն միւսին, անոնց շարունակ սպասելու մօտ կեանքը արժարժելով:

Քիչ քիչ մէկ երկու հոգի ևս երևցան, — ժամկոչը, յետոյ մուրացիկ մը իր փայտէ գաւազանին կռթնած. ու յետոյ եր-

կու պանդուխտ որմնադիրներ, հազիւ քուներնուն արթնցած :  
Հիմա առաւօտը կը ճշտուէր. կանուխ գործի գացող բանուոր-  
ներ կուգային խաչ մը հանելու դռան մօտ և յաջողութիւն  
ինդրելու. ժամուն սովորական եկողներն ասոնք :

## 2

Սարաֆը ուշ եկաւ եկեղեցի այն առաւօտ. ժամերգու-  
թեան կէսին միայն հասաւ, ինք որ դայն ծայրէ ծայր ըսե-  
լուն կը պարծենար :

Դուրսը տիրող ցուրտին հակառակ, քրտնաթոր մտաւ  
ներս, ծանրաչարժ ու պարարտ մարմնին բեռանը տակ շըն-  
չասպառած՝ երեսը խաչակնքեց, ծնրադրեց, ֆէսը վար առած,  
ցոյց տալով իւղոտ ու հերթափ գանկ մը. յետոյ բարձրաձայն  
հառաչանք մը ելաւ կուրծքին խորէն.

— Մեղա՛յ, Տէ՛ր :

Երբեք մեղայ բառը այսքան ստոյգ անձկութեամբ, այս-  
քան անկեղծ ապաշաւի մը արտայայտութեան ձեւով լըս-  
ուած չէր :

Դասին մէջ չոքած սարաֆին կլոր մարմինը, ծուած գլու-  
խը, կիսափակ աչքերը, ողորմելի ու գթութեան արժանի  
պատկեր մը կը ձեւացնէին աստուածային դայրոյթին տրա-  
մադրութեան տակ դրուած. և ինք յանցանքներուն մեծու-  
թեանը չափ այսպէս անկեղծ զղջումի մը գա՛լով միայն թո-  
ղութիւն առնել կ'ակնկալէր կարծես, երբ հետզհետէ կը կրկ-  
նէր, մարող, սպառող ձայնով մը, առանց քաշուելու զինքը  
լսողներէն.

— Մեղա՛յ, Տէ՛ր, մեղա՛յ, Տէ՛ր :

Յետոյ թեթեւցած, ստքի ելաւ ու իր հաստ ձայնը՝ տէր-  
տէրին ձայնին միացաւ. ու լուռ եկեղեցին կ'ապշէր, կը խռո-  
վէր, ունկնդրելով այս մարդուն :

Ինքը իր տանը մէջ ըլլալ կը թուէր. դասը, գաւիթը,  
խորանը բոլորովին իրն էին անշուշտ. ինք կ'ըսէր աղօթքը  
միայնակ քահանայէն առաջ, բառերը հատիկ հատիկ, ամէն

պարբերութեան նշանակութիւնն ու սրբութիւնը շեշտելով • պահ մը կը յոգնէր, շունչ առնելու կը ստիպուէր, ու վայրկեան մը վերջը նորէն կը սկսէր, ընդմիջելով քահանային անորոշ մրմունջը և ծուռ ծուռ նայելով անոր երեսը՝ երբ սխալ մը սպրդէր կամ վարանում մը տեսնէր նոր տուն մը սկսելու ատեն :

Վայրկեան մը նորէն կը մասնաւորէր իր աղօթքը, անհամար ծնրադրութիւններով խառնուած, համբուրելով գետնին աղան ու փոշին, և լալազին ու սրտաշարժ ձայնով մը վերադառնալով իր անձին :

— Մեղայ, Տէր :

### 3

Մարտիրոս աղան այսպէս էր ամէն առտու, անպակաս եկեղեցիէն, իր ներկայութեամբը ապահովելով եկեղեցւոյն բոլոր ծէսն ու արարողութեանց կանոնաւորութիւնը, և ոչ մէկուն փախուստի ճամբայ չձգելով շարականներէն բառ մը պակաս կարդալու համար :

Քահանան այս աշխարհականին բարեպաշտութենէն կը դողար. քարոզիչն ու Թաղական Խորհուրդը կ'ակնածէին իրմէ և գիւղացին կը մեծարէր այս հաւատացեալ Աղան, որ իր բոլոր դրամին հակառակ, աղքատի մը պէս խոնարհ ու աստուածավախ կը թուէր :

Պոլիս, իր խանութին մէջ, Մարտիրոս աղա մեծազօր մարդ մըն էր : Հայր ու մայր շունէր. փոխարէն հօրեղբայրներու ու հօրեղբօրորդիներու անհատնում շարք մը՝ որ փոխն ի փոխը կուգային իր քով սովրելու դրամ շահելու արհեստը, յաճախորդներու հետ վարուելու կերպերը, բայց գիշերը տունը սարաֆին հետ «Եկեսցէի» կենալը աչք առնելով : Այսպէս, անոր մէկ մէկ մանրանկարները կը դառնային, Աստուածասիրութիւնը Դրամասիրութեան հետ հաշտեցնելու գաղանիքը գտնելով :



Բայց անոնցմէ ոչ մին Աղային հարատութիւնն ունենալու հնարքը կը տեսնէր :

Իրենց ժառանգական վաշխառուի բոլոր ճարտարութեամբը, ստակ փոխ տալու ձեւով աշխարհ կողոպտելու բոլոր խորամանկութեամբը, ո՛չ, այդ հարատութեան չէին կրցած տիրանալ, և ինքնիրեննին, երբ մեծաւորներուն քով կեղծաւորութիւն ընելէ ու սպասաւորի դիրք մը ունենալէ տաղտկացած, բերաննին բանային, կը հասկցուէր որ իրենց խելացի աղգականն ինչպիսի դէպքերէ կրցած էր օգուտ քաղել :

#### 4

Հայրենիքէն գրեթէ բոլոր եկաւ Պոլիս, նիհար ու վատուծ պատանի՝ որ խամերու, քարուկիր սենեակներու խոնաւութեան մէջ ծառայութեամբ հաւաքած հինգ հարիւր դրուշով բացաւ իր սարաֆի տօլապը. ճշմարիտ տօլապ մը զոր մինչեւ այն օրը ոչ ոք իրեն չափ վարպետութեամբ դարձուցած էր : Իր հայրենի քաղաքին մէջ զոր Մարտիրոս մեր երկիրը կը կոչէր, տիրացութիւն ըրած ու ժամասիրութիւն ժառանգած էր ադկէ :

Իր աղքատութեան, որբութեան բոլոր թշուառութիւնները տիրացուի զգեստը հագնելով կը մոռնար, և Աստուծոյ առջեւ, Աստուծոյ տան մէջ, իր անկեալ դիրքէն կը բարձրանար յանկարծ ուրիշներու հաւասար ըլլալու, և իր ջերմեռանդութեամբը զանոնք գերազանցելու չափ : Եւ ինչպէս չսիրէր եկեղեցին՝ ուր ո՛չ հարուստ ըլլալու, ոչ բաղդաւոր ըլլալու պէտք կար Աստուծոյ աչքին : Այսպէս, երջանիկ ապրեցաւ քանի մը տարի. մտածեց որ երկնից թագաւորութիւնը տնանկներու յատկացուած է ու մխիթարուեցաւ իր ներկայ չքաւորութենէն : Բայց երբ տան և ութ տարին թեւակոխեց, բռնի Պոլիս դրկեցին զինքը մարդ ըլլալու համար, իբրև թէ աղքատ ըլլալուն համար մարդ եղած չըլլար մինչեւ այդ ժամուն :

Իր տաժանելի ուղեւորութեան միջոցին, յետոյ շոգենա-

ւին մէջ և մանաւանդ Պոլսոյ մէջ, իր համոզումները, սփոփանքները անբաւական մնացին :

Ի՛նչ, այս մայրաքաղաքը երկրին չէր նմաներ բնաւ . Ակնայ տնակներուն երդիքը, գեղացիներուն շալվարը, կիներուն աղտոտ լաշակը չտեսաւ հոս . նոր աշխարհ մը՝ նոր գաղափարների արթնցուց . վայելքի պէտքը՝ դրամի պէտքը ցուցուց : Իր բարեպաշտութիւնը որ մինչև այն ատեն անչահասէր էր, պահանջող, ուզան բերան դարձաւ :

Մայր եկեղեցւոյ մէկ անկիւնին մէջ քաշուած, անհատնում աղօթքներու ու շարականներու քաղուածքով՝ ստակ և դա՛րձեալ ստակ ուղեց Աստուծմէ, և իր աշխատութեան փոխարէն առած չնչին գումարները որ զինք կը շրջնէին, աստուածային պարգեւներ կը համարէր և իր աղօթքներուն վարձատրութիւնը :

Այսպէս իր աւելտուրն աստուածասիրութեան հետ խառնուած մնաց . այն բոլոր առիթները ուսկից դրամ շահելու կարելիութիւն նշմարեց, իր օգտին համար Աստուծոյ կողմէ յատկապէս կարգադրուած նկատեց ու բան մը չհարցուց ա՛լ իր խղճին : Աստուած իր ըրածը չէ՞ր գիտեր միթէ :

## 5

Անգամ մը միայն տարակուսուեցաւ, վարանում մը զգաց :

Անոր բարեպաշտ մարդու համբաւէն խաբուած, իր մահամերձ բարեկամներէն մէկը՝ մեծ, խիստ մեծ, իր շտեմածին չափ մեծ գումար մը աւանդ յանձնեց իրեն, մահուրնէն վերջը այդ գումարը ազգին ու իր ազգականներուն մէջ բաժնելու խնդիրքով . ու Մարտիրոս աղա նախ չհաւատաց այս անակնկալ վատահուժեան, հիւանդին անկողնին քով նստած, սենեակին դուռը գոց, նախ անդամադրելի մարմաջ մը զգաց այդ գումարը տեսնելով՝ զոր հիւանդը փոքրիկ սնտուկէ մը կը հանէր . յետոյ հիւանդը հոն խղդելու և ստակներն յափշտակելով փախչելու գաղափար մը ունեցաւ, յիմարի գաղափար մը . բայց այս փորձութեան դիմադրեց . ի՛նչ հարկ անոնց, միթէ Աստ-

ուած իր դէմը հանած չէ՞ր այս հիւանդը . ու Աստուծոյ թողուց որ իր ուզածին պէս տնօրինէ ամէն ինչ :

Մարտիրոս աղանախ դիմադրեց , չուզեց ընդունիլ այս աւանդը , ցած ձայնով , վախնալով որ դրան մօտ սպասող մէկը չլլար ու իմանար այս աւանդին ինդիրը . յետոյ քիչ քիչ սկարացաւ , աւանդին պայմանները հարցուց . նախ է՛ն գլխաւորը , տոկոս պիտի տա՞ր . ո՛չ , ըսաւ հիւանդը . այն ատեն ա՛լ անձնատուր եղաւ , ստացաւ աւանդը , և Աստուածաշունչէն հատուածներ բերաւ՝ մահամերձին ազգասիրութիւնը գովելու համար :

Հիւանդը մեռաւ և յուղարկաւորներուն մէջ Մարտիրոս աղա իր արցունքներովը , անկեղծ ու անմահ կսկիծով մը ննջեցեալին ամէնէն սրտակից բարեկամը համարուեցաւ :

Յուղարկաւորութեան տեւած բոլոր միջոցին , բոլոր ճամբուն երկայնութեամբը՝ այս մեռած մարմինին վրայ խօսեցաւ , անոր բարեմասնութիւնները , պարկեշտութիւնը գովեց , անոր կեանքէն մասնաւոր դէպքեր պատմեց և լացաւ , մինչդեռ ուրիշներ , դազաղին ընկերանալով հանդերձ , իրենց քամեալին , ֆօնեօիմենթօյին , բիացալին խօսքերը կ'ընէին . Մարտիրոս աղա զայրացաւ ու իբրեւ թէ ինքն ըլլար այս անձան խօսակցութիւնն ընողը , կսկիծալի ձայնով մը գոչեց .

— Մեղա՛յ , Տէ՛ր :

Մարդիկը լռեցին վայրկեան մը , քանի մը քայլ ալ ըրին լռութեամբ . յետոյ մէկը , պասմայի վաճառական մը , շարունակեց իր խօսքը .

— Աճէմներուն պէրաթները ձեռքէ հանելու է :

## 6

Մարտիրոս աղա անկէ վերջը իր բարերարը նկատեց նրնջեցեալը . թող չտուաւ որ մէկը գէշ ըսէ անոր վրայ . միթէ այս մեծ հարստութիւնը անոր չէ՞ր պարտեր . ո՛չ , ապերախտ մարդ չէր . յետոյ այդ աւանդը իւրացնելու համար իորհեցաւ ամիսներով . նախ ըսաւ որ իրաւունք չունէր ու ըիչին ինչքը գողնալու . վերջը ինքն իրեն հարցուց թէ ինչո՞ւ Աստուած

իրեն յանձնել տուաւ այդ աւանդը և ոչ ուրիշի մը . այս հարցումը իր տարակոյսները վանեց . Աստուած այս առիթը կը ներկայացնէր իրեն՝ հարստանալու համար . և ինքն իբրեւ խելացի մարդ՝ առիթէն օգուտ կը քաղէր , մինչդեռ անխելք մը այդ բանը պիտի չմտածէր . այսպէս բացատրեց Աստուծոյ կամքը և ճշմարիտ գոհունակութեամբ մը աւելցուց .

— Կամք Տեառն օրհնեալ եղիցի :

Անդին ննջեցեալին ազգականները կարօտութեան , չքաւորութեան մէջ կը մնային . անոր այրին Մարտիրոս աղային կը դիմէր պղտիկ օգնութիւն մը հայցելու համար , իբրեւ իր ամուսնին սրտակից բարեկամէն :

Մարտիրոս աղա չզլացաւ այդ օգնութիւնը . բայց այս դիմումը իր տարակոյսները նորէն արթնցուց . պահ մը խորհեցաւ որ իր բրածը ճշմարիտ գողութիւն մըն էր . բայց ո՞ր մեղքը թողութիւն չստանար եթէ մարդս մեղայի գայ . ու այս յայտով , սարաֆը թախանձազին ներում մը խնդրեց .

— Մեղա՛յ , Տէ՛ր :

Պահ մըն ալ ըսաւ որ ազգականներուն դրամը տայ , բայց ազգին դրամը պահէ . ի՞նչ է վերջապէս ազգին դրամը . չէ՞ մի որ ուրիշ մը պիտի ուտէր :

Այս վարանումներով կը պահէր , այսինքն կը գործածէր ստակը որ իր ճարպիկ ձեռքերուն մէջ արդիւնաբեր կը դառնար , բարեբաղդ դէպքերով կը կրկնապատկուէր , այնքան որ՝ այս յաջողութիւնն իր գողութեան արդարացումը կ'ըլլար և իր զղջման ընդունելի եղած ըլլալուն ապացոյց , — զղջում մը զոր սովոր էր ա՛լ յայտնելու ամէն առթի , խորունկ հաւատքի ձայնով մը .

— Մեղա՛յ , Տէ՛ր :

Գ. ԶՕՂԱՊ

**ԳՐԻԳՈՐ ԶՕՂԱՊ.**— Թրքահայ գրականութեան մէջ առաջին վարպետը իրապաշտ գրականութեան եւ իշխանը նորավէպի արուեստին : Կտրուկ եւ հզօր ոճ մը՝ որ արուեստի տեսակէտով կատարելութիւն , իսկ հրատարակախօսութեան մէջ պողպատեայ գէնք մըն



է, մէկ երկու բառով ամբողջ պատկեր մը վրձնելու ճարտարութիւն, դիտելու եւ վերլուծելու մեծ տաղանդ՝ ահա նկարագիրը Ք. Զօհրապի գրականութեան: Իր նորավէպերը՝ յանդուգն եւ խիզախող, բացատրութիւնն են ընկերային կեղծիքներուն, յայտնութիւնը՝ Պոլսոյ բարձր դասի ներքին փտախտաւորութեան, եւ պատկերը՝ կեանքի հակադրութիւններուն:

Իր նորավէպերու շարքին հետ զուգահեռաբար՝ բոլորովին նոր սեռի մը՝ գրական դիմաստուերներու վրձնումն է, որ առաջին անգամն ըլլալով փորձած է Զօհրապ մեր մէջ, ներկայացնելով մէկ քանի յատկանշական գծերու մէջ գրագէտներ ու հանրային գործիչներ, — այնպէս՝ ինչպէս որ են անոնք, իրենց առաւելութիւններով ու թերութիւններով. եւ իբրեւ դիմանկարիչ եւս Ք. Զօհրապ մնացած է մինչեւ այժմ անմրցելի:

Զօհրապի գործը սահմանափակուած չէ սակայն զուտ գեղարուեստական ստեղծագործութեան մէջ, այլ ընդլայնուած է հաւասարապէս նաեւ հրապարակագրութեան մէջ՝ յուզելով ընկերային հարցեր եւ պաշտպանելով արմատական ու նոր գաղափարներ՝ պողպատեայ ոճով մը:

Հրատարակած է Հրանտ Ասատուրի հետ Մասիս գրական շաբաթաթերթը, մասնակցած է Պոլսոյ լրագրական կեանքին եւ վարած է 1896էն ետք նախ Մասիս եւ ապա Արեւելք օրաթերթին խմբագրատնութիւնը մէկ երկու տարի: Իր գրական գործերու շարքը սկսած է արդէն լոյս բերել հատոր հատոր. հրատարակուած են մինչեւ այժմ Խղճմանի Զայներ, Կեանքի ինչպէս որ է եւ Լուռ Յարեր:





## Ա Ն Ց Ն Ե Լ ՈՒ Մ Օ Տ

Լոյսի փունջ մը , շող շիւղերու կուռ հիւսկէն,  
 Հորիզոնէն վար հուր եւ բոց կը թափէ .  
 Լերան ծայրը ցոլքեր մուծը կը պըրկեն  
 Ցանցի մը մէջ լայն վերտերով սատափէ :

Քունէն զարթած կ'երգէ մարին վարուժան  
 Ոստերն ի վար կախուած բոյնին մէջ տամուկ .  
 Դաշտերուն մէջ հոյլ հոյլ զառներ կը խըժան  
 Շաղով օծուած մարմանդներուն մէջ համուկ :

Շամբերուն հոծ շուքին տակէն դողդոջուն  
 Դէպի ծովուն ափերն ի վար աւազէ ,  
 Ուր փըրփուրին կը նըշմարես վախկոտ չուն ,  
 Կուսածիծաղ առուն վէտ վէտ կը վազէ :

Ոչ հըմայքէն առունն տենդոտ կարկաջին,  
 Շողին , ցողին լոյս ծիծաղէն արծաթի ,  
 Ոչ ալ այգուն ջերմ համբոյրէն առաջին  
 Մեր սըրտին մէջ վարդ անուրջ մը կը ծաթի :  
 Մենք չենք սիրեր կեանքն յորդաշունչ, կենդանի .  
 Անցնե՛լու մօտ իրերն ըզմեզ կը կարթեն .  
 Ու կը ցաւինք , երբ բաղդն հեռու կը տանի  
 Ինչ որ երէկ արհամարհած ենք արդէն :

Մենք կը սիրենք , երբ արեւը ծիրանի՝  
 Հալած, հատած մոմի նըման ոգեվար՝  
 Ալիքներուն զոգն իյնալով շիջանի  
 Սողոսկելով խարակներէն զառ ի վար :

Ծաղիկները , զոր կը թողունք որ ցամքին  
 Թօնուտ օղին , ցուրտ արեւին տակ աշնան ,  
 Ծառաներու յանձնած կոպիտ խընամքին ,  
 Թռամելու մօտ՝ կարծես յանկարծ կ'անուշնան :



Սըրուակները, որոնց բոյրը կը հատնի,  
Ս'լ աւելի մեզ սիրելի կը դառնան,  
Ինչպէս դեղնած սիրոյ թըղթիկ մը գաղտնի,  
Ձոր կը պահենք գուրգուրանքով անսահման:

Եւ մեր սէրը՝ ոսկեփետուր թըռչուն բիլ,  
Ձոր անսրլաղ կը լըքանենք շատ հեղ մենք,  
Երբ թեւ կ'առնէ, կ'ուզէ մեզմէ խուսափիլ,  
Գողղըղալով մեր հոգւոյն մէջ կը սեղմենք:

Մըրմունջները որոնք հեռուն կը մարին,  
Կոչնակները, հաչիւնն անգամ շուներուն,  
Գորշ ամպերն իսկ փակած կապոյտ կամարին,  
Մեկնելու մօտ՝ հըմայք մ'ունին օրօրուն:

Յուզմունքներն ալ կը վրդո՞վեն մեր հոգին  
Եթէ չըլլան երազի պէս թեւաւոր.  
Եւ կեանքն արդեօք կ'ըլլա՞յ այնքան թանկագին,  
Այնքան անուշ, երբ չըսպառնայ մահն անոր:

ՍԻՊԻԼ

**ՏԻԿ. ԶԱՊԷԼ ԱՍԱՏՈՒՐ (ՍԻՊԻԼ).**— Հայ  
գրականութեան մէջ, իբրեւ քերթողուհի,  
Տիկ. Զապէլ Ասատուր կը մնայ առաջինը  
եւ միակը: Ունի ոճի այնպիսի նրբակերտ  
հիւսուածք մը եւ զգացումներու այն-  
պիսի երանգալից ու թաւշային գեղեցկու-  
թիւն մը, որ իր քերթուածները կը վե-  
րածեն երաժշտութեան եւ իրեն կուտան  
թրքահայ ժամանակակից բանաստեղծու-  
թեան մէջ ամէնէն յարգի ու պատուի տե-  
ղերէն մէկը: Իր քերթուածները ամփո-  
փուած են Յոյսեր անունով հատորի մը մէջ:

Տիկ. Զապէլ գրած է նաեւ Օր. Ալիս  
Ծածկանունով Աղջկան մը Սիրքը վէպը:





## ԱՆԻ ԱԻԵՐԱԿՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Ինչ ալ ըլլայ անոնց (Հայերու) բաղդը,— իսկ ան սխրագին էր,— ինչ ալ սպասէ անոնց՝ ապագային մէջ, իրենց [երկիրը միտս կը մնայ ամենէն հետախրատականը աշխարհի երեսին:

ՊԱՅՐԸՆ

Որոշելով այցելել հայկական մայրաքաղաքին աւերակները, որոնց մասին Ռուսիոյ մէջ չափազանց տարտամ գաղափար մը միայն ունին, ճամբայ ելայ գիշերը Թիֆլիզէն և հետեւեալ օրը հասայ Ալեքսանդրապօլէն ոչ հեռու գտնուող Անի փոքրիկ կայարանը, ուրկէ ճամբան ուղիղ կը տանի մինչև հինաւուրց մայրաքաղաքին աւերակները:

Ջերմութիւնը արտասովոր էր, և շրջապատող լեռները, որոնց մէջ կան նաեւ ձիւնապատ գագաթներ, կը չքանային մոխրագոյն, հրաջերմ ծուխի մը մէջ:

Զառիվերներէն մէկուն վրայ յանկարծ նշմարեցի բարձր, գմբէթաձև ձիւնապատ գագաթ մը, որ կը ծառանար շրջապատող լեռներուն մէջէն: Իմ այն հարցումին թէ ի՞նչ լեռ է աս, կառապանը պատասխանեց.

— Արարատը:

Չեմ կրնար ըսել թէ ևս ալ զգացի նոյն յուզումը, որ կը նկարագրէ Պուշկին իր «Ճանապարհորդութիւն դէպ ի Էրզրում» գրքին մէջ: Պետք է ըսել որ Արարատը աւելի քիչ ուշագրաւ է քան Էլբրուսը կամ Կադբէկը. չափազանց միազանգուած է ու միակերպ:

Մէկուկէս ժամուայ ճամբորդութենէ ետքը, դէշ և խորտուբորտ ճամբով մը, որ կ'անցնի բլրապատ դաշտային վայրէ մը, հասանք փոքրիկ գիւղակ մը՝ որմէ մինչև պեղումները մէկուկէս քիլօմէդր տարածութիւն է: Մեր առաջնորդը վերցուց մեր փոքրիկ կապոցները և մենք իջանք խոր ձորակը, որուն յատակէն կը հոսի արագավազ լեռնային գետակը, Արփաչայը, Արաքսի ճիւղը, ուրկէ կը սկսէր, Պուշկինի աստն,



Թրքական սահմանը : Նախնական մակոյկով մը փոխադրուեցանք միւս ափը և բաւականաչափ զառիւլեր , իւր ձորն եղերող շաւիղով սկսանք բարձրանալ լեռը և շուտով հասանք հին քաղաքին գլխաւոր դուռը :

Անին կը ներկայացնէ եռանկիւնաձև բնական բերդ մը , որ պաշտպանուած է երկու կողմէն լեռնային գետակներով՝ Արփաչայով և Ալաչայով , իրենց զառիւլեր , գրեթէ ուղիղ կանգնած ափերով : Այդ գետակներուն վրայէն ձգուած են եղեր շատ բարդ ճարտարագիտութեամբ շինուած եօթը կամուրջներ , որոնց աւերակները լաւ են պահպանուած : Երրորդ կողմէն՝ Անին պաշտպանուած է աւատական բնոյթ ունեցող սպառնազին աշտարակաւոր պարիսպներով :

Մտնելով բերդին մեծ դռնէն ներս , իսկոյն ապշած մնացինք որ այնքան մեծ թուով շէնքեր են պահպանուած մնացեր .— Կեդրոնը կանգնած է Մայր-եկեղեցիին հոյակապ շէնքը . քիչ մը ձախ՝ մինարէտով բարձր շէնք մը . յետոյ միջնաբերդը և բազմաթիւ եկեղեցիներ : Ֆրաման միսիօնար Ռուպրուք , որ Անի այցելած է ԺԳ . դարուն , կ'ըսէ թէ անիկա ունէր 1000 եկեղեցի : Հարկաւ այս թիւը քիչ մը չափազանցուած է , բայց անկասկած եկեղեցիներու թիւը շատ մեծ էր , որովհետեւ ես հաշուեցի 10 եկեղեցիի չափ՝ լաւ պահպանուած վիճակի մէջ :

Տարօրինակ զգացում մը կ'ունենաս , տեսնելով այդ մշակոյթի մնացորդները ,— մշակոյթ , որ իր լիակատար ծաղկումը կ'ապրէր , երբ Սլաւօններուն մէջ կը թագաւորէին տոհմային կարգերը՝ բնական իրերու տնտեսութեամբ , և դեռ նոր երեւան կուգային պետականութեան առաջին նշանները , իսկ մեծ Ռուսերու դաշտագետինը ծածկուած էր կուսական անտառներով : Արդէն այն ատեն խորհրդաւոր Կողքիսի լեռներուն մէջ կը ծաղկէր չափազանց ինքնատիպ քաղաքակրթութիւն մը՝ բաւական զարգացած տեղական արդիւնագործութեամբ ու փոխանակութեամբ , բարձր արհեստագիտական եւ գեղագիտական մակարդակով :

Այս մնացորդները վիթխարի ճարտարագիտական կառուցուածքներու՝ տաճարներու, պալատներու, միջնաբերդի, բաղնիքներու, պարիսպներու, կամուրջներու, — ամէն ինչ, կը վկայեն որ հոս գոյութիւն է ունեցած քաղաք մը մեծաթիւ աղգարնակութեամբ:

Քանի մը աղբիւրներու հիման վրայ, արդէն ժԱ. դարուն Անիի բնակչութեան թիւը կը հասնէր հարիւր հազարի: Արձանագրութիւններու մէջ մնացեր են շարք մը փողոցներու, շուկաներու և կամուրջներու հին անուններ: ժԱ. դարը հայկական մայրաքաղաքին ծաղկման շրջանն էր, Բագրատունիներու իշխանութեան տակ, որոնք ընտրած էին Անին իրենց բնակատեղի:

Բայց, աւանդ, փթթումի շրջանը չսփառանց կարճատեւ էր, — ապագան կը պատրաստէր հայկական Փալմիրային ծանր փորձութիւններ, արշաւանքներու ամբողջ լաւա մը կ'անցնի այդ լեռներու վրայէն, սրբելով, փճացնելով և կոխկրտելով այն քաղաքակրթական ծիւերը, զորս այնպիսի անյողդողդ յամառութեամբ, հաղուագիւտ համբերութեամբ կը տնկէր բազմաշարչար հայ ժողովուրդը:

Նախ Բիւզանդացիները՝ Կոստանդին Մօնօմախի ատեն, յետոյ Սելճուքները և Քիւրտերը յաջորդաբար կը տիրեն հարուստ հայ մայրաքաղաքին: ԺԲ. դարուն Պարսիկները եւ Վրացիները կը կռուին՝ Անիին տիրելու համար: 1239ին Անին նորէն նուաճուեցաւ և քանդուեցաւ Մօնկոլներէն, իսկ 1319ին ուժեղ երկրաշարժ մը ամբողջացուց արշաւանքներու գործը եւ երկար ժամանակ հողին տակ թաղեց արեւելեան Փալմիրան:

Յետոյ շքեղ մայրաքաղաքին տեղը գոյացաւ խեղճուկ գիւղ մը, որուն բնակիչները կ'օգտուէին պալատներու և եկեղեցիներու քարերէն՝ շինելու համար ողորմելի խրճիթներ, որոնց աւերակները կը բարձրանան հին շէնքերու մնացորդներուն վրայ:

Հետզհետէ այս խրճիթներն ալ լքուեցան, և Անին մոռ-

ցուեցաւ երկար ժամանակի մը համար, մինչեւ որ ժ. դարուն, աւերակները գրաւեցին հնագէտներու ուշադրութիւնը, որոնք հանեցին քաղաքին յատակագիծը և նկարեցին մնացած յիշատակարանները :

×

Բայց Անիի պատմութեան համար բոլորովին նոր շրջան մը կը սկսի այն օրէն, երբ պեղումներու գլուխն անցաւ արեւելեան պատմագէտ, եռանդուն փրօֆէսէօր Ն. Մարը : 1892ին անոր ղեկավարութեամբ սկսուած պեղումները յաջողեցան վերատեղծել ամբողջ պատմական մշակոյթ մը, որ իր ինքնատապութեամբ կը ներկայացնէ ոչ նուազ հետաքրքրութիւն քան Պոմպէյը : Այդ տեսակէտով, Անիի պեղումները ունին ո՛չ միայն տեղական նշանակութիւն— Կովկասի համար, այլ ունին նաեւ պետական և գիտական չափազանց խոշոր արժէք՝ ներկայացնելով փառաւոր դպրոց մը հնագէտներու գործնական կրթութեան համար, ըլլալով, այսպէս ըսենք, նոր մեթոտներու բնալուծարան մը :

Պեղումներու ատեն գտնուած բազմաթիւ յիշատակարաններն ու տնային առարկաները թոյլ կու տան վերատեղծել հետաքրքիր պատկեր մը՝ իր ամէնէն ներքին մանրամասնութիւններով :

Փրօֆ. Մար գործի զգեստը հազած, արեւահար դէմքով շատ հաճոյակատարութեամբ կ'ընդունի մեզ : Թէյ խմելու ատեն ոգեւորութեամբ կը պատմէ վերջին պեղումներու հետեւանքները, դեռ նոր գտնուած է ժ. դարու ջրաբաշխական հետաքրքիր սխիթեմ մը, որ կազմուած է եղեր կաւէ ամաններու մէջ դրուած երկաթէ խողովակներով :

Շուտով կը հասնի իրիկունը—հաղիւ ժամը եօթն է, բայց արդէն նկատելիօրէն կը մթնէ : Կը պատինք աւերակները՝ ընդհանուր ապաւորութիւն մը ունենալու համար, աւելի մանրամասն ուսումնասիրութիւնը յետաձգելով հետեւեալ օրուան : Փրօֆ. Մարի տնակէն կ'ուղեւորինք դէպի մինարէով պսակ-



որած բարձր շէնքը— Ժ. դարու հաւանականաբար մաքսատան շէնքը, որ ԺԳ. դարու սկզբին մզկիթի վերածուած է: Աշտարակին գլխուն վրայ կայ արձանագրութիւն մը, որ կ'արգիլէ եկեղեցիին առջեւ ուղտ ծախել: Կ'անցնինք գետնին տակէն նոր բացուած փողոցէ մը, որուն երկու կողմէն կը բարձրանան պատերու մնացորդները:

Անցնելով անցեալի այդ աւերակներուն մէջէն՝ կը զգասնոյն յուզումը ինչ որ կ'ազդէ Պոմպէյի այցելութիւնը: Հարեւանցի դիտելով մզկիթին մէջ զետեղուած ժամանակաւոր միւլդէն, նոյն փողոցէն կ'անցնինք դէպի ձախ և կը հասնինք ԺԲ. դարու հին պանդոկի մը անեղծ աւերակները: Անիկա կը ներկայացնէ լայն քարէ աղիւսներով սալայատակուած մեծ գաւիթ մը, որ կը ծառայէր որպէս ընդհանուր դահլիճ եկող վաճառականներու համար: Գաւիթին մէջտեղը կը գտնուի ջրհոր մը, իսկ չորս բոլորը տեղաւորուած են առանձին սենեակները: Պանդոկն ունեցած է եղեր վերին յարկ, դէպի ուր կը տանէր քարէ սանդուղ մը: Ճիշտ հոս՝ պանդոկին մօտը գտնուած են Ժ. դարու մնացորդները յիշուած այն ջրանցքին, որ ձգուած է եղեր քանի մը քիլօմէրի վրայ և բաղկացած՝ երկաթէ և կաւէ խողովակներէ: Այս ջրանցքը, որ կը ներկայացնէ ճարտարագիտական արհեստի բարձր զարգացում մը, հանելուկ մը պիտի մնայ շատ մը պատմագէտներու համար և վերագնահատում առաջ պիտի բերէ շատ մը ընդունուած պատմական ըմբռնումներու:

Քիչ մը ծռելով պանդոկէն դէպի քաղաքին պարիսպները, շուտով հասանք աւերակները տաճարի մը, զոր շիներ է 1010ին Հայ թագաւոր Գագիկ Ա.:

Գագիկի տաճարը, զոր փրօֆ. Մար է հողին տակէն հաներ, կը ներկայացնէ կլոր շէնք մը, չափազանց պարզ և նրբաքանդակ ճարտարագիտութեամբ: Հայկական եկեղեցիներու սովորութեանց համաձայն՝ ներսը խաչաձեւ էր: Խաչին չորս կողմերուն ամէն մէկուն վրայ կը գտնուէին վեց հոյակապ երկերկու տեղաւորուած պազալդէ սիւներ, յունահայ

ձեռով : Այդ երկուական սիւներուն վրայէն կը ծառանային ութ կամարներ, որոնց վրայ ձգուած էր երկրորդ յարկը . իսկ երրորդ յարկը կը գտնուէր քառակուսի սիւներու վրայ, որոնք հայկական ճարտարագիտութեան մէջ կը գործածուէին շատ աւելի յաճախ քան աղաս սիւները :

Թէ ինչպէս սիւները կը կարողանային պահել այնքան վիթխարի ծանրութիւն մը—հանելուկ մըն է աս՝ ժամանակակից ճարտարագէտներու համար :

Այդ կարգի շէնքերուն մէկ ուրիշ յատկանիշն ալ շաղախի և փայտի բացակայութիւնն է, որուն շնորհիւ այդ շէնքերը կը պահպանուին անսովոր կերպով երկար ատեն : Հետաքրքրական է նոյնպէս սիւներու կառուցուածքը .— անոնք կազմուած էին պազալի վիթխարի գլանային կտորներէ, միացուած երկաթէ ագուցուածքներու միջոցով, առանց շաղախի : Տաճարին ներսը դարդարուած էր արտակարգ փաթմամութեամբ և ճաշակով : Ծածկուած էր ձեռակերտ և ոսկեզարդ քանդակներով : Թանգարանին մէջ տեսայ չափազանց հետաքրքիր պրօնզէ ջահ մը՝ առնուած Գազիկի տաճարէն, որուն վերի մասին մէջ, գօտիին շուրջը շարուած էին ութը ազաւնեակներ՝ իրենց կառուցին մէջ բռնած ունեհալով աշտանակներ :

Այդ ջահը կախուած էր մօտաւորապէս 18 մետր երկայնութիւն ունեցող երկաթէ շղթայէ մը : Առհասարակ տաճարին ճարտարագիտութիւնը այնքան ինքնատիպ է, որ շատ մը գիտնականներ ուղղակի կը դժկամակին հաւատալ թէ այդպիսի տաճար մը կրնար գոյութիւն ունենալ ժԱ. դարուն : Ինչպէս հաղորդեց ինծի Փրօֆ. Մար, մինչեւ այժմ Գազիկի տաճարէն զատ յայտնի են միայն երեք տաճարներ՝ նոյնօրինակ ճարտարագիտութեամբ, — մէկը՝ Զ. դարուն պատկանող, կը գտնուի Էջմիածնի մօտերը, իսկ միւսը կարսէն 12 վերստ հեռաւորութեան վրայ :

Արեւը արդէն մարը կը մտնէր, երբ մտանք Գազիկի տաճարը .— արեւմուտքին վրայ կ'երեւային գունատ-վարդա-

գոյն վերջալուսային ծփանքներ և երկինքին վրայ արդէն կը վառէին առանձին գունատ-կանաչ աստղերը : Հեռուն , մոխրագոյն ծուխին մէջ , կը նշմարուէին հայ ժողովրդական երգերուն մէջ երգուած Այագեազ լերան անորոշ սիլուէթները : Մտածելով որ ճիշտ նոյն աստղերը կը լուսաւորէին տասը դար առաջ Անի բնակող և այս տաճարներուն մէջ խոնուող մարդիկը , կը զգայի առանձնապէս ներուժ կերպով՝ մարդուս դէպի առաջդիմութիւնն ունեցած ձգտման անզօրութիւնը՝ տիեզերական ուժերու երկաթէ ճնշման տակ : Պարզ կը գիտակցիս որ մարդկային պատմութիւնը մշտական առաջընթացութիւն չէ , այլ անսահման փոխանցում մը փթթումի և անկումի շրջաններու : Այդ տիեզերական կշռոյթն է , որուն հաւասարապէս ենթարկուած են թէ՛ առանձին անհատները , թէ՛ առանձին հասարակութիւնները :

Անի : Ռրքան փայլուն յուշեր և թաղուած յոյսեր կան այդ խօսքին մէջ , հայ ժողովուրդին համար :

Ով որ գտնուեր է Անի , կը հասկնայ այն անհուն թախիծը , որով համակուած են հայկական երգերը և որով թաթաւուած է Հայուն սիրային քնարերգութիւնը : Դժուար է երեւակայել թէ ո՞րքան հռանդ , համբերութիւն , ատկունութիւն էր պէտք եղած հայ ազգին՝ իր քաղաքական գոյութիւնը պահպանելու համար արշաւանքներու այդ լաւային մէջ :

Ասով կը բացատրուի հայ գրականութեան քիչ մը ազգամոլական բնոյթը , բացակայութիւնը անոր մէջ այն բաներուն զորս մենք կ'անուանենք համամարդկային իտէալներ : Դաժան պայքարը , որ կը պահանջէր ուժերու հսկայական վասնում , թոյլ չէր տար հայ ազգային ոգիին՝ զարգացնել բոլոր իր մէջ ծածկուած ընդունակութիւնները : Թէ որքան ծանր է եղեր ազգաբնակութեան բաղդը , որ փոխեր է անգղադար իր տէրերը և ենթարկուեր է ամենաբազմազան հարկերուն ու մաքսերուն , կարելի է դատել հանրային շէնքերու վրայ մնացած բազմաթիւ արձանագրութիւններուն նայելով . այդ գրերուն մէջ քաղաքային կառավարիչները կը հրաժա-



րին, ազգարնակութեան ազքատութեան պատճառով, քանի մը առանձնապէս ծանր հարկերու հաւաքումէն: Այդ հարկերու անուանները այնքան բազմաթիւ և բազմազան են, որ մինչև այժմ ալ հանելուկ են մնացած պատմաբաններու համար:

Չափազանց բնորոշ է այդ տեսակէտով, Սուրբ-Առաքեալ եկեղեցիին վրայ գտնուած մեծ արձանագրութիւնը:

Զարմանալի է որ այսպիսի քաղաքական և հասարակական ծանր պայմաններու մէջ՝ Հայերը յաջողեցան զարգացնել այնքան բարձր և ինքնատիպ գեղարուեստական մշակոյթ մը, որուն հետ բաղդատելով, ժամանակակից հայկական գեղարուեստը կրնայ նկատուիլ գունաւոր ընդօրինակութիւն մը: Այդ յամառ կռուի մասին, որ վիճակուած էր Հայերուն, բաւական պայծառօրէն կը վկայեն Անիի բերդին աւատական սպառնազին սարիսպները: Ես տեսայ միւղէին մէջ զինուորի մը գանկը, որ ջախջախուած էր բիւզանդական բարանով նետուած քարէ ռումբէ մը: Այդ ռումբը, որ մեր թնդանօթային ռումբին նախատիպը կը ներկայացնէր, կլոր քար մըն է՝ խոշոր բռունցքի մը մեծութեամբ: Ճիշտ հոս կը գտնուի նաև ուրիշ զինուորի մը գանկը, որ ծակծկուած էր նիզակով և նիզակին ծայրը մնացեր է գլխուն մէջ: Այդ զինուորը մեռեր է զէնքը ձեռքին և նիզակը գտնուած է իր կողքին:

Անիի միւս յիշատակարաններէն յատկապէս հետաքրքիր է մայր եկեղեցին, զոր շիներ է 1010ին Գագիկ Ա. ի կինը և որ լաւ է պահպանուած իր բոլոր մասերով— բաց ի քանդուած գմբէթէն: Առհասարակ, գմբէթը հայկական շէնքերու ամենաթոյլ կողմն է: Այդ մայր եկեղեցիին մէջ ժամերգութիւն կ'ընէ Անի բնակող Միքայէլ անունով հայ վարդապետ մը: Իր ձեւով մայր եկեղեցին կը յիշեցնէ փիղաեան և սիէնեան պազիլիկները: Անոր պարիսպները շինուած են լաւայի կարմիր և սեւ աղիւսներէ, որոնցմէ կազմուած են չափազանց գեղաքանդակ մոզայիկ հրաշակերտումները:

Գիշերը անցուցի Միքայէլ վարդապետին փոքր և խաղաղ տնակին մէջ: Քունս չէր գար, ուստի դուրս ելայ: Այս

մեռեալ քաղաքին մէջ կը զգայի ինքզինքս անցեալի ուրուա-  
կաններով շրջապատուած, և ունէի խորհրդաւոր մօտիկու-  
թիւնը այն վաղուց չքացած մարդոց, որոնք այս հոյակապ  
յիշատակարաններն են կառուցած...

Հետեւեալ օրը, այցելելով նոյնպէս Կամսարականներու  
պալատը, Գրիգոր Պահլաւունիի և Գրիգոր Շինողի եկեղեցի-  
ներուն աւերակները, հրաժեշտ տուի Բագրատունիներու մայ-  
րաքաղաքին:

Հ. ՏԱՄՆԵԻԷՆ

## Ա Ն Ո Ւ Շ

### Ա Ռ Ա Ջ Ի Ն Ե Ր Գ

#### 1

Կանչում է կրկին, կանչում անդադար  
Այն չքնաղ երկրի կարօտը անքուն,  
Ու թեւերն ահա փրուած տիրաբար  
Թրուչում է հոգիս, թրուչում դէպի տուն,  
Ուր որ հայրենի օջաղի առաջ  
Վաղո՛ւց կարօտով ըսպասում են ինձ,  
Ու ձմրան երկար գիշերը նրստած  
Խօսում են Լոռու հին հին քաջերից.  
Դէպ այն սարերը, որ վէս, վիթխարի,  
Գոռոզ շարքերով բրունած շուրջպարի,  
Հըսկայ շուրջպարի բրունած երկրնքում,  
Հրրճւում են ասես այն մեծ հարսանքում  
Պերճ Արագածի նազելի դրստեր,  
Որ Դեւ-Ալ, Դեւ-Բէթ եւ այլ հըսկաներ,  
Խօլ խօլ հըսկաներ հընոց աշխարհի,  
Փախցրին բերին անառիկ Լոռի: (\*)

(\*) Առասպելի մը համաձայն, Դէւ-Ալը (Դեւալ սարը), Դեւ-Բէթը  
(Դեբեդ գետը) եւ ուրիշ դեւերը յսփշտակած են Արագածի աղջիկը  
եւ Լոռի տարած.

## 2

Է՛յ հին ծանօթներ, է՛յ կանաչ սարեր,  
 Ահա ձեզ տեսայ ու միտքս ընկան,  
 Առաջրս եկան երջանիկ օրեր,  
 Սիրելի դէմքեր, որ հիմի չը կան.  
 Անցե՛լ են ինչպէս ծաղկունքը պէս պէս,  
 Որ անցած գարնան կային ձեր լանջում,  
 Անցե՛լ ձեր գրլխի հերուան ձիւնի պէս.  
 Բայց եկել եմ ես, նրբանց եմ կանչում:  
 Ողջո՛յն ձեզ, կեանքիս անդրանիկ յուշեր,  
 Որբացած հոգիս ողջունում է ձեզ,  
 Թըռչում կարօտով փրնտուում ձոր ու լեռ,  
 Դիւթական ծայնով կանչում է հանդէս:  
 Դո՛ւրս եկէք կրրկին շիրմից, խաւարից,  
 Դո՛ւրս եկէք տեսնեմ, շօշափեմ, լրսեմ.  
 Կեանքով շրնչեցէ՛ք, ապրեցէ՛ք նորից,  
 Լըցրէք պօէտի հաճոյքը վրսեմ...:

## 3


Եւ մութ այրերից մամուտ ժայռերի,  
 Թաւուտ ծրմակի լրռին խորքերից  
 Մանուկ հասակիս հրնչուն ծիծաղի  
 Արծազանգն ահա լրսում եմ նորից:  
 Թընդում է զըլարթ աղմուկը բինի,  
 Բարձրանում է ծուխն իմ ծանօթ ուրթից,  
 Ու բոլորն ահա նորից կենդանի  
 Ելնում են աշխոյժ վաղորդեան մութից,  
 Ու թարմ, ցօղապատ լեռների լանջում...  
 Սո՛ւս... ականջ արա՛, հովիւն է կանչում...

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ.— Յովհաննէս Թումանեան



մշակած է դիւցազներգական եւ քնարերգական բանաստեղծութիւնը,



ինչպէս նաեւ առակագրութիւնը: Իր ներշնչումները, իր նիւթը եւ իր երգը թաթաւուն են ցեղին յոյզովը եւ բնաշխարհի նկարչականութեամբը: Թուամանեան կը մնայ նոր ժամանակներու Հայոց քերթողութեան մէջ այն միակ երգիչը, որ ամէնէն աւելի իրաւունք ունի կոչուելու հարագաս՝ իր յղացումովն ու արուեստովը: Ծնած Լոռիի դաւարագեղ լեռներուն մէջ եւ ապրած ամէնէն նկարչական բնութեան մէկ անկիւնը, ժողովուրդի մը հետ՝ որ կենդանի կը պահէ ինչ որ ցեղը ունեցած է հոգեկան անեղծ գեղեցկութիւններ եւ առանձնայատուկ աւանդութիւններ, Թուամանեան կրցած է բերեղացնել այդ բոլորը իր զգացումներուն մէջ եւ զեղուլ զանոնք ինքնատիպ քնարի մը ստեղծագործ լարերուն վրայ:

Իր դիւցազներգութիւններն են՝ Սասունցի Դաւիթ, Թմկաբերդի Առունը, Փարուանա, Աղբաւստ եւ մանաւանդ Անուշը որ կարելի է իր գլուխ-գործոցը համարել՝ Սասունցի Դաւիթին հետ: Իր քերթուածներուն եւ բանաստեղծութեանց ամբողջական հաւաքածուն լոյս տեսած է 1903ին եւ 1908ին:

## Ա Ր Ի Ի Ն ՈՏ Թ Թ Խ Մ Ո Ր

Առաւօտեան, Դաւիթը ժամ զնայց. իսկ Նարկիզը վերկացաւ, երախտներին զարթեցրեց, ուղարկեց գոմ և պատրաստուում էր թոնիրը վառել:

Տան դուռը ճռճուալով բացւեց և ներս մտաւ մի եօթ տարեկան աղջիկ՝ հարեւանենց Սօփին: Նա ձեռքին բռնած ունէր խմորի մը գունդ՝ մի թթխմոր: Նարգիզի թթխմորն էր



այն, որ նախորդ երեկոյ տարաւ Սօփին, որովհետեւ նրա մայրն այսօր հայ պիտի թխէր: Բայց ինչո՞ւ էր յետ բերում այժմ, զարմացած մտածեց Նարգիզը. այսպէս վաղ հացը թխած չէին կարող լինել. օրուայ այդ ժամին դեռ թոնիրն էլ չեն վառում:

Մինչև այդ՝ Սօփին կամացուկ, ասես վախ՛վխելով, մօտեցաւ թոնրան շուրջը պտտող թմբին և անվճռական ձայնով ասաց.

— Ա՛ռ ձեր թթխմորը, Նարգի՛՛ղ բաջի:

— Աղջի՛, ձեր հացը ե՞րբ թխեցիք վերջացրիք, լոյսը նոր է բացւում:

— Դեռ չենք թխել:

— Հապա ինչո՞ւ բերիր թթխմորը:

— Մայրիկս ասաց՝ տար յետ տուր:

— Ինչո՞ւ:

— Չեմ իմանում... է՛ն ժամը չեմ իմանում, պատասխանեց Սօփին գլուխը քաշ ձգած, ոտքերին նայելով. սակայն իր երդումը նա այնպիսի եղանակով ասաց, որից պարզ երևում էր թէ նա բան գիտէ, բայց հրամայւած է ոչինչ չասել: Նարգիզն այդ շատ լաւ զգաց. երեխան անյաջող էր կեղծում:

— Աղջի՛, ուրիշ տեղի՞ց թթխմոր բերիք:

— Ուրիշ տեղի՞ց... Հա՛, բերինք. Ալմօենց թթխմորը բերինք. մայրիկս բերեց... ես բերեցի. ասաց՝ գնա՛ բեր, բերեցի... խմոր արինք. շատ ենք խմոր արել:

— Սօփի, ինչի՞ մեր թթխմորով չարիք խմորը:

— Չեմ իմանում... ես ինչ գիտեմ. մայրիկս ասաց... մայրիկս ասում էր՝ Նարգիզ բաջիկնց թթխմորը լաւը չի:

Նարգիզը մռայլեց. այստեղ մի բան կար. այս երեխան դեռ էլի բան գիտէր, իսկ ինչ որ գիտէր, լաւ բան չէր լինելու. «Յիսո՛ւս Քրիստոս», մռմռաց Նարգիզը:

— «Թթխմորը լաւը չի», շարունակեց Նարգիզը՝ չրթունքները կծոտելով. մեղա՛յ քեզ, Աստուած, ո՞վ էր լսել՝ «Թթխմորը լաւը չի»... Աղջի՛, ինչպէ՞ս թէ թթխմորը լաւը չի... Թթխմորն էլ լաւ չի՞ լինի...

— Չեմ իմանում... մայրիկս ասում էր՝ ձեր թթխմորը հարամ է...

— Աղջի, գժւե՞լ ես, թէ՞ մէրդ է գժւել, քո ծամն էլ կտրեմ, քո մօրն էլ. մեր թթխմորն ինչո՞ւ է հարամ լինում. ամբողջ կնք արել, ի՞նչ է, սեւա՛ւոր:

— Չեմ իմանում... մայրիկս ասում էր... — և աղջիկը դարձեալ ինչ որ մռմռաց, շարունակ ոտքերի տակը նայելով և թթխմորը ձեռքին, բայց Նարգիզը լաւ չսեց. սակայն նրան թւաց որ այդպէս միամտութեամբ ասած բառերը պէտք է աւելի սարսափելի լինէին, քան ինչ որ լսեց. ուստի ճշաց սաստիկ կատաղած.

— Աղջի՛, ի՞նչ ասիր...

Երեխան այդ ճշոցից վերեւ նայեց, տեսաւ Նարգիզի կատաղած դէմքը, սաստիկ վախեցաւ, շրթունքները դողացին և տրցունքները կախուցին աչքերից. նա հեկեկաց. Նարգիզը անդմացաւ.

— Սօֆի՛, մի՛ լաց. էն ի՞նչ ասացիր, չսեցի. մայրիկդ ի՞նչ էր ասում:

— Չեմ իմանում, պատասխանեց աղջիկը լացի միջից և կցկտուր. մայրիկս ասում էր... էն մարդերին... էն օրը... ախպէր Դաւիթն է մասնել, սպանել աւել... ասում էր, ձեր թթխմորը արիւնոտ է... ասում էր՝ մեղք է նրանով խմոր անել... ևս ի՞նչ անեմ, բա՛ջի, մայրիկը ասաց, խալինն են ասում, դուրսն են ասում, — շտապեց աւելցնել Սօֆին, նկատելով որ Նարգիզի դէմքը կրկին կապտեց և շրթունքները ծռմուռեցին. մայրիկս ասայ՝ տար տուր, ես էլ բերի, հ՛ը, դնեմ այստե՛ղ, բա՛ջի, հաս՞... .

Բայց Նարգիզն էլ չէր լսում: Աղջկայ ձայնը հնչում էր նրա ականջին ինչպէս մի անորոշ բզզոց: Նա լուռ էր. աչքերը լայն չռած, նայում էր այդ աղջկան, որ թթխմորը ձեռքին կանգնել էր նրա առաջ՝ դողալով երկիւղից... Հարւածը սարսափելի էր. ի՞նչ անել, բռնել այդ աղջկան, թոնրի մէջը կոխել, վառե՞լ թէ դուրս վազել, նրանց տունը գնալ և մօր



ծամերը փետել գլխին : Ահա թէ ի՛նչ էր մտածում Նարգիզը ,  
 երբ Սօփին արտասանում էր իր վերջին խօսքերը :

Մինչ այդ՝ աղջիկը դրեց թթիամորը թմբի վրայ և շտապով դուրս գնաց դռնից :

Նարգիզը մնաց մաքերի ծովի մէջ . . . Այն ի՛նչ ասաց Սօփին : Երկու շաբաթ առաջ էր . այդ լաւ էր յիշում Նարգիզը—և ո՞վ կը մոռանար այդ դժոխքի օրը ,— տաճիկ զինուորները յանկարծ սլաշարեցին ջրատար Նունոյի տունը , ուր մի քանի դարիք մարդիկ կային : Սարսափելի կռիւ տեղի ունեցաւ , տանեցիք ջարդւեցին , Նունօն իր զաւակների հետ սպանւեց , կինը տարան , տունը կրակ տւին , և էլի ուրիշ քանի՛ մարդ սպանւեց : Ասում էին , որ գիւղացիներից մատնող է եղել . Նարգիզն ի՛նչ այրւած սրտով անիծում էր մատնողին , բայց մի՞թէ այդ մատնիչը , այդ արնապարտը , այդ հոգին կորցնողը Դաւիթն է , իր ամուսինը , և այն ծով արիւնը իր զաւակների վրի՛ն է ընկնում . « Սօփին ասաց , մայրն է ասել , դրսում ասում են , ասում են , ասում են » . . . Թթիամորն իր տեղումն էր . Նարգիզը չէր կարողանում նայել խմորի այդ հասարակ գնդին : Սօփին ասաց հարամ է , արիւնտա է , մտածում էր նա . իսկ եթէ ճիշտ է , ինչո՞ւ էր բարկանում :

Նա նստած մնաց իր տեղում , թոնիր վառելը մոռացաւ , ցանը մնաց թմբի վրայ : Բոլոր տներից ծուխը բարձրանում էր , Նարգիզի յերդիկից ոչինչ չէր դուրս գալիս : Նա սպասում էր , դրուժիւնն անտանելի էր . գոնէ Դաւիթը շուտ տուն գար՝ կամ ցրէր այս սեւ կասկածը , կամ մի փոս փորէր , թաղէր իրան : « Ժամ գնա՛ց » . . . մումուաց Նարգիզը թունտ հեզնու թեամբ , « աղօթո՛ւմ է » . . .

×

Երկար ու ձիգ րուպէներ անցան . . . Վերջապէս բակում լսեց Դաւիթի ոտնաձայնը ու սովորական հազը : Նարգիզը ցնցեց այդ հազից , ինչպէս օձի խայթոցից . նա և՛ շտապում էր տեսնել ամուսնուն , և՛ դողում էր վճռական րուպէից՝ ինչպէս կախաղանի դատապարտուած մէկը :

Դաւիթը տէր-ողորմեան համբերով ներս մտաւ հանդարտութեամբ, առանց կնոջը նայելու, սուտ ճգնաւորի երկիւղած քայլածքով մտակցաւ հացի տաշտին, դուրս քաշեց այնտեղից մի կտոր հաց, հանդարտութեամբ գրպանը դրեց և պատրաստուում էր գնալ Եղօենց սաքուն՝ ըստ իր սովորութեան նախաճաշ անելու, մինչև որ կինը թոնիրը կը վառէր, կը վերջացնէր: Նարգիզը լուռ հետևում էր նրա շարժումներին, նայում էր դէմքին, որից ոչինչ հասկանալ կարելի չէր, նայում էր աչքերին, որոնց կոպերից կախւած էր դեռ եւս երկիւղածութեան նման մի բան: Երբ ամուսինը պատրաստուում էր դուռը բանալ, Նարգիզը ձայն տուց.

— Այդ ի՞նչ դըրիւր ջէբդ:

— Հա՛ց է, ի՛նչ է, զարմացած պատասխանեց Դաւիթը:

— Ո՞ւր ես տանում:

— Խե՛նթ ես, ի՞նչ է, ա՛յ կնիկ, տանում եմ ուտեմ, ո՞ւր եմ տանում:

— Այիւնտա հացը կ'ուտւի՞ . . .

Դաւիթը գունատուեց. նրա դէմքը վայրկենապէս այլալուեց, երկիւղածութիւնն ու խաղաղութիւնը կորան . . . Թէև նա խսկոյն աշխատեց հանդարտել, առհարկի սառնասրտութիւն և անտարբերութիւն ձեւացնել, սակայն արդէն ուշ էր: Նարգիզը յիմար չէր, նրա փորձող հայեացքը մինչև իր ամուսնու հոգու խորքն իջաւ ու այնտեղ սեւ դժոխք գտաւ. — Ի դուր էր խարում Դաւիթը: Նարգիզը սոսկաց իր գիւտից. նա դժբախտ էր, նա դողում էր սճրից, դողում էր թափւած արեան աւաջ, դողում էր իր զաւակների, իր օջախի համար: Նա գլուխը քաշ ձգեց, երեսը ծածկեց ձեռներով, և զսպւած բարկութիւնն ու վիշտը դուրս թափւեցին յորդ արցունքներով . . . Կնոջ յուզմունքը ևս առաւել շփոթեց Դաւիթին, և երբ կինը կրկին վերեւ նայեց, Դաւիթը գունատուած էր ինչպէս թուղթ ու ձեռքով գրպանում՝ ջղոտ անհանգստութեամբ շարժում էր հացը: Բայց և այնպէս նա փորձեց պաշտպանել. վերջին ճիգն էր գործ դնում:

— Կնի՛կ , երա՞զ ես տեսել , ի՞նչ ես դուրս տալիս . արիւնս ո՞րն է , ես ի՞նչ արունք եմ արել . . .

— Ուր էր թէ երազ լինէր , սեւա՛ւոր մարդ . երազի արիւնը՝ բախտ է ցերեկին , իսկ այդ բախտը կտրուեց մեր սննդ . տե՛ս . . . Նա ցոյց աւելց թմբի վրայի թթխմորը : Դաւիթն ապշած նայում էր խմորին՝ առանց բան հասկնալու , իսկ կինը շարունակեց այս անգամ աւելի ցաւով՝ քան զայրացած .

— Մեր տունը արիւնով լցւած է , սեւա՛ւոր մարդ , մեր թթխմորը հարամ է , մեր թթխմորը արիւնոտ է , հարեւանները մեր թթխմորով էլ չեն ուզում հաց թխել , բերին յետ աւին : Դէ , թո՛ղ սեւը գայ մեզ տանի , էլ ինչի՞ ենք ապրում , Յուդայի և Կայէնի տուն շինուցիր մեր տունը , մա՛րդ . թող Կայէնի կոտոշ բուսնի գլխիդ . . .

Դաւիթն այժմ հասկացաւ . . . Սօսք չունէր , բերանը փակուեց . կինը կրկին արտասուեց , ուստի նա բարևօք համարեց շուտով դուրս գնալ տնից դէպի սաքուն :

×

Գիւղամիջից անցնելիս՝ նա աշխատեց իր սովորական իշխանական եղանակով՝ քայլել , խրոխտ , հանդարտ , բարեպաշտ դէմքով և երբեմն երբեմն հազալով : Եղօենց գոմին հասաւ : Դրսից լսուում էին խօսակցութեան ձայներ . երեւում էր որ սաքուն վիքն է գիւղացիներով : Դաւիթը դուռը բացեց և ներս մտաւ , աշխատելով չկորցնել իր ձեւերն ու սառնարիւնութիւնը : Նրա ներս մտնելու հետ ձայները մէկէն դադրեցին և նա շփոթուեց . նոյնիսկ նրան թւաց թէ իր լսած վերջին բառերը նոյնն էին , ինչ որ կինն ասաց , — «Թթխմորը հարամ է , արիւնոտ է» . Դաւիթն իրեն չլսելու դրեց և առ հարկի վստահութեամբ ասաց՝ «Ողորմի՛ Աստուած» : Ձայնն աւելի բարձր դուրս եկաւ , քան հարկաւոր էր . գոնէ Դաւիթին այդպէս թւաց , և այս անգամ նա այնպէս փակեց բերանը , կարծես մէկը ապստակով խփեց շրթունքներին : Այդ էլ մնաս չունէր . սարսափելին այն էր , որ իր «Ողորմի՛ Աստուած»ին



ոչ ոք չպատասխանեց : Այդ էլ չնկատելու տւեց Դաւիթը և առաջ գնաց իր սովորական տեղը դրաւելու բուխարիկից դէպի ձախ , երկրորդ տեղը՝ հաստաբեխ Մանօյի և Խուս-Հովէյի մէջ : Դիտմամբ արդեօք՝ թէ անուշադրութիւնից , այսօր այդ երկու մարդի մէջ շատ քիչ տեղ էր մնացել նրա համար , եւ երբ Դաւիթը մօտնցաւ , ոչ մէկը չչարժւեց . նա մի կերպ ներս սողոսկաց , նստեց : Լռութիւնը շարունակուում էր . դիտմամբ չէին խօսում , թէ խօսել չէր լինում : Մօտիկ հարեւաններն էլ երեսները դարձրել էին Դաւիթից . . .

— Ժամում շատ ցուրտ էր . տէրաէլը աղօթքները բօլ կուլ տւեց , — ասաց Դաւիթը : Ոչ ոք ձայն չհանեց , լռութիւնը շարունակւեց . խօսակցութիւն սկսելու նրա ջանքերն ապարդիւն անցան :

Դաւիթը հանեց չիբուխը , պատրաստեց , ոչ ոք կրակ չառաջարկեց նրան . ինքը կրակը վերցրեց , վրան դրեց և սկսեց արագ արագ ծխել : Յանկարծ Մանօն նրա կողքից վեր կացաւ և դուրս գնաց : « Ինչո՞ւ , մտածեց Դաւիթը . նա այնպէս շուտ չէր գնալ » : Քիչ յետոյ նրան հետեւեց Խուս-Հովէն : Այդ արդէն աւելի տարօրինակ էր : Դաւիթը կծկւեց և ողնաշարի երկարութեամբ մի պաղ բան սողաց դէպի վար : Այժմ նա աւելի արագ արագ ծխել սկսեց , և ծուխը քուլայքուլայ բարձրանում էր : Նա գլուխը քարշ էր ձգել և նայում էր չիբուխին . մէկ էլ վերեւ նայեց , և նրա աչքին մի սարսափելի տեսարան ներկայացաւ , — Գիւղացիք իրար յետեւից դուրս էին փախչում սաքուից , ուր կարծես վարակիչ ախտ էր բուն դրել : Դաւիթը ծխելը մոռացած՝ աչքերը չռած , նայում էր նրանց , և մէջքի պաղ գիծը լայնանում էր , հա՛ լայնանում . նա մօտ էր մրսելու : Աւելի սարսափելին այն էր , որ իւրաքանչիւր գիւղացի դուրս գալուց առաջ մի թունոտ , արհամարհական հայեայցք էր ձգում նրա վրայ , որից նրա արիւնը սառում էր երակների մէջ , և Դաւիթին թւում էր թէ ինքը նրանց չի ճանաչում , օտար է . այն աստիճան դէմքերը փոխւած էին , խորթ էին :

Սաքուն դատարկեց խապառ : Դաւիթն այժմ էլ կասկած չունէր . իր մատնութեան մասին գիտէին ամէնքը : Սաքուն այժմ իր լուծեամբ սարսափելի էր , ահաւոր : Բայց ո՞ւր գնալ : Տո՛ւն . . . : Նարգիսն այնտեղ արտասուում է արիւնոտ թթխմորի առաջ : Եւ նա մնաց անշարժ նստած , աչքերը յառած այն պատի ճեղքին , որտեղից մի ճպուռի ողբաձայն , միակերպ ճռճոցն էր լսւում . նայում էր և չէր մտածում . . . : Երկար ժամեր անցան : Յետոյ Դաւիթին թւաց թէ ինք՝ ինքը չէ , թէ գիւղացիների հետ ինքն էլ դուրս է գնացել . իսմ այստեղ մենակ չէր նստի ճպուռին ականջ դնելու : Իր ապշուծեան մէջ այս միտքը նրան դուր եկաւ , մխիթարուեց , բայց ո՞վ էր ինքը . — այդ հասկանալ չէր կարողանում . մտածում էր ընդարմած ուղեղով : Այդ դրուծեան մէջ նա ձեռքը մեքենաբար գրպանը տարաւ , հացը դուրս քաշեց , նայեց . սոված չէր . մի բան անելու համար հացը դէպի բերանը տարաւ , կրծեց ու կրկին յիշեց թթխմորը , արիւնոտ թթխմորը . չէ՞ այս հացը նոյն թթխմորից էր , համն էլ տարօրինակ էր . . . : Նա ծամել չկարողացաւ և սարսափով զգաց որ պատառն իր բերանում ասես աճում , մեծանում է , սղմում է կոկորդը , խեղդում է նրան : Դաւիթը շտապով հանեց բերանից պատառը և ձգեց հեռու . . . :

Գոմի լուծիւնն աւելի և աւելի ճնշող էր դառնում : Դուրս փախչել էր հարկաւոր , բայց ո՞ւր . այդ նա չգիտէր . միայն թէ դուրս , լայն տեղ , բայց երկնքի տակ : Եւ նա ոտքի կանգնեց , թողեց հացը և սրտապատառ դուրս փախաւ գոմից սուանց յետ նայելու . . . :

Մինչեւ երեկոյ խեղացմորի նման դաշտում թափառելուց յետոյ , նա քայլերն ուղղեց դէպի գիւղը : Բայց խաւար փողոցի մէջ հազիւ մի քանի քայլ արած , նրա առաջ ցլեկցին երկու խորհրդաւոր մարդիկ : Դաւիթը ճիչ անգամ չարձակեց , երբ մահացու զէնքի փայլը տեսաւ մթուծեան մէջ և զգաց երկաթի պաղ ծայրն իր կրծքին : Արդարութիւնն իր իրաւունքն էր պահանջում . . . :

Միւս առաւօտ գիւղացիք գտան նրան փողոցում, դաշոյններով խողխողած :

Մի դիակ փողոցում և մի հաց սաքւում, երկուսն էլ անախորժ գիւտեր էին գիւղացոյ համար. դիակը՝ դաւաճանի էր, հացը՝ հարամ : Մի խոր փոս փորկցին, արիւնոտ դիակը դրին փոսի մէջ, հարամ հացն էլ թաղկցին հետը, — արիւնոտ էր, ուտել չէր լինի :

×

Ամէն առաւօտ գիւղի յերդիկներից ծխի պտոյտները, որպէս թանձրացած սև հոգսեր ու ցաւեր, ձգւում են դէպի վեր, դէպի երկինքը և բօթերով բռնաւորւած բանբերների պէս՝ վազում են կապուտակ անսահմանութեան մէջ, զարհուրելի բաներ են պատմում և կարծես հաշիւ ու համար պահանջում անարդար երկնից : Միայն Գաւիթի խրճիթից ծուխ չի բարձրանում : Այդ խրճիթը երկնքից պահանջ չունի. նա կարծես կամենում է լուել և ծածկել երկնքից այն մեծ ոճիրը, որ իր յարկի տակ է մտածուած : Այն սեւ օրից սկսած՝ Նարգիզն ուխտ է արել մի ամբողջ տարի էլ թոնիր չվառել, էլ հաց չթխել իր արիւնոտ թթխմորով, իր արնապարտ օջախում : Առաւօտեան այն ժամին, երբ հարեւանները կրակ են ձգում թոնիրները, Նարգիզը վերցնում է իր երկու որբերը, գնում է եկեղեցի, չոքում է խոնաւ գետնին՝ երախտների հետ, սառն արցունքներով թրջում է եկեղեցու յատակը և աղօթում է, աղօթում... Մում համար է աղօթում նա. իր ոճրագործ ամուսնու հոգու փրկութեան, թէ իր զաւակների և իր օջախի վրայից արիւնը վերցնելու համար, — այդ միայն ինքը գիտէ : Երբ նա եկեղեցուց տուն է վերադառնում, բարի հարեւանները նրա օրւայ պաշարը բերած են լինում իրանց արդար հացից . . . :

Երբեմն երբեմն երեխաները զարմացած հարցնում են մօրը .

— Մայրիկ, ինչո՞ւ հաց չես թխում :

— Թթխմոր չկայ, ձե՛ղ մեռնիմ, մեր թթխմորը արիւնոտ է, պատասխանում է մայրը, և զսպւած արցունքները թափւում են աչքերից կաթիլ-կաթիլ :



Եւ նայում են մանուկները խորը վշտով, երկա՛ր, երկա՛ր և մտածում են, մտածում. բայց նրանց փոքրիկ գլուխները չեն կարողանում հասկանալ թէ ինչո՞ւ է արտասւում մայրը և ինչո՞ւ է թթիւմորն արիւնտա... : ԱԻԵՏԻՍ ԱԶԱՐՈՆԵԱՆ

**ԱԻԵՏԻՍ ԱԶԱՐՈՆԵԱՆ.** — Խորքին մէջ աւելի բանաստեղծ քան վիպող, եւ հոգիով գերազանցօրէն քնարերգակ՝ Ա. Ահարոնեան կովկասահայ առաջնակարգ արձակագիրն է եւ արդի հայ գրականութեան գերընտիր դէմքերէն մէկը. իրաւամբ կոչուած «Վշտի Երգիչը»: Իր վիպակները հոյակապ պատկերներ են, մեծագոյն մասով, վերջին ժամանակներու տառապող եւ մարտնչող Հայութեան, խտացումը Յեղին ճգտումներուն, որոնք արտայայտուեցան Թրքահայ Յեղափոխութեան անդնդապար բայց միանգամայն հերոսական թռիչքներուն մէջ:



Ա. Ահարոնեանի բոլոր գրուածքներուն մէջէն, վիպակ, թատրերգութիւն եւ քերթուած՝ արձակ թէ տաղաչափուած, կը զեղու զգացումը՝ յորդառատ, խոր ու թախծալից, բայց վերանորոգիչ ու բարձրացնող: Իր վիպակներով ու պատկերներով, որոնք կը յատկանշեն իր տաղանդին հիմնական գիծը, Ահարոնեան յայտ կը բերէ գիւղական բարքերու եւ տիպերու վարպետ նկարագրութեան, պատկերաւոր ոճի եւ հիւթեղ ու ճկուն լեզուի գեղարուեստական կարողութիւններ:

Իր գործերն են Ագասուքեան ձանապարհիկը, Ժողովածու Երկերին (Ա. հասոր), Արագը, Մրրիկի Սուրբը, Լոռաբիւնը, Խեղճերը, Կեանքի Վեպը, Անդունդը, Մոխիրների Տակից, Խաւարի մեջ, Ինչպէս նաեւ Արցունքի Հովիտ, Ուխտաւաններ եւ Սեւ Թոյուն թատրերգութիւնները: Ասոնցմէ զատ, ունի նաեւ Հոս կիկը՝ ազգագրական ուսումնասիրութիւն, եւ Իդալիայում, նկարագրութիւնը Իտալիոյ գեղարուեստական կեանքին:



## Մ Ռ Ա Յ Լ Ժ Ա Մ Ե Ր

Ահա կ'անցնին հին ըղձանքներ,  
 Ահա յոյսի օրերն անցան,  
 Ու երազներն ալ ձանձրացան,  
 Սպասելէ այսքան երկար:

Եւ ոչ մէկ աստղ մընաց ահա,  
 Այլ սոսկ խոնջէնքը տաղտուկին,  
 Ու տժգոյն լոյսը լուսնակին.  
 Որմէ՞ խոյս տալ պարտ է հիմա:

Հեծկտուքներ՝ ծուղակն ինկած,  
 Հիւանդներ կան առանց կրակի,  
 Հօտը՝ որ ծիւն կը ճարակի.  
 Ամէնուն ալ զըթա՛, Աստուած:

Ես զարթօնքին կրսպասեմ յար,  
 Քունի ժամերն անցնին մինչեւ,  
 Ես կը բաղձամ քիչ մը արեւ՝  
 Լուսնէն սառած ձեռքիս համար:

Թարգմ. Գ. Խանձեան

ՄՕՌԻՍ ՄԷՅԷՌԼԻՆՔ



## Մ Կ Ր Տ Ի Չ Տ Ի Գ Ր Ա Ն Ե Ա Ն

Սուրբ Գիրքէն գիտենք, որ Փարաւոն երբ Աստուծոյ առաջարկութիւնը մերժեց, Աստուած սկսաւ Եգիպտացիներուն իրարու ետեւէ պատիժներ դրկել, որոնց թիւը տասնի յանգեցաւ: Փարաւոն մինչեւ իններորդ պատիժը յամառութեամբ դէմ կեցաւ. և տասներորդին առջեւ ալ կը վարանէր հնազանդութիւն յայտնել՝ երբ Մովսէս ու Ահարոն իրեն յայտնեցին թէ՛ եթէ նորէն յամառիս, իբրև մետասաներորդ պատիժ, Մկրտիչ Տիգրանեանը պիտի դրկէ Աստուած: Փարաւոն այս յայտնութենէն սոսկալով՝ Մովսէսն և Ահարոնը անմիջապէս կանչել տուաւ, արածնեց զիրենք որ ելլեն երթան իրենց ունեցածն ալ մէկտեղ տանելով: Փարաւոնին հնազանդութեանը վրայ Աստուած ստիպուեցաւ քովը պահել Տիգրանեանը: 1815 թուականին երբ տեսաւ Աստուած, որ մեր կրած տառապանքներէն չխրատուելով՝ անարժանները վարդապետ, քահանայ կը ձեռնադրենք և ազգին իրաւունքներն անոնց ձեռքը կը յանձնենք, բարկացաւ և Մկրտիչ Տիգրանեանը, պատիժներուն նախագահը, դրկեց որ խրատուինք, թէպէտ մենք այս պատիժն ալ բանի տեղ չդնելով՝ շարունակեցինք և կը շարունակենք մեր ընթացքը: ❧

Մկրտիչ եպիսկոպոսին աշխարհ գալուն բուն պատճառը մեր ընթերցողներուն յայտնելէ ետքը, պարտք կը սեպենք անոր քանի մը մականուններն ալ հոս յիշել՝ որպէս զի ուրիշ Մկրտիչներու հետ չչփոթեն իր անունը:

Մկրտիչ եպիսկոպոս Տիգրանեան Պոլսեցիներէն կ'անուանուի հրաշագործ. Հայաստանի մէջ Քիւրտերէն կը յորջորջուի Շամմառ հուլուպ, որ կը թարգմանուի ասպուրի վարդապետ. լուսահոգի Յակոբ Պատրիարքէն կը կոչուէր Եօթր փորձանք զորս Վեհափառ Գէորգ կաթողիկոսը մեր ազգին համար բաւական չհամարելով՝ փորձանք մըն ալ ինք աւելցուց՝ եպիսկոպոսութեան աստիճան տալով անոր:



Արդ, Մկրտիչ Եպիսկոպոս ծնած է Տիգրանակերտ, 1815 թուականին:

Ի ծնէ վառվռուն և բարեկարգութեան սիրահար ըլլալով՝ վայրկեան մը հանգիստ չէր մնար: Շաբաթն երեք անգամ տունը կը լուար, կը մաքրէր, կ'աւլէր, պատին վրայ բեկո մը գամելու համար տանը հիմերուն բեկոները կը քակէր՝ բարեկարգելու համար տունը, որ վանքերէն աւելի հաստատ հիման վրայ շինուած ըլլալուն պատճառով չէր կործանուեր: Մայրը զաւակին ըրած բարեկարգութիւններէն ձանձրանալով՝ բռնեց զինքը Կոնստնտի վանքը զրկեց:

1827ին կը մտնէ Կոնստնտի վանքը: Բաւական տարիներ հոն կերակրուելէն ետք, ձեռք կը զարնէ Վանքը բարեկարգելու. իսկ երբ կը տեսնէ որ մէկ կողմէն Վանքը յօժարութիւն ցոյց չտար բարեկարգուելու և միւս կողմէն Վանահայրը յարգը չի ձանձնար իր ծառայութիւններուն՝ որով Վանքն օր ըստ օրէ ետ ետ կ'երթար, կը թողու այս ագարակը, անիծելով մարդերու ապերախտութիւնը: Չի վհատիր սակայն, միտօր կը դնէ Վանք մը փնտուել, ինչպէս որ ամէն մարդ գործ մը կը փնտուէ ոչ թէ այդ գործով ապրելու, այլ այդ գործը բարեկարգելու համար:

1837ին Մշոյ Ս. Կարապետի վանքը կ'երթայ: 1839ին վարդապետ կը ձեռնադրուի և իր ապաշխարանքը կը քաշէ Կաղ Գրողին օճախին մէջ:— Աւանդութիւն մը կայ թէ սատանան տարին քանի մը անգամ այդ օճախը կուգայ և անոր մոխիրը կը խառնէ և թէ այս է պատճառը որ յիշեալ Վանքին մէջ խռովութիւնը միշտ անպակաս է: Ուրիշ աւանդութեան մը նայելով՝ Մկրտիչ Եպիսկոպոս այդ օճախին մէջ ապաշխարանք քաշած ժամանակ, երբ սատանան կուգայ մոխիրը խառնելու՝ ապաշխարողէն վախնալով կը փախչի, և Մկրտիչ Եպիսկոպոս ինք կը սկսի այդ մոխիրը խառնել:

1841ին ձանձրանալով Վանքին մէջ անգործ մնալէ, ճամբայ կ'ելլէ Քիւրտիստանի բարեկարգութեան համար, ինչպէս կը գրէ ինք իր Հայելի Գործոցին մէջ, հայելի մը, որ դժբախ-

տաքար շատ լաւ կը ցուցնէ անոր պատկերը : Քիւրտիստանի բարեկարգութեան խնդիրը, ինչպէս յայտնի կը տեսնուի, Տիգրանեանի օրով ծնած է : Հայաստանի վանքերուն և Քիւրտիստանի բարեկարգութեան վրայ տասներեք յօդուածներէ բաղկացած կանոնագիր մը կը խմբագրէ, և երբ անոնց գործադրութեանը պիտի ձեռնարկէր, իր դէմ կը տեսնէ Տօն Քիչօթի օգային ախոյեանները, որոնց դէմ թէպէտ քաջութեամբ կը կռուի, բայց յաղթուելով ետ կը դառնայ :

Այս պարտութիւնը զինք սուրբ Յովհաննէսի վանքը կը նետէ : Եւ որովհետեւ առանց պարտքի վանք չլլար, այս վանքն ալ ունէր իրեն պարտքերը՝ որոնց վճարման համար վանահայրը կ'աղաչէ Մկրտիչ եպիսկոպոսին՝ երթալ Պաղտատ ու Պարսկաստան, հանգանակութիւն ընել : Տիգրանեան ո՛չ միայն Պաղտատ ու Պարսկաստան կ'երթայ, այլ Կիլիկիոյ կողմերն ալ երթալով ցամաքէն Պոլիս կուգայ 1844ին՝ միշտ հանգանակելով :

Հանգանակութիւնը գոհ չընէր Նորին Գերապատուութիւնը, որ կը փափաքի Քիւրտիստանի—Հայաստանի չհասկընաք—տղաքը դաստիարակել : Պատրիարքէն կոնդակ մը կ'առնէ. սուրիչէ մըն ալ ութը հազար դահեկանի արժողութեամբ դասագիրք նուէր առնելէն ետքը՝ Յանուն Հօր եւ Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, կը սկսի նորէն հանգանակութեան՝ Նիկոմիդիայէն ցամաքի ճամբով մինչեւ Տիգրանակերտ, ուր կը հասնի 1845ին : Ինք ալ իբրև Քիւրտիստանի տղայ՝ դաստիարակութեան պէտք ունենալով, բնական էր որ անբաժին չմնար հանգանակած գումարէն : Իր խոստովանութեանը նայելով՝ ամբողջ Քիւրտիստանի մէջ վարժարաններ կը շինէ . . . օղի մէջ : Սիլվանայ մէջ կը փափաքի վարժարան մը հաստատել . . . գետնի վրայ . բայց այս գործը քիչ մը դժուար ըլլալով՝ փափաքը չի կրնար իրականացնել, մանաւանդ թէ Սիլվանաբնակ ազգայիններն հայերէն չէին գիտեր, անխնամ, անհովիւ և անտէրունջ մնացած էին : Այս ժողովրդեան համար հասարակօրէն կ'ըսեն եղեր .

Պաղ ջուրը կու գայ մեծ Սիլվանայ ,  
 Գէշ Քրդու տղան է սեւ սատանայ .  
 Առ բուրդ, բամպակը շուտով մկրտէ՝  
 Կուզէ Հայ մնայ, կ'ուզէ թրքանայ :

Այնպիսի գեղի մը մէջ, որուն վրայ ասանկ ոտանաւոր  
 մը կը գրուցուի, վարժարան բանալը յայտնի է թէ որչափ  
 դժուար գործ է : Լաւ չենք յիշեր Սղերդի՞ մէջ թէ երաղի մէջ  
 ալ վարժարան մը կը բանայ . սակայն լաւ կը յիշենք որ Սղեր-  
 դի մէջ են եգիսի աղանդաւորները, որոնք սատանային համար  
 գէշ չեն ըսեր եղեր : Դիտողութեան արժանի է որ յիշեալ  
 աղանդաւորները Մկրտիչ եպիսկոպոսին վրայով ալ գովեստով  
 կը խօսին :

1858ին Սամաթիոյ Եէնի Մահալէի քարոզիչ կը կարգուի ,  
 բայց քարոզչութեամբ չկրնալով ապրիլ՝ կը սկսի հրաշագոր-  
 ծութեան : Կաղեր, կոյրեր, խուլեր, համրներ, այսահարներ,  
 անդամալոյծներ կը բժշկէր : Ամէն օր հիւանդներ կ'երթային իրեն :

— Հա՛յր սուրբ, իմացանք որ դուք ամէն ցաւերը կը  
 փարատէք :

— Հրամեր էք, օրհնած :

— Քանի մը շաբաթէ ի վեր գլխու ցաւ ունիմ, կ'ուզեմ  
 որ փարատէք :

— Գլո՞ւխդ թէ ցաւդ :

— Գլո՞ւխս, հա՛յր սուրբ, գլուխս :

— Շա՛տ լաւ, ինձի համար երկուքն ալ միւսնոյն բանն են :

Եկո՛ւր խաչահանգիստ մը ընեմ :

Մարդը կը մեկնի և քանի մը ժամէն ետքը անդի՛ի աշ-  
 խարհքը կ'երթայ :

Երրորդ մը կը ներկայանայ .

— Հա՛յր սուրբ, սենեակին սլատուհանը կոտրեցաւ :

— Պատուհանը հոս բե՛ր, վրան բժշկութեան աւետարան  
 մը կարդամ :

Չորրորդ մը .



— Հա՛յր սուրբ, մազերս կը թափին :

— Այս ջուրով գլուխդ լուայ :

Հինգերորդ մը կը մտնէ .

— Հայր սուրբ, անձրեւ եկած օրը սենեակս կը վազէ,  
ի՞նչ ընեմ :

— Այս ջուրէն քիչ մը դի՛ր սենեակիդ վրայ :

Պատրիարքարանէն մէկը .

— Հա՛յր սուրբ . . .

— Այս ջուրէն ա՛ռ :

— Պատրիարքը զրկեց զիս . . .

— Պատրիարքին ալ այս ջուրէն :

— Չեզի ըսելու որ . . .

— Չեզի ալ այս ջուրէն :

— Քիչ մը . . .

— Այս ջուրէն :

— Պատրիարքարան հրամանէք :

— Պատրիարքարանի ալ այս ջուրէն :

— Եթէ չի գաք . . .

— Եթէին ալ այս ջուրէն :

— Նորէն բանտ պիտի երթաք :

— Բանտին ալ այս ջուրէն :

— Եթէ ընդդիմանաք՝ ոստիկանութեան ձեռքով . . .

— Ոստիկանութեան ալ այս ջուրէն :

— Պիտի բերուիք Փրկիչ :

— Փրկիչին ալ այս ջուրէն :

— Կառավարութիւնը . . .

— Կառավարութեան ալ այս ջուրէն :

Վերջապէս ամէն ցաւերն այս ջուրով կը բժշկէր : Միայն այսահարներուն փորէն դուրը կը հանէր, սակայն չկրնայով միշտ խողեր գտնել որ անոնց զրկէ, շատ անգամ իր փորին մէջ կը հիւրընկալէր դուրը առժամանակեայ կերպով : Պատրիարքարանը թէպէտ կ'աշխատէր անոր արգելուլ տուներու մէջ մտնելը, բայց այն ատեն ամէն տուն հետաքրքրութեան հա-

մար հիւանդ գտնուելով, չէր կրնար առաջքն առնել: Մէկ կողմէն հրաշք կը գործէր, միւս կողմէն միշտ հանգանակութիւն կ'ընէր: Ազգային և քրդերէն գրականութիւնը կը ծաղկեցնէր: Քրդերէն Քերական, Լապսեր Լուսասու և Ընթերցարան տպել կու տար և տպագրութեան ծախքը ժողովրդէն կ'առնէր: Երբեմն տպարանին չէր վճարեր ծախքը, երբ տպարանապետն երթար ոտք կոխէր և ստակ ուզէր՝ այս ջուրէն ըսելով՝ անոր ալ ջուր կու տար:

1872ին Տիգրանակերտ կը քաշուի քիչ մը հանգստանալու համար, բայց որովհետեւ երկար ատեն չէ կարող հանգիստ նստիլ, Մշոյ դաշտը կ'ելլէ և որչափ կոյր, կաղ, խուլ, համր մարդեր որ կը տեսնէ՝ ամէնն ալ քահանայ կը ձեռնադրէ ի փառս Հայաստանեայց Եկեղեցւոյ: Այս ձեռնադրութիւններուն պատճառը հարցուելով՝ կը պատասխանէ թէ այս խեղճերը արդէն քառասուն օրէ ի վեր բան մը կերած չըլլալով՝ իրենց ապաշխարանքը քաշած էին և հետեւապէս իրաւունք ստացած էին քահանայ ձեռնադրուելու: Պատրիարքարանը կը սպառնայ. Տիգրանեան կը ծիծաղի: Երբ Ներսէս արքեպիսկոպոս Պատրիարքական գահուն վրայ կը բարձրանայ՝ կը գրէ Վեհափառ Կաթողիկոսին, որ շնորհ ընէ և Հրաշագործը իր իշխանութեան տակ առնէ: Վեհափառ Կաթողիկոսը, որուն աւելի արժանի էր եօթը փորձանք, չուզեր զայն իր քովը պահել՝ յայտնելով թէ ինք արդէն բաւական ունի անոնցմէ: Տիգրանեան տեսնելով որ Ազգը դժուարութիւն կը յարուցանէ իր վրայ փորձանք հրաւիրելու մասին՝ առանց հրաւերի կ'ելլէ դարձեալ Կ. Պոլիս կուգայ, ստանձնելով Սամաթիոյ Սուրբ Կարապետ եկեղեցիին քարոզչութեան պաշտօնը: Այս է ահա Հրաշագործին կեանքը՝ որուն մէկ քառորդը անցած է ճամբորդութեան մէջ, մէկ քառորդը բանտերու մէջ, մէկ քառորդը մոխիր խառնելու մէջ և միւս քառորդն ալ ստակ հաւաքելու մէջ:

Հրաշագործը գիտնական մըն է, սակայն շատ խնդիրներու մէջ կը տարբերի դարուս միւս գիտուններէն: Օղը չէ

որ, կ'ըսէ, շրջապատած է մեր բնակած երկրագունտը, այլ խարէութիւնը, որ՝

Անօր է, վասն զի հաշիւներու ամէնափոքր մասերուն մէջ կրնայ մտնել :

Տարածական է, վասն զի պարագաներու համեմատ իր նախկին ծաւալէն աւելի մեծ ծաւալ կրնայ ունենալ :

Թափանցիկ է, վասն զի շատ մը կրօնաւորներ անոր մէջէն կ'անցնին :

Առաձգական է, վասն զի կրնայ ճնշուիլ Պատրիարքարանէն, բայց նորէն իր առաջին ծաւալը կ'առնէ :

Գիտնականութեան շնորհիւն է որ մինչեւ այսօր այնչափ պաշտօն վարեց :

Ոմանք կ'ուզեն հաւատացնել թէ Հրաշագործը, որուն ճակատէն վաթսուեր հինգ շնիկ աստղ անցած է, ազգն այնչափ տարիներ զբաղեցնելուն վրայ շատ զղջացած է և թէ որոշած է փորձանք ըլլալ այն ամէն անձերուն, որոնք ազգին շահը ոտնակոխ ընել կ'ուզեն :

Մկրտիչ եպիսկոպոս Տիգրանեան միջին հասակով, թուխ դէմքով և փոքր աչքերով մարդ մըն է : Փողոցը գացած ժամանակ այնպիսի ուշադրութեամբ կրնայի մարդուն երեսը՝ որ կը ստիպուիս ձեռքդ բաձկոնիդ տանիլ, նայելու համար թէ ժամացոյցդ քովդ է : Եթէ իր դէմքը կարելի ըլլայ կենդանի գոյներով նկարել՝ մեր առջեւ կ'ունենանք պատկեր մը, որ կարծես մեզի կ'ըսէ. — կը բարեհաճի՞ք ձեր քսակն անուշութեամբ ինձի տալու, որպէս զի ձեզ քահանայ ձեռնադրեմ :

Իր ամէնէն նշանաւոր կարծիքներէն մէկն է բոլոր աշխարհականները կրօնաւոր ընել : Այս եղանակով, կ'ըսէ, աշխարհականները հոգեւորապէս մխիթարուելու համար քահանաներու դիմելու հարկ չեն ունենար և իրենք զիրենք կը մխիթարեն : Այս համոզումով է որ 4000էն աւելի քահանայ ձեռնադրած է :

Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

**ՅԱԿՈՒ ՊԱՐՈՆԵԱՆ (1840-1891).** — Յակոբ Պարոնեան ամբողջ հայ գրականութեան մէջ է եւ կը մնայ տակաւին անմրցելի



երգիծաբանը, օժտուած՝ թերութիւնները տեսնելու եւ ծաղրելու



աննման կարողութեամբ: ձիշտ է որ ներգործութեամբը հեղինական երգիծաբաններուն եւ դասական հեղինակներուն, իր գրութիւնները գերծջեն յաճախ աւելորդաբանութիւններէ եւ ճապաղութենէ, բայց իր հիմնական գիծերուն մէջ անոնք երկրորդական տեղ կը բռնեն:

Հրատարակած է երգիծական թաստնի եւ խիկար թերթերը:

Իր գործերն են Մեծապատիւ Մուրացիաներ, Ազգային Ձոյեր, Հոսիսի Ձեռակերպ, Պտոյս մը Պոյսոյ քաղերուն մեջ, Բաղաբախարուքեան վնասները, Պաղտատար Աղբար, եւն.: Իր գլուխ գործոցն է Ազգային Ձոյերը:

Յակոբ Պարոնեան ծնած է Էտիրնէ եւ մեռած Պոլիս, թշուառ վիճակի մէջ:

## Տ Ո Ր Ք - Ա Ն Գ Ե Ղ

Շատ դարեր առաջ՝ հին Հայաստանում  
Տորք-Անգեղ անւամբ մի մարդ էր կենում:  
Տորքը չէր նման հասարակ մարդու,  
Այլ մի աժդահա եւ շատ ահարկու.  
Աչքերը կ'ասես մի-մի կապոյտ ծով,  
Ճանանչաւորւած արեւի լուսով.  
Սեւ-սեւ ունքերը՝ մութ ամպի նման՝  
Բարդ-բարդ կուտակւած աչքերի վրան.  
Քիթը կորընթարթ, իբրեւ մի բլուր,  
Ատամներն ուրազ, եղունգները թուր.



Կուրծքը կ'ասենա մի լանջ է լեռան,  
 Մէջքը սարածայռ, կռները գերան,  
 Մի խօսքով՝ մի դէու եւ ոչ թէ հսկայ . . . . .  
 Ոչ որ տեսած չէր այնպէս աժտահա:  
 Տգեղ էր դէմքը եւ այնքան դաժան,  
 Որ զարհուրում էր, ով նայում էր վրան .  
 Ահռելի էր նա եւ այնքան ուժեղ,  
 Որ յիսուն գոմէշ չունէին մէկ տեղ:

Նա դեռ պատանի ժայռեր էր ճեղքում,  
 Ճեղքում էր ձեռքով, ձեռքով էլ կոկում .  
 Ճեղքում, յղկում էր քարէ տախտակներ,  
 Եղունգով փորում պէս-պէս նկարներ:

Նա մի հովիւ էր, հովիւ լեռնական,  
 Բայց ոչ հասարակ, այլ դիւցազնական:

. . . . .

\*  
 \* \*

Տորքի անունը շատ հռչակեցաւ,  
 Միչեւ արքայի ականջը հասաւ:  
 Մեծ թագաւորը կանչում է Տորքին,  
 Որ պարգեւներ տայ եւ նայէ դէմքին:  
 Գնում է Տորքը մի ծառ ուսին դրած,  
 Ծառի ճղներից էրէներ կախած .  
 Այնտեղ կար այժեամբ ու վայրի ոչխար,  
 Եղնիկ, եղջերու, վարազ ու կխտար . . . .:

Տորքի համբաւը առաջ էր գնացել  
 Եւ քաղաքացոց նախապատրաստել .  
 Խանութ ու կրպակ՝ ողջ կոխպոտեցին,  
 Փողով փողհարով դիմաւորեցին . . .  
 «Եկա՛ւ, հա՛ եկա՛ւ, գալի՛ս է, գալի՛ս»:

Ամէնքն էլ իրար իմաց են տալիս .  
Թէ՛ ծեր , թէ՛ մանուկ , թէ՛ աղջիկ , թէ՛ կին ,  
Եկան տեսնելու նորեկ հսկային :

Երբ Տորքը մտաւ մեծ մայրաքաղաք ,  
Նրան կարծեցին շարժուն աշտարակ .  
Իրաւ՝ նա ցած չէր աշտարակներից ,  
Բուրգ էր նա շինւած անտաշ քարերից :  
Ծառն ուսին դրած գաւազանի պէս ,  
Քայլեր էր անում չորս կանգուն ու կէս :  
Այսպէս նա հասաւ մինչեւ ապարանք ,  
Արքայի վրրայ ազդեց մեծ զարմանք .  
Վայր դրաւ բեռը , բարձրացաւ վերեւ ,  
Ծնկաչոք ընկաւ արքայի առջեւ :  
Թագաւորն ասաց . « Ապրի՛ս , ապրի՛ս , Տո՛րք ,  
Դու չես մի հատ մարդ , այլ մի ամբողջ զօրք : »

Արքայի ծունկը Տորքը համբուրեց ,  
Արքան էլ նրա ուսին ձեռք դրրեց :

\*  
\* \*  
\*

Արքան հրաւիրեց կուսակալներին ,  
Որ այդ ժամանակ պալատումն էին .  
« Կ'ուզեմ իմանալ , ասաց , մեր երկրում  
Ի՞նչպէս ցեղեր կան , ի՞նչպէս են ապրում :  
(Թագաւորն ինքը չէր մեր աշխարհից ,  
Այլ հրաւիրւած մի ուրիշ երկրից) .  
Արդեօք մեր երկրում վաղւայ պէս չըկա՞ն  
Խոշոր հսկաներ մեր Տորքի նման » :

Ամէնից առաջ խօսեց Առանը՝  
Բաղաց աշխարհի զօրեղ իշխանը .  
— « Ո՛ղջ լեր , թագաւոր , մեր երկրում դեռ կան



Յաղթանդամ մարդիկ՝ ճիշտ Տորքի նման .  
 Նրանք կենում են լեռնախորշերում ,  
 Մթին ձորերում եւ քարայրներում .  
 Պնդոցն են քաշում , որ ազատ մնան ,  
 Քեօխւի ու գզրի ոչինչ հարկ չըտան .  
 Տներ են շինում եւ գետնի տակին  
 Անքար ու անսիայտ , սարերի միջին .  
 Տեսնում ես նաեւ՝ հարթ գետնի տակից  
 Ծուխ է դուրս գալիս քառասուն տեղից .  
 Շրշկւում է մարդ , թէ սա ի՞նչ բան է ,  
 Մի՞թէ սա գիւղ է .— ո՞վ կարծիք կ'անէ :  
 Մի դուռն ես գտնում , մտնում եւ ահա  
 Քսան , երեսուն մարդիկ աժդահա ,  
 Մի քանի գերան կրրակին դրրած ,  
 Նստած են շուրջը մրու-թնին կախած .  
 Իսկ նրանց մայրը՝ պառաւ աժդահան՝  
 Դրել է կրակին քառականթ կաթսան ,  
 Երեք-չորս վարազ ողջ-ողջ մէջն ածած ,  
 Ճաշ է պատրաստում մէկ թի ձեռքն առած .  
 Խառնում է կաթսան թիաշերեւիով ,  
 Ինչպէս մեր կանաչք փոքրիկ չամչիկով :  
 Տունն ունի նաեւ անթիւ մաղարէք ,  
 Այնտեղ են լցւած հարան ու աղջրկէք .  
 Բոլորն էլ խոշոր , բոլորն էլ հսկայ ,  
 Թէ մարդ թէ կնիկ , աղջիկ թէ տղայ ,  
 Բայց չեն Տորքի պէս անտաշ ու անկազմ ,  
 Այլ շատ գեղեցիկ եւ վայելչակազմ»... :

— «Ուղիղ է ասածն Առան իշխանի,  
 Ասաց բղէշխը Գուգարաց երկրի.—  
 Մեր հսկաներն էլ ձորերը մըտան ,



Որ գզիրներին ոչինչ հարկ չըտան .  
 «Ով որ, ասում են, գզրի ծայն լքսի,  
 «Նա տեղնուտեղը ձեան պէս կը հալչի.  
 «Մարդիկ էնդուր են այնչափ մանրացել,  
 «Ու մէջքրներից թեքել, կըռացել,  
 «Որ հարկ են տալիս գզրին ու քեօխւին,  
 «Այն էլ դրամով, որ բնաւ չունին:  
 «Մենք չունինք գզիր, քեօխւա, քեաթխուդա,  
 «էնդուր ենք մնացել այսպէս աժդահա»:

### ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ

**ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ.**— Ղազարոս Աղայեանի տեղը, կովկասահայ գրականութեան մէջ, ոչ այնքան վիպասանութիւնն է՝ ուր



կը յայտնուի համեմատաբար թոյլ եւ նուազ յաջող, որքան մանկական քրնքուշ եւ ընտանի բանաստեղծութիւնը՝ արձակ թէ տաղաչափուած, ուր կ'երեւնայ իր ինքնատիպութիւնը: Աղայեանի գրուածներէն «Տորք Անգեղը» պէտք է համարել իր լաւագոյն գործը եւ հայ դիւցազներգութեան ամենագեղեցիկ էջերէն:

Իր գործերն են՝ Արուքին եւ Մանուկ, Երկու Քոյր վէպերը, Տորք Անգեղ դիւցազներգութիւնը, Գիւղնազ Տաշի Հիֆտար, Արեգնազան եւն. հէքեաթները եւ իր բանաստեղծութիւնները՝ որոնք լոյս տեսած են առանձին հատորով մը:

Ղազարոս Աղայեան ծնած է 1840ին եւ մեռած՝ 1911ին Թիֆլիսի մէջ:











ԽՐԱՑ

Նկար Տիկին Եօրսանէսուի



## Ա Լ Պ Ո Ւ Խ Ա Ր Ա

(Գ Ն Ղ Օ Ն)

Մաւրիտանացիներուն երկիրները արդէն աւերակ են . շղթայի մէջ է իրենց ժողովուրդը . Կորնատի միջնաբերդերը տակաւին կը դիմադրեն , բայց ժանտախտը ճարակած է Կորնատի մէջ :

Ալպուխարայի աշտարակներուն կատարէն , բուռ մը ռազմիկներու հետ , Ալմանզոր դեռ ինքզինքը կը պաշտպանէ : Քաղաքին առջեւ Սպանիացին իր դրօշները սնկեց . — Վաղը յարձակում պիտի տայ :

Արեւածագին՝ պղինձը կը գողաց , պատուարները կը թաւալին , կը կործանի պարիսպը . արդէն իսկ մինարէներուն ծայրը խաչերը կը փողփողին . — Սպանիացիներն առին բերդը :

Մէն մինակ , Ալմանզոր , սեանելով իր ջոկատները խորտակուած հակառակ իրենց կատաղի ոգորման , ճամբայ մը կը բանայ սուրերուն և նիզակներուն ընդմէջէն . կը փախչի , և խոյս կու տայ հետապնդումներէն :

Բերդին աւերակներուն վրայ՝ որոնք կը միան , փլատակներուն և դիակներուն մէջտեղ , Սպանիացիները կը կանգնեն խրախճանքի սեղան մը . գինին յորդակոհակ կը հոսի . գերիներն և կողոպուտը մէջերնին կը բաժնեն :

Յանկարծ պահակը զեկոյց կու տայ պետերուն՝ թէ օտար երկրի ասպետ մը դէմ առ դէմ ունկնդրութիւն մը կը հայցէ , կ'ըսէ թէ ծանրակշիռ լուրեր ունի :

Ալմանզորն է , Իսլամներուն արքան . իր ապահով պատրասարանը թողած՝ իր անձը Սպանիացիներուն ձեռքը կը յանձնէ , և իր կեանքէն զատ բան մը չի խնդրեր :

— «Սպանացիներ , կը գոչէ , կու գամ խոնարհել ճակատս ձեր շեմին վրայ , կու գամ ձեր Աստուծոյն սպասարկել և հաւատալ ձեր մարգարէներուն :

«Թող համբաւը հռչակէ ամբողջ աշխարհի՝ որ Արաբ մը, յաղթուած թագաւոր մը, եղբայրը կ'ուզէ ըլլալ իր յաղթողներուն, հպատակ՝ օտար թագի մը» :

Սպանիացիները գիտնն յարգել քաջութիւնը : Երբ ճանչցան Ալմանզորը, իրենց պետը ողջագուրեց զինքը, և միւսներն եւս փոխն ի փոխը ողջոյն աուին անոր իբրև ընկերոջ մը :

Ալմանզոր փոխանակեց իւրաքանչիւրին ողջոյնը. ամէնայն խանդաղատանքով ողջագուրեց պետը, վիզը փաթթուեցաւ, սեղմեց ձեռքերը, շրթունքներէն մնաց առկախ :

Յանկարծակի կը տկարանայ, կ'իյնայ ծունկերուն վրայ. բայց դողահար ձեռքերով կ'արձակէ ապարօշը Սպանիացիին ռաքերուն առջև, և դայն իր մարմնին հետ ընդքարշ կը թօթուէ գետնին վրայ :

Կը դիտէ շուրջը, — բոլորն ալ կը զարմանան. դէմքը գունատ է, կապուտացած, ահուկի ժպիտ մը բերանը կը կծկէ, բիւրր արիւնով կը խնուէ :

— «Տե՛սէք, ս'վ Կեաւուրներ, աժգոյն եմ և կապարագոյն : Գուշակեցէք թէ որո՞ւ կողմէ զբկուած եմ ես : Խարեցի ձեզ .

«Կուրճատէն կուգամ, ժանտախտը կը բերեմ ձեզի : Համբոյրս ձեր հոգիին մէջ թորեց թոյնը՝ որ ամէնքդ ալ պիտի լախէ. եկէք և տեսէք չարչարանքներս. — Դո՛ւք ալ այսպէս պիտի մեռնիք :»

Կը թայթլի, կ'աղաղակէ, կը տարածէ բազուկները. պիտի ուզէր յաւիտենական ողջագուրումի մը մէջ, բոլոր Սպանիացիները լանջքին վրայ սեղմապնդել. կը ծիծաղի ջղաձիգ ծիծաղով մը :

Կը ծիծաղէր. — շունչը տուաւ. — իր կոպերը և շրթունքները կիսարաց են. և գեհնական քրքիջ մը մշտնջենապէս դրոշմուած կը մնայ իր սառնացած դէմքին վրայ :

Սպանիացիները, սարսափահար, քաղաքէն փախուտս կուտան, սակայն իրենց ետեւէն կը վազէ ժանտախտը : Դեռ զիրենք Ալպուխարայի լեռներէն դուրս չէին ձգած, երբ իրենց բանակին մնացած մասը կորսուեցաւ սպառսպուս :



## Կ Ա Ր Մ Ի Ր Զ Ո Ղ Ը

Գրասեղանիս վրայ սա  
 Սկաւառակին մէջ կայ բուռ մ'հող, բերուած հոն  
 Հայրենիքի դաշտերէն:  
 Նըւէր է ան.— զայն ինձ ձօնողը կարծեց  
 Սիրտն իր տրրուած, առանց երբեք զխոնալու  
 Թէ կուտար իր պապերունն ալ միասին:  
 Զայն կը դիտեմ.— մերթ ժամեր  
 Բիբերս անոր վրայ յառած կը մընամ  
 Լո՛ւռ եւ թախծո՛ւտ իբր այդ հողին մէջ յուռթի  
 Նայուածքս արմատ արձակէր:  
 Կը մըտածեմ.— Գուցէ իր գոյնը բոսոր  
 Չէ պարզեւուած բնութեան ներհուն օրէնքէն:  
 Վէրքերու սպունգ մ'ըլլալով  
 Խըմած է մաս մը կեանքի, մաս մ'արեւու.  
 Եւ իբրը տարր անպաշտպան՝  
 Կարմիր հող մ'է եղած, հայ հող մ'ըլլալուն:  
 Գուցէ իր մէջ կը բաբախեն տակաւին  
 Գարերը հին հին փառքին.  
 Կայծն ամրակուռ սըմբակներու որոնց գոռ  
 Արշաւանքն օր մը ծածկեց  
 Հայկեան վաշտերն յաղթութեան տաք փոշիով:  
 Կ'ըսեմ.— Իր մէջ դեռ կ'ապրի  
 Ինքնատիպ ուժն այն որ կազմեց շունչ առ շունչ,  
 Կեանքս իմ, քու կեանքդ, ու տըւաւ,  
 Կարծես ձեռքով զխտակից,  
 Նոյն թուխ աշուին, նոյն եւ նըման հոգիով  
 Կիրք մ'եփրատէն առնըւած,  
 Սիրտ մը կամշոտ, թագըստոց  
 Ըմբոստանքի ու նաեւ բո՛ւռն սիրոյ:  
 Իր մէջ, իր մէջ կը կայծկըլտայ հոգի մ'հին  
 Հին դիւցազնի եղած փըսոր մը գուցէ՛

Կոյսի մ'աղուոր արցունքով,  
 Հիւլէ մը կայ Հայկէն, փոշի մ'Արամէն,  
 Անանխայէն բիր մը դէտ  
 Դեռ աստղերու ճանաչներով թաթաղուն.  
 Ազգ մը կայ հոն, սեղանիս վրայ ազգ մը հին,  
 Որ այսօր իր վերաշողշող այգուն մէջ,  
 Հողի բնատուր մարմնոյն տակ ինձ կը խօսի,  
 Կ'ոգեղինէ—եւ աստղերու ինչպէս ցանն  
 Անհունութեան մէջ կապոյտ—  
 Փոշիներովն իր հրաբորբ  
 Հոգիս քաղցրիկ փայլակներով կ'ոռոգէ:  
 Ու այն ատեն լարը ջղերուս կը դողայ  
 Սարսուռով մ'յորդ, այն սարսուռով՝ որ մըտքին  
 Հերկերուն վրայ աւելի  
 Ըստեղծիչ է քան զարնան հովն արփազաղջ:  
 Ու կը զգամ անցքն ուղեղէս  
 Նոր յուշերո՞ւ, հոգիներո՞ւ դեռ կարմիր  
 Խոր վէրքերովն իրենց, վրէժի շըրթունքներ,  
 Եւ այդ հողն, այդ փոշին, զոր ես կը պահեմ  
 Այնքան սիրով՝ որքան հոգիս պիտ' ջրնէր:  
 Եթէ մարմնոյս անիւններն  
 Օր մը մահէն վերջ հովերուն մէջ գրտնար.  
 Այդ պանդուխտ մասն Հայաստանի, մասունքն այդ  
 Մնացած մեր յաղթ պապերէն,  
 Բրժժանքն ու ձօնն այդ կարմիր,  
 Սիրտըս սեղմած մագիլներով անձանօթ,  
 Երկինքն ի վեր, գրքի մը վրայ թանկագին  
 Ժամու մը մէջ ժրպիտներու, սէրերու,  
 Կամ քերթուածի մը ծրնած վեհ վայրկեանին  
 Զիս հապըշտապ կը մըղէ  
 Մերթ լալու, մերթ մռընչելու,  
 Եւ զինելու բռունցքըս, հոգիս բռունցքիս մէջ:



**ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ.** — Տակաւին երիտասարդ, բայց արդէն ժամանակակից հայ բանաստեղծութեան մէջ կը գրաւէ առաջին տեղերէն մէկը: Ծնած է Սեբաստիոյ Բրզնիկ գիւղը. իր ուսումը առած է Վենետիկի Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանը եւ ապա Եւրոպայի Կանի (Պէլճիքա) համալսարանը: Վարուժան որպէս Սեպուրիի սուրբ-եղծութենէ ոչ զերծ բանաստեղծ, կը մշակէ ազատ ոտանաւորը եւ քնարերգութիւնը: Իր բանաստեղծութեան դրոշմը կը կազմեն քնարական բարձր եւ հովուերգական քնքուշ ներշնչումը, պատկերներու հարազատութիւնն ու փարթամութիւնն, եւ լեզուի կատարելութիւնն: Հրատարակած է «Յեղին Սիրտը» հատորը, որ հայ քնարական բանաստեղծութեան հոյակապ էջերէն մէկն է, ինչպէս եւ Սարսուռներ եւ Հերանոս երգեր՝ ուր հաւաքուած է իր բանաստեղծութիւններուն կարեւոր մէկ մասը:



## Հ Ա Յ Հ Ե Ր Ո Ս Ն Ե Ր Ը

Թո՛ղ խրախնամի հերոսներին եւ դասարկ պոռոտախօսներին,  
Թո՛ղ եւ նրանց, որոնք սովոր են կարմրցնել իրենց ձեռքերը մարդկային արիւնի մէջ.

Տա՛ր ինձ այնտեղ, նահաւակողների բանակը,  
Ուր մեռնում են Սիրոյ մեծ գործի համար:

Ն.ԿՐԵՍՈՎ.

Կա՛նգ առէք այդ պաշտելի շիրիմների առջեւ, մտէ՛ք այդ վեհ պանթէօնը, ուր ամփոփուած են մեր թանկագին մեռելները, մեր նորագոյն պատմութեան զարդն ու պարծանքը: Ենչեցէք այդ անաղարտ միջնօրրատում, եթէ կ'ուզէք



ազնւանայ և «վերանայ» կեանքի գծուձ մտահոգութիւններից՝ դէպ ի մաքուր, եթերային բարձունքները . . . :

Բայց ո՞ւր է նա—այդ Պանթէօնը, ո՞ւր հայկական աստուածատաճարը, մեր սրբերի հանգրւանը, սերուրդների ուխտավայրը . . . :

Իսկ մեր ամբողջ վատարախտ հայրենիքն է—ծայրէ ծայր սերմանւած, պարարտացած հերոսների նշխարներով . . . :

Հայ հերոսը, որի միտքը զառանցել է միշտ «հայրենիք», «աղատութիւն» և «արիւն», որ իբրև մարմնացած անձնագոհութիւն, զինւած՝ մեռնելու մի հազւագիւտ պատրաստականութեամբ, կուրծք է տւել աշխարհի ամենավայրագ, ամենատմարդի բռնակալութեան հարւածներին, քայլել է միշտ գրկախառնւած իր պաշտամունք-ժողովրդի հետ, մասնակից նրա վշտերին, վայրկենական ուրախութիւններին. հայ հերոսը, որ իր ճխլւած, պատառոտւած դրօշակով, բուքերի ու բուրանների մէջ թափօր է արել արիւնաներկ հայրենիքում, արբել է վառօդի պաղ ու դաժան բուրմունքով, գրկել է կրօնական ջերմեռանդութեամբ իր հրացանը և սլացել դէպի վտանգ, միշտ համարձակ, անվեհեր. միշտ երգելով կռիւների արչալոյսին . . . Գնացէ՛ք հարցրէ՛ք Վասպուրականի և Տարօնի անդնդախոր ձորերին, ականջ դրէ՛ք գետերի, աղբիւրների կարկաչիւնին—նրանք բոլորը կը պատմեն ձեզ Հրայրների ու Ապրօների, Վազգէհների ու Սերոբների արկածները, նրանց վսեմ վշտերը, նրանց վսեմ ուրախութիւնները . . . Լեզու տւէ՛ք հերոսների ոգիներին, որ թափառում են այդ անհամբոյր լեռների մէջ—դուք կ'իմանաք իւրաքանչիւրի ինտիմ կեանքից սիրտ կտրատող պատմութիւններ, դրամաներ . . . Ահա նրանք՝ հոգեվարք, մահամերձ՝ մրմնջում են դաշտերի մէջ, ձորերում, անհաւասար կուլից յետոյ թողնւած ի սաստ ձակատագրի. ահա նրանց ընկերները մի ուրիշ սեղ նոյն անվեհեր վճռականութեամբ դէմ են դնում նոյն ահեղ, անհաւասար ընդհարումներին. ուրիշները, կեանքի բոլոր վայելքներից հրաժարւած, գիշեր-ցերեկ որոճում են ծրագիրներ,

եռում են յոյզերով ու յոյսերով, ուրիշները ճօճւում են կախաղանից, գալարւում են բանտերի նկուղներում... Միշտ պայքարել և տանջւել, միշտ մտածել ու տնքալ, երբեք լալ, յուսահատուել—հայ հերո՛սը, նման բոլոր հերոսներին, այն ընտիր, ասուածաշունչ տիպերից է, որ կարլայլ անմահացրել է իր հանճարեղ տողերով և նրանց յիշատակը անցել է սերնդէ սերունդ, դարէ-դար, ժողովուրդների սրտերի ու երգերի մէջ... Ահ, կարլայլեան գրիչ է պէտք՝ մեր հերոսներին նկարագրելու, նրանց դէմքերը յաւերժացնելու, նրանց գործերը շատագովելու... :

Մէկիկ մէկիկ սահում են ահա մեր աչքերի առջև նրանց պաշտելի սուերները, որպէս մի հսկայ գալերէյի մէջ—ջինջ, անաղարտ հոգիներ, իրենց թովիչ բարձրութեամբ ու անյաղթելի կորովով :

Ահա Արամեանը : Գնքոյշ ու բարեկազմ, բանաստեղծական արտաքինի տակ,—մի քնքոյշ ու սիրող սիրտ, գրեթէ կանացի մեղմութիւն : Բայց այդ սիրտը վրէժի ու թոյնի մի հրաբուխ է ժողովրդի ոտխների հանդէպ... Այդպէս չե՛ն արդեօք մեր բոլոր, գրեթէ բոլոր հերոսները, ի բնէ մեղմ, մարդասէր ու խաղաղասէր, բայց կեանքի տարրալուծող յորձանքից խեղաթիւրւած ու մոլեգնած... Պատանեկան հասակից արդէն՝ Արամեանը ճաշակում է արեան հոտը, նա տերրօրիստ է, մարդասպան : Եւ այնուհետեւ՝ էլ չթողեց արեան ճամբան, այնուհետեւ տաանուհինգ տարի կրեց անտրտունջ յեղափոխութեան ծանր խաչը, մինչեւ եղերական կախաղանը, որի ծայրից նա նոյն յանդուգն մոլեգնութեամբ շանթահարեց հայ ժողովրդի դահիճներին և մինչեւ վերջին շունչ «կեցցէ՛» գոռաց Յեղափոխութեանը... :

Ահա Մալոյեանը :

Կռւո՞ղ— ոչ . պրօպագանդիստ— ոչ . կազմակերպո՞ղ, տերրօրիստ— երբե՛ք : Բայց հերոս—ա՛նտարակոյս : Մէկը այն համբ ու մոռացւած տիպարներից, որոնք մեծ են հէնց իրենց համբութեամբ ու կորածութեամբ :

Հերոսի ստորոգելիները մի միայն գոռ ճակատամարտներն ու յաղթանակները չեն, ոչ էլ ամէն բան դիմագրաւող յանդրգնութիւնն ու իմացականութիւնը: Բաւական է և մեծ հոգին, բաւական է անյողգողդ վճռականութիւնն ու որոշումը — ժխտել «ես»ի բոլոր կենսատենչ պահանջները, մերժել կեանքի ամէն վայելք, մերժել անգամ հարազատների, անօգնական ծնողների աղերսանքն ու վայնասունը և զոհաբերել յանուն աւելի բարձր, վսեմ մի իրականութեան, զոհաբերել գիտակցօրէն ու ինքնաբերաբար, ներքին անդիմադրելի մղումով . . . :

Այդպէս էր Մալօյեանը . . . Շատ էր լսել իր շուրջը ունայնամիտ բացականչութիւններ, շատ էր տեսել Ֆրազային հերոսների պերճախօս ըմբոստացումներ — ինքը միշտ լուռ ու դարտոտ, գրեթէ միշտ անմուռնչ հանդիսատես՝ թէ՛ հրապարակական ժողովներում և թէ՛ իր պաշտօնակից-ուսուցիչների շրջանում . . . Չէր խօսում — խօսելու ձիրք էլ չունէր — միայն ներքուստ կակծում էր, արիւնւում . . . Եւ մի օր նա անհետացաւ հայրենական օճախից, թողնելով ծերունի հօր՝ լաց ու շիւանի մէջ . . . Եւ մի օր Աւօի դիակը փուկեց սահմանի միւս կողմը, այն խորհրդաւոր հողի վրայ, որ երկար տարիներից ի վեր նրա երազների առարկան էր և ուր գնացել էր պառկելու, «հանգստանալու», որովհետեւ կեանքն այլապէս մի դժոխք էր նրա համար, մի անհանդուրժելի տաղաուկ և մի անվերջ խղճահարութիւն . . .

Fu grande, perché buono...

(Մեծ եղաւ, քանզի բարի)...

Ահա Նեվրուզը :

Ո՞վ է տեսել այդ վիթխարին և չի հմայւել նրա հոյատիպ կերպարանքով և նրա սրտի բլւրեղանման մաքրութեամբ : Նա էլ Աւօի նպէս . . . Ոչ ուժեղ մի գլուխ էր, ոչ էլ ճարպիկ մի կուռղ, նորսօգոյն մեթօղներով : Իր հերքուլեսեան մարմինն ունէր միայն, իր հոլանի բազուկները, և կարող էր կրօնփամարտի մէջ գետին գլորել մի տասնեակ մրցակիցներ :



Մի պարզ, ազնիւ հայ աշխատաւոր... Նրան էլ այրում, լախում էր նոյն տիրական բաղձանքը — գնալ զոհել Հայաստանի հողի վրայ: Թէ՛ Ռօդօստօի գետնայարկերում, ուր Կուսակցութեան ժողովարարն էր, թէ՛ Ռումանիայի ու Բուլղարիայի ճաշարաններում, ուր պարապում էր խոհարարութեամբ, թէ՛ Փրնելում, ուր «ուխտի էր եկել» խմբագրութեան, թէ՛ Կովկասում, ուր գնացել էր մի այլ ուխտով... Ընդհանուր ժողովին՝ «գէթ հեռւից», «գէթ մի անգամ նայելու տենչով» — ամէն տեղ իր աքսորական ու թափառական գոյութեանը ընթացքում նա ման է ածում իր այդ հիմնական բաղձանքը և աղերսում է Կազմակերպութեանը՝ զրկել իրան բուն Հայաստանում կուլելու, նրա խորանին զոհաբերելու:

Նա էլ ի վերջոյ հասաւ մուրազին, մտաւ 1904ի ամառւայ մեծ արշաւախմբի մէջ և մի կատաղի ու արիւնայի ճակատամարտից յետոյ՝ գտաւ իր վաղածամ գերեզմանը գուրգուրած, նւիրական հողի վրայ, Բասենի լեռնադաշտում, յայտնի չէ ո՛ւր...:

Եւ քանի՛ այդպիսիներ...:

Յուզիչ մի բան կայ Մալոյեանների ու Նեվրուզների այդ տխուր ու անտառուհակ կարիէրի մէջ: Հայրենասիրութիւնը նրանց համար մի կրօն է, միատիկական մի հաւատամք, գերծայն բոլոր տարերքներից, որոնք նսեմացնում, գռեհկացնում են մարդ-էակին. ջինջ, անխարդախ մի կրօն, որ առհասարակ անհաշիւ է, ինքնայորդոր, տարերային...:

Գրեթէ բոլոր կրօնները ենթադրում են «հատուցման», «վարձատրութեան» անհրաժեշտութիւնը. քրիստոնէութիւնը պահանջում է հնազանդութիւն իր պատերազաններին՝ դրախտի խոստումներով և դժոխքի սպառնալիքով: Կրօնաւորները, միախօնարները, բոլոր բարեպաշտ, աստուածավախ քարոզիչները կատարում են իրենց այս կամ այն այլասիրական պարտականութիւնը, միշտ ունենալով իրենց աչքի առաջ պատժի ու հատուցման այդ անհրաժեշտ հեռապատկերը:

Այլ է հերոսների կրօնը: Եւ մանաւանդ մեր նկարագրած

հերոսների : Փնտուցէք «ես»ի ու «հատուցման» մտահոգութիւններ Մալոյեանի , Նեվրուզի գլխապատառ ու անհաշիւ վաղքի մէջ : Նրանք կարծես հնազանդում են մի աւելի բարձր կատեգորիայի , մի աւելի վսեմ տարերքի , քան թէ այն՝ որ առաջադրում է էմանուէլ Կանտ , իր «վճռական հրամայականների» մէջ : Կանտի երեւակայած հերոսների մօտ՝ զոհելու կամքն ու որոշումը բղխում են Պարտականութեան գլխակցութիւնից . այստեղ—ասես հակառակն է . այստեղ կամքը առաջնական և տիրական գործօնն է : Մարդիկ զոհաբերում են յանուն իրենց դաւանած գաղափարի՝ ոչ թէ այն պատճառով , որ մի «գերագոյն պարտականութիւն» վճռականօրէն հրամայում է նրանց , այլ որովհետեւ զոհելու կամքը այնքան ուժեղ է շեշտում նրանց մէջ , զգացումները այնքան յորդացած ու տիրական են , որ անհնարին է ընդդիմադրել նրանց յորձանքին :

Ասե՛լ արդեօք , որ նրանք մղւած են անճնական տառապանքից ու վրէժխնդրութեան ծարաւից , որ այդ մեծ , անճնուրաց հոգիները տանջւել են նախ և առաջ իրենց ծնողների , հարստատների մահւան ու տառապանքի տեսարաններով . . . Կան , անշուշտ , այդպիսիները հայ հերոսների շարքերում . բայց և քանի՜սը կան , որ այդ տանջանքը չեն ճաշակել , չեն ապրել , այսպէս ասած , իրենց սեփական կաշւի վրայ . . . Իրանցից են մեր թւածները :

Gloria victis!,,, Փա՛ռք նրանց , բոլոր յաղթւածներին , գաղափարական պատերազմի բոլոր զոհերին . . .

Իււաղիր , վրիժառաւ , տերրօրիտ—նրանք բոլորը նախ և առաջ մարդ են :

Պատերազմի , բռնի ուժի սիրահար—նրանք բոլորը էպպէս խաղաղասէր են , տենչացող համաշխարհային եղբայրութեան :

Մահացած գրեթէ միշտ իրենց ծաղիկ հասակներում — նրանք գրկում են անմահութիւնը , յաւերժանում են ժողովր-

դական աւանդութիւնների ու աաղերի մէջ : Բռնակալութիւնը անդամալուծում է նրանց ձեռքը—երբե՛ք հոգին . . .

Հայ ժողովուրդը չի կարող, աւանդ, սերիչ, երբեմն իր քախտակից ժողովուրդների պէս, մի օր հաւաքել այդ անթիւ ու թանկագին նշխարները և ամփոփել ընդհանրական, հոյակապ մի սրբարանում : Քանի՛ նւիրական դամբարաններ, ձգւած հապճեպ ու դողացող ձեռքերով, հեռու, անյայտ վայրերում . քանի՛ դիակներ, մնացած անտէր, անթաղ, անշիրիմ . . . Ո՛ւր են Պետո, Չաքարեան, Աւետիսեան . ո՛ւր է Արարօն, ո՛ւր Սերոբը, Քեռին, Վահանը, Կայծակը . ո՛ւր են Կայծակի խմբի ռազմիկները՝ Բուլանդգի Աւդալը, Ռաչօն, Սև Համօն, Ռուբէնը, Խաչիկը, Յարօն, Դոյոյեանը . ո՛ւր են Կրեառային, Սաղաթելը, Ոսկանեանը, Բիճան, Վանեցի Գառապարը, Ղարաբաղցի Նիկօլը . ո՛ւր Խանը, Նեվրուզը, Մալոյեանը . ո՛ւր Կարօն ու Թորգոմը, ո՛ւր Քէնդէրեանը, Երկաթը . ո՛ւր Կորաւ Արշաւիր Կամսարականը, ո՛ւր են Ապրօն, Գուրգէնը, Սայդօն . ո՛ւր Աղիգօֆը, ո՛ւր են Խաատուրի Խաչատուր վարժապետն ու Յարօն, Մարգար վարժապետը, Ախպէրը, Թէքիրդաղցին և հարիւրաւոր զինակիցները և հարիւրաւոր անանուն հերոսները . . . Վաղճեց նրանք փոշիացած ու կույ կն գնացել Հայաստանի բուրաններին . . . Վաղճեց հողը եւ ուժ է նրանց սրբազան աճիւններով — և եթէ այսօր հայրենիքի լայնարձակ տարածութիւնները չորցած, ամայացած են բարբարոսութեան համայնաճինջ ուրագաններէյ, ապա մի օր, ոչ հեռու ապագայում, այդ հողերը պիտի ծաղկին, կանաչին ու բարգաւաճին, որովհետեւ նրանք սոսկում են մեր հերոսների արիւնով :

Պատի՛ւ քեզ, հայ ժողովուրդ : Պղտոր, տղմուտ հոտանքներ շատ ևս տեսել քսան անգամ դարաւոր կեանքիդ մէջ . լէզէօններո՛վ ևս արտադրել վառ, դաւաճան տիպարներ, թշնամրներ ազգայնութեան ու մարդկութեան, — բայց քո վերջին 20 տարւայ պատկառելի հերոսացանքը մոռցնել կը տայ շատ անպատիւ իրողութիւններ, ջնջել կը տայ շատ բարոյական



արատներ, և դու կը բարձրանաս աստիճանաբար, համարձակ՝ արժէքների ու առաքինութիւնների մացառապատ սանդուխով ու տեղ կը բռնես—յանձին քո մեծ, գաղափարական զաւակների—համամարդկային հոյակապ պանթէօնում . . . :

Ի՞նչ փոյթ թէ մեր անզուգական «աստուածատաճարը» դուրս է մնում նիւթից, տարածութիւնից : Ի՞նչ փոյթ թէ նա խուսափում է մեր տեսողութիւնից, մեր բարեպաշտ ուխտաւորութիւնից ու ծնրադրութիւններից . . . :

Թո՞ղ նա կերուի ժողովրդի արթնացող գիտակցութեան մէջ :

Թո՞ղ նա ամուր խարսխուի ձերունդների հոգիներում :

ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ

**ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ** (ՎԱՐԱՆԴԵԱՆ). — Ոչ միայն կովկասահայ, այլ եւ ամբողջ արդի Հայ գրականութեան մէջ առաջին



գրագէտը՝ որ կը միացնէ իր վրայ արուեստագէտ գրողի եւ բազմահմուտ ընկերաբանի երկու հազուագիւտ մեծ կարողութիւններ : Իր սօքը քնարական ու պատկերալից, իր դիտողութիւնները խոր եւ լայնաշունչ՝ կը բարձրացնեն հայ հրատարակագրութիւնը կատարելութեան, — կատարելութիւն՝ որպէս արուեստ եւ որպէս գիտութիւն :

Միքայէլ Յովհաննէսեան զաւակն է ու ղեկավարներէն մէկը միանգամայն թրքահայ յեղափոխութեան, եղած ըլլալով խմբագրութեան մէկ անդամը Իրօշակի եւ Թիֆլիսի Յառաջ թերթին ու անոր յաջորդական անուններուն : Ստորագրած է նաեւ Մշակի եւ Մուրճի մէջ շատ մը գեղեցիկ էջեր : Իր առանձին հրատարակութիւններն են՝ Հայրենիքի Գաղափարը, Դաշնակցութիւնը եւ նրա Հակառակորդները,

Դորդեան Հակոբյոցը, Փիլիսոփայ Սօցիոլոգ, Կովկասեան Վանդեան, Վերածընդող Հայրենիք, Համաժողովրդական բանակ, Հոսանքներ ու Կրօն եւ գիտութիւն :



## Մ Օ Ր Մ Ը Ե Ր Ա Ջ Ը

«Երազս քեզ այսօր գրեմ...: Մեռելոցի կէս դիշերն էր...»  
 Չորս եղբայրներդ յանկարծակի իմ առջեւ ծուռնկի ինկան,  
 Ո՛չ պատանք կար իրենց վրայ եւ ո՛չ ալ հետքը մսի,  
 Խաւարին մէջ սրսփալով, եւ աչքերնին մէկ մէկ անդուռով,  
 Եկան իրենց մօրկանն առջեւ յիշատակներ արտասուելու...»

— Մայրի՛կ, մայրի՛կ... հին օրերու արշալո՛յս...  
 Այսօր նորէն չորսերնիս մէկ, մեր հողերէն դուրս ելած  
 Մըրկին հետ, քեզի եկանք, տանդ դռնակը բաղխելու...  
 Մի՛ սարսափիր. օտարներ չենք, եւ մրափիդ մէջ մենաւոր,  
 Սպասէ որ մեռելոցի իրիկուսով դոնէ քու դէմքդ դիտենք:

— Մայրի՛կ, մայրի՛կ... հին օրերու սրբութի՛ւն...  
 Հողուն տակէն, մեր խեղճ դիւղին դերեզմանոց,  
 Ես քեզ համար սրտիկէս սիրոյ ծաղիկը ծաղկեցուցի...

— Մայրի՛կ, մայրի՛կ... հին օրերու քաղցրութի՛ւն,  
 Ես քեզ համար իմ աչքերէս, երկու սափո՛ր արտասուքի...

— Մայրի՛կ, մայրի՛կ... հին օրերու երջանկութի՛ւն,  
 Ես քեզ համար իմ հոգիէս յոյսի վարդեր հրավառ...

— Մայրի՛կ, մայրի՛կ... հին օրերու հերոսական արիութի՛ւնն  
 Իսկ ես ալ իմ կրծոսկրէս պաշտպանութեան երկու ղրա՛հ...

— Մայրի՛կ, մայրի՛կ... հին օրերու դուն անմահ գեղեցկութի՛ւն,  
 Ո՛րչափ խորշով ճակտիդ վրան, ըսաւ եղբայրդ երէց...  
 Ի՛նչպէս կրնաս երգիքիդ տակ միս մինակդ տառապիլ,  
 Եօթը տարի եօթն անգամ տանդ դռնակը ծեծեցինք...  
 Բայց այս դիշեր միայն բաց էր... Ո՞ր ճամբորդին կը սպասես,  
 Տե՛ս, հիւղակդ դագաղներու կոյտի մը պէս կը շարժի...  
 Տերեւները, տե՛ս կը թափին, ծառերն ի վար, մըրկէն,  
 Առուակին մէջ, աղաւնիներն անմեղութեամբ կը մեռնին,  
 Ու սեւ օձերն, սեմին վրայ, մեր չոր արիւնը դեռ կը լիզեն...:  
 Պարտէզիդ մէջ, ո՛չ կանաչ կայ, ո՛չ պտուղ կայ, ո՛չ տատասկ...  
 Չորսերնիս մէկ, ամբողջ տնակը ժուռ եկանք,  
 Մեր կոտրած սուրերն, ի տես մեզի, անգամ մըն ալ շողշողացին...  
 Մառանն արդէն դատարկ էր... եւ գոմին մէջ,  
 ձերմակ գառնուկ մը մայելով, իր կճղակները կը կրծէր...



— Մայրի՛կ, մայրի՛կ... հին օրերու առատութի՛ւն,  
ի՛նչպէս կ'ապրիս, ի՛նչպէս կ'ապրիս տնակիդ մէջը թափո՛ւր:

— Մայրի՛կ, մայրի՛կ... հին օրերու գուրգուրա՛նք, հին օրերու դթուլթի՛ւն,  
ի՛նչպէս կ'ապրիս, ի՛նչպէս կ'ապրիս տնակիդ մէջ թափո՛ւր:

«Չորսերնին մէկ լսեցին... բայց անունդ երբ ես սուկ  
երազիս մէջ՝ մորկին պէս իմ արձակած հեծեծանքէս,  
Չորսերնին մէկ, գլուխնին կախ, խենթերու պէս սկսան լալ...  
Բայց ձեր եղբայրը դեռ ողջ է, ան որ ձեր մահը չի տեսաւ,  
Ձեր փոքր եղբայրը դեռ ողջ է, անոր համար միայն կ'ապրիմ...  
Այս խօսքերս որ լսեցին, չորսերնին մէկ իրենց կողերը կտարտելով  
Մեռելներու սեւ արցունքն ահաւոր, աչքերուս մէջը թափելէն՝

— Եղբայր մ'ունինք, եղբայր մ'ունինք, մեր կեանքին մէջ եղբայր  
մ'ունինք,

Մայրի՛կ, մայրի՛կ... նոր օրերու, նոր յոյսերու թշուառութի՛ւն,  
ի՛նչպէ՛ս այլեւս մենք մեր հողին վերադառնանք, ի՛նչպէս դառնանք...»:

#### ՍԻԱՄԱՆՅՈ



**ԱՏՈՄ ԵՍԻԴԱՆԵԱՆ** (ՍԻԱ-  
ՄԱՆՅՈ). — Ատոմ Եարձանեան ա-  
ռաջին հայ ներկայացուցիչը Սեւ-  
պոլիսի բանաստեղծութեան, իր հզօր  
երեւակայութեամբ եւ պատկեր-  
ներու ու լեզուի հոյակապ գեղեցկու-  
թեամբը, ժամանակակից թրքահայ  
մեծ բանաստեղծը: Իր քերթուած-  
ները, ամենամեծ մասով դիւցազներ-  
գական՝ բացատրութիւնն են թրքա-  
հայ ժողովուրդի նոր ու մար-  
տական ոգին: Հրատարակած է  
Դիւցազնօրհն, Հայորդիները, Հոգե-  
ւարքի եւ Յոյսի Չափեր, Կարմիր Լա-  
րեր Բարեկալիկի հատորները, որոնց  
մէկ մասը ամփոփուեցաւ իր վերջին  
հրատարակութեան՝ Անբողջական  
Գործին մէջ:



## Պ Ա Ն Դ ՈՒ Խ Տ Ի Կ Ե Ա Ն Ք Է Ն

Եղանակներուն մէջ մի միայն աշունն է, ուր Ղարիպի կեանքին ու տանը մէջ տրամութեան հետ ուրախութիւն կը խառնուի քիչ մը: Աշունն անոր իղձերուն ու ակնկալութեանց եղանակն է: Հազիւ թէ տերուները դեղնած կը թափին, չոգենաւը կը բառնայ մեր եղբայրները և կը թափէ ասիական եղերք, Սամսոն, Կիրատոն և Տրապիզոն: Ռըչափ բերկրութեամբ աշնան վերջին օրերը ոտք կը դնէ Ղարիպն այն ցամաքին վրայ, որուն հրածեշտ տուած էր, չգիտեմ քանի տարիներ առաջ, ծաղիկներու ամսուն մէջ՝ գուցէ անյոյս և վշտաբեկ: Ո՞վ կարող է սահմանել այն հոգեկան տպաւորութիւնը՝ զոր կը կրէ ան, մինչ աչքերը վերամբարձ՝ կը դառնայ ասիական ցամաքէն դէպ ի արեւմուտք, և կը տեսնէ որ արեգակին ճախն բոցերը կը մարմրին Բիւզանդիոնի վրայ: Այն օրը, իրաւ, նոր մարդ է ան:

Եւ սակայն ո՞րչափ օրեր պէտք են: Դանդաղ տարիներն անտրատունջ և անձանձրոյթ անցուցած է Կ. Պոլսոյ սալտատակներու և մթին խորշերու մէջ, իսկ այժմ, տարիներու չափ ծանրութիւն ունին կարճուկ օրերը. տան սէր, ծնողքի սէր, կնոջ և զաւկի սէր, սարի և ձորի սէր, ամէնքն ալ կը զարթնուն ցաւերով ընդարմացած կուրծքին տակ: Ի՞նչ, — Ղարիպն ալ սիրտ ունի եղեր: ✠

✠ Մէկ օր միայն հերիք է Սեւ Ծովէն կրած տառապանքները մեղմելու: Ուստի երկրորդ օրը, տակաւին աղօթարանը չբացուած, կարաւանը ճամբայ կ'ելլէ: Հոս ունի Ղարիպը մեր Պետրոս Կաթողիկոսի գետակը՝ որմէ վերջին անգամ անցած էր. հոն ունի բլրակ մը՝ ուսկից առաջին անգամ մանկութեանը նշմարած էր Սեւ ծովը, այդ կապոյտ երկինքը՝ կապոյտ երկնքի տակ: Սակայն ի՞նչ ընեմ ասոնք. մէկն ունի երեսնօրեայ, ու միւսը՝ կիսամսեայ ճամբորդութիւն: Դուն տեսե՞ր ևս Տէրսիմի և Բարձր Հայքի խորերն ու սարերը. բար-

ձուռք՝ որ ամպերու կը կցուին, անդունդներ՝ որ դժոխքի կը մօտենան. մէկ օրուայ զառի վեր, մէկ օրուայ զառի վար: Եւ սակայն կ'անցնի կոխելով քարն ու փուշը: Արեւելքն ունի իր իղձերուն ու ճամբորդութեան կողմնացոյց: Եւ գէթ երկինք նպաստաւոր ըլլար: Օդը ցրտին է. գետինը տղմոտ, ձիւնն ու անձրևը անընդհատ կը տեղան երբեմն. անպատասպար կը քալէ ան՝ տիղմերէ ու անձրեւէն թաթխուած, ինչպէս կը տեսնենք սովորաբար մեր պանդուխտները հոս անձրևոտ օրերը: Ծերեր ալ կան անոնց մէջ. մեր Պօղոս աղքատը 65 տարեկան էր երբ վերջին անգամ, դաւաղանին վրայ կրթնած, Տէրսիմի լեռներն անցաւ քալելով. Հրէից Մովսէսէն աւելի հաւատք ունէր, և հասաւ իր պապերու երկիրն ու պապենական տուն: Գիշերներն ստիպուած է ծառերու քիւերուն տակ կծկուիլ, դուն ըսէ պատասպարուիլ, և քիչ անգամ գոմերումէջ, որոնց կոշտ ու կոպիտ տէրը, իր եզան կամ գոմշուն քով յանձն չառներ շատ անգամ անկիւն մը տալ մեր Ղարիպին՝ հոն գիշերօթելու համար: Առտու քալէ, իրիկուն քալէ, քալէ ու քալէ՝ և ահա օր մըն ալ տաժանելի ճամբան կը սպառի. վերջին քայլը, և ահա Ղարիպին կարաւանը կը գրանուի երկու լեռներու մէջ բարձունքներու վրայ, ուրկէ վար է ամէն բան: Օրուան վերջին վայրկեանները կը մեռնին ժամացոյցին սուր սլաքին տակ. գիւղն է՝ կ'երեւի, ծուխն է՝ կը բարձրանայ: Երկար շնչառութիւն մը մաշած թոքերէ. «Օրհնեալ է Աստուած»: Այգիներն ու ծառաստանը կ'երեւին, եկեղեցիին կամարը և կամ վանքի կաթողիկէն, որ մեր գիւղերը կը պահպանեն: Հոս ընկուզենին իր մերկ ոստերը օդին մէջ կ'երկարէ, հոն կաղամախին կ'երկրայ հիւսիսին առջև. անդին սպիտակ ձիւնին վրայ իր սեւ թեւերը կը պարզէ խաչը գերեզմաննոցին մէջ, ասդին Սուրբ Կիրակոսի, Վառվառ տիկնոջ, Ս. Յակոբայ և Ս. Սարգսի քարաշէն մատուռները գիւղը կը շրջապատեն:

Եւ սակայն նոր դող մը կը սկսի: Գիտե՞ս թէ ի՞նչ է այն. — մին կը խորհի ակամայ թէ պիտի գտնէ՞ ողջ այն ա-

մէն անուանները՝ զորս իրեն՝ զրկուած թուղթերու մէջ կը կարգար, և որոնք շատ անգամ կը նշանակուին Ղարիպին սիրտը խարելու. պիտի գտնէ՞ իր սրտին հատորիկը մեծցած զարգացած, զոր, իր մեկնած ատեն, թողած էր օրրանի մէջ. պիտի գտնէ՞ իր մանկամարդ կիներ՝ որուն հետ հազիւ չորս ամիս կենակից եղած էր. պիտի գտնէ՞ . . . :— «Մի՛ վախնաք, տղե՛րք, Աստուծով ամէնքն ալ ողջ են» : Խնդճ մարդիկ, Աստուծով ի՞նչ չեն. Աստուծով աղքատ են, Աստուծով դարի՛ պան, Աստուծով վի՛շտ ունին և տառապանք ունին : Հազիւ թէ այս խօսքերը կը մարին օղին մէջ, հրացաններու պայթիւնը կ'որոտայ խորերուն մէջ, նոր բոց մը արեւմուտքէն դէպ ի արեւելք՝ գիւղին հորիզոնը կը պատռէ : Խաղաղ դիւղն է՝ կը խռովի, կը խայտայ. «Ահա տղերք եկան» :

Այ վաղող վաղողի. ծերուկն ու պառաւն ալկոգեւորին. խուռն քաղմութիւնը դիմաւորելու կը վազէ. մէկուն քոյրը, միւսին՝ եղբայրը, ասոր մանկիկն ու անոր մայրը, բայց ո՛չ մէկուն կիներ՝ որուն գիւղական պատշաճութիւնը թոյլատուութիւն չընէր : Կարելի՞ է բացատրել այն գրկախառնութեանց խորութիւնն ու քաղցրութիւնը երբ իրար կը խառնուին ճամբորդներն ու գիւղացիք. մէկուն կ'ըսեն. «Ահա մանկիկդ» . միւսին կ'ըսեն. «Ահաւասիկ եղբայրդ» : Արդեօք քանի՛ անգամ պէտք եղած է ըսել մօր մը թէ «Ահա զաւակդ», որ մանուկ մեկնած էր և այժմ կը դառնայ պեխերն ոլորած և կտրիճ դարձած. և ուրիշ մըն ալ անդին յուշիկ կը քալէ ալեւորած, կորաքամակ, որ կտրիճ պանդխտութեան ելած էր :

Զրսօն, Քոմոն, Զայօն, Տրլեն, Մուրօն իրենց տէրերը մոռցած չեն, և ամբօխին մէջ ամէն մէկը իր տիրոջը ոտքին կը փարի՝ կաղկանձելով, տուան երերցնելով :

— Ո՛ւր է, Կա՛րօ, արեւո՛ւղ դուրպան, դու մարդ չունի՞ս, հայր չունի՞ս, մայր չունի՞ս :

Իր նշանածին մայրն եկած է միայն և իրոխտ գոռոզութեամբ կը դիտէ իր կտրիճ փեսացուն, որուն այս անգամ պան-



դրխտութիւնը՝ իր բոլոր դառնաթոյն զօրութեամբ՝ ազդեցութիւն չէ ըրած :

Իր հաւատարիմն ալ , Զրմօ , զոր Կարօ խնամեց երբ կոտորիկ էր , վզվզալով կը քծնի : Վերջապէս՝ խօսելով , հարցումներ ընելով , խնդութեան արցունքները սրբելով՝ առնն կը մըտնեն : Տուն կը մտնէ Կարօ . հոն են իր ծնողքը . հայրն սպիտակ մօրուօք ծերունի է , որ՝ լսելով աւետաւոր դարձը իր միակ դակին , հազիւ սողալով մինչեւ դուռը կարող եղեր է հասնիլ . մայրը զառամ , բայց համեմատաբար նուազ տարէց , որ կարող էր սակաւին ապուր եփել , իր ծերուկ ամուսնին օգնել : Վախ , տեսնէ՛ր խնդութեան արցունքը՝ որ չորցած ու ցամքած աչքերէ թառամ այտերու վրայ կը կաթկթին , և անկէ կը գլորին Կարօի հօր սպիտակափառ մօրուքին թելերուն վրայ . տեսնէ՛ր զառամ մօրկան կարկամ գիրկն ու գորովի խանդազատանքը սառնամանուտ կեանքի յետին վայրկեաններու մէջ՝ որոնք տակաւ կը մարին անդարձ վերջալուսի ատեն : Ծրագրներ կը վառին , սիրտերը կը վառին , վառարանին մէջ բոցը բարկաճայթ կը ճարճատէ : Առ այժմ swars չկայ . ամէնքն ալ անցան . ալ զարիւղ չկայ . սրտի ա՛խ չկայ :

Թո՛ղ ասոնք որ իրենց գգուանքներն ու գորովի քաղցրութիւնը վայելն . մենք զարնենք ուրիշ դուռներ ալ :

Ըսէ՛ք սա ծերունի հօր թէ ինչո՞ւ տրամած է . հարցուցէ՛ք սանտրատի կնոջ թէ ինչո՞ւ տխրած է : — Ախ , շատեր գրած էին որ այս աշուն Աստուծով հայրենիք կը դառնան , բայց քիչեր եկան . վերջին սիլանիներն երեցան , արդէն մեր ձմեռն ալ հասած է , և բազում ակնկալութիւններ ի դերեւ ելան : Ծերունին յոյս չունի որ ձմեռը ողջ անցընելու կարող պիտի ըլլայ . նորատի կինն ալ ահաւոր պատրանք կրեց ծիրանեփայլ յոյսի մէջ : Կը տեսնէ՞ք այդ սեւ թուղթերն ալ որ գաղա դողդղալով ձեռքէ ձեռք կը սողոսկին , և ոչ ոք կը համարձակի իրենց հասցէին դրկել զանոնք : Գիտե՞ս ինչ են ասոնք . — Մանօն թաղեր են հոս , Զաքարը Տրապիզոն մեռեր է հազիւ ծովէն ազատած . Օհանը չկայ , Օհաննէսը չկայ , մէկ գիւղի տղաքներ , որոնց

երիցագոյնն էր 45 և կրտսերագոյնը 18ամեայ : Վա՛խ , վա՛խ , հազա՛ր վախ :

Գիշ մը պինդ կեցիր, քակենք այդ ծաղուած թուղթերէն մին, որ տակաւին արցունքոտ է :

«Քրիստոսի ծառայ Ակօէն շա՛տ բարեւ, մօրս Մագօին (Մարգրիտ), եղբօրս Թադէին, հարսներուն, տղոց ու ձօերուն, քոյրերուս, մեզ հարցնող ամէն դրացնի ու բարեկամաց :

«Երանս վրայ չերթար որ ըսեմ. բայց ի՛նչ կարող ենք ընել. Աստուծոյ կամքն է, Մանօ այս աշուն մանկէն ի վեր՝ կը հազար ու կը հազար. մէկ օր հեռի տեղ մը գործի գացեր էր. իրիկունը, բանթողէն ետքը, ճամբան անձրեւի բռնուելով՝ ջուր խխում եղեր էր : Նոյն գիշեր շա՛տ հազաց, և առտուն երբ ձայն տուի որ արթննայ գործի երթայ, չուզեց անկողնէն ելլել : Ի՛նչ ունիս, Մա՛նօ, դ՛ուրպան : Կուշտս կը ցաւի. վրաս հալ չկայ :

«Երկու օր անցաւ. շա՛տ աղաչեցինք որ Փրկիչն երթայ, դժուարութեամբ յանձն առաւ : Իրիկունն եկայ. Մանօ քալելով գացեր էր : Մէկ օր ետքը—կիրակի—գացի տեսայ, պառկած էր անկողնին մէջ, դեղերու շիշեր իր գլխուն վերեւ դրուած էին. աչքերը բացաւ, և տեսնելով զիս՝ խնդաց : Ժամ մի կեցայ ու ետքը մնաս բարով ըսի : Կէս մանիսիէ ալ գաղտնի հիւանդպահին՝ որ քովերս կը դառնար՝ ձեռքը ֆեցի, և աղաչեցի որ աղէկնայի Աստու սիրուն. զաւկի, մօր, տան ու տղի տէր է ըսի, և դարձայ մեր խանր ոտքս առաջ, սիրտս ետեւ : Գիշերն երազիս մէջ Մանօն տեսայ, ալ հիւանդութիւն չունէր. հազն անցած էր, վրայ եկած, և երեսին կարմրութիւնն ալ առջի պէս էր : Իր փեսութեան լաթերն հագած էր :— Ո՛ւր կ'երթաս, Մա՛նօ. ձէն չտուաւ, և մատովը միայն երկինք ցցուց : Վախով արթնցայ. աղօթ կողմը տակաւին կարմրած չէր. երազս բարեգուշակ չերեւցաւ ինծի. ոչ մէկու բան մը ըսի, և գացի մեր խահուէն : Տրտում նստած էի : Արեւն երեւցաւ. ըսին թէ մարդ մը քեզ կը փնտռէ : Հասկցայ, ալ Մանօն չկար : Երկու հոգի ելանք գացինք : Ա՛խ, Մանօն



պատանքի մէջ էր. գերեզման տարինք: Օրհնեալ ըլլայ մեր ղարիպ տէրտէրը. խեղճուկ ձէնով հանգստեան կարգն ամբողջ կատարեց. վերջը գերեզմանն ալ կնքեց խաչով ու ըսաւ. «Կնիքս անշարժ եղիցի»: Իրաւ, Մարգօս, միտքս դբեր էի որ եթէ Աստուծով աղէկնայ, առջի գարուն հասած չհասած՝ Մանօն հայրենիք դրկեմ. գո՛նէ մեր գերեզմանոցը կը տանէիք և հօրս քով կը հանգչեցնէիք զայն, և ամէն շաբաթ գիշեր՝ խուկ կը ծխէիր իր գերեզմանին քով: Բայց ի՞նչ ընենք. Աստուծոյ կամքն այս է եղեր: Դուք ողջ կեցիք, մա՛յրս:»

Միւս թուղթերը չխառնենք: Միայն սաչափն ալ ըսեմ որ ճրագները չմարած տուներու մէջ, շատ կարօտագին սիրտերու մէջ՝ այսպէս ջերմագոյն յոյսեր կը մարին ի սպառ. մին կը թողու մատաղ որբեր ու մանկամարդ այրի մը. միւսը մայր, ծերուկ հայր և տնակ մը որուն համար էր ամէն բան:

Ղարիպն ալ տուն տեղ, լացող ու խնդացող ունի եղեր. զարմանալի բան չէ՞ այս:

ՀՐԱՆԴ



#### ՀՐԱՆԴ (ՄԵԼՔՈՆ ԿԻԻՐՃԵԱՆ). —

Մելքօն Կիւրճեան նկարագրած է պանդուխտի կեանքը Պոլսոյ խաներուն մէջ, իրապաշտ եւ կենդանի վրձինով, թաթաւուն զգացումով եւ ջերմութեամբ: «Պանդուխտի կեանքէն» պատառիկները պիտի մնան Հրանդի գեղեցկագոյն էջերը, որոնց մէջ կայ ե՛լ հովուերգական շունչ, ե՛լ անկեղծութիւն, ե՛լ իրապաշտական տաղանդ:



## Փ Ի Ղ Ե Ր Ը

Անձիր ծովու կը նմանի աւազն հիր  
 Որ անշրշուկ կը շողշողայ իր լայն գոգին մէջ կըքած.  
 Վէտվէտում մը կը լեցրնէ անյարիր  
 Մարդաբընակ հորիզոնը պըղինձ շոգւով միգամած:

Ոչ կեանք, ոչ ծայն: Առիւծները կուշտ համակ՝  
 Կը քրնանան խորն անձաւին փարսախներով հեռակայ.  
 Ընծուղտը ջուր կ'ըմպէ ակէն կապուտակ  
 Արմաւենւոյն տակ, հոն վարը, զոր յովազն ալ կը ճանչնայ:

Ոչ մէկ թռչուն կ'անցնի հոնկէ թեւապար,  
 Կոծելով օդն ուր հիւ կուգայ բոց արեգակ մը անհուն.  
 Մերթ քունին մէջ տաքցած պօան մեղմաբար  
 Կը վէտվէտէ իր քամակը լի թեփերով փողփողուն:

Այսպէս կ'այրի, երկինքին տակ, միջոցն հուր,  
 Բայց ամէն բան մինչ կը նիրհէ ամայութեանց մէջ մրուայ,  
 Կոշտ ճամբորդներ, այդ փիղերը ծուռումուռ,  
 Բընավայրը կ'երթան իրենց. աւազուտէն յամրաքայլ:

Թուխ զանգուածներ, հորիզոնին մէկ ծայրէն  
 Կուգան փոշին ամբառնալով. եւ հեռուէն կը տեսնես  
 Թէ, որպէս զի ուղիղ ճամբէն դուրս չելեն,  
 Լայն ոտքովսին կը փըլցընեն կոյտ աւազներ բարձրադէզ:

Ծեր պետ մ'է որ կ'երթայ խումբին առջեւէն,  
 Մարմինն է հերձ, կեանքէն կը ծուած, փտտած բունի մը հանգոյն.

Գլուխը ժայռ մ'է. կը կամարի ուժգնօրէն  
Աղեղն ալ իր ողնայարին ճիգերէն իսկ փոքրագոյն:

Ձի դանդաղիր իր քալուածքը, չերթար շուտ.  
Ընկերները փոշոտ շիտակ կը տանի բուն վախճանին.  
Եւ փորելով ետեւնին փոս մ'աւազուտ  
Նահապետին հետքէն կ'երթան ուխտաւորներն ահագին:

Ականջնին թօշ, վրիժակնուն մէջ պատիժնին,  
Կ'երթան փակաչք, ու կը մըխայ փորերնին ալ բարախուն.  
Քրտինքներնին հուր օդին մէջ կը ցնդին  
Մըշուշի պէս. ուր կը բզզան բիւր միջատներ բոցագոյն:

Ի՞նչ փոյթ ծարաւն ու ճանճերն ալ գիշախանձ.  
Եւ արեւը որ կը մըկէ սեւ կռնակներ փոթ ու լայն.  
Անոնք՝ ճամբան՝ կ'երազեն վայրը լըքուած,  
Թըզենիի անտառները, իրենց ցեղին ապաստան:

Պիտի տեսնեն գետն ալ հոսող լեռնէն վար,  
Ուր կը լողայ ձիագետին մըռընչելով ահալուր,  
Ուր շուքերնին՝ լուսնով ճերմակ՝ կը ցոլար,  
Կնիւնները կոխկըռտելով երբ կ'իջնէին խըմել ջուր:

Ուստի կ'անցնին կերթան դանդաղ քաջասիրտ,  
Սեւ տողի պէս՝ ծայրածաւալ աւազներէն ալ անդին:  
Անապատը կ'ըլլայ նորէն անխըլիրտ՝  
Երբոր այդ լորտ ուղեւորներն հորիզոնէն կ'անհետին:

# Մ Ա Ր Տ Կ Ո Ց

## 1

Տիեզերահուշակ անգլիացի գիտնական Սըր Չարլզ Պոյլթըն՝ արար-աշխարհ ոտքի տակ է տուած, ուսումնասիրելով զանազան ժողովուրդներու և մանուկներու հոգին, բնորոշելու համար անոնց ազգային յատկանշական գծերը:

Իր այդ նպատակին հասած է անիկա բաւական ինքնօրինակ կերպով, իւրաքանչիւր երկրի մէջ ուսուցչին կամ ուսուցչուհիին առաջարկելով, իր ներկայութեան, մանուկներուն պատմել տալու փոքրիկ, ինքնահնար պատմութիւն մը, որ ըլլայ այնքան պարզ, որ նոյն իսկ յետամնաց ժողովուրդներու մանուկները կարողանան զայն շատ լաւ հասկնալ: Այդ միջոցին ինք կը դիտէ մանուկները՝ հասկնալու համար այն տպաւորութիւնը, որ փոքրիկ պատմութիւնը կը թողու անոնց վրայ: Եւ այդ միջոցով ալ, ինչ որ կը տեսնէ ինք, գաղափար կը կազմէ այս կամ այն ժողովրդի հոգեկան կազմութեան յատկութիւններուն վրայ:

Այցելելէ ետք Քափուա, Շիքակօ, Մելպուրն և Թոքիօ, եկած էր Փարիզ: Կ'ըսէին թէ մինչև այդ ատեն անոր փորձերը ո՛չ մէկ տեղ որոշ, շօշափելի արդիւնք տուած էին: Ամէն տեղ ստացուած տպաւորութիւնը անորոշ եղած էր. ամէն տեղ անոր փոքրիկ պատմութիւնը, փորձաքարը, լսուած էր մանուկ հասարակութենէն՝ առանց զգայնութեան առանձին կենդանի և ջերմ արտայայտութեան: Փարիզ՝ իր նպատակին համար՝ Սըր Չարլզին ծանօթացուցին հին մայրական դպրոցը, որ կը գրանուէր բանուորական խիտ հասարակութեամբ բնակուած Մենիլմօնթան արուարձանը, — «Քարտաշներու» թաղին մէջ:

## 2

Դպրոցին պաշտօնէութիւնը առաջուց ազդարարութիւն ստանալով Սըր Չարլզի այցելութեան նկատմամբ, հապճեպ



պատրաստութիւններ էր տեսած , բարձրաստիճան հիւրին ընդունելութեան համար :

Մանուկներու կօշիկները պայծառ կը փայլէին , ստացած ըլլալով ներկի յաւելեալ բաժին . իսկ իրենց քիթերը , սովորաբար կասկածելի կերպով գունատ : և անփայլ , այնպէս էին փայլեր , որ կարծես թէ անոնց վրայէն ալ անցած ըլլար խոզանակին նորոգող փայլը :

Ոչ տեսչուհին և ոչ ուսուցչուհիները գիտէին թէ ի՞նչ էր այցելութեան բուն նպատակը . և այդ անյայտութիւնը աւելի կը յուզէր զիրենք : Գիտէին միայն որ հռչակաւոր մասնագէտ գիտնականը իրենց փոքրիկները պիտի ենթարկէ ինչ որ կարելու որ դիտողութիւններու և հետախուզման :

Ահա թէ ինչո՞ւ տեսչուհին անհրաժեշտ համարեց դահլիճը հաւաքած ամբողջ երեք դասարաններու իր բոլոր սանիկներուն ուղղել խրատական խօսքեր , որոնք թէեւ ընդհանուր արտայայտութիւններ էին , բայց և այնպէս բաւական ազդու .

« — Այն պարոնը , որ այսօր պիտի գայ մեր դպրոցը , այցելելու վրայ է արար-աշխարհի դպրոցները : Անիկա տեսեր է կամ պիտի տեսնէ ն՛ւ Գերմանացի , ն՛ւ Իտալացի , ն՛ւ Պափլիկ , ն՛ւ Չինացի փոքրիկները : Իսկ գիտէ՞ք թէ ինչու կը ճամբորդէ այդպէս : Որպէս զի իմանայ թէ աշխարհիս վրայ ո՞ր երեխաներն են ամէնէն խելօք : Եւ որպէս զի դուք ըլլաք առաջինը ամբողջ աշխարհի , ձեզ պիտի պահէք հնարաւոր չափով խիստ հանդարտ և համեստ : Չարութիւն չընէք , չի սրտաք , չի կռուիք , ըլլաք քաղաքավար և վայելուչ : Այն ժամանակ Սըր Չարլըզ կ'ըսէ թէ , — ո՛չ մէկ տեղ ինք տեսած է այնպէս սիրելի , հնազանդ և օրինակելի մանուկներ , ինչպէս այստեղ , թէ անիկա երբեք տեսած չէ այնպիսի խաղաղ և բարոյակիրթ դպրոց , որպիսին է մերը : Եւ երբ անոր հարցնեն թէ աշխարհի վրայ ո՞ր մանուկներն են ամէնէն խելօքը , առանց մտածելու պիտի պատասխանէ . « Իէ՛հ , « Բարտաչներու » թաղին մանկապարտէզին մանուկները . . . » :

Օգտուելով մանուկներու նախաճաշի դադարէն , տեսչու-

## 3

հին դպրոցէն մեկնեցաւ՝ վերջին կարգադրութիւններն ստանալու համար տարրական դպրոցներու ընդհանուր վերատեսուչէն, որ նոյնպէս խիստ հետաքրքրուած էր կատարուելիք փորձով :

Բայց տեսչուհին դեռ չէր վերադարձեր, երբ եկաւ Չարլըզ Պոյլթըն և խնդրեց զինքն առաջնորդել «մեծերու» դասարանը, այսինքն 5-6 տարեկան մանուկներու մօտ :

Տեսչուհին օգնականուհի՝ օրիորդ Պօրտ, որ զբաղած էր նոյն դասարանով, դասն ընդհատեց՝ հիւրն ընդունելու համար : Օր. Պօրտ՝ նուրբ, բարեկազմ, սեւ հագուած, անխայլ գունատ դէմքով, կ'արտայայտէր Մատոնայի բարի և հանգիստ դիմագծեր : Սըր Չարլըզ այն տպաւորութիւնն ստացաւ թէ այդ կանոնաւոր դասին գեղեցկութիւնը հիանալիօրէն կը ներդաշնակուէր դպրոցին ամբողջ՝ կարգ ու կանոնին դիմացկունութեան և հաւասարակշռութեան հետ, զոր ան զգացեր էր իր ամբողջ էութեամբ, երբ դեռ հաղիւ էր մտեր դպրոցի յարկին տակ :

Իսկապէս կարգ ու կանոնը զարմանալի, խտէալ էր :

Հազիւ թէ օրիորդը յօնքը շարժեց, և արդէն բոլոր աշակերտները ոտքի վրայ էին՝ ուղիղ և անթերի կերպով ճշտապահ : Դասարանին մէկ կողմը կը զսնուէին աղջիկները, ժապաւէններով վարպետօրէն և գեղեցիկ կապուած մազերով միւս կողմը՝ տղաները, որոնց անհնազանդ խոստովները, երեւի, զիջելով պարագայի հանդիսաւորութեան, վարկեան մը հնազանդ պառկած էին թաց խողանակի եռանդուն հարուածներէն :

Չեռքի հազիւ նկատելի շարժում մը՝ և բոլորը առանց փոքր շշուկի մը կը նստին . . .

Անբասիր և օրինակելի կարգապահութիւն . . .

## 4

Այդ միջոցին Սըր Չարլըզ կամացուկ կը խօսակցէր օրիորդին հետ : Ահա օրիորդին դէմքը մթազնեցաւ խնդրին անորոշութենէն առաջացած անհանգստութենէն, բայց կամաց կա-

մայ կը պայծառանայ : Համակրութեամբ գլուխը կը շարժէ և կը ժպտի : Աւելի պարզ բան չի կրնար ըլլալ . ամբողջ խնդիրն այն է՝ որ գրատախտակին վրայ պատկերներ գծելով , միաժամանակ պատմէ բոլորին ծանօթ ընտանի կենդանի ոչխարին վրայ շահ սովորական պատմութիւն մը : Այո՛ , այո՛ : Ամէնը-ամէնը տալ կարճառօտ , հանրածանօթ տեղեկութիւններ այդ կենդանիին վրայ , որ այնքան հնազանդ և հեղահամբո՛յր է ու միաժամանակ մարդուն խիստ օգտակար իր բուրդով , կաթով և մսով : Միայն մէկ կէտ , յատկապէս շեշտուած Սրբ Զարլըզի կողմէն , կարծես քիչ մը կը շփոթեցնէ օրիորդը , և անոր նայուածքը ակամայ կ'ուղղուի ետեւի լաւ շանտրուած շարքին կողմը : Բայց խելոյն կը հանգստանայ , և իր դէմքը կրկին կ'արտայայտէ լուսաւոր պատրաստակամութիւն և սիրալիր նախազգուշացում :

Ահա Սրբ Զարլըզի համար՝ անկիւնը , օրիորդին սեղանին ուղղութեամբ աթոռ դրուած է : Դասը կը սկսի :

Մանուկներու ուշադրութիւնը երբեք չէ գրաւած յարգելի այցելուին ներկայութիւնը : Ահա՛ նոր օրինակ մը եւս բարեկրթութեան և փրկարար կարգապահութեան , պատրաստ էք անշուշտ եզրակացնելու . . . :

Ո՛չ : Այս անգամ մանուկներու իտէպ կարգապահութիւնը եթէ ոչ ամբողջապէս , գոնէ մեծ մասով պարտական ենք օրիորդ Պօրտին , իբր վարպետ գծագրողի և հրաշալի պատմողի :

Ահա նկարած է անիկա գեղեցիկ տեսարան մը , խորքին վրայ ոչխարը : Օրիորդին ձայնը և պատմելու ձեւերը պատկերին կուտան որոշութիւն և հիւթեղութիւն , իսկ խիստ հանրածանօթ և սովորական նկարագրութիւններուն ու ձեւերուն կուտան նոր կեանք և թարմ գոյներ : Բեմին վրայ կը պատկերանայ հովիւը , գոմը , մարդուն համար թանկագին բուրդին խուղումը :

Շուտով հետաքրքրութիւնը կ'աճի , երբ տախտակին վրայ կ'երեւնայ մայր ոչխարը , միեւնոյն ժամանակ մանուկները կ'ի-



մանան կարգ մը հետաքրքիր մանրամասնութիւններ, օրինակ՝ պանիրին մէկ քանի տեսակները (ինչպէս բօքֆօրը) որ կը շինուին ո՛չ թէ կովին, այլ ոչխարին կաթէն :

Վերջապէս, — և այստեղ հետաքրքրութիւնը կը հասնի իր բարձրագոյն կէտին, — ահա մանուկներուն աչքին առջև է փոքրիկ գառնուկը, բոլորովին սպիտակ, որ կը խայտայ, կը ցատկրատէ և քնքշօրէն կը մայէ : Փոքրիկ գառնուկն այնպէս զուարճալի, այնպէս հրաշալի է՝ որ մանուկներուն այտիկները կը շիկանան իսանդաղստալի ժպիտով, իսկ շրթունքներն իրենք իրենց կ'ուզեն այդ սիրելի փոքրիկը համբուրել անզուսպ ցանկութեամբ :

Մեռելային լուսթեան մէջ՝ ագահօրէն երկարած են մանուկներու գլուխները և լարուած ուշադրութիւնը կը շարժէ անոնց յօնքերը, կը դողացնէ քթի փափուկ շուրթերը, կը պրկէ բերանի անկիւնները, բառերը կը բռնուին թռչելու ատեն և անոնց իմաստին ուղն ու ծուծը կը ծծուի արագօրէն . . . :

Բայց յանկարծ Օրիորդը կը դադրի նկարելէ և կը դառնայ աշակերաններուն :

Իր դէմքը, որ ըսպէ մը առաջ այնպէս աշխուժ և արտայայտիչ էր, կը սառի, կ'անզգայանայ՝ այնպիսի դաժան, անշարժ և սառն գեղեցկութեամբ մը, որ կարծես իր մէջ կ'անդրադարձնէ բնութեան դաժան անզգայութիւնը, ճակատագրական անխուսափելին և տիեզերական երկաթեայ անխիղճ օրէնքները . . . Իր ձայնը կը հնչէ պարզ և որոշ, մետաղական անզգայութեամբ :

Մանուկները կը դալկանան, նախազգալով ինչ որ ահաւոր, օրհասական բանի մը իրենց վրայ գալը : Եւ այդ գերեզմանային լուսթեան մէջ՝ խօսքերը կը հնչեն որոշ և դղրդագին, այնպէս որ, կարծես կը զարնուին անդունդի յատակին :

— Բայց և, մանուկներ, դուք գիտէք թէ պէտք է ուտել՝ ապրելու համար, իսկ կենդանիներու միտք գերազանց յաւանունդ է. անիկա կուտայ ոյժ և կը նպաստէ հասակի աճման : Եւ դուք ամէնքդ, ի հարկէ կը սիրէք թէ՛ խաչած և թէ՛

տապկած գառան միտը՝ գետնախնձորով միասին : Եւ եթէ բնութիւնը թոյլ կուտայ, եթէ այդպէս կարգադրուած է որ մարդիկ սնանին կենդանիներով, մեզի ուրիշ ոչինչ չի մնար ընկ, բայց եթէ մորթել մեր գառնուկը :

Կարծես թէ տիրապետող հոգեմաշ լուսթեան մէջ մտաւ աւելի մեծ լուսթիւն մը . . . մանուկներու շնչառութիւնը կանգ առաւ :

Իսկ Օրիորդը դարձաւ դէպ ի գրատախտակը և կրկին արագօրէն կաւիճի գծերը կը նկարագարդէին իր խօսակցութիւնը :

— Մենք կ'ուզենք գառնուկը մորթել, ուստի այդ բանին համար պէտք է ամէն ինչ պատրաստենք : Ահա այս՝ ցախատունն է, այս ալ սպանդանոցը . . . Ահա պարանը և կեռը՝ մորթուած գառնուկը կախելու համար, իսկ այս կոճղը կ'ըլլայ կառափնարան, ուր կ'անդամատեն անոր մարմինը, — բայց ահա և դանակը . . . :

Սակայն այդ վայրկեանին դասարան մտաւ ծառան և յայտնեց թէ ժամանակ է տիկին տեսչուհին :

Օրիորդը արագօրէն վար դրաւ կաւիճը և այցելուին առաջարկեց հետեւիլ իրեն : Սըր Չարլըզ հանդարտօրէն ոտքի ելաւ, Անգլիացիի յատուկ սիրալիր պատրաստակամութեամբ :

Գասարանը քանի մը բոսկէ մնաց առանց հակողի :

## 5

Երբ Սըր Չարլըզ Պոյլթընը տիտար վերատեսչին ու տիկին տեսչուհիին հետ միասին, պաշտօնական ընդունելութեան բոլոր ձեւակերպութիւններով, դա՛րձեալ երեւաց դասարանի սեմին վրայ, — օրիորդ Պօրտի ծանր սեղանը, պետական իշխանութեան այդ կեդրոնն ու պատուարը՝ մէկ կողմի վրայ էր շրջուած և անոր վրայ, գառնուկի նկարով սեւ սախտակին շուրջը, կը բարձրանար մարսկո՛ց :

Գրասեղանները բերուած ու մէկ-մէկու վրայ էին դրուած, և դասարանին ամբողջ փոքրիկ բնակիչները խռնուեր էին այդ

կարծես գեոնէն բուսած բերդին շուրջը, աջէն, ձախէն, առջևէն և ետևէն... Մարտկոցի ճեղքերէն կը նայէին տասնեակ մանուկներու սպառնացող աչքերը, որոնք կարծես համազարկի պատրաստ հրացանի փողեր լլկային:

Աղամբ, այդ համակրելի աղան, դպրոցին առաջին աւագակը, իր խիտ, բաց խարտեաչ գանգուրներու ալեծուփ սանաւրուածքով, եղան երեսով, արջի, բարի քոթոթի հէրակլէսեան կազմուածքով, կանգնած էր մէջտեղը, օրիորդ Պօրտի սեղանին մօտ, թիկունքը մարտկոցին և կարծես կը դեկավարէր զայն:

Եւ ներս մտնողները դեռ չէին կրցեր յայտնել իրենց զարմանքը, երբ Աղամ գլուխը շտկելով, դունչը առաջ զցած, վեր բարձրացուցած ուսերով և մկանուկները ձգտած ձեռքերով, որոնք բնազդաբար կծկուած էին և ծանր բուռնցքներ դարձած, անոնց երեսին գոռաց սա յեղափոխական ճիչը.

— Մենք թոյլ չենք տար որ մորթեն գառնուկը:

Արագ և ուժգին շարժումով, Սըր Զարլըղ կանգնեցուց տեսչուհին և վերապետուչը, որոնք արդէն պատրաստ էին, ինչպէս պէտք էր, միջամտելու: Սըր Զարլըղ խնդրեց թոյլ տալ իրեն վայրկեան մը դիտել և հաշիւալ թէ ի՞նչ է այդ բոլորը:

Եւ Սըր Զարլըղ ամբողջ դասարանը դանդաղօրէն քննեց իր ազդու նայուածքով, որ ունէր առանձնայատուկ խորաթափանցութիւն, մեծութիւն և քաղաքակրթութեան զանազան աստիճաններու վրայ գանուող շատ ժողովուրդներու կեանքին գիտակ ըմբռնումը:

Զայներու, ժխորի երկար, խառնիճաղանձ թրթռացումներ տարածուեցան դասարանին խաղաղութեան մէջ. Աղամի պոռալէն յետոյ բոլոր աչքերը, բերանները, այտերը, լարուած և դողդղացող յուսահատութեան յանդգնութեամբ՝ կը կըրկնէին մէկ բան.

— Մենք թոյլ չենք տար որ սպանեն գառնուկը:

— Ա՛, մտածեց Սըր Զարլըղ... այդպէս ուրեմն, կը



նշանակէ որ այս ամբողջ փոքրիկ ժողովուրդը մէկ մարդու պէս ոտքի է կանգնել՝ թող զո՛հը պաշտպանելու :

Եւ յանկարծ , աղնիւ Անգլիացին զգաց որ այդ մանկական ժխտքին մէջ իր առջեւ կը հնչէ ամբողջ ցեղի մը աղաղակը . . . :

Մանկական բոլոր դէմքերն ալ կը գոռային իւրաքանչիւրն իր ձեւով , — ուժով , աղերսանքով , սարսափով և գորովով . բայց ամբողջը կը յուզուէին ու կը դառնային հուժկու , հակայական բողոք մը , հանդէպ ամէն տեսակի բռնութեան փորձի՝ անմեղ զոհին վրայ :

Սըր Չարլըզի նայուածքն իսկոյն ուսումնասիրեց առանձին խմբակները :

Տղաներու և աղջիկներու խայտաճամուկ խառնուրդէն կը զատէր աւելի պարզորոշ տիպերը : Ահա ուժեղները , բացձակաս վճռականները՝ ինչպէս Ադամը : Ահա վայրենիները իրենց ամօթխած , բայց կատաղի անվեհերութեամբ , ինչպէս Լէօնիա Կրան . . . Ամէնէն առաջ անոնք իրենց վրայ բեւեռեցին Անգլիացիին նայուածքը : Անոնցմէ յետոյ կու գար մայրական հերոսութեան ներկայացուցիչներու երկար շարքը , վսեմ՝ իր պարզութեամբ , — Էլինա Լիբլան , Լուիզա Քլուժէն և ուրիշները : Լարուած և դողդղացող անոնց քնքուշ ու նուրբ դիմագծերը կը ցնցուէին յուզուած սրտերու իւրաքանչիւր զարկէն , բայց անընկճելի կանգնած էին իրենց դիրքին վրայ , պատրաստ նոյն իսկ մեռնելու , եթէ պէտք ըլլար :

Դասարանին սիրելիները , գեղեցիկ և պչրոտ Իրմա Կէպլին և ժուլի Քադէն , աղերսալից և ակնածելի անձնուիրութեամբ կը բողոքէին , կարծես յանուն տիեզերական գեղեցկութեան , որուն մարմնացումն էին իրենք :

Բայց գուցէ աշխարհի մէջ գոյութիւն ունեցող գերագոյն գեղեցկութիւնը Սըր Չարլըզին կը նայէր թշուառներու՝ հիւանդ կապիկի գլխով Ռիչարտին , սապատաւոր Վիտալին և կմախք-նիհար Պօնվալօի փոս ընկած աչքերէն , անոնց ճանկրուտուած ճակատներուն տակէն : Ինքնամոռացման հասնող

նուիրական կատաղութեամբ և խանդոտութեամբ մը՝ անոնք պատրաստ էին պաշտպանելու գառնուկը, երբեք թոյլ չտալու անոր սպանութիւնը. կարծես թէ իրենց անձնական թշուառութիւնը մարդկայնօրէն տանելի չարիքին վերջին սահմանն ըլլար :

Նոյնքան ազդու արգելք կը կարգացուէր նաեւ արատաւորներու, վատասերածներու երեսներուն վրայ. խոր և բուխ վիշտը պահուած էր այնտեղ. անտէրները, աշխարհի զուլումէն և սուտէն տրորուածները, կարծես, իրենց վհառ նայուածքով կ'ուզէին ըսել.

— Եթէ սպաննէ՛ք գառնուկը, յաւիտենական անէծքը կը ծանրանայ ձեր վրայ . . .

Նոյն իսկ ամենահնազանդ «համեստիկներ»ը, «խելօքներ»ը, հարուստ, «պատուաւոր» ընտանիքներու մանուկները, անոնք, զորս դպրոցի վարչութիւնը միւսներէն կը դանազանէր, որոնց նկատմամբ աչառութեամբ կը վերաբերուէր ու իբր օրինակ ցոյց կու տար զանոնք, այդ Պերտա Քատօն և Լէօն Շէրօն, երկուքն ալ դպրոցական շքանշաններով ծածկուած կուրծքերով, ազնուօրէն և համարձակ կերպով կանգնած էին այնտեղ, մարտկոցին վրայ. թերևս անոնք նոյն իսկ կը ցաւէին որ ստիպուած էին մասնակցիլ այդ խռովութեան, բայց . . . ուրիշ կերպ վարուիլ չէին կրնար . . .

Եւ անոնք, որ եղած էին միշտ անօթի, որ ի ծնէ քաղցած էին, անոնք՝ որոնց անարիւն այտերն այնքան պէտք ունէին և կարօտ էին մսի, այդ խղճուկ, փոսը ինկած այտերը, որոնց պատճառով զիրենք կը կոչէին Անօթի Լուիզա և Բացբերան Շարլ մականուններով, նոյն իսկ անոնք՝ իրենց գայլի սովածութենէն մեռնող աչքերովն ու ատամներովը, նոյն բանը կը խնդրէին. «Մենք չե՛նք ուզեր. մե՛նք չենք ուզեր : Ճիշտ չէ որ իբր թէ մենք երբ և իցէ անօթի ենք եղեր : Ներեցէ՛ք : Ներեցէ՛ք : Մենք այլեւս երբե՛ք չենք ըլլար . . . երբե՛ք չենք ըլլար անօթի . . . Մենք այլեւս երբե՛ք ուտելու բան չենք խնդրեր . . . » :

Վերջապէս Սրբ Զարլըզ, մարտկոցին առջեւ հանդիպեցաւ նոյնքան իմաստուն նայուածքի մը, ո՛չ, անսահման օրէն աւելի իմաստուն քան իր նայուածքը: Թրիքօն, հնադարեան կեանքի բոլոր տեսակներն ապրած իր դէմքով, Թրիքօն, որ անարտայայտելի հեզնասքով մը կը խօսէր իր մօրը մասին, ըսելով թէ «ան զիս հանդիստ կը ձգէ միայն ծեծի ժամանակ», առանց օձիքի Թրիքօն, կարտած ու երիզներով կապկպուած ոտնամաններով, կը ներկայացնէր էակ մը, որ հարիւր անգամ սպաննուած է՝ բայց անփոփոխ, ի դարմանա բոլոր շրջապատողներուն, միշտ ալ կանգնած է այն տեղը, իր տեղը, լացի և արցունքի հովտին մէջ . . . :

Եւ զգալի էր, որ եթէ նոյն իսկ իր բոլոր ընկերները սկսէին փախչիլ, ան միս մինակը կը մնար դիրքին վրայ կանգնած, ճիշտ այնպէս, ինչպէս, կար,— ձեռքերը գրպաններուն մէջ, մէկ կողմ ծռած կրծկալով, վարտիկէն դուրս ինկած շապիկի կտորով — հերոսական դրօշակի այդ խորհրդանշանով — կը մնար կանգնած, թշնամիին հարուածին դիմադրելով իր յանդուգն, վեր քաշած քթի ամբողջ քաջութիւնովը և ծիծաղելի շրթունքներուն բարեհոգի-դառն ժպիտովը:

— Մենք թոյլ չե՛նք տար որ սպաննեն գառնուկը:

## 6

Այն ժամանակ Սրբ Զարլըզ Պօյլթըն անկեղծ ոգեւորութեամբ մարտկոցին առջեւ խոնարհեցուց իր հպարտ, ալեւոր գլուխը, իբր յարգանքի նշան, որ ան սովորած էր խոնարհեցնել արար աշխարհի բոլոր ծայրերը, Ամերիկա, Ռուսաստան, Ճարթօն, ժողովրդի կամքի բոլոր բուն արտայայտութիւններուն առջեւ:

Ապա, աւելի հանդիսաւոր եղանակով մը, քան այն, որով սովորութիւն ունէր կեցցէ՛ պօռալ բարձրաստիճան անձնաւորութեանց դիւանագիտական ճաշերու ժամանակ, վեհ շարժումով մը բարձրացուց գլխարկը և «Քարտաշներու» թաղին մատաղ սերունդին համար հնչեցուց.

— Կեցցե՛ն մեծ ժողովուրդի մեծ մանուկները:

ԼԷՕՆ ՖՐԱՓԻԷ



## Ս Ր Ի Ն Ք

Ե՛կ, իմ սրինգ, իմ բարեկամ սրտագին,  
 Նիհար շրթներդ, ո՛հ, երերուն  
 Դի՛ր դալկահար իմ շրթներուն,  
 Երգենք ու լանք, լանք ու երգենք տրտմագին:  
 Լ՛աց. զի լոկ քեզ գրտայ հատորն իմ սրտին.

Դու բարունակ էիր կանաչ  
 Երբ մի անգուլթ ձեռք անձանաչ  
 Կտրեց ըզքեզ, անջատեց մայրն ու որդին.  
 Եւ թոյլ տուիր որ լանջիդ վրայ զալարուտ  
 Ծակեր բացին, վէրք երկաթի.  
 Թո՛ղ այդ վէրքէն, ըսիր, կաթի  
 Արիւն, բողոք՝ միակ սիուփի վշտերուդ:

Ես ալ մանուկ էի անմեղ երբ վաղուց  
 Մի անձանօթ պատնառ վզիս  
 Լուծ մը դրաւ, ո՛րք կոչեց զիս,  
 Եւ հօր ու մօր սիրոյն կարօտ զիս թողուց:  
 Իմ ալ կուրծքս ծակծկեցին ժանտ վէրքեր,  
 Եւ որպէս դուն սիրես որմին  
 Յենուլ, լուել, մինչեւ որ մին  
 Չը յուզէ քեզ, չե՛ս հառաչեր, չե՛ս երգեր,  
 Լուիկ մնջիկ սիրեմ եւ ես հեռու կալ  
 Ընկերութեան ժիտ ժխորէն,  
 Եւ իմ սրտին հոգւոյն խորէն  
 Ձննել, ըզգալ լոկ, զարմանալ ու խոկալ:

Թող երգէոն, դաշնակ, քնար գեղգեղեն,  
 Յեկեղեցւոջ, ի գինետան

Աղօթք ու պար թռչին, խայտան  
Թող այլ վայեն հաճոյք մարմնի, հոգեղէն,

Ախ, իմ Սրինգ, աշխարհ յոյսով թող բերկրի,  
Թող բաղդն անոր ժպտի յուսին,  
Ե՛կ, ես եւ դուն ի միասին  
Լանք ու երգենք, մեր բաժինն այս է երկրի....

Գ. ՊԵՇԿԵՕԹԻՒՐԵԱՆ

**ԳԱՐԵԳԻՆ ՊԵՇԿԵՕԹԻՒՐԵԱՆ** (1867—1891).— Խարբերուցի վաղաժեռ բանաստեղծ. ունի անտիպ բաւական քերթուածներ, որոնցմէ Սրինգը հայ քնարական քերթողութեան մէկ անմահ փշրամքը պիտի մնայ:

## Ն Պ Ա Ս Տ Ի Օ Ր Մ Ը

Առաւօտուն կանուխէն, գրեթէ արշալոյսին, ամբոխը լեցուած էր եկեղեցիին բակը. ու մենք երբ աչքերնիս բացինք, կը լսէինք իրենց իռւլ աղմուկը, անսահմանելի աղմուկ, նման փոթորկոտ ծովու հեռաւոր շշուռչին: ... Հիմա նոյն ամբոխը մեզ կը շրջապատէր, երբեմն սպառնազին կը բարձրանար մինչեւ Առաջնորդարանի սանդուղներէն վեր, երբեմն կը գոռար ու երբեմն կը հեծեծէր: Օրերէ, ամիսներէ ի վեր այնքան զրկուած սայրեր էին, պահանջքը այնքան ստիպողական և մեծ եղած էր որ՝ իրենց փութկոտութեան մէջ տենդագին շուարում մը կար. երբեմն առաջ անցնելու տենչանքով զիրար կը կոխտէին, տղայք կը ճչէին, ու սրտագին աղաղակներ մեզ կը ցնցէին ցաւագին սօրէն:

Կարգապահութիւն պահել անկարելի էր, մենք յուսահատած էինք. ամբոխին մէկ տասներորդն իսկ գոհացնելու

իրեղէն շունէինք ու ստիպուած էինք մնացածին թիւեր ու փուսուլաներ տալ, որպէս զի յառաջիկայ անգամներուն երբ խոստացուած ու յուսացուած զգեստեղէնները գային, իրենց բաժինը ստանային: Բայց թէ ի՞նչպէս ընտրել անոնք՝ որ այսօր պիտի առնէին զգեստները... Ի՞նչ դասաւորում կատարել, ի՞նչ հիման վրայ ընդունիլ մէկը և մերժել միւսը, կամ պարզապէս յետաձգել զխմուճը: Յուսահատած ու շուարած էինք ու քանի՛ ամբոխը իր պահանջքը կը յայտնէր՝ այդ սարսափելի և խուլ աղմուկով, մենք տժգունած ու խորապէս յուզուած, իրարու երես կը նայէինք:

— Պէտք է ամէնէն դժբաղդները, ամէնէն շատ վշտացածները, պէտք է ծերերը, կոյրերը, հիւանդները ընտրել... կամ քաղմաթիւ տղաք ունեցողները, ըսաւ մեզմէ մէկը...:

Բայց ամէնքն ալ նոյն աստիճանով դժբաղդ ու կարօտ էին ու որքան որ հաւատացած էինք այդ ընտրութեան ձեւին անբաւականութեան վրայ՝ մտանք ամբոխին մէջ, նախ կոյրերը փնտուելու: Աղտեղութեան ու քրտինքի բարկ հոտ մը մթնոլորտը անշնչելի կը դարձնէր. քաղմութիւնը այնքան հոժ էր, որ գրեթէ իրարու հպած էին ու մենք քանիցս կորսուեցանք իրենց խիտ շարքերուն մէջ. երբ ձեռքս կը դնէի իրենց մարմնին, ճամբայ բանալու համար, — կասկածելի խոնաւութիւն մը զիս կը կասեցնէր. բայց անմիջապէս շուրջի ահաւոր թշուառութիւնը քաջութիւն ու սիրտ կուտար մեզի ու մենք աւելի խոր կը թափանցէինք ամբոխին մէջ:

Պէտք էր ընտրել կոյրերը, անոնք որ անտէր ու նոյն իսկ զրկուած գաւազանէ՝ կը դեղեւէին իրենց անհաստատ սրունքներուն վրայ ու տարուած ամբոխի շարժումներէն՝ մէկ մը ասդին կը նետուէին, մէկ մը անդին...: Բաղմութիւնը կազմուած էր մեծ մասամբ կիներէ. այրերու բացակայութիւնը աչքի կը զարնէր, բայց կոյրերուն մէջ կային նաեւ ծերունի այրեր ու իրենց երևոյթը ահաւոր էր:

Մէկիկ մէկիկ իրենց ձեռքերէն բռնած՝ առաջնորդեցինք



դիրենք, ճամբուն վրայ ամբոխը զայրոյթէն կը մռնչէր, ոմանք կը հայհոյէին, ուրիշներ կը սպառնային. իւրաքանչիւր ոք տարուած իր անհատական դժբաղդութեան մեծութենէն՝ կը փափաքէր որ միմիայն իրմով զբաղէինք. կին մը մեր աչքերուն առաջքը յուսահատութենէն ցնցոտիները կը պատուէր, մազերը կը փետտէր ու իր բոլոր ցաւը կ'աղաղակէր այնպիսի ձայնով մը՝ որուն պատուտող շեշտէն կը ցնցուէին ամէնքը, ու պահ մը լռած ամբոխին վրայէն սարսուռ մը կ'անցնէր:

Ուրիշներ կը կառչէին մեզի, բռնի կը կեցնէին, կ'աղերսէին, իրենց արցունքով կը թրջէին մեր ձեռքերը. հակառակ մեր բացատրութիւններուն՝ չէին համոզուեր, չէին ուզեր սպասել ու մեր անկարողութիւնը կը տանջէր մեզ:

Դարձեալ միջոց մը հեռացած ամբոխէն այն սրահին մէջ՝ ուր հագուստները շարուած էին, զբաղեցանք բաժնելու: Կոյրերը մէկը միւսին ետեւէն կը յառաջանային. իրենց թխացած և տժգոյն դէմքին վրայ լոյսէ զուրկ ու մեռած աչքերը կը սեւեռէին մեր ուղղութեան. անոնք կը հետեւէին մեր ձայնին ու անձկութեամբ կը սպասէին մեր հրաւերին. առ հասարակ լուռ էին. շատ չէին խօսեր անոնք. իրենց մէջ ամփոփուած՝ ոմանք նոյն իսկ կարծեա դեռ չէին հասկցած սլատահածը:

Երկու օր առաջ տեսեր էի պառաւ մը՝ որ անընդհատ հանդիպողին կը հարցնէր թէ ի՞նչ և՛ղաւ. ոչ ոք բացատրեր էր իրականութիւնը իր մանրամասնութիւններուն մէջ. ամէնքն ալ իրենց առանձին հոգերով գրաւուած էին. որառաւը լսեր էր միայն աղմուկը, լսեր էր վայնասուններ, լսեր էր հրդեհի ճարձասումները, խլացեր էր հրացաններու ձայնէն, — զգացեր էր բոցերու ջերմութիւնը կռնակին վրայ ու տարուած փախստական ամբոխի մը հոսանքէն, օր մը հոս, օր մը հոն քշուեր էր անգիտակցաբար, ու օրերով, շաբաթներով տեղեկութիւն էր մուրացեր, կառչելով մէկ խումբին, աղերսելով իր շուրջը գտնուողներուն, — ոչ ոք դեռ բարութիւնը ունեցեր էր իրեն պատմելու թէ ի՞նչ պատահեցաւ: Այս պատճա-

ուով էր որ դէմքը առեր էր սարսափի, անորոշութեան ու կասկածի արտայայտութիւն մը ու մտքին մէջ սեւեռուած էին կցկտուր տեղեկութիւններ:

Հիմա իմ դէմս ունէի երիտասարդ կին մը. մէկ աչքը կորսուած ակնակապիճներուն խորութեանը մէջ ու միւսը ընդհակառակը ցցուած, ուռած, բիրբի տեղ կրելով ճերմակ կոճակի պէս կարծրութիւն մը. այդ աչքը անհանգիստ ու թագուն կենդանութիւն մը ունէր, բանտարկուած կը թուէր ու կարծես պոռթկալու կը միտէր. յարաշարժ ու ցայտուն՝ երկչոտութիւն ու անհանգստութիւն կը պատճառէր միանգամայն ու կը նայէր մեր նայուածքէն տարբեր նայուածքով մը:

Առանց խօսելու, ընարեցինք մեր հազուատները, բայց վերջապէս հարկադրուեցանք հարցնել.

— Քանի՞ հոգի էք:

Պահ մը լուռ կեցաւ. կարծեցինք թէ չէր հասկցած. իր ճերմակ բիրբր անշարժացաւ. շրթունքը թոթովեցին: Ու սկսաւ հեծկտալ անվերջ. իր կուրծքը ցնցոտիներուն ներքեւէն կը բարձրանար ու կ'իջնէր. ո՞վ գիտէ ի՞նչ կը ատենէր իր կուրութեան մշտնջենական մթութեանը մէջ:

Շատ անգամ կը պատահէր ասիկա. մեր հարցումը իրենց կը յիշեցնէր թէ այլեւս ոչ ոք չունէին, կը յիշեցնէր իրենց բոլոր անոնք որ անդարձ կորսուած էին ու մենք յանցաւորի պէս չէինք գիտեր ի՞նչպէս ամոքել զիրենք:

Երբեմն խնայելու համար, փոխանակ հարցնելու թէ «քանի՞ հոգի էք», կը դնէինք դէզ մը հազուատ ու կ'ըսէինք.

— Այսչափը կը բաւէ՞:

— Ինչո՞ւ չպիտի բաւէ. ո՞վ է մնացեր... իմ չոր գլուխս է մնացեր, ինչո՞ւ չպիտի բաւէ, ա՛խ...

Ու անխուսափելի կերպով հետեւանքը նայնը կ'ըլլար. դարձեալ լաց, դարձեալ հեծկտանք:

— Ուրիշներ մեր ձեռքերէն կը քաշէին գեղեցիկ հազուատ մը, մէկ կողմ կը նետէին ու կը բողոքէին:

— Կռնակս առանց շապիկի է մնացեր, հոգե՛րդ առնեմ,

բան մը տուէք ծածկուիմ, ա՛լ կը բաւէ՛, սգաւոր գլխիս գեղեցիկ հագո՞ւստն է պակաս :

Ու կը պահանջեն սեւ, միշտ սեւ. իրենց նայուածքը կը փնտռէ դէզերուն մէջէն սեւը ու սգաւորի հագուստները :

Կոյրերու շարքը կ'անցնէր մեր առջեւէն. կային որ վիրաւորուած արտեւանունքներ ունէին և երբ լային՝ սարսափելի էր. արցունքի հետ արիւն կը հոսէր այտերնուն վրայ. ծայրայեղ զգուշաւորութիւններ կ'ընէինք՝ իրենց ցաւը չգըրգուելու, իրենց զգայնութիւնները չարթնցնելու համար, բայց զուր էր... , չեմ գիտեր ի՞նչպէս, առանց մեզ տեսնելու և դեռ առանց մեր ձայնը լսելու՝ կը զգային թէ արամադիր ենք խղճալու իրենց վրայ, թէ մեր մէջը կապ մը կայ, որով անմիջապէս հաղորդակցութեան մէջ կ'ըլլանք իրենց հոգեկան վիճակին հետ :

— Յաւերդ առնեմ, քո՛յրս, քեզի չըսենք, որո՞ւրսենք. ո՛վ մեր տարտը կը հասնայ. օտարին սիրտը քարի պէս կարծր է :

Ու մէկ հագի մը կարող էր ամբողջ աշխարհ մը թըշուաւութիւն ներկայացնել միայն, իր պատմութիւնը ընելով :

Իսկուհի միշտ ամբոխը կը մտնէր... : Քանի՛ սպասման ժամերը կ'անցնէին, այնքան անհամբերութիւնը կը մեծնայր... երբեմն մէկը, աւելի ճարպիկ, կամ մտրակուած պահանջին ստիպողականութենէն՝ արդելքներուն շանսալով ու ամբոխը ճեղքելով կը հասնէր մինչեւ մեզի. լնդհանրապէս մայրերը այս կերպով կուգային մեր մօտը :

Այսպէսով էր որ յանկարծ դուռը բացուեցաւ կռնակին վրայ ու խելայեղ կին մը նկատուեցաւ ներս. կոյրերը ահաբեկ, խարխափելով իրարու զարնուեցան և ուրիշներ բնազդով ճամբայ տուին :

Երիտասարդ կին մըն էր. բաւական շնորհքով կը կրէր իր լայն շալվարը ու բազմաթիւ ծամեր կը կախուէին կռնակն ի վար. գլուխը ծածկած էր ճերմակ քօղով, որուն ծայրը կը ծածկէր նաեւ իր կզակը :



— Այլ դիմանալու աստիճանը անցեր է ինձի համար...  
գինովի ու խենթի պէս եմ... խղճացէ՛ք ինձի :

Ու թեւերուն վրայ կրած ծրարը բանալով, կարկառեց մեզի :

— Ահաւասի՛կ... ա՛յ մնացածը դուք գիտէք :

Անհաւատալի նիհարութեամբ բոլորովին մերկ տղայ մը :

— Քանի՞ ամսու է այս տղան :

— Վեց ամսու, պատասխանեց մայրը... :

Մանկիկը իր հիւանդ տղու սրտմտած ու տխուր աչքերովը կը նայէր մեզի. երբեմն լոյսէն շտայած՝ կը քիթէր անոնք ու իր կապկային դիմագիծերը կը ծամածռէր. ամբողջ մարմինը մնացեր էր այնպէս, ինչպէս էր ծնած օրը, թերեւս աւելի նուազեր էր. փորը գուգաւոր ու պարապ կը թուէր. ու թեւերը, ինչպէս սրունքները՝ բարակ ձողերու պէս նիհար էին : Կինը իր անյաջող մայրութեան մէջ վիրաւորուած, կ'արտասուէր ու յաճախակի կը կրկնէր.

— Հինգ դաւկի մայր եմ, ոչ մէկը ասանկ չէ կոլած :

Շատ անգամ տեսեր էինք սակայն այս երեւոյթով տղաքներ՝ մայրերու դիրկը. բոլոր նորածինները դէպքին և յաջորդող օրերուն մէջ, շարունակական թշուառութեան ենթարկուած՝ վերածուեր էին հրէշներու. մեռնողներու թիւը շատ մեծ էր, բայց անոնք որ դեռ կ'ուշանային մեռնելու՝ կը ներկայացնէին նոյն պատկերը :

— Մեր ցաւը մէկ տեսակ չէ, մեր տարար մէկ տեսակ չէ, կը կրկնէր միօրինակ և երգող ձայնով մը, դժբաղդ մայրը, կարծես արձագանգ դառնալով մեր մտածումներուն :

Երբ գլինքը գոհացնելէ ետքը՝ մեր կոյրերուն դարձանք, ամբոխը հասած էր արդէն մինչեւ մեր սենեակին դուռը :

Կոյրերը սարսափած այդ տարօրինակ աղմուկէն՝ կը շտապէին. իրենց գլուխները բարձր բռնած, սրունքները դեղեւուն, կուգային դէպ ի մեզ ու երբեմն իրարու կը կրթնէին՝ յառաջանալու համար... այդ վիրաւորուած ու արիւնոտ աչքերը, այդ ճերմակ մշուշով ծածկուած բիբերը, թարախէն մաշած արտեւանուէքներով՝ մեզի թէ՛ գթութիւն, թէ՛



վախ կը ներշնչէին. ու կային որ ունէին այնպիսի փակ աչքեր՝ որ անկարելի էր երեւակայել թէ ատեն մը նայուածքի լոյսը ճաճանչած է այդ ցամքած ու ողորկ խորութիւններէն. մորթը ճակատէն կ'իջնէր այդ փոսերուն մէջ՝ առանց նոյն իսկ ծալք մը կազմելու արտեւանունքի միացած գծին վրայ . . . :

Ամէնքն ալ անտէր էին ու առանձին. ու ոմանք չէին գիտեր թէ ի՛նչ են եղեր իրենց ընտանիքին անդամները. մեռած էին թէ թափառական, թէ բանտարկուած . . . : Այս հարցումն էր որ կը յաճախէր իրենց տօգոյն շրթունքներուն վրայ .

— Հոս եկողներէն մէկը չըսա՞ւ թէ կոյր հայր մը ունէի . . . :

Մեզի դժուար էր պատասխանել. աւելի դժուար էր իրենց տկար ու դողդոջուն յոյսը մարել. շատերը այդ յոյսովն է միայն որ կ'առաջնորդուէին կեանքի դժնդակ ճամբուն վրայ :

ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ

**ՏԿ. ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ.**— Իբրեւ արձակագիր եւ գրագիտուհի, թրքահայ Գրականութեան մէջ կը բռնէ առաջնակարգ տեղերէն մէկը. հանդարտ ոճ մը, որ չաճապարեր եւ կը խորանայ անընդհատ. զննելու եւ վերլուծելու զմայլելի կարողութիւններ՝ որ կը պատկերացնեն կեանքն ու դէպքերը իրականութեան բոլոր կենդանութեամբն ու մանրամասն ճշտութեամբը, — ահա հիմնական գծերը Տիկին Եսայեանի գրականութեան: Այս յատկութիւնները կ'օժտեն զինքը վիպելու եւ նկարագրելու արուեստին մէջ, ուր Տիկին Զապէլ յայտ կուգայ որպէս տաղանդաւոր վարպետ: Իր արտադրութիւններէն հրատարակուած են, Շնորհիֆով Մարդիկ, Կեղծ Հանձարներ, եւ Աւերակներու Վրայ գործերը:





Մ Ծ Ի Ր Ի <sup>(1)</sup>

## 1

Սրանից առաջ մի քանի տարի,  
 Այնտեղ, ուր Արագվ ու Կուր գետերի  
 Ջրերն աղմուկով խառնւում իրար՝  
 Գրրկըւում են երկու քոյրերի նրման,  
 Կար մի մենաստան: Կարող է այժմ էլ  
 Անցորդը սարի ուսերից տեսնել  
 Քանդուած դռների կանգուն սիւները,  
 Վանքի կամարն ու աշտարակները:  
 Բայց անուշահոտ ծուխը բուրվառի  
 էլ չի վերանում կամարի տակին  
 Եւ ոչ լսում է աղօթողների  
 Երգը գիշերուայ ուշ ժամանակին:  
 Այժմ մեն-մենակ զառամած մի ծեր՝  
 Աւերակների պահնորդ կիսամեռ,  
 Ընկած մտքիցը մարդկանց եւ մահի,  
 Սրբում է փոշին շիրմաքարերի,  
 Որոնք պատմում են անցած դարերի,  
 Անցած փառքերի եւ նորա մասին  
 Թէ ի՛նչպէս ենշուած իւր թագի տակին,  
 Այս ինչ թագաւորն այն ժամանակին  
 Իւր ժողովուրդը յանձնեց ընդունին:  
 Այն օրից Աստուծոյ շնորհքը իջաւ  
 Եւ Վրաստանը ծաղկեց, ուռնացաւ  
 Իւր այգիների շուքերում հով-հով,  
 Բարեկամական զէնքով պաշտպանուած,  
 Թըշնամիների ահից ապահով:

(1) Մծիբի վրացերէն կը նշանակէ նիժեհ, եկոտ,  
 անսպասական:



## 2

Մի ռուս գեներալ կովկաս լեռներից  
 Մի անգամ դէպի Թիֆլիզ էր գալիս:  
 Նա իւր հետ գերի մի մանուկ ունէր .  
 Սա տրկարացաւ, չը կարաց տանել  
 Նեղութիւնները հեռաւոր ճամբի:  
 Հագիւ թէ լինէր նա վեց տարեկան,  
 Այծեմնիկի պէս երկչոտ, վայրենի  
 Եւ թոյլ ու ճկուն եղէգնի նրման:  
 Սակայն նրա մէջ ցաւը տանջալի  
 Զօրացրեց այն ժամ իրան հայրերի  
 Աննկուն ոգին: Վիշտը լուռ տանում  
 Եւ գէթ մանկական իւր շրթունքներից  
 Մի թոյլ հառաչանք նոյն իսկ չէր հանում:  
 Հացը նըշանով մերժում էր նա դէն  
 Եւ խաղաղ, հպարտ մեռնում էր արդէն:  
 Կարեկցութիւնից մեր ծեր վանական  
 Հիւանդին խնամեց, տւեց ապաստան .  
 Այսպէս նա վանքի յարկի տակ մնաց  
 Բարեկամական ձեռքով ազատուած:  
 Բայց զո՛ւրկ մանկական զրւարթ հանոյքից՝  
 Փախչում էր առաջ նա ամէն մէկից .  
 Թափառում էր լուռ, մենակ, սրտաբեկ,  
 Թառանչով նայում դէպի արեւելք,  
 Մաշուելով մի լուռ անմեկին վըշտով—  
 Իրան հայրենի երկրի կարօտով:  
 Բայց գերութեանը շուտ ընտելացաւ,  
 Օտարի լեզուն կամաց հասկացաւ .  
 Հայր սուրբը կրնքեց, տուեց սուրբ հաղորդ,  
 Եւ աշխարհային կեանքին անձանօթ,  
 Արդէն ուզում էր ծաղիկ հասակում  
 Աբեղայական ընդունել կոչում՝

Երբոր մի անգամ աշնան գիշերով  
 Նա անյայտացաւ: Շուրջը սարերով  
 Ձգւում էր անծայր անտառը մըթին:  
 Երեք օր այնտեղ ի զուր փնտռեցին,  
 Բայց յետոյ դաշտում անգգայ գտան  
 Եւ վերադարձրին կրկին մենաստան:  
 Նա սաստիկ գունատ, թոյլ էր եւ նիհար.  
 Կարծես աշխատել տանջուել էր երկար,  
 Կամ հիւանդութիւն ու սով էր քաշել:  
 Ձէր պատասխանում հարցմունքներին նա  
 Եւ թառամում էր օր օրի վըրայ:  
 Այսպէս մօտեցաւ ժամը իր մահուան:  
 Այնժամ նրրա մօտ եկաւ արեղան  
 Յորդորանքներով եւ աղերսելով:  
 Հիւանդը՝ հպարտ նրան լսելով,  
 Նստեց, մընացած ոյժը հաւաքեց,  
 Եւ ա՛յսպէս երկար խօսալ սկսեց.

## 3

«Շնորհակալ եմ, որ այստեղ եկար  
 Խոստովանանքս լրսելու համար:  
 Միշտ լաւ է դարձեալ, որ սիրտըս ցաւոտ  
 Ես թեթեւացնեմ, խօսքով մէկի մօտ.  
 Սակայն ես մարդկանց չարիք չեմ արել,  
 Իմ արարքները նորա համար էլ —  
 Ի՞նչ օգուտ, եթէ խոստովանէի  
 Իսկ հոգին մի՞թէ պատմել կը լինի:  
 Ես քիչ եմ ապրել եւ այն էլ գերի.  
 Այսպէս երկու կեանք մի աղմըկալի,  
 Եւ ուն կեանքի հետ, որ տեսել եմ, ծե՛ր,  
 Ես կը փոխէի թէ հընար լինէր:  
 Ես միայն մի մըտքի ոյժ եմ նանաչել,  
 Մի—բայց բոցավառ կիրք եմ ունեցել.

Նա ինչպէս երեւի ապրել է իմ մէջ,  
 Կրթել է հոգիս, այրել մինչեւ վերջ:  
 Նա ցնորքներըս թռցրել, տարել է  
 Այս նեղ խցերից անդորր աղօթքի.  
 Այն վեհ աշխարհը կրուի, աղմուկի,  
 Ուր որ ժայռերը թագչում ամպերում,  
 Մարդիկ արծուի պէս ազատ են ապրում.  
 Ես իմ այդ կիրքը գիշերուայ մը թնով  
 Պահել եմ վրշտով, արտասուքներով,  
 Եւ այժմ երկնքի— երկրի առաջ այն  
 Խոստովանում եմ ես բարձրաբարբառ  
 Եւ չեմ աղերսում թողութեան համար:

## 4

«Ծերո՛ւկ, շատ անգամ իմացել եմ ես,  
 Որ դու իմ կեանքը մահից փրկել ես.  
 Ինչո՞ւ փրկեցիր: Մենակ ու դաժան,  
 Փոթորկի պոկած տերեւի նրման,  
 Մըռայլ պատերի միջում մեծացայ,  
 Հոգով դեռ մանուկ, բախտով աբեղայ,  
 Զրկարողացայ ոչ ոքի ասել  
 «Հայրիկ» ու «մայրիկ» սրբազան խօսքեր:  
 Հարկաւ, քո միտքը այն էր, ծե՛րունի,  
 Որ մենաստանում ես խորթանայի  
 Այսքան քաղցրալի այս անուններին.  
 Զո՞ւր, հե՛տս են նրանց ձայները ծնել:  
 Ես տեսնում էի, որ ուրիշները  
 Հայրենիք, տուն, ընկեր, ծնող ունէին,  
 Մինչդեռ չունէի ես նրանց նրման  
 Ոչ թէ սիրելիք—այլ եւ գերեզման.  
 Ես այնուհետեւ ի զուր չողբացի՝  
 Այլ հոգուս միջումս այսպէս ուխտեցի



Որ երբ եւ իցէ, Թէկուզ մի վայրկեան,  
Այս իմ բոցավառ կուրծքը մանկական  
Սեղմեմ կարօտով մի ուրիշ կրրծքի,  
Թէկուզ անծանօթ—միայն հարազատի:  
Բայց, աւանդ, հիմա երազներըս այն  
Կորել են իրանց պերճանքով համայն,  
Եւ, ինչպէս օտար երկրում ապրեցի,  
Մեռնում եմ դարձեալ ես որք ու գերի:»

## 5

«Ինձ չի վախեցնում գերեզմանն ահեղ,  
Տանջանքն, ասում են, քրնում է այնտեղ  
Սառն յաւերժական լրուութեան միջում:  
Կեանքից զրկուելն է ինձ մինակ տանջում:  
Ջահե՛լ եմ, ջահե՛լ... ունեցե՛լ ես դու  
Ցրնորմունքները անհոգ պատանու.  
Կա՛մ չես ունեցել, կա՛մ մտանց ես արել,  
Թէ ինչպէս ես դու նախանձել. սիրել,  
Ի՛նչպէս է սիրտը բաբախել ուժգին  
Կանաչ, դաշտերին վառ արեգակին,  
Անկիւնի թանձրը բուրգից նայելիս,  
Ուր օդը թարմ է, եւ ուր մերթ գալիս  
Ու բարձր պատի խորունկ ճեղքուածում,  
Բուքից վախեցած, կուչ եկած նստում,  
Պատրասպարւում է փոքրիկ աղաւնին —  
Չըքնաղ զաւակը անյայտ աշխարհի:  
Թող թէ դու, արդէն զառամած, թոյլ ես,  
Սիրուն աշխարհը յագեցրել է քեզ,  
Սրբտումդ անկատար էլ չունիս իղձեր...  
Էլ ի՛նչ ես ուզում, դու ապրել ես, ծե՛ր,  
Աշխարհքում ունիս մոռնալու մի բան.  
Չէ՞ որ կ'ապրէի ես էլ քեզ նրման:»

## 6

«Կուզես իմանայ՝ ազատութեան մէջ  
 ես ինչե՞ր տեսայ:—Դաշտեր տեսայ պերճ,  
 Բըլուրներ տեսայ, ուր կանաչ ծառեր,  
 Ինչպէ՞ս շուրջպարի բըռնած եղբայրներ,  
 Չորս կողմից դալար պըսակ կապելով  
 Շըշնչում էին թարմ խըմբակներով.  
 Տեսայ դէզերը մուայլ ժայռերի,  
 Երբ բաժանում էր վրտակը նըրանց.  
 Նըրանց մտքերը հասկանում էի,—  
 Վերելիցն էր այս շնորհքն ինձ տըրուած.  
 Վաղո՞ւց, շատ վաղուց օդում տարածուած  
 Այն քարէ գրկերն ամէն մի վայրկեան  
 Լուռ փափաքում են իրար հանդիպման,  
 Բայց օրեր անցնում, տարիք են անցում  
 Եւ նրանք երբեք իրար չեն հասնում...:  
 Բարձր լեռների շարքեր տեսայ ես՝  
 Վեհ, հրաշալի ցնորքների պէս,  
 Երբ արշալուսի ժամին վաղորդեան  
 Նրանց գըլխները սեղանի նըման  
 Ծխում են հանդարտ կապոյտ երկնքում,  
 Եւ ամպը ամպի ետեւից ծըգւում,  
 Ինչպէս տարագնաց ըսպիտակ հաւքի  
 Հեռու կողմերից չըւող երամը,  
 Թողնելով գաղտնի իւր օթեւանը,  
 Ուղղում է իւր չուն կողմն արեւելքի:  
 Անօսը մշուշի միջիցը-հեռւում,  
 Գոհարի նման փայլող ձիւներում  
 Տեսայ ալեւոր կովկասն անասան.  
 Եւ ես չըգիտեմ թէ ընչի՞ցն էր այն,  
 Բայց թեթեւացաւ սիրտս նոյն ժամայն.  
 Ըսկսեց գաղտնի մի ձայն ինձ ասել

Թէ երբեմն այնտեղ ապրել եմ ես էլ...  
 Եւ հետըզհետէ բացուեցաւ խաւար  
 Անցեալն իմ մտքում պայծա՛ր ու պայ-  
 ծառ...»

## 7

«Եւ ես յիշեցի մեր տունն հայրական,  
 Յիշեցի մեր ձորն եւ մեր շրջական  
 Շրւարում ցրած գիւղի տրները.  
 Լսեցի իրիկուան ձէն ու ձուները  
 Գէպի տուն վազող երամակների,  
 Հեռու հազոցը ծանօթ շրների:  
 Միտս եկան թուխ-թուխ ծերունիները,  
 Լուսնեակի լուսով իրիկունները  
 Իմ հօր սրահի-շէմքի դէմուդէմ  
 Նրատուտած խոհուն եւ խոժոռադէմ.  
 Եւ խանչալների պրղնծապատած  
 Պատեանների փայլն... եւ բոլորն յանկարծ  
 Խառը շարքերով-երազի նրման  
 Աչքիս առաջից արագ անցկացան:  
 Հապա իմ հա՛յրը, պատերազմական  
 Իւր զգեստներով, ի՛նչպէս կենդանի  
 Աչքիս երեւաց, եւ միտըս եկան  
 Զրահի շրուինդը, փայլն հրրացանի,  
 Նորա հայեացքը հպա՛րտ, աննկո՛ւն,  
 Եւ իմ քոյրերը մատաղ, սիրասուն...  
 Շողերը նրանց աղու աչքերի  
 Եւ հնչիւնները երգի, խօսքերի,  
 Որ ասել էին օրրանիս վրրայ...  
 Այն ձորի միջով վտակ էր վազում,  
 Աղմկող էր նա, սակայն ոչ խորին,  
 Նրա ոսկեգոյն մանրիկ աւազում  
 Խաղալու էի. գրնում կէսօրին,  
 Եւ նայում էի աչքերրս յառած,



Երբ ալիքներին անծրեւից առաջ,  
 Դիպչում էր թեւով սեւ ծիծեռնակը:  
 Յիշեցի եւ մեր խաղաղ տղնակը,  
 Եւ օջաղի մօտ իրիկունները  
 Արած այն երկար պատմութիւնները,  
 Թէ ո՛նց են ապրել մարդիկ վաղեմի,  
 Երբ դեռ աշխարհքը ճոխ էր աւելի

## 8

«Կուզե՞ս իմանալ, թէ ես ի՛նչ արի  
 Ազատութեան մէջ: — Ապրե՛ցի ու կեանքս  
 Առանց այդ երեք երջանիկ օրի  
 Քո ու ժաթափեւած ծերութիւնից էլ  
 Աւելի տխուր ու մռայլ կը լինէր:  
 Վաղո՛ւց, շատ վաղուց մտադրել եմ  
 Մի անգամ արծակ դաշտերին նայեմ,  
 Տեսնեմ աշխարհը սիրո՞ւն է արդեօք,  
 Տեսնեմ, ինչո՞ւ ենք գալիս մենք աշխարհ՝  
 Ազատ ապրելու թէ բանտի համար:  
 Եւ այն գիշերուայ սոսկալի ժամին,  
 Երբ որոտմունքը վախեցրել էր ձեզ,  
 Սեղանի առաջ երբոր խրմբովին  
 Դուք ընկել էիք խրոնուած այնպէս՝  
 Ես վանքից փախայ: Օ, ինչպէս եղբայր  
 Ես կը գրկէի մըրրիկն հողմազայր,  
 Աչքերս ամպերի ետեւից տանում,  
 Չեռքով շանթն էր բռնել ցանկանում...»

Դէ՛ ասա՛, հայրիկ,

Ինձ այս պատերում ի՛նչ պէտք է տայիք  
 Իմ փոթորկալի սրբտի եւ ահեղ  
 Այն որոտմունքի մտերմութեան տեղ...

Թրգմ. ՅՈՎ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԼԵՐՄՈՆՏՈՎ

## Բ Ի Ն Գ Է Օ Լ

Բինգէօյ՝ այն բարձր և անսման լիռն է, որ մեծ և փոքր Հայաստանի կեդրոնը կամ սրտին վրայ բուսած է, և որ ամէն հիներէն և նորերէն կը համարուի Աղամայ Եղեմ դրախտը: Ինքն անկցորդ է Տօրոսի լեռներու գօտիին, և Սաղկեայ լեռներու շղթային: Ասոր գագաթն ելողը կը վայելէ անապակ օդ, շատ ջինջ կ'երևայ իրեն երկնքի եթերը. քիչ մը դէպի վար իջեցնելով իր աչքերը, շուրջանակի կը տեսնէ Հայաստանի ամէն կողմերը, կ'ողջունէ Մասիաները և Արագածը համայն հիւսիսային և արևելեան կողմերով: Արմաւրի և Դենայ աւերակներու փոշիները կը նշմարէ իբրև արեւուն շողին շամանդաղը, որ կուգան հոտաւէտելու այս լեռան անթիւ ծաղիկներու կոկոններն ու թերթերը:

Այստեղ Անիին գմբէթներուն ու բերդերու բնկորներուն վրայ վայոգ բուերու արձաղանգն ու սոյլը կը բերէ գարնան սիւքը, և կը խառնէ Բինգէօյի բիւլբիւլներուն և հովուական սքինգներու ձայներն անուշցնելու. Վասպուրականի ծովը, Տիգրանակերտն իր Միջագետով, Ծոփք, Բալայ հովիտը, Երիզա՝ Դերջանով, Կարինը կրկին Բասենով՝ Բինգէօյէն կ'երևին սրատեսներուն. և ասոնք Բինգէօյէն ջուր կ'ընդունին:

Արդէն Վարդօ, Սնուս, Շուշար, Գոյնուգ, Քղի, Ճապաղջուր, Կարնոյ հովիտը, բոլորն ալ Բինգէօյի ածուններն են. և քնակիչները անկէ իրենց հայն ու ջուրը կ'ընդունին:

Տեսե՞ր ես Հայոց հին քերականներուն մէջ հալւոր Յակոբ նահապետի պատկերը, որ ընկողմանած կը քնանայ, և իր պորտէն ծառ մը կը բարձրանայ բազմոստեայ, և ոստերուն վրայի պտուղներն են Իսրայէլի նահապետներն ու թագաւորները: Տո՛ւր Հայաստանին ալ այդպիսի այրական պատկեր մը, որ ընկողմանած ըլլայ իր պառեկին վրայ. անոր գանկն ըրէ՛ Մասիսը, և աղեղնաձեւ դաշտն Արարատայ՝ անոր յօնքերը: Պինչերը կամ ոնգունքը՝ ծով Կապուտան և ծով Գեղամայ, իսկ աչերը

դառն ու աղի լիճեր Որմեայ և Աղթամարայ : Իր մէկ թեւը տարածէ հիւսիսէն Կասպից ծովի ափերով , և ձեռքի մատները ցից սլահելով՝ կը ձեւանայ Կովկասը . հարաւէն Վասպուրականի սահմանագլխով պարզէ՝ իր միւս թեւը մինչեւ Ծոցը Պարսից , և թաթիկը լացած ըլլայ Միջագետք և Թէերայ դաշտը : Իր ոտները ձիգ երկարցուցած հասնի մինչեւ Կասպադովկիա և Կիլիկիա , և այն ժամանակ Բինգէօլը այդ պառկածին ճիշտ պորտն եղած կ'ըլլայ : Միւս լեռները դիւրին է յարմարցնել կողերուն , որտի տախտակին , թռքին պօլօճիկներուն և ողնաշարին : Գետերն ըրէ՛ արեան երակ , և անտառ ու մայառ՝ անոր մորթի մազերը , եւն . : Բայց քնացած և ընկողմանած ըլլայ ան , ոչ թէ արթուն և ոչ թէ ոտքի վրայ , ոչ աշխատի , ոչ սւտէ , ոչ իր տեղէն ու դիրքէն երերայ : Ենչէ միայն , և թռքերը տրոփեն , սիրտը բարսիսէ , բազկերակը զարնէ և պորտը բաց ու խուր ընէ :

Բինգէօլը դժնդակ տարտարոս մըն է ձմեռուան եղանակին , և դրախտ՝ գարնան և ամրան : Բինգէօլը վեհ և ահաւոր չէ , այլ սիրուն . թագաւորի չի նմանիր , այլ թագուհիի . քնքուշ է և փափուկ . կոյս մըն է պճնազարդ և փափկասուն . շտրկքի լեռն է քան թէ քաջերու և դիւցազուններու . ասոր համար իր վրայ եղած վէպերը ոչ Աղնաւուրի , ոչ Դեւի , ոչ յաղթողի և ոչ զինուորի ու թագաւորի են , այլ սիրոյ , զուարճութեան , սուտղջութեան , գեղեցկութեան և զարդի , անուշութեան , պարարտութեան և գուսանի : Որովորովհետեւ անոր բիւրաղքերակներուն և հաղար ակերուն բուրբ բիւր տեսակ բոյսեր և ծաղիկներ փռուած են : Զրարբի մարգեր , ամենադալար բանջարներ և խոտեր իրենց արմատներով՝ ուտելու , բուժելու , գոյն գոյն ներկելու կը գործածեն . իր վայրի կենդանիները՝ առիւծ և վագր չեն , այլ եղնիկ և այծեամ : Հոն կովերը , մատակ ձիերը և մաքիները հօտով կ'արածին , հորթ , քուռակ և գառներ կը ծնանին : Հաւերն իրենց ձուերը ծաղիկներու բոյներուն մէջ ածելով թուխս՝ կը հատին , և ձագերով կը թռչտին :



Հոս գրասատէրները կուգան ուրախանալու, հիւանդները օղ և ջուրը ծծելով՝ կեանքը նորոգելու, կոյսեր և հարսները՝ ձեռագործի թելերը ներկելու համար ծաղիկ և արմատ ժողվելու, ժրաջան տանտիկիները բանջար ժողվելու, բժիշկները՝ դեղ ու դարմանի համար ամէն բոյսէն ծիլ մը կամ ծաղիկ մը կամ թուփ մը առնելու, իսկ մեղուներու տղզոցն ու բզզոցը հիանալի դաշնակուլութիւն մը կուտան մարդոց և թռչուններու երգերուն, անասուններու բառաչին, գորտերու կառաչին, գլխացող առուակին ու սուլացող սիւքի ձայնին: Անթիւ, անհամար մեղուներ: Բայց միեւնոյն ժամանակ օձերն ալ կը սողոսկին այդ ծաղիկներու կողակի քովերէն, իրենք ալ կ'առնեն միեւնոյն ծաղիկներէն հիւթը և կը վայելեն սուրբ օղը: Հոս մեղուներով մեղր կը շինուի, և օձերով թոյն:

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

**ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿ. ՍՐՈՒԱՆ-  
ՁՏԵԱՆՑ** (1840-1892). — Աշակերտ  
Խրիմեանի, առաջին մշակողներէն մէկն  
է եղած գաւառական գրականութեան,  
նկարագրելով գողտր, համեղ ու ինք-  
նատիպ ոճով մը հայրենի երկերը եւ  
բնանկարները, եւ հաւաքելով հայ ազ-  
գագրական նիւթեր՝ հէքեաթ, զրոյց  
եւ աւանդութիւն:

Թողած է Գրոց-Բրոց, Հնոց-Նորոց,  
Մանանայ, Թորոս-Աղբար եւ Համով-  
Հոսով գործերը: Ունի տակաւին ձե-  
ռագիրներ՝ որ կը մնան անտիպ: Ծնած  
է Վան եւ մեռած է Պոլիս:





## ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Մայր Արաքսի ափերով  
Քայլամուր զընում եմ,  
Հին հին դարուց յիշատակ  
Ալեաց մէջը պըտրում եմ:

Բայց նոքա միշտ յեղեղուկ  
Պըղտոր ջրով եզերքին  
Դարիւ դարիւ խփելով  
Փախչում էին լալագին:

— «Արա՛քս, ինչո՞ւ ձրկանց հետ  
«Պար չես բռնում մանկական,  
«Դու դեռ ծովը չը հասած  
«Սըգաւոր ես ինձ նրման:

— «Ինչո՞ւ արցունք ցայտում են  
«Բու սէգ, հրպարտ աչերից,  
«Ինչո՞ւ արագ փախչում ես  
«Այդ հարազատ ափերից»

«Ա՛ի՛ պըղտորիլ յատակըդ,  
«Հանդարտ հոսէ՛ խայտալով,  
«Մանկութիւնը քու կարճ է.  
«Շուտ կը հասնիս դէպի ծով:

«Վարդի թըփեր թո՛ղ բըսնին  
«Բու հիւրքնկալ ափի մօտ,  
«Սոխակները նոցա մէջ  
«Երգեն մինչեւ առաւօտ:

«Մշտադալար ուռիներ  
 «Սառ ծոցի մէջ քու ջրին  
 «Ճկուն ոստեր ու տերեւ  
 «Թող թաց անեն տապ օրին:

«Ափերիդ մօտ երգելու  
 «Հովիւք թող զան համարձակ,  
 «Գառն ու ուլը քու վրճիտ  
 «Ջուրը մրտնեն միշտ արձակ:»

Մէջքը ուռցուց Արաքսը,  
 Փրփուր հանեց իր տակից,  
 Ամպի նրման գոռալով,  
 Էսպէս խօսեց յատակից:

— «Խիզա՛խ, անմիտ պատանի  
 «Նիրհրս ինչո՞ւ դարեւոր  
 «Վրդովում ես, նորոգում  
 «Իմ ցաւերը բիւրաւոր:

«Սիրելի մահից յետ  
 «Ե՞րբ ես տեսել, որ այրին  
 «Ոտքից գրլուխ պրճնուի  
 «Իր զարդերով թանկագին:

«Որի՞ համար զարդարուեմ,  
 «Որի՞ աչքը հրապուրեմ,  
 «Շատերն ինձ են ատելի,  
 «Շատերին ես օտար եմ:

«Իմ ազգակից գիժ Բուռը,  
 «Թէեւ այրի ինձ նման՝  
 «Ըստրկօրէն տանում է  
 «Գայթակղիչի կուռ շղթան:



«Բայց նա ինձ չէ՛ օրինակ,  
 «Ես Հայ՝ Հայիս կը ճանչնամ,  
 «Օտար փեսայ չուզելով,  
 «Ես միշտ այրի կը մընամ:

«Կար ժամանակ, որ ես էլ  
 «Շրքեղազարդ հարսի պէս  
 «Հազար ու բիւր պըջրանքով  
 «Փախչում էի ափերէս:

«Յատակս պարզ ու վրճիտ,  
 «Կոհակները ոլորուն,  
 «Լուսաբերը մինչեւ այգ  
 «Ջրրիս միջին էր լողում:

«Ի՞նչրս մընաց էն օրից,  
 «Ո՞ր ջրրամօտ գեղերրս,  
 «Ո՞րը իմ շէն քաղաքից,  
 «Ո՞ր բերկրալի տեղերրս:

«Տուրքը ջրրի ամէն օր  
 «Իր սուրբ ծոցէն Արարատ  
 «Մայրախընամ ինձ սընունդ  
 «Պարգեւում է լիառատ:

«Բայց ես այն սուրբ ջրրերով  
 «Սուրբ Ակոբի աղբիւրին  
 «Պիտի ցօղեմ արտորա՞յքն  
 «Իմ ատելի օտարին:

«Մինչ իմ որդիք—ո՛վ գիտէ,  
 «Ծարաւ, նօթի, անտէրունջ,  
 «Օտար աշխար յածում են՝  
 «Թոյլ ոտքերով կիսաշունչ...

«Հեռո՛ւ, հեռու քրշեցին  
 «Բընիկ ազգը իմ հայկեան,  
 «Նորա տեղը ինձ տրուին  
 «Ազգ անկըրօն մոլեկան:

«Դոցա՞ համար զարդարեմ  
 «Իմ հիւրընկալ ափերը,  
 «Եւ կամ դոցա՞ հրապուրեմ  
 «Ճրպրոտ, պըլշած աչերը:

«Քանի որ իմ զաւակունք  
 «Այսպէս կը մընան պանդուխտ,  
 «Ինձ միշտ սրգաւոր կը տեսնէք.  
 «Այս է անխաբ իմ սուրբ ուխտ...»

Էլ չը խօսեց Արաքսը,  
 Յորձանք տըուեց ահագին.  
 Օղակ օղակ օծի պէս  
 Առաջ սողաց մոլեգին:

Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

**Գ.Ա.Մ.Ա.Ռ. ԳԱԹԻՊԱ. (ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ).**— Ռափայէլ Պատկանեան կողկասահայ մտաւորական վերածնութեան ռահվիրաներէն մէկն է, զաւակը սերունդով դեղարուեստագէտ ու բանաստեղծական ձիրքերով օժտուած ընտանիքի մը: Ռ. Պատկանեան ծնած է Նոր-Նախիջեւան եւ իր ուսումը կատարելագործած է Դորպատի համալսարանը, ուր 50ական թուականներուն կը գտնուէր այն հայ ուսանողական խումբը՝ որ իր մտաւոր գործունէութեամբ հիմը դրաւ ռուսահայ ժողովրդական Գրականութեան. հոն էին Դոդոխեան՝ հեղինակը «Ծիծեռնակ»ին, Միրիսանեան որ գրած է «Հայոց աղջիկներ», Քերովքէ Պատկանեան՝ որունն է «Ինձ համար չէ՛ գարնան գալը»: Այս խումբը առաջին անգամն ըլլալով կը կարդայ Աբովեանի «Վէրք Հայաստանի»ին ձեռագիրը, որ կը թողու խոր տպաւորութիւն իրենց վրայ: 1852ին Ռ. Պատկանեան կ'անցնի Մոսկուա, ուր Գէորգ Քանանեանի եւ Մինաս Թիմուրեանի հետ կը սկսի հրատարակել բանաստեղծական հաւաքածուներ, ինքնուրոյն թէ թարգմանածոյ, ժողովրդական լեզուով եւ ժողովուրդին մէջ տարածելու նպատակով: Այդ



հաւաքածուները ստորագրուած էին Գամառա-Քաթիպա անունով, որ ոչ այլ ինչ էր՝ բայց եթէ Քէորզ Քանանեանի, Մինաս Թիմուրեանի եւ



Ռափայէլ Պատկանեանի անուններուն սկզբնատառերէն՝ Գ. Մ. Ռ. կազմուած ԳաՄաՌի եւ մականուններուն առաջին վանկերէն՝ Քա-թի-Պա, ամբողջացած կեղծանուն մը: Ահա 1854ին այս անունով հրատարակուած տաղարանին մէջ էր որ երեւցաւ Ռ. Պատկանեանի Մայր Արախին, մէկը հայ քնարերգական բանաստեղծութեան գոհարներէն, անմահ իբրեւ երգ, փափկութեամբը հոն թաւալող վշտին ու անկեղծութեամբը զայն համակող խոր զգացումներուն:

Գամառ-Քաթիպա կեղծ անունը ապա եղաւ միակ ստորագրութիւնը Ռ. Պատկանեանի, որով գրեց իր գործերը: Պատկանեանի երգերը ահադին յեղաշրջում բերած են հայ ժողովուրդին մէջ, արծարծելով հայրենասիրական զգացումը, հրաւիրելով Թըրք

քահայերը ըմբոստութեան եւ փոլթացնելով ազգային գիտակցութեան զարթումը:

Պատկանեանի բանաստեղծութիւնները կը բաժնուին երկու մասի, - հայրենասիրականներն ու երգիծականները: Հայրենասիրական բանաստեղծութեանց մէջ՝ հեղինակը երգելէ աւելի ուզած է թելադրել. նկատելով քերթողութիւնը ո՛չ թէ առուես, այլ միջոց՝ քարոզելու եւ տարածելու որոշ ձգտումներ, չկայ ոչ մէկ հայ հեղինակ՝ որուն երգերը այնքան ժողովրդականացած ու ծաւալած ըլլան, որքան Գամառ Քաթիպային: Ծաղրած է նաեւ իր հայրենակիցներուն թերութիւնները՝ կծու հեգնութեամբ, ուր յայտ կը բերէ մեծ տաղանդ: Այս սեռին կը պատկանին իր Փորտուղիկ Աւագը, Բարոյագրեր, Քաղկեդոն, Իրացիկս. Վարքևօր, Զախու, Բաց աղբար գրուած քերտերը:

Իր բոլոր գործերը ամփոփուած են երեք հատորներու մէջ:

Ռ. Պատկանեան մեռաւ 1892ին Նոր-Նախիջեւանի մէջ, ուր կայ եւ իր մահարձանը:



## Վ Ա Ն Ք Ը

Աղբակայ ամբողջ գաւառում ոչ մի Հայ չէր մնացել. 24 գիւղեր բոլորովին աւերակ և դատարկ էին. բնակիչներին մասամբ կոտորել էին և մասամբ գերի էին տարել Քրդերը, իսկ մնացածները փախել էին Պարսից սահմանակից Սարմատ և Սոմայի գաւառները, ապաստանելով տեղային Հայերի մօտ: Արշաւանքը այն սատիճան անակնկալ և յանկարծակի էր եղել, որ փախատականները հազիւ կարողացել էին աղաւտել իրանց թշուառ գլուխը. իսկ սոււն, տեղ, կայք և անասոււն, բոլորը թողել էին թշնամուն:

Ջալալէդդինի արշաւանքը նման էր մի սարսափելի հեղեղի, որ մի անգամով չի վերջանում, որ գալիս է, յետոյ ընդհատում է, և կրկին կատաղի հեղեղը սաստկանում է նոր և նոր յորձանքներով: Նա սկզբում իր հետ ունէր հինգ հազար ձիաւոր միայն, որոնցմով դուրս եկաւ Աղբակից. դիմում էր դէպի Բայազէդ. որ կողմում և անց էր կենում, թողնում էր իր ետեւից աւերակներ և ամայութիւն: Եւ այնուհետեւ, նրա արշաւանքի ձայնը լսելով հեռաւոր տեղերի Քրդերը, խուճբերով դուրս էին գալիս և դիմում էին դէպ ի իրանց առաջնորդի բանակը: Այս վերջինները լրացնում էին ինչ որ պակաս էր թողել Ջալալէդդինը: Հեղեղի յորձանքը այսպէսով կրկնւում էր և միևնոյն երկիրը մի քանի անգամ ենթարկւում ասպատակութիւնների:

Ջալալէդդինը, որպէս շէյխ և զօրավար, միակն էր որ յանձն առնց քրդերի գլխաւորութիւնը՝ առաջնորդելու նրանց դէպի պատերազմի դաշտը: Բայց Քրդելին առաւելապէս գրգռողը և նրանց կատաղութիւնը ոգևորողն էր մի ուրիշ շէյխ, որ իր տեղից չէր շարժւել, որ ամբողջ Քուրդիստանի հոգեւոր գլուխն էր համարւում և ներգործում էր իր սրբազան թղթերով Քրդերի դարայքէկիների, դադիների և մուֆթիների վրայ: Դա Շէյխ Իբրահիմըն էր:

Բայց չի կարելի միանգամայն ուրանալ, որ Քրդերի մէջ  
 եւս կան ազնիւ մարդիկ. նրանց մէջ կային և այնպիսիները,  
 որոնք զուրկ չէին բարի զգացմունքներից, որոնք չէին մաս-  
 նակցում վատ գործի: Այս տեսակ մարդերից մէկն էր Օմար-  
 աղան, իր հօտերով և երամակներով հարուստ Քուրդը, որ  
 մի փոքրիկ ցեղի գլխաւորն էր: Նա չմասնակցեց Ջալալէդ-  
 դինի արշաւանքին: Եւ լսելով անգութ ծերունու դիտաւո-  
 րութիւնը՝ նա յառաջագոյն եկաւ Բարդուղէմիոս առաքեալի  
 վանքը և յայտնեց վանահայր Եղիազար վարդապետին, թէ  
 մի քանի օրից յետոյ ի՞նչ դառն վիճակ էր սպասում Աղբա-  
 կայ Հայերին: Նա խորհուրդ տւեց վանահօրը՝ օգուտ քաղել  
 վանքի անմատչելի ամրութիւններից, և այդ նւիրական բերդը  
 ընտրել որպէս մի պաշտպանողական դիրք և այնտեղ հաւա-  
 քելով շրջակայ Հայոց գիւղօրայքի հարստութիւնները, այն-  
 տեղից ընդդիմանալ թշնամուն: Օմար աղան խոստացաւ ինքն  
 էլ միանալ վանահօր հետ և իր խոստմունքը կատարեց գոր-  
 ծով, որովհետեւ նա էլ երկիւղ ունէր Ջալալէդդինից, և նրա  
 արշաւանքին չմասնակցելու համար վախենում էր ենթարկւել  
 շէյխի վրէժխնդրութեանը: Եւ այս պատճառով իր տան հա-  
 րստութիւնը նա հաւաքեց վանքի մէջ և իր մարդիկներով  
 պատրաստ էր հարկաւորած ժամանակ, միանալով Հայերի  
 հետ, ընդդիմանալ թշնամուն:

Եղիազար հայր սուրբը ընդունեց իր վաղեմի բարեկամի՝  
 Օմար աղայի խորհուրդը, որի հաւատարմութեան վրայ կա-  
 տարեալ վստահութիւն ունէր, և Բարթուղէմիոս առաքեալի  
 վանքի շրջակայ Հայոց գիւղօրայքի թէ՛ բնակիչներին և թէ՛  
 նրանց կայքն ու անասունները հաւաքել տւեց վանքի մէջ:

Բարդուղէմիոս առաքեալի վանքը այն հնադարեան  
 վանքերից մէկն է, որ իր գոյութիւնը պահպանում է Լու-  
 սաւորչի ժամանակներից: Ամբողջ տասնեւվեց դար պատե-  
 րազմելով բնութեան խստութիւնների և բարբարոս ձեռքերի  
 դէմ, այդ վանքը կանգնած է որպէս մի հսկայական յիշատա-  
 կարան կրօնասէր Հայի նախկին ճարտարապետութեան:

Վանքը բաւական ամուր դիրք ունի . նա կառուցւած է մի բլուրի բարձրաւանդակի վրայ , որի գագաթը արհեստական բանւածքով աւելի եւս բարձրանալով , նրա վրայ գրւած է վանքի հիմնարկութիւնը : Բլուրին երեք կողմից շրջապատուած է ահագին խորութեամբ մի ձոր , որի միջով հոսում է Տիգրիսի վերին ճիւղերից մէկը , որ սովորաբար կոչւում է «Վանքի դետ» : Բլուրի չորրորդ կողմը միանում է մի լեռնային թեւքի հետ , որի վրայ դրած է մի Հայոց գիւղ , որը վանքի սեփականութիւնը լինելով , կոչւում է «Վանքի գիւղ» . նա հարիւր քայլ հաղիւ հեռու կը լինի վանքից :

Վանքը պատած է պարիսպներով և աշտարակներով . նա ունի իր մէջ , բացի հոյակապ տաճարից , շատ խուցեր միաբանութեան համար և շատ ուրիշ ծածկոցներ վանքային տընտեսութեան , մշակների և անասունների համար : Երբ Զալալէղդինի արշաւանքի ձայնը հասաւ այս կողմերը , վանքի օթեւանները լիքն էին Աղբակայ բնակիչներով , իսկ նրանց թանկագին հարստութիւնները պահւած էին տաճարի գաղտնի պահարաններում : Եւ «Վանքի գիւղում» հաւաքել էին նրանց անասունները :

«Վանքի գետը» որ հոսում էր ձորի միջով , իր եզերքում թողնում է բաւական ընդարձակ և հարթ տարածութիւն , որ պատած է խոտով և ներկայացնում է մի կանաչագարդ հովիտ , որ գարնան սկզբում վաււում է դեղնագոյն ծաղիկներով : Այս մարգագետինների վրայ արածում էին վանքին պատկանող ձիաների երամակները :

Մի առաւօտ , սարսափելով նկատեցին որ յիշեալ հովիտի վրայ , գետի ափերի մօտ , կազմւած էին բազմաթիւ վրաններ : Քրդերի խաչնարածները իրաւունք չունէին վանքի մօտ , նրա կալւածների վրայ զետեղել իրանց չադրները . ուրեմն դրանք լինելու էին այն ինքնակոչ հիւրերը , որոնց սուկալի երկիւղով սպասում էին վանականները : Ամէնքը մեծ տագնապի մէջ ընկան : Ամէն կողմից ոչխարներ , կովեր և երկրագործական անասուններ սկսեցին քշել դէպի գիւղը :



Տագնապը աւելի մեծացաւ, երբ մի հովիւ լուր բերեց վահահօրը, թէ Ջալալէդդինը բազմաթիւ Քրդերով իջեւանել է վանքի մարդերի վրայ:

Վանահայր Եղիազար վարդապետը մի վիթխարի մարդ էր: Թէև նրա ականջները ծանր էին լսում, բայց անդադար գործ ունենալով Քրդերի հետ, որպէս ասում են, նա «կէս Քուրդ» էր դարձել, այսինքն աներկիւղ այրական սիրտ էր ստացել: Երբ լսեց հովիւի բերած լուրը, նա ամէնեւին չզգաց այն յուսահատական երկիւղը, որ տիրում է թուլասիրտ մարդերին՝ վտանգի բուռներում: Վանահայրը նոյն միջոցում նրատած էր իր փոքրիկ խուցի մէջ և նրա մօտ գտնւում էր մի Քուրդի իշխան՝ բաւական համակրական դէմքով: Վերջինը Օմար աղան էր: Երկուսն էլ դուրս գնացին, երբ լսեցին հովիւի խօսքերը: Նրանք դիմեցին դէպի վանքի արեւելեան կողմը, որտեղից երեւում էր շէյխի բանակը: Թէ՛ վանահայրը և թէ՛ քուրդ աղնուականը, դիտակները ուղղելով դէպի բանակը, մի քանի բուռէ շարունակ նայում էին:

— Նա է,— ասաց Օմար աղան վրդովւած ձայնով. ծերունի աւազակը բաւական բազմութիւն է հաւաքել իր շուրջը:

— Ի՞նչ պէտք է արած, հարցրեց վանահայրը ոչ սակաւ խռովութեամբ:

— Ուրիշ հնար չկայ, պատասխանեց Քուրդը այժմ աւելի սառն կերպով.— դուք պատուիրեցէք ժողովրդին հաւաքել վանքի պարիսպների մէջ, դռները փակել տէք. վանքը բաւական ամուր է պաշտպանելու համար:

— Ես էլ այսպէս եմ մտածում, պատասխանեց վարդապետը.— ես վանքի պահարաններում բաւական հրացաններ և վառօդ ունեւմ թաքցրած. զգուշութեան համար վաղուց պահում էի ինձ մօտ. հիմա հանել կրտամ. պէտք է բաժանել նրանց, որոնք նետելու շնորհք ունեն. ես ճանաչում եմ շատերին մերիհներից որ այդ գործին ընդունակ են:

— Իմ մարդիկներն էլ շուտով կըզան, ասաց Քուրդը.

— Ժամանակ կորցնել պէտք չէ . ինչ որ անելու էք , մի՛ ուշացնէք :

Վանահայրը հեռացաւ հարկաւորած պատրաստութիւնները կարգադրելու : Բայց Օմար աղան դեռ կանգնած էր առաջւայ տեղում և դիտակը ձեռին՝ նայում էր : Քրդերի մէջ շատ աղանդներ կան . այդ մարդը պատկանում էր մի աղանդի , որ հակառակ էր շէյխի դաւանութեան : Աղանդների տարբերութիւնը նոյն ազդեցութիւնն ունի Քրդերի վրայ , նոյն խտրութիւններն է ձգում նրանց մէջ , որպէս ցեղական տարբերութիւնները , մանաւանդ երբ յարաբերութիւնները կլտրուած են լինում թշնամական հանգամանքներով : Օմար աղայի ցեղը այսպիսի պատճառներով բաժանւած էր այն ցեղերից , որ հաւաքւել էին շէյխի շուրջը :

Բայց վանահօր դիտաւորութիւնը սաստիկ արգելքների հանդիպեցաւ ժողովրդի կողմից . ոչ ոք չցանկացաւ համաձայնուել նրա հետ :— «Մեզ ամէնիս կը կոտորեն , ասում էին նրանք , — ո՛ւմ վրայ ենք ձեռք բարձրացնում . Քրդի մի մտղին դիպչել անկարելի է . մեզ կենդանի կ'այրեն , մեր որդիքը , մեր կանայքը կը կոտորեն : Մենք նրանց չենք լնդդիմանայ , թո՛ղ գան , ինչ որ ուզում են թող տանեն , միայն մեզ և մեր որդիներին խնայեն» . . .

— Կրգան , ձեր բոլոր ունեցածը կը տանեն և ձեզ ու ձեր որդիներին չեն խնայի . . . ասում էր վարդապետը արաստուքը աչքերում :— Ինձ ականջ դրէ՛ք , մեր սուրբ վանքը կը պահպանէ մեզ , մեր յոյսը թող նրա վրայ դնենք . . . Մեր մէջ շատ տղամարդեր կան . . . Օմար աղան էլ մեզ հետ կը լինի . . .

Բայց ոչ ոք չէր ուզում լսել նրան :

— «Անկարելի բան է , գոռում էր ամբոխը — և թէ դու ուզում ես մեզ փրկել , վեր առ քեզ հետ , տէրտէրներին և տանուտէրներին , գնա՛ շէյխի մօտ , նրա ոտները համբուրի՛ր , աղաչի՛ր , պաղատի՛ր , ասա՛ ինչ որ ուզում է կը տանք , միայն թէ մեզ կենդանի թողնէ . . .

Քաջասիրտ վարդապետը շատ խօսեց, երկար յորդորում էր և խրախուսում էր, բայց թուլասիրտ և ստրկացած ամբոխը չընդունեց նրա խորհուրդը: Վերջը նա ստիպւած եղաւ առնել իր հետ մի քանի ծերունիներ և քահանաներ ու դիմել չէյխի մօտ:

Այն ժամանակ Օմար աղան մօտեցաւ նրան և ասաց այս խօսքերը.

— Ես գիտէի, որ այսպէս կը լինէր... բայց դու գուր ես գնում. քեզ կը բռնեն, կը պահեն և գուցէ կը սպանեն...

— Պիտի գնամ, ճար չունեմ, թող սպանեն... ասաց վշտացած վարդապետը: — Ժողովուրդը ինձ հանգիստ չի թողնում...

— Ինձ այսուհետեւ աւելորդ է այստեղ մնալ... ասաց քիւրա աղնւականը:

— Ես էլ խորհուրդ չէի տալ մնալու համար, պատասխանեց վանահայրը. — գնացէ՛ք. Տէր ընդ ձեզ. միայն ընդունեցէ՛ք կատարել իմ վերջին խնդիրքը. առէ՛ք այդ բանալին. նոյն պահարանի մէջ, ուր թաքցրել եմ ձեր կայքը, այնտեղ երկու արկղներում պահւած են վանքի սրբութիւնները. տարէ՛ք ձեզ հետ, թող աւաղակների ձեռքը չընկնեն. դուք միշտ այնքան հաւատ էք ունեցել դէպի մեր վանքը, որ ոչ մի քրիստոնեայ չի ունեցել:

— Կը տանեմ, միամիտ կացէ՛ք, պատասխանեց Քուրդը: — Բայց դուք վեր առէ՛ք ձեզ հետ իմ մարդերից մէկը. նա հեռւից կը հետևի ձեզ, և եթէ ձեզ բռնելու կամ պահելու լինեն, նա ինձ իմաց կը տայ:

Վանահայրը համբուրւեցաւ իր բարեկամի հետ և սկսեց դիմել Շէյխի բանակը: Նա ամէնեւ ինչոյս չունէր թէ կը վերադառնայ այնտեղից և միւս անգամ կը տեսնի իր բարեկամին:

Նոյն միջոցում հասան Օմարի մարդիկը, բերելով իրենց հետ երեսունի չափ աւելորդ ձիաներ, և նա բարձել տուեց իրան պատկանող իրեղէնները, որ քանի օր առաջ ապահո-



վութեան համար բերել էր այնտեղ . նա չմոռացաւ իր հետ վեր առնել և այլ երկու արկղներ , որոնց մասին խնդրել էր վանահայրը . դռնապանը բացեց պարիսպի գաղտնի դռները եւ ազնիւ Քուրդը խիստ տխուր սրտով համբուրեց տաճարի սուրբ սեղանը և հեռացաւ վանքից :

Վանահայր Եղիազար վարդապետը գնաց Շէյխի բանակը և այլեւս չվերադարձաւ այնտեղից . . .

ՐԱՖՖԻ

**ՐԱՖՖԻ** (ՅԱԿՈՒ ՄԵԼԻՔ-ՅԱԿՈՒԲԵԱՆ (1835-1898). — Հայ վիպագրութեան հայրը եւ ամէնամեծ վարպետը : Րաֆֆին ծնած է Սալմաստի Փայաջուկ գիւղը (Պարսկաստան), իր նախնական ուսումը առած է Բիֆլիսի գիմնազիոնին մէջ, ատեն մը հետեւած առեւտուրի . այցելած է Թըրքահայաստանի արեւելեան գաւառները՝ Մուշ եւ Վան, ապա Կովկասի մէջ սկսած է պարապիլ ուսուցչութեամբ, որու ընթացքին ծանօթացած է Գրիգոր Արծրունիի եւ անոր ընձեռած գրական օժանդակութեան շնորհիւ՝ կրցած է յայտնագործել իր տաղանդը :



Րաֆֆիի ներշնչման եւ վիպագրութեան աղբիւրը՝ պատմական Հայաստանն է եւ Տաճկահայ իրական կեանքը . իր վէպերը ուրեմն կարելի է բաժնել երկու գլխաւոր մասի, համաձայն իրենց նիւթերուն, — անոնք՝ որոնց նիւթը առնուած է հայկական հին պատմութենէն, ինչպէս Դաւիթ Բեգը եւ Սաւուաչը, եւ անոնք . որոնց նիւթը կը շօշափէ Տաճկահայաստանի ժամանակակից կեանքը՝ Զաքարիոյի, Խենթը եւ Կայծերը : Այս վէպերուն մէջ Րաֆֆին թէ՛ պատմաբան է, թէ՛ հրապարակագիր, թէ՛ վիպող եւ կը յիշեցնէ անգլիական գրականութեան Ուոլթըր-Սքոթը՝ անցեալը ոգեկոչելու իր անըման երեւակայութեամբ, եւ ուսմանթիք գրողները՝ իր վիպելու եղանակովն ու ներկայացուցած յեղափոխական դէմքերուն անիրական տի-



պերովը: Կարելի է վճռականապէս ըսել թէ հայ նոր գրականութեան մէջ վիպագրութիւնը իր ճշմարիտ բարձրութեան եւ կատարելութեան առաջին հասցնողն եղաւ Բաֆֆին:

Բաֆֆին կը ներկայացնէ ամբողջութիւնն իսկ իր ժամանակակից հայ մտաւորականութեան տենչերուն, եւ իր վէպերուն մէջ հակադրելով՝ Տաճկահայաստանի ստրկական լուծը անկախութեան ձգտող երիտասարդութեան իտէալներուն, կը քարոզէ ըմբոստութիւն եւ հրաւէր կը կարգայ դէպի Յեղափոխութիւնը: Այս պատճառով իր վէպերուն բացասական հերոսները առնուած են իրական կեանքէն, մինչ իր գրական հերոսները մտացածին են, այսինքն անոնք՝ որ գոյութիւն չունին տակաւին, բայց հարկ է որ ստեղծուին: Իր մոգիչ լեզուն այնպիսի հզօր ներգործութիւն առաջ բերաւ ժամանակակից նորահաս սերունդին վրայ, որ կարելի է ըսել թէ հայ Յեղափոխութեան գործիչներէն մեծագոյն մասը կը գործէր Բաֆֆիի իտէալական տիպարներուն ազդեցութեան տակ, անոնց ներշնչումով եւ անոնց հաւատքով: Իրժուար չէ ուրեմն հասկնալ թէ ի՞նչու Բաֆֆին տիրացած է այնպիսի ժողովրդականութեան մը, որուն նմանին ոչ մէկ հայ հեղինակ արժանացած է մինչեւ այսօր:

Արուեստի տեսակէտով Բաֆֆիի գործերը աւհասարակ թոյլ են, կը պարունակեն խոշոր գիծեր, առանց մանրամասնութիւններու, ծանրաբեռնուած են յաճախ պատմագրական աւելորդաբանութիւններով, լի են կրկնութիւններով, եւ հասկնալի են այս թերութիւնները՝ քանի որ վիպագրողին մեծագոյն նպատակն է եղած՝ թելադրել, կրթել եւ մղել: Բայց երբ տեղ տեղ ուսմանթիք վիպագրողին ընդմէջէն կ'երեւի իրապաշտ գրագէտը, պատկերները կը դառնան կենդանի, գունազեղ եւ զմայլելի:

Վերը յիշուած գործերէն զատ, Բաֆֆին գրած է Խաչագողի Յիշատակարանը, Ոսկի Ախաղաղը, Խաւսայի Մեղիխուքիւններ եւ ուրիշ շարք մը գործեր. թարգմանած է Ղարաբաղի Ասդրազէսը եւ Կայենի Կսակը:

Բաֆֆին մեռած եւ թաղուած է Թիֆլիս:



## Չ Կ Ն Ո Ր Ս Ն Ե Ր Ը

—Այսօր դարձեալ անօթի ենք, զաւակներս, կ'ըսէր հայրը.  
Այսօր դարձեալ անօթի ենք, սակայն վաղը, կը յուսամ որ  
Ջուրերը քիչ մը աւելի կը հանդարտին... Ի՞նչ ընենք, բա՛ղդ...:

—Ո՛չ, ջուրերը որքան որ ալ եռուն ըլլան, հա՛յր, ես կ'երթամ,  
կ'ըսէր որդին, վաղը քիչ մը դուն հոս նստէ մայրիկիս հետ,  
Խեղճը ահա, քանի օր է հիւրնդած է նորէն...:

—Կ'ըլլա՛յ:

Քիչ մըն ալ դուն դատէ, տղա՛ս, քիչ մըն ալ դուն աշխատէ,  
Հայրդ, մայրդ, երկու խեղճուկ, ա՛լ մեռնելո՛ւ ենք քով քովի...»  
Որդին դժգոհ նայուած քով մը խորհրդածեց, —իսկ մե՞նք, իսկ ե՞ս,  
Ի՞նչպէս պիտի կրնամ ապրիլ երբ մեռնիք դուք, հա՛յր...:

Մինչ դուրսը

Որոտագոտ բանակի մը պէս կատաղի, հազարաւոր  
Ալիքները ջղայնահար՝ դեռ ամուսնքը կը ծեծէին:  
—Վաղը, տղա՛ս, մութն ու յուսուն, ուռկանները կը պատրաստես,  
Բայց չմոռնա՛ս, քիչ մը պարան աւելի առ, քիչ մըն ալ սունկ...:  
Առագաստը երբոր բանաս, ալ մի՛ նայիր, թող որ խաղայ,  
Մանուկի պէս է մակուկը, հոգ մի՛ ըներ երբոր խաղայ,  
Իր հաճոյքին դուն մի՛ դպիր, բայց ամէն պահ արթուն կեցիր,  
Որովհետեւ, ծով ըսածիդ հաւտայ չգա՛ր, կնկա՛յ պէս է...:

Դուրսը, երկար կոչերովը, հովը՝ կամշոտ  
Կնոջ մը խուլ ժխորը կը տարտղնէր...

— Վաղը տղան միմակ պիտի երթայ ծուկի, այնպէ՞ս է:

— Ինքք երթալ ուզեց, «Դուն հոս կեցիր» կ'ըսէ ինձի:

— Հապա՛

Եթէ անոր գալէն առաջ ես մեռնի՛մ...

Այս վերջին խօսքով



Կինը մնաց մտասեւեռ: Հայր ու որդի շեղ ակնարկով  
Անոր տժգոյն շրթունքներուն ողորմագին սարսուռները  
Տեսնելով լուռ կը մնային: Իրենց գլխուն վրայ թռչտող  
Պատուհասը կը պատմէին անոնք այսպէս իրարու:  
Մինչդեռ դուրսը, փոթորիկը, ա՛լ աւելի կատաղասաստ  
Բաբախումով մը յորդագեռ՝ շուրջը սարսուռ տարածելով կը գոռար...

— Խեղճ պզտիկը վաղը ի՞նչպէս պիտի երթայ:

Արեւածագին, ան միայնակ, հին տաշտի մը  
Կտոր փրթուն, յարմարցուած փուտ լարերուն  
Հետ զբաղած կը նաւարկէր: Ծովը իր նոյն զայրոյթովը  
Շառաչ շառաչ կը հարուածէր ու կը հզմէր սեւ կողերը  
Հին, գոգաւոր տաշտուկին...: Ո՛վ անօթութիւն եւ ո՛վ յոյս:  
Ծովեզերքը, քարին վրայ, հերմակ տեսիլ մը կարծես թէ  
Չեռքովը ցոյց տալով ծովուն բացը, կ'ըսէր.  
«Ճակատագիրդ ալիքներուն մէջ է. քայլէ»:  
Կը քայլէ խեղճ, կտորած տաշտը, կը քայլէ...  
«Ճակատագիրդ քայլե՛լն է... դեռ ցամաքի՛ն կը նայիս. օ՛ն...»  
Կը քայլէ, բայց ի՞նչպէս պիտի կրնայ տոկալ  
Հին ու հիւանդ տաշտուկ մը՝ զայրախառով այդ ջուրերուն...  
Հորիզոնին վրայ՝ ծովը, կինն ալ տանը մէջ հոգեվարք... կը մահանան.  
Իսկ ծովեզրը, երեք տկա՛ր գիշերներու սպասումի բեռան տակ,  
Աղետահար, դատարկ տաշտի մը դէմ հայրը  
Բռունցքովը հեռուն կէտ մը ցուցնելով կը ծիծաղի.  
Դէմքին վրայ մթին, խեղդուկ ու ողբագին տրտունջներ:

ԹԷՎՖԻԳ ՖԻՔՐԷԹ

**ԹԷՎՖԻԳ ՖԻՔՐԷԹ.**— Մէկը թուրք գրականութեան նորա-  
րագոյն դէմքերէն, որոնք վերջին քսան տարուան ընթացքին հնչե-  
ցուցին թուրք քնարերգութիւնը:

Թէվֆիգ Ֆիքրէթ քնարերգակ մըն է, բայց իր քնարին վրայ  
խոր զգացումներ չեն որ կը թրթռան: Հովին ու ծովին, դիշերուան  
եւ լուսնակին երգիչն է ան, որ իրերուն մինչեւ յատակը չիջներ, այլ  
կը հպի ու կ'անցնի: Կը թափառի ծովուն եզերքը, կը մտնէ ձկնորսի  
հիւզակներէն ներս, կը սաւառնի ամպերուն գոգը եւ կը թեւապարէ  
դէպի լուսինը:



Թէվֆիգ Ֆիքրէթ թուրք գրականութեան մեծագոյն սէմպոլիսթ բանաստեղծն է: Բունապետական շրջանին՝ երբ գրաքննութիւնը ամէն ձգտում արգելած էր եւ թուրք գրապետները նոյնպէս հարկադրուած էին իրենց ամբողջ ուժը սպառել ձեւի զարգացման համար, Թէվֆիգ Ֆիքրէթ կը յօրինէր գեղեցիկ քերթուածներ, որոնց խորքէն կը յայտնուէին իր համոզումները, դաւանանքն ու յոյսերը:

Իր լեզուն պարզ է, ոճը սիրուն եւ նոր. արուեստը թուրք տաղաչափութեան օրէնքներէն ձերբազատ: Ինք գլխաւորներէն է եղած այն սակաւթիւ բանաստեղծներուն, որոնք թուրք ոտանաւորի պայմանադրական սեղմումներէն ձանձրացած, եւրոպական տաղաչափութեան արուեստը մշակեցին եւ այդ կերպով նոր շարժում մը ստեղծեցին իրենց շուրջ:

Թէվֆիգ Ֆիքրէթ, նորերուն եւ մանաւանդ նորագոյններուն մէջ, ունեցած է բաւական հետեւորդներ, որոնք սակայն ինկան չափազանցութեան մէջ՝ դառնալով մերթ մեղկ, մերթ թոյլ ու անարուեստ: Իր բանաստեղծական գլխաւոր գործն է Խորսակուած Քևար — Ռիւպայր Շիֆքարէ—, որ կը պարունակէ բազմաթիւ քնարերգական քերթուածներ, բաւական սիրուն ու ներդաշնակ: Թէվֆիգ Ֆիքրէթ բազմաթիւ տարիներէ ի վեր Բօպըրթ Գօլէճի թուրք գրականութեան ուսուցիչն է:



## Մ Ե Ր Կ Դ Ե Ր Ի Ի Շ Ը

Ինչպէս չները, այնպէս և մուրացիկները թեհրանում, ունին իրենց քաղաքամասը, որից այն կողմն անցնելու և մուրալու իրաւունք չունին մի առժամանակ: Այդ բաժանումը մի քանի ամսից յետոյ, ըստ երեւոյթին, փոփոխութեան է ենթարկւում: Մի քաղաքամասի մուրացիկը, որ ամիսներից ի վեր անդադար անցորդներին ձանձրացնում էր այդտեղ, յանկարծ չի երեւում այլևս, և մի քանի օրից յետոյ պատահ-



մամբ հանդիպում էի նրան բոլորովին ուրիշ թաղում :

Սակայն այն մերկ դէրուիչը , որին միշտ տեսնում էի Լալազարի փողոցի ծայրին , ձիաքարչի վերջանալու կէտի մօտ պաղած — աւելի երկար էր նստել այդտեղ :

Նստել է ահա պատի տակ , աւսարիական դեպքանատան կողքին , եթէ փողոցը քիչ չոր է : Եթէ շատ ցեխ է լինում , բարձրանում է Լալազարի այդու պատից դուրս ցլած պատւանդանի վրայ և նրա երկու ոտնաչափ լայնութիւնում կուչէ՞ դալիս՝ մնում :

Փաթաթւած է մյակ մի վերարկուի մէջ : Ուրիշ հագուստ չունի : Առանց չափազանցութեան՝ այդ վերարկուն բաղկացած է հարիւր տեսակ ամէն ձևի , ամէն գոյնի եւ ամէն մեծութեան կարկատաններից , որոնք միմեանց են կցած հաստ թելերով : Դէրուիչական վերարկու է և իրենք դէրուիչներն են շինում « Հղարմիյիս » են կոչում : Երբեմն , երբ տեղաւորւելու համար բաց է անում վերարկուն , երեւում են նրա բոլորովին մերկ անդամները սեւացած ու կասկած՝ ցրտից ու կեղտից :

Գլխին ունի թասաձև թաղեայ սևացած գլխարկ , որի տակից դէպի նեղ ճակատն ու քունքերն են իջնում այեխառն ու միմեանց կպած մազեր :

Դէմքը փոքր է ու կարճ , աչքերը խոր եւ երազող : Կարծես նայում է , բայց չի տեսնում : Սիտ դժգոյն է , ձեռքերն ու ոտները նիհարացել , ոսկոր են կարել , մումիայի նման եղել . իսկ միրուքն ու բեխերը միմեանց խառնուելով՝ անհետացրել են չրթունքները իրենց մէջ :

Միշտ պղպղած է , տեղիցը չի շարժւում : Եւ որովհետև ցուրտ է , ունի ծնկների վրայ , երկու ձեռքով բռնած , հողէ մի փոքրիկ կրակարան , որի մէջ , մօտակայ հացթուխից առած փոքրիկ կրակը նա աշխատում է միշտ անշէջ պահել , տաքութիւն ունենալու համար :

Երբ մի օր էլ անցնում էի կողքից , կանգ առի քիչ և ուզեցի տեսնել թէ ի՞նչ էր անում . այդ այլանդակ դէրուիչը :

Չէր աղօթում . ոչ էլ երգում էր : Անցորդներ շատ կային , բայց ողորմութիւն իսկ չէր հայցում : Զգւած ու խամբած



հայեացքով նայում էր ամէնքին: Անցորդները յաճախ նրան էին նետում մի-մի սեւ փող: Դրամը ընկնում էր կողքին կամ գոգր: Ձէր շարժւում. թողնում էր որ հաւաքւի:

Երբ մօտեցայ, զգայ հայեացքս, ծանրութեամբ գլուխը բարձրացրեց: Հագիւ նշմարւող հեգնականի նման մը ժպիտ սահեց դէմքի վրայ, աչքերի անկիւններում:

— Դու դէրու՞չ ես, — հարցրի:

Գլխովը բացասական նշան արաւ և վերարկուն լայն բացաւ: Կիովին մերկ էր: Կրակարանը աշխատեց դնել ոտների արանքում: Կկզկ էր: Յաջողւեց վերջապէս, տեղաւորեց, ծածկեց ներսում կրակարանը քղանցքներով և կիսախուփ աչքերը նորից ինձ վրայ սեւեռեց:

— Աֆիօն ես ծխում կարծեմ, ասացի ես: Գլխովն այս անգամ դրական նշան արաւ: Եւ զննում էր ինձ. ոչինչ չէր խնդրում:

Մի քանի րոպէ լուռ նայելուց յետոյ, յանկարծ ասաց խուլ, անդնդային ձայնով.

— Ձեր երկրումն էլ աֆիօն ծխո՞ւմ են:

— Ո՛չ... դա թոյն է: Մեզնում մարդիկ չեն սիրում իրենք իրենց թունաւորել:

Ժպտեց և ասաց.

— Ուրեմն ձեր երկրում մարդիկ ցաւեր չունի՞ն:

— Ինչո՞ւ չէ: Բայց մի՞թէ հարկաւոր է աֆիօն ծխել, երբ մարդ ցաւեր ունի:

— Դուն սկի ծխել՞ ես աֆիօն:

— Օ՛, ո՛չ...

— Ուրեմն չես կարող հասկանալ: Բայց դուցէ լսել, ես, որ ծխողը փոխադրւում է երազի մի երջանիկ աշխարհ, ուր ցնդում են նրա բոլոր վիշտերը, ուր նա ազատ է թշուառութիւնից, տանջանքից... Այդ չգիտե՞ս դու...

— Այդպիսով ուրեմն դուք ձեզ մխիթարում էք:

— Ոչ թէ մխիթարում ենք, այլ աշխատում ենք մուսանալ... Մուսանալ... Քի՞չ բան կայ մուսանալու...

Այդ միջոցին մի աղմուկ բարձրացաւ փողոցում: Հեռ-

ւից նախ երեւացին դէպ ի մեզ արշաւող վեց պարսիկ ձիաւորներ՝ երկու կարգ շարւած. նրանց կտուրից սլանում էր չորս ձի լծած, մի բաց կառք, որի մէջ փքւած բազմել էր մի պարսիկ ազնւական, հաղած թիրմայի թանկագին շալից շքեղ մուշտակ:

Մի խումբ աղքատներ ցնցոտիներով, կանայք կիսամերկ, մանուկներ՝ ցեխաթաթախ, սրսրիալով, ատամները կափկափելով, վազում էին կառքի երկու կողմից՝ ձեռքերը պարզած, աղաչաւոր ձայներով.

— Աղա՛ ջան, մի դրամ...

— Տէ՛ր իշխան, մի սու փող...

Ժողովուրդը ճանապարհ էր տւել: Կառքը սլանում էր ցնցոտիներով տանաւոր մուրացիկներ, ճղփայնելով ցեխն ու ջուրը, վազում էին և ազնւականը փքւած՝ դիտում էր անհոգութեամբ այդ բոլորը:

Մերկ դէրուիչը ինձ նայեց, յետոյ ազնւականին և ասաց.

— Պէտք չէ՞ մոռնալ այդ... Կարելի՞ է առանց աֆիօնի...

Մի քիչ լուեց, յետոյ յանկարծ աչքերը փայլեցին:

— Մեր նահանգապետն է, շարունակեց նա, երկիրը հարիւր-հազարով գնել է, որ երկու հարիւր հազար շահի... Եւ անա թէ ո՛րպէս է շահում... Հարկաւոր չէ՞ ծխել: Ինձ երբևէն թւում է որ այս բոլորը երազ է և որ երբ աֆիօն կամ ծխում, այն ժամանակ միայն մանում կամ իրական կեանքի մէջ, այն ժամանակ միայն զարթնում կամ քնից... Օխ, ծխի՛ր աֆիօն, տէ՛ր, և պիտի տեսնես թէ ի՛նչպէս կը մոռանաս այդ բոլորը, այդ ցաւերն ու անիրաւութիւնը... Փողոցի մէջ, պատերի տակ, ցեխի անկողնի վրայ է որ պառկում ենք մենք, իսկ մեզանով հարստացողը թիրմայի շալի մուշտակով է գրօնում... Յետոյ մի դանդաղ ակնարկ էլ ձգեց քիչ-քիչ ևս մնացող մուրացիկների վրայ, սլացող կառքին և երբ կծկւում էր վերարկւում ասաց.

— Կեանքը, երջանկութիւնը միմիայն քնելու մէջն է. իսկ այս բոլորը երազ է, վատ մղձաւանջ... Անցի՛ր, տէ՛ր, մի խանգարիր քնելու...



Ու ամփոփուած, գլուխը խոնարհ՝ անշարժացաւ:

Երբ վերադառնում էի, դէրուշը միշտ նոյն տեղն էր, միշտ անշարժ, գլուխը կրծքի վրայ, ինքնամոռացութեան մէջ...

ՎՐԹԱՆԷՍ ՓԱՓԱՋԵԱՆ

**ՎՐԹԱՆԷՍ ՓԱՓԱՋԵԱՆ.**— Ծնունդով թրքահայ, գրականութեամբ կը պատկանի Կովկասի, ուր ապրած եւ արտադրած է գրեթէ իր բոլոր գործերը: Այս իսկ տեսակէտով, կը միացնէ իր վրայ հայկական երկու գրական հոսանքներուն գլխաւոր ազդեցութիւնը եւ իր լեզուին մէջ՝ երկու բարբառներուն ներքին շաղապատումը: Ահա թէ ինչո՞ւ համար Փափազեանի ոճը աւելի նուրբ է եւ լեզուն աւելի ձկուն ու կատարեալ:

Փափազեան օժտուած է վիպողի տաղանդով: Իր նորավէպերն ու պատմուածքները՝ կենդանի, սեղմ եւ գրաւիչ, հայ գրականութեան նոյն սեռի ամէնայաջող էջերը կը կաղմեն:

Փափազեանի գրականութիւնը եղած է այլազան եւ ընդարձակ, — ատեն մը արտայայտութիւնը՝ Տաճկահայերու մռայլ կեանքին, ըմբոստութեան շունչով. ատեն մը հայ կեանքի պատկերացումը՝ առանց քանսանսի եւ անկախ, ժամանակ մը ազդեցութեանը տակ սեւապոյիզմին եւ ատեն մըն ալ Նիցչէի հետեւողականութեամբ: Փափազեան եղած է աւելի որոնող, քան որոշ ուղղութեան մը մէջ յարատեւող:

Իր գլխաւոր գործերն են՝ Կոյրեր, Հանի Քեզ, Ասի, Ենիչերի, Սանքո, Հողի Աշխատաւորներ, Արեւգիւղ, Ասպետը, եւն.: Աշխատակցած է կովկասահայ լրագրութեան, ինչպէս եւ գրած է 85-86 թուականներուն Պոլսոյ Մանիսին եւ Իզմիրի Արեւելեան Մամուլին մէջ մէկ քանի սիրուն վիպակներ:





## Կ Ո Վ Կ Ա Ս

Ահա՛ Կովկասն իմ ոտքի տակ: Ես մէն-մենակ վերեւում  
Սպիտակափառ լեռան կրրծքին լուռ կանգնած եմ ու նայում,  
Ինձ պէս քարձր, արծիւն հեռւում դէպի եթեր վերացած՝  
Օդում հանգիստ սաւառնում է, թեւերն հրգօր տարածած.  
Եւ տեսնում եմ ես այստեղից հեղեղատներ փրրփրալից  
Ի՛նչպէս ծնւում, ի՛նչպէս ձիւնի հիւսեր փլչում սարերից:

Այստեղ ահա շար-շար ամպեր մեղմ սահում են իմ դիմաց,  
Գոռ ջրվէժներ նոցա հեղքում ու սրլանում դէպի ցած,  
Եւ աղմուկով այնտեղ դիպչում լերկ ժայռերի կոյտերին,  
Իսկ քիչ ներքեւ—չոր մացառ է, մամուռ՝ կրպած քարերին.  
Քիչ էլ այն կողմ ես տեսնում եմ կանաչ, թաւուտ անտառներ,  
Ուր վխտում են եղջերուներ եւ ճրուղղում թռչուններ:

Այնտեղ արդէն ե՛ւ մարդիկը բոյն են դրրած սարերում,  
Ե՛ւ խաշները մեղմ մայում են դալարախիտ վայրերում.  
Ե՛ւ խաշնարածը իջնում է ցած,— դէպի ուրախ հովիտներ,  
Դէպի խաղուն Արագվայի կանաչագեղ, զով ափեր,  
Ե՛ւ չրքաւոր ասպատակն է դարան մտնում կիրճի մէջ՝  
Ուր թերեքի կատաղալից, զուարճ խաղին չրկայ վերջ:

Խաղում է նա ու մռնչում, որպէս վայրագ մի կորիւն,  
Որ վանդակից որս է տեսել, աչքը կոխել սեւ արիւն.  
Ե՛ւ խփւում է նա ափերին, ե՛ւ ապարդիւն կռիւ տալիս,  
Ե՛ւ իւր քաղցած ալիքներով ժայռեր լիզում ու լալիս...  
Սակայն ի զո՛ւր: Նորա համար չրկայ ուրախ ո՛չ մի օր,  
Նորան ճնշում ու խեղդում են լուռ քարափներն ահաւոր:

## ԵՕԹԸ ՔՆԱՑՈՂՆԵՐՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԵԱՆՔԸ

Եփեսոսցի եօթը քրիստոնեաներ էին որ կը կոչուէին Մաքսիմիանոս, Մաղքոս, Մարկիանոս, Դիոնեսիոս, Յովհաննէս, Սրապիոն և Կոստանդին: Դեկիոս կայսեր օրով ողջ ողջ պատը հիւսուած, Կելիոն լերան մէկ քարայրին մէջ, հոն քնացած էին Տէրօջը կամքովը: Արդ, Թէոդորոսի թագաւորութեան կրեսուներորդ տարին, որմնադիրներ, քարերու պէտք ունենալով, քարայրը բացեր էին, և եօթը քնացողները արթընցեր էին՝ կարծելով թէ մէկ գիշեր մը միայն քնացած էին: Բայց իրենց խմացուցին թէ կրկու հարիւր տարի քնացեր էին և թէ, իրենց քուն եղած միջոցին, քրիստոնէական կրօնքը ամբողջ պետութեան մէջ չաստուածներուն պաշտամունքին տեղը բռնած էր:

Թափօր մը եկաւ իրենց որջին մէջէն սունկ եօթը քնացողներն ու տանիլ Եփեսոս:

Երկու դար քնացած ըլլալով, հանգչած գոյն մը ունէին և վարդի պէս թարմ դէմք: Եւ իրենց միտքը երիտասարդութեան ծագիկն անեղծ էր պահած:

Մինչ կ'իջնէին լեռան կածաններէն, կը ջանային երևակայել ինչ որ քիչ յետոյ պիտի տեսնէին: Եկեղեցին թողած էին դեռ փոքր ու հալածուած, բայց ամէնէն սուրբ առաքինութիւններով շողշողուն: Քրիստոնեաները, այն ատեն, արդարութեամբ, մաքրութեամբ կ'ապրէին: Հիմա որ եկեղեցին յաղթական էր և կայսրը ինքն իսկ հաւատացեալներուն պարագլուխն էր եղած, անշուշտ այդ առաքինութիւնները ամէնուն վրայ կը փայլին:

Եւ զմայրիկ տեսարան մը ըլլալու էր այդ:

Կ'երեւակայէին անսահման ընկերութիւն մը՝ իրարու օգնող և իրենց ունեցածը իրարու հետ բաժնող եղբայրներու,

ժուժկալ, հեզ ու մաքուր, և անմեղ զուարթութեամբ մը ոգևորուած . ցրուած՝ անանկներու մէջ, ծառերու գեղեցիկ հովանիին տակ, ու առտուընէ մինչեւ իրիկուն աղօթքներ երգելով . այլեւս ո՛չ բանակ, ո՛չ դատարան, ո՛չ ոստիկանութիւն . մէկ խօսքով, Աստուծոյ թագաւորութեան մէկ երկրաւոր ուրուագիծը :

Եփեսոս մտան գլխաւոր դռնէն, որուն վերեւ կը կանգնէր խաչ մը, անարգիչ կախաղա՛ն՝ որ պատուոյ նշան մը դարձած էր այժմ : Հրճուեցան՝ զանգակներու հնչիւնն իմանալով . գոհութեամբ տեսան եկեղեցիակու շատութիւնն ու մեծութիւնը, խանութներն ուր խաչելութիւններ ու սրբազան պատկերներ կը ծախէին, հանրային շէնքերը նուիրագործող բարեպաշտ վերաառութիւնները, և ամէն ինչ որ նոր կրօնքին ապահով տիրապետումը կը հաստատէր . ա՛յն հաւատքին՝ որուն համար երկու դար առաջ չարչարուած էին :

Բայց, հանդէսին փայլէն կուրացած, կեցցէներէն խլացած, նախ չնկատեցին որ, այն պահուն ուր պալատներուն պատշգամներէն ճոխազգեստ կիներ ծաղիկներ կը նետէին իրենց, ոստիկաններ բրտաբար մէկդի կը հրէին ամբոխը աղքատիկ մարդոց՝ որոնք կօթը պարզամիտ յաղթականներուն հագուստին դպչիլ կ'ուզէին :

Զիրենք տարին Եփեսոսի ամէնաշքեղ եկեղեցին, ոսկեղօծ թիկնաթոռներու վրայ տեղաւորեցին, խորանին առջեւ : Եպիսկոպոսը, ոսկիով ու ակունքներով պսպղուն, իրենց սրբութիւնը պանծացուց : Բացատրեց թէ Աստուծոյ կամքին մէջ իրենք գործիքներ կ'ըլլան մեծ խորհուրդի մը : Որովհետեւ, ճիշտ այդ օրերը մեռելներու յարութիւնն ուրացող հերետիկոսներ երեւան ելած ըլլալով՝ Աստուած ուզած էր զանոնք խայտառակել՝ Եօթը մեռելներն ողջնցնելով :

Եկեղեցին համակ պճնուած էր մոզայիքներով, մարմարներով ու թանկագին մետաղներով : Իրենց երկդարեան կոշտ հագուստին տակ, զոր իրենց վրայ թողած էին թէ՛ յարգանքի զգացումէ մը դրդուած և թէ՛ նկարչական ճաշակէն, կօթը



Քնացողները պաշարուած էին գեղապաճոյճ կիներով ու բարձր պաշտօնատարներով, որոնք հետաքրքրութեամբ կը դիտէին իրենց վարդազոյն և անկնճիռ դէմքը: Բայց գեղարդներով ղինուած եկեղեցական պերճազգեստ սպասաւորներ կողմնակի մասերուն խորը կը մղէին հասարակ ժողովուրդը, և եօթը քնացողները կը յիշէին գետնափորներու մերկութիւնը և առաջին եղբայրական հաւասարութիւնը:

Օրուան նորութիւնը եղան: Պատրիկ մը իրենց ի պատիւ մեծ ճաշ մը տուաւ: Այնքան զարմացած էին իրենց պատահածէն և կամ այնքան խօսելու վարժութիւնը կորսնցուցած էին, որ դժուարութեամբ մտքերնին կը հասկցնէին: Իրենց հնօրեայ հնչումը ծիծաղ կը պատճառէր: Իրենց կը հարցնէին թէ ի՞նչ զգացած էին այդ երկու դար տեւող քունի միջոցին, կը պատասխանէին թէ ոչինչ զգացած էին: Այն ատեն, զիրենք կը հարցափորձէին Գեկիտս կայսեր ժամանակի բարքերուն, սովորութիւններուն ու դէպքերուն մասին, բայց որովհետեւ պարզ մարդիկ էին ու երբեք նուրբ դիտող չէին եղած, աննշան ու հակիրճ պատասխաններ կու տային: Վերջ ի վերջոյ զիրենք հանգիստ կը ձգէին և ուրիշ բանի վրայ կը խօսէին:

Զարմացա՛ն տեսնելով որ հոն գանձուող կիները իրենց զգեստներուն և նոյն իսկ իրենց խօսքերուն մէջ այնքան քիչ կը հետեւէին քրիստոնէական համեատութեան: Անոնցմէ մէկը մարտիրոսներէն մէկուն, ամէնէն երիտասարդին, կը նայէր այնպիսի ձեւով մը, որ ան ստիպուեցաւ աչքերը վար առնել: Գինիներն զմայլելի էին, խորտիկներն առատ ու նրբահամ, ու կոչնականներուն երակներուն մէջ արիւնին ու միսին թաքուն գորութիւններն յուզելու ընոյթն ունեցող. խօսքերն սկսան աւելի ազատ ձեւ մը առնել: Եօթը քնացողները իմացան, միւս հրաւիրեալներուն խօսակցութենէն, թէ երկու սեռէ շատ մը հաւատացեալներ անընդհատ կը մեղանչեն բարի վարքի կանոնին դէմ, թէ այդ մկրտուած մարդոցմէն շատերը ազահ, խարդախ, ստախօս, անարդար, անպատկառ էին, թէ կային դեռ ո՛չ միայն հարուստներ և աղքատներ, այլ կի-

ղեքիչներ և կեղեքեալներ, և թէ անհամար քրիստոնեաներ կ'ապրէին ճիշտ այնպէս ինչպէս ապրած էին չաստուածներու երկրպագուները: Ու տեսան նաև թէ միշտ կային սարուկներ, և թէ նոյն իսկ բաւական խիստ կերպով կը վարուէին անոնց հետ: Վանքին մէջ ուր կը բնակէին, նկատեցին, այն վիճարանութիւններէն որոնց ներկայ կը գտնուէին, թէ երկու հարիւր տարիէ ի վեր եկեղեցիին վարդապետութիւնը ծանրաբեռնուած էր նրբութիւններով զորս առաջին հաւատացեալները անգիտացած էին և որոնցմէ եօթը քնացողները ոչինչ կը հասկնային: Իրենց կը դիմէին՝ իբր իրաւարար, բայց իրենք պարկեշտօրէն կը հրաժարէին այդ դերը կատարելէ, ինչ որ իրենց վարկը կը նուազեցնէր: Բայց չէին կ'նար չտեսնել թէ այդ հմուտ վարդապետները, որ դաւանանքին վրայ այդքան բարակը կը փնտռէին, աւետարանական առաքինութեանց ամէնէն տարրականն ի դժուր դ'նել կը մտնային և պարարտօրէն կ'ապրէին հասոյթովն այն հողերուն զորս կայսրը իրենց տուած էր, այսինքն աղքատներու աշխատութեամբ:

Երբ եօթը քնացողները փողոցին մէջ ժուռ կուգային, ամէն քայլի՝ կը գայթակղէին: Խառնակենցաղ կիներ հոն իրենց դիւային ծուղակները կը լարէին անցորդներուն: Ամէնուրեք՝ թաարոններ ուր ամօթխածութիւնը կը վիրաւորուէր: Օր մը, ներկայացումներ սարքողը ուղեց զիրենք իր խումբին մէջ մտցնել: Իրենց կ'առաջարկէր հասարակութեան պատմել իրենց պատմութիւնը և իրենց «տպաւորութիւնները» և յետոյ «գետնափորներու տեսարաններէն» մէկ քանին մնջկատակել, եւ ապշեցաւ՝ տեսնելով իրենց ցամախալից մերժումը:

Գացին այցելել չքաւոր թաղերը, հոն է որ, փնտռելով փնտռելով, իրենց նման հոգի ունեցող քանի մը մարդ գտան, բայց չէին բմբուներ որ տեղութեան մը մէջ, ուր բոլոր քաղքենիները և նոյն ինքն վեհապետը Աւետարանին հետեւող կը հուշակեն զիրենք, այդպիսի տառապեալներ գտնուէին և անոնց օգնող չրլար:

«Ինչ կ'ընէ կայսրը», կ'ըսէին մտքերնուն, և այն միջո-

ցին ուր այս հարցումը կ'ընէին ինքնին, իմացան որ Թէոդորոս, քրիստոնէաջարդ կայսրը, եօթը հազար հոգի մորթել տուած էր Թեոտոնիկէի ձիախաղարանին մէջ :

Իրենց սիրտը, ամէն օր, դառնութեամբ կը լեցուէր : Աւելի դժբաղդ էին այժմ քան այն միջոցին, երբ հեթանոսներէն հալածուած ու պաշարուած, գերեզմաններուն մէջ կը պահուըտէին : Կարծողներ եղած էին թէ իրենք հրաշքներ պիտի գործեն, և որովհետեւ Աստուած իրենց թոյլ չէր տուած հրաշք գործել, իրենց վայելած պատիւը ատուլ քիչ մը ինկած էր : Եւ ըստ որում, միւսնայն ատեն, կը յանդգնէին հանրային ու սակական բարքերը այգանել, վերջ ի վերջոյ զիրենք նեղացուցիչ գտան :

Հիմա, — աւելի գէշ, — կը սկսէին մոռնալ զիրենք : Հետաքրքրութիւնը զոր իրենց պարագան արթնցուցած էր, շուտով բթացած էր : Եւ իրենք կը տառապէին ատկից, որքան ալ խոնարհ ըլլային սրտով :

Իրենքզիրենք պանդուխտ կը զգային, նոյն խակ վանքի մէջ, ուր իրենց սրբութիւնը հնախօսական ու բրածոյ կը թուէր : Կը ձանձրանային հոն, և սակայն ա՛լ քաջութիւնը չունէին անկէց ելլելու :

Օր մը երբ փորձառու ծեր քահանայի մը կը պատմէին իրենց յոսախարութիւնը և քրիստոնեայ պետութեան ու հեթանոս պետութեան միջեւ շատ քիչ տարբերութիւն գտած ըլլալնուն ցաւը, և երբ ինքնին կը հարցնէին անձկութեամբ՝ «Քրիստոս արդեօք ի զո՞ւր եկաւ աշխարհ», ծերունին պատասխանեց իրենց .

— Ռ՛չ, ո՛չ : Կարծքերնիդ մի՛ ծեծէք : Նորէն բաւական փոփոխութիւն կայ, ապահով եղէք : Ինչ ալ ըսէք, նորէն աւելի առաքինութիւն կայ և աւելի հեղութիւն, խղճի նրբացում մը կայ, բարոյական զգայնութեան ճոխացում մը : Աշխարհիս վրայ կան շատ սուրբ հոգիներ, բայցրովին նոր հերոսութեամբ մը, և որուն նմանը առաջ գոյութիւն չունէր . . . : Գալով միւսներուն . . . արդէն բան մըն է ճշմարտութիւնը



ճանչնալն ու ընդունիլը, նայն իսկ եթէ մարդ իր բոլոր վարմունքը անոր չի համաձայնեցնէր: Շատ ունինք բարի մահեր կամ գէթ վայելուչ մահեր...: Նոր հաւատքը ահագին բարիք կը գործէ բարբարոսներուն մէջ. կը մեղմացնէ անոնց դատաստութիւնը, զանոնք կը ճկէ գթութեան, զանոնք կը զսպէ ուրիշ կեանքի մը յոյսովը կամ վախովը...: Կը տրանջաք թէ Աւետարանին պատուէրները կէս առ կէս չեն գործադրուիր: Բայց պէտք է նախ խոստովանիլ թէ մեծ պետութեան մը ո՛չ վաճառականութիւնը, ո՛չ արդիւնաբերութիւնը, ո՛չ արուեստը, ո՛չ շահերն ու ինքնապաշտպանութիւնը կարող են միշտ համաձայնիլ անոնց հետ:

«Զանոնք ամբողջապէս կիրարկելի կը գտնեմ միմիայն արհեստաւորներու, երկրագործներու կամ թափառիկ հովիւներու փոքրիկ խումբերու մէջ: Աւելին պիտի ըսեմ. ինքնազոհութեան, հաւասարութեան, համայնական աղքատութեան պէս անիմաստ պատուէրներու վրայ հիմնուած ընկերութիւն մը այն ատեն միայն կրնայ ապրիլ՝ երբ բոլոր անդամները հետեւին այդ պատուէրներուն, ուրիշ խօսքով՝ եթէ բոլորն ալ սուրբեր ըլլան. բան մը՝ որուն վրայ յոյս դնել անխելքութիւն պիտի ըլլար...: Եկեղեցին ստիպուեցաւ իր կանոններուն խստութիւնը մեղմացնել. և աղէկ ըրաւ...: Որովհետեւ եթէ օր մը պատահէր որ այդ պատուէրներէն ոմանք կեղծաւորապէս դաւանուէին և առաքինութենէ ու հաւատքէ զուրկ մարդոցմէ կիրարկուէին, ուրիշ բան պիտի չարտադրէին բայց եթէ անկարգութիւն և անիշխանութիւն...: Այդ ծայրագոյն պատուէրները կ'առաջադրեն իտէպ մը որուն պէտք է ձգտիլ սոսկական կեանքին մէջ. եթէ հաստատութեանց մէջ մրտցուէին անոնք, ապարդիւն պիտի ըլլային կամ վտանգաւոր...»

«Որովհետեւ վերջապէս...»

Բայց եթէր քնացողները, զարմանքէ և սոսկումէ՝ երևանին ծածկեր էին: Տէր Հայրը յարեց՝ անվրդով.

«— Գերյարգելի՛ եղբայրներ, եթէ ամէն բան այսպէս գէշ պիտի տեսնէիք, ինչո՞ւ արթնցաք»:

Եօթը քնայողները դեռ ժամանակ մը շարունակեցին իրենց ցաւագին ու գայթակղած կեանքը :

Աւանդութիւն մը (իրաւ է թէ կասկածելի) կը հաղորդէ որ անոնց երկուքը գէշ վերջացան :

Ամէնէն երիտասարդը, Մազքոս, ցանցին մէջ ինկաւ ապականեալ կնոջ մը : Ուրիշ մը, Մաքսիմիանոս, յաւակնեցաւ իր մաքրութեան մէջ վերահաստատել եղծուած կրօնքը : Քառուղիներու մէջ կը քարոզէր, քահանաներուն ու հարուստներուն դէմ գոռալով, ու բանտարկուելէն ուրիշ արդիւնք ձեռք չձգեց :

Միւս հինգ քնայողներուն ցաւը, անձկութիւնն ու ձանձրոյթը ասով բազմապատկուեցան : Հասկցան թէ երբեք պիտի չկարենային վարժուիլ այն բաներուն զորս կը տեսնէին . և իրիկուն մը, աղաչեցին Աստուծոյ որ զիրենք նորէն քնացնէ մինչեւ վերջին դատաստանը :

Հետեւեալ օրը, մեռած գանուեցան իրենց խուցին մէջ : Իրենց դէմքը «վարդերու թարմութիւնը» պահած էր :

ԺԻՒԼ ԼԸՍԷՅՐ

## Վ Ե Ր Զ Ա Լ Ո Ւ Ս Ա Յ Ի Ն

Իրիկուն մը՝ աշնան տըխուր,  
Գիւղէն հեռու՝ բլրին վըրայ :  
Ամպերուն տակ ոսկեփրփուր  
Անուշ հով մը կը սարսըռայ,  
Մինչ կը դեղնի արեւն հատած,  
—Մութ գիշերին՝ լոյս-ուահփրայ :  
Դաշտերուն մէջ համատարած  
Հողագործներ դեռ կը հերկեն  
Լայն փորն երկրին կակուղ ու թաց :



Աղօտ ցուքեր զորշ երկինքէն  
Կը ցանցնուին դաշտերուն մէջ  
Ու մշուշը կը ծակծկեն:

Եւ կեանքի մը պէս վաղաշէջ,  
Կը մարմնրի արեւն հատած,  
Լոյս-հոգիովն իր կենսատենջ:

Ու շրղարշներ, ցուրտ սարսրուուն,  
Կը հագցրնեն սեւեր երկրին,  
Սուգի սեւերն ստուերներուն:

Մինչ պատկերներն ալ կը մարին  
Երազներու պէս մշուշոտ,  
Այս ոսկեզօծ ոգեւարին  
Հուսկ ցուքերուն տակ նրւաղկոտ:

Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

**ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ.** — Արտաշէս Յարուժիւնեան իր դրական սկզբնաւորութիւնն ըրաւ որպէս բանաստեղծ, ապա յայտնուեցաւ նաեւ որպէս տաղանդաւոր արձակագիր եւ մէկը թրքահայերու առաջնակարգ գեղագէտ-քննադատներէն: Իր արձակը նուրբ է եւ կատարեալ, ոճը վերլուծող եւ պատկերալից. իր բանաստեղծութիւնները վգրեթէ ամբողջովին քնարերգական: Տիւտուած են թարմ զգացումներով, ոմանք ալ հովուերգական շունչով՝ զեղուն դաշտային գեղեցկութեանց յափշտակութեամբ:

Հրատարակած է Լիւնաձ Քնար, Երկուեք եւ Նոր Քնար բանաստեղծական հատորները:





## Ո Ղ Ջ ՈՅ Ն Ձ Ե Ջ

Ողջունո՛ւմ եմ ձեզ, ո՛վ ժիր գութանի չարքաշ հերոսներ,  
 Որ թէ՛ որոտի, թէ՛ տապ արեւի ճահանջների տակ  
 Ուժով խլում էք ազահ, կոշտ հողից

Ձեր հացն ու վաստակ:

Ողջունո՛ւմ եմ ձեզ, ո՛վ աշխատանքի անխոնջ հսկաներ,  
 Որ զիշեր ցերեկ հազիւ շնչելով լեռնահանքերում,  
 Քլունգ էք մխում խաւար, անիծեալ

Հողի շերտերում:

Յանկարծ չարագուժ ջրի վշտոցը լսեց մօտիկից.  
 Վայրկեան մ'եւ ահա կամարը անյաղթ տապալեց ուժգին,  
 Զոհի դիակն է լողում անդրնդում,

Ողբում անմեկին:

Բայց եւ ճեղքւած է ու բացւած կուրծքը յամառ, լերկ սարի  
 Եւ շոգեկաթսան վազում է միջով յաղթական անցքով,  
 Եւ արշալուսին դիմաւորում է

Ողջագուրանքով:

Ողջո՛յն ձեզ, ողջո՛յն, հոյակապ խելքի, մտքի ասպետներ,  
 Թշառ ամբոխի դուք նահատակներ, ուղեցոյց աստղեր,  
 Որ չարիքի դէմ միշտ կոչ էք անում

Անվերջ մարտ մղել:

Ողջո՛յն եւ նոցա, որոնք տոգորւած ազնիւ վաստակով,  
 Հալւում են, մաշւում հանգիստ չիմացող անյայտութեան մէջ.  
 Ձե՛զ, «ոգով արի» ցրւած եղբայրներ, սրտով գողդոջուն

Օրհնանք եւ ողջոյն:

\*  
\* \*

Ողջունո՛ւմ եմ ձեզ, երկաթի՛ կրծքեր,  
Որ մինչեւ դագաղ անընդհատ գործում  
Ու չէք էլ յոգնում խուլ ժխորի մէջ—

Արհեստանոցում:

Ողջո՛յն եւ նոցա, որոնք գտնում են  
Միակ սփուփանք աշխատելու մէջ.

Ցանքի, քրչունգի, մտքի զինւորներ,

Ձեզ ողջո՛յն անվերջ:

Տեսնում եմ ահա վաստակաւորներ,

Նիրհում են յոգնած, քնով կախարդւած՝

Անթիւ նաւերի ցրւած կմախքներ,

Ալիքից ջարդւած.

Բոպիկ մանուկներ, ծերուկ ճակատներ,

Սովալլուկներ ու հաշմանդամներ,

Թոքախտաւորներ, զունատ վշտահար

Քայլում են յամառ:

Նրանց ձայները լսում եմ հեռւից,

Նրանց ճանաչում ծանօթ բառերից.

Նրանց աղմուկից—որ մօտ է սրտիս—

Հրճում է հոգիս:

Ո՛վ աշխատանքի անպա՛րտ հերոսներ,

Ես ձե՛զ եմ երգում, ձեր սերտ միութեամբ

Ընդ մի՛շտ եղէք մեծ, կուէցէ՛ք քաջ-քաջ—

Կեանքը է շատ կարճ:

Օրհնւած վաստակի մայր-անդաստանին,

Կանգուն թէ ընկած նահատակներին

Կը փայլեն անմահ աստղեր, արեգակ,

Որպէս Աստուծոյ աչալուրջ հայեացք:

## Ն Ո Ր Զ Գ Ե Ս Տ Ը

—Չըսեմ ըսի ամա, չպիտի ըլլայ, գոչեց էլպիս հանրմը իր ամուսինին: Ինծի նայէ, Յակոբճան աղա, սա ըսէ մեր Սեդրակին, էրկու օրէ ի վեր դպրոց գացած չունի: Տունէն դուրս էլլալուդ պէս, նայիս մեր եասիկեարը թրքս թրքս տուն կուգայ, մէյեք դպրոց կ'երթամ տեղի մեզի կը խարէ կոր եղեր, վերի փողոցէն քեզի կեօզեթլեմիտ կ'ընէ եղեր: Այլ անկէ ետքը կրնաս նէ դպրոց խրկէ, պոռալուն կանչուրաւտկուն սօնը չիգար: Այլ չեմ դիմանար կոր, դպրոց գնա ըսելով պերանա մազ բուսաւ: Դո՛ւն խօսք հասկցուր սա հայլագին:

—Հո՛ւ էկու նայիմ, ծօ՛, ըսաւ Յակոբճան աղան՝ տասր-տասներկու տարեկան աղու մը, որ բաղմոցին մէկ անկիւնը կծկրտեր նստեր էր սարսափահար:

Տղան տեղէն չերերաց:

—Մօ՛, հոս չիգամս, շա՛ն դաւակ, պոռաց այս անգամ Յակոբճան աղան այնչափ ուժով, որ աղան ընդոտտ տեղէն ցատկեց և, իր նիհար ու բարակ սրունքներուն վրայ գինովի պէս տատանելով, եկաւ հօրմէն երկու երեք քայլ անդին կանգնեցաւ:

—Չէ՛, չէ՛, հոս մօտս էկուր, ըսաւ Յակոբճան աղան անոր թեւէն լռնելով և առջին քաշելով: Սա ըսէ նայիմ ինչո՛ւ դպրոց չեա էրթար կոր:

Տղան չպատասխանեց, գլուխը կախած և աչուրները գետին խոնարհեցուցած:

—Չըսե՛ս, ծօ՛: Աս մենք քեզի համար պօժ տեղը վիրայ փարա՞ պիտի տանք դպրոցին: Ամէն շարթու կլօխ՝ տուն ծառքովդ վարժապետիդ կը տանիս կոր քառսուն փարան: Քառսուն փարա վաստկած ունի՞ս եօւրիդ մէջը: Հայտե՛, ըսէ նայինք, ինչո՛ւ դպրոց չեա երթար կոր: Չի պիտի ըսես, հա՞:

Եւ իր երկաթագործի լայն ու կոշտ ձեռքը այնպիսի ապասակ մը իջեցուց տղուն երեսին, որ Սեդրակ բարձրածայն լացի ու հեծեծանքի մէջտեղ, գետինը գլորեցաւ:



Էլպիս հանրմը տեղէն ցատկեց , զաւկին քովը գնաց , և իր գիրկն առնելով զայն՝ բազմոցին անկիւնը տարաւ , թաշկինակով մը անոր արցունքները սրբելով . յետոյ էրկանը դառնալով .

— Էյ , դուն ալ փեք խայիկի էս , մա՛րդ : Վուր տեսիք իսե կոյթիւր տեսիք ա՛ :

— Քա սեոյլեսին , ուիե՞ սեոյլեսիօր :

Էլպիս հանրմը գիրկն առած էր զաւակը , և զայն փայփայելով .

— Էյ , դուն ալ չըսե՞ս , ի՞նչ կ'ըլլայ , քեզի չպիտի ուտենք ա՛ :

— Ի՞նչ զուրցեմ , մա՛յրիկ , ըսաւ վերջապէս Սեդրակ արցունքներուն մէջէն . առ պատուած լաթերովս ինտո՞ր դպրոց էրթամ . ամէնքը վրաս կը խնտան կոր . անցած օր վարժապետը ըսաւ որ վրադ գլուխդ քիչ մը շտկել չի տա՞ս : Ամէնքը նոր նոր հագուեր են , ես մինակ ասանկ ծըւիկ ծըւիկ լաթերով դպրոց կ'երթամ կոր :

Յակոբճան աղան , որ ա՛լ հանդարտած էր , կնոջը նայեցաւ յուսահատութեամբ : Զաւկին խօսքերը սրտին դպեր էին : Ինքն ալ , իր աղքատութեանը մէջ , հպարտ եղած էր միշտ , և իր զաւկին այդ զգացումը հաճոյ կու գար իրեն : Կնոջը ձեռքէն սուս Սեդրակը , և քովը նստեցնելով .

— Մի՛ լար , տղաս , մի՛ լար , դուն վաղը դպրոց գնա նորէն . ես քեզի աղուոր ձեռք մը լաթ կ'առնեմ , աղուոր աղուոր կը հագնիս :

Եւ սիրտն այնչափ լեցած էր , որ աչուրները թրջեցան :

×

Ըսելը դիւրին էր , բայց գործադրելն ի՞նչքան դժուար : Գործերուն վիճակը յայտնի է , և երկաթագործը , արին քրտինք մտնելով , հաղիւ կրնար իր ընտանիքին օրական ապրուստը հոգալ : Ո՛ւր տեղէն պիտի կրնար քով քովի բերել չորս հինգ մէճիտ , զաւկին ձեռք մը զգեստ առնելու համար : Եւ սակայն պէտք էր . առնելէն զատ ուրիշ ճար չկար :

Երիկ կնիկ գլուխ գլխի տուխն , և որոշեցին հայթայթել այդ գումարը , Յակոբձան աղան քիչ մը աւելի աշխատելով և Էլպիս հանրամը քիչ մը աւելի խնայողութիւն ընելով : Պակասած մէկ երկու մէծիանս ալ երկաթագործը տեղէ մը փոխ պիտի առնէր , և ա՛յ պզտիկ Սեդրակը չպիտի ամհնար իր ընկերներուն և դասատուներուն քով :

×

Եւ իրիկուն մը , Յակոբձան աղան տուն կը դառնար խնդումներես , թեւին տակ մեծկակ կապոց մը , զոր բոլոր հոգւովը կը սեղմէր : Երբոր տանը դրանը առջեւ հասաւ , կը մտածէր վայրկեան մը յետոյ տեղի ունենայիք տեսարանին վրայ : Սեդրակ դուռը պիտի բանար , կապոցը ձեռքէն առնել պիտի ուզէր . բայց ինք չպիտի տար . ի՛նչ ըլլալը պիտի հարցունէր , բայց ինք պիտի պատասխանէր թէ իրեն կեօրե բան չէ : Յետոյ սենեակը պիտի երթային , և հոն , անտարբերութեամբ , տղուն պիտի ըսէր որ առնէ բանայ կապոցը , եւ այն ասուն . . .

Դուռը զարկաւ տիրաբար : Կը սպասէր որ , ամէն իրիկուան պէս , Սեդրակը անմիջապէս դուռը բանար և իր ձեռքին հայէր : Քիչ մը ատեն անցաւ , և որովհետեւ բացող չի կար , նորէն զարկաւ , այս անգամ ուժգնակի . . . Է՛հ , եթէ ներսէն գիտնային որ հետը ի՛նչ կը բերէր : Վերջապէս Էլպիս հանրամը դուռը բացաւ : Երկաթագործը անմիջապէս նշմարեց որ կոտրածութիւն մը կար դէմքին վրայ , երեսները կախ , շարժուածքը դանդաղ : Էլպիս հանրամ մեքենաբար ամուսնին ձեռքէն առնել ուզեց կապոցը , մինչ երկաթագործը , սիրան արդէն անձկութեամբ պաշարուած , հարցուց մտատանջութեամբ .

— Ո՞ւր է Սեդրակը , տե՞ղ խրկեր էս :

— Չէ՛ , ներսն է , պատասխանեց կինը կցկտուր կերպով . ցորեկին քիչ մը քիթը կախ եկաւ դպրոցէն . հիմակ կրակներուն մէջն է . պան մը չէ , տող մ'եղար , քեսկին անվագիլ ըլ-

շարու է : Երկաթագործը , կապոցը ձեռքը , հապճեպով սենեակը մտաւ : Բազմոցին վրայ , Սեղրակ պառկեր էր , վերմակ մը վրան : Դռանը բացուածքէն , արթնցաւ , յողնած աչքերը հօրը վրայ պարտոցուց և նորէն փակեց :

— Օղորձ , ի՞նչ ունիս , հիւսնող էս , մէկ տեղդ կը ցաւի կոր :

Եւ որովհետեւ տղան չէր պաաասխաներ .

- - Հա՛յտէ , էլիր նստէ՛ նայիմ , իմին քա՛ջ դաւակս , իմին ապա՛ն դաւակս : Նայէ՛ , քեզի ի՞նչ բերի :

Եւ արտորանքով կապոցը քակելով , վերարկուի մը , բաճկոնակի մը և տաբատի մը ծայրերէն բռնած՝ օդին մէջ երերցուց ուրախութեամբ :

Սեղրակ աչուրները բացած էր արդէն : Իր մարած նայուածքին մէջ անսահման հրճուանքի նշոյլ մը ցոլաց , այլ քիչ յետոյ աչուրները նորէն փակեց :

Այն ատեն երկաթագործը հազուսանները բազմոցին մէկ անկիւնը նետեց , աղուն մօտեցաւ , ձեռքն անոր ճակտին վրայ դրաւ , և մարմնին հրատապ տաքութենէն վախցած , դարձաւ իր կնոջը , որ սենեակէն ներս մտած էր .

— Է՛լպիս , ըսաւ , ասիկա անանկ նեկազիլի պան չէ : Անապա էրթամ եզաւին կանչե՞մ :

— Կեցիր նայինք մինչեւ վազն աւտու ինտո՛ր կ'ըլլայ , անկէ ետքը պան մը կ'ընենք :

×

Հետեւեալ առտու , պզտիկը աւելի ծանր վիճակի մէջ էր : Դեղագործն և իրմէ յետոյ բժիշկը եկան հաստատել թէ աղան կարմրուկէ բռնուած էր : Համաճարակին ատենն էր այս :

Երկաթագործին և կնոջն համար ամէն բան իրենց դաւկին վրայ կեդրոնացած էր : Խնդճ պզտիկը կը սնաւապէր , կոկորդէն մանաւանդ , և յամառաբար կը մերժէր դեղ առնելը : Հայրն ու մայրը ուրիշ միջոց չէին գտած , այլ անոր նոր հա-



գուստները դիմացը կ'երերցնէին, հազար գգուական խօսքերով, կամ իր վերմակին վրայ կը փռէին՝ որ անոնց հետ խաղայ, և Սեդրակ՝ իր նողկանքը զսպելով՝ բերանը կը բանար դեղի դգալին:

Հիւանդութիւնը մահացու էր սակայն: Ութ օր չանցած խեղճ պզտիկը կը մեռնէր:

×

Անշուք յուղարկաւորութիւն մը ունեցաւ: Երկաթագործը տղու մը պէս կու լար իր մէկ հատիկ զաւկին դադադին ետեւէն:

Երբոր տուն դարձաւ և բոլոր բարեկամները ճամբեց, կնոջը քովն երաւ, որ վերի սենեակը քաշուած էր միայնակ: Իրիկունն եղած էր արդէն: Ուղղակի կնոջը քով գնաց, որ բաղմոցին անկիւնը նստած էր լռիկ և անձայն: Էլպիս հանրմը ծունգերուն վրայ տարածած էր հէգ Սեդրակին նոր հագուստները, և զանոնք կը դիտէր թաց աչուրներով:

Երկաթագործն ինքն ալ ձայն չհանեց: Կնոջը քովը նստաւ, հագուստներուն մէկ մասն իր ծունգին վրայ քաշեց և ինքն ալ սկսաւ լռիկ արտասուել:

Իրենց անհուն վշտին մէջ, բան մը չէին գտներ իրարու ըսելու: Վերջապէս էլպիս հանրմը, հեկեկանքի մը մէջ պոռթկալով.

— Ա՛խ, ըսաւ, խրամեք չեղա՛ւ որ հագնի:

Եւ երկաթագործը, կուրծքն հեւալով իր զօրաւոր հեծկրլտութիւն տակ.

— Ա՛խ, ըսաւ, թող մէյ մը հագնէր, անկէ ետքը մեռնէր, պաշխա պան չէի ուզեր: Մուրասսըզ մեռաւ խեղճ զաւակ:

ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ

ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ.— Թրքահայ իրապաշտ գրականութեան առաջին վարպետներէն եւ ռահվիրաներէն մէկն է եղած Բաշա-





լեան՝ Զօհրասի հետ, եւ ինչ որ կը մնայ  
իրմէ՝ կը կրէ ձեւի, դիտողութեան եւ  
նկարագրութեան անթերի գեղեցկու-  
թիւն: Իր նորավէպերը, իբրեւ արտա-  
յայտութիւնը իրական ու կենդանի  
կեանքին, կը կազմեն թրքահայ գրակա-  
նութեան . ամէնէն յաջող եւ ամէնէն  
արժէքաւոր էջերը:

1888-1890 թուականը հրատարակած  
է Ա. Արփիարեանի հետ Մասիս գրական  
կիսամսեայ հանդէսը, ապա Հայրենիք օրա-  
թերթը՝ մինչեւ 1896, ուրկէ ետք անցած  
է արտասահման, գրած է Նոր կեանք եւ  
Մարտ թերթերուն մէջ: Այժմ արդէն  
լքած է գրականութիւնը եւ հեռացած  
գրական ասպարէզէն:

## Մ Ա Ն Կ Ո Ւ Թ Ե Ա Ն Օ Ր Ե Ր

Մանկութեան օրեր, երազի նրման  
Անցաք զնացիք, ա՛լ չէք դառնալու.  
Ո՛հ դուք երջանիկ, ո՛հ անհոգ օրեր,  
Ընդունակ միայն ուրախացնելու:

Չեզանից յետոյ եկաւ գիտութիւն  
Իւր ծանր հայեացքով աշխարհի վերայ,  
Ամէն բան ընկաւ մտածութեան տակ,  
Բոպէ չըմնաց ազատ կամ ունայն:

Ապոլլոն տուեց ինձ իւր քրնարը,  
Որպէս փարատիչ տրտում ցաւերիս.  
Գիտակցութիւնը յաջորդեց սորան,  
Ազգի վիճակը ծանրացաւ սրտիս...



Աւանդ, այդ քնարն իմ ձեռքում հնչեց  
 Նոյնպէս լալագին, նոյնպէս վշտահար,  
 Ինչպէս իմ սիրտն էր, իմ զգացմունքը.  
 Ուրախացուցիչ չը գտայ մի լար:

Ես այն ժամանակ միայն զգացի,  
 Որ այդ ցաւերից ազատուելու չեմ,  
 Որչափ իմ ազգս կը մնայ ստրուկ  
 Օտարների ձեռք, անխօս, տխրադէմ:

Մանկութեան օրեր, ինչո՞ւ այդպէս շուն  
 Թռաք զնացիք անդարձ, յաւիտեան.  
 Ես այն ժամանակ անհոգ ու ազատ  
 Կարծում էի ինձ աշխարհի իշխան:

Գերութեան շղթան ինձ զգալի չէր,  
 Եւ ոչ բռնութեան անգութ ճանկերը.  
 Ձեզանից յետոյ ծանրացան նոքա,  
 Ռհ, անիծում եմ ես այս օրերը:

Լո՛ւռ կաց դու, քնա՛ր, ալ մի՛ հնչիր ինձ,  
 Ապոլլոն, յե՛տ առ դարձեալ դու նորան,  
 Տո՛ւր մի այլ մարդու, որ ընդունակ է  
 Զոհ բերել կեանքը սիրած աղջկան:

Ես պիտի դուրս գամ դէպի հրապարակ  
 Առանց քնարի, ազատ խօսքերով.  
 Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ  
 Խաւարի ընդդէմ պատերազմելով:

Ներկայ օրերում ալ ի՛նչ սեւ քնար,  
 Սո՛ւր է հարկաւոր կտրնի ձեռքին.  
 Արի՛ւն ու կրա՛կ թշնամու վերայ.  
 Այս պիտի լինի խորհուրդ մեր կեանքին:



Թո՛ղ պատգամախօսը հնացած Դելֆի  
Իւր եռոտանու վերայ փրփրի.  
Թո՛ղ միջին դարու գաղափարներով  
Ամբոխը խաբել եզնի, աշխատի:

Թո՛ղ նա թարգմանէ «գրպարտութիւնը»,  
Թո՛ղ մխիթարուի ծովի ափերում,  
Մենք ազատութեան ենք միայն թարգման,  
Միայն այս խօսքս ունինք բերանում:

«Ո՛վ Հայր, ո՛վ դու Հայր, որ երկնքումն ես,  
Խնայիր թշուառ մեր անտէր ազգին,  
Մի՛ տար զոհ գնալ թշնամիներին,  
Նա ալ չէ լսում Դելֆեան հարցուկին:

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

**ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ** (1829-1866). — Միքայէլ Նալբանդեան, կեղծ անունով Կոմս Էմմանուէլ, ծնած է նոր Նախշեւան, ինքզինքը կատարելագործած է ինքնաշխատութեամբ եւ քննութիւն տալով Բեդերսպուլի համալսարանին մէջ՝ ստացած է արեւելեան լեզուագիտութեան քանտիտայի աստիճան:



Նալբանդեան եղած է կովկասահայերու առաջին եւ ամենատաղանդաւոր հրապարակագիր-քննադատը, գրելով «Հիւսիսափայլ» թերթին մէջ, որ հիմնուած Ստեփան Նազարեանցի կողմէ, ահագին զարկ տուաւ կովկասահայ մտաւորական վերածնութեան եւ նոր աշխարհիկ լեզուի ձեւաւորման: Նալբանդեան կատարած է ճամբորդութիւններ եւրոպական գլխաւոր երկիրներու մէջ. այցելած է Պոլիս, դացած է մինչեւ Հնդկաստան՝ հայկական մեծագումար կտակներու գործով, եւ

մեծ կապեր ունեցած է նոյն թուականներու ռուս բարձրագոյն մտաւորականութեան եւ յեղափոխական շրջանակներու հետ: 1862ին ձերբակալուած է Նախիջեւանի մէջ եւ ուղարկուած Բեդերսպուլի եւ երեք տարի յետոյ՝ աքսորուած Սարաթով նահանգի Կամիշին քաղաքը,



ուր եւ մեռաւ՝ բանտային տառապանքներու տակ ճնշուած, հիւծ-  
ուած եւ խորտակուած: Իր մարմինը ապա փոխադրուեցաւ ծննդա-  
վայրը, ուր թաղուեցաւ՝ Ս. Խաչ վանքի գաւթին մէջ:

Միքայէլ Նալբանդեանի գրութիւնները կը բաժնուին երկու  
գլխաւոր մասերու, — հրապարակագրական-քննադատական, եւ բանաս-  
տեղծական: Իր ուժը՝ հրապարակագրութեան եւ քննադատութեան  
մէջ է, հզօր, մտրակող եւ արի: Դեռ այն թուականներուն իր արտա-  
յայտած գաղափարները եւ իր հրատարակած Երկրագործութիւնը որպէս  
ուղիղ ձանապարհ, մինչեւ այսօր ալ կը պահեն իրենց հիմնական զօ-  
րութիւնը եւ կ'ապացուցանեն թէ Նալբանդեան նախակարաստեան  
եղած է Հայոց մէջ ընկերվարական մտածողութեան:

Իր բանաստեղծութիւններէն մանաւանդ Ազատն Աստուածը՝ իր  
վճիտ եւ հրալից զգացումներով, պիտի մնայ հայ քնարերգութեան  
անմահ էջերէն մէկը. իրենն են դարձեալ՝ Մանկութեան Օրեր, Մեր  
Հայրենիք, Յուրսը Փշեց, Երագ եւն երգերը: Գրած է նաեւ Մեռելահար-  
ցոյց վէպը, որ կիսատ մնացած է, ինչպէս նաեւ Յիշատակարաններ եւ  
Երկու Տաղ:

## ՊՈՒՏ ՄԻ ԶՈՒՐ

(Մ Ա Ն Կ Ա Ն Մ Ը Պ Ա Տ Մ ՈՒ Թ Ի Ի Ն Ը)

— Մամա՛, կաղնծիւմ, պտի՛կ մի ջուր... .

Սաստիկ ձմեռ էր, փո՛ւք, փոթորի՛կ, փողոցները մինչև  
իրենց բերանը լեցուած էին ձիւնով, ու գեղացիները ատիպ-  
ուած էին տանիքներէն երթեւեկել, որովհետև դուռները վա-  
ղուց կորսուած էին ձիւնէ դէզերուն տակ:

Ս. Սարգիս շատ դայրացած էր այդ տարին. երկինքը  
կը հեւար, կը ֆշար ու գետինը մռայլ սարսափի մէջ վտան-  
գաւոր երեւոյթ մը առեր էր. ամառուան ծաղկալից դաշտերը,  
կապոյտ սարերն ու հովիտները — ուր հունձքի արշալոյսներուն  
սղօխները խաղալ կը սկսին թիթեռնիկի թեւերով — հիմա  
կ'ոռնային, մէկու մը ետեւէն կը հայհոյէին: Կարծես դուրսը  
ամէն բան իր տեղէն խախտիլ կ'ուզէր:

Սակայն ցորեկը գոնէ քիչ մը լոյս կար, թէև հիւանդոտ,  
թոքախտաւոր, բայց գէթ մարդ մարդու երես կը տեսնէր անով



ու արհաւիրքը այնքան գազանային կերպով չէր ծպտեր : Այն , այն ուրբաթի գիշերը որ Ս . Սարգիսի տօնական օրուան առաւ-  
 ւօտը պիտի լուսցնէր :

\*  
\* \*

— Մամա՛ , կաղնձիմ , պտի՛կ մի ջուր . . .

— Քչիկ մըն ալ համբերէ , ճա՛գուկս , շատը գնաց քիչը  
 մնաց , հիմա կը լուսնայ , հիմա՛ կը լուսնայ . . .

Ու չէր լուսնար , որովհետեւ ձմեռուան սարի գիշերը  
 լուսնայիք չունէր : Փոթորիկը կը փչէր ու գիւղը վերէն վարէն  
 ձիւնին մէջ ծածկուած՝ շունչ անգամ չէր առներ կէս գիշեր-  
 ուան այս պահուն . թոնիրները վաղուց պաղեր էին , ծղրիթ-  
 ները վաղուց թմրած՝ կը քնանային իրենք ալ , և ոչ իսկ մատ-  
 դաշ-մանկիկի անհանգիստ ճիչը կը լսուէր :

Մեծ-մայր ու թոռնիկ Ս . Սարգիսի հինգ օրուան ծոմն  
 էին պահեր : Այն օրէն որ պղտիկը որբուկ մնացած էր և այդ  
 դժբաղդ պառաւին վերջին հարազատը , ա՛յ աշխարհ ամփոփ-  
 ունցաւ երկուքին համար ալ երկու սրտերու մէջ , — թոռնիկը  
 փաթթուեցաւ մեծ-մօրը քղանցներուն իր բոլոր հոգիով , ու  
 պառաւը իր ծերութեան ամբողջ գորովը , քաղցրութեամբ ,  
 բարութեամբ շաղուած իր ամբողջ կարօտը կտայեց այդ ման-  
 կան հաճոյքներուն , խաղերուն ու դիւրափոփոխ քմայքին , կա-  
 մաւոր խաղալիքը դառնալով անոր կամքին :

Ա՛յ մարդ չկա՞ր տունը : Չէ՛ , ո՛վ պիտի ըլլար , քանի մը  
 հաւ ու հաւձագ , աքաղաղի ընտանիք մը , մէյ մըն ալ տանը  
 կատուն , ահա ամբողջ բնակչութիւնը այդ խնդճուկ հիւղակին ,  
 որ անասունէն մինչև շարժուն մարդը տեսակ մը իմացական  
 հասկացողութիւն սկսած էր գոյանալ , վառեկին ու պառաւին  
 մէջ ալ տեսակ մը գիտակցութիւն , ճանաչողութիւն : Կատուն  
 եթէ տունէն երկար յամեցում մը ունենար կամ դունչը ար-  
 գիլուած ամանի մը մօտեցնէր՝ թեթեւ սրտմտութիւն մը կ'ու-  
 նենար մեծ-մայրը և մէկ-երկու թթու խօսքեր կ'ուղղէր անոր  
 որ կարծես կը հասկնար այդ բառերուն մարդկային նշանակու-



Թիւնը , յանցանքին գիտակցութեամբը մեղաւորի համակերպութիւնը ցոյց տալով , կիսատ միաւիւն մը կու լար ու կ'երթար անկիւն մը կը սալարուէր կը քնանար : Մենաւորութեան մէջ քարն'րն ալ լեզու կ'եղին ու շուքդ անգամ կ'եղբայրանայ քեզի հետ , և ինչ որ չարութեան , դժբաղդութեան աշխարհը կը զլանայ պառտւի մը կամ մայրակորոյս մանկան մը , յետին անասունները , անշունչ իրերը կը փոխարինեն զայն և գուցէ աւելի անկեղծօրէն , աւելի քաղցրօրէն :

Ս . Սարգիսի բարկենդանը համնելուն , մեծ-մայրը պատմեր էր պզտիկին այդ գօրաւոր , կարիճ Սուրբին պատմութիւնը . նկարագրեր էր անոր ճերմակ հրեղէն ձին ու ձիաւորին պերճ հասակը , սուր երկար նիզակը , թէ ի՛նչպէս փոթորիկէն բռնուած շատ ճամբորդներ յանկարծ տեսեր էին որ սպիտակ մօրուքով դիւցազն մը իրենց թևէն բռնած , իր նմոյզին գաւակին վրայ նետած ու փրկած էր զիրենք , թէ ի՛նչպէս շատ շատեր ալ անդարձ կորսուեր էին , որովհետեւ պահք չէին պահեր , ծոմ չէին բռներ այդ շարթուն : Ու դեռ հազար հրաշալիք , հազար հէքիա՛թ : Ամէն գիշեր արդէն երբոր պառկէին , և շատ ալ կանուխ , առջի իրիկուրնէ կը փչէին իրենց ճրագը , մեծ-մայրը ծոցն առած , թունկանը ինչէր չէր բեր , ի՛նչ անուշ պատմութիւններ չէր պատմեր :

Հանի ու թունիկ սրոշեցին ամբողջ շարթուն ծումապահութիւնը ու կեցան ալ : Պառաւին համար ասիկա առաջինը չէր . անոր համար լաւ գիտէր վերջի մէկ երկու օրուան դառնութիւնը , ծարաւին չարչարանքը ու թուքին կրակը բերնին մէջ : Բայց վեց եօթը տարեկան մանկիկը բան չէր գիտեր բոլոր ասոնցմէ . միայն իր մեծ-մօր նկարագրած Սուրբին հայրական երանութիւնը համակիր էր իր թև առած երեւակայութիւնը , տեսակ մը հաւատաւորի բազմանք փորձեր էր իր միամիտ հոգին ու մտի տանջանքին երբեք անդրադարձած չէր : Առաջին օրերը իրաւ որ ծոցին հացը չէր կարօտցեր — արժող յաղթանակը ան էր որ հացը ծոցը պահէր ու չփարձուէր — , բայց շուրը շատ տանջած էր զինք . գլուխը որ բարձին դնէր ,

անուշ աղբիւրի մը գլուխը կամ գեղեցիկ առուի մը եզերքը կը տեսնէր ինքզինք, կը ծռէր խմելու, սակայն ահա ջուրը ճերմակ օձի կը փոխուէր ու կ'աներեւութանար կանաչ խոտերուն մէջ. և մանկիկը անմիջապէս վեր կ'իջնատ ու կ'արթննար: Երազը կը պատմէր մամային՝ որ մութին մէջ փայփայելով իր երեսը՝ կը քաջալերէր զինք, հաւատացնելով թէ Ս. Սարգիս իր հետ էր, երազին մէջ զինքը կը փորձէր ու չէր թողուր որ չար սատանան խաբէ զինքը: Ու մանկիկը հեղ մըն ալ կը քնանար, բայց աչքերը կը գոցէր չէր գոցեր, նոյն երազը, նոյն կաթնաղբիւրը, նոյն ծարաւի խռովքը. քունը չէր գար, աչքը պատուհանին կը մնար, բայց ճիթազօծ թղթէ լուսամուտը չէր ճերմկատեր ու առաւօտը կ'ուշանար, լեռը բռնէր չէր թողուր կ'ըսես: Միայն փոթորիկը կ'ոռնար ու փուքը կը ծեծեր դռները կամ անտէր պատուհանի մը փեղկերը, պատուտած թուղթի կտորները:

Ու պզտիկը կը վախնար, աչքերը խոշոր խոշոր կը բանար դռնի այդ անհանգստութեան սազնապով, որովհետեւ մեծմայրիկը կ'ըսէր իրեն թէ Ս. Սարգիս է որ իրենց տանիքին վրայ կը հսկէ ու կը սպառնայ անհամբերներուն որ ջուր չուզեն:

Ս. Սարգիս ու իր խոստումները աղէկ, իր տուած յնձան ալ շատ շատ աղուոր, բայց սիրտը կ'այրէր, բերանը կը չորնար, շրթունքներն իրարու կը կպէին, ու, ինչ ընէր, լեզուն ալ չէր դառնար. ա՛խ, եթէ մեծմայրը քիչ մը բարի ըլլար ու Ս. Սարգիս ալ քիչ մը բարեսիրտ, և թոյլ տային որ պուտ մի ջուր բերանը առնէր, լեզուն թրջելու:

\*  
\* \*

Ուրբաթի չար գիշերը, որ երկնցեր տարի էր եղեր, որ ծոյլ ու արձիճէ դիակի մը պէս ծանրացեր՝ չէր երերար: Այդ գիշեր հա՛ւր քուն եղաւ ու թունիկին թարթիչները իրարու չդպան, առաջին կունքը հազիւ առաւ ու արթնցաւ նորէն. կը պատակէր, կ'այրէր:

—Մամա՛, խուրդան, պուտ մի ջուր, կը մեռնիմ, հիմա հոգիս կ'եղայ...

— Համբերէ՛ , պզտի՛կս , համբերէ՛ : Ս . Սարգիս հունա՛ դուան ետեւ կեցեր լուսնալուսն կը հայի , հիմա ներս պիտի գայ , քեզի անուշ անուշ բաներ պիտի բերէ . շատը գնաց քիչը մնաց :

Բայց ա՛լ չէր կրնար համբերել , որովհետեւ փոսը ինկած աչքերը կը խաւարէին , պտղունցը դուրս կու գար , կապը ներսէն կը կարէր : Լեզուն հազիւ կը դառնար բերնին մէջ , ու պզտիկ անհանգիստ թաթիկները անկողինէն դուրս դուրս կը նետէր : Խաւարը սոսկայի էր , հովը կը հեծեծէր , կաղամախի ներուն չոր կմախքները ցուրտ աղաղակ մը կը հանէին ու կարծես մեռելի հաղարաւոր բերաններ ակուայ ակուայի կը զարնէին : Երկինքը փլեր վար կու գա՛ր :

— Մամա՛ , խուրոպա՛ն , լեզուիս վրայ թուփ մի ջուր՝ կը կողկողար մանկիկը , որուն ձայնը երթալով կը նուազէր ու դուրսի փոթորիկէ՛ն թէ Ս . Սարգիսի վախէն գլուխը դէպ ի անկողնին մէջ կը պահէր :

Մաման մտիկ չըրաւ ու ջուրին փոխարէն օրօր մը սկսաւ , այն հի՛ն , շատ հին երգը որ ժամանակին պզտիկին հօրը պզտիկ օրօրոցին վրայ ըսած էր : Ա՛լ ձայն չկաւ . մանուկը հետզհետէ իր անհանգիստ թաթիկները երկնցած տեղը թողուց , մուցաւ ջուրը ու հանգստացաւ : Պառաւր կ'երգէր տակաւին զառամած եղանակը որ օրօրէ աւելի մահերգի մը տրամութիւնը ունէր և այդ մահահոտ միայնութեամբը լցուած հողէ չորս պատերուն մէջ կը դողդղար ուրուային մեղեգիի մը տպաւորութեամբ :

Աքաղաղները կը կանչէին , ժամուն տախտակէ զանգակը դազը-դիգ արշալոյսին աղօթքը կ'ընէր գեղին վրայ ու մեռելական գեղին քունը կը փախցնէր : Կարծես գիշերը վերջին անգամ կը յօրանջէր ու լոյսը սանտրուիլ կը սկսէր խաւարին մէջ :

— Տէ՛ էլիւ , պզտրտիկս , էլիւ որ տեսնաս քի Ս . Սարգիսը ինչե՛ր է բերեր քեզի . աղուո՛ր աղուո՛ր չամիչներ , պաստան՝ղ , քեզի կարմիր ոտից է բերեր , էլի՛ր , անուշիկ թոռնիկս , էլիւ որ ժամ էրթանք . . . :



Պզտիկը չէր արթննար, քննոտն՛ր էր մամային հետ, քն-  
նոտեր էր Ս. Սարգսին ալ հետ. ի՞նչ պիտի ընէր շաքարն ու  
կարմիր ոտիցը, իրեն ուղածը պուտ մի ջուր էր ու մեծ-մայրը  
այնքան քարսիրտ էր եղեր այդ գիշեր, Ս. Սարգիս ալ այն-  
քան անգուժ :

Քարսիրտ, հա՛, շատ շատ քարսիրտ. ի՞նչ պիտի ըլլար  
մեծ-մօրը ու մեհին մնացած որբուկը. ու մայրիկը, մի՛ւտը՝ որ  
չիկար, — ալ չէր կրցեր դիմանալ, եկեր ու գիշերը գաղտուկ  
առեր տարեր էր դայն :

ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

## Տ Ր Տ ՈՒ Ն Ջ Ք

Է՛, մընաք բարով, Աստուած եւ արեւ՝  
Որ կը պըլպըլաք իմ հոգւոյս վերեւ...  
Աստղ մ'ալ ես կ'երթամ յաւելուլ երկնից.  
Աստղերն ի՞նչ են որ եթէ ոչ անբիծ  
Եւ թըշուառ հոգւոց անէ՛ծք ողբագին,  
Որք թըռին այրել ճակատն երկնքին.  
Այլ այն Աստուծոյն՝ շանթերո՞ւ արմատ՝  
Յաւելուն գէնքերն ու զարդերն հրրատ...:  
Այլ, ո՞հ, ի՞նչ կ'ըսեմ... շանթահարէ՛ զիս,  
Աստուա՛ծ, խոկն հսկայ փշրէ՛ հիւլէիս՝  
Որ ժպրհի ձգտիլ՝ սուզիլ խորն երկնի,  
Ելնել աստղերու սանդուխքն ահալի...  
Ողջո՞յն քեզ, Աստուա՛ծ դողդոջ էակին,  
Շողին, փըթիթին, ալւոյն ու վանկին,  
Դու որ ճակտիս վարդն ու բոցն աչերուս  
Խըլեցիր թրթռումս շրթանց եւ թռիչն հոգւոյս,

Ամպ տըւիր աչացս, հեւք տըւիր սըրտիս,  
 Ըսիր մահուան դուռն ինձ պիտի ժրպտիս.  
 Անշուշտ ինձ կեանք մը պահած ես ետքի,  
 Կեանք մը անհուն շողի՝ բոյրի՝ աղօթքի.  
 Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ  
 Հոս մառախուղի մէջ համր անշշունչ,  
 Այժմէն թո՛ղ որ շանթ մ'ըլլամ դալկահար,  
 Պըլլուիմ անուանդ, մրունչեմ անդադար,  
 Թո՛ղ անէծք մ'ըլլամ ու կողրդ խըրիմ,  
 Թո՛ղ յորջորջեմ քեզ «Աստուած ոխերիմ»:  
 Ո՛հ, կը դողդոջեմ, տժգոյն եմ, տժգո՛յն,  
 Փըրփըրի նե՛րսըս դըժոխքի մ'հանգոյն...:  
 Հառա՛չ մ'եմ հեծող նոճերու մէջ սեւ,  
 Թափելու մօտ չոր աշնան մէկ տերեւ...:  
 Ո՛հ, կայծ տըւէք ինձ, կա՛յծ տըւէք, ապրի՛մ...  
 Ի՛նչ, երազէ վերջ գըրկել ցուրտ շիրի՛մ...  
 Այս ճակատագիրն ի՛նչ սեւ է, Աստուած,  
 Արդեօք դամբանի մրուրո՞վ է գըծուած...  
 Ո՛հ, տըւէք հոգւոյս կրակի մի կաթիլ,  
 Սիրե՛լ կ'ուզեմ դեռ, սիրել ու ապրիլ.  
 Ե՛րկնքի աստղեր, հոգւոյս մէջ ընկէ՛ք,  
 Կա՛յծ տըւէք, կեա՛նք՝ ձեք սիրահարին հէք:  
 Գարունն ո՛չ մէկ վարդ ճակտիս դալկահար,  
 Ո՛չ երկնի շողերն ժրպիտ մ'ինձ չե՛ն տար.  
 Գիշերն միշտ դազաղս, աստղերը ջահեր,  
 Լուսինն յար կու լայ խուզարկէ վըհեր.  
 Կ'ըլլան մարդիկ որ լացող մը չունին,  
 Անոր Բամար նա դըրաւ այդ լուսին.



Եւ մահամերձն ալ կ'ուզէ երկու բան .  
Նախ կեանքը , վերջը լացող մ'իր վրան :

Ի զո՛ւր գրեցին աստղերն ինձի «սէր» ,  
Եւ ի զո՛ւր ուսոյց բուլբուլն ինձ «սիրել» ,  
Ի զո՛ւր սիւզեր «սէր» ինձ ներշնչեցին ,  
Եւ զիս նորատի ցուցուց ջինջ ալին ,  
Ի զո՛ւր թաւուտքներ լրուեցին իմ շուրջ ,  
Գաղտնապահ տերեւք չառին երբեք շունչ ,  
Որ չը խռովին երազքըս վսեմ ,  
Թոյլ տլլին որ միշտ ըզնէ երազեմ ,  
Եւ ի զո՛ւր ծաղկունք փրթիթներ գարնան՝  
Միշտ խնկարկեցին խոկմանցրս խորան...  
Ո՛հ, նոքա ամէնքը զիս ծաղրեր են...  
Աստուծոյ ծաղրն է աշխարհս ալ արդէն...

Պ. ԴՈՒՐԵԱՆ



**ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ** (1851-1872). — Թրքահայ քնարական բանաստեղծութեան ամէնէն ինքնատիպ, ամէնէն հուժկու եւ ամէնէն թախծալից հոգին է Պետրոս Դուրեան, որ մեռաւ թոքախտէ, պատանի հասակին մէջ: Տաղերգած է սէրը, բնութիւնը եւ վիշտը: Ունի նաեւ թատերական գրուածքներ՝ որոնք մեծ արժէք չեն ներկայացըներ: Ծնած եւ մեռած է Պոլիս:



## Մ Ա Ն Ո Ւ Կ Ի Մ Ը

Այո՛ , սի՛րելի էակ , պիտի տառապիս : Այդ կեանքդ , ուր պիտի մանես , տանջարան մըն է : Դէմքիդ այդ վճիտ սրբութեան վրայ թրթռացող անմեղ հողիիդ փայլին քանի նայիմ , սիրտս քեզ սպասող վիշտերը երևակայելով կը սարսուայ : Բուսապագադ շուրջպատող ցաւերն ու տառապանքները՝ վայրի գազաններու պէս իրենց երախը բացեր՝ քեզի , քու այդ դողդոջուն գոյութեանդ կը սպասեն : Իուն , աւանձին ու աննեցուկ , պիտի քալես կնոջ մը մենութեամբ , կնոջ մը տկարութեամբ : Իու փափաքներդ ու հաճոյքներդ անոնց մէջմէկ մնունդ պիտի ըլլան , օգնութեան հայցելու համար երկարած ձեռքերդ բայ պիտի մնան , օգնութեան համար թող տուած աղաղակներդ շուրջիդ կասաէր շշուկներուն մէջ պիտի խեղդուին : Օգնութեան տեղ՝ տանջանք պիտի տան , պիտի սիրես՝ պիտի խաբեն , պիտի հաւատաս՝ պիտի խաբեն : Յոյսերդ ու իղձերդ հատիկ հատիկ պիտի դեղնին , պիտի չորնան : Պիտի քակուին բոլոր այն կապերը՝ որոնք կեանքի իրականութիւնը ցարդ ծածուկ պահած էին քու սղու երանաւէտ աչքերէն : Ու այն ատեն պիտի հասկնաս թէ ո՛րքան աւանձին և ո՛րքան թշուալես կեանքի այս դամբարանին մէջ : Հայրդ ու մայրդ ալ պիտի կորսնցնես , խեղճ պզտիկ : Իսկ հայրդ աշխատութեան մէջ անցնող կեանքի մը պայծառ յիշատակը միայն պիտի թողու քեզի :

\*  
\* \*

## Ն Ա Ի Ա Վ Ա Ր Ը

Հիսարէն Գանլըճա կ'անցնէի : Մերուկ նաւավարը , հին ու ծանր նաւակը յորձանքին դէմ քաշքշելու համար , բոլոր ուժով թիակներուն կը կախուէր՝ հոսանքի պէս վազող ալեակներուն հետ կռուելու համար : Այս պայքարէն յոգներ էր ան . թէեւ իրիկունը ցուրտ էր և խոնաւ , սակայն հագուստները



հանեց, և մնաց կրծարաց շապիկով: Հիմա, այս աւեր մարմինն վրայ, տօթակէզ դող մըն էր փակած: Շնչառութիւնը արագացեր ու դէմքն ալ կարմրեր էր: Սորչումած և կաշեման երեսէն վազող քրտինքը՝ մինչեւ կուրծքին աղումագերէն վար հոսելով՝ կը չորնար իր հրակէզ մարմնին վրայ:

Ու այս թշուառ ծերունին ստիպուած էր, հացի պղտիկ պատառի մը սիրուն, ուղած տեղս քաշել զիս, — որ իր նաւակին մէջ հանգստօրէն ընկողմանելու իրաւունքն ունէի:

Սակայն ևս, նորէն, իր վրայ գուրգուրանքի արժանի բան մըն էի գտեր: Յոյց տալով այն գեղեցիկ սպիտակ ու կատարեալ ակռաները՝ որ կ'երեւէին, իր խօսած ատեն, շրթունքներուն մէջէն,

— Հայրի՛կ, ըսի, լաւ ակռաներ ունիս...

Ծերուկին դէմքը այլայլեցաւ: Եւ զինք այսքան տարիներէ ի վեր կարօտ և անզօր դարձնող և այդ թիակներուն դատապարտող անողոք ու դաժան կեանքի սեւ երեսին թըքներու պէս,

— Ի՞նչ օգուտ, ուտելի՛ք բան չգտնելէս ետք...

ՀԻՒՍԷՅԻՆ ՃԱՀԻՏ

**ՀԻՒՍԷՅԻՆ ՃԱՀԻՏ.** — Թուրք գրականութիւնը, մանաւանդ



վերջին քսան տարիներու մէջ, մեծապէս յեղաշրջուեցաւ, — թէ՛ արձակի եւ թէ՛ ոտանաւորի մէջ, թէ՛ գաղափարական եւ թէ՛ լեզուական տեսակէտով մեծ ցընցումի ենթարկուեցաւ: Հիւսէյին ճահիտ մէկն է այն գրագէտներէն՝ որոնք թուրքերէն նոր արձակը ստեղծեցին:

Ներկայ թուրք գրականութեան մէջ ցայտուն կերպով կ'երեւի այն ազդեցութիւնը զոր գործ դրին լեզուի վերանորոգման աշխատող սակաւաթիւ գրողներ՝ թուրք լեզուն մասամբ ազատելու համար իր հին երկարաշունչ պարբերութիւններէն, բառերու խճողումէն, եւ ցարդ իբրեւ սովորութիւն ընդունուած անհաս-



կընալի ըլլալու ընդհանուր վնասակար փափաքէն: Անշուշտ այս նոր ազգեցութիւնը կուգայ եւրոպական գրականութենէն, առաւելապէս ֆրանսականէն, որուն հետ աւելի կամ պակաս շփման մէջ եղած է թուրք գրական նորահաս սերունդը: Այդ շարժումն էր որ ահա նախ ուրուագծուած Շինասիէն, ապա առաջ տարուած Սահմուտ էքրէմի եւ իր ժամանակակիցներուն կողմէ, աւելի որոշուեցաւ, ուժ ստացաւ Հիւսէյին ձահիտի եւ իր ընկերներուն միջոցով:

Գրական այս գործունէութեան մէջ՝ որ բուռն պայքարներու տեղի տուաւ, Հիւսէյին ձահիտի դերն եղաւ մարտնչումի բաժինը: Ինքն էր որ պաշտպանեց Խալիտ Զիա—ձէնապ—Ֆիքրէթ դպրոցին գրական ըմբռնումները՝ գրական յետաշրջականներուն դէմ, ամէնէն աւելի իր վրայ հրաւիրելով բուռն յարձակումները:

Հիւսէյին ձահիտ բացի գրական զանազան սեռերու մշակութենէն, գլխաւորաբար զբաղած է նորավէպով, — թեթեւ եւ զգայուն պատմուածքներ՝ ուր մերթ տեղական բարքեր կը ցլանան, եւ երբեմն անձնական զգայնութիւններ կ'ընդգծուին: Իր ոճը պարզ է, կտրուկ եւ սահուն. իր հակումն է աւելի զգացումներ պատկերացնել՝ քան գաղափարներ:

Հիւսէյին ձահիտ Սահմանադրութենէն ետք գլխաւորն եղաւ թուրք հրապարակագիրներուն, որոնք լրագրական լեզուն մաքրեցին հնոսի ունակութիւններէ, յայտ բերին նոր եւ եւրոպական թափ մը եւ ջանացին իրենց գաղափարները լայն չափով հասարակութեան հասկնալի դարձնել:

Իր գլխաւոր գործերն են՝ բացի զանազան հանդէսներու մէջ ցանցնածներէն՝ Երեւակայուած Կեակիք, Իրակակ Կեակիք տեսարաններ, ուր ամփոփուած են իր կարեւոր պատմուածքները եւ Պայքարներս, ուր հաւաքուած են իր լրագրական գրապայքարները:

Հիւսէյին ձահիտ եղած է ուսուցիչ, խմբագիր եւ երեսփոխան:





## ԱՐԱՋՆ ԵԿԱԻ ԼԱՓԻՆ ՏԱԼՈՎ

Արագն եկաւ լափին տալով,  
 Ժէռ քարերին, ափին տալով.  
 Ո՞րտեղ թաղեմ ես իմ դարդը,  
 Չոր գլուխըս տափին տալով:

Ա՛յ իմ Արագ, ջուրըդ վարար,  
 Սիրուն եարիս, եարա՛ք, տեսա՞ր  
 Ես չը հասա՛յ իմ մուրազին,  
 Արա՛գ, եա՛րաք, կարօտս առա՞ր:

Ա.մպերն ընկան Մասիս սարին.  
 Կարօտ մնացի ես իմ եարին.  
 Ա.ստօժ սիրես, էրուած սրտիս  
 Ջուղաք բերես էկող տարին:

Գիշերն անքուն գիր կը գրեմ,  
 Արտասունքս գետ կը շինեմ.  
 Արա՛գ, ծէգը ջրիդ չառած՝  
 Իմ սեւ դարդը քեզ կը բերեմ:

Կ'ասես շողքը քարին ընկաւ,  
 Կըրակը իմ սրտին ընկաւ՞:  
 Կամար ունքից, թուխ աչքիցը  
 Ցաւն իմ ջիւան ջանին ընկաւ:

Արագն եկաւ լափին տալով,  
 Ժէռ քարերին, ափին տալով,  
 Ո՞րտեղ թաղեմ ես իմ դարդը,  
 Չոր դուխս տափին տալով...

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԷՍՅԱՆ.** — Յովհանէս Յովհաննէսեանն է եղած որ առաջին անգամ, կովկասահայ բանաստեղծու-



Թեան մէջ հետեւած է ժողովրդական երգերու արուեստին, զօրացընելով այսպէս քնարերգական լարը եւ ընդունակ դարձնելով զայն հայրենասիրական զգացումներէն տարբեր զգայնութեանց եւ յոյզերու եւս: Իր այս ուղղութեան է որ պիտի հետեւին սպա կովկասահայ ուրիշ երգիչներ, մշակելով քնարերգական արուեստը եւ հարստացընելով զայն:

Յովհաննէսեանի լեզուն ճոխ է, իր պատկերները գունազեղ են եւ իր երգը քնքուշ, սակայն զգալի է իր մէջ պաշտօնական բան մը, դասական ընդօրինակութիւն մը՝ որ կը վնասէ երգերու կենդանութեան եւ ինքնատիպութեան: Իր ամէնայաջող կտորներն են ժողովրդական մօթիվներու վրայ գրածները, ինչպէս՝ «Արազն եկաւ լափին տալով», «Ալագեազ բարձր սարին», եւն., որոնք կ'երգուին կովկասի մէջ եւ դարձած են ժողովուրդի սեփականութիւն:

Իր բանաստեղծութիւնները հրատարակուած են առանձին հատորով՝ 1908ին:



## “ԾԵՐՈՒԿ ՄԱԼԹԸՋ”Ը

1880ին օր մը, Յարութիւն Մոստիշեանի հետ Ներսէս Պատրիարքին կ'երթայինք՝ Միացեալ Ըսկերութեան վերաբերեալ գործի մը համար: Հասցիւղի շոգենաւը մտանք. քիչ ետքը եկաւ մեր մօտը նստաւ Մալթացի նաւազի կերպարանքով ծերունի մը, կարճ ժափեթով, յարդէ գլխարկով, հաստ գաւազան մը ձեռքը: Մոստիշեան յոր ուսումնաւարտ եղած էր Ռոպէրթ գօլէճէն, ուր վերջին տարին, Տնօրէնը, Տօքթրը Ուօշպրըն, աւանդած էր իրենց իմաստասիրութեան պատմութիւնը. ես ալ դեռ նոր կարդացեր էի Վիքթօր Բուլէնի «Փիլիսոփայութեան պատմութիւնը»: Երկուքնուս ալ մտքին մէջ



իմաստասիրական հին ու նոր դանազան դպրոցները թարմ տպաւորութիւններ թողած էին : Շատ խնդիրներ յուզեցինք , խօսեցանք տիեզերքի վրայ , իմացականութեան վրայ , կեանքի վրայ , մահուան վրայ . իրար անցուցինք զգայականներն ու ոգեկանները , սկեպտիկեաններն ու համաստուածեանները , Թաղեսէն և Պիւթագորոսէն մինչև Պէյքըն , Տէքաութ ու Քանթ , դրութիւններու ու տեսութիւններու թոհուբոհին մէջ , մեր միտքը լցուած կը զգուցինք թանձր մշուշով , տարտամ , վարանոտ , չհամարձակելով վճիռ արձակել ունէ խնդրի վրայ :

Շոգեհաւը , ալեւոյթէն յոգնած սպառած մարդու մը քալուածքով , կը յառաջանար Ոսկեղջիւրը ճեղքելով և իր ետևէն թողլով կաթնասիրտուր հեաք մը , որմէ չէր բաժնուեր աչքս և որ հետզհետէ կը տկարանար , կը նուաղէր , և հուսկ ապա կ'անյայտանար հեռուն , նման այն հեաքերուն , զորս մահուընէ ետքը աշխարհի մէջ կը թողուն մարդիկ : Մէկ եզերքէն միւս եզերքը կ'անցնէինք ծովին զով օդը ծծելով լիաթոք , և խօսակցելով անխանջ : Գլխարկաւոր մարդը նստած էր մեր դիմացը :

— Մո'տաիչ , ըսի առանց ձայնս մեղմելու , սա ծերուկ Մալթրզը ուշադրութեամբ մեզի կը նայի կոր . կարծես թէ մեզի մտիկ կ'ընէ :

Մոտաիչեան , միշտ խոհեմ , չսպաստասխանեց . անծանօթը լսեց բայց անայլայլ մնաց , և մենք շարունակեցինք խօսիլ :

Հիմա , յաւիտենական կեանքի յաւիտենական խնդիրն էր որ կը զբաղեցնէր մեզ , — հոգիին ճակատագիրը : Ի՞նչ էր հոգիին ճակատագիրը : Անոր գոյութիւնը հաստատելու համար իմաստասէրները հազիւ երկու փաստ դրած էին . հապա անոր էութիւնը , անոր ճակատագիրը . . .

Վարաներ մնացեր էինք : Յանկարծ Մալթրզը գլուխը վեր վերցուց և մաքուր հայերէնով ու հայրական ձայնով մը , որ բարութեան շնչոր ունէր , ըսաւ .

— Տղա՛քս , խորհուրդ կու տամ ձեզի որ Լուի Ֆիկիէի *Le lendemain de la Mort* կարդաք . ձեզ շփոթեցնող խնդրին վրայ բաւական լոյս պիտի գտնէք հոն :



Պարահանութիւն մը մէջ գեղանի նարմանազուկ պարակ-  
ցուհիի մը անդուսէ շրջազգեստին վրայ կոխած և վերէն ի վար  
պատռած էք զայն, և կամ շքասեղանի մը վրայէն գաւաթ  
մը սուած ատեննիդ՝ անուշադրութեամբ շատ մը գաւաթներ  
ձգած կոտրած էք. ի՛նչ զգայնութիւն որ կ'ունենայ մարդ  
այդպիսի կոշտութիւն մը ընելէ ետքը, նոյնը ունեցայ ևս ալ՝  
մտածելով որ ծերուկ Մայրը կոչեր էի մարդ մը, որ հայ էր,  
մեր իմաստասիրական վիճարանութիւններուն հետեւած և  
հասկցած էր զանոնք, և Լուի Ֆիլիէի իմաստասիրական գոր-  
ծերը կարդալու չափ զարգացած էր:

Մտտիչեանին նայեցայ. իր աչքերուն մէջ իր խոհեմու-  
թեան յաղթանակը կարդացի. իր լռութեան վարձատրու-  
թիւնը, և ամօթը աւելի շիկնեցուց զիս: Սակայն մտածեցի  
թէ կարկատանք պէտք չէր, թերեւս յետինն չար բան զառաջինն  
ըլլար: Առաջին յուզումէն ետքը, հետաքրքիր, ուղեցի հասկնալ  
թէ ո՛վ էր այդ ծերունին:

— Ներեցէ՛ք, պարո՛ն, կրնա՞ք ըսել մեզի թէ որի հետ  
խօսելու պատիւն ունինք:

— Ինձի ծերենց կ'ըսեն:

Ծերենցն էր, Տօքթէօս Շիշմանեանը, որուն Ռուսիայէն  
դարձը նախորդ օրն իսկ ծանուցած էր Մաւս. Տօքթէօս  
Շիշմանեանն էր, պատմագէտ, դրագէտ Շիշմանեանը, որուն  
անունն այնչափ անդամներ լսած էինք:

Այս անգամ ուշադրութեամբ զննեցի զայն. դէմքը թուխ  
էր թմթուկած, անյարդ, բայց պատկառելի վեհ բան մը ու-  
նէր, որ քիչ մը առաջ աչքի չէր զարկած. անուն մը շատ  
անգամ ուրիշ գոյնի ներքեւ կը ներկայէ մեզի մարդը, ինչպէս  
գրուած մը, պատկեր մը, նուազ մը: Մազերը երկար, դէպ ի  
ուսերը կ'ինջնէին. իրենց գոյնը ոչ սեւ էր, ոչ ալ ձերմակ,  
թէեւ երկու գոյներուն ալ կը մօտենար. փոխանցումի գոյն մը:  
Առոյգ էր դեռ. աչքերուն մէջ աշխուժը կը մնար միշտ կեն-  
սախայտ, և ձայնը ունէր մետաղի յտակ հնչիւն, իր գաղա-  
փարներուն պէս, որոնք պայծառ էին և որոշ:

Հասգիւղ եղանք և նաւամատոյցէն մինչեւ Ներսէս Պատրիարքի տունը շարունակեցինք խօսակցիլ : Ծերենց շատ բաներ ըսաւ մեզի . խօսեցաւ հողիի անմահութեան վրայ , որուն սրտանց կը հաւատար , 1860ի սերունդին վրայ , Նալբանաւեանի վրայ , զոր ճանչցած էր , Կովկասի վրայ , ուրիշ կը դառնար և ուր ասորոյ Հայերը կը գնահատէր ու կը սիրէր , Ներսէս Պատրիարքի , Օսեանի և ուրիշ ժամանակակից անձերու և խնդիրներու վրայ : Այսօր լսածիս պէս կը յիշեմ դեռ , ինչ որ ըսաւ մեզի . և այդ հանդիպումին յիշատակը մաքիս մէջ թողած է խոր տպաւորութիւն , ծերուկ Մալքրզը յանկարծ ներկայանալով աչքիս իբր գիտուն , մտայի անձ մը , արժանի ամէն յարգանքի :

ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ

**ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ.** — Իբրեւ գրագէտ՝ Հրանտ Ասատուր գրած է քիչ բան , իսկ աւելի շատ՝ իբրեւ հրատարակագիր եւ բանասէր : Իր ոճը մեզմ ու քաղցր՝ կուտայ իր բոլոր գրութիւններուն գրաւիչ շունչ մը : Վարած է Գ. Զօհրապի հետ Մասիս դրական շաբաթաթերթը , եւ ապա Մասիս ու Արեւելի օրաթերթերը : Մասնակցած է Ցօական թուականներէն ի վեր Պօլսոյ հրատարակախօսութեան : Իր ծանօթ գործերն են Պատմական ներշնչումներ , Պատմութիւն Ս. Փրկչեան Հիւանդանոցի եւ Կ. Պոլսի Հայերը :

## Հ Ա Յ Ո Ց Ա Ր Ե Ի Ի Ն

Ո՛վ Հայաստանի վաղեմի արեւ ,  
 Շողա՛ հայրենի դաշտերուն վերեւ .  
 Ահա՛ կը հասնի կենսաբեր գարուն ,  
 Կապուտակ երկնի հրմայքին մէջէն ,  
 Ուր զըլարթ ցոլքեր միշտ կը դողդոջեն ,  
 Տո՛ւր տաքուկ ողջոյնդ հայ մշակներուն :  
 Ո՛վ Հայաստանի վաղեմի արեւ ,  
 Շողա՛ հայրենի դաշտերուն վերեւ :

Անյագ կարօտով փառքիդ երկնատուր ,  
 Քեզ կրսպատէ հոն գեղջուկին կրտուր ,  
 Ուր դեռ կը յամէ սոսկումը ծմբան ,  
 Ոչխարն անհովիւ, գառնուկն անփարախ  
 Աղապատանքովդ ըրէ՛ դուն ուրախ ,  
 Որ կայտուն դալար մարգերուն վըրան :  
 Անյագ կարօտով փառքիդ երկնատուր  
 Քեզ կրսպատէ հոն գեղջուկին կրտուր :

Ռ՛վ Հայաստանի վաղեմի արեւ ,  
 Շողա՛ հայրենի դաշտերուն վերեւ .  
 Ճաճանջներդ անդուլ ցօղէ՛ ժպտագին ,  
 Թո՛ղ երգեր լրսուին սարէն ու ձորէն ,  
 Հասնին , բողբոջեն խաղողն ու ցորեն ,  
 Հագուին պարտէզներն, արտերն եւ այգին :  
 Ռ՛վ Հայաստանի վաղեմի արեւ ,  
 Շողա՛ հայրենի դաշտերուն վերեւ :

Հայ ճակատներուն վրայ ալ , անխըտիր ,  
 Անուշի՛կ արեւ , ճառագայթ մը դի՛ր ,  
 Ճառագայթ մը սուրբ Յոյսի , Հաւատքի ,  
 Խորհուրդներուն մէջ թախծոտ ու մըռայլ ,  
 Սրսկէ՛ լուսագեղ կայծեր ու շառայլ ,  
 Որ հոն գիտակից խա՛նդ մը բորբոքի ,  
 Հայ ճակատներուն վրայ ալ , անխըտիր ,  
 Անու՛շիկ արեւ , ճառագայթ մը դի՛ր :



Հերիք քաղցր աչքերն Հայոց մայրերուն  
 Թափեցին առատ արցունք եւ արիւն ,  
 Ցամքեցո՛ւր զանոնք որ ժպտին յաւէտ .  
 Զինջ աղբիւրներու , թուփերու մօտիկ ,  
 Պար բռնեն մանչեր , կոյսեր խորոտիկ ,  
 Սիրոյ երգերով հեշտին , արփաւէտ . . .  
 Հերիք քաղցր աչքերն Հայոց մայրերուն  
 Թափեցին առատ արցունք եւ արիւն :

Ո՛վ Հայաստանի արեգակ , անշէջ  
 Կորով դիր ամէն հայ սիրտերուն մէջ  
 Եւ՝ հրպարտ , խրրոխտ , աննրւան հոգի՝  
 Որ հայրենիքին , հողի՛ն անձնըւէր՝  
 Հայն ապրի ազատ , մի՛շտ գրչուխը վե՛ր ,  
 Ըստրուկ , լուռ գերի չըլլայ ո՛չ ոքի . . .  
 Ո՛վ Հայաստանի արեգակ , անշէջ  
 Կորով դիր ամէն հայ սիրտերու մէջ :

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՓԱՆՈՍԵԱՆ

**ԱՂԵՔՍԱՆԴՐ ՓԱՆՈՍԵԱՆ**

(ԱԼՓԱՍԼԱՆ) Աղեքսանդր Փանոսեան  
 անզուգական տաղաչափն է հայ քեր-  
 թողական արուեստին մէջ: Մշակած է  
 թեթեւ, թուռցիկ, երբեմն մանկա-  
 կան եւ աւելի շատ ֆանթեզի բա-  
 նաստեղծութիւնը՝ զգացումէ աւելի  
 սրամտութիւն եւ ներշնչումէ աւելի  
 զուարթութիւն դնելով իր ոտանա-  
 լորներուն մէջ: Իր գրուածներէն  
 մաս մը ամփոփուած է արդէն Շողեր  
 ու Յօդեր եւ Այգեկոչքի հատորներուն  
 մէջ:





## Դ Է Պ Ի Ե Ր Կ Ի Ր

Ամէն սեղ է որոնում հայր. սպասան՝  
Բաց ի սյն երկրից, ու կոչւում է Հայասան:

Գնում է Հայր՝ կնճիւղը ճակատին, յոյզը սրտում:

— Ո՛ւր, հա՛յ շինական:

— Ղարիբութիւն:

Գնաց: Իսկ այնտեղ, Խնուսի կիսաւեր գիւղերում, պա-  
ռաւ մայրը՝ մէջքը կորացած, հալումաչ կիներ՝ ծծկերը գրկին,  
և չորս մատղաշները՝ բոպիկ և ցնցոտիապատ, նրան են սպա-  
սում: Նրան են սպասում, երբ պարտատէրն է դուռը բաղ-  
խում կամ երբ հարկահանը՝ որոտալի ձայնով՝ շանթ ու կրակ  
է թափում: Երեխաների կանչը՝ «հա՛յ» և դատարկւած գոմից  
նւաղած եղան բառաչիւնը՝ «խո՛տ» — դադար չունի: Տաշ-  
տում հաց, գոմում՝ խոտ չկայ, — նրան են սպասում: Գիշերը  
անձրեւ եկաւ, հողը փափկեց արար, վարող չկայ, — նրան են  
սպասում: Տանեցու աչքը ջուր կտրեց: Պառաւ սատր թու-  
ների բողազից կտրեց՝ ձէթը ժամ տարաւ, լուս վառեց —  
բայց էլի խաբար չկայ: Ու ժամից դառնալիս՝ իր ցաւը հա-  
այսպէս երգեց՝

Տուն կայ՝ պահող չկայ,

Արս կայ՝ վարող չկայ...

Գնում է Հայր վէրքը ճակատին, երկիւղը սրտում:

— Ո՛ւր, հա՛յ երխաասարդ:

— Օտար աշխարհ:

Եւ Եգիպտոսն ու Կիպրոս, Կովկասն ու Բալկան հերիք  
չեղան հալածական պանդխտին: Ծովերանցաւ, մինչեւ Ամե-  
րիկա հասաւ: Օտար աշխարհում նրա լեզուն բացւեց. ցոյց  
տուեց իր մարմնի վէրքերը, սրտի խոցերը: Անպաճոյճ, բայց  
յուզիչ լեզուով պատմեց ծերուկ հօր սպանութիւնը՝ կաթւա-

ծահար մօր առաջ, մատաղ քրոջ փախցնելը, նկարագրեց հարեւանի թալանը. ամբողջ գիւղի աւերումը և իր յուսահատ փախուստը: Մարդիկ յուզեցին, կսկծացին: Փախստականին ապաստան տւին, քաջալերեցին: Բայց նա ոչ առաջինն էր և ոչ վերջինը: Օր չանցաւ, որ սղանդուխտ չգար: Ամիս չանցաւ, որ նոր փախուցած չերեւար: Հները նորերին գրաւեցին: Օտար աշխարհի ճամբան՝ ջրի ճամբայ շինեցին: Գիւղ չճնաց առանց փախստականի, օջաղ չմնաց առանց դարիբականի: Եւ ձերունի պապը՝ մարած օջաղի մօտ նստած, արտասուքը սրբեց ու հանգած օգային այս գանդաւոր ուղղեց՝

Ման ունիմ՝ մանկա; չունիմ,  
Ընտանիք ունիմ՝ քանիչ չունիմ...

Գնում է Հայր՝ բողոքը ճակատին, վրէժը սրտում:

— Ո՛ւր, հա՛յ հայրենասէր:

— Ազատ երկիր:

— Ինչո՞ւ համար:

— Գործելու համար:

«Այնտեղ, ազատների երկրում, ուր չեն կտրում այն կոկորդը՝ որ բողոք է հնչեցնում, և այն ձեռքը՝ որ սարուկի շղթան է փչրում. ազատ ու անկախ, այնտեղ, մենք կ'ուսումնասիրենք հայրենիքի փրկութեան ճանապարհները, կը կրթվենք և կը սղանդանք տարազիր մատաղ հայ սերունդը օտար սղղեցութիւնից. այնտեղ, զգայուն մարդկանց առաջ, որոնք լսել, զգալ, ցամառն որօտ արձակել գիտեն, մենք բաց կ'անենք նահատակ ժողովրդի սիրտը, շանթ ու անէծք կը թափենք, մինչեւ որ արար-աշխարհ տակնուվրայ կը լինի, մինչեւ որ մի ո և է տեղից մեղ օգնութիւն կը հասնի»:

Ու գնաց: Նա մենակ չէր: Նրան հետեւեցին ընկերներ, ծանօթ ու անծանօթ գործիչների ամբողջ խմբեր, տարբեր ծրագրերով, տարբեր ճանապարհներով:— Սկսեցին լրագիրներ, հանդէսներ, հիմնեցին դպրոցներ, ընկերութիւններ,



տեղի ունեցան ժողովներ, մերկացումներ, վերջապէս աղերսանքներ, դիմումներ: Եւրոպա, Ամերիկա, նոյն իսկ ստորկութեան երէկւայ հայրենիքը: Փարաւոնների Երկիրը՝ լեցրեց ազգի ցաւը լացող գործիչներով ու բողոքներով: Միայն Երկիրն էր, որ մնաց առանց բողոքի, առանց գործողների: Եւ այն ժամանակ, երբ օտար աշխարհում՝ ազգասիրական հողի վրայ բուսած աղմուկն ու իրարանցումը սասկանում էր՝ վերածելով հայրենիքի ու գործի բնութանուր շահերը խմբական և նոյն իսկ անհատական մանր հաշիւների, — նոյն այդ ժամանակ՝ երկրի մէջ լռում էին բողոքի բոլոր կենդանարար ձայները, հանդչում սոցիալամբութեան խարոյկները՝ վառւած անթիւ գոհերի աղատասէր շունչով: Երկրի խորքում՝ կուռղ չմնաց, ժողովրդի առաջ՝ բողոքող: Եւ Մուշի դաշտի կիսաւեր գիւղերում, յուտաբեկ, մոտացւած անընկեր մնացած մարտիկը՝ գիւղի աշուղին կանչեց և խնդրեց այսպէս երգել իր ազգի վիշտը՝

Ճրագ կայ՝ վառող ջկայ,  
Փովուրդ կայ՝ սիրս ստղ ջկայ...

Խնդճ ժողովուրդ... .

Ամէնքը գնացին: Մէկը իբրեւ բողոք՝ քանդւած օջաղի, միւսը՝ հարսահարւած աշխատանքի, երրորդը՝ հալածական գաղափարի: Գնացին, որ աղերսեն, վկայեն՝ անսիրտ, կուրացած աշխարհին քո վիշտը, տառապանքը, քո յուսահատ վիճակը: Իսկ դու՝ որբական մենակութեան մէջ՝ սպասում ես խաբրիկների, օգնութեան, աղատութեան... .

Գնացին և էլի գնում են... .

Յիսուս հազար գաղթականներ կովկասում, որոնք հինգ տարուց ի վեր մի անկիւն անդամ չունեն իրենց յոգնած գլուխը վայր դնելու համար. անթիւ, անհամար հալածականներ Եգիպտոս, Կիպրոս, Ամերիկա, Եւրոպա՝ ցնցոտիապատ, թափառական, անտուն անտէր՝ իբրեւ անխօս կենդանազիր հայրենիքի

Թշուառութեան, ցիրուցան օրքեր: Հայ աշխարհի բոլոր ծայրերից և այդ բոլորի հետ միասին՝ ամբողջ Հայաստանի մտածող, յեղափոխող սարրը՝ ուսուցիչ, քարոզիչ, գրող, կուռղ, յեղափոխական, վարդապետ, ինտելիգենտ—բոլորն էլ երկրից դուրս, բոլորն էլ թափառական, աղերսանքը բերանին, ձեռքը մեկնած . . .

Որպիսի դարձ:

Եւրոպան կշտացաւ, նոյն իսկ «յոզնեց» մեր լայ ու կոծից, մեր ցնդոտիներից, իսկ մենք՝ ինքնախարէութեան դիմակի տակ՝ շարունակուժ ենք թափառել և աղերսել, աղերսել և թափառել .

Փողովուրդ էինք՝ քափառական դարձանք,

Կուռղներ էինք՝ աղերսողներ դարձանք . . .

Կա՛ց, հայ մարդ, կա՛ց:

Իսկ չէ այն ճանապարհը, որ տանում է դէպի փրկութիւն: Ազատագրական արիւնք չէ, — նոյն իսկ այնքան սուկալի ինչքան «հայկական կոտորածները», — որ սպանում է մի ազգ, այլ թափառական կեանքը, մուրացկանի պայուսակը, անվերջ տարագրութիւնը: Մի՛ մոռացիր, որ քսան տարուց աւելի է ինչ Օսմանեան Բռնապետութիւնը և՛ հրդեհածգութեամբ՝ ինչպէս Վանում, և՛ սովով՝ ինչպէս Վասպուրականում, և՛ կոտորածով, ինչպէս ամբողջ Հայաստանում, մի նպատակ միայն ունի. — վերացնել, նւաղեցնել Հայերին, դարձնել Հայաստանը անհայաբնակ, որպէս զի այդպիսով վերջապէս մի ծանր գերեզմանաբար դրւի այն մեծ, ոգեւորիչ հարցի վրայ, որ զբաղեցնում է ամբողջ Եւրոպան՝ «Հայոց հարց» անունով, և որը 600 տարուայ սարուկ ժողովրդի սրտում ծնել է և՛ յոյս, և՛ հերոսութեան ձգտում, և՛ մարդկային մեծ իդէալներ . . .

Այո՛, իդէալներ, որոնց իրագործման համար Հայութիւնը միայն մի վայր ունի — Հայաստան: Մայր-հայրենիքից դուրս՝ հայ ժողովուրդը ազգ չէ, այլ փճրանք, թափրքփուկ, անպէտք և անկարեւոր: Երկիրն է նրա պատմական դերի բեմը, նրա

կուլտուրական բաղձանքների հնոցը: Թափառական, շրջիկ կեանքը, տարագրութիւնը՝ սպանեց հրէական տաղանդաւոր ազգը. նա մեզ էլ կը սպանի՝ հասցնելով ազգը հայկական ջիւղութեան...

Եւ այն, ինչ որ մինչեւ այժմ չաջողուեց մեր թշնամուն՝ իր միջոցներով, ժամանակակից հայ սերունդը կարծէք ուզում է յաջողցնել իր անմիտ «քաղաքականութեամբ», հայկական այս սպանիչ և յուսահատ թափառականութեամբ, այն ոգով, որ Հային տանում է դէպի ամէն կողմ և երբեք դէպի Հայաստան...: 500 տարւայ ստրկութիւնից յետոյ, Հելլէնը՝ հակառակ ամէն դոհերին՝ իր կուլի դրօշը անկեց աւերածածկ հայրենիքի կրծքում, այն հողում, որից մինչեւ այժմ էլ չէ չքայել նահատակների արեան բուրմունքը: Արիւնը նրան չփախցրեց, այլ աւելի սերտ կապեց: Միթէ՞ մենք պիտի փախչենք: Մեր ստրուկ, մեղանից աւելի հալածական, մեզանից աւելի տգէտ նախնիքը՝ տանջանքների բովից անցնելով՝ մեզ թողին մի մեծ ժառանգութիւն— հայրենիք: Ի՞նչ, միթէ՞ մենք պէտք է մեր ապագայ սերունդին Հայրենիքի փոխարէն թողնենք լոկ հայկական գաղութներ, ցիրուցան՝ ովկիանի այս և այն կողմը, չչաղկապւած ոչ մի զգացմունքով, ժողովրդական ո՛չ մի գաղափարով...

Դեպի՛ երկիր— ահա այսօրւայ մեր նշանաբանը:

Եւ թող սրանից յետոյ մեր պրօպագանդի ամբողջ գծի վրայ, պանդուխտաների շրջանում թէ գաղթականների մէջ, Պօլսի խաներում թէ կովկասեան թէյարաններում, ամերիկեան Հայոց ժողովարանների թէ Բալկանի ձորերում, Ասորպատականից մինչեւ Նեղոս, Նեղոսից մինչեւ Դանուբ՝ ամէն տեղ և ամէն ժամանակ բարձրաձայն հնչի Հայութեան ականջին նոյն յամառ հրաւերը, նոյն ազգու կոչը՝

Դեպի՛ երկիր, դեպի՛ երկիր:

Խ. ՄԱԼՈՒՄԵԱՆ

**ԽԱԶՍՏՈՒՐ ՄԱԼՈՒՄԵԱՆ** (է. ԱԿՆՈՒՆԻ) — Դեռ պատանի հասակէն գործակից Գրիգոր Արծրունիի, ոււճացած ու մեծցած Արծրունիի գաղափարական մթնոլորտին տակ՝ Խ. Մալումեան եղած է ա-





մէնափայլուն աստղերէն մէկը Մշակի, վարած է զայն երկար տարիներ, Արծրունիի մահէն ետքն ալ ըլլալով անոր գործին շարունակողը. ապա անցած է արտասահման, ուր իր գրական գործունէութիւնը նուիրած է Դրօշակի խմբագրութեան:

Խ Մալումեան օժտուած է հրապարակագրի մեծ կարողութեամբ: Իր լեզուն սրտկերակոր՝ քնարական ըլլալու աստիճան, ոճը՝ կտրուկ, սեղմ եւ պերճ. մտածման եղանակը՝ ճարտար ու նոր, կը բարձրացնեն իր հրապարակագրութիւնը գեղարուեստական ճշմարիտ արժէքի մը:

Մալումեանի հրապարակախօսական գրութիւնները մեծ մասով ցրուած են հին Մշակներուն եւ Դրօշակի մէջ. իբրեւ

տուանձն հատոր՝ ունի ուսումնասիրութիւն մը Ք Արծրունիի վրայ, ինչպէս նաեւ Կովկասեան վերեր, Դեպի Կոիւ եւն. գործերը:

## ՔԱԶՈՐԴԻՈՅՆ ԹԱՂՈՒՄԸ

Ոչ փող զարկինք, ոչ արծագանգ լեռնասոյգ  
Սարէ ի սար չարաշրջուկ տարաւ լուր.  
Ու չերգեցինք ողբի երգեր սրտայոյզ,  
Երբ պատանւոյն բացինք մըռայլ փոսին դուռ:

Դիշերական մունջ ըստուերներ շուրջ կային,  
Երբ հրացանի կոթով հողը փորեցինք.  
Լուսինը լոկ կը պըլպըլար մեր գլխին.  
Սուգ էր պատեր դաշտը, բըլուրն ու երկինք:

Պէտք չէր դագաղ, եւ ոչ ճերմակ պատանքներ  
Որով գոցուէր ազատորդի քաջորդին.  
Մարտէն յետոյ, կարծես յոգնած կը հանգչէր.  
Ու վերարկուն կարմիր բաւ էր իր անձին:



Անձայն ու կարճ Ննջեցիլոց մը գրուցեց  
Մեր քաջ տէրտէրն, Ջինուոր Հայոց Աստուծու .  
Գովեց մահը եւ քաջութիւնն իր օրհնեց ,  
Թող չըտըլաւ հառաչ մ'ու եիչ հանելու :

Երբ գըլուխը դըրինք հողէ բարձին վրան ,  
Տեսանք գեղը նակտին ու վէրքն իր պայծառ .  
«Ո՛վ պատանե՛ակ , ըսինք , իրեն մէկ բերան .  
«Ազգիդ համար մեռար , դուն շա՛տ ապրեցար :»

ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻԿՅԱՆ

**ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻԿՅԱՆ** (1829-1868). — Դաստիարակուած Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան վարժարանին մէջ, ուր կը տիրապե- տէր Ալիշանի եւ դասական գրական- նութեան մեծ շունչը, սնած՝ դասա- կան եւ ռումանթիկ գրականութեամբ, Մկրտիչ Պէշիկթաշլեան վերադարձած է Պոլիս՝ իր զգայուն հոգիին հետ փո- խադրելով նաեւ սյդ շունչը եւ ար- ուեստի սէրը: Աշխարհաբարը տակա- ւին կազմակերպուած չըլլալով, գրած է իր քերթուածներէն մեծագոյն մասը գրաբար: Պէշիկթաշլեան ունեցած է քնարական մեծ տաղանդ, սակայն զուրկ եղած է սեփական ստեղծագոր- ծութեան մեծ թուիչքներէ: Իր տա- ղերը կը կրեն ներդաշնակութեան, քնքուշ զգայնութեան, փափկութեան եւ մեղամաղձութեան դրոշմ: Պէշիկ- թաշլեանի գործերը կը բաղկանան քերթուածներէ, ճառերէ եւ թատ- րերգութիւններէ, որոնցմէ բանաս- տեղծն յատկանշողը կը ներկայացնեն իր քերթուածները, մաս մը գրաբար եւ մաս մը աշխարհաբար: Պէ- շիկթաշլեան մեծ զարկ տուած է թրքահայ թատրոնին եւ եղած է առաջիններէն մէկը Պոլսոյ մէջ հայ թատրոնի հիմնադրութեան:





## Ի՞նչ է ԱՐՈՒԵՍՏԸ

Կարգաւորութիւնը կը սիրեմ, որովհետեւ կաթողին կը սիրեմ յատկութիւնը: Ամէն բանի մէջ յատկութիւնը, յատկութիւնը ամէն բանէ առաջ: Չկայ բան մը որ այնչափ ատեմ որչափ տարտամն ու ամպօտը: Մթութիւնը ուրիշ բանի չի ծառայեր բայց եթէ տձեւութիւնը ծածկելու:

Բոլոր յատակ գաղափարներուն համար, ձեւական մտածում մը կայ որ զանոնք կը թարգմանէ: Բայց գաղափարները գրեթէ միշտ խառնակ ու շփոթ կու գան մեզի: Պէտք է ուրեմն նախ զանոնք անջատել, կարենալու համար դնել զանոնք մաքուր՝ ներքին նայուածքին տակ:

Գործ մը կը ծնի տեսակ մը խառնաշփոթ յուզումէ մը՝ որուն մէջ անիկա պարունակուած է ինչպէս կենդանին հաւկիթին մէջ: Մտածումը որ կայ այդ յուզման մէջ, կը գլորեմ, կը գլորեմ զայն մինչեւ որ յուսաբանուած համարիմ և կարելի եղած ամբողջ յատկութեամբը տեսնեմ զայն: Այն ատեն կը փնտռեմ տեսարան մը որ ճշտութեամբ զայն թարգմանէ, բայց որ ըլլայ միանգամայն, կամ գոնէ կարեւայ ըլլալ, իրական տեսարան մը:

Արուեստը իրականութեան նմանողութիւն մը չէ, բնութեան զուգահեռականութիւն մըն է:

Արուեստը խորհրդանշանական պէտք է ըլլայ, բայց պէտք է միանգամայն բնութեան ուսումնասիրութեան վրայ հաստատուի. բնութեան մէջ է որ արուեստագէտը պիտի գտնէ իր ամէն անձնական յղացումներուն տարրերը: Բայց ամէն մարդ, իր խառնուածքին բնազդմանը հետեւելով, կ'ընտրէ այն հեռաւորութիւնը և այն կէտը ուրկից բնութիւնը կը դիտէ: Ոմանք, մանրամասնութեան սիրահար, անոր մօտը կ'երթան կը կենան: Ուրիշներ, ամբողջութեանց և զանգուածներուն աւելի ուշադիր, հեռուն կը կենան՝ աւելի լաւ ըմբռնելու հա-



մար : Տառական թարգմանութիւնը չսիրելով , ես հեռուէն կը նայիմ որպէս զի աւելի լաւ տեսնեմ :

Տպաւորականները վաղանցուկին բանաստեղծներն են : Անոնց իտէալը ներքին հակասութեան մը վրայ կը կրթնի եւ չկրնար ամբողջապէս իրականանալ . կ'ուզեն սեւեռել անցնող վայրկեանը , իրերուն խուսափուկ երեւոյթը : Արդ , իրերը , իրենց մակերեւութային տեսքով , այնչափ փոփոխական են որ արդիւնք մը հազիւ ծնած է և ահա ջնջուած է արդէն : Բայց բայարձակը ամէնուն անմատոյց է , և գործերը մերձեցումներ են միայն :

Ես միշտ ջանացած եմ մարմինը գուշակել յեղյուղուկ ցոլքերով պատմութեանին տակ : Իրերը փնտռած եմ իրենց մշտատեւ հանգամանքին մէջ , իրենց խորունկ երեւոյթովը , իրենց իսկութեան մէջ :

Բնութիւնը ամէն բան կը բովանդակէ , բայց խառնակ կերպով : Պէտք է դատել անոր մէջ ինչ որ պատահականութիւն է , ինչ որ դիպուածական է , ինչ որ վայրկեանապէս անարտայայտէ , այսինքն ինչ որ չի ձգտիր մեր մտածումները արտայայտելու : Կերպով մը կարելի է ըսել թէ արուեստը կ'աւարտէ ինչ որ բնութիւնը կ'ուրուագծէ , կ'արտասանէ խօսքը զոր անհուն բնութիւնը կը թռթռուի : Ինչպէս կը յաջողի մարդ բնութեան օգնել իր խօսելու ջանքին մէջ :— Գլխաւորապէս , բայտիս , յապաւումով ու պարզումով : Չանայէք կարեւորը արտայայտել , մտացածը ձգելէք : Աս է գծագրութեան , աս է շարադրութեան գաղտնիքը , աս է նոյն իսկ պերճախօսութեան ու սրամտութեան գաղտնիքը :

... Աղիտաբեր նախապաշարումով մըն է որ կը յորդորեն վարպետներն ուսումնասիրել , անոնցմէ արհեստը սորվելու , արուեստին գաղտնիքներն առնելու համար : Գեղարուեստի մէջ արհեստ չկայ , ամէնուն մտաչելի հասարակաց սահմանավայր մը չկայ : Ինչպէս որ չկայ կարծեմ ճարտասանութեան գիրք մը՝ որ գրագէտին սորվեցնէ ոճ մը գանել : Պէտք է որ գրագէտը , արուեստագէտը հարեն իրենց ոճը , իրենց

արհեստը . ապա թէ ոչ գոյութիւն չունին անոնք : Միակ բանը որ մարդ կրնայ առնել վարպետներէն , անոնց միամտութիւնն է , անոնց խոնարհութիւնը բնութեան առջեւ :

Այս առաջին առաքինութիւնէն զատ , ոչ ամէնուն մայրն է , ի՞նչ կարելի է խնդրել վարպետներէն : Անոնք իրենց թերութիւները միայն կը փոխանցեն : Ես հին արուեստը միայն գիտեմ որուն ուսումնասիրութիւնն առանց վտանգի ըլլայ : Որովհետեւ՝ հին արուեստը , բնութիւնն իսկ է :

Ինձի կը թուի ուրեմն որ անխոհեմ բան է երխասարդներու հիացման շատ մօտէն սեղջութիւն մը տալ : Պէտք է որ հիացումէ ազատ ըլլան անոնք : Կը նախընտրեմ որ մոլորին անոնք , քան սարկարար հետեւին :

Յօժարկամ պիտի ըսէի գեղարուեստի աշակերտին . « Գաղտնիքդ ուրիշին մի՛ հարցներ , քու մէջդ փնտուելու ես զայն : Եւ մանաւանդ մի՛ կարծեր թէ արուեստագէտ մը կրնայ պարծենալ իր ընտրած ճիւղին բարձրութեամբ . կան որ իրենք գիրենք աւելի մեծ կը կարծեն , որովհետեւ դիւցազնական գործեր արտադրելու ելած են . անոնց փառասիրութիւնը սխալ է : Աւելի կ'արժէ յաջողած պղտիկ եղանակ մը՝ քան անյաջող օւսադօւիօ մը : Դիտէ՛ , բաղդատէ՛ , աշխատէ՛ քաջասրտութեամբ , բայց առանց անհամբերութեան :

Գալով ինքնատիպ ըլլալու ջանքին , գիտեմ որ ատիկա նոր ժամանակներու հիւանդութիւնն է : Բայց չփնտուելով է որ մարդ կը գտնէ ինքնատարութիւնը :

ԲԻԻՎԻՍ ՏԸ ՇԱՎԱՆ



## Կ Ո Վ Ը

Եզերուած թա՛նծր փունջերով մացառներու թաւարծի,  
Պրզտիկ քարուտ դեղին ուղի՛ մը կը բացուի՝ կարճ ու նեղ,  
Ուր ոչ ըստուէ՛ր մը կ'երերայ, ոչ էակ մը կը յածի,  
Եւ ուր արե՛ւը կը փրուէ իր հերմակ լոյսն հըրազեղ:

Խիտ ցախերուն մէջտեղէն, կով մ'յաղթամարմին եւ խաղաղ՝  
Յամբաբար վեր կ'ելլէ, գրլո՛ւխը հօհելով ծանրօրէն,  
Ու վեհութեամբ մը մեծաշուք, արձակելով աջ ու ձախ  
Քաղցրը նայուածք մը զոր կարծես վրճիտ խոհեր կ'օրօրեն:

Կանգ կ'առնէ պա՛հ մը համբուն վրայ զոր կը լեցնէ իր պարարտ  
Հրզօր մարմնով, ու կը նայի հեռուն, ծովին, երկրնքին.  
Հեղ մ'իր ռունգո՛վը կը ծրծէ սուլող հովի՛կը գըւարթ,  
Ու բառաչիւն մ'իր թոքերէն կը բարձրանայ՝ լա՛յն, խորին...

Յետոյ, նորէն տատանելով կոտորները գալարուն,  
Իր կողերը կը մըտրակէ կարճ ազիո՛վը բարակ,  
Ու կը քալէ կը հեռանայ, երերցնելով իր լեցուն  
Ճերմակ ծիծերն որ կը կախուին իր լայն ուժեղ փորին տակ:

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

Թուրք Գրականութիւն

## Զ Գ Է՛, Մ Ի՛ Շ Ի Ն Ե Ր...

— Ծայրն այդպէս սուր ու երկաթէ՛ ծեծածդ ի՞նչ է անդադար:  
— Ասկէ դաշոյն պիտի շինես:

— Մի՛ շիներ, շո՛ւտ, ձգէ՛ վար:

Չե՞ն բաւեր դեռ կարիճներու այսքան թոյներն յորդազեղ,  
Չե՞ն բաւեր դեռ գազաններու ժանիքներ սուր եւ հատու,  
Չե՞ն բաւեր դեռ մեր ձեռքերուն սա գործիքներն ալ ահեղ՝  
Վէրքեր բացող, հոգիներու սպառնացող, մահատո՛՛ւ...:  
Նայէ մարած սա հնոցին՝ որ բոյնն է դարձեր սարդերու.  
Նայէ սա խեղճ վատուժ տղուն՝ որ կեցեր է գլխահակ,  
Նայէ սա թարմ այրի հարսին՝ խուժդուժ հազով տառապուն,



Նայէ մեռնող սա խեղճ մարդուն՝ շղթաներու հեւքին տակ,  
 Եւ նայէ սա ծերուկ կնոջ՝ որ ձիւնի մէջ է արդէն .

Բոլոր ասոնք զայն պատրաստող ձեռքերն ընդ միշտ կ'անիծեն:

Այդ երկաթէն՝ զոր բռներ ես, ուրա՛գ շինէ, բարեկա՛մ,  
 Ասոնցմէ ալ ծեծէ կացին, ու գործիքներ՝ անոնցմէ,  
 Ձեռքի մուրճդ թող բահ շինէ, շինէ՛ բրիչ, շինէ՛ գամ,  
 Բայց միայն թող զա՛յն չշինէ, թող չշինէ՛, չշինէ՛ . . . .:

**ՄԷՀՄԷՏ ԷՄԻՆ**

**ՄԷՀՄԷՏ ԷՄԻՆ.**— Թուրք քնարը քիչ անգամ միայն հնչած է ժողովուրդին համար, այլ միշտ եղած է ազնուապետական՝ թէ՛ իր




արուեստովն ու լեզուովը, թէ՛ իր նիւթովն ու ձգտումովը: Սակաւաթիւ են թուրք գրողներ, որոնք ուզած ըլլան արուեստով ու լեզուով, զգացումով ու ձգտումով հոգեկան կապ հաստատել հասարակութեան խոնարհ խաւերուն հետ:

Մէհմէտ Էմին մէկն է ասա այդ սակաւաթիւներէն:

Պէտք է ըսել որ ամբողջ դարաշրջան մը բացած է Էմին պէյ թուրք բանաստեղծութեան մէջ, ինքն ըլլալով առաջին անգամ անոր մեծ յեղաշրջողը, — քերթողութիւնը տանելով դէպի ժողովուրդը եւ իր երգերուն

ամբողջ յոյզը, կեանքը եւ շունչը քաղելով տառապող եւ անտեսուած հոգիներէն: Կենդանի, վճիռ եւ նոր գեղեցկութեամբ օժտուած լեզու մը՝ որ արդիւնք չէ ոչ աղքատ մտքի, ոչ չքաւոր զգացումի. ընդհակառակը, երեւութապէս միայն պարզ արուեստի մը միջոցով արտայայտող ամէնէն փափուկ զգացումը, ամէնախոր գորովը եւ ճշմարտապէս զմայլելի բանաստեղծութիւն մը: Ահա յատկանիշները Էմին պէյի քնարերգութեան: Մէհմէտ Էմին գրած է բազմաթիւ քերթուածներ թուրք պարբերականներու մէջ:





## Դ Է Պ Ի Պ Օ Մ Պ Է Ի

Երբ աշխարհում մեղաւորները, վատերի թիւը աւելանում է անմեղ, բարեպաշտ մարդկանց թւից, Աստուած բարկացած՝ թափահարում է երկրագունդը, շարժ և ժայթքում առաջ բերում, որպէս զի յիշեցնէ մահկանացուներին, որ նրանք կը պատժւին ամէն անգամ երբ կը խախտեն բարոյական հաւատարակչութիւնը տիեզերքի. — այսպէս է ասում հարաւային Իսպանացում Պոմպէյի ու Հերկուլանումի կործանման առթիւ տարածւած մի հաւատալիք...

Ո՛րքան միամիտ իր պարունակութեամբ, բայց և սրբանքնական: Նա չի վրդովեցնում ձեզ իր կոպտութեամբ ու գռնկութեամբ, քանի որ գիտէք թէ նա պատկանում է այն հեռաւոր ժամանակներին, երբ մարդկութիւնը, ի դէմս իր հոծ զանգւածների՝ իր պատենական չրջանն էր ապրում: Եթէ այսօր, գիտական մտքի 2000 ամեայ յառաջդիմութիւնից յետոյ, ամէնալուսաւոր կենտրոններում անգամ, հասարակական որոշ խաւերի մէջ ծաղկում են դեռ ամէնակոպիտ սնահաւատութիւնները, եթէ քաղաքակրթութեան կենտրոն — Պարիզում «ուսեսալ», «գիտուն» հոգևորականութեան ներկայացուցիչը, ժան Գուժոնի բազարում ծաղած աղիտաւոր հրդեհի հանդէպ, ձեռքերը երկինք էր բարձրացնում և աղաղակում ասւլաւային պատի մասին — ի՞նչպէս զարմանալ, որ ամբոխային տրամաբանութիւն այդպիսի պարզամիտ եղանակով է լուսաբանել բնական աղէտները՝ գրեթէ Յիսուս Նազովրեցու օրով... Եւ այն էլ ս՛րպիսի աղէտներ... Ամբողջ քաղաքների բնաջնջումը մի խորհրդաւոր, անյայտ ուժի, մի տխուհի սասանումներից, որի անունն է հրաբուխ...

«Պոմպէացիք զւարթ ու անհոգ՝ աշխատնքի վրայ էին — այսպէս է ասում պատմութիւնը — նրանք զբաղւած էին հասարակական շէնքերի վերանորոգումով, երբ յանկարծ օգոստոսի 25ի կէսօրին (79 թ. Քրիստոսից յետոյ) Վեզուվ լեռը

սկսեց դուրս ժայթքել քարերի, մոխրի, եռացող ջրի մի հեղեղ, որի տակ և թաղւեցին նրանք: Միաժամանակ հեղեղը կրճատեց Հերկուլանուսը և մի շարք ուրիշ շրջակայ գիւղեր: Երեք օր տեւեց այդ զարհուրելի ջրհեղեղը... Աղէտին դո՛հ գնաց ի թիւս այլոց հուշակաւոր Պլինիուսը: Նրա որդին, հազիւ հազ աղատւած իր մօր հետ՝ այսպէս է նկարագրում այդ անօրինակ կատասարօֆը.

«Ամպերը դահալիժւեցին դէպի երկիր, ծածկեցին ծովը և Կապրի կղզին և Միզենում լիւնաշղթան... Մայրս աղերսում է ինձ՝ որ իմ փրկութեան մասին մտածեմ, որ ինքն ուժ չունի ինձ հետեւելու, բայց որ երբեք հանգիտա չի մեռնի, եթէ ապահով չլինի իմ մասին: Ես բռնում եմ նրա ձեռքից և բռնի սանում իմ հետս... Մոխիրը արդէն սկսում է թափւել նաև մեզ վրայ, յետ եմ նայում... Թանձր ծուխը մեր կողմն է սլանում, և հեղեղի սէս ծածկում գետինը: Մեծ փողոցում մարդիկ ահագին բազմութեամբ առաջ են նկատում, իրար հրճելով, մենք հեռանում ենք այդտեղից, և ահա խաւարը այնքան թանձրացաւ, որ թւում էր թէ անլուսին, անասող գիշեր է, կամ թէ մենք փակւած ենք օր ցերեկով մի մութ նկուղում: Լսում էր միայն կանանց հեծկատոցը, երեխաների լացն ու աղաղակը, տղամարդկանց յուսահատ մռնչիւնը: Մէկը իր հօրն էր կանչում, միւսը իր որդուն կամ ամուսնուն, եւ իրար ճանաչում էին միայն ձայնի վրայ: Ոմանք մահ էին աղաղակում մահւան երկիւղից իսկ, կոչ էին անում ասուածներին, տանջալի հարցը շրթունքների վրայ՝ արդեօք ասուածներ գոյութիւն ունէի՞ն... Ամէնքն էլ հաւատացած էին թէ դա վերջին գիշերն էր, յաւիտենական, ճակատագրական գիշերը, որ պիտի կրճատէ ողջ աիեղերքը: Իսկ ե՞ս... Ես ևս գիտէի, որ «աշխարհի վերջն» էր հասնում և պատրաստւում էի մեռնելու»...

«Շատերը կարծում էին — ասում է մի այլ ականատես, Դիօ Կասուս, — թէ Տիտաններ են հրապարակ եկել, որոնք իբր թէ երևում էին ծխի, ամպի մէջ, սուլում էին ու որոտում... Մարդիկ փախչում էին խառն ի խուռը դէպ ի ամէն կողմ,



ամանք նեաւում աներից փողոց, ուրիշները՝ փողոցներից տուն . մի մասը թաշում էր ծովի վրայից դէպի հեռաւոր ապաստաններ և ամէնքը տարտամ կերպով հաւատում էին , թէ արեւելիքը նորից դառնում է մի քաօս և պիտի ջնջւի կրակի ուժով : Հերկուլանում և Պոմպէի խաղառ աւերակցին , այն ժամանակ , երբ փողովուրդը նստած էր թաաբօնում : Մոխիր թափուկ այնպիսի չափերով , որ քամին տարաւ նրան մինչև Աֆրիկա , մինչև Եգիպտոս ու Սիրիա , տարաւ մինչև Հոօմ , ուր օդը լցւել էր մոխիրով և արեգակը մթապնել» . . .

Ահա՛ այդ վիթխարի աղէտը ախանաատեաների վկայութեամբ : Եւ ահա նրա դժբախտ զոհը փուած մեր առջև , որպէս լքաւեր մի գերեզմաննոց : Մանում ենք Պոմպէի : Կրակը չի լափել ամէն ինչ : Բարեբախտաբար շատ բան է մնացել , մասամբ բացւած , մասամբ դեռնի տակ : Հեռու մի ծայրում պեղումները շարունակւում են : Նրանք սկսել են 1748 թւականին միայն . մինչ այն՝ ամբողջ դարերի ընթացքում մեռած քաղաքը եղել է մոռացւած : Հետքերը դանւել են պատահաբար և 1748ից մինչև մեր օրերը դեռ կէսն է բացւել քաղաքի : Ամբողջութիւնը լոյս աշխարհ հանելու համար՝ անհրաժեշտ է , ենթադրաբար , դեռ 70 տարւայ աշխատանք :

Ո՛րպիսի գանձեր գիտութեան , հնագիտութեան համար : Ո՛րպիսի առատ , անսպառ սղրիւր ծանօթութիւնների՝ մարդկութեան հեռաւոր անցեալի մասին : Ուսումնասիրեցէք ուշի ուշով այդ հոյակապ փլատակները , գտէք նրանց մէջ նախնական կեանքի արտայայտութիւնները և վերարտադրեցէք անցեալը . . . Դժուարին գործ , բայց — հնարաւոր ու հրապուրիչ , որ շարունակում է սգեւորել հնագէտներին :

Գերեզմանային մթնոլորտ . . . Մենակ սրտատում ես մի խուլ անկիւնում և մի անորոշ զարգանդ է գալիս վրադ . . . Նայում ես , նայում ամբողջապէս ուշադրութիւն դարձած , մէկիկ մէկիկ զննում ես բազմաատեակ առարկաները , առանց յաճախ կարողանալու լնդհանուրը լնդգրկել , և ի վ՛րջոյ խորատուզում ես մի թախճալի մոռացութեան մէջ . քեզ

դարձեալ պաշարում են տխուր, մեղամաղձոտ խոհերը, և դու  
դարձեալ սլանում ես երեւակայութեան թեւերի վրայ դէպի յետ...

Ինչպէս որ մարդ իր անհատական անցեալի, թէ-  
կուզ և տխուր, սրտամաշ անցեալի դրուագները սի-  
րում է միշտ վերարտադրել իր յիշողութեան մէջ և երկար,  
անվերջ որոճալ՝ այնպէս և նա իր տեսակի, ամբողջ մարդկու-  
թեան հին օրերի, զարհուրելի փորձութիւնների արտասուեցնող  
ակտարանները դիտում է միշտ մի առանձին, մի վշտալի քաղց-  
րութեամբ ու անդորրութեամբ, և երկար, երկար դեգերում է  
ազօտ յուշերի ու զգացումների մէջ. — կեանքի ահեղ ու յա-  
ւիտենական ողբերգութիւնն է որ կաշկանդում է նրա որոնող  
մտքը՝ համաշխարհային ցանցանքն է որ ծառանում է նրա  
առջեւ՝ անխուսափելի, ճակատագրական, յուսահատական...  
Երջանկութեան անկայունութիւնը, փառքի ու հմայքի ողբեր-  
գական ու սրտաճմլիկ ունայնութիւնը... Ո՛ւՖ...

Այս հոյակապ տաճարների ու թատրոնների շուրջը, այս  
մարմարեայ աներում ու լայնարձակ հրապարակներում կրքինն  
կեանք կար, ևս ուն ու հարուստ, պարզ ու ինքնատիպ : Այդտեղ  
արդէն հնադարեան դրամատիրութիւնը ծաւալում էր իր ներգո-  
յակ, ճակատագր. զարգացումով, արտօնաւոր փոքրամասնու-  
թիւնը լողում էր առատութեան ու շւայտութեան մէջ. հաճոյա-  
պաշտ փիլիսոփայութիւնը ծաղկում էր, բարգտուածում. պատրիկ-  
նիւր սարքում էին հսկայական խրախճանքներ, ստուկնիւր գեա-  
նատարած սպասաւորում էին իրենց տէրերին, սուսերամար-  
տիկները մրցում էին ամենի գաղանների հետ, կրկէսը արիւ-  
նտում էր և օդը թնդում խելագար աղաղակներից...  
Արեւելեան ախորժակները թռիչք էին առնում սանձարձակ,  
երօսը սաւառնում էր միահեծան ու տիրական, ջահէլ կանայք  
պար էին բռնում գեղեցկութեան աստուծոյ առջեւ, աստ-  
ւածները խրախուսում էին հաճոյամոլ մահկանայուններին և  
կապուտակ հորիզոնները ժպտում էին յաւերժօրէն. թռչուն-  
ները ճախր էին անում մշտադալար ծառերի շուրջ, ողջ բնու-  
թիւնը ծափ էր զարկում երջանկութեան գինարբուքներին...

Այսօր — ամայո՛ւթիւն , անէո՛ւթիւն : Ոչ մի շշուկ . միայն խլէզներն ու քարաթոթոշները դուրս են գալիս արեւին տալու իրենց գարշելի մարմինները , երջանիկ՝ որ յաւիտենական գարուն են վայելում մեռած քաղաքում :

Պատրիկներ և սարկութիւն , անսանձ վայելք և շարքաշ կեանք ու թշուառութիւն . . . Թուում է թէ անկարելի է ցաւով յիշել կործանումը մի այդպիսի համայնքի՝ այքւան տխուր յատկանիշներով : Միմիայն զգւանք և ուրիշ ոչինչ . . . Սակայն այդպէս չէ որ պէտք է դատել պատմութիւնը : Սարկական կարգերն ևս , մարդկային հոծ զանգւածների անսանային հպատակութեամբ , հանդիսանում են իբրև անհրաժեշտ ու խոշոր հանգրուան քաղաքակրթութեան զարգացման ճանապարհի վրայ : Մարդկային առաջադիմութեան մեծ հարցի դիմաց կարծես արդարանում է Հեզելի մի խօսքը , որ խելացի ու բանաւոր էր հռչակում (Was wirklich ist wernünftig) այն ամէնը , ինչ որ իրական է , այն ամէնը , ինչ որ կեանքը ծնում է իր դարաւոր էւօլիցիայի մէջ . խելացի , բանաւոր է , քանի որ անհրաժեշտ է . . . Սարկութիւնը իր բոլոր գարշանքներով հանդերձ մի իրական հաստատութիւն էր , ապա ուրեմն նա անհրաժեշտ էր , ապա ուրեմն և բանւոր էր , անտարակոս : Այդ հաստատութեան շնորհիւ էր որ հնում , հասարակական փոքրամասնութիւնը , ազատւած միանգամայն սպրուտի մտահոգութիւններից , կարողանում էր նւիրել մտաւոր բարձր մարզանքների , — գիտութեան , փիլիսոփայութեան , գեղարուեստի : Եթէ ամէնքն էլ հարկադրուած լինէին իրենց ամբողջ կեանքն անցկացնել Քրիստոսի քանի կողմից ու շարքաշ աշխատանքի մէջ — հազիւ թէ հին աշխարհը տար մեզ Արիստոտելներ ու Պլատոններ , ապա և գիտութեան ու գեղարուեստի բազմաքանակ սպասաւորներ (\*) : (Դեռ մի կողմն ենք թողնում այն՝ թէ ի՞նչ անսովոր թուիչք

(\*) Այլ խնդիր է , եթէ տեխնիկան , արդիւնագործութեան միջոցները , այն աստիճան կասարեւագործուած լինէին , որ հնարաւոր լինէր (ինչպէս այդ կը լինի սպա-գայ ընկերվարակ օն հասարակութեան մէջ) համեմատաբար շատ քիչ սեխատելով համեմատաբար շատ արտադրել :



հողորդեց սարուկների բեղմնաւոր աշխատանքը այն ժամանակեայ արդիւնաբերութեան ) :

×

Փողոցները՝ նեղլիկ ու քարքարոտ, տեղ տեղ լայնութիւնը՝ մի քայլ միայն : Նրանք սահմանուած չեն մեծ շարժման, հաղորդակցութեան համար : Այնտեղից չէին անցնում խոշոր կառքեր, ծանրարեւոտ : Մթերքները — ձէթ, ցորեն, զինի և այլն — փոխադրում էին սովորաբար սարուկների մէջքերի վրայ, սարուկը և՛ կառք էր, և՛ գրաստ . . .

Չեմ նկարագրում մանրամասնօրէն ո՛չ այս տներն ու տաճարները, ո՛չ այս բայօղևայ թատրոններն ու հոկայական ամֆիթատրը, որի մէջ տեղաւորել են, ինչպէս ասում են, 20,000 մարդ : Երկարականի աներ են եղել համարեա բոլորը, երկրորդ յարկը ոչնչացել է, առաջինը կիսափլատակ, կանգուն է մնացել : Մուտքը տանում է դէպի մի լայն բակ, շրջապատւած ամէն կողմից, տան կենտրոնն է դա, ուր սովորաբար եղել է մի պարտէզ, ցանած ծաղիկներով, պարտէզի մէջ մի շատրւան, իսկ նրա շուրջը, հարուստ աներում, — մանրիկ արձաններ : Մի քանի աներ առանձնապէս աչքի են ընկնում իրենց մեծութեամբ ու գեղեցկութեամբ : Նշանաւոր է Վիսսիի տունը, բացւած համեմատաբար նոր ժամանակներում ( 1894 — 95 : ) Այնտեղ յատկօրէն դուք կը տեսնէք պօմպէեան կեանքի մի քանի բնորոշ կողմերը :

Բաղնիքներ՝ համարեա բոլոր տներում, և՛ տաք, և՛ ցուրտ, զարդարւած ամէն տեսակ նկարներով և օժտւած ամէն տեսակ յարմարութիւններով : Բաղաքաքայլները այդտեղ երկար ժամեր էին անցկացնում, բաղնիքը նրանց համար ոչ միայն լւացւելու, մաքրւելու տեղ էր, այլ և մի տեսակ սալօն մարմնամարդութեան :

Շատ տներում կանանց առանձին բաժին է յատկացրւած, մի քանի սենեակներ, իսպառ կարուած հաղորդակցութիւնից փողոցի հետ, — մի տեսակ հարեմ . . . Կարող էք երևու-

կայել, թէ ինչ են ներկայացնում իսկական ստրուկներու կացարանները, — փոքրիկ, անլոյս նկուղներ, ուր նրանք թափւում էին ահագին լնտանիքներով . . .

Սիրուն է պատերի զարդարանքը: Անհամար են պէս-պէս նկարները մարմարի վրայ: Ոչինչ այնքան զարդացած չէ եղել Պոմպէում, ինչպէս գեղանկարչութիւնը: Տաանեակ հազարաւոր պատկերներ են գտնուել, բաւական եղծւած տարաբախտաբար, որոնք դուած են Նապօլի մուզէում: Այնտեղ կարելի է տեսնել նրանց և մօտաւոր գաղափար կազմել պոմպէական կենցաղի մասին: Այնտեղ դուած են և Պոմպէում գտնուած բրօնզէ արձանները, որոնք հելլենական արուեստի դմայելի այտադրութիւններից են, որոնք ներկայացնում են մարդկային մարմնի իդէալը, կատարելութիւնը և ցոյց են տալիս թէ ո՞ր ստատիճան նրբութեան էր հասել կենդանարանութեան ըմբռնումը այն հեռաւոր անցեալում:

Պատկերների մեծագոյն մասը երօտիկ բնաւորութիւն ունի: Կան բազմաթիւ նկարներ թէ՛ մուզէում և թէ՛ Պոմպէի մի քանի հարուստ տների մէջ, որոնք չեն ցուցադրւում ի տես Վամէնքի: «Համբերութեան» տների փողոցում (Via Lupanare) ձեզ ցոյց կը տան մի քանի մութ խուցերի մէջ, երբեմն նոյն իսկ փողոցի պատերի վրայ, նկարներ ու պէս-պէս նշաններ, որոնց դէմ կատաղաբար ըմբոստանում է վայելչութեան ժամանակակից հասկացողութիւնը: Հռչակաւոր փիլիսոփայ Տէնը, այնու ամենայնիւ, խորհուրդ է տալիս չըմբոստանալ, որովհետեւ — հասկանում է նա — այն նախնական ժամանակներում մարդիկ ապրում էին եւաւաճալն բնութեան, — սարդ, անխարդախ զգացումներով ու ըմբռնումներով: Այն ինչ որ մեր ժամանակակիցներին թւում է գայթակղութիւն ու սրբապղծութիւն, — նրանց համար մի պարզ, անմեղ երեւոյթ էր: Նրանց աչքում մարդկային բոլոր գործօնները հաւասարապէս կարեւոր էին ու անհրաժեշտ, մարմին ու հոգի հաւասարապէս իրաւունք ունէին խնամք պահանջելու և ցուցադրուելու և վայելելու . . .

Այդ բարոյականը աիրապետող էր հին հռոմէական շրջ-

Չանուամ: Քրիստոնէութիւնը եկաւ իբրեւ անսիրեզ, հակադրութիւն և հալածեց բարոյական այդ տեսակ հասկացողութիւնները, սահմանելով ճգնաւորական խիստ կենցաղ, կուսակրօնութիւն, նգնութիւն: Ապա եկաւ դարեր յետոյ՝ նորագոյն դրամասիրութիւնը, որ բացասեց ճգնաւորութիւնը և վերստին հաստատեց բարոյական նախնի ուժիմը իր սանձարձակ հաճոյապաշտութեամբ ու անծայր մոլութիւններով:


Հաստատութիւն, բացասութիւն, բացասութեան բացասութիւն... Ե՞րբ արդեօք կը հասնի իդէալական սինթէզը, համագրութիւնը...


Մի փոքրիկ մուզե էլ ունի Պոմպէին: Շատ բան չկայ այնտեղ, բայց ինչ որ կայ, բաւական է՝ զգացնելու համար 79 թւի անօրինակ աղէտքին ուժը: Այդտեղ տեսնում էք այն փոքրաթիւ քարացած կմախքները, որոնք գտնուել են պեղումների միջոցին. (մարդկային զոհերի թիւը հաշոււմ են մօտ 2000)... Ահա մի կծկծւած շուն, որ պատկերացնում է սարսափելի հոգեւարքը: Մի ջահէլ աղջիկ, մատնին յատակ երևում է մատի վրայ: Երկու կին՝ մին տարիքոտ, միւսը ջահէլ՝ կողք կողքի ընկած... Թերեւս մայր և աղջիկ: Ահա մի աղամարդ փուլած երեսն ի վայր, մի ուրիշը՝ ձախ կողքի վրայ:— Ահա մի շարք այլ կենդանիներ:— Բոլորն էլ հրաշալի կերպով պահպանել են իրենց գծերը, բոլորն էլ մնացել են նոյն դիրքում, որի մէջ եղել են վերջի վայրկեանին, երբ լափող հեղեղը շնչասպառ է արել նրանց...

Բաւական է: Աչքդ յոգնում է և միտքդ թմրում հազարաւոր այլազան տպաւորութիւնների տակ: Արդէն իսկ երեկոյանում է: Վերադառնում եմ Նապօլ, հաստատ սրոշումով՝ նորից այցելել Պոմպէին, նորից խորասուզուել ու մոռացուել այս մենաւոր աւերակների ծոցում:

ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ







ՊԷՐՉՈՎԷՆ ՆԻ ԻՐ ՆՐԱԺՆՏՈՒԹԻՒՆԸ

Նկար Կ. Պալեստրինի

## Գ Ի Ի Ղ Ի Ս Ճ Ա Մ Բ Ա Ն

Կեանքի նաւակն հետք չը թողուց իր ետին,  
 Մոռացումը առաւ ինձմէ ամէն բան,  
 Հին երազներս ամպերու պէս կ'անհետին,  
 Յիշատակն ալ կ'անցնի երգի մը նման...:

\*  
 \* \*

Հոգիս սակայն կը յիշէ քեզ,  
 Դո՛ւ, ծաղկաւէտ գիւղիս ճամբան,  
 Ուր քայլի՛նք գառնուկս ու ես,  
 Դէպի պուրակն ու բուրաստան,  
 Անմեղութեան երազին պէս:

Ու քովիկէդ դողդողագին  
 Սահէր աղուոր վնիտ առուն,  
 Մերթ կամուրջին ու մերթ մարգին  
 Տակ պահուելով կ'երթար հեռուն,  
 Ամայութեան իբրեւ ոգին:

Բարակ, նիհար, քանի մը ճիւղ,  
 Կը զատուէին վտիտ բունէդ,  
 Մին՝ կը դիմէր դէպ՝ անշուք գիւղ,  
 Կը տարածուէր, կ'ըլլար անհետ,  
 Բոլորելով խրճիթն ու հիւղ.

Մին՝ մագլցէր բլուրն ի վեր,  
 Միւսը կ'իջնէր ձորակէն վար,  
 Ուր, ուռենին կու տար ստուեր,  
 Ու սրինգն իր երգը կու լար,  
 Զոր կրկնէին գարնան հովեր:



Չմբան ալ երբ ձիւնն սպիտակ  
 Կը գտնէր մեզ շուրջ թոնիրին,  
 Անհետ կ'ընէր իր ծալքին տակ  
 Մեր հին գիւղին վտիտ ուղին,  
 Ինչպէս մարգերն ու մանիշակ:

\*  
 \* \*

Տաշուած քարէ, ուղիղ ճամբան,  
 Կը տանի զիս արդ դէպ ծովափ,  
 Կը ճմլուի հոգիս սակայն  
 Մտածումով մը հրրատապ,  
 Ու կը թռչիմ հին մանկութեան:

Հոն փակ թէեւ, սակայն աղուոր  
 Ու երփնագեղ իր հորիզոն,  
 Հմայքներով լի բիւրաւոր,  
 Անմեղութի՛ւնը խայտար հոն՝  
 Ճամբուն վրայ ոլոր մոլոր:

Մին մագլցէր բլուրն ի վեր,  
 Միւսը կ'իջնէր ձորակէն վար,  
 Ուր ուռենին կու տար ստուեր,  
 Սրինգն ալ իր ե՛րգը կու լար,  
 Զոր կրկնէին գարնան հովեր...:

\*  
 \* \*

Կեանքի նաւակն հետք չթողուց իր ետին,  
 Մոռացումը առաւ ինձմէ ամէն բան,  
 Հին երազներս ամպերու պէս կ'անհետին,  
 Յիշատակն ալ կ'անցնի երգի մը նման...:


Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ

**ՌՈՒԲԷՆ ՈՐԲԵՐԵԱՆ.**— Ռուբէն Որբերեան կրած է անգլիական գրականութեան, յատկապէս Պայրընի ներգործութիւնը: Օժ-



տուած լայն երեւակայութեամբ ու  
տարապայման զգայնութեամբ մը, իր  
քերթուածներն ալ թաթաւուն են եղած  
նովանքիզով:

Իր բանաստեղծութեանց լաւագոյն  
կտորները ունին զգացումներու խորու-  
թիւն եւ պայրընեան թախծութեան թա-  
փանցող շունչը: Հրատարակած է Յիշա-  
սակաց Ծաղիկներ նախափորձը եւ Ծփակի-  
կներ:



## Գ Ա Մ Շ Ի Ն Ո Ղ Ն Ե Ր Ը

... Կայծեր կը ցայտեն մթութեան մէջ, շտապօրէն կը  
ցայտեն, ինչպէս երկաթեայ անապառ հրթիռէ մը, ինչպէս  
հուրքի հղօր շատրուանէ մը. կը ցայտեն արագաթիւ, անոնք,  
կայծերը, անընդհատ, բազմապատիկ, ճաճանչուելով, ու սնձ-  
րեւելով լուսեղինաբայ մթութեան մէջ՝ խոր ու թանձ-  
րամած՝ գամ շինողներու հէգ ու թշուառ գործա-  
նոցին:

Եւ մուրճը կ'ինջնէ, մուրճերը կ'ինջնեն սալին վրայ ահա-  
ւոր ու դղրդագին բախումներով, կ'ինջնեն զայրագին ու վրի-  
ժառու թափով, մոլեգնութեամբ բարբարոս կամքի մը,  
սանձարձակ ուժգնութեամբ անզսպելի կորովի մը, խրոխտա-  
զատ ուժգնութեամբ գործաւորի բազուկին, կ'ինջնեն, կ'ինջնեն  
մուրճերը սալին վրայ թնդագին՝ ատրաշէկ երկաթը հարուածե-



լով, կռելով զայն, մինչև որ նորաստեղծուի բուհուը սրածայր:

Եւ չե՛ն յոգնիր գործաւորները որ գամը կը շինեն: Դէմ դիմաց կեցած խաւարաչին գործանոցին խորը՝ հնոցին երկու կողմը՝ երկուքն ալ, իրենց ատրուշանին քով — որուն առջև իրենց պաշտամունքը կը կատարեն Աշխատանքի Չերմուռանդութեամբը, — դէմ դիմաց կեցած անոնք, տեգոյն՝ բայց խստադէմ, լուռ՝ բայց հրաբորբ իրենց աշխոյժով՝ ինչպէս գամը զոր կը շինեն և ինչպէս կրակեաղը որուն շուրջն են ահա, անտարբեր՝ բայց մտածկոտ, անտեսանելի մութին մէջ բայց հաստատ իրենց դիրքին վրայ, հրեղէն երկաթի կտորը կը հանեն քուրայէն սալին վրայ, իրենց բազուկները կը շարժեն ահա, իրենց մուրճերը կը բարձրացնեն ու կ'իջեցնեն կշռօրէն, համաչափ շարժումներով, յաջորդաբար, կը հարուածեն շիկակարմիր երկաթը՝ սալին վրայ, — և կայծերը կը ցայտեն, շտապօրէն ու անվերջօրէն կը ցայտեն, ինչպէս վայրի պողպատեայ հրթիռէ մը, ինչպէս մշտարթուն խառնարանէ մը, յանկարծօրէն կը ծագին, ու աստղօրէն կը թռչին խաւարին մէջ:

Ու ամէն անգամ որ հնոցին բայը կ'արժարծի և կայծերը կը ցայտեն ծլարձակ ու՝ տենդագին, մութը կը տկարանայ անոնց դէմքին վրայ, դողդոջ թերալոյսի մը մէջ կը յայտնուին դիմազծերը — անոնց դէմքերը գունատ ու արտմագին: Մէկը տարէց է, միւսը՝ երիտասարդ: Իրենց զրկանքին գիտակցութենէն դժնեցած՝ բայց անով իսկ հպարտ, իրենց լքուած անկիւնին մէջ մինակ՝ բայց արհամարհոտ, գամ շինող գործաւորները անխոնջ են իրենց խոնջէնքին մէջ, և եթէ դժբախտ են իրենց Տառապանքին մէջ, իրենց Կամքի մրճեայ ձայներուն տակ կը խեղդեն իրենց Դժբախտութիւնն ու Տառապանքը, և Դժբախտութեան ու Տառապանքի ծոցէն արձանացող Կամքին ուժովը կը շինեն, կը ստեղծագործեն իրենց գամերը: Կայծերու շողը կ'երթայ լուսաւորել իրենց դէմքը, վասն զի լոյսը՝ մութին մէջ անոնց մոռցուած ու անտեսանելի հերոսութիւնը սրբացնել կ'ուզէ. վասն զի Տառապանքի, Կամքի ու Ստեղ-



ծագործ Աշխատանքի բովէն Հերոսութիւնը կը յառնէ :  
Կ'իջնեն մուրճերը , կը հարուածեն մուրճերը , կը թնդան  
մուրճերը ահա՛ գամ շինողներուն , — հրաշէկ երկաթէն կը ցայ-  
տեն կայծերը , և , անոնց ու հնոցին ստեղծած շողքերուն ընդ-  
մէջէն , կը լուսաւորուին դէմքերը ահա Աշխատանքի Խոնարհ  
Հերոսներուն :

ԳԵՂԱՄ ԲԱՐՍԵՂԵԱՆ



**ԳԵՂԱՄ ԲԱՐՍԵՂԵԱՆ.—**

Գրական երիտասարդ սերունդի ա-  
ռաջին ներկայացուցիչներէն մէկը՝  
որուն գրականութիւնը կը ներկա-  
յացնէ ձեւի մեծ գեղեցկութիւն եւ  
զգացումի խորութիւն : Հակումով  
խորհրդապաշտ , բայց իր էութեանը  
մէջ իրապաշտ , Գեղամ Բարսեղեան  
կը մնայ բանաստեղծ եւ գրագէտ  
միանգամայն :

Ճրանական Գրականութիւն

**Շ Ղ Թ Ա Ն Ե Ր Ը**

Ուզեցի որ ամէն բան սիրեմ , դժբախտ եմ սակայն ,  
Որովհետեւ վիշտերուս պատճառները բազմացան .  
Անթիւ կապեր տրտմաւէտ , դիւրաբեկ ու երերուն  
Հիմա հոգիս կը կապեն տիեզերքի իրերուն :



Ինծի համար ամէն բան հմայք մ'ունի անսփոփոխ ,  
 Ճշմարտութիւնն իր փայլը եւ անձանօթը իր քօղ ,  
 Ոսկի ծիր մը լուսաշող սիրտս արեւին կը կցէ,  
 Ու աստղերուն ալ բարակ , երկար թելեր մետաքսէ :

Նուագներուն մելանուշ ծփանքը զիս կը կարթեն ,  
 Ու մատներըս կը քաղեն թաւիշ հեշտանք մը վարդէն ,  
 Ժպիտ մը լոկ բաւ եղաւ իմ աչքերըս թովելու ,  
 Ծրթունքս մէկ համբոյրով կաշկանդուած են հլու :

Կեանքս կախուած կը մնայ այդ թելերէն դիւրաբեկ ,  
 Սիրած հազար իրերուս կապուած գերի մըն եմ հէք .  
 Եւ կըզգամ թէ կը խլուի մաս մը ինծմէ , միշտ խորէն ,  
 Երբ անոնք նուրբ շունչէ մը կը սարսուան մեղմօրէն :

Թարգմ. ՓԱՅԼԱԿ

ՍԻԻԼԼԻ ԲՐԻԻՏՕՍ

## ԸՍԷ՛ ԻՆԾԻ, ԻՆՉ ԿԱՅ

Մ Օ Ր Ս Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ն

Հիմա , հինգ-վեց ամիս եղաւ որ ալ չեմ տեսներ զինքը ,  
 բայց անկէ ի վեր վայրկեան մըն ալ չեմ մոռցեր զինքը , չեմ  
 մոռցեր ո՛չ իսկ մէկ վանկը իր մեղրիկ բառերուն , իր աղօթքի  
 բանաձևն ալ միտքս է : Աս աղօթքը պզտիկ Զաւէնիս սովրե-  
 ցընելու ջանք մը կ'ընէր ա՛ն ատեն , ուր անոր ու միւսներուն  
 համար իր գիտցածներէն սիրունիկ հէքեաթ մը կը վերջացնէր :

Մօրս աղօթքն ալ կը յիշեմ , այո՛ , ինչպէս անոր լուռ ,  
 անձայն առաքիհնութիւնները կը յիշէի , որոնց միայն մէկուն  
 պատմութիւնը , օր մի , այնքան եղական ու լուսաւոր վկայու-  
 թիւն մը պիտի մշտնջենաւորէր թէ՛ գեղի հայ կի՛նն ալ ի՛նչ  
 ունի երբեմն որ աշխարհք չգիտեր , աշխարհք տակաւին հաս-  
 կըցած չըլլար անոր այն բիւրեղիկ հայեացքէն ու բարութենէն ,

որ կը մտածես թէ՛ անկասկած՝ աւուր կրօնքէն ու ներշնչում-  
ներէն ալ շատ առաջ տեղ առած ըլլան անոր յստակ ու ջինջ  
խորքը կուրծքին, որ դուրսէն շատ անգամ սեւաներկ քուր-  
ջերու կտորուանքներով ծածկուած է:

«Տէ՛ր, բարի՛ լոս, բարի՛ Քրիստոս, չարը տանիս, բա-  
րին բերես, աշխարհի խաղաղութիւն, թագաւորաց հաշտու-  
թիւն պարգևես: Դուն կամի կարողն ես (\*), Աստու՛ած, կա-  
պուտիկ Աստուա՛ծ, կարճ գիշեր, երկայն ցորեկ, կարճ լաց,  
երկայն խնդուք, կարճ նեղութիւն, երկայն հանգիստ, կարճ  
աղքատութիւն, երկայն վայելք: Դո՛ւն, ի՞նչ բանի կարող չես,  
որ չի տաս: Լեռները քեզնէ կը դողան, երկինք, գետինք քու  
ահէդ կը սասանին, բարի՛ լոս, բարի՛ Քրիստոս, քու լո՛ս  
երեսիդ դուրզան, հաւատօքս հաւատամ քեզի, երեսանկեալ  
կ'երկրպագեմ, զաւակներուս հոգուն առողջութիւն, բանին,  
դործերուն ալ աջողութիւն տո՛ւր, մուխէննէ՛թին մուխթած  
չընես, ինձի ալ բարի մահ մի ու շէն արքայութիւն մը պար-  
գևես, մեր մեղքերը մեր երեսին մի՛ բերեր, մեղ մեր մեղ-  
քերովը մի՛ պատժեր, մեր ննջեցեալներուն հոգեւորնուն հա-  
մար ալ մեր աղօթքն ու խնդրուածքը մի՛ մերժեր, քեզի ինք  
ապաւիներ, Տէ՛ր, բարի՛ լոս, բարի՛ Աստուած, են. են...»

Ու վերջին մըն ալ իր երեսը խաչակնքելով՝ «Հայր մեր»ը  
վերջին ըսելիքը կը պահէր ու լմնցած կ'ըլլար աղօթքը:

Անկէ վերջ, պղտիկները իր բոլորալիքն առած՝ երբ ժա-  
մէն կը դառնար, պղտիկներուն միշտ, որովհետեւ ես ա՛լ  
ձանձրացեր էի լսելէ, իր անպատճառ գիշերուան տեսած  
երազները պիտի պատմէր, երազներ, որոնք մեկնել, բացատ-  
րելու համար իր շատ վստահ ու խորհրդաւոր կերպերն ունէր,  
որ կ'ըսէր թէ՛ իր ճիշտ համոզումներուն ու փորձառութեան  
վրայ հիմնուած են: Այնպէս նախապաշարուեր էր թէ՛ լուսա-  
դէմի երազները առ հասարակ ուշ կամ կանուխ ո՛ր է է կեր-  
պով իրականութիւններ պիտի դառնային: Ամէն օր ալ աս էր

(\*) Կամք ընող ու կրցողն ես:



ըսածը, ու կամաց կամաց, ես այ ան օրուան պատահելիքէն նախապէս բան մը հասկցած ըլլալու համար, իմ նոյն իսկ չուզելովս այ սովորութիւնն ըրած էի գաղտուկ մը իր երեսին նայիլ, ուր եթէ զուարթ ժպիտ մը նշմարէի, ինչ որ ստոյգ նշանը պիտի ըլլար ան գիշերուան գեղեցիկ երազին, ես այ թեթեւ ոտքով մը գործիս կ'երթայի, հակառակ պարագային իմ այ բերանս չէր բացուեր կարծես:

Ձիս այ այնչափ նախապաշարեր էր իր երազներուն պէսպիսութեան վրայ, նոյն ատեն ճշմարիտ որ ամբողջ տունեցիները նախապաշարեր էր:

«Կարմիր ձին մը՝ հեծուած ո՛ւր է մէկերնէս, գեղեցիկ բաղդի մը մօտաւորութիւնը կը ցուցնէ, կ'ըսէր. աղբ՝ սրժի կսկծանք, եղբ՝ թափուած հագուստի վրայ՝ գեթ բան, հաց եփել, ճերմակ, կսկուռ հաց ունենալ տունը՝ վերահաս յաջողութեան հաւաստիք, պատարագ, քահանայ՝ կռիւ աղմուկ տունին մէջ, հարսնիք, թմբուկ՝ տունին մէջ մահ անպատճառ, ակուայ քաշուած կամ փրթած անցաւ՝ կորուստ ազգականի, էգիին մէջ ծառ, ծաղիկ ու վաղք մաքուր ջուրի՝ բարի երազ, ևն...»

Նախապաշարում թէ ինչ մը, շատ անգամ իրաւ է որ ան երազներուն մէկ կամ միւսը իրականացուած տեսնելու ճախարակեր անակնկալը կ'ըլլար լացածնիս, աղուոր տեսիլքի մը ետեէն սպասուածն այ շատ քիչ պատահական, կամ շատ ուշ կու գար վերջապէս ամսեղ խնձիղ մը ծնցնել դէմքերու վրայ:

Հետաքրքրական մըն այ ան որ գեղը երբ թողած էր ու ա՛յ քովերնիս քաղքենուհի մը կ'ապրէր, այնքան երկար տարիներ անցնելէ վերջն այ՝ իր բոլոր երազներուն յատակն ու ամբողջ ձոյլը, գեղը կը սլահէր շարունակ: Գեղը՝ իր էգիին ծառաներուն հետ, գեղը՝ իր քայած ու քաղած դաշտերուն մէջ, գեղը, միշտ գեղը, ուր անպատճառ գիշերը պիտի ճամբորդէր թեւերովը իր երազներուն, ու կանուխ լուսաբացին այ անկէ դարձած ականատեսի մը ստոյգ մանրամասնութիւնովը պիտի պատմէր բաները:

Հոն , այն ինչ կողմ , այն ինչ կանանչ առուակը նոյն կը մնայ եղեր , որ ցամքած չէ տակաւին , գեղին մէջտեղը՝ Փիլոննց խաչը աւերակներու տակ խեղդուած , Ս . Դաւիթի ալ՝ գեղէն դուրս՝ լքուած ուխտատեղի մը մնալը կ'ողբար : Այսպէս իր կարգին կարմիր Եկեղեցիին վրայ կ'ըսէր բաներ մը , անոր մօտերը այն պատմական Աւագը տեսած կ'ըլլար որ աղբիւրի աղջկան հէքեաթը գիտէ :

Գիշերուան մը ճամբորդութիւնով դէպի գեղը , անկէ վերջ , բայց շատ շահեկան յուշքեր մը կը բերէր , որոնց սկիզբը մինչև իր հարսնութեան օրերու երջանիկ առաւօտը կ'ըլլար : Առաւօտը Չատիկին , որ ստին իր գիւղացի կնկան մը զարդեղէններուն պէսպիսութիւնովը գեղեցկացած՝ թռչքոտ վաղքով մը Չատիկի պարին կ'երթար ու անպատճառ ինք պիտի ըլլար պարերգին առաջնորդող երգիչը : Իր ձայնին , այնքան դմայլելի իր ձայնին հմայքով , երբ քներգ մը կամ պարերգ մը կ'ըլլար սկսածը , ըսածը , օձերն ալ նոյն ատեն իրենց ծակերէն դուրս՝ մտիկ ընելու կ'ելլային :

×

Մա՛յր , բոլոր ասոնք ու աս պատմածներուդ ամէնայետին մանրամասնութիւններն ալ՝ միտքս են տակաւին , որոնք սուենին պղտիկներն ալ չեն մոռցեր ու անոնք մէկ մէկ սովորեցուցած աղօթքիդ պէս կը յիշեն . բայց քանի որ կ'ըսեմ , միայն գիշեր մը ճամբորդելով , այնքան մը տեղեկութիւններ կը բերէիր գեղէն որ այնքան հեռու կը մնար մեզմէ , հիմա ալ պահ մը վեր ա՛ռ գլուխդ ու ըսէ՛ ինծի , ի՞նչ կայ անդին :— Ի՞նչ ունիս գերեզմանէն , որ հունա այնքան մըն ալ մեր մօտ կը գտնուի : Ըսէ՛ , մա՛յր , վստահ եղիր որ չպիտի մերժեմ լսել , երբեք չպիտի ձանձրանամ ըսելիքներէդ : Երազներուդ պէս արդեօք գերեզմանէն անդիիններն ալ նորէն ճրջմարիտ իրականութիւններ պիտի հռչակես թէ բացարձակ ոչընչութիւն պիտի ըսես պարզապէս : Հարցուկի մը պատկառոտ սարսուանքներուն մէջ ու միշտ անհուն կարեւորութիւնով մը

պիտի լսէի քեզ , մա՛յր , ո՞րն է երազը , սա արեւի՞նը թէ՛ վաղ-  
ուան ստուերներուն կեանքը , որուն դուն ամիսներէ ի վեր  
սկսուածքն ըրեր՝ դեռ մեզի բան չես ասուած , մեզ յուսահատ  
սպասանքի մը մէջ սգաւորներ կը պահես . բայց դուն այսչափ  
երկար չէիր քնանար : Մա՛յր , դուն աքաղաղին ճիշովը ընդոստ  
արթնցող մը , հիմա ամպերը կը պոռան ականջիդ ու բնաւ չես  
շարժիր , վեր չես առներ գլուխդ , աղօթքի չես վազեր , երազ-  
ներդ իրականութի՛ւն թէ ինչ , չես յայտներ մեզի . ու կը զար-  
մանամ թէ՛ ի՞նչպէս կրնաս համբերել :

Այսչափ երկար ու խորունկ քուն քնանալով , մինչեւ  
հիմա աշխարհ մը ըսելիք կը կախէիր շրթունքէդ . թզուկ  
գիշերի մը կեանքէն ամէնքն ալ . հիմա ի՞նչ պիտի կըր-  
նայիր խօսիլ ան մտ գիշերին կողքէն , անոր սոսկալի ու  
խաւարակուռ ալքերէն , ուր մտար ու մարեցիր ճրագը  
եանւէդ :

Առաջին օրը ի՞նչպէս ճամբորդեցիր , որո՞ւ հանդիպեցար ,  
ո՞ւր ըրիր հանգիստի վայրկենային դադարդ , դուն որ արդէն  
չունչէդ կը կանչէիր :

Այն պահուն , ուր հողն ու քարը բուռ բուռ քու մար-  
մինդ խիող սնտուկին վրայ թափուելով՝ գոռ թնդիւն մը կը  
լեցնէր գերեզմանդ , ի՞նչ խորհեցար արդեօք , հէ՛ք մայր ,  
մեղաւոր հնդկուհի՞ մը կը թաղեն ըսիր , թէ մարդիկ մահուան  
վրէժը կ'առնեն այնպէս հողին տակ քեզ՝ քու մարմինդ ծե-  
ծելով :

Դուն սակայն զգացի՞ր ասոնք , անդրադարձա՞ր ան  
եղածներուն . երդո՞ւմ քեզ որ ես աւաղահատ մըն ալ չնետեցի  
վրադ , այդպէս թող ձեռքս փրթէր , մա՛յր , թող այդ տեսակ  
յիմար սովորութեան մը համակիրպութիւնով աջ ձեռքէս , աջ  
աչքէս զրկուէի : Քարերը , հողերը քու կուրծքիդ նետուած ,  
իմ գլխուս կ'իյնային արդէն , գերեզմանիդ քովէն դէպի տուն  
ես արդէն ճշմարիտ մեռել մը դարձայ : Առաջին մուտքը  
դժուար քայլափոխ մըն է եղեր կ'ըսեն , հոգի՛ս , աս կողմէն  
այն կողմը սաւառնող հրեշտակներն ալ անխուսափելի այդ



դժուարութիւններէն պիտի անցնին եղեր անպատճառ, հոգ մի՛ ըներ: Դուն միայն հիմա ըսելու եղիր թէ՛ ի՛նչ տեսար այդ մուտքի դուռնէն անդին, գտա՞ր, համբուրեցի՞ր այն քուկիներդ, որոնց կը փափաքէիր հէնց թերատուերը տեսնել:

ԹԼԿԱՏԻՆՑԻՆ

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆ-ՆԱՆ** (ԹԼԿԱՏԻՆՑԻՆ).-- Գաւառական գրականութեան առաջին ինքնատիպ վարպետը, որուն յատկանիշները կը մնան՝ իր պատկերալից եւ գունագեղ ոճը, գաւառական ու գեղջկական բարբերու ամէնէն հարազատ նկարագրութիւնը եւ զուարթախոհ հեղինակութիւնը: Ունի թատրերգութիւններ, ոմանք լոյս տեսած պարբերականներու մէջ, ոմանք ալ դեռ անտիպ:



## ՈՐՍԿԱՆ ԱՂԲԷՐ

— «Որսկան աղբէ՛ր, սարէն կուգաս,  
Սարի մարալ կը փրնտուես.  
Ասա՛, եա՛րաբ, դուն չրտեսա՞ր  
Իմ մարալըս, իմ բալէս:

«Դարդի ձեռքից սարերն ինկաւ  
Իմ արեւըս, իմ բալէս.  
Գրլուխն առաւ քարերն ընկաւ  
Իմ ծաղիկըս, իմ լալէս...»

— «Տեսայ, քուրի՛կ, նախշուն բալէդ  
Կարմիր-կանանչ է կապեր.



Սիրած եարի համբուրի տեղ  
Սըրտին վարդեր են ծըլեր»:

— «Որսկան աղբէ՛ր, ասա՛, եա՛րաբ,  
Ո՞վ է հարսը իմ բալիս,  
Ո՞վ է գըրկում չոր գըլուխը  
Իմ մարալիս, իմ լալիս:»

— Տեսայ, քուրի՛կ, դարդոտ բալէդ  
Քարն է դըրեր բարձի տեղ.  
Անուշ քընով տաք գընդակն է  
Կըրծքում գըրկեր եարի տեղ.

«Սարի մարմանդ հոմն է շոյում  
Ճակտի փունջը մարալիդ,  
Ծաղիկներն են վըրան սըգում,  
Ա.գիգ բալիդ, խեղճ լալիդ»...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

**Ա. ԻՍԻՏԻՍ ԻՍԱՀԱԿԵԱՆ.**— Ա.Լեւոնիս Իսահակեան, իր բանաստեղծութեան մէջ հետեւած է ժողովրդական երգերու ձեւին, ոգիին եւ արտայայտութեան եղանակին. այս պատճառով ալ իր քերթուածներուն մէջ ամէնէն աւելի յաջողները անոնք են որ կը վերաբերին մանաւանդ հովուերգական քնարերգութեան:



Ա. Իսահակեան ուզած է հայ աշուղական քերթողութիւնը նորոգել եւ արդիացնել. բան մը՝ որուն մէջ յաջողած է մեծ չափով: Այս ուղղութեամբ մշակած իր քերթուածներուն մէջ կը բաբախէ ժամանակակից Հայութեան սիրտը՝ իր գալարումներով ու հրճուանքով, իր ազատասիրական երազներով եւ հերոսներու սուգով: Իսկ իր ենթակայական քերթուածներուն մէջ՝ կ'երեւի դրոշմը նիցչեականութեան, գերմարդուն փառաբանու-



Թիւնը, եւ ըմբոստուլթիւնը ընդդէմ պայմանադրական կեանքին: Այդ փիլիսոփայութիւնը հետզհետէ զարգանալով եւ աստիճանաբար աճելով Իսահակեանի մէջ, կը հասնի իր վերջին գործին՝ Արու-Լարա-Մահարիի մէջ, արդէն իսկ անիշխանականութեան:

Իսահակեան իր քերթուածները ամփոփած է Երգեր ու Վերեր հատորին մէջ: Վերջին հրատարակութիւնն է Արու-Լարա-Մահարին՝ ուր իր տաղանդը, արուեստը եւ քնարերգութիւնը կը հասնին բարձրագոյն գեղեցկութեան մը:

### Անգլիական Դրականութիւն

## Մ Ա Ն Ո Ւ Ա Ն Պ Ա Տ Ի Ժ

### Ր Ի Տ Ի Ն Կ Ի Կ Ա Խ Ո Ւ Ո Ղ Ը

#### Ա.

Ա՛յ չէր հագներ իր ծիրանի պարեգօտը, որովհետեւ արիւնն ու գինին կարմիր են, և իր ձեռքերուն վրայ արիւն ու գինի կար՝ երբ գտան զինքը մեռնողին հետ, այն մեռած խեղճ կնոջը հետ՝ զոր սիրած էր և զոր սպաննած իր անկողնին մէջ:

Կ'երթար, կալանաւորներուն մէջէն, խիտա հնամաշ գորշագոյն զգեստով մը, գլուխը քիփքիէ գլխարկ մը. իր քայլը թեթեւ ու զուարթ կ'երևէր, բայց երբեք չտեսայ մարդ մը՝ որ այնքան ներուժութեամբ դիտէր լոյսը:

Երբեք չտեսայ մարդ մը որ այնքան ներուժ աչքով դիտէր կապոյտի այն պզտիկ վրանը՝ զոր բանտարկեալները երկինք կ'անուանեն, և իւրաքանչիւր ամալ՝ որ կը նաւէր ու կ'անցնէր արծաթեայ առագաստանիով մը:

Կ'երթայի ուրիշ պատժապարտներու հետ ընտրին միւս մէկ գաւիթը, և ինքնիրենա կը հարցնէի թէ այս մարդը՝ մե՞ծ յանցանք գործած է թէ փոքր, երբ ձայն մը ետեւէս մրմնջեց կամացուկ. անիկա պիտի կախեն:

Ա՛խ, Քրիստո՛ս, կարծես նոյն իսկ բանտին պատերը,



յանկարծ , երերացին , և ևրկինքը գլխուս վրայ պողպատէ կի-  
զիչ սաղաւարտի մը փոխուեցաւ , ու թէպէտ ևս ալ պատժա-  
պարտ մը ըլլայի՝ բայց ա՛յ իմ պատիժս չէի կրնար զգալ :

Միայն գիտցայ թէ ի՛նչ հետապնդող մտածում էր որ կը  
փութացնէր իր քայլը , և թէ ինչո՛ւ համար ցորեկուան տաղտ-  
կալից լոյսին կը նայէր ս՛յնքան ներուժ աչքով մը . մարդը  
սպաննած էր իր սիրածը , և ասոր համար մեռնելու էր :

Եւ սակայն ամէն մարդ կը սպաննէ իր սիրածը , և թող  
ամէնքը գիտնան ասիկա . ոմանք կը սպաննեն ատելութեան  
նայուածքով մը , ուրիշներ ողորձիչ խօսքերով , վատ մարդը՝  
համբոյրով մը , կտրիճը սուրով մը . . .

## Բ.

Վեց շաբաթ , մեր ղինուորը պարտեցաւ բակին մէջ՝ իր  
չատ հնամաշ գորշագոյն զգեստովը , գլխուն վրայ իր քիֆերէ  
գլխարկը . և իր քայլը թեթեւ ու զուարթ կ'երեւար , բայց  
երբեք չի տեսայ մարդ մը , որ այնքան ներուժ կերպով սեւե-  
ռէր լոյսին :

Երբեք չտեսայ մարդ մը , որ այնքան ներուժ աչքով դի-  
տէր կապոյտի այն պզտիկ վրանը՝ զոր բանտարկեալներ եր-  
կինք կ'անուանեն , և դէպ ի իւրաքանչիւր թափառայած ամպ՝  
որ ետևէն կը քաշէր իր խառնիխուռն գեղմը :

Չէր գալարեր իր ձեռքերը , ինչպէս կ'ընեն այն անմիտ  
մարդիկը՝ որ կը համարձակին յոյսը , այս անիծեալ զաւակը ,  
վերակենդանացնել ջանալ սեւ յուսահատութեան նկուղին  
մէջ . միայն արևը կը դիտէր անիկա ու կը խմէր առաւօտ-  
եան օդը :

Չէր գալարեր իր ձեռքերը , ո՛չ կու լար և ո՛չ իսկ կը  
վշտակրէր . այլ կը խմէր օդը , իբր թէ անիկա պարունակած  
ըլլար մեղմացուցիչ զօրութիւն մը . լիաբերան կը խմէր արևը՝  
իբր թէ գինի ըլլար անիկա :

Եւ միւս գաւիթին մէջ պտրտող ուրիշ պատժապարտներն  
ու ես՝ մոռցանք թէ մենք ալ մեծ կամ չնչին յանցանքներ

դործած էինք, և տխրամած դարմանքի նայուածքով մը կը դիտէինք այն մարդը՝ որ պիտի կախուէր:

Ու տարօրինակ բան էր տեսնել որ կ'անցնի անիկա այնքան թեթեւ ու այնքան զուարթ քալուածքով մը. և տարօրինակ բան էր մտածել թէ նման պարտք մը ունի վճարելիք:

\*  
\* \*

Վերջապէս մեռած մարդը ա՛լ չստրտեցաւ ամբաստանեալներուն մէջ, և իմացայ որ ոտքի վրայ կը կենար այն սոսկալի սև անտուկին մէջ ուր դատաստանի կը ներկայանան ամբաստանեալները, և թէ երբևէ Աստուծոյ այս քաղցր աշխարհին մէջ ա՛լ չպիտի տեսնէի իր դէմքը:

Երկու վտանգի մատնուած նաւերու պէս՝ որոնք փաթորիկին մէջէն կ'անցնին՝ ճամբուն վրայ զիրար խաչաձեւեցինք մենք. բայց ոչ մէկ նշան տուինք, ոչ մէկ ջնշին բառ ըսինք. իրարու ըսելիք բառ չունէինք, որովհետև մէկ մէկու հանդիպեցանք ո՛չ թէ սուրբ գիշերու ան, այլ ամօթալից ցորեկուան մէջ:

Բանտի պատ մը կը շրջապատէր մեզ երկուքս. երկու անժառանգներ էինք մենք: Աշխարհքը մեզ իր ծոցէն եւ Աստուած իր հոգածութենէն դուրս նետած էր և մեղաւորին սպասող երկաթէ ցանցը մեզ ձգած էր իր թակարդին մէջ:

Գ.

Քալելով ծանր ու օրօրուն՝ դաւիթին չորս բոլորափքը՝ յիմարներու ցուցահանդէսը կը կատարէինք: Ի՞նչ փոյթ. գիտէինք թէ սատանայի դասակ մը կղած ենք, և անիլուած գլուխներն ու շղթայախապ ոտքերը ցնծալից դիմակաւորութիւն մը կը ձեւացնեն:

Կը փրցնէինք, ծուէն ծուէն, կպրապատ շուանը՝ մեր մաշած և արիւնլուայ կողուններովը. կը շփէինք դռները, ու կը լուայինք տախտակամածները, ու կը մաքրէինք փայլուն խաղխամները, և, խմբովին կ'օճառէինք տախտակեղէնները՝ դոյլերը աղմկալից իրարու բախելով:

Պարկերը կը կտրէին և քարերը կը կոտորաէին ու փոշնկից ցնցոտին կը դարձնէին, իրարու կը բախէին փայտեայ պնակները ու կը դարգաչէին շարականներ, ու քրտինք կը թափէին աղօրիքին վրայ, բայց իւրաքանչիւրին սրտին մէջ սարսափը պահուրսած էր հանդարտօրէն :

Այնքան հանդարտ էր այդ սարսափը որ, իւրաքանչիւրօր կը սողար՝ խոտերով շրջափակուած ալիքի մը պէս, ու մոռցանք մենք այն դժնդակ ճակատագիրը՝ որ կը սպասէ դիւրախարին ու խարեւրային, մինչև որ անգամ մը տարապարհակ աշխատանքէ մը վերադարձին, բացուած գերեզմանի մը քովէն անցանք :

Բաց բերնով մը՝ դեղին ծակը կը յօրանջէր կենդանի կերի մը համար, տիղմն անգամ արիւն կը պահանջէր այլայլած ասֆալտէ դաւիթին մէջ, ու հասկցանք թէ դեղնագոյն լուսադէմէն առաջ մեզմէ մէկը պիտի երերար կախաղանին վրայ :

Հոգինիս ուշադիր մահուան, շիտակ վերադարձանք Զարհուրանքին ու ճակատագրին, դահիճը՝ իր փոքր պայուսակովը՝ անցաւ օտքերը քսքսելով՝ խաւարին մէջէն, ու ամէն մէկ բանտարկեալ կը դողդղար սողոսկելով իր թուագրուած գերեզմանին մէջ :

\*  
\* \*

Այդ գիշերը, դատարկ նրբանցքները լեցուեցան զարհուրելի կերպարանքներով, և Երկաթէ Քաղաքին մէկ ծայրէն միւսը կ'իմացուէին գաղանի քայլեր՝ զորս կարելի չէր լսել, և աստղերը խափանող խաղխաղմներուն մէջէն կարծես ճերմակ դէմքեր հետաքրքրութեամբ ներս կը նայէին :

Անիկա կը պառկէր մէկու մը պէս որ կը քնանայ ու կ'երազէ մարգագետնի մը կակուղ խոտին վրայ, պահապանները անոր քնացած ատենը՝ կը քննէին զայն, ու չէին կրնար հասկնալ թէ ի՞նչպէս մարդ այդքան խաղաղ քունով մը կրնայ քնանալ դահիճին մօտիկ :



Բայց քուն չկայ՝ երբ պէտք է լան անոնք՝ որ երբեք արցունք թափած չեն տակաւին . այսպէս, մենք — դիւրախարհներս, խարեւրաններս, խարդախներս — անվերջանալի այդ անքնութիւնը ունեցանք, և իւրաքանչիւր ուղեղի մէջէն միւսի մը տանջանքը սահեցաւ մտաւ՝ սողոսկելով իր վշտի թաթերուն վրայ :

Ամբողջ գիշերուան մէջ, ծնրադիր, աղօթեցինք, իրրու դիակի մը սուգը կարապետող յիմարներ : Կէս գիշերուան՝ խռովայոյզ տեղեւները՝ մեռելակառքի մը տերեւափունջերուն կը համանէին, և խղճի խայթին համը սպունգի վրայի քացախին պէս էր :

Գորշ աքաղաղը խօսեցաւ, կարմիր աքաղաղը խօսեցաւ, բայց լոյսը չէր ցաթեր դեռ . և սարսափի ծամածուռ կերպարանքներ կծկուեցան այն անկիւններուն մէջ՝ ուր կը կենայինք մենք, ու խաւարին մէջ զբօսնող ամէն չար միտք մեր առջև կատակել կը թուէր :

Առտուան հովը սկսաւ հեծեծել, բայց գիշերը տեւեց . իր հսկայ հորին վրայ խաւարի ստայնը սողոսկեցաւ լիջաւ՝ երբ ամէն մէկ թել հիւսուեցաւ . և մինչդեռ կ'աղօթէինք մենք՝ արեգակին արդարութեան վախը կ'առնէր մեզ :

Վերջապէս, տեսայ որ խաղխամներուն ստուերը՝ արճիճէ շինուած ցանցակերպ վանդակի մը պէս՝ դո՛ւրս ցցուեցաւ տախտակէ անկողնիս դիմացը գտնուող կրածեփ պատին վրայ, և գիտցայ թէ տեղ մը աշխարհի մէջ Աստուծոյ սոսկալի արշալոյսը կարմիր էր :

Ժամը վեցին ամէն մարդ իր խցիկը աւելց . ժամը եօթին ամէն ինչ հանդարտ էր . բայց հզօր թռիչքի մը սարսուազին սլացքը կարծես լեյուց բանալը . որովհետեւ, մահուան տէրը ռառուցիկ շնչառութեամբ ներս մտած էր սպաննելու համար :

Կը սպասէինք որ ժամը ութ զարնէր : Մեր լեզուները թանձր ու այլայլած էին, որովհետեւ ժամը ութին հնչիւնը՝ ճակատագրին այն հարուածն է որ մարդ մը կը նզովէ, ու ճա-

կատագիրը շատ դիւրին խաղ մը կը գործածէ ամէնէն լաւ մարդուն համար ու ամէնէն չարին համար :

Գալիք նշանին սպասելէ դատ ընելիք ուրիշ բան մը չունէինք . այս պատճառով , լուսկեաց հովիտի մը քարէ բաներուն պէս նստած էինք անշարժ և համր . բայց իւրաքանչիւրին սիրտը կը զարնէր ուժգին ու արագ՝ թմբուկին վրայ զարնող յիմարի մը պէս :

Յանկարծական բախումով մը , բանտին ժամացոյցը խորտակեց սարսուղին օդը , և ամբողջ բանտէն անկարող յուսահատութեան հեծեծանք մը բարձրացաւ՝ իր աղբին մէջ նստած բորոտի մը աղաղակին պէս՝ զոր կը լսեն զարհուրած և դատիւրները :

Եւ , ինչպէս որ մարդ ևրաղի մը բիւրեղին մէջ կը տեսնէ ամէնէն զարհուրելի բաները , տեսանք սև գերանէն կախուած իւզաղօծ պարանը , ու լսեցինք այն աղօթքը՝ որ դահիճին օձիքը խեղդեց բարձրաձայն աղաղակի մը մէջ :

#### Գ.

Ժամասացութիւն չըլլար այն օրը որ մարդ կը կախեն . պատարագիչ քահանային սիրտը շատ շատ հիւանդ է , կամ իր դէմքը խիստ շատ գունատ , կամ իր աչքերուն մէջ գրուած կայ այն բանը՝ զոր մարդ տեսնելու չէ :

Այսպէս մեզ փակուած պահեցին մինչև կէսօրուան մօտ , և այն ատեն , զանգակը հնչեց . ու պահապանները , իրենց շաշող բանալիներովը՝ բացին իւրաքանչիւր ունկնդրոցաւոր խցիկ , ու երկաթէ սանդուխէն վար իջանք ծանրաբար , ամէն մէկերնիս իր որոշ դժոխքէն դուրս :

Դուրսը , Ատուծոյ արձակ , քաղցր օդին մէջ գացինք , բայց ո՛չ մեր սովորական կերպովը . որովհետև մէկուն դէմքը ճերմակ էր վախէն , և միւսին դէմքը գորշ էր , ու ևրբեք չտեսայ տխուր մարդիկ որ այնքան սաստիկօրէն դիտէին լոյսը :

Երբեք , չտեսայ տխուր մարդիկ որ այնքան ներուժ աչքով մը դիտէին՝ կապոյտի այն պղտիկ վրանը , զոր մենք բանտարկեալներս երկինք կ'անուանէինք , այն իւրաքանչիւր

անտարբեր ամպը՝ որ կ'անցնէր երջանիկ ազատութեամբ :

Կապիկներու կամ անկանոնօրէն գծագրուած նկատելով  
աստղադարձուած, ճիւղադային հանդերձանքով հտպիաներու  
պէս, լռիկ գացինք լպրծուն ասվալտէ բակին չորս բոլորաթիքը .  
լռիկ կ'երթայինք շուրջանակի, ու մարդ բան մը չէր խօսեր :

Լռին՝ կ'երթայինք շուրջանակի, և, իւրաքանչիւր պա-  
րապ ուղեղի մէջ սոսկալի բաներու յիշատակը կը խորասուզ-  
ուէր սոսկալի հովի մը պէս, ու սոսկումը կը յածէր ամէն  
մէկուն առջեւ, ու սարսափը կը սողար՝ ետեւէն :

Պահապանները կը սիգային ասղին անդին՝ պահպանելով  
անասուններու իրենց հօտը . անոնց համազգեստները նոյի նոր  
էին, կիրակնօրուայ հազուսանին . բայց մենք գիտէինք թէ  
ի՛նչ բանի համար հազեր էին ասոնք, դատելով իրենց ոտից-  
ներուն անմար կիրէն :

Որովհետեւ հոն ուր մեծարաց գերեզմանը փորեր էին,  
երբեք ուրիշ գերեզման չկար, միայն քիչ մը հող ու աւազ՝  
բանտին զգուելի պատին քով, ու փաքը կոյտ մը անմար կիր  
որպէս զի մարդը պատանք մը ունենայ :

Որովհետեւ պատանք մը ունի այդ դժբախտը, անոր  
նման զոր քիչ մարդիկ կրնան ուզել . բանտի բակի մը խիտ  
ներքնակողմը, վարը, ամէնամեծ ամօթով մերկ՝ կը հանգչի,  
երկու ոտքերն ալ շղթայակապ, փաթթուած բոցէ կտաւի մը մէջ :

Եւ ամէն ժամանակ, անմար կիրը կը լափէ իր միսն ու  
ոսկորները, բայց սիրտը անդադար կը կրծէ :

## Ե.

Ռիտինկի բանտին մէջ, քաղաքին մօտիկ, վատանուն  
գերեզման մը կայ, և հոն կը հազչի բոցին ակուաներէն լափ-  
լիզուած թշուառ մը . կիզիչ պատանքի մը մէջ կը հանգչի, ու  
իր գերեզմանը անուն չունի :

Եւ հոն, մինչեւ որ Քրիստոս կանչէ մեռելները, թող  
հանգչի խաղաղօրէն . երբեք պէտք չկայ անմիտ արցունքներ



չռայլելու կամ չնչասպառ հեծեծանքներ արձակելու . մարդն սպաննած էր իր սիրածը . և ասոր համար է որ մեռաւ :

Ու ամէն մարդ կը սպաննէ իր սիրած բանը . թող ամէնքը հասկնան ասիկա . ոմանք կը սպաննեն ատելութեան նայուածքով մը , ուրիշներ փաղաքշիչ խօսքերով , վասը՝ համբույրով մը , կտրիճը՝ սուրով մը :

ՕՍԿԱՐ ՌԻԱՅԼՏ

## Ի Մ Կ Ե Ա Ն Ք Ը

Օր պիտի գայ, որ այս կենաց  
Բեռն ուսերէս թօթափելով  
Պիտի ննջեմ հետ սիրելեաց՝  
Որոց հալիմ ես կարօտով :

Ահ, գերեզմանս այնտեղ ըլլար  
Ուր Վոսիորի դարեւանդներ  
Ծաղկապրսակ եւ միշտ դալար  
Թանան յալիս իրենց պատկեր :

Եւ այն ծաւի ծաւի ալեակք  
Քային փշրել շիրմիս վրրայ,  
Ու հոն նոճեաց մէջէն կաթէր  
Ճերմակ մահկին լոյսն արծաթեայ :

Եւ թէ սպիտակ պատանքներով  
Նստէր հոգիս եզրն անդ շիրմին,  
Լըսէր հեռուանց դանդաղ թեւով՝  
Ծովաշրջիկ զերդ ձկնորսին :

Աւանդ, աչքերս յուսախնդիր  
Զո՛ւր ծանօթներս պիտի հայցեն .  
Մահուան հողմովը ցանուցիր,  
Ով գիտէ ո՛ր ափուկնք ննջեն :



Նոր մարդկութիւն մը՝ նորայոյս ,  
 Նոր-նոր արցունք կամ ժրպիտներ ,  
 Անկարեկի՛ց իմ ցաւերուս՝  
 Շիրմիս նայուածք մ'իսկ չեն նետեր :

Այլ անփոփոխ ըզքեզ միայն  
 Պիտի գտնեմ , ո՛վ մեծ բնութիւն ,  
 Եւ յայն անդունդ մոռացութեան՝  
 Պիտի ժպտիս ինձ միայն դո՛ւն :

ԹՈՎՄԱՍ ԹԷՐԶԵԱՆ

**ԹՈՎՄԱՍ ԹԷՐԶԵԱՆ** (1838-1909). — Ծագումով օտար, բայց դաստիարակութեամբ եւ հոգիով հայ, Թովմաս Թէրզեան եղաւ աշակերտը Վենետիկի դպրոցին, սնած հելլէն գրականութեամբ եւ դասական բանաստեղծութեամբ, մշակեց քնարական բանաստեղծութիւնը՝ յաճախ գրաբարախառն բայց կատարեալ լեզուով: Իր քերթուածները կը կրեն դրոշմը իսկական ներշնչման եւ խոր յուզումներու, եւ ինչ որ կը մնայ իրմէ որպէս քնարերգութիւն՝ կը կազմէ հայ Բանաստեղծութեան գեղեցկագոյն էջերը:

Թէրզեան մշակած է նաեւ թատրերգութիւնը՝ գրելով Արշակ Բ., Սանդուխտ, Յովսէփ Գեղեցիկ, Մահն Անճեղի, Մովսէս եւ Խոսրով Բ.:





## Գ Ի Տ Ո Ւ Թ Ե Ա Ն Վ Ճ Ի Ռ Ն Ե Ր

Ընթե՛րցող, կարելի է վաղը պիտի մեռնիս : Ի՞նչ պիտի ըլլաս մահուանդ վաղորդայնին : Չեմ խօսիր մարմնիդ վրայ . անիկա հագուստներէդ կամ մարմնիդ մնացորդները ծրարող պատանքէն աւելի կարեւորութիւն չունի : Չգեատներուդ նման, պատանքիդ պէս, մարմնիդ ալ պիտի տարբաղադրուի և զայն կազմող տարրերը պիտի երթան խառնուիլ բնութեան նիւթի մեծ շտեմարաններուն՝ օդին, հողին, ջուրին մէջ, սնուցանելու և աճեցնելու համար տունիկեր, բոյսեր՝ որոնք իրենց կարգին պիտի սնուցանեն կենդանիներ և քեզի նման ղգայուն մարդիկ :

Ահա դուն երէկ ծնար, այսօր կ'ապրիս, կը զգաս, կը շարժիս, կը սնանիս, վաղը մեռնելու համար :

Բայց ի՞նչ է կեանքը :

Տե՛ս, շուրջդ ամէն տեղ հնարաւոր բոլոր ձևերու տակ կեանքը գոյութիւն ունի և կը յայտնուի. բայց ո՞ւրկէ եկած է, ի՞նչ և ո՞ւր է իր ծնունդը :

Եղաւ ժամանակ մը երբ մարդկութիւնը գոյութիւն չունէր. այն ատեն երկիրը իր այսօրուայ ունեցածէն բոլորովին տարբեր դիրք և վիճակ մը ուէր :

Փոխանակ խմատաւն, աշխատատէր և գործօն կեանքի՝ որ այժմ իբր թատերալայր ունի երկրիս մակերեւոյթը. փոխանակ այս բազմամարդ քաղաքներուն, գիւղերուն, բնակավայրերուն. փոխանակ այս մշակուած դաշտերուն, այգիներուն և պարտէզներուն. փոխանակ այս ճանապարհներուն, շոգեկառքերուն, նաւերուն, գործարաններուն, պալատներուն, արձաններուն, եկեղեցիներուն. փոխանակ մարդկային անխանջ ժրաջանութեան՝ որով մարդիկ կը գործածեն բնութեան բոլոր զօրութիւնները, կը մանեն հողին խորերը, իրենց սահմանափակ ուղեղին մէջ պատասխան մը կամ լուծում մը կ'որոնեն երկնային աւեղծուածներուն, գաղտնիքներուն և կ'ուսումնարարեն տիեզեքի երևոյթները, — փոխանակ այս ամէնուն՝ հին



ժամանակները կային միայն վայրի և անթափանցելի անտառներ, գետեր՝ որոնք խոխոջալով, օձապտոյտ գալարումներով կը վազէին ձորերու մէջէն. կային նաև առանց հանդիսական հիացողի՝ հսկայ լեռներ, առանց գիւղի ձորեր ու հովիտներ, առանց երազանքի իրիկուններ, առանց վայելողի ասաղազարդ գիշերներ: Ո՛չ գիտութիւն, ո՛չ գրականութիւն, ո՛չ արհեստ, ո՛չ արուեստ, ո՛չ քաղաքականութիւն, ո՛չ քաղաքակրթութիւն, ո՛չ պատմութիւն, ո՛չ իմաստասիրութիւն, ո՛չ խօսք, ո՛չ իմաստութիւն, ո՛չ հանճար, ո՛չ դատողութիւն...

Երկրիս վրայ ապրող էակներ կը գտնուէին, բայց անոնք իրենց գոյութեան գիտակցութիւնը չունէին և կ'աշխատէին կամ աւելի լաւ է ըսել, «կը գործէին» առանց նայասակի: Այս կենդանիներէն կարելի է յիշել դանդաղ պտկաժանին (mastodonte) որ իր կոշտ ոտքերուն տակ կը ճզմէր ցանցառուտ վայրերու մէջ նորաբողբոջ ծաղիկները, հսկայ մեծագազանր (mégathérium), հոյագազանր (dinothérium), նոյն իսկ մարդոց նախահայրը նկատուած կապիկներ՝ որոնք արագութեամբ և հիանալի ճարպիկութեամբ ըլուրներու կամ ծառերու վրայ կը բարձրանային, և այլն: Մէկ խօսքով, Երկրիս երեսին վրայ կը գեռային տարբեր տարբեր կենդանիներ՝ ձուկեր, թռչուններ, կոկորդիլոսներ...

Եթէ մեր մոլորակին պատմութեան մութ խորերը քիչ մըն ալ թափանցելու ճիգ մը ընենք, պիտի հասնինք շրջանի մը՝ երբ Եւրոպայէն և միւս ցամաքներէն մեծ մաս մը և անկէ ալ շատ առաջ ամբողջ հողային մասը ջուրին տակ կը գտնուէին և այն ատենուան բոյսերն ու կենդանիները՝ գրեթէ ամբողջովին ջրային՝ արդի գտնուածներէն բոլորովին տարբեր էին: Կ'ուզէ՞ք մէկ քանի օրինակներ. լայն թեւերով դարհուրեցուցիչ մաշկամասներ, թռչող վիշապներ, հսկայ չղջիկներ, թանձրակաուցներ և ուրիշ շատեր, որոնք կամ կը թռչտէին օդին մէջ, տարածելով իրենց հսկայ մաշկաւոր անկարգելները, կամ ջուրին մէջ կը գահավիժէին՝ իրենց շարժումներէն հսկայ ալիքներ կազմելով: Կային նաև հրէշ մո-

դէսներ (որոնց գլխուն վրայ մինչեւ 2,072 ակոսները գտնուած են) որոնք կ'ոգեւորէին անտառներու միայնութիւնը, ուր հսկայ ծառեր, ծառանման պտերներ, կոնաբերներ օղին մէջ կը բարձրացնէին իրենց բրգաձեւ կատարները :

Այս զարմանահրաշ Էակները կը նմանին մարդկային երեւակայութեան արտագրած հրէշներուն, ինչպէս են շահապետը (դաշտերու շաստուած), կարճը (griffon), ծառանայը (hamdryade), խառնագազանները (chiméere), վամբիրը, հիտրան (եօթը գլուխով օձ), վիշապները, կերբերոսները, ևն. : Ասոնք իրական են և ժամանակով ապրած են անտառներու խորը կամ ուղիւններու անդունդը : Ասոնք ներկայ գտնուած են Եւրոպայի կազմութեան և տեսած են անհետացած դարերու մեծագործ տեսարանները . . .

Երկրիս ծնունդէն ի վեր ա՛յնքան միլիոն և միլիոն տաքիւններ յաջորդած են՝ որ մարդկային ամբողջ պատմութեան ժամանակամիջոցը կ'անէանայ այս հսկայ շրջանին առջեւ :

Եւ ի՞նչպէս չհետաքրքրուիլ արդի գիտութեանց հրաշալի յաղթանակներովը . երկրիս գերեզմանները պեղելով, գիտունը կարողացաւ կենդանացնել մեր ջնջուած նախահայրերը : Եւ ահա՛, անոնք տարիներու շրջանին մէջ հողէն դուրս կ'ըլլեն մարդոց ձեռքով կամ դիպուածով՝ մէկիկ մէկիկ, դանդաղօրէն, գլուխը հոս, ոտքը քիչ մը հեռուն, երբեմն անկատար, քայքայուած : Ջրհեղեղին ժամանակ՝ և անկէ առաջ կամ վերջ՝ քարացած դիակները լսեցին արդէն վերջին դատաստանին փողը, գիտութեան դատաստանին, և ահա ամբողջ բանակ մը մեր առջեւէն կ'անցնի, ոմանք տարօրինակ, այլանդակ, անճարակ, կարծես ուրիշ աշխարհէ մը կու գան և իրենց արձանական լուծեամբ կ'ըսեն մեզի .

— «Ահաւասիկ մենք, ձեր նախահայրերը . առանց մեզի, դուք գոյութիւն պիտի չունենայիք : Նայեցէ՛ք մեզի և տեսէք թէ ձեզի ծնունդ տուողներն ունի՞ն ինչ որ դուք ունիք : Այն աչքերը որոնցմով ամէնամեծներու և ամէնափոքրիկներու թագաւորութեանց խորերը կը թափանցէք, կը դիտէք բնութեան

հիասքանչ և զգլխիչ տեսարանները , ահա անոնց պարզը ,  
անոնց առաջին փորձերը մեր մօտ . և եթէ մենք չունենայինք  
այս պարզ աչքերը , դուք այսօր կոյր պիտի ըլլայիք : Ձեր  
ա՛յդքան փափուկ , ա՛յդքան ճարտար ձեռքերը առաջ եկած են  
այս մեր կոշտ թաթերու կատարելագործումէն . մի՛ խնդաք  
մեր թաթերուն վրայ , եթէ ձեր ձեռքերը կը գտնէք օգտակար  
և հաճելի , որովհետեւ առանց անոնց՝ ձեր ձեռքերը գոյութիւն  
պիտի չունենային : Ձեր բերանը , լեզուն , ախօաները նուրբ և  
սիրուն են . բայց ասոնք մեր երախներու , մեր կտուցներու ,  
մեր ժանիքներու բարեշրջումէն առաջ եկած են : Ձեր սիրտը  
կը բարախէ կանոնաւոր և խորհրդաւոր կերպով . այդ բա-  
բախումները ձեզի կը պատճառեն երբեմն այն տեսակ խոր և  
ներքին գոհունակութիւն , որոնց համար շատ ատեն ամբողջ  
աշխարհը պիտի զոհէիք , վայրկեան մը եթէ կարելի ըլլար զա-  
նոնք իրականացնել . արդ , ահա թէ ի՞նչպէս առաջին անգամ  
արիւնը մարմնին շրջանը կատարեց . ահա՛ առաջին բարախող  
սիրտը : Եւ ձեր ուղեղը՝ որուն մէջ կը կեդրոնացնէք ձեր հոգին ,  
զգացումը և բանականութիւնը , մեր ողնածուծն է՝ որ աճած ,  
ուռճացած , կատարելագործուած է . և առանց մեր ողնածու-  
ծին , դուք ուղեղէ զրկուած պիտի ըլլայիք և այն ատեն  
երկրաբանը , աստղագէտը , բնախօսը , պատմաբանը , փիլիսո-  
փան , բանաստեղծը գոյութիւն պիտի չունենային :

«Այո՛ , ահա՛ ձեր կատարելագործուած թանկագին գոր-  
ծարաններու նախատիպերը . ծո՛ւնը դրէք ձեր նախահայրերուն  
առջեւ» :

Այսպէս պիտի խօսէին բոլոր բրածոները , կապիկները ,  
մողէսները , ձուկերը , օձերը , կակղամորթերը , և ճշմարտու-  
թիւնը քարոզած պիտի ըլլային , որովհետեւ մարդը բնութեան  
ծառին ամէնաբարձր ճիւղն է և իր արմատները համայնական  
հոգին մէջ կը խրին . և այն ծառը՝ որ մարդ կոչուած գեղե-  
ցիկ , հիասքանչ պտուղը կը կրէ՝ կազմուած է այլազան բայց  
շատ ազգակից կենդանիներէ : Ասոնք վերկենդանացած են հնէա-  
բանութեան շնորհիւ և բնախօսը արդէն զանոնք կը դասաւորէ :



Երկրիս պատմութիւնը ուսումնասիրել՝ կը նշանակէ միանգամայն ուսումնասիրել տիեզերքը և մարդը, որովհետեւ երկիրը տիեզերքին մէկ աստղն է և մարդն ալ աշխարհիս բոլոր ուժերուն արտադրոյթը (résultante) : Մարդը հրաշքի գործ չէ, այլ միայն և միմիայն բնութեան, մայր-բնութեան հարազատ զաւակը :

Եւ այսօր այլեւս չենք կրնար հաւատալ թէ վեց հազար տարի առաջ երկիրս վեց օրուան մէջ ստեղծուեցաւ, թէ՛ կենդանիները կազմ և պատրաստ մէկէն ի մէկ ծնան, սկսած փիղէն մինչեւ գորտը, արծիւէն մինչեւ մանրէները, թէ՛ բոլոր այս գոյնդգոյն ծաղիկները, ծառերը միակտուր, կանխամտածութեամբ հողէն դուրս պոսթկային :

Այսօր ոչ ոք անգիտանալու է թէ մեր աշխարհը շատ հին է և անոր երկրաբանական խտերուն մէջ այժմ ջնջուած բայց ժամանակին ապրած կենդանիներու բրածոներ գոյութիւն ունին : Ոչ ոք անգիտանալու է թէ մարդու և բոլոր ողնաշարաւոր կենդանիներու մարմինները միեւնոյն անդամազրննական կազմուածքն ունին : Ոչ ոք անգիտանալու է թէ դեռ մենք ունինք atrophie գործարաններ, բոլորովին անպէտ և անգործածելի՝ որոնք մեր նախահայր կենդանիներու մօտ մինչև այժմ գտնուածներուն մնացորդները կը ներկայացնեն : Ոչ ոք անգիտանալու է թէ մարդը, ծնելէ առաջ, յղութեան առաջին ամիսներուն, մօր արգանդին մէջ յաջորդաբար կ'ըլլայ կակղամորթ, ձուկ, սողուն, չորքոտանի, — բնութիւնը այսպէս համառօտեր է պզտիկ ձեւի մը տակ հին տարիներու իր հրաշալի գործունէութիւնը : Ոչ ոք անգիտանալու է վերջապէս թէ բոլոր կենդանիներու և բոյսերու տեսակները իրարու կապուած են շղթայի մը օղակներուն պէս և մէկէն միւսը կ'անցնուի աստիճանաբար, անզգալի միջնորդներով . թէ՛ կեանքը աշխարհիս վրայ սկսած է ամենապարզ էակներով, բոյսեր՝ որոնք չունէին ոչ ծաղիկ, ոչ տերև և ոչ ալ պտուղ՝ հազիւ թէ բոյս անունը կրնային կրել . կենդանիներ՝ որոնք զրկուած գլուխէ, զգայարանքէ, ջիղէ, ստամոքսէ՝ հազիւ թէ կենդանի

կոչուելու արժանի էին : Այս ամէնապարզ էակները անզգա-  
լարար, դանդաղօրէն և աստիճանաբար օղին, ջուրին, սա-  
քութեան, միջավայրին ազդեցութեամբ աճած, ուռճացած, ա-  
ւելի զգայուն, աւելի ալրաղան, աւելի կատարելագործուած  
են, վերջապէս հասնելու համար մեր դաշտերը հոտաւէտող  
գոյնզգոյն ծաղիկներուն, մեր անտառները ոգևորող թրո-  
չուններուն, վերջապէս կենդանի էակներու ամէնակատարեա-  
լին՝ մարդուն :

ԲԺ. Մ. ՄԱԼԱՔԵԱՆ

## Վ Ա Թ Ա Ն Ի Ե Ր Գ Ե Ր

Ախ վաթան, վաթան, քու հողին դուրբան,  
Քու ծխին դուրբան, քու ջրին դուրբան.  
է՞ս փառքն ունէիր, է՞ս պատիւն առաջ,  
Որ հիմիկ աւերուել, մնացել ես անջան :

Երբ միտք կ'անէի, թէ էս հողերը,  
էս դաշտն ու սարերն, էս սուրբ ձորերը  
էնպէս մեծութիւն, էնպէս լաւ օրեր  
Քաշել են, մնացել, ա՛խ, հիմիկ անտէր :

Հող ունենք՝ խլած, կեանք ունենք՝ մեռած,  
Ախ, ջրի, կրակի մենք եսիր դառած.  
Ո՛չ երկինքն տեսնի մեր սուգն ու լաց,  
Ո՛չ երկիրն պատուուի, մեզ տանի ցած :

Աչքս բաց արի, խարաբայ տեսայ.  
Ախ, ո՞վ գիտէր թէ մեր ազգի վրայ  
Սարեր են էլել, հիմիկ բրիշակ,  
Մեզ տակով չարել, որ էլ խեղճ չը մնանք :

Ախ, մեր սիրտն էսպէս ընչի՞ հովացել,  
Արինը ցամաքել, մեր կուռը թուլացել.  
Եարա՛ք, կ'տեսնե՞մ, ա՛խ, ես մէկ օր էլ,  
Մեր սուրբ երկիրը թշնամուց ազատել :



էն ի՞նչ շունչ կ'ըլի, որ էս նոր հոգին  
 Փչի, վեր կացնի քնից մեր ազգին.  
 Էն ի՞նչ ձեռք կ'ըլի, որ մեր աշխարհքին  
 էլ ետ սիրտ տայ ու կանգնացնի կրկին:

Ա՛խ, ես էն ձեռին կեանքս ղուրբան կանեմ,  
 էն կոխած հողին երեսս կը քսեմ,  
 Ապրեմ՝ իմ արինս նրան մատաղ կ'անեմ,  
 Մեռնեմ՝ հողիցն էլ միշտ նրան կ'օրհնեմ:

Խ. ԱՐՈՎԵԱՆ

**ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎԵԱՆ** (1804 կամ 1805—1848).— Խաչատուր Աբովեան եղած է ռուսահայ աշխարհաբար գրականութեան եւ



մտաւոր շարժման առաջին ռասիւիւրան եւ իսկական հիմնադիրը, օժտուած արուեստագէտի եւ բանաստեղծի աննման տաղանդով: Իր «Վէրք Հայաստան»-ին, գրուած Երեւանի Քանաքեռ գիւղի բարձրագույն, գործ մըն է եւ մէկը հայ մտքի հրաշակերտներէն՝ որ կը բանայ ամբողջ դարագլուխ մը, — դարագլուխ՝ մտաւորական եւ հոգեկան վերածնութեան եւ հայկական նոր դիւցազներգական գրականութեան, բարձրուն հայ շինական եւ կենդանի կեանքովը, լի ամէնախոր զգացումով, անկեղծութեամբ եւ պատկերներու նկարագերովութեամբ: Լեզուն պարզ եւ հարուստ, շունչը տաք եւ խանդավառ, «Վէրք Հայաստան»-ին

հայրենասիրական քերթուած մըն է, որ գերծ չէ սակայն իր ամբողջութեանը մէջ միօրինակութենէ ու չափազանց բովանդակութիւնէ:

Աբովեանի միւս գործերն են Օսաննա վէպը, Ֆեոստու կամ Ռոդիական սերը թատերախաղը, ձանապարհորդութիւն Պարրոդի եւ Խ. Աբովեանի, Պարսպ վախի խաղաղի եւ մէկ քանի գրաբար ոտանաւորներ:

Խ. Աբովեան ծնած է 1804-5 թուականներուն Երեւանի Քանաքեռ գիւղը: 1830ին տարուած Գորպատի համալսարանը, ուր վեց տարի ուսանելէ ետք վերադարձած է հայրենիք, 1840ին գրած իր «Վէրք Հայաստանին», 1848ին առաւօտուն տունէն դուրս ելած եւ կորսուած անհետ: Իր մահուան պարագան մինչեւ այժմ կը մնայ տակաւին գաղտնիք:



## Կ Ա Ն Պ Է Թ Թ Ա

Կռիզէլ երկաթուղիի մը մեքենագործն էր :

Օրին մէկը որ կառաչարի մը վրայ էր , կանգ առաւ յանկարծ ճամբուն վրայ :—«Առա՛ջ գնա» , կը պոռար կառաչուին հսկիչը : Մերժեց Կռիզէլ , մերժեց և աչքն առաւ կորսնցնել իր պաշտօնը , իր ծառայութիւնները , իր բոլոր կեանքը :

Այն վայրկեանին որ անհկա այսպէս իր անձին վնասովը կը մերժէր առաջ երթալ , դիմացի կամուրջը կը փլի յորդահոսան գետին վրայ , ուրկէ վար ամբողջ կառաչարն ալ դէպ ի վար անդունդը պիտի գահավիժէր՝ եթէ Կռիզէլ առաջ գացած ըլլար :

Այս մարդը կը տօնէին անցած իրիկուն 1800 անձեր , երկաթուղային գործաւորներ՝ իրենց նախագահ ունենալով Պրանսայի մեծ բանաստեղծը Վիքթոր Հիւկօն , և կոչնականներուն մէջ մեծ ատենարան մը՝ Կանպէթթան :

Երբ Կանպէթթա նախարար էր ասկէ քանի մը ամիս առաջ , միտքը բերած էր այս խոնարհ գործաւորը՝ որ իր կորովի բաղուկին հետ հանճարեղ ուղեղ մը ունի , ինչպէս ըսաւ Վ. Հիւկօ , և որ հարիւրաւոր մարդոց կեանքն էր ազատած , անսաստելով իր մեծին , որովհետեւ նախատեսած էր վտանգը : Կանպէթթա պատուոց լէգէոնի խաչ էր կախած այդ արի կուրծքին վրայ :

Մարդիկ հասարակօրէն արի կ'ըսեն զինուորին , որ կ'իյնայ պատերազմի դաշտին վրայ , ուր իրը յաղթանակ մը տանի՝ դիւցազուն կը կոչուի և իր շահատակութեանց վրայ միշտ կը փայլի փառքն իբրև պսակ , ինչպէս ըսաւ Կանպէթթա : Բայց քանիներ կան աննշան՝ որ մարտի դաշտին վրայ չեն իյնար , որ զէնքի չեն ծառայեր , այլ սրոնք , համեստ գործաւորներ , հազարներով մարդոց կեանքը ձեռքերնուն մէջ ունենալով , ինչպէս է երկաթուղիի մեքենագործ մը , ինչպէս էր Կռիզէլ—զոհ կ'երթան իրենց պատուին և ոչ ոք գիտէ ու կը

կրկնէ իրենց անունը : Ոչ ոք կը զգայ և ոչ ոք գիտէ թէ ի՞նչ կը քաշէ կրակին դիմաց , երբ ձիւնն երեսը կը ծեծէ , երբ փուքը շունչը կը կտրէ : գիշեր ցորեկ ծխանին և ահագին գործիքին առջեւ կանգնած երկաթուղային մեքենագործին , և որ պէտք է անդադար հսկէ , որուն ոչ մէկ անգամ պէտք է վրիպի իր ձեռքը , վայրկեան մը գլխի ուշադրութիւնը կամ յապաղի միտքը : Կ'աշխատին տարիներով , կը ծերանան այս հնոցի աշխատութեանց մէջ , և երբ օրին մէկը ահամայ , անգիտակցաբար սխալ մը գործեն որ չար հետեւանք ունենայ — որովհետեւ ահամայ և անգիտակցաբար կը գործեն մարդիկ մեծամեծ սխալներ — , ահա այդ բոլոր աշխատութիւնը՝ որ ի դերեւ ելաւ , ահա այնքան ծառայութիւնն ու անձնուիրութիւնը՝ որ կորսուեցան , ահա կեանք մը՝ որ ոչնչացաւ : Կռիւղէլ իր աչայրջութեամբը կառախումբ մը փրկեր էր և հարիւրաւոր մարդոց կեանքը :

Սակայն ո՞վ էր լսեր անոր անունը և ո՞վ պիտի լսէր՝ եթէ չլլար Կանպէթթան : Կարծես թէ ասոր համար միայն նախարար եղաւ : «Ան դձ մեծ մարդն» , ինչպէս կ'ըսեն դեռ այսօր հեգնելով զինք , կ'ակնկալէին թէ հրաշքներ պիտի գործէր : Աննչան փաստարան մըն էր Կանպէթթա 18 տարի առաջ , և օրին մէկը , Նաբոլէոն Գ. ի օրով , մարդու մը յիշատակը պաշտպանեց եղևոնադատ ատեանին առջեւ . այդ մարդն էր Պօտէն աղգային երեսփոխանը , որ դեկտեմբեր 2ի պետական հարուածին առջեւ ապստամբեր և Վ. Հիւկոյի ու Ժիւլ Ֆալրի առաջնորդութեամբ փողոցն էր իջեր , սուլայատակներու քարերով պատնէշ էր կանգներ և կը կռուէր պատնէշին ետեւէն : Յանկարծ ձայն մը լսեց դիմացէն՝ պաշարող և յարձակող զնդերէն . — «Օրական քսանըհինգ ֆրանքը չկորսնցնելու համար է որ կը պատերազմիք» . — Աղգային երեսփոխաններ օրական 25 ֆրանք կը ստանան : Տնկուեցաւ ելաւ Պօտէն պատնէշին ետեւէն և կուրծքը պարզելով զինուորներու հրացանին առջեւ , աղաղակեց . — «Ահա այսպէ՛ս կը մեռնի աղգային երեսփոխան մը՝ 25 ֆրանքի համար» . գնտակը անմիջապէս ե-

կաւ զարկաւ իրեն և ինկաւ դիտապատ : Այս մարդուն , ահա , արձան մը կանգնելու համար հանգանակութիւն մը բացուած էր , և այդ հանգանակութիւնը պաշտպանելու համար էր որ փաստաբանեց Կանալէթթա : Տասնըչորս տարի ետքը դեռ կը յիշեմ թէ ի՞նչպէս սիրտս թնդալով կարդացի Կանալէթթայի այդ պաշտպանողականը :

Կանալէթթայի քաղաքական բախտն ա՛սկէ ծագում առաւ և այն օրէն երթալով գնաց ու մեծցաւ , ու քիչ մնաց որ Օրլէանի յաղթութեան հետեւեալ օրը Փարիզի պաշարումը մէկդի ձգելով Գերմանացիք կծիկը դնէին . վկայ Կիլեօմ կայսեր խոստովանութիւնը : Կանալէթթա չի կրցաւ փրկել Ֆրանսան , բայց փրկեց Ֆրանսայի պատիւը : Ասիկա բուական էր որ ետքէն Ֆրանսա ինքզինքը փրկէր : Ասկէ մինչեւ տարի մը առաջ ամէն ինչ էր Կանալէթթա Ֆրանսայի մէջ , իսկ ասկէ ամիս մը առաջ գրեթէ ոչինչ էր : Այսպէս ահա , քաղաքական մարդոց կեանքը լի է արկածներով , անակնունելի դէպքերով : Հասարակ դարձած խօսք մըն է այս կարգի մարդոց համար թէ՛ Տարպեան ժայռը շատ մօտ է Կապիտոլինի : Սակայն Կանալէթթայի ճակատագիրը դեռ չաւարտեցաւ . թերեւս այդ ճակատագրին վերջին բառը ստակալի է , բայց տակաւին գեղեցիկ օրեր ունի իր առջեւ :

Երեք ամիս է որ գաղտնի կամ յայտնի կառավարութեան մէջ չէ Կանալէթթա , և ահա ամէնքը սկսան իրարու հարցնել թէ կառավարութիւն մը կա՞յ արդեօք Ֆրանսայի մէջ : Կանալէթթա շատ իսկ խառնուեցաւ անցքերու և եղելութեանց՝ 12 տարիէ ի վեր . ընդհանուր քուէարկութիւնը ի՞նք վարդապետեց , Սորհրդարանը ի՞նք յանձանձեց , Հանրապետութիւնը ի՞նք դիւցուց ու մեծցուց , և կրնայ ըսուիլ թէ այս 12 տարուան միջոցին քաղաքական ուէ սխալ մը չի գործեց : Ըսին թէ նախարար ըլլալէ ետք սխալներ միայն գործեց . — ըստ իս կառավարել ուզեց . կառավարել՝ այսինքն առաջնորդել , կառավարել՝ այսինքն նախատեսել , և , գործելու համար միտքն ու հորիզոնն ընդլայնել անոնց , որ Ֆրան-



սայի բախտն ունին ձեռքերնին և որ կը շարժին միշտ ան-  
 ձուկ շրջանի մէջ, ուր հարկաւ կը փակէ զիրենք իրենց ծա-  
 գումն ու մտքի կարողութիւնը. «չի յաջողեցաւ». ի՛նչ անի-  
 ծեալ բառ է այս՝ շյաջողիլը: Ա՛յնքան ուրեշներ իրենց հա-  
 մարումը կը վերցնեն մարդուս վրայէն, որ մարդ կը սկսի  
 ինք ալ համարում չունենալ իր վրայ: Կանպէթթայի անյաջո-  
 ղութիւնը առօրեայ է. նախարարութենէ ինկաւ, բայց կան-  
 գուն կը մնայ. իյնալէ ետքն է որ գործեց սխալներ: Կարելի  
 է հեռուէն ու բարձրէն նայիլ և սպասել առանց անհամբերու-  
 թեան. իրեն կը վայելէր որ վեհանձն ըլլար. ինք ամէն իրա-  
 ւունք ունէր անհամբեր չըլլալու: Սակայն իր արբանեակները  
 շատ պատճառներ ունէին անհամբեր ըլլալու: Անոնց հետեւե-  
 ցաւ ինք և փոքրիկ կիրքերու ծառայեց. իր մեծութիւնը  
 վերստին ձեռք ձգելու համար բաւական է որ իր սրտին ներ-  
 շնչումներուն հետեւի: Մեծն Նաբոլէոն ըսեր է եղեր, և շատ  
 դրական խելքեր կը կրկնեն իրեն հետ թէ, «պետական մարդու-  
 մը սիրտը գլխուն մէջ պէտք է ըլլայ...»: Ես չեմ կարծեր. առանց  
 մեծ սրտի մեծ մարդ չկայ: Վոլքնարկ իրաւունք ունի.—Մեծ  
 մտածումները սրտէն կը բղխին: Ես դեռ կը հաւատամ Կան-  
 պէթթայի սրտին և չեմ կրնար հաւատալ թէ սեւցուցած ըլ-  
 լայ ան իր հոգին: Սպա թէ ոչ ս՛րկէ պիտի ըլլար այն հուրը՝  
 որ կը վառէ զինքը երբ կը խօսի. ս՛րկէ կրցաւ մարդը, որ  
 գետնի վրայ կը սողայ, ի վեր համբաւնալ և ոգեւորել իր  
 ունկնդիրները. ս՛վ իրեն տուաւ այն մարդու մեծ կիրքերն  
 արթնցնելու փափաքը կամ խոր զգացումները: Չէ՞ որ իր  
 ամէնամեծ զօրութիւնը պերճախօսութիւնն է: Ահա անցած օր  
 Կախէլի խնճոյքին խօսած ճառը. ի՛նչպէս իրմէ ուժացած  
 սրտեր սկսան իրեն փարիլ ու հաւատալ իրեն: Կ՛ուզէի թարգ-  
 մանել այս ճառը. սակայն ի՛նչ է տպուած ատենարանութիւն  
 մը կարդալը: Կանպէթթայի պերճախօսութիւնը լաւ դատուող  
 համար, պէտք է լսել և տեսնել Խորհրդարանի մէջ: Պերճա-  
 խօսութիւն մը ունի ձայնին մէջ, պերճախօսութիւն մը ձեւե-  
 րու և շարժումներուն մէջ: Չայն մը, որ խուլ մունչիւններով



կը սկսի, ովկիանոսի խորունկէն լսուած ձայնի պէս, և աստիճանաբար բարձրանալով՝ կ'աճի ու կը տարածուի, որոտընդոսա հնչիւններով իմաստները կը գոռայնէ, և հուսկ ուրեմն անհուն ազազակ մը կը դառնայ՝ որ ոչ միայն մրմունջը, այլ և շնչառութիւնն անգամ կ'ընդհատէ ներկաներուն կուրծքին մէջ, ու մինչեւ մարդկային սրտին ներքին ալքերուն մէջ անձայն շշող նախանձի կիրքերն ու վրէժի խանդերն ալ խեղդելով՝ այն հոծ լուսթեան մէջ ինք միայն կը հնչէ... և այն միջոցին իր բոլոր անձը կը բոցավառի, «հերք ի գլխուն հուր կ'ըլլան», ըստ գեղեցիկ բացատրութեան մեր Գողթան երգերուն. մօրուքին մազերը կը սկսին ծածանիլ, բեմը եռօտանի մը կը ձեւանայ, ու ինք, երբեմն հարցուկ, երբեմն պատգամ, երբեմն ալ ցուլ մըն է, կ'ըսես, կամ առիւծ մը, և մէկ ծառէն միւս ծայրը երթալ գալով բեմէն, բազկատարած, ահագին վերջին ազազակ մըն ալ կ'արձակէ և ահա ծայրայեղ ձախակողմը և մինչեւ վերնատուններէն՝ այր կլին հանդիսականներ ալ բռնադատուած և իբր թէ տեղափոխուած. կը սկսին ծափահարել դիւահարներու պէս:

ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ

### ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ (1834-1887).

Պետական անճնաւորութիւն, մէկը հիմնադրներէն Ազգային Սահմանադրութեան, ու գրագէտ: Գրիգոր Օտեան եղած է աշակերտը Ֆրանսական 48ի յեղափոխութեան սկզբունքներուն, որոնց ներգործութեան տակ գործած է վաթսունական թուականներէն սկսած թէ՛ հայ, թէ՛ օսմանեան կեանքի մէջ: Իբրեւ գրագէտ թողած է միայն հատակոտորներ եւ նամակներ, որոնք կը կրեն տաղանդի մեծ դրոշմ, եւ հազուադիւր գեղեցկագիտութիւն ու մաքուր լեզու՝ բազկատմամբ իր ժամանակին: Ծնած է Պոլիս եւ մեռած է Փարիզ:





## Պ Ա Յ Ք Ա Ր Ի Ե Ր Գ Ե Ր

## 1

Տանջուէ՛ մինակ... Մէջդ պահէ յար  
Արհաւիրքն հզօր բոլոր ցաւերուդ,  
Եւ մուրացիկի պէս խոնարհաբար  
Մի՛ խնդրեր բնաւ անցորդներէն գուժ:

Թախիծն ալ մէջդ պահէ ուժգնօրէն,  
Իսկ վըշտի օրդ, լուռ ու դռնփակ,  
Խաղաղ զիշերուան մէջ լա՛ց առանձի՛ն՝  
Կրած վէրքերուդ դառնութիւնն համակ:

Տանջուէ՛ մինակ...: Փրկութիւնդ անհուն  
Կուրծքիդ տակ է լոկ, եւ ոչ մարդոց մօտ,  
Կուրծքիդ խորքերուն նե՛րքեւ զտիր դուն  
Համբերութիւն, ուժ, լոյս ու առաւօտ:

Իսկ եթէ վերջին ժամդ հնչեր է  
Եւ սպառեր են յոյսերդ ու իղծեր,  
Հերոսի նման ի՛նկիր, եւ փշրէ՛  
Բաժակդ որուն դեռ կէսն ես խմեր...:

## 2

Ե՛ս ալ կրնայի երգել ձեզի պէս՝  
Փայլերն ոսկեշող վերջալոյսներուն,  
Կիսալուսիններն արծաթով օծուն,  
Ննջող ալիքին ծփանքներն ալ վէս:

Ե՛ս ալ կրնայի կերտել ձեզ նման՝  
Գեղեցիկ ռնով սիրուն քերթուածներ,  
Շահիլ, վաստկիլ հեշտ ու անտարբեր՝  
Ձեր հակատներուն պսակներն աժան:



Բայց իմ ուշադիր նայուածքս անշէջ՝  
Վախով, սարսափով տեսեր էր բո՛լոր  
Հեծեծանքի մէջ հայրենիքն անզօր,  
Իտէալն ընկճուած ճահիճներու մէջ:

Ու իմ յոյսերուս դրախտն օրօրուն՝  
Լուսերեւոյթի նման փճացած.  
Ահա թէ ինչո՛ւ երգերս անկասկած՝  
Բնաւ նման չեն ձեր երգածներուն...:

ՄԵԼՇԻՆ ԵԱՔՈՒՊՈՎԻԶ

## ԿՈՒԳԱՆ ՈՒ Կ'ԵՐԹԱՆ

(Մուտամմագ)

Չախորդ օրերը ձմրան նման կուգան ու կ'երթան,  
Վհատելու չէ, վերջ կ'ունենան, կուգան ու կ'երթան:  
Դառն ցաւերը մարդու վերայ չեն մնար երկար,  
Որպէս յանախորդ շարուէ շարան կուգան ու կ'երթան:

Փորձանք, հալածանք եւ նեղութիւն ազգերի գլխից,  
Ինչպէս ճանապարհի կարաւան, կուգան ու կ'երթան:  
Աշխարհը բուրաստան է յատուկ, մարդիկը՝ ծաղիկ.  
Որքա՛ն մանիշակ, վարդ, պալասան կուգան ու կ'երթան:

Ոչ ուժեղը թող պարծենայ, ոչ տկարը տխրի,  
Փոփոխակի անցքեր զանազան կուգան ու կ'երթան:  
Արեւը առանց վախնալու ցայտում է իր լոյսը,  
Ամպերը դէպի աղօթարան կուգան ու կ'երթան:

Երկիրը ուսեալ զաւակին է փայփայում մօր պէս,  
Անկիրթ ցեղերը թափառական կուգան ու կ'երթան:  
Աշխարհը հիւրանոց է, Ջի՛ւան, ազգերը հիւր են,  
Այսպէս է կանոնը բնական, կուգան ու կ'երթան:

ԱՇԸՆ ԶԻԱՆԻ

## ՕՐՀՆԵԱԼ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

Քառորդ դար մը առաջ Կ. Պոլսոյ հայերէն թերթերը Ազգային լուրերու բաժնին մէջ հրատարակեցին հետեւեալը .

«Հանգուցեալ Կ. Գ. 40,000 ոսկի կտակած է Կ. Պոլիս «Գ.եան Առևտրական» վարժարանի մը : Հանգուցեալին ընտանիքին և Ազգային Պատրիարքարանին միջև սոյն կտակին «վերաբերեալ պաշտօնական գործողութիւնները կատարուած «վերջացած ըլլալով, Ազգային Ժողովը իր երէկուան նստին մէջ, «որուն անձամբ կը նախագահէր Ամէն. Ս. Պատրիարք Հայրը, յոանկայս օրհնեց վաղամեռիկ բարերարին յիշատակը, ու «երախտագիտութեան քուէ տուաւ համայն Գ.եան ազգասէր տոհմին : — Օրհնեա՛լ գերդաստան :»

×

Քառորդ դար մը վերջ, 1896ին, Կ. Պոլսոյ հայերէն թերթերը Ազգային լուրերու բաժնին մէջ հրատարակեցին հետեւեալը .

«Պաշտօնապէս Ամէն. Ս. Պատրիարք Հօր յանձնուած ըլլալով հանգուցեալ Տ. Գ. կտակը, որով իր հարստութեան «մէկ երրորդը ազգին կը թողու Կ. Պոլիս «Գ.եան Առևտրական» վարժարանի մը հաստատութեան համար, Ազգային Վարչութեան Սառն Ժողովը երէկուան նստին մէջ, որուն անձամբ «կը նախագահէր Ամէն. Ս. Պատրիարք Հայրը, յոանկայս «օրհնեց վաղամեռիկ բարերարին յիշատակը. ու երախտագիտութեան քուէ տուաւ համայն Գ.եան տոհմասէր ընտանիքին : — Օրհնեա՛լ գերդաստան :»

×

Քառորդ դար մը վերջ, 1921ին, Կ. Պոլսոյ հայերէն թերթերը Ազգային լուրերու բաժնին մէջ հրատարակեցին հետեւեալը .

«Պաշտօնապէս Ամէն. Սրբազան Պատրիարք Հօր յանձ-

«նուած ըլլալով հանգուցեալ Տ. Գ. եան կաակը, որով իր հարս-  
«տութեան մէկ երրորդը ազգին կը թողու՝ Կ. Պոլիս «Գ. եան  
«Առեւտրական» վարժարանի մը հաստատութեանը համար, Ազ-  
«գայինԺողովը իր երէկուան նստին մէջ, որուն անձամբ կը նա-  
«խագահէր Ամէն. Սրբազան Պատրիարք Հայրը, յոանկայս օրհնեց  
ծերունազարդ բարեւարին յիշատակը, ու երախտագիտու-  
«թեան քուէ տուաւ համայն Գ. եան ազգասէր տոհմին:—  
«Օրհնեալ գերդաստան:»

×

Հայաստանի մայրաքաղաք Հնչակապատի 2001ի թերթե-  
րուն մէջ կը կարդանք հետեւեալը:

«Հայկական Հանրապետութիւնը իր առաջին տարեգար-  
«ձը կը տօնէ հոյակապ նուիրատուութեամբ մը:

«Ամիս մը առաջ վախճանեցաւ ծերունի վաճառական  
«Պ. Կ. Գ., թուան թուարդի 125 տարի առաջ մեռած Կ.  
«Գ. եան վաճառականին: Հանգուցեալը իր հարստութեան մէկ  
«երրորդը— մէկ միլիոն ոսկի սկուտ հայկական— կտակած է  
«Հնչակապատի մէջ առեւտրական վարժարանի մը հաս-  
«տատութեանը: Սրբոյն Մատթէի Իզմիրլեանի Մայր եկեղե-  
«ցին մէջ երէկ հանդիսաւոր պաշտօն և պատարագ մատու-  
«ցուեցաւ հանգուցեալին հոգուն: Պատարագիչ Սրբազան  
«Հայրը զգածեալ շեշտելով օրհնեց յիշատակը բարերարին և  
«համայն Գ. եան ազգասէր տոհմին:— Օրհնեալ գերդաստան:»

— Անկողմնակալութիւնը կը պարտաւորէ մեզ արտա-  
պել նաև Ազատական Կուսակցութեան գլխաւոր բերանը եղող  
«Ազատ Հայրենիք»ի հետեւեալ հատուածը:

«Կղերական թերթերը ծանուցին Հայոց եկեղեցիներու  
«մէջ Օրհնեալ գերդաստան» հին զաւեշտախաղի մը չենք գի-  
«տեր քանի՛ երրորդ ներկայացումը: Այդ խաղը երբ մեր ան-  
«ցեալ ստրկութեան օրերու արձագանգը կը բերէ մեզի, իր  
«յարատեւ կրկնութեամբը կը հաստատէ նաև թէ ժողովուրդ մը  
«կրնայ աւելի դիւրաւ ազատիլ քաղաքական գերութենէն քան



«բարոյական ստրկութենէ : Թուրքերը հին ատեն իրենց քիմ-  
 «քին յարմար խաղ մը ունին եղեր—մեր ծերերը աղօտ իմն  
 «կը յիշեն—«Գարակէօղ» կոչուած, կեղտոտ բարքերու կա-  
 «տարելագործեալ տիպարը, մենք Հայերս ալ ունեցած ենք  
 «մեր Գարակէօղի խաղը, տարբերութեամբ մը սակայն. Իս-  
 «լամները երբեք չեն մտաբերած իրենց մզկիթներուն մէջ ներ-  
 «կայացնել այդ զաւեշար Մահմետի հովանիին տակ, մոլլանե-  
 «րուն ազօթքովը. իոկ Հայերը իրենց սրբութեանը նուիրուած  
 «տաճարին մէջ, իրենց Գրիստոսին աչքին առջեւը, եպիսկո-  
 «պոսական օրհնութիւններով կը ներկայացնեն ստութեան,  
 «կեղծաւորութեան, իտարդախութեան հրաշալի գլուխ գործոց  
 «Գարակէօղ» զաւեշար :

«Այդ կեղտոտ զաւեշարին նիւթը ամփոփենք երկու բա-  
 «նով : Ասկէ 125 տարի առաջ մեռած մի ոմն Կ. Գ. գումար  
 «մը կը կտակէ Առեւտրական Վարժարանի մը շինութեան. չը-  
 «տես հայ հասարակութիւնը անմիջապէս մտղթանքներով աղ-  
 «գային բարերար կը հռչակէ Կ. Գ. ընտանիքը, չյիշելով գոնէ  
 «աղգային առածը՝ «Կե՛ր ու ապա գոհայիր» : Տարիներ կ'անց-  
 «նին առանց սակայն վարժարանին նշոյլը նշմարուելու. բայց  
 «ձրիաբար անմահ բարերար և իրենց ընտանիքն ալ «օրհնեալ  
 «գերդաստան» կոչել տալու համը ամէն Գ.եանի բերանը մնա-  
 «ցած ըլլալով, ամէն Գ.եան իր սնտուկին մէջ պատրաստ կտակ  
 «մը ունի որ իր մեռած օրը երեւան կուգայ. մեռնողը ապա-  
 «հով է թէ իր կտակը պիտի չգործադրուի, ու ինքն ալ  
 «անմահ բարերար»ի տիտղոսը պիտի վայելէ : Խաղը կը շա-  
 «րունակուի 125 տարիէ ի վեր և պիտի շարունակուի, վասն զի  
 «Գ.եան ճետն ալ կը շարունակուի : Եւ ահա այսպէս այդ  
 «Գ.եանները առանց լումայ մը ծախսելու, ձրիաբար «օրհ-  
 «նեալ գերդաստան», «անմահ բարերար»ի տիտղոսները ժա-  
 «ռանգական ըրած են իրենց համար, առանց ազգին ժառան-  
 «գութիւն մը ձգելու : Բայց կ'անդրադառնանք թէ պիտի կար-  
 «ծուի որ սխալ մը ըրած ըլլալու ենք «ձրիաբար» բացատրու-  
 «թիւնը գործածելով. — «Հապա թո՞ւղթը, մելա՞նը, գրի՞չը,

«կտակները գրելու համար, ասոնք ստակով չե՞ն», պիտի «հարցուի»:

«Փութանք ու է սխալ հասկցողութիւն շտկել: Կայ աւան-  
«դութիւն մը, որ հաստատուեցաւ նաև նորոգ մեռնող Կ.  
«Գ.ի գործովն ալ, թէ ամէն կտակարար Գ.եան՝ իրենց թաղին  
«եկեղեցին երթալով թերթ մը թուղթ, գրիչ և մելան կ'ուզէ  
«եղեր, կտակը անոնցմով պատրաստելու— Աղգին բարիք պիտի  
«լնենք, ծախքը գոնէ ազգը հոգալու է, ըսելով: Ու միան-  
«գամայն եկեղեցիին ակնոներուն վրայ նստած կը գրեն կտակ-  
«նին, իրենց տան ակնոները նուազ մաշեցնելու հոգածու-  
«թեամբ: Պատճառ մը չունինք տարակուսելու այս տեղե-  
«կութեան ստուգութեանը:

«Հանրային կրթութեան պաշտօնատուներ որ կտակին օրի-  
«նաւոր տէրն է, եթէ յաջողի Հայաստանի մէջ գործադրել  
«ապա այս վերջին կտակը, ա՛լ անկէ ետքը իրենց նշանակու-  
«թիւնը պէտք է կորսնցնեն սերունդէ սերունդ ժողովրդին  
«բերանը պտրտած առածներ, որոնք գործողութեան մը ան-  
«հնարութիւնը կը պատկերացնեն, օրինակի համար ըսելով  
«երբ ձուկը ծառը ելլէ»: Գ.եան կտակը եթէ գործադրուի,  
«ձուկին ծառը ելլելը՝ թռչունին ծառը թառելուն պէս բնա-  
«կան գործողութիւն մը պիտի համարուի անկէ ետքը»:

×

Ահեղ օրը. տիեզերք՝ տակնօ՛ւ վրայ. վերջին դատաստանը  
կը կատարուի Յովսափաթու ձորին մէջ, ուր Հայր Աստուած  
Գահը բազմած, աջ կողմը Որդին, ձախը՝ Հոգին, կը դատէ  
մարդկեղէն արարածները «ի սկզբանէ աշխարհի ցկատարած»:  
Առաջին քարտուղար Ռաֆայէլ կը կարդայ Կենաց-Գարութեան  
Մայր Տուճարը, որուն առաջին գլուխը Հայոց ազգինն է,  
Հայերը ըլլալով ուղղակի շառաւիղ նախաստեղծ մարդուն.  
(Աղամէն — Նոյ, Նոյէն — Հայկ, անկէ ալ շիփ շիտակ մենք):  
Կանչուած անունը յարութիւն կ'առնէ, կը ներկայանայ ատեան,  
կը պատասխանէ եղած հարցումներուն, կը լսէ վճիռը: Երբ

կը սկսի մեր այս տեղեկագրութիւնը, Ռափայէլ հասած է Ք. ին և կը ձայնէ.

— Գ. եան Կա . . . ,

Սակայն անդրադառնալով որ այդ մտկանունը քանի մը հազար էջ գրաւած է, և ամէնուն դիմացը իբր կենսագրական ծանօթութիւն «բարերար ազգին» արձանագրուած, լաւագոյն կը համարի բոլորը մէկէն կանչել լմնցնել. անանկ ալ ասէնքը մէկտեղ արքայութիւն պիտի երթան, անանկ ալ ուստի կը գոչէ.

— Գ. եան ընտանիք :

Անշարժութիւն մուկատան աշխարհին մէջ. Ռափայէլ ապշած կը կրկնէ.

— Գ. եան ընտանիք :

Անշարժութիւն : Ռափայէլ կը բարկանայ արձանագրիչ հրեշտակներուն. սխալ մը ըրած ըլլալու են :

Այս միջոցին, Գաբրիէլ կը վերագառնար կործանուած աշխարհէն, փողը թևին տակ, ձեռքն ալ թուղթ մը զոր խնդալով կը կարդար : Կործանումէն յետոյ մէյմը պտոյտի ելած էր. նախնի Եղեմէն, ուր դեռ օր մը առաջ Հայոց վերջին մայրաքաղաքը կար, փշրուած տպարանի մը աւերակներուն վրայ տեսաւ թռչող թուղթի կտոր մը, Տիեզերքի վերջին օրուան վերջին հայերէն օրաթերթին վերջին լուրերը : Գաբրիէլ զայն վերցուց առաւ. «Աղէկ կը յիշեմ, ըսաւ ինքնիրեն, որ մարդուն ստեղծուելէն յետոյ աս անցած տեղս խակ իմացայ աշխարհիս առաջին լուրը, օձին խաբեքայութիւնը. տեսնենք «աշխարհիս վերջին լուրը ի՞նչ եղած է :» Ահա ինչ որ կարդայ.

«Պաշտօնապէս Ամէն. Ս. Պատրիարք Հօր յանձնուած «ըլլալով Կարսպիտ Օրհնեայ գերդաստանին կտակը, որով հանգուցեալը իր հարստութեան մէկ երրորդ մասը ազգին կը թողու Առեւտրական Վարժարանի մը հաստատութեանը համար . . .» : Աւելորդ է շարունակութիւնը արտատպել. ուզողը կրնայ զայն գտնել 19րդ դարու վերջին քառորդէն աշխարհիս մինչև վերջին օրուան հայերէն թերթերուն մէջ : Առաջ կը բերենք միայն հետեւեալ ծանօթագրութիւնը.



«Յիշեալ Կարապետը և իր բոլոր ազգականները թէև «Օրհնեալ Գերդաստան կը կոչուին, սակայն վերջերս հնա- «գիտական խուզարկութիւններ հաստատուցին թէ ժամանակով «այս ընտանիքին մականունը Գ. . . եան եղած է. բայց յայտնի «չէ թէ դարերու հոլովումին մէջ մականունի փոփոխութիւնը «ի՞նչպէս տեղի ունեցեր է:»

Երբ Գաբրիէլ պաշտօնակիցներուն քով հասաւ, Ռափայել հարցուց .

— Եղբա՛յր Գաբօ, սրբոնց հագին դուն առած ես, յայտնի է, ամէնքն ալ բարերար են. բայց արձանագրութեան մէջ սխալ մը եղած ըլլալու է. երկու անգամ կանչեցի, ելող չեղաւ:

— Սխալում չկայ, պատասխանեց Գաբրիէլ, — Օրհնեալ- գերդաստանեան ձայնէ և ամէնքն ալ կ'ելլեն. ինչ ըլլալը վերջը կ'ըսեմ:

— Օրհնեալգերդաստանեան ընտանի՛ք, գոչեց Ռափայել:

Եւ ահա քանի մը միլիոն Գ. . . եան գլուխ, թեւ, մարմնի ամէն մասեր վեր կանգնելով՝ իրարու մօտ եկան և յօ- ըրինեցին իսկական իրանները, ամէնուն ալ սակայն երկու ձեռ- քերուն հնգական մասները ամուր մը գոցուած:

— Ասոնք ամէնքն ալ Արքայո՛ւթիւն, անանկ չէ՞, հար- ցուց Որդին ուրախութեամբ:

— Հրաման՛ր էք, Տէ՛ր, պատասխանեց Գաբրիէլ, ամէնքն ալ ազգերնուն բարերարները. օրհնեալ գերդաստան:

Ու ահա յանկարծ շարժում չորս կողմէն. թապալտուքներ գերեզմաններու մէջ. բողոքի խեղդուկ ձայներ:

— Ի՞նչ է սա, ըսաւ Հայրը. բա՞ն մը ծածուկ կը պահ- ուի ինէ. վրդովեալներ՛, ելէք եկէք, տեսնեմ ինչ է:

Եւ կմախքները վեր բարձրացան, յուսահատ դէմքեր: Գթառատ շեշտով մը Որդին հարցուց:

— Դուք անիրաւութեան զոհեր եղած ըլլալու էք. ինչո՞ւ սակայն այսքան անհամբեր: Ըսէ՛ք, ի՞նչ կ'ուզէք:

— Օ՛հ, Տէ՛ր արդարադատ, գոչեցին ձայներ, քննու- թի՛ւն, քննութի՛ւն:

Պատելով յօնքերը՝ Հայրը կանչեց Գաբրիէլը .

— Գա՛բրիէլ, ի՞նչ է աս բողոքը . դո՞ւն առիր Գ . . . եաններու հոգին . դո՞ւն «բարերար» արձանագրել տուիր այդ անուաները :

— Տէ՛ր, պատասխանեց Գաբրիէլ, ամէն անգամ որ կը շրջէի հայ ժողովրդին մէջ՝ հոգի ժողուելու պաշտօնովս, միշտ ականջիս կը զարնէր «Գ . եան բարերար, օրհնեալ գերդաստան» բացատրութիւնները իրարու ձուլուած : Տաճարներուդ մէջ այդ անուաները կը փառարանուէին պատրիարքական կոնդակներով . արդար մարդիկ կարծելով՝ հոգինին ևս առի :

— Հասկցայ, ըսաւ Հայրը, քննէ առաջ պատասխանատուութիւնը Պատրիարքներուն վրայ կը ծանրանայ . առանց անոնց հաւանութեանը ո՛չ եկեղեցիներս կը պղծուէին խաբէբայութեամբ, ո՛չ ժողովուրդը ստուծիւններու զսհ կ'երթար : Որո՞նք էին Պատրիարքները :

Ռափայէլ, տևարակներէն ստուգելով .

— Առաջին կտակարար Կարապետ Գ . . . եան, ժամանակին Պատրիարքն ալ Նէրսէս Վարժապետեան :

— Նէրսէսը մեծատուններու քիչ մը շատ երես կուտար, ըսաւ Հայրը . ասոնց ալ աչք գոցած ըլլալու է : Բայց ուրիշ աղէկ բաներ ալ ըրած է, անոնք դէմը կ'առնեն : Կանչելու պէտք չկայ : Ետեւէն եկո՞ղը :

— Յաջորդ կտակարարը Տիգրան, Պատրիարք Մատթէոս :

— Կանչէ՛ :

— Մատթէո՛ս Պատրիարք Իզմիրլեան :

Հանդարտ հանդարտ գլուխը գերեզմանէն հանելով, Իզմիրլեան կը յառաջանայ ծանրաքայլ . հրեշտակները պատկառանք կը զգան . Հայրն ալ ինքզինքը կը ժողուրրտէ : Պատրիարքը յարգանքով կը բարեւէ Հայրը, Որդին, Հոգին և կը կայնի :

— Մատթէո՛ս, կը հարցնէ Հայրը, Գ . . . եաններ քու պատրիարքութեանդ օրովն ալ խաբերայ կտակ մը ըրած են . ի՞նչպէս օրհնեցիր զանոնք և ազգին բարերարները հռչակեցիր :

— Խառն ժողովին որոշումը այս էր, կը պատասխանէ Իզմիրլեան խառօրէն:

— Որդիիս փոխանորդը դ՞ո՞ւն էիր թէ Խառն ժողովը:

— Ես՝ Սահմանադրութիւնը միայն կը ճանչնամ:

Հրեշտակները տեսնելով այս դիմադարձութիւնը, կը փափան. «Գնա՛ց, գնա՛ց, դժո՛խք գնաց:»

— Խղճիդ համար ի՛նձի պատասխանատու ես:

— Ո՛չ. ես Սահմանադրութեան վրայ երդում ըրած եմ. պատրիարքական պաշտօնիս համար միայն Սղգային ժողովին պատասխանատու եմ, իսկ հաւատքի խնդիրներու մէջ ալ Հոգւոյն Սրբոյ. իրաւատութեան սահմանները ճշտած եմ:

- - Ի՛նձի հայէ, եղբա՛յր, ըսաւ Հոգին Սուրբ, զիս մէջ մի խառնէր. քու պատրիարքական ընտրութեանդ ես չեմ խառնուած. ես աղաւնի եմ, անուշ դէմքերը կը սիրեմ, քեզի պէս խստադէմ մարդը ինձի դուր չի գար: Ո՛չ սուտաքեալներուն, ո՛չ կաթողիկոսներուն, ո՛չ պապերուն մէջ նմանդ տեսայ:

Որդին Հօրը ծուկով կ'ըսէ.

— Հա՛յր, եթէ կը հաճիս, կարճ կապէ այս մարդուն հետ. փորձանք բան է. Համիտը չի կրցաւ հետը գլուխ ելլել, մե՞նք պիտի ելլենք:

— Ես ասանկ մարդը կը սիրեմ, ըսաւ Հայր Աստուած, ժպտելով: Ասանկ համարձակ մարդիկը շիտակ կ'ըլլան. եթէ բոլոր կրօնաւորները ասոր նմանէին, աշխարհը այսպէս շուտ չէի վերջացներ. դժոխքի ալ պէտք չէր մնար:

— Ի՛նչ, կը հարցնէ Հոգին գունաթափ, միտքդ ասիկա արքայութի՞ւն դրկել է:

— Հապա ի՛նչ պիտի ընէի:

— Գթո՛ւթիւն, Հա՛յր, ան տեղի խեղճերուն. երանու-  
թիւննին քթերնուն բերներնուն պիտի գայ. սուրբեր կան,  
սրբուհիներ կան, քիչ մը անմեղ սիրաբանութիւններ պիտի  
ընեն, աս թող պիտի չտայ:

— Ան ատեն, դժո՛խք դրկեմ, կը հարցնէ Հայրը կատա-  
կի շեշտով:



—Ատ ալ չըլլար, վրայ կը բերէ Որդին, ան տեղի թշուառները իրենց պատուհասը արդէն չափազանցօրէն ունին. աս ալ վրանին մի՛ դրկեր:

—Կ'երևի թէ, ըսաւ Հայրը մեղամաղձօրէն, շխաակ մարդուն եթէ անդի աշխարհքը տեղ չկար, ասդին ալ տեղ պիտի չգտնուի: Ինչ և է, ընելիքս գիտեմ. Սե'րօրէ և Քե'րօրէ, առէ՛ք Իզմիրլեան ծառաս և շխաակ արքայութիւն տարէք, առանձնոց մը դրէք, Սկիւտարիւ ըկինքին մօտ, կարօտը առնէ. իրեն ալ ընկեր տուէք Արծրունի Գրիգորը, ան ալ Մատթէոս Պատրիարքի աշխարհականն էր. թող իրարու հետ նստին ելլեն:

—Ու իրարու ալ գլո՛ւխ պատուեն, ըսաւ Հոգին ժպտուն, ամուսնալուծութեան վրայ վիճելով:

Սերօրէն առջեւէն, Քերօրէն ետեւէն՝ Իզմիրլեան կը մեկնի, գլուխը խոնարհեցնելով Հօր և Որդիին առջեւ, և չտեսնելու զարնելով Հոգին որ կը ծիծաղի:

—Վա՛յ քինախնդիր, կ'ըսէ:

Այս միջոցին նորէն Ռափայէլ շուարումի մէջ էր: Հայոց Եկեղեցական Պատմութեան մէջ արձանագրուած էր. «Յաջուդ Իզմիրլեանի՝ Տեղապահ Բարթողիմէոս Արքեպիսկոպոս:» Եւ սակայն Կենաց Դպրութեան Հայոց գլուխը այդպիսի անուն չունէր. Բ.ը կարդացուած ասուն Բարթողիմէոս կանչուած չէր. արդևօք աչքէն վրիպած էր: Նորէն անգամ մը նայեցաւ. չէ, չի կար:

—Ախ, սա Հայոց ձեռքէն քաշածս, կը հառաչէր խեղճ Ռափայէլ: Համիտը անոնց... , ի՛նչ է նէ, քիչ մնաց մեղքը պիտի մոնէի.—Ու Գարրիէլին դառնալով.

—Գա՛րօ, Բարթողիմէոսին անունը ի՞նչպէս արձանագրել տուեր ես:

—Բարթողիմէո՞սը ո՛վ է:

—Արքեպիսկոպո՞ս, Պատրիարքական տեղապահ:

—Ռա՛փիկ, հոգի՛ս, քեղի հազար անգամ չե՞մ ըսած որ եպիսկոպոսներուն հոգին առնելու ես չեմ երթար: Որդիին

մարմնանալէն ի վեր հազիւ տասը եպիսկոպոսի հոգի առած  
եմ, անոնց ալ կէսը սխալուամով: Միքայէլին հարցուր:

— Մի՛քէ, ա՛ղբարս, Իզմիրլեանին յաջորդող Բարթողի-  
մէոսին անունը ի՞նչպէս արձանագրել տուեր ես:

Միքայէլ ցուցամասը շրթունքներուն տանելով.

— Ռափի՛կ, ատ դործը շատ մի՛ խառներ, մեծաւորը  
չիմանայ, սխալմամբ Մահմետականներուն անտրակը արձանա-  
գրել տուի:

— Ի՞նչ. Մահմետականներուն անտրակը մի...

— Ի՞նչ գիտնամ, բա՛ն մըն էր եղաւ: Հոգին բերած ա-  
տենս ճամբան շարունակ «եա՛ մէլէքիմ» ըսելով բաներ մը  
կը պատմէր. ես ալ շփոթեցայ, մոլլա գիտցայ. ան օրն ալ  
չիտակը չափազանց յոգնած էի. առտուընէ մինչեւ իրիկուն  
Համիտին հոգին քաշկուտեր էի, հազիւ կրցած էի հանել. եր-  
կուքը մէկտեղ կը բերէի, սասանաները վազելով եկան յա-  
փրչտակեցին. ես ալ երկուքը մէկ անտրակ անցուցի:

— Հիմա՛:

— Աս իրարանցումին ճ՛վ բարակը պիտի փնտռէ. «Չա-  
միչ Օղլու» արձանագրել տուած եմ: «Օղլուն» կ'ընես «եան»,  
մահմետականն ալ կ'ըլլայ հայ քրիստոնեայ:

— Վա՛յ չարաճճի:

Երբ Իզմիրլեան կը մեկնի, Ռափայէլ կը կանչէ Բարթո-  
ղիմէոսը որ հեւալով կը յառաջանայ, և կուգայ սմբողջ իրա-  
նովը երեսի վրայ կը փռուի Հօր սաքերուն տակ ու երկու  
ձեռքերը միայն վեր բարձրացուցած, կ'աղաղակէ.

— Շէվքէ՛ թլու, գուտրէ՛ թլու, մէրհամէ՛ թլու փատի-  
չահրմ:

Միքայէլ կը վաղէ կուգայ, կը բռնէ վեր կը հանէ Բար-  
թողիմէոսը.

— Մա՛րդ, Համիտին առջեւ չես, Աստուծուն առջեւն  
ես. անոր համեմատ խօսէ:

— Եա՛ Րապպիմ թէալամ...

Հայր Աստուած ցասկոտ արհամարհանքով.

— Գուն հայերէն չե՞ս գիտեր :

— Գիտեմ, գիտեմ :

— Ըսէ՛ նայիմ, ի՞նչ ըրիր Գ . . . եան կտակին համար :

— Եա՛ փատ . . . ա՛յ . . . Եա՛րապ, վագթը զէմանտա վար ըտը, եօգ ըտը . . .

Որդին խնդալով .

— Հա՛յր, աս ցնդածը աղէկ կը ճանչնամ. օրը իրիկուն պիտի ընէ առակ պատմելով. մէջէն ալ պիտի չելլէ. բան մըն ալ չպիտի հասկնանք. նորէն գերեզմանը դարձուր : Իր կարգին թող գայ :

Բարթողիմէոս ետ կը դրկուի գերեզման :

— Հո՞ս ալ մի կէս ճամբան կը մնամ, կը հառաչէ :

Ռափայէլ կը կանչէ .

— Մաղաքիա կաթողիկո՛ս Օրմ . . .

Ու դեռ բառը չամբողջացուցած, Օրմանեան Հռիփսիմեանց վանքէն կլորիկ, գունալիկ կուգայ կը գլտորի Հօր առջեւ, և ձեռքը երկնցնելով .

— Պօնժուռ, սէնե՛էօռ :

— Ա՞ս ի՛նչ է, աս ալ ֆրանսացի՞ է, կ'ըսէ Հայրը խըստութեամբ. Ռա՛փայէլ, աս ի՛նչ սխալ է, հայ չէ՞ աս :

Օրմանեան անհամբեր .

— Սի՛, սի, հայ եմ, արմէնօ, և կաթողիկոս :

— Օրմանեա՛ն :

— Սենիէօռէ :

— Հայերէ՛ն խօսէ նախ :

— Պէնէ, պէնօնէ. սի՛խ, լա՛ւ, լա՛ւ :

— Ի՛նչ ըրիր Գ . . . եան կտակին համար :

— Հա՛, հա՛, հա՛, ձեռքերը շփելով շփշփելով, քաղաքագիտութեամբ վարուեցայ :

Քաղաքագիտութիւնը ի՛նչ է Եկեղեցիին մէջ :

— Հա՛, հա՛, հա՛, բէ՛ռ Տիէօ :

Եկեղեցական փիլօնը քաղաքական վերարկու է : Ազգին հաւտացուցի որ՝ կտակը պիտի գործադրուի . Առլթանին հաւտա-



ցուցի որ պիտի չգործադրուի, և կաթողիկոս եղայ: Ասոնք իմ գիտնալու գործերս են. քուբօ տի պաքքօ, հա՛, հա՛, հա՛...

— Ես հիմա դժոխքին մէջ քեզի կը սորվեցնեմ թէ քաղաքագիտութիւնը ի՞նչ է:

— Չէ՛, Հայր, չէ՛, կը միջամտէ Որդին, հոն ալ սատանայապետին տեղը կ'անցնի, բոլոր սատանաները կը ժողվէ, մեղաւորները կը միացնէ, մեզի խաղ մը կը խաղայ:

— Հայր, կ'աղաչեմ, ինձի տուր Օրմանեանը, ըսաւ Հոգին. ինձի կը յարմարի, խնդումերես է: Արքայութիւն կը տանիմ, ան տեղիներուն ուրախ զուարթ ընկեր մը կ'ըլլայ, Ազարեանն ալ Իզմիրլեանին հետ հաշտեցնելու կ'ելլէ, ժամանակ է կ'անցնի:

— Քեզի ըլլայ, ո՛ւր կը տանիս տար:

— Կրացիէ թանթէ, Բա՛տրէ, կրացիէ թանթէ: Ախ, շնորհակալութիւն, Հայր, շնորհակալութիւն:

Հոգին կուգայ թեւէն կը մտնէ և կը տանի: Օրմանեան ճամբան ինքնիրենը.

— Աս ալ շահեցանք. ասկէ՞ ետքը: Մէյ մը սա Հոգին բուրրովին ինձի կապեմ, անոր միջոցով Երրօրդութիւնը չորրօրդութեան վերածել կուտամ, օր մըն ալ մեծամասնութիւն կը շահիմ և կ'անցնիմ Հօրը տեղ: Ան աշխարհքն ալ համբերելով գործը գիտցող խելացիինն է, ա՛ս աշխարհս ալ:

×

Հայր Աստուած ա՛լ հարկ չի տեսներ միւս Պատրիարքները կանչել. ամէնքն ալ աս պիտի ըսեն, ան պիտի ըսեն՝ մէջէն պիտի ելլեն: Ինք սակայն գործին աղէկ մը տեղեկացած էր, ու վճիռը կուտայ.

— Դո՛ւք, տա՛րաբախտներ, ինչ որ քաշեցիք աշխարհի մէջ՝ կը բաւէ ձեզի. դուք պատասխանատու չէք ձեր մեղքերուն համար. դուք զօհերն էք ընչաքաղց մեծատուններուն, կը ներեմ ձեզի ամէն ինչ. գացէ՛ք արքայութիւն և հանգստացէ՛ք:



Կարապետ և Բիւզանդ Գ...եան, զատուեցէ՛ք միւսներէն, քիչ մը աւելի մեղմ պիտի վարուիմ ձեզի հետ: Իսկ դուք մնացած բոլոր Գ...եաններ, զրկեցիք աղքատը և բարերար հուշակուեցաք, խաբեցիք ժողովուրդը և օրհնեալ գերդաստան կոչուեցաք. կորէ՛ք դժոխք, անիծեա՛լ գերդաստան:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

**ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ** (1862-1908) Աւելի հրապարագիր՝ քան գրագէտ, Արփիար Արփիարեան եղած է հրապարակախօսութեան



մէջ արմատական բայց յեղյեղուկ, խայթող, աղմկող, լի հակասութեամբ. բայց արթուն եւ կենդանի: Ինքն է որ 80ական թուականներէն սկսած մինչեւ 1896 թուականը կը ներկայանայ դրօշակակիրը արմատական եւ նոր գաղափարներու, տաքութիւն եւ ժողովրդականութիւն տալով պոլսահայ լրագրութեան. իր շուրջը հաւաքած է միշտ նոր ու թարմ ուժեր եւ գրական այն լաւագոյն սերունդը՝ որ 90ական թուականներուն կը բանայ թըրքահայ գրականութեան նոր շրջանը:

Ա. Արփիարեան, հետեւելով Մշակի ուղղութեան, հրապարակախօսութիւնը, Հայրենիքի միջոցով, տարաւ դէպ ի ժողովուրդը, նախ ընտրելով պարզ եւ հասկնա-

լի լեզուն: Իր «Օրուան Կեանքը» խորագրով էջերը առօրեայ դէպքերու, եղելութեանց եւ ուշագրաւ դէմքերու մասին, սրամիտ եւ լեցուն տաք շունչով, ամէնէն աւելի կը յատկանշեն զինքը՝ իբրեւ հրապարակագիր, ինչպէս որ իր ֆանթեզիները կը բնորոշեն իր հիւսիսաբարձ տաղանդը: Իր խառնուածքը ամէնէն քիչ ընդունակ ըլլալով գաղափարական անշեղ եւ ամբողջական պայքարի, Ա. Արփիարեան կորսնցուցած է մեծապէս՝ մտնելով յեղափոխական գործունէութեան շրջանակին մէջ, կորսնցուցած է՝ թէ՛ իբրեւ հրապարակախօս, թէ՛ իբրեւ առաջնորդ:

Ա. Արփիարեան գրած է նաեւ կեանքի պատկերներ, որոնցմէ «Կարմիր ժամուցը» եթէ իր գլուխ-գործոցն է, «Ոսկի Ապրջանը» ոչ նուազ տաք ու բաբախուն է կեանքով:



## Ջ Ր Տ Ո Ւ Ք

Հօյհօ՛յ, գետը կը թրջէ ցայգուն քամակն արծաթուած  
Իր յորձքին մէջ ծեծելով անդուլ խարակն ու խուժեր .  
Հօյհօ՛յ, առուն յորդառատ դալարին ծոցն է նետուեր  
Գաղջ տարփանքովն իր ջուրին՝ ուր արեւը կ'ապրի դեռ :

Յակուրջի մը առկախած գիւղակն անդին կ'օրօրեն  
Անրջական հիւսուածքով խումբ մը ժայռի ըստուերներ .  
Վանքին բակը՝ կ'աղօթեն հսկայ ծառեր տարօրէն՝  
Որոնց տամուկ շուքին մէջ Աստուածամարն է կայներ :

Ու գիւղակին դէմ նստած, երիտասարդ ու պչրոտ,  
Պարտէզները՝ վերէն վար վազող ջուրին կրսպասեն,  
Ալ յափրացած խօլ գետին անարգաւանդ դարպասէն՝  
Ու լռութիւնը խածնող լուտանքներէն արհաւրոտ :

Գիշերային ջրտուքի ժամն է . լոյսին մէջ կայնած,  
Մըշակն անքուն, կրսպասէ, ոտքը բոպիկ, բահն ուսին .  
Պարտէզներուն վրայ կ'իջնէ թեթեւ քօղք մը միգամած,  
Ու ծաղիկներ՝ լուսնակով արբշիւ՝ անվերջ կը խօսին :

Ու կ'երկարի լուսարծաթ ժապաւէնն այդ բարբառին,  
Ինչպէս փախչող ասուպի կոթունները կանթնաւէտ .  
Աւազին վրայ ջուրերու կ'իյնայ շառաչը վէտովէտ,  
Խարոյկները՝ ոսկեբաշ՝ ուրեք ուրեք կը վառին :

Հօյհօ՛յ, առուն կը հասնի ցանկապատին քովերէն  
Եւ երգի քուղ մը կու գայ պլլրուած իր գօտիին .  
Սիւք մը կ'անցնի, տերեւներ ծա'փ կը զարնեն ցնծագին .  
Վարէն ջուրը կը խայտայ, կը խնդայ լոյսն ալ վերէն :



Թուամբերն անդուլ կը բացուին, ջուրն անդադար կ'ոռոզէ  
Վարդենիքը, թրթաստանն, եւ ածուները բոլոր .  
Բահի երկու հարուածով նայիս առուն կը թեքէ  
Օծանապուկ ձեւերով հեղուկ իրանն իր ոլոր :

Ջուրն անընդմէջ կը հոսի, ածուները կը լեռնան .  
Ու, դարձուցէ՛ք, կը կանչէ Ծեր մը մոլթին ընդմէջէն .  
Խիճերուն ու սիկին մէջ, բահերը՝ խո՛ւլ կը հնչեն,  
Ու դարձուցէ՛ք, դարձուցէ՛ք, կը կոչէ ձայնն՝ անխաւփան :

Աղջընակ մը, արիշին տակ նստած, շէր կը կանչէ,  
Որ յոգնաբեկ մըշակին օրօրի մը պէս կուզայ .  
Հողը ծրծեց ջուրերուն տարփանքն՝ որ դեռ կը հնչէ .  
Եւ հիմակ՝ թա՛ց՝ կը խոկայ իր երկունքին ապագայ :

ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ

**ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ** (1885-1908), —  
Նուշանային քն.քշութեամբ եւ նուրբ  
զգայնութեամբ օժտուած հոգի մը, որ  
հասուննալով կարող էր բացուիլ հայ բա-  
նաստեղծութեան մէջ իբրեւ ամէնագե-  
ղեցիկ ու ինքնատիպ վարդերէն մէկը,  
բայց խամրեցաւ դժբախտաբար իր առա-  
ջին բողբոջին մէջ իսկ: Միսաք Մեծարենց  
ծնած ակնայ Բինկեան գիւղին մէջ, ու-  
սած Պոլիս եւ հետեւած Վեդր. վարժա-  
րանի, մեռաւ դեռ պատանի՝ 23 տարե-  
կան հասակին մէջ: Իր քերթուածները,  
որոնք հրատարակուած են «Ծիածան» եւ  
«Նոր Տաղեր» գրքոյկներով, կը կրեն  
բեղմնաւոր տաղանդի մը բոլոր նշան-  
ները:





## Ծ Ա Ն Օ Թ Դ Է Մ Ք Ե Ր

### Ա Ր Փ Ի Ա Ր Ա Ր Փ Ի Ա Ր Ե Ա Ն

Տժգոյն՝ իր ոճին պէս, սգաւոր՝ իր գրուածներուն մէջ անիրող սգին նման, ժպտելով շարունակ, ժպտա մը որ դէմքի ցաւագին կծկումին հետ կը շփոթուի և աւերակի մը վրայ ինկող ճառագայթի մը պէս տխուր է. սիրելով աղմուկը՝ իր սրտին միայնութիւնն ու մահաբոյր լռութիւնը մոռնալու համար. շարախօսելով, շարախօսուելով, գլխալով ու գլթութեան արժանի ըլլալով կաղմուած կեանք մը:

Նաւագնացութեան մը միջոցին ծովու վրայ լոյս տեսած այս երիտասարդը, ատկէ թերեւս, անդունդի վրայ քալող մարդու երևուն քալուածքն ունի ու դիտի պտոյտը:

Իր անհաւասար գրականութիւնը՝ այս ծովին պէս, լեցուն է անկումներով ու խիզախ բարձրացումներով. ալետատան ու յողողող գրականութիւն, որ ամէն կողմ կը տանի դինքը, որ ոչինչ ունի անքոյթ, որուն կատարներն ու վիհերը կ'երերան, կը դողան, իրարու վրայ կը գլորին շարունակ, և որ իր ամբողջութեանը մէջ կոծկուեալ բան մը ունի, ճիշտ ծովին նման:

×

Իր սեփով. բայց սեռ չունենալն է իրենը, և ահա ասոր համար է որ գրագէտը չափելու համար ամէն բաղդատութեան եզր բացարձակ կերպով կը պակսի մեղի: Իր եղանակը, ծանօթ ու տուեալ պայմաններէ կը հեռանայ: Գրականութեան մէջ, իր կանոնը՝ զարտուղութիւնն է: Երբ ամէն գրողներ կարգի ու սարքի կը հետամտին, ինքը մինակուկ կը պահէ իր անխնամ ու արտակարգ տարազը. կոծկուած, սանտրուած հրապարակագիրներուն մէջ ինքն է որ հանրութեան առջև ելլելու կը խիզախէ միշտ թափթփած մարդու, արտաքին պաճուճանքով զբաղելու ատեն չունեցողի անփութութեամբ, այնքան

որ այս անհոգութիւնն ա՛լ ճշմարիտ պէրանք մը կը դառնայ :  
Ահա՛ իր գրականութեան յատկանիշերէն մէկը :

×

Մարդիկ կան որ ամէնէն աննշան նիւթին վրայ խօսելու համար հանդիսաւոր ձեւեր , կեցուածքներ կ'առնեն , կը հազան , ձայներնին կը փոխեն , շարժումնին կը լայնցնեն :

Մասիսի նախորդ խմբագրապետը հակառակն է անոնց . իր ընտրած նիւթին ծանրութեան չափ իր գրելու եղանակը կ'անօտրանայ միշտ : Ասիկա՛ իր գրականութեան Ֆիզիք/ն օրէնքներէն մէկն է :

Հոն ուր ուրիշներ պիտի խոժոռէին՝ ինքը կը ժպտի , և հոն ուր ուրիշներ պիտի լային՝ ինքը կ'երգէ . բայց երգին մէջ ողբի պէս բան մը կը պահուրտի , և այս զուարթութիւնը՝ որուն տակ արցունքի կաթիլ մը կ'ապաստանի , այն ծիրանի գօտիները կը յիշեցնէ ինձի , որոնք իրենց պայծառ գոյներուն ցոլացումին տակ կը ծածկին երկինքին թօնընկեցիկ տրամութիւնը :

×

Գրականութիւնը՝ իր տարփանքը , զինքը հրապուրող սիրունին ըլլալ կը թուի : Այս նախկին Վենետիկեանը՝ իր վահական կեանքի մաքրութիւնը անաղարտ պահած է միշտ . Ս , Ղազարի մէջ վարդապետ չէ կրցած ըլլալ , բայց աշխարհական ալ մնացած չէ . ամէն ինչ թերատ , ստուերոտ ու անկատար է իր վրայ : Այս կիսաւարտ քահանան , այս գրչի մարդը՝ տեսակ մը Ռընանի տպաւորութիւնը կը թողու իմ վրաս . ո՛չ անոր մեծ դիրքը և ո՛չ անոր ահաբեկիչ հմտութիւնը ունի հարկաւ . բայց անոր նման՝ բանաստեղծութեան ու պատրանքի թաքուն գանձեր կան իր սրտին մէջ որոնք եկեղեցական կրթութեան մը լռութեան ու առանձնութեան մէջ զիզուած , հաւաքուած են , և որոնք իր գրականութեան մէջ երեւան կ'եղեն , կենդանի ու զգայուն հոգի մը տալով իր սովորաբար պարզ ու անպաճոյճ գրուածքներուն :

×



Իր ժողովուրդի զաւկի, գրեթէ շուկատ մարդու ձեւերը կը սիրեմ: Իր մշտնջենական պատիւը պիտի ըլլայ մեր մէջ, իր Օրուան Կեանքերովը առաջին անգամ ինքը տանիլը, մօտեցնելը գրականութիւնը ժողովուրդին, փոխանակ ժողովուրդը բերելու անխախտ գրականութեան մը անմատչելի բարձունքին:

Իրմով սկսած ու քաջալերուած է միշտ այն երիտասարդ գրողներու շարքը՝ որ մեր հրապարակախօսութեան արդի ուամիկ, թէ որ կ'ուզէք, բայց հասկնալի ու սրտի մօտիկ հանգամանքը տուած են:

Այս տասը տարիներուն մէջ ուր իր գրական գործունէութիւնը կը փայլի, ամէն կողմ տարած են զինքը իր թափառայած գրագէտի պարապմունքը:

Ջուրի արձակումի մը պէս կու գայ, կ'անցնի, կը տարածուի, կը լայննայ, կ'անձկանայ ու կ'անհետի յանկարծ, և որ մը անշուշտ պիտի գտնեն գետնին վրայ ահօս մը, իր լրագրական արգասաւոր սնցքին նշանակ:

×

Ի՞նչպէս պիտի ըլլայ այս կեանքին ծերութիւնը. վերջի վերջոյ ո՞ւր պիտի կանգ առնէ զինքը տանող նաւակը:

Ինչ որ ամէնէն հաւանականն է, այն է որ քանի մը տարի վերջը իր մեծ իմացականութիւնն ալ այն մշուշին մէջ մտնէ՝ ուրկէ իր գոյութիւնը երբեք դուրս չէ կրցած ելլել:

Գ. ՋՕՂԱՊ



## Գ Ի Շ Ե Ր Ա Պ Ա Ն Ը

Գիշեր է. տա՛նկ, տա՛նկ. հսկա՛յ ժամացոյց:  
 Հանգիստ է չորս դին, կը ննջեն բոլոր.  
 Միայն ինքն է որ՝ հանգոյցէ հանգոյց  
 Փողոցներ կ'անցնի լուռ, քայլամուր:

Պաղ հովը կուգայ կը զարնէ ճակտին,  
 Ուր հին-հին յուշեր յանկարծ կը յածին,  
 Ինչպէս երկնքի քողէն ալ անդին  
 Մոռցրած աստղեր մերթ վառ կ'առկայծին.

Ու միտքն ակամայ թափով մ'ինքնաբեր  
 Կը թռչի հեռուն՝ տունը հայրենի.  
 Է՛, կեանքն ուրիշ էր, սրտերն ալ տարբեր  
 Այն լեռներուն մէջ վեհ ու ամեհի:

Ու պարզ կը յիշէ. գիշեր է խորին.  
 Իրենք քոյր-եղբայր լարումով անհուն  
 Լրուիկ պաշարած ալեհեր հանին,  
 Կ'ունկընդրեն անոր վէպերն հմայուն:

Եւ հանին ինքն ալ ներշնչւած արդէն՝  
 Մհերի ուժը կը պատմէ տղոց,  
 Երբ յանկարծ բուքը տրնակի երթէն  
 Այլանդակ ձայնով կը հանէ հոգոց:



Ահեղ ոռնուամով կարծես կը խօսի,  
 Կը սուլէ բառեր բիրտ ու չի լրսւած,  
 Բա՛ռ, որ դժոխքի խորքէն կը հոսի.  
 Ու խաչ կը հանէ հանին երկիւղած:

Իսկ տղաքը լուռ կը նային իրար  
 Ու ամէն մէկը կը խորհի ինքնին  
 Որ նոր Մհեր մը դառնայ անպատճառ՝  
 Երբ ինքն ալ հասնի անոր տարիքին:

Եւ ահա՛ ... տա՛նկ, տա՛նկ. խորհո՛ղ ժամացոյց:  
 Հանգիստ է չորս դին, կը ննջեն բոլոր.  
 Միայն ինքն է որ՝ հանգոյցէ հանգոյց  
 Փողոցներ կ'անցնի լուռ, քայլամուր:

#### ԼԵՒՈՆ ՍԵՂԲՈՍԵԱՆ

**ԼԵՒՈՆ ՍԵՂԲՈՍԵԱՆ (ՇԱՆԹ).**— ԼԵՒՈՆ ՍԵՂԲՈՍԵԱՆ մասնակցած է Թէ՛ Թրքահայ եւ Թէ՛ ռուսահայ դրականութեան՝ որպէս վիպագիր եւ որպէս բանաստեղծ: Իր վէպերուն մէջ ձգտումով գաղափարապաշտ, սակայն արուեստով կը մնայ իրապաշտ: Իբրեւ բանաստեղծ՝ իր յատկանիշն է աւելի շատ հովուերգութիւնը: Իր քերթուածները ամփոփուած են Երգեր եւ Լեռան Աղջիկը հատորներուն մէջ: Յայտնի վէպերն են՝ Երազ Օրեր, Դուրսեցիներ, Վերժին, Դարձ, Դերասանուհին: Ունի նաեւ Եսիկ Մարդը, Ուրիշին համար, Ճանքուն վրայ եւ Հին Աստուածներ Թատերախաղերը:





## ԱԶԳԵՐՈՒ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆԸ

## Ա.

«Սորհուրդ նոր, — կ'ըսէր ասկէ տասներինը դար առաջ Պօղոս առաքեալ. ազգեր ժառանգակից են և անդամներ միևնոյն մարմնին, համամարմին են:»

Սորհուրդ նոր, արդարեւ, մարդոց գրեթէ ամբողջութեան համար՝ այդ ժամանակին մէջ, և, աւանդ, դարձեալ նոր՝ շատերու համար՝ մեր ժամանակին մէջ: Եւ սակայն աշխարհիս չափ հին խորհուրդ մը, որ իմաստուններու կողմէ ընդհնմարուած և մատնանիշ եղած է՝ ատեն ատեն, և որ մեր օրերուն ալ, ամէնէն աւելի ազէտներուն համար իսկ, պէտք էր որ շողշողար արեւու լոյսին նման:

«Մենք անդամներն ենք մեծ մարմնի մը», կը գրէր Պօղոս Առաքեալի ժամանակակից Սէնէկա՝ դարձեալ միևնոյն ժամանակամիջոցին: «Մարդկային ցեղէ մեծ ընկերութիւն մը կայ» ըսած էր անոնցմէ առաջ հռոմայեցի մեծ ճարտասանը՝ Կիկերոն, որ նոյն իսկ մարդկային ազգի լարեկամութեան մասին խօսած էր:

Աւելի ետքը (ևս մէկ քանի հեղինակութիւնները միայն կ'սւղեմ յիշել, և չեմ երթար զանոնք փնտռելու Եւրոպայէն դուրս և ասիական քաղաքակրթութեան հեռաւոր դարերուն մէջ, Կոմֆիկիտաներու, Զրադաշտաներու, Մանուներու և Սաքիա-Մունիներու քով) սուրբ Յովհան Ոսկերեցիին հիանալի լեզուով մը հերքելով բանաստեղծ Հօրանի անձուկ գաղափարները, փառք կու տար Աստուծոյ՝ հեռաւոր երկիրներու մէջ տեղաւորած ըլլալուն համար ծովերու հեղուկ մակերեսը, որ պէս զի մարդիկ կարենան աւելի դիւրութեամբ հաղորդակցիլ իրարու հետ և եղբայրներու պէս հաւաքուիլ ընտանիքի Հօր սեղանին շուրջը: Գործնական միտքով Սիլլի իր կարգին կ'ըսէր. «Ո՛րքան տարբեր կլիմաներ, գաւառներ և երկիրներ կան, նո՛յնքան կը թուի թէ Աստուած ուզած է զանոնք տարբեր

կերպով յորդառատ դարձնել այլևայլ մասնաւոր դիւրութիւններով, արմտիքներով, նիւթերով, արուեստներով և արհեստներով—որոնք երբեք ընդհանուր չեն ուրիշ տեղերուն — որպէս զի այդ բաներուն փոխանակութեամբն ու վաճառականութեամբը—քանի որ ոմանք առատօրէն ունին այդ բաներէն և ոմանք՝ շատ քիչ — երթեւեկները, տեսակցութիւնը, և մարդկային ընկերութիւնը միշտ գոյութիւն ունենան ազգերումիջև, որքան ալ հեռու ըլլան անոնք իրարմէ»:

Եւ մեզի աւելի մօտ եղողներ, Թիւռիցիներ, Ֆրանքլիներ, Պասթիաներ, Բիլեր և Քօպարններ, անձկելի խառութեամբ մը ապացուցանելով թէ ամէն բարիք և ամէն չարիք ամէնուն համար են և իրենց հակազդեցութիւնները կ'ունենան, ապացուցանելով թէ եսասիրութիւնն իսկ պէտք է որ մեզի ուրիշներու բարգաւաճութեանը փափաքիլ տայ, — անվերաքննելիօրէն դատապարտած են հակամարտութեան հին քաղաքականութիւնը, և եզրակացուցած են թէ՛ փոխադարձ բարեացակամութենէն առաջ կու գայ հիմնական պայմանը ամէն լուրջ յառաջդիմութեան: Արտադրութիւններ փոխանակել՝ կը նշանակէ ծառայութիւններ փոխանակել, և յաճախօրդները աւելի հեշտիւ բարեկամներ կը դառնան. — Ազատ վաճառականութիւնը՝ մեծ խաղաղարարն է:

Անցեալ դարու կէսէն ի վեր մանաւանդ, աստիճանաբար որ ճարտարարուեստին ուժովը բազմապատկուած են հազորդակցութեան միջոցները, — հակառակ ճնշումի և հակամարտութեան վարդապետութեանց յարատեւելուն, — նիւթական, իմացական և բարոյական համերաշխութիւնը յայտնապէս հաստատուած է: Եւ մեզմէ մէկը չկայ որ, ամէն ատեն, գիտակցաբար կամ ոչ, օժանդակը կամ բարերարը չըլլայ ամբողջ մարդկութեան: Կարելի է ըսել թէ այդ՝ տառապէս կեանքի ու մահուան պայման մը եղած է, — Ըլլալ կամ չըլլալ:

Աշխարհի ամէնէն մեծ ազգերէն մէկը, այն, որ ամէնէն հարուստն ալ է, Անգլիա՛, բացարձակապէս անօթութենէ կը մեռնէր, եթէ օտար հրապարակներու վրայ համարժէք ար-

տաղրութիւններու փոխարէն չգտնէր երկու երրորդ մասը այն հացին որուն պէտք ունի: Միեւնոյն երկրին, ինչպէս նաեւ Ֆրանսայի, Գերմանիոյ և Եւրոպայի մնացած մասին հիւսուածեղէնի ճարտարարուեստը չի կրնար զանց ընել արտա-եւրոպական երկիրներու նախնական նիւթերը: Այդ բանը շատ լաւ զգացին անոնք, երբ անջատուամի պատերազմը զիրենք բամբակի անողոք սովի մը ենթարկեց: Եւ առանց քաուչուին և կուսաբեբային զորս մեր տեղերուն մէջ չենք գտներ, ի՞նչ պիտի ըլլար բովանդակ սա՛ հրաշալի կազմածը՝ հեռագրական, հեռաձայնական և այլն հաղորդակցութեանց, որոնք իրաւամբ նմանցուած են մարդկութեան ջղային դրութեան: Կեանքն՝ աւելի ճիշտ՝ մարմնի կեանքն ու մտքի կեանքն է որ կը շրջագայի մարդկային ընտանիքի մեծ մարմնին անհամար օռկաններուն մէջ, ինչպէս արիւնը կը շրջագայի մեզմէ իւրաքանչիւրին օռկաններուն մէջ: Ենթադրեցէք պահ մը՝ ո՛չ թէ սանձարձակ պատերազմը՝ իր կոստրածներով, իր աւերքներով, այլ պարզ մէկ ընդհատումը այդ շրջագայութեան. — ցորենը, երկաթը, հանքածուխը, բամբակը, բուրդը և այլն. հրապարակին վրայ կը մնան, ի չգոյէ շահաստաններու. և այն ատեն ի՞նչ զրկանքներ, ի՞նչ տառապանքներ, և ի՞նչ անսանձ ողորում ամէն կարգի թշուառութեանց:

Պիտի ըսուի թէ ատիկա աղէտ մըն է որ չի կրնար իրականանալ: Այն ժամանակին մէջ ուր հասած ենք, ոչ մէկ ժողովուրդ ա՛յնքան յիմար չպիտի ըլլար ինքզինքը արգելքի մէջ դնելու և, ինչպէս կ'ըսէր օր մը պելթ մսագործ մը, սուինը հանելու հացին և մսին դէմ: Բացարձակապէս տարակոյս չկայ ատոր: Ի՞նչ են սակայն, նուազագոյն չափով մը, այդ արգելքները՝ այնքան բազմաթիւ տակաւին՝ արտադրութեանց, երբեմն ալ մարդոց, ազատ արտածութեան դէմ, եթէ ոչ՝ կամաւոր սահմանափակումներ և զրկանքներ աշխատանքի, անունդի և զգեստեղէնի ազատ ներածութեան:

Բայց խնդիրը միայն այն չարիքին վրայ չէ զոր մենք մեզի կ'ընենք, այլ այն չարիքին վրայ զոր ուրիշներ կ'ընեն



իրենց միջև, և որուն հարուածը անխուսափելի կերպով մենք կը կրենք (բայց որմէ կրնայինք զերծ մնալ թերեւս):

Առնենք, օրինակի համար, վերջինը այն մեծ պատերազմներէն որ հարուածած ըլլան մարդկութիւնը, — ուսեւճարոնական պատերազմը: Եւ, որպէս զի չամբաստանուինք թէ զգացումով կը շարժինք, մէկ կողմ թողունք բոլոր այն վնասները զորս երկու պատերազմիկ ազգերը փոխադարձաբար պատճառեցին, — իբր թէ խնդիր չըլլար այդ: Մտնանք ճակատամարտները իրենց նախճիրներով և վիրաւորեալներով որոնք իրենց արիւնը կը հեղուն ձիւնին մէջ. մտնանք պաշարուած քաղաքները, ականներու պայթումները, իրենց նաւազներով ընկղմած նաւերը, և, աւելի հեռուն, ճարոնական ու ուսական գիւղերու մէջ լքուած դաշտերը, ամայի խորճիթները և վշտահար ընտանիքները: Միայն մենք մեզի խորհինք, իբր կատարեալ եռասէրներ, և հարցնենք իւրովի թէ Ֆրանսայի, Անգլիոյ, Աւստրիոյ, Իտալիոյ, Պելժիոյ մէջ և այլուր, ուր մենք չեզոքներ էինք, այսինքն թէ, ինչպէս կը թուի, անտարբերներ կռիւին, մենք կրեցինք անոր հետեանքները: Պիտի տեսնենք թէ, շանթին ինկած տեղէն շատ հեռու ըլլալով հանդերձ, մարդ զերծ չէ այն բանէն զոր բնագէտները հակահարուած կը կոչեն:



Մեծ տեղատարափները, հրարխային պոռթկումները, երկրաշարժները, ողողումներն ու մակընթացութիւնները միշտ աղէտներ եղած են, բայց երկար ատեն տեղական աղէտներ միայն եղած են: Աշխարհ չէր վնասուեր անոնցմէ, նոյն իսկ չէր տեղեկանար անոնց, և կամ շատ ուշ կը տեղեկանար անոնց և տարտամ ու հեռաւոր գթութիւն մը միայն կը զգար: Մեր օրերուն, ատոնք տիեզերական աղէտներ են: Եւ ասիկա միայն այն ցաւագին համակրութեամբը չէ զոր կը ներշնչեն անոնք, այլ այն սուգերով, աւերքներով և սնանկութիւններով զորս անոնք առաջ կը բերեն երկրագնդիս մակերեսին վրայ. այսպէս Մօն Փըլէի, Սան-Ֆրանչիսքօի կամ Վալփարէզօի աղէտները՝ ընդ-

հանուր աղէտներ են : Այսպէս և պատերազմը , ու ո՛չ միայն ,  
կը կրկնեմ , ա՛յն պատերազմը որուն կը մասնակցինք մենք ուղ-  
ղակի , այլ այն որուն մենք բոլորովին օտար կը մնանք :

Ձեր դրացիներուն սան մեջ հրդեհը կը պատահի .

Հիւսիսահովը կը փչե , եւ ձեր սանիֆները կ'այրին . —

Կ'ըսէր ութսուն տարի առաջ Պէռանժէ բանաստեղծը :  
Եւ տխրօրէն կ'աւելցնէր .

Իւրաքանչիւր պէտքի տեսանալու սահմանագծին մօտ

Ո՛չ մէկ հասկ մատուր է մարդկային արիւնի :

Ասիկա միշտ ճշմարիտ եղած է , բայց երբեք չէ հաս-  
կըցուած . և առանց պատճառի չէ այս : Անցեալ դարերուն ,  
միայն հինգ հարիւր մղոն անդին ա՛յն վայրէն ուր մարդիկ իրար  
կը կոտորէին , կանոնաւոր կեանքը կրնար շարունակուիլ գրե-  
թէ առանց նշանակելի վնասի . և խօսիխողումներու ու յառաջ-  
խաղայութեանց լուրերը , ինչպէս կ'ըսէր Լա Պոլեյէռ , Վէր-  
սայլի կամ Ամսթէրտամի լրագրողներուն համար խօսակցու-  
թեանց նիւթ միայն կրնային ըլլալ : Այսօր , շահերու խառնա-  
շփոթութեան հետեւանքով , ամբողջ աշխարհն է որ կը դղրդայ :

Ճարտնական զինուորներու պատերազմի սկսելուն հե-  
տեւեալ օրն իսկ , Եւրոպայի և Ամերիկայի բոլոր սակարան-  
ները տակնուվրայ եղան , բոլոր արժեթուղթերը , պետական  
պարտաթուղթերը , ճարտարարուեստական , առեւտրական ,  
հանքային կամ այլ բաժնեթուղթերը վնասուեցան : Եւ հան-  
րային ու մասնաւոր հարստութեանց ենթարկուած խանգա-  
րումները հարիւրաւոր ու հարիւրաւոր միլիոններով հաշուուե-  
ցան , որոնք եթէ մէկ քանիներու հարստացման , մեծ մասին  
այլ քայքայուելուն պատճառ եղան : Շատեր , իրենց կրած  
կորուստներուն հանգամանքովն իսկ , չեն կրցած պարտկել  
անոնց ծագումը , բայց զգացած են պատերազմը : Բայց քա-  
նինե՛ր նուազ սրամիտ ըլլալով , չեն կրցած հասկնալ իրենց  
ունեցած վնասներուն պատճառը : Փռօլանսի գաւառը ուր

ամէն ձմեռ Հիւսիսի հարուստ բնակիչները օդափոխութեան կ'երթային, Փռօվանաի գաւառը, որ իր արեւը կուտար անոնց և կամ բռններով ծաղիկ կը դրկէր Փեթերսպուրկ կամ Մոսկուա, յանկարծ տեսաւ որ իր բարգաւաճութիւնը ընդհատուած է. սպառնառն այն էր որ իր յաճախորդները անձկութեան մէջ էին: Միւսնայն ասին, փարիզեան նորածեւութեանց արտածութիւնը նուազեցաւ, և մենք ամէնքս, մեր բրդեայ զգեստներն ու մուշտակները սահալանելու համար անոնց վրայ յարձակող միջատներէն, կրկնապատիկ դրամ հատուցանել ստիպուեցանք անվնաս քափուրին համար՝ որմէ հոն աւերքի ու սպանութեան ազդակ մը կը կազմուէր: Եւ ո՞վ գիտէ թէ շատ յաճախ խնդհ գինուորը երբ հոն, հե՛ռուն, արուած հրամանի մը համաձայն, կամ բուռն միջոցներ ի գործ դնելու մէկ պահուն, կամուրջ մը օդը կը հանէ, գործարան մը հրդեհի կուտայ, ական մը կը տեղաւորէ կամ վաճառատուն մը կը թաղանէ, իր ձեռքովն իսկ չքանդէ՛ր արժէքը այն սղտիկ խնայողութեանց՝ որոնք բաժնեթուղթի կամ սարաթուղթի ձեւին տակ՝ մեծ դժուարութեամբ տեղաւորուած են վաղեմի արեւակիցներու կողմէ, որոնք զայն կ'ողբան միայնութեան մէջ:

Բայց խնդիրը երկու կողմ ունի: Այս տխուր պատկերին հանդէպ բարեբախտաբար հակընդդէմ կողմ ալ կայ: Եւ մենք, հռչակաւոր խօսքի մը համաձայն, կրնանք յուսալ թէ ասիկա պիտի չփայցնէ միւսը: Չարիքին համերաշխութիւնը առաւել եւս յայտնի դառնալով, և զայն մերժելը աւելի անկարելի ըլլալով, պէտք է որ մեզի ուսուցանէ չարիքէն խուսափելը եթէ մենք կամաւոր կոյրեր չենք: Եւ բարիքին համերաշխութիւնը որ նուազ իրական չէ, դարձեալ պէտք է որ մեզ ուսուցանէ փնտուել և մշակել բարիքը, միշտ բարիքը՝ մեզի և ուրիշներու համար, և ուրիշներու բարիքը՝ ուրիշներու և մեզի համար: Մենք միայն մեր կամ ուրիշներու ձեռքով պատրաստուած հացով, զգեստեղէններով կամ պիտոյքներով չենք ապրիր. մենք կ'ապրինք մեր ծանօթ կամ անծանօթ



եղբայրներու կողմէ եղած, արտայայտուած, և ի լոյս ըն-  
ծայուած գաղափարներով, գիւտերով և զգացումներով: Գեր-  
մանացի պարզ ստայնանկներ կ'ըսէին Տօքթ. Շարլ Ռիշէի.  
«Ֆրանսացի Ժաքաւին կը պարտինք այն արհեստը որ թոյլ  
կուտայ մեզի ապրեցնել մեր ընտանիքները:» Ամերիկացի  
Մօրսը կըլած է որ, եթէ ոչ առանձինն, բայց ուրիշէ մը աւելի  
մեզ օժտած է ելեկտրական հեռագիրով, և ան վարձատրուե-  
ցաւ միջազգային շնորհապարտութեան պաշտօնական արտա-  
յայտութեամբ մը: Իտալացի Մարքօնիի նախնական գիւտը  
փրկեց մեզ հեռագրաթերերու և ընդծովեայ պարաններու գե-  
րութենէն: Անգլիացի Քօպտըն, ուրիշներէ ետքը, մեզի սոր-  
վեցուց նիւթական շահերու շղթայումին մէջ տեանել արդա-  
րութեան և փոխադարձ բարեացւ. կամութեան երաշխիքն ու  
զրաւականը: Եւ գերմանացի Քանդն է որ, բովանդակ մտա-  
ծող աշխարհին կողմէ լնդուհուած իր հեղինակաւորութեամբ,  
սպառազայի գերազանց քաղաքականութեան իմաստասիրական  
բանաձեւը տուաւ մեզի:

Աշխարհ լուսաւորուելով, գեպի միութիւն կը բարձրանայ:

Եւ եթէ լեզուներու մէջ մեր տգիտութեամբ շատ բաժ-  
նուած կը մնանք տակաւին, բարբառներու և սովորութիւն-  
ներու այլազանութեան ընդմէջէն կը զգանք որ հիմնապէս  
մենք միեւնոյն բնութիւնը ունինք, միեւնոյն պէտքերը, միեւ-  
նոյն հոգին և թէ մենք կը ձգտինք, մենք պէ՛տք է որ ձրգ-  
տինք մանաւանդ միակ հրապարակ մը, միակ գործատեղի մը  
վերջապէս, միակ ընտանիք մը դարձնել այս երկիրը զոր  
արիւնտտած ենք իրարու հետ կուուելով:— Ընտանիքը յանձնել  
տիեզերական մեծ հայրենիքին, մէջն առնելով այլեւայլ հայրե-  
նիքները, քաջակազմ մարմնի մը պէս որ կը զօրանայ ներ-  
դաշնակօրէն մարզելով իր բոլոր անդամները:

Ու և է մէկը, կ'ըսուէր ատենին, երկու հայրենիք ունի,  
—մէկը ա՛յն հայրենիքը, որ իրեն ծնունդ տուած է, և այն՝  
որ այլեւայլ պարագաներով ամէնէն աւելի արդիւնաւորապէս  
նպաստած է իր զարգացման: Ռուս ընկերաբան Նովիքով

տասը տարի առաջ, օր մը Համպուրկի Սաղաղութեան Համաժողովին մէջ պատեհօրէն կը կիրարկէր այս ճշմարտութիւնը, կարգաւ ողջունելով իր երկրորդ հայրենիքը, Գերմանիան և երրորդ հայրենիքը՝ Ֆրանսան, անոնց իւրաքանչիւրին լեզուովը:

Պէտք է աւելի հեռուն երթալ, և առանց ու է բան նուազեցնելու այն նախընտրութենէն զոր պարտինք մեր մասնաւոր հայրենիքին, ընդունիլ որ բոլոր հայրենիքները, քիչ կամ շատ, մեզի համար հասարակաց են, քանի որ չկայ հայրենիք մը որուն չպարտինք մաս մը մեր եղածէն, և որ մեզի, մեզի և մեր ազգակիցներուն, չպարտի ու է բան իր էութենէն: Եւ ժամը եկած է որ, տարամերժելով բոլոր նախանձի ու ատելութեան հին կուսակցութիւնները, որոնք անմտութեան կուսակցականութիւններ են—ըսենք Վիքթօր Հիւկօի հետ՝ 1899ի անմոռանալի համաժողովին մէջ անոր խօսքը. «Հայրենակիցներ երկու աշխարհներու», և Համարթինի հետ՝ «Քաղաքակիցներ ամէն մտածող հոգիի»:

ՅՐԷՏԷՐԻՔ ՓԱՍԻ

## ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ

Արի՛, գո՛ւթան, վարի՛, գո՛ւթան,  
Օրն եկել է, ճաշ դառել,  
Առը շուռ տուր, խոփի՛ղ դուրբան,  
Օրհնեալ է Աստուած է, հօրովէ՛լ:

Քաշի՛, ե՛զը, ուսի՛ղ մատաղ,  
Քաշի՛, քաշենք, վար անենք.  
Ճիպտին՛ արտը քըշի՛, հօ՛տաղ,  
Մեր սեւ օրին ճար անենք:

Պարտքատէրը գանգատ գընաց,  
Քեօխովէն կը գայ, կը ծեծի,  
Տէրտէրն օրհնեց, անվարձ մընաց,  
Կը բարկանայ, կ'անիծի:

Էն օրն եկան թօլջի արին ,  
 Հարկ են ուզում տէրութեան .  
 Ի՞նչ տամ կողին ու բէգեարին...  
 Վարի՛, վարի՛, ի՛մ գութան:

Ձեռքս պակաս, ուժքս հատած,  
 Հազար ու մի ցաւի տէր,  
 Ինձ են նայում մերկ ու սոված  
 Մի տուն լիքը մանուկներ:

Արի՛, գո՛ւթան, վարի՛, գո՛ւթան,  
 Օրն եկել է, հաշ դառել,  
 Առը շո՛ւռ տուր, խոփիդ դուրբան,  
 Օրհնեալ է Աստուած, հօրովէ՛լ:


Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ


## ՎԱՆԵՑԻ ԳԵՂՋՈՒԿԻ ՏԱՂԸ

Աղօթարանը բացուեցաւ, ժամանակ է զարթելու,  
 էրթամ ախոռ, գոմշուկներըս լրծեմ՝ գութան վարելու:  
 Դէ՛հ, գո՛մշուկներ, ելէ՛ք, ելէ՛ք, արտը էրթանք, աշխատինք,  
 Հարկ ու խարճի վատէն մօտ է, վոթենք արուն ու քրտինք:  
 Հայի գութա՛ն, Հա՛յի գութան, որի՞ համար կը ջանաս .  
 Ո՞վ քեզիմով կը տանջուի, որի՞ն դու կուշտ հաց կուտաս:  
 Այն օր, երբ քեզ ձեռքս առի, ազատ օրըս կորուցի,  
 Անվախ սիրտըս վրհատեցաւ, հոգիս դուշմնին մատնեցի:  
 Բա՛ւ է, գո՛ւթան, մեր տանջանքը, համբերութիւն վերջ ունի .  
 Դուն տեսար որ՝ մեր դուշմանը ամօթ, խելք ու գութ չունի:  
 Արի՛ փշրեմ ես քու խոփը, տանք դարբինին կրուելու,  
 Կրուենք, կոփենք սուր ու սուրեր՝ դուշմանի դէմ կրուուելու:  
 Եղբա՛րք Հայեր, առէ՛ք խոփը, տըլէ՛ք դարբնին կրուելու,  
 Կրուել, կոփել սուր ու սուրեր՝ հայրենիքը փրկելու:

Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆ







ՊԱՏԵՐԱԶՄ

Նկար Գ. Շրուֆի

## Ղ Ա Ջ Ա Ր Ո Ս

Յիսուսի ձայնն առնելովն, Ղազարոս արթնցաւ. գու-  
նատ, ելաւ մութին մէջ կանգնեցաւ. դուրս ցատկեց իր մե-  
ռելական խանձարուրին մէջ սրափալով, յետոյ, շիտակ գէմն  
կլած կողմը, խոհուն ու մինակ, քալեց գնաց:

Խոհուն ու մինակ, անկէց ի վեր քալեց քաղաքին մէջ,  
կարծես մէկը փնտուկով՝ զոր չէր գտներ, և ամէնուրեք՝ իր  
ամէն մէկ քայլին՝ հանդիպելով կեանքի երերուն, ստրուկ  
խուժանին:

Իր ճակտին տակ՝ որ կը շողար մեռելներու դալկու-  
թեամբը, աչքերը փայլակ չէին արձակեր, և բիբերը՝ կարծես  
յաւերժական փողփողումները վերջիշելով, դէպ ի դուրս նա-  
յելու անկարող կը թուէին:

Կ'երթար աղու պէս դանդաղկոտ, դառնատեսիլ ինչպէս  
յիմար մը: Ամբոխը անոր առջեւ կը ճեղքուէր: Ոչ ոք հա-  
մարձակելով անոր խօսք ուղղել, կը թափառէր ան ըստ բախտի՝  
ինչպէս մարդ մը որ վատառողջ օդի-մը մէջ կը խեղդուի:

Ալ ոչինչ հասկնալով երկրիս անարդ բզզիւններէն, իր  
անպատում երազին մէջ խորասոյղ, ինքն իսկ իր անաւոր  
գաղտնիքէն զարհուրած, կու գար ու կը մեկնէր անխօսուկ:

Երբեմն կը սարսուար, կարծես տենդէ բռնուած, և որ-  
պէս թէ խօսիլ ուզէր՝ ձեռքը կ'երկնցնէր. բայց անտես ձեռք  
մը իր բերնին վրայ կը կասեցնէր վերջին վաղորդայնին ան-  
ժանօթ բառը:

Այն ատեն Բեթանիոյ մէջ, ամէն տեղ, երիտասարդներն



ու ծերերը վախցան այդ մարդէն . ան կ'անցնէր խոհուն ու մինակ , և ամէնէն աներկիւղին երակներուն մէջ արիւնը կը սառէր՝ այն տարտամ արհաւիրքին առջեւ որ կը լողար անոր աչքերուն մէջ :

Ահ , ո՞վ պիտի ըսէ երբեք ,քու տարօրինակ չարչարանքդ , դո՛ւն որ ետ դարձար գերեզմանէն ուր ամէնքը մնացին , որ կրկին ապրեցար , քաղաքներուն մէջ քաշկրտելու պատանքդ խարազի մը պէս մէջքիդ փաթթուած :

Տժգո՛յն յարուցեալ , դոր որդերը խածեր էին , կրնայի՞ր նորէն դառնալ այս աշխարհիս հոգերուն , ո՞վ դուն որ քու խորին ապշութեանդ մէջ՝ կը բերէիր այն գիտութիւնը որ արգիլուած է անցագ տիեզերքին :

Հաղիւ թէ մահն իր որսը կեանքին դարձուց , դուն նորէն մութին մէջ մտար , խորհրդաւոր ուրուական , հանդարտ անցնելով մոլեգին ժողովուրդներուն մէջէն , և այլևս անգիտակ անոնց զաւին ու խնդումին :

Քու երկրորդ կեանքիդ մէջ , անդգայ և անբարբառ , անոնց մօտ անմիտ յիշատակ մը թողուցիր միայն : Երկո՞ւ անգամ կրեցիր ուրեմն զգեանող գրկապնդոււմը՝ դառնալու համար երկնակապոյտին որ դէպի քեզ կը վերախուժէր :

Օհ , քանի՛ քանի անգամ , այն ժամուն ուր ստուերը միջոյր կը լեցնէ , հեռուն՝ ապրողներէն , երկնքին ոսկի խորքին վրայ ցցելով քու մեծ կերպարանդ՝ դէպի Անեզրը բազկատարած , անո՛ւնը կանչելով անցնող յետամնաց հրեշտակին , քանի՛ քանի անգամ քեզ տեսան թաւ խոտերուն մէջ , մինակ ու խոհուն , յածիլ գերեզմաննոցներուն շուրջը , նախանձելով բոլոր այն մեռելներուն՝ որոնք իրենց քարէ անկողինին մէջ որ մը պառկած էին՝ ա՛լ չեղելու համար :

## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ո՛վ իմ Աստուածս, Արարչութիւնդ ալ հինցա՛ւ:  
 Ես՝ երկինք մը՝ կը փոփոխես զիս յաւէտ.  
 Երկրիս տօնին մէջ տանիս զիս ցաւէ ցա՛ւ.  
 Եւ օր մ'երկնից տակ չպտի ըլլամ փոքր իսկ կէտ.  
 Արարչութիւնդ է՞ր չես փոխեր. ո՛հ, հինցա՛ւ:

Ցամաքք գրաւեն միեւնո՛յն տեղն յարածամ.  
 Նո՛յն շողն յաստեղց ամէն զիշեր հասնի մեզ,  
 Աքաղա՛ղն յար ծանուցանէ զարթման ժամ.  
 Եւ... Խաչիս նո՛յն երկաթ բեւեռն յար գամես.  
 Նորաստեղծման՝ ո՛հ, դեռ չեկա՞մ, Տէ՛ր իմ, ժամ:

Նոյն ծաւալով թաւալ առնու միշտ արեւ,  
 Հիւծախտաւոր դեռ չը մեռա՛ւ լուսինն ալ.  
 Լոյս առծրծէ, շուք տարածէ միշտ տերեւ.  
 Այդ շուքն հոգւոյս մէջ հոսէ. հո՛ն՝ հի՛ն շուքն ալ.  
 Նո՛ր եղիցի մ'Աստուա՛ծ, նո՛ր լոյս, նո՛ր արեւ:

Յերկնից յերկիր ելեւէջէ նոյն կաթիլ.  
 Մթնոլորտն է հառազայթին միշտ համբան.  
 Այդ երկուքէն կազմափրթթի միշտ Ապրիլ.  
 Այդ երկուքին ալ անըզգայ է տապան,  
 Նո՛ր աշխարհի մը մէջ տո՛ւր ինձ, Տէ՛ր, ապրիլ:

Մայիսն երկնից բերէ՛ր վարդեր բոցավառ,  
 Մեղրը նուագէր՝ վարդին փեթա՛կ՝ ժիր մեղուն.  
 Բուրէ՛ր թիթեռն, օդայածիկ՝ ո՛հ, բուրվառ,  
 Բուրմամբ հրզօր՝ որ տայր աչացս մահուան քուն:  
 Վերածնէի՝ թռչուն, Տէ՛ր, խա՛չդ ինձի թառ:

Հըրաշալի՛ք՝ տիեզերքն ողջոյն, արդարե՛ւ:  
 Բայց մենք հըրա՛շք, նորո՛գ կեանք մենք կ'ուզենք, Տէ՛ր.  
 Հեթանոսներն ալ պաշտեցին այդ արեւ.  
 Սո՛ւրբ արեգակ մը մեր գլխուն վրայ ծագէ՛ր.  
 Թո՛ղ ծակծրկէ մարմինս, այլ քոյդ, ըլլայ, արեւ:

Ըզգայարանք մեր բըթացան այս գեղոյն.  
 Մաշեցաւ ինքն ալ ափնամաշն ովկէան,  
 Բրնաւ հոգւոյս չըբարբառիւր արուեստն յոյն.  
 Ծով եւ արուեստ աղաղակե՛ն նորոգ կեան.  
 Ո՞ւր խաչիդ տակ փրթթած արուեստն այն անհո՛ւն:

Տէ՛ր... ա՛հ, Տէ՛ր իմ, մարմին՝ ըզգեստ ա՛ռ նորէն.  
 Նոր աշխարհ մը ստեղծել եկո՛ւր աչքիս տակ:  
 Խըմորն հատաւ Արարչութեան. սէ՛ր վերէն,  
 Սէ՛ր բեր: Իջնենք քեզ հետ անդունդն անյատա՛կ.  
 Հո՛ն է կուտած խաչիդ սուրբ մութն՝ որ զօրէն:

Մեր քաղաքաց կեղծ լոյսք, ըշպարք, ջահք պարուց  
 Մոռցուցին մեզ գեղն ու շող սուրբ բընութեան,  
 Զոր խաչին սեւն հրաշապայծառ ցայտեցուց,  
 Յօտա՛ր յարկաց մեր խուսափուկ, ապաստան  
 Հո՛ն կենսատու Սեւն որոնեց—մէջ ալուց:

Այո՛, վրհէն պիտի հանես աշխարհ նոր...  
 Հայհոյեցի, Աստուած, ներէ՛. ներդաշնակ  
 Եւ մըշտանոր է տիեզերքդ ալեւոր.  
 Հըրաշածայն նա քիւրամատն է դաշնակ.—  
 Զմեզ անլըսող ըրաւ դարուն մեր ժըխոր:—

Զմեզ անտարբեր կամ անըզգայ բուն գեղոյն  
 Ըրաւ արուեստ մը նիւթապաշտ եւ ըստրուկ:  
 Ե՛կ, անդընդոց խորն անսահման կայ գաղտ բոյն.



Հո՞ն քրիստոնեայ բոլոր վրսեմ ներշնչմունք,  
Խաչիդ թեևոց ներքեւ ծրնած բի՛ւր թռչուն:

Մի՛ ծնունդ ըլլար այս հեղ, Տէ՛ր իմ, տո՛ւր ծրնունդ.  
Խանձարուրիդ համար չը կա՛յ սուրբ մըսուր.  
Մոգաց շրթոնք չեն յեղյեղեր ա՛լ անունդ:  
Մըկրրտութեանդ համար կաթիլ մ՛անգամ ջուր,  
Սուրբ ջուր, առուակ սուրբ, վա՛հ, չը կայ...: Սեւ անդունդ,

Անդունդն առաւ պահեց ինչ որ մեզ տըւիր. —  
Արցունքդ, արիւնդ, հին քուրձդ ու նոր պատուիրանդ:  
Արծաթ խաչեր շա՛տ: Այլ սեւ խաչդ, արհաւիր,  
Ահն Աստուծոյ, սէր նմանեաց, սուրբ եռանդ,  
Անդրնդոց խորն են, Տէ՛ր, ի՛նչ որ մեզ տըւիր:

Ե՛կ, իջնենք հոն: Հանենք ի լոյս արեգին  
Ի՛նչ որ կորոյս անմըտութիւնն... իմաստնոց:  
Թոյլ պիտի տաս որ ի խոր անդրը վըհին  
Քու ետեւէդ իջնեմ, բարձանց Տէ՛ր՝ խորոց,—  
Զի ետեւէդ զիս Գողգոթա հանեցին...:

Մարդ չը ծրնիր քրիստոնեայ, Տէ՛ր, կ'ըլլայ:  
Խաչիդ ճամբան, խի՛նն ընդ ոտիւք, ճակտին փուշ,  
Ատոնք լզմարդ, ատո՛նք միայն քրիստոնեայ  
Կ'ընեն: Գալու զհետ Քո ի լոյս կամ մըշուշ՝  
Պատրաստ եմ եւ... արժանի—ո՛ւր ալ ըլլայ:

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

**ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ** (1851-1908).— Թրքահայ ամէնախոր եւ ամէնահզօր տաղանդներէն մէկը, որուն գրական դիմագծութիւնը չափազանց բարդ եւ բազմակնճիւռ է: Բանաստեղծ է եւ փիլիսոփայ, գրագէտ է եւ քննադատ, հրապարակագիր է եւ պատմագէտ, փորձած ըլլալով գրական բոլոր սեռերը եւ ամէնէուն մէջ ալ յայտնուելով վարպետ: Եղած է Հայերուն առաջին սրիլիսքը: Իր



փիլիսոփայութիւնը միշտ անհաւասարակչիւ՝ հետեւած է ատեն մը դրապաշտութեան, եղած է յուետես եւ ենթարկուած է



միսքիսիզմի. բայց իր մտաւոր գործունէութեան բովանդակ ընթացքին՝ մնացած է արմատական: Վարած է Երկրագունդ հանդէսի խմբագրապետութիւնը, հրատարակած է Իրական եւ Իմաստասիրական Շարժումը, գործածելով Իրասէր-Ատոմ, Դեւանիօ, Մեւանիա եւ այլ դրական ստանուններ: Թրքահայ մտաւոր շարժման մեծագոյն ռահվիրաներէն մէկն է Տէմիրճիպաշեան եւ իր ներգործութիւնը շատ լայն՝ իր ժամանակակից սերունդի մտքին վրայ: Աշխատակցած է պոլսահայ լրագրութեան, որուն մէջ ցրուած կը մնան իրմէ բազմաթիւ էջեր՝ ինքնատիպ եւ արուեստի արտակարգ յաջողութեամբ: Թողած է տակաւին բազմաթիւ անտիպ ձեռագիրներ, որոնք կորսուելու եւ ան-

հետանալու վտանգին տակ կը գտնուին: Տէմիրճիպաշեան ծնած է Պոլիս եւ անձնասպանութեամբ վերջ տուած իր կեանքին:

## ՊԻՅԷՕՐՆԱԹԻՅԷՌՆԸ ՊԻՅԷՕՐՆԱՍՆ

(1832 Դեկ. 8 — 1910 Ապրիլ 26)

Դժուարին գործ մըն է անշուշտ արեւելեան հասարակութեան մը առջեւ նկարել ուզելը՝ այս բոլորովին արեւմտեան և ամէն բանէ առաջ հիւսիսային մտքին զիմագիծը. անկարելի է այդ հասարակութեան տալ կատարեալ գաղափար մը անոր տաղանդի մասին, ծնած Նորվեկիոյ վաղեմի պատմութենէն և մնած եւրոպական ընդհանուր զարգացումով: Սակայն և այնպէս, Պիյէօրնաթիյէօնը Պիյէօրնասոնի հսկայական հանձարը բնորոշող նշանը, նշան որ բոլորովին մասնաւոր տեղ մը կուտար անոր իր ժամանակակիցներուն քով, սիեզերական



դրոշմն էր անոր մաքին, որ, ինչպէս իր մահուան աւթիւ ըսուած է, բնական անօրինակ երեւոյթ մըն էր:

Միշտ, և մինչև իր յետին շունչը, խորապէս և սերտ կապուած իր հայրենիքին, աշխատող, աւելի ևւս պայքարող անոր շահերուն համար, Պիլէօրնաթիլէանը Պիլէօրնասօն մէկն էր որ ամեն բան կ'ընդգրկէր: Կը մաքաւէր խօսքով, գործքով և գրութիւններով՝ մարդկութեան ընդհանուր շահերուն համար, հոգ չէր թէ ո՞ր ժողովուրդի մէջ պայքարը սկսած ըլլար:

Ահա թէ ինչո՞ւ այս հանձարին, այս ազնիւ ու Բախտի քօակին պէս հարուստ և ճոխ սրտին կեանքի գործը տիեզերական կալուած մը դարձաւ, և ահա ինչո՞ւ Պիլէօրնասօնի երկերը ամէն քաղաքակիրթ ազգերու ինչքը պիտի ըլլան հետադէտէ: Բոլոր դարգացած մաքերը, որոնք գեղարուեստը, յառաջդիմութիւնը, արդարութիւնը և աղատութիւնը կը սիրեն, Արեւելքի մէջ ըլլան անոնք թէ Արեւմուտքի, կրնան կամ պիտի կրնան իրենց շարքերուն մէջ համրել դայն: Ինքն ալ այդպէս պիտի ուզէր: Ճգնաւորի մը մտայնութիւնը չունէր ան. այլամերժ, մեծակեաց չէր՝ ինչպէս Իպսըն, մեծ Սփինքսը, իր մեծ ժամանակակիցը, իր բարեկամը և իր տրամագծօրէն հակառակը, որ մինչև իր մահը անձանօթ մը, օտար մը մտացած էր ամէնուն: Իպսըն ինքն իր մէջ կ'ամփոփուէր իր կեանքի ամէնափոքր մանրամասնութիւններուն համար իսկ. Պիլէօրնասօն իր բազուկները կ'երկարէր՝ լայնատարած ամէն կողմ:

Պիլէօրնասօն Նորվեկիոյ և բոլոր սկանտինաւեան երկիրներուն համար՝ այն էր ինչ որ էր Վիքթօր Հիւկօ Ֆրանսայի համար ու ինչ որ է Թօլստոյ՝ Ռուսիոյ համար: Ահա նաև ինչո՞ւ—բան մը որ պէտք է նշանակել՝ հասկնալու համար Պիլէօրնասօնի գործած ահագին ազդեցութիւնը — այս ընտրեալ հանձարը, իր ժամանակին ամէնէն ընդարձակ և նորը զարգացումն ունեցող այս միտքը՝ չի պատկանիր լուսաւորեալներուն միայն, և ահա ինչո՞ւ ան իր առաքելական գործը կատարած է իր ընդհանուր առումին մէջ և ո՛չ թէ միայն մտաւորական կեանքին ընտրեալ դասակարգին համար: Պիլէօ-



ընսօն իր ժամանակին մեծ դեմօկրատն էր : Իր գիրքերը կը կարդացուին գիւղացիներէն , ամէն տեղ , Սկանտինաւիոյ մէջ , արեւելքէն արեւմուտք , հիւսիսէն հարաւ : Օտարութեան մէջ չգտնուած միջոցին (իւր նախընտրած քաղաքներն էին Հռոմ և Բարիզ) Թօլստոյի նման կը բնակէր իր ագարակը , որ կը գրտնուի արեւելեան Նորվեկիոյ արգաւանդ և գեղատեսիլ հովիտի մը մէջ , Քրիստիանիայէն ոչ հեռու : Կ'ապրէր ու կը շնչէր ժողովուրդին մէջ , որ զինքը կը նկատէր իրեններէն մէկը , իբրեւ հայր մը միշտ ականջարաց իր ձայնին : Պիյէօրնսօն այնքան կը հետաքրքրուէր խեղճ գիւղացիով մը , որ օրերով ճամբորդած էր գալու իրեն ներկայացնելու համար իր խընդիրը ու հայցելու իր հզօր պաշտպանութիւնը ընդդէմ գօրաւոր և բիրտ բռնակալի մը , որքան կը շահագրգռուէր Մարոքի գործերով , կամ օտար երկիրներու մէջ նորվեկեան առանձին հիւպատոսարաններու հաստատման , և կամ աղջկանց բարձրագոյն վարժարաններուն մէջ բնախօսութեան ներմուծման խնդիրներով : Կը ջանար Ռուսիոյ մէջ Շուէտի՝ Նորվեկիան իրեն միացած պահելու ջանքերուն աննպաստ հանրային կարծիք մը առաջ բերել . տասը տարի շարունակ ոգի ի բռին կը պայքարէր այն շարժման դէմ , որուն նպատակն էր նոր լեզու մը ստեղծել Նորվեկիոյ մէջ՝ գաւառական բարբառներէն առնուած , վտարել արդի լեզուն ու այսպէս ջնջել անոր ունեցած նմանութիւնը դանիական լեզուին հետ . կամ կը պայքարէր Տրէյֆիւսի և կամ իտալացի կոմսուհիի մը՝ Լինտա Մուռիի համար , որ անարդար կերպով և երկարօրէն բանտարկուած և մահուան դատապարտուած էր , ու ազատուեցաւ և փրկուեցաւ Պիյէրնսօնի կորովի պաշտպանութեանը շնորհիւ : Ինքն իսկ երգած է հետեւեալը .

— «Կ'ապրէի աւելի քան կը գրէի , — Մտածումներ , բարկութիւն և ցնծութիւն կը ասիւէի շուրջս , ուր որ կ'երևայի : — Ըլլալ հոն ուր գործ կար և ուր ժամանակն ու սրտերը կը բաբախէին :

— «Ինձի համար գրեթէ աւելի կ'արժէր այն՝ քան ինչ որ գրիչս կը գրէր : »

Տիեզերական խաղաղութեան համար մղուած փրօփականա-  
տին մէջ իր դերը ծանօթ է . Լահէյի վեհաժողովին գումար-  
ման համար աշխատողներուն մէջ ամէնագործօններէն մէկն էր :

Թող չկարծուի թէ իր մտքի շրջանակին այս գրեթէ ան-  
հուն ընդարձակութիւնը կը վնասէր իր բանաստեղծական տա-  
ղանդի կեդրոնացումին : Թող չըսուի թէ ի՞նչ կրնար ընել  
հիմնական , երբ այսպէս ամէն բանի խառնուիլ կ'ուզէր : Պէտք  
է յիշել լատիներէն խօսքը , որ թէև յաճախ չարաչար գոր-  
ծածուած , Պիյէօրնսօնի վրայ իր ամէնէն արժանաւոր տեղը  
կը գտնէ .

«Մարդ եմ , եւ չկայ մարդկային բան մը որ ինձի հա-  
մար օտար ըլլայ :»

Եւ յետոյ մտիկ ընենք թէ ի՞նչ կ'ըսէ անոր մասին , իր  
համակներէն մէկուն մէջ , նորվեկեան ուրիշ մեծ գրագէտ մը ,  
Ալէքսանդր Քէլան , Պիյէօրնսօնի ժամանակակիցը և մէկը  
«Մեծ Քառակէն» (\*).

«Կ'ըսեն թէ ցաւալի է որ Պիյէօրնսօն իր ուժերը կը ցրուէ :  
Այո՛ , բայց՝ կ'երեւակայէ՞ք արդեօք թէ ի՞նչ ըսել է ունենալ  
Պիյէօրնսօնի հեղինակութիւնը ունեցող մարդ մը , երբեմն  
ասոր , երբեմն անոր ծոծրակէն , վիզէն բռնելու և լոյսին դի-  
մացը քաշելու համար : Կ'ըմբռնէ՞ք արդեօք թէ փոքր երկրի  
մը համար ի՞նչ թանկագին գանձ է այդքան մեծ և քաջարի  
մարդու մը մէջ խտացած , միայած ունենալ ամբողջ ժողո-  
վուրդի մը խիղճը . — արդարեւ ան տանջող խղճմտանքն է  
ամէն անոր համար , որ քաղաքականութեան , գրականութեան ,  
աստուածաբանութեան և այլնի մէջ կը փորձուի խաբերայու-  
թեան , խարդախութեան , նենգութեան դիմելու : Միթէ այս  
տեսակ մէկը չէ՞ որ խկապէս կը պակսի ձեզի : — Մենք անոր  
քով յարգելի ճարտարագործներ ենք միայն :»

Ո՛չ , անտարակոյս , սովորական օրէնքները անոր համար  
արժէք չունէին : Անոր կեանքին , անհատականութեան , բա-  
նաստեղծութեան և քաղաքականութեան մէջ ամէն ինչ յօդա-

(\*) Իպսրն , Պիյէօրնսօն , Եօհաա Լի եւ Ալէքսանդր Քէլան :

ւորուած է միշտ աւելի ընդարձակ ու լայն օղակներով : Անիկա կը նմանի Հառայ ՀօրՖակըրի (\*) մօրը երազած ծառին, որ կը ծլէր իր զգեստի ճարմանդին մէկ փոքրիկ ցցուած քէն և ուսճանալով կը հովանաւորէր ամբողջ աշխարհը : Պիյէօրնսօն ընտանեկան յարկով, ընտանի օճախով սկսած է և մեզի կը թուի թէ հակառակ ամէն բանի, անով կը վերջացնէ իր գրական կեանքը : Որքան ալ իր ընդգրկած խնդիրները բազմազան ըլլային ու մեծ, իր բանաստեղծութեան մէջ անոնք միշտ ապրող հօգիներ եղած են, որոնք հալած են ընտանեկան օճախի շունչին մէջ : Իսպառն կը պնդէր մարդկային մտքին առանձնութեանը վրայ, — Պիյէօրնսօն գիրկընդխառնումի բերկրութիւնը կը փնտռէր : Մահուան ատեն ինքը, որեւէ հաստատութենէ աւելի, արտայայտութիւնը եղաւ հիւօխոսային երկիրներու միութեանը : Ոչ ոք իրեն չտի աշխատած է մտաւորապէս միացնելու Տանըմարքան և Նորվեկիան իրարու հետ, ինչպէս որ ոչ ոք իրեն չտի աշխատած է բաժնելու իրարմէ Շուէան ու Նորվեկիան, քաղաքականապէս : Անիկա հօր կերպով կ'ըմբռնէր զարգացման գոյացուցած կապը : Գրականութիւն չէր ըներ գրականութեան համար, որքան ալ իր արուեստը գերազանց ըլլար : Թատրերգութիւններ չէր գրեր իբրև առանձին գործ մը, այլ իբրև ընկերային հարց մը, ազգային գործ մը : Եւ հակառակ որ իր զարգացման մէջ կարեւոր փոփոխութիւն մը կրած էր կրօնդավիկէ (\*\*) ճարուին, միշտ ամբողջութիւն մը կը մնար : Իր մէջ գանուող լաւագոյն բանն է և այն՝ ինչ որ կարելի է կոչել իր անհատականութեան ամբողջականութիւնը : Որքան ալ բաժնուէր, երբեք չէր ցրուեր. որքան ալ ձեւփոխուէր, սակայն և այնպէս միշտ նոյնը կը մնար : Իր էութեան համապատասխան կերպով կը զարգանար, ան կը մեծնար ու կը յառաջանար ժամանակին նման, որ իր օրէնքները և իրաւունքները կը պահէ :

ՏԻԿԻՆ ԻՆԿԱ ՆԱԼԲԱՆՏԵԱՆ

**ԼԻՆԿԱ ՆԱԿՐԱՆՏԵՅՆ.** — Ծագումով դանիացի, ծնած է

(\*) Թագաւոր Նորվեկիոյ, որ կ'ապրէր միջին դարուն :

(\*\*) Գանիացի բանաստեղծ, ընկերաբան եւ ժողովուրդի դաստիարակ :



Քորէնհակ եւ ապա ամուսնացած Պ. Մ. Նալբանտեանի հետ: Տիկին  
 Ինկա Նալբանտեան կը վայելէ դանիական գրականութեան մէջ իրա-  
 լամբ յայտնի համբաւ՝ որպէս քնարեր-  
 գակ քերթողուհի: Իր քերթուածները  
 ունին զգացման այն խորութիւնը եւ  
 իտէալի այն հմայիչ ջերմութիւնը, որ  
 յատուկ են հիւսիսի սրտին եւ մտքին:  
 Բացի դանիական հանդէսներու եւ մաս  
 մը հայ լրագրութեան մէջ գրած իր գե-  
 ղեցիկ կտորներէն, հրատարակած է նաեւ  
 իբրեւ առանձին հատոր՝ Կոնակերգր:

Տիկին Ինկա Նալբանտեան աշխատած  
 է նաեւ ծանօթացնել Հայ ժողովուրդը՝ իր  
 սովորութիւններով, իր տառապանքով եւ  
 իր բանաստեղծութեամբ, հիւսիսի մտա-  
 լորականութեան:



## Ծ Ի Ծ Ա Ռ Ն Ի Կ

Ծիծառնի՛կ, ծիծառնի՛կ,

Քո՛ւկդ էր, ուրեմն անտէրունջ այն բունիկ՝  
 Զոր, այս երդին խորշն առաջին մտնելուս,  
 Տեսայ թափուր, եւ լեցուեցաւ աչքս անլոյս  
 Դառն արցունքով, զի յիշեցի ես, տրխուր  
 Թէ պանդուխտիս ալբոյնն այսպէս է թափուր:

Ծիծառնի՛կ, ծիծառնի՛կ,

Ո՛հ, ինձմէ մի՛ հարթչիր, փութա՛ք բու բունիկ.  
 Քեզ բարեկամ պիտի ըլլամ եւ ընկեր.  
 Քեզի նրման պանդուխտ եմ ես, չե՞ս տեսներ.  
 Պանդո՛ւխտ, գիտեմ թէ ի՛նչ կ'զգայ սիրտ ցաւոտ,  
 Պանդո՛ւխտ, կըրած եմ անոր վիշտն ու կարօտ:



Ծիծառնիկ, ծիծառնիկ,

Երանի քեզ, ահա զըտար քու բունիկ.

Պանդխտութեան քու ժամանակդ անցաւ կարճ.

Մոռցի՛ր վիշտերդ ու հռուողէ նորագուարն:

Ի՛նձ թող վիշտը, որ չեմ գիտեր, ո՛հ, բնաւ

Թէ ե՞րբ արդեօք պանդխտութեանս է զրրաւ:

Ծիծառնիկ, ծիծառնիկ,

Յոյսըդ գարունն էր որ գտնես քու բունիկ.

Իսկ ինձ՝ ձրմեռն է յարատել ու ձրմե՛ռ...

Յոյսերուս հետ շիջաւ գարունս այգաբեր:

Վա՛հ, պանդուխտին, մութ կ'երեւայ լոյսն օտար,

Օղն՝ անախորժ, ջուրը՝ լեղի, հացը՝ քա՛ր...:

Ծիծառնիկ, ծիծառնիկ,

Ա՛խ, երբ դառնաս նորէն անուշ այս բունիկ,

Պիտի լրսե՞ս իմ բարեւիս դողդոջ ձայն՝

Թէ խըրճիթս հէք պիտի գտնես լուռ, ունա՛յն...:

Թըռի՛ր յայնժամ գերեզմանիս իմ հողիկ,

Հէք պանդուխտիս բեր հայրենի մի ցօղիկ...

Ծիծառնիկ, ծիծառնիկ:

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԷՅ



**ԽՈՐԷՆ ՆԱՐ-ՊԷՅ** (1831-1892). —

Թրքահայ քնարական բանաստեղծութեան կարեւոր ներկայացուցիչներէն: Աշակերտ Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան վարժարանին, պերճախօս եւ լեզուագէտ: Իր քերթուածները ամփոփուած են Ստուերի Հայկականի, Քնար Պանդխտին եւ Վարդենիի հաւաքածոներուն մէջ: Մշակած է նաեւ թատերական սեռը իր Արշակ Բ. եւ Արափրակա գործերով: Թարգմանած է լատարթինի Les Harmonies, Դաշնակի անուանով:



## ԻՆՉՈՒ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԵՆՔ

Շատեր ընդունելով հանդերձ արդի ընկերութեան վիճակին նկատմամբ եղած քննադատութիւնները, կը զայրանան բռնութիւն ի գործ դնելու գաղտնիարէն. անոնց կարծիքով, նախընտրելի պիտի ըլլար կտիկ կտիկ գործել, համազկեր միջոցներով, ջանալով աստիճանաբար բարելաւել արդի ընկերութիւնը :

Բնութեան մէջ ամէն բան, կ'ըսեն անոնք, բարեշրջութեամբ կը ձեւափոխուի. ընկերաբանութեան մէջ ի՞նչու կ'ուզէք գահավիժել իրերը և միևնոյն եղանակով չչարտիկ : Ընկերութիւնը բռնութեամբ ձեւափոխել ուզելով, ամէն բան տակնուվրայ կ'ընէք սուանց բարիք մը արտադրելու, մանաւանդ դուք ձեզ ջախջախել տալու վտանգին կ'ենթարկուիք, առաջ բերելով յետաշրջութիւն մը որ նուազ բուռն չպիտի ըլլայ քան յարձակումը և այսպէս քանի մը դար ետ պիտի տանի յառաջդիմութիւնը :

Այս տրամաբանութիւնը զոր կ'ըսեն ուղղամիտ մարդիկ որոնք կը վիճարանին միմիայն լուսաբանուելու բաղձանքով, երեւութապէս ճշմարիտ է և արժանի՝ ուսումնասիրութեան :

×

Ճիշտ է. բնութեան մէջ ամէն բան կը ձեւափոխուի յամբ բարեշրջութեամբ մը, յառաջդիմութեան անընդհատ շարունակութեամբ մը, որոնք ստացուած են աստիճանաբար, և որոնք աննշմարելի են, եթէ հետեւինք անոնց շրջափոխութեան, և աչքի կը զարնեն միայն ա՛յն ատեն երբ յանկարծ մէկ շրջանէն միւսը անցնինք : Ա՛յսպէս յառաջդիմած է կեանքը մեր երկրագունտին վրայ. ա՛յս կերպով է որ մարդը բարձրացած է անասնական վիճակէն. այսպէս է որ քսանե-



բորդ դարու մարդը այլ եւս չի նմանիր քարէ դարու մարդուն :

Բայց բան մը կը մոռնան . այսինքն թէ՛ որպէս զի այդ շրջափոխութիւնը առանց ցնցումի կատարուի , պէտք է որ ո՛չ մէկ խոչընդոտի հանդիպի ճամբան . եթէ ստացուած մղումը աւելի զօրաւոր է քան խոչընդոտները , կը խորասկէ զանոնք , եթէ ոչ կը վիժի : Ամէն անգամ որ բախում մը կայ գոյ կողմ բանի մը և յառաջդիմութեան մը միջեւ , յեղափոխութիւն կայ , ըլլա՛յ այդ ցամաքամասի մը սուզումը կամ գործարանաւորութեան մէջ մասնիկի մը անհետացումը :

Այսպէս , այսօր հաստատուած է թէ երկրաբանական մեծ յեղաշրջութիւնները՝ հեռո՛ւ մեր երկրագունային ներքին զօրաւոր մղումներէն առաջ եկած զարհուրելի ցնցումներու և յանկարծական փոփոխութիւններու հետեւանքն ըլլալէ , պարզապէս արդիւնքն են յամբընթաց պատճառներու և անզգալի փոփոխութիւններու՝ որոնք գործած են հազարաւոր դարերու միջոցին : Այսպէս , գիտենք թէ մեր օրերուն այս միեւնոյն պատճառները որ մեր այս օրուան տեսած կէտին բերած են երկիրը , կը շարունակեն գործել և նոր կերպարանափոխութիւն մը կը պատրաստեն :

Ամէն տեղ անձրեւները կը մաշկեցնեն լեռները , կը թափանցին ամէնէն կարծր կրանիղներուն և կը կազմալուծեն զանոնք : Ո՛չ մէկ բան կը յայտնէ կատարուող յամբ աշխատանքը , ո՛չ մէկ բան կը մատնէ զայն : Սերունդներ կ'անցնին առանց գնահատելի փոփոխութիւն մը զգացուած ըլլալու . և սակայն , ազ՛որ առտու մը լեռը կը կքի , կը փլի , իր հետ քշելով անտառներ և գիւղեր , լեցնելով գետերու փոսերը , փոխելով անոնց ընթացքը , սուգ ու աւեր սփռելով այդ դղրդիւնին մէջ : Բայց , անգամ մը որ յուզումը անցնի , կեանքը շուտով կը վերստանայ իր իրաւունքները և կը զեղու այդ յեղաշրջուած նիւթերու բոլոր ծակտիքներէն , աւելի ուժեղ և աւելի աշխուժ քան երբեք :

Շրջափոխութիւնը կատարուած է շատ յամառօրէն . բայց

եկած է պահ մը ուր չէ կրցած շարունակել առանց վաանդի  
ենթարկելու իրերու տիրող վիճակը . ան շարունակած է իր  
ընթացքը , և լեռը՝ հիմէն մաշուած՝ փլեր է , տակնուվրայ ընե-  
լով ամէն բան :

×

Պարագան միեւնոյնն է մեր ընկերութիւններուն մէջ :  
Ընկերային կազմակերպութիւնը , այդ կազմակերպութիւնը  
պաշտպանելու համար ստեղծուած կարգերը՝ յառաջդիմութեան  
դիմադրող պատուարները կը ներկայացնեն : Իսկ ընկերու-  
թեան մէջ ընդհակառակը ամէն բան կը ձգտի տապալելու այդ  
պատուարները : Գաղափարները կը բարեփոխուին , բարքերը  
կը փոխուին , կամաց կամաց վարկաբեկելով հին կարգերը՝ ո-  
րոնք կանգուն կը մնան և կ'ուզեն շարունակել ղեկավարելու  
ընկերութիւնը և անհատները : Տարանջատման յամր գործու-  
թիւնը երբեմն անզգայի է սերունդի մը համար : Ճիշտ է .  
կը տեսնենք որ սովորութիւններ կ'անհետանան , նախապաշա-  
րում մը կը կքի , բայց այս անհետացումները տեղի ունեցած են  
այնքան յամաւորէն որ , ո՛չ մէկը գիտակցած է . միայն ծերերն  
են որ իրենց երիտասարդութեան սովորութիւնները բազդա-  
տելով իրենց յաջորդող երիտասարդութեան սովորութիւն-  
ներուն հետ , կը հաստատեն թէ բարքերը փոխուած են :

Բայց եթէ բարքերը փոխուած են , հին կարգերը , ըն-  
կերային կազմակերպութիւնը միեւնոյնը մնացած են . անոնք  
կը շարունակեն իրենց թումբերով դիմադրել ալիքներուն՝ ո-  
րոնք իրենց վրայ կը յարձակին , և անդ՛ր , կ'երթան կը փշր-  
ուին անոնց ոտքերուն առջև , գոհանալով քար մը վերցնելով  
հուսա կամ հունա : Ալիքները իրենց կատաղութեան մէջ կըր-  
նան հազարաւոր քարեր խլել : Ի՞նչ է մէկ քարը բազդատելով  
իրենց պատկառելի զանգուածին հետ : Ոչինչ է այդ . միայն  
թէ , ալիքները իրենց հետ կը գլորեն այդ քարը , և , նոր  
գրոհի մը մէջ , զա՛ն կը նետեն պատուարին վրայ որմէ խլած  
են և իբրեւ պարսպաքանդ կը գործածեն , անկէ ուրիշ քարեր  
ալ խլելու համար , որոնք իրենց կարգին յարձակման միջոց-

ներ պիտի դառնան : Պայքարը կրնայ հազարաւոր տարիներ տևել . քարաժայռը պակասած չի թուիր մինչեւ այն օրը ուր հիմէն մաշած՝ փլիւսոր գրոհի մը տակ , ճամբայ բանալով յաղթական ալիքներուն :



Կը բաւէ ուսումնասիրել քիչ մը ընկերային մեքենակա- նութեան շարժումը , տեսնելու համար թէ իրերու զօրութիւնն իսկ է որ կը հարկադրէ յեղափոխական դառնալ : Անոնք , յեղափոխականները , հաստատած են թէ մարդկային ընկերութիւնը տառապեցնող շարիքներուն պատճառը իր իսկ կազմակերպութեան մէջ կը գտնուի , թէ քաղաքագէտներու կողմէ առաջարկուած բոլոր կիսամիջոցները , ամօքիչները՝ բացարձակապէս չեն կրնար ո՛ր է բան բարեփոխել . որովհետև ա- նոնք հետևանքները կը հարուածեն , փոխանակ պատճառները ջնջելու :

Երբ մարդ լաւ կերած է , երբ քիչ շատ գոհացուցած է իր պէտքերը , դիւրին է շպասել : Բայց անոնք որ անօթի են ֆիզիքապէս և մտաւորապէս , անգամ մը որ շարիքը հասկնան , այլևս չեն գոհանար լաւագոյն ապագայ մը ընդնշմարելով . անոնք կը փորձուին մտազննութեան շրջանէն անցնիլ գործի շրջանը :

Ճշմարտութենէ մը զօրեղապէս բռնկած մարդը կրնայ ինքզինքը զսպել զայն ուրիշներուն ալ ընդունել տալ և մա- նաւանդ զայն իրականացնել փորձելէ , իր գործերը անոր հետ հաշտեցնելով : Արդի ընկերութեան մէջ նոր գաղափարներ կիրարկել փորձելը յեղափոխական գործ կատարել , ըմբոստանալ չէ՞ : Այն ատեն , ի՞նչպէս կ'ուզուի որ անոնք որ ամէն բան ըրած են նոր գաղափարները տարածելու , մարդկութիւնը տառապեցնող շարիքները հասկցնելու , անոնց պատճառները բացատրելու , դարմանը ցուցնելու , լաւագոյն ընկերութեան մը ուրախութիւնները շօշափել տալու համար , երթան կենան ի-



ընց բացատրած գաղափարները իրականացնելու ջանացող մարդոց ճամբուն վրայ և ըսեն անոնց .

— Գոհացէ՛ք ակնկալութեամբ վայելելով , շարունակեցէ՛ք տառապիլ , համբերեցէ՛ք . թերեւս օր մը ձեզ շահագործողները պիտի հաւանին քանի մը գիջողութիւններ ընել ձեզի :

Զարհուրելի հեղնութիւն մը պիտի ըլլար այդ :

ԺԱՆ ԿՌԱՎ

## ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԵՐՈՍԻ ՄԸ

Խարէութեան պսակին յանդիման դիր  
Քու պսակդ , պսակ մարտիրոսի .

Ահա կը մռնչէ սեւ գերեզմանը .

Թո՛ղ որ գերագոյն արշալոյսը անցնի երթայ :

Փրկութիւնը իր մկրտութիւնը կ'ընդունի

Արիւնով , եւ բոլորը , այր , կին , տղայ ,

Համազարկերուն տակ , անաթեմայի հարուածներուն տակ  
Կ'իյնան յաղթական , ու մահը կը պաշտպանէ զանոնք :

Մահը կը պաշտպանէ զանոնք . . . Բայց կեանքը լայն է ,

Ան կը զգեստնէ Անօգուսը եւ Ադէսալին ,

Ու մեծ է ինչպէս յաւիտենականութիւնը :

Ողջո՛յն , ո՛վ ժողովուրդ , ողջո՛յն ընչազուրկ .

Երկինքը՝ ձեր մարտիրոսներուն , երկիրը՝ ձեզի՛ ,

Եւ պատմութիւնը՝ Վասանուն Ասուածութեան :

ՏՔԴ. ԱՊՏՈՒԼԼԱՆ ԶԷՎՏԵԹ

ԱՊՏՈՒԼԼԱՆ ԶԷՎՏԵԹ .— Ապտուլան ձեւտէթ եղած է առաւելապէս գաղափարի բանաստեղծը եւ ազատութեան երգիչը՝



Թուրք նոր գրականութեան շնորհիւ Ռճի նրբութեան, պատկերներու գեղեցկութեան եւ լեզուի ներդաշնակութեան տեսակէտով, չի մրցիր իր Ժամանակակիցներուն հետ, այլ իր քնարը տրամադրած է մերթ փիլիսոփայական գաղափարներու եւ մերթ խորախորհուրդ մտածումներու, մերթ ռազմերգներու եւ մերթ ազատութեան: Ապտուլլահ ձէվտէթ բժշկական վարժարանի նախկին ուսանող, ընդվզողներէն է համրտեան բռնակալութեան դէմ եւ դատապարտուած աքսորի երգած է իր լքումը, կարմիր բռնապետութեան աւերները, ժողովուրդին տառապանքը եւ հեռուէն ընդնշմարուած լուսագիծ ապագան: Այդ շրջանին կը վերաբերին ազատութեան շունչով տոգորուն իր քերթուածները, ուր կը հնչէ բռնապետութեան սարսափը եւ ազատութեան յոյսը: Հիմնած է Ինքիհաս թերթը եւ Ինքիհաս մատենաշարը՝ խնամուած գործեր տալով հասարակութեան: Ինքիհաս ընկերային պայքարի շաբաթաթերթ մըն է, որուն շուրջ հաւաքուած են նոյն նպատակին ձգտող թուրք մտաւորականներ:



Ապտուլլահ ձէվտէթ թարգմանած է Եւրոպացի լաւագոյն հեղինակներ, մասնաւորապէս Նէյքսփիրի գործերը: Իր գլխաւոր երկերն են Վեհապէս եւ Գրականութիւն, Թաֆուս Հեծեծակներ, Երկու Փափափ, Արքնցի՛ք, սարքնցի՛ք, Գիտութիւն եւ փիլիսոփայութիւն եւ Իշխանութեան պատմութիւն: Հրատարակած է նաեւ ֆրանսերէն լեզուով բանաստեղծութեանց հատորներ:



## ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Գրիգոր Նարեկացիին գործը կը բաղկանայ աստուածաբանական երկասիրութիւններէ, աղօթքներէ, քանի մը պատմական հատուածներէ, և կրօնական բանաստեղծութիւններէ: Այս բազմաձեւ արտադրութեան մէջ, գաղափարի բացարձակ նոյնութիւն մը կայ սակայն. նոյն մղումն է որ իրեն պատմել, երգել կամ մեկնաբանել կու տայ:

Առաջին սողէն մինչեւ վերջինը, ատիկա գործն է Աստուծոյ գաղափարով հիրնոսացած մտքի մը: Իրեն համար ամէն տեսակ նիւթ միջոց մըն է այդ գաղափարը արտայայտելու. ու թերեւս ատիկա գաղափար մըն ալ չէ իր մէջ, որչափ խորունկ յուզում մը. Նարեկացին այն սկոյաատիկ աստուածաբաններէն չէ որոնք յստակ սահմաններով կ'որոշեն Աստուծոյ գաղափարը, հանդերձեալ կեանքին մանրամասնութեանց վրայ կը վիճին, կամ բնագանցական պատճառաբանութիւններով մարդուն հոգին ու կեանքը կը բացատրեն: Ինքը բանաստեղծի, տարօրինակ կերպով ջղուտ բանաստեղծի հոգի մըն է, որ կանուխէն բաղխած է Աստուծոյ գաղափարին, անոր մեծութենէն ինքզինքը ջախջախուած զգացած է և որ ամբողջ կեանքին մէջ այդ ցնցումին հիւանդ ու տառապեցնող զգայութեամբը կը սարսռայ: Երբեք իրեն համար բանաձեւ մը չէ Աստուած, երբեք բնագանցական սահմանով մը չէ որ զայն կ'որակէ. իրեն համար անիկա անհունը, անձանօթը, անհասն է, բայց միանգամայն անհուն մը որ զգալի է, անձանօթ մը որ զինքը ամէն կողմէ կը սեղմէ, անհաս մը որուն խորհուրդը շօշափելի վերքի մը պէս՝ իր հոգին կը ցաւցնէ: Չանիկա իր մէջ կը զգայ, իր վերեւ, իր շուրջ, և անոր վրայ մտածելը՝ իրեն համար, հեռու վերացական խոհանք մը ըլլալէ, ցաւ մը, սարսափ մը կամ երանութիւն մըն է՝ վայրկեանին համեմատ, միշտ զգացում մը, գրեթէ նիւթական զգացում մը: Ասոր համար է որ իր արտայայտութեան ձեւը քնարերգութիւնն է



միշտ, զինքը ճզմող զգացմանց ու զգայութեան սաստիկ, գրեթէ բնազդական արտարձակում մը, ուր ամէն բան կը բըղխի գերագրգռուած երեւակայութենէ մը և փրթելու չափ ձգտուած զգայութենէ մը:

Աստուծոյ գաղափարը՝ այս կերպով զգացուած և այս կերպով արտայայտուած, ահա իր ամբողջ գործը: Այդ գաղափարն ու այդ ձեւն է որ կը գտնենք իր Ապարանից խաչին պատմութեան մէջ, ուր դիւցադներգական քնարերգութեամբ մը կը պատմէ խաչին մէկ կտորին Յունաստանէն հանդիսաւոր և հրաշագործ փոխադրութիւնը մինչև Մոկայ աշխարհը, և որուն կցուած են խաչին ներքող մը և Աստուածածնին հռչակաւոր ներբողը, իր բանաստեղծական ամէնէն կրակոտ հատուածներէն մէկը. այդ գաղափարն ու այդ ձեւը՝ Առաքելոց ի գովեստ ճառին, ինչպէս Յակոբ Մծբնոյ հայրապետին գովեստին, ինչպէս Երգ երգոցին մեկնութեան մէջ, զոր գրած է Նիւսացւոյն նոյնօրինակ գործին նմանողութեամբ: Այդ գաղափարն ու ձեւը՝ իր Գանձերուն և իր հրաշալի Տաղերուն մէջ: Բայց այն գիրքը ուր ամէնէն խորունկ և ամէնէն ընդարձակ կերպով կը գտնենք այդ ներշնչումը և այդ ոճը՝ իր ողբերգութեանց գիրքն է, իր Աղօթամատեանը, Նարեկը:

Եւ ճիշտ անոր համար այդ գիրքը հեղինակին հոգին ամէնէն ճշմարիտ արտայայտութիւնն է, որ ամէնէն քիչ աստուածաբանականը և ամէնէն շատ քնարերգականն է իր ամբողջ գործին մէջ: Երգ երգոցին մեկնութիւնը, գրեթէ ամբողջ աստուածաբանական, իր երկասիրութեանց մէջ գրական տեսակէտով ամէնէն տկարն է. բանաստեղծը բնագրի մը կապուած, անոր կը հետեւի քայլ առ քայլ, բացատրելով արդապետական աշխատութիւնը կը կատարէ՝ ուր աւելի իր աստուածաբանի հմտութիւնը և ճարտարութիւնը կ'երևայ քան բուն իսկ իր հոգին, թէև նորէն իր հոգին, իր բանաստեղծի հոգին կը մատնուի՝ մեկնելու համար Ս. Գրքին ամէնէն բանաստեղծական գլուխն ընտրելու հակումին՝ ինչպէս իր մեկնողական ոճին մէջ: Ապարանից խաչին պատմութիւնը եւ

Մծբնայ Յակոբ հայրապետին գովեսք երկու հոյակապ կտորներ են քնարերգական վիպումի, ուր քրիստոնէական «հրաշալին» այնչափ խանդով, այնչափ հաւատքով և այնպիսի պերճ երեւակայութեամբ մը արտայայտուած է որ, այդ երկու հատուածները քրիստոնէական դիւցազներգութեան երկու ճշմարիտ դրուագներ կը դառնան, համոզման ու բանաստեղծութեան ուժովը՝ շատ վեր Իսասոյի կեղծ դիւցազներգութենէն: Սակայն այս բոլոր էջերուն մէջ, քնարերգութիւնը կա՛մ աստուածաբանական, կա՛մ վիպողական է, և ասով անձնական բանաստեղծութիւն մըն է, քիչ յարմար ամբողջութեամբ արտայայտելու Նարեկացիին հոգին, ամէնէն անձնականը մեր գրական հին դէմքերուն մէջ: Որպէս զի Նարեկացին իր բովանդակ ուժովն ինքզինքը մեղի ճանչցնէ, պէտք է որ դէպքերը, աստուածաբանական կնճիւղները ցնդին անհետանան, և ինքը մինակ մնայ իր սուեռեալ զաղափարին հետ, և այդ ամէն բանէ անջատման մէջ՝ ինքզինքը երգէ միայն: Եւ Նարեկին մէջ, — բացի քանի մը գլուխներէ, ինչպէս Երրորդութեան դաւանանքին և Աստուածածնի պաշտամունքին բացատրութիւնը Միւռոնի թարգմանողական աղօթքը, — աս ըրած է միայն:

Ծայրէ ծայր, այդ գիրքը երգն է միակ հոգիի մը, իր ցաւերուն, իր զմայլանքներուն, իր դողերուն, իր ամբողջ յուզումներուն: Եւ ինչ որ այդ երգը կը լայնցնէ, մեծ արուեստի այն էական յատկանիշն է որով գործը ընդհանուր և մասնաւոր է միանգամայն, մարդկային և միանգամայն անհատական. կը զգանք որ իր վրայ խօսած ատենը, բանաստեղծը ամբողջ մարդկութեան հոգին իր մէջ խտացած կը տեսնէ. ինքզինքը ինկած զգացող այդ էակը որ բարձունքներուն աչքը յառած՝ գթութիւն կ'աղաչէ, այդ էակը ամբողջ մարդկային ազգն է: Բայց բանաստեղծը այնչափ ուժով, այնչափ անձնապէս կը զգայ այդ ընդհանուր զգացումը, որ իր երգը անհատական շեշտ մը կ'առնէ, յստակ եսի մը ձայն կ'ըլլայ, — երգը Մարդուն, և մարդու մը: Եւ այսպէս այդ

աղօթքի գիրքը զոր բանաստեղծը գրած է մարդկութեան իղ-  
 ձը ուղեկով արտայայտել առ Աստուած, իր հոգիին խոստվա-  
 նանքը եղած է, տեսակ մը անվերջ խօսակցութիւն Աստուծոյ  
 հետ: Աղօթքին ընդհանուր տիտղոսը, արդէն, լաւագոյն բա-  
 ցատրութիւնն է ամբողջ գրքին. «Ի խորոց սրտի խօսք ընդ  
 Աստուծոյ»:

ԱՐՇԱԿ ԶՅՊԱՆԵԱՆ

## Բ Ա Ն Ո Ւ Ո Ր Ն Ե Ր Ը

Այդ մե՛նք ենք գալիս՝

Մաշուած բանկոններ, իւզոտ ու մրոտ,

Տրորուած գտակ, աղտոտ մազերով,

Մեծ մասամբ դեղնած, գծուծ եւ բոկոտ,

Երբեմն տժգոյն, երբեմն անխռով.

Երբեմն քաղցի, լուռ տառապանքի

Սեւ կնճիռների անջինջ կնիքով,

Երբեմն ըմբոստ արհամարհանքի,

Անզուսպ զայրոյթի վրէժի թոյնով.

Դեռ վաղ ծերացած հոգեմաշ ցաւից,

Լոյսի, թարմ օդի տենչանք դէմքերիս

Ու մարդավայել ապրելու յոյսից,

Դեռ խո՛ր վէրքերի կսկիծ սրտերիս՝

Այդ մե՛նք ենք դալիս...

Մե՛նք, բանուորներս՝ տուգած փորերի

Շերտաւոր ճարպի, ոսկու դէզերի

Անվարձ մշակներ...

Մե՛նք, բանուորներս՝ վշտի, արցունքի,

Կիսաքաղց կեանքի, բանտի, աքսորի

Անբաժան ընկեր...





Հա՛, մենք ենք գալիս  
 Դարեւոր վշտի զրկանքի բովից,  
 Հալածանքների, գարշ ստրկութեան  
 Մոռացուած խաւից՝  
 Կրծքով փշրելու փառքը տիրողին,  
 Գահը բռնութեան, ստրուկի շղթան,  
 Նոր ուղի հարթել մեր նմաններին,  
 Արժանի կոչման, հաւասարութեան՝  
 Այդպէ՛ս ենք գալիս...  
 Շ. ԿՈՒՐՂԻՆԵԱՆ

### ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆԵԱՆ. —

Առաջին քերթողուհին կովկասահայերու մէջ: Տիկին Կուրղինեան ձգտումով ընկերվարական, երգիչն է թշուառներուն եւ աշխատանքի զոհերուն՝ բանուորին եւ գիւղացիին:

Կուրղինեանի քերթուածները՝ յաճախ անհաւասարակշիռ, լի են անկեղծութեամբ, գորովով եւ երբեմն նոյն իսկ ըմբոստութեան ամէնահզօր շունչով: Հայ Ատանէկրին կը բաղձայ ըլլալ Տիկին Շուշանիկ եւ յաջողած է արդէն:





# ԽՈՐՀՈՒՐԴԸ ԱՐՈՒԵՍՏԻՆ ՄԷՋ

## 1

### ԿՐՕՆՔԸ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԸ

Եթէ կրօնասէր բաւով կը հասկցուի այն մարդը որ կը կապուի կրօնական մասնաւոր հրահանգներու, որ կը խոնարհի մասնաւոր վարդապետութեանց աւջեւ, անտարակոյս ես կրօնասէր չեմ: Արդէն ո՞վ կայ այդպէս մեր դարուն մէջ, ո՞վ կրնայ հրաժարիլ իր քննադատական մտքէն և դատողութենէն: Բայց, ըստ իս, կրօնքը հանգանակի մը թոթովումէն ուրիշ բան մըն է: Անիկա զգացումն է ամէն բանի որ անմեկնելի է և անտարակոյս անբացատրելի՝ աշխարհի մէջ, — Պաշտամունքն է անիկա անձանօթ Զօրութեան որ անվթար կը պահէ տիեզերական օրէնքները և կը պահպանէ էակներու տիպերը. կռահումն է անիկա այն ամէնուն՝ որ բնութեան մէջ չիյնար մեր զգայարանքներուն տակ, իրերու այն անսահման բովանդակ տարածութեան՝ զոր ո՛չ մեր մարմնին, ո՛չ ալ մեր մտքին աչքերը կարող են տեսնել. մեր գիտակցութեան խոյանքն է անիկա դարձեալ՝ դէպի անհունը, յաւիտենականութիւնը, ճիշտի գիտութիւնն ու սէրը անսահման, խոստումներ թերեւս պատիր, այլ որոնք այս կեանքի սկիզբէն իսկ բարախել կու տան մեր մտածումը՝ իբր թէ անիկա թեւոր ունեցած ըլլար:

Այս իմաստով կրօնասէր եմ ես:

Եթէ կրօնքը գոյութիւն չունենար, ես պիտի ուզէի հնարել զայն:

Ճշմարիտ արուեստագէտները վերջապէս մահկանացուներուն ամէնէն կրօնասէրներն են:

Կը կարծուի թէ մենք մեր զգայարանքներովը կ'ապրինք և երեւոյթներու աշխարհը բաւական է մեզի: Մեզ մանուկնե-



րու տեղ կը դնեն, որոնք կ'արբենան փաղփուէն գոյներով և ձեւերուն հետ կը զբօսնուն՝ իբրեւ պուպրիկներու հետ... Միայ կը հասկնան մեզ: Գիծերը և նրբերանգները, մեզի համար, թագուն իրականութեանց նշաններն են միայն: Մակերեսներէն անդին, մեր նայուածքները կ'ընկղմին մինչև հոգիին և երբ անկէ ետք մենք կ'օրինակենք շրջագծեր, կը ճոխացնենք զանոնք այն հոգեկան պարունակութեամբ զոր կը քողարկեն անոնք:

Արուեստագէտը, որ արժանի է այս անունին, պարտաւոր է արտայայտել բնութեան բովանդակ ճշմարտութիւնը, ոչ թէ միմիայն արտաքին, այլ նաև, այլ մանաւանդ ներքին ճշմարտութիւնը:

Երբ լաւ քանդակագործ մը կը կազապարէ մարդկային իրան մը, միմիայն դնդերներ չէ որ կը ներկայացնէ անիկա... այլ այն կեանքն է որ կը կենդանացնէ զանոնք... աւելի քան կեանքը... այն զօրութիւնն է՝ որ զանոնք ձեւակերտեց ու անոնց հաղորդեց ըլլայ շնորհը, ըլլայ ուժը, ըլլայ սիրարկու հրապոյրը, ըլլայ կրքերու անսանձ թափը:

Միքէլ Անձէլօ մոնչել կու տայ ստեղծագործ ուժը կենդանի բոլոր միակերուն մէջ... Իսկ Լիւքա տէլլա Ռօպիա զայն կը ժպտեցնէ աստուածային կերպով: Այսպէս, իւրաքանչիւր արձանագործ, համաձայն իր խառնուածքին, Բնութեան կու տայ կա՛մ ահարկու, կա՛մ խիստ քաղցր հոգի մը:

Բնանկարիչը աւելի հեռուն կ'երթայ թերեւս: Միմիայն կենդանի էակներուն քով չէ որ անիկա կը տեսնէ տիեզերական հոգիին արտացոլացումը, այլ և՛ ծառերուն, մացառներուն, դաշտերուն, բլուրներուն: Ինչ որ շատ մարդոց համար ուրիշ բան չէ՝ եթէ ոչ փայտ ու հող, — մեծ բնանկարչին կ'երեւայ անիկա՝ իբրեւ դէմքը անբաւ էակի մը: Քօրօ բարութիւն կը տեսնէր՝ ցրի՛ւ, ծառերու գագաթին վրայ, մարգագետնին խոտին վրայ և լիճերուն հայելիին վրայ: Միյնէ անոնց մէջ կը տեսնէր տառապանք և համակերպութիւն:

Ամէնուրեք մեծ արուեստագէտը՝ հոգիին պատասխանելը

կ'իմանայ իր հոգիին : Ո՞ւր պիտի գտնէք մարդ մը որ աւելի կրօնասէր ըլլայ :

Քանդակագործը պաշտամունքի գործ մը չընէր դարձեալ , երբ կը նշմարէ իր ուսումնասիրած ձեւերուն վեհաշուք նկարագիրը , երբ վաղանցուկ գիծերուն մէջէն գիտէ զատել իւրաքանչիւր էակի յաւիտենական տիպը , երբ կը թուի նշմարել նոյն իսկ աստուածութեան ծոցին մէջ այն անփոփոխ մօտէլները , որոնց վրայ թրծուած են բոլոր արարածները : Դիտեցէք , օրինակի համար , եգիպտական արձանային գլուխ-գործոցները , մարդկային կամ կենդանական դէմքեր և ըսէք թէ էական շրջագծերուն շեշտումը օրհներգի մը խառվիչ տպաւորութիւնը չընէ՞ր : Ամէն արուեստագէտ , որ ձիրքն ունի ընդհանրացնելու ձեւերը , այսինքն դուրս հանելու անոնց տրամաբանութիւնը՝ առանց դատարկելու զանոնք իրենց կենդանի իրականութենէն , կ'առթէ միեւնոյն կրօնական յուզումը , որովհետեւ մեզի կը հաղորդէ այն սարսուռը՝ զոր ինք անձամբ զգացած է անմահ ճշմարտութեանց առջեւ :

## 2

### ՏԵՍԱՆԵԼԻՒՅՆ ԱՆՒԻՒՆ

Խորհուրդը , այն միջնորդան է , որուն մէջ կը թաթաւուին արուեստի գեղեցկագոյն գործերը :

Այդ գործերը կ'արտայայտեն , արդարեւ , ամէն ինչ որ հանձարը կը զգայ Բնութեան դիմաց : Զայն կը ներկայայնեն բովանդակ պայծառութեամբը , բովանդակ շքեղութեամբը զոր մարդկային ուղեղ մը կրնայ գտնել անոր մէջ : Բայց , հարկադրաբար նաև անոնք կը բաղխին անհուն Անձանաչելիին որ ամէն կողմէ կը ծածկէ Ծանօթին խիստ փոքր գունդը : Որովհետեւ վերջապէս մենք կը զգանք և մենք կ'ըմբռնենք աշխարհի մէջ միայն իրերու այդ փոքրագոյն մասը , որով անոնք կը ներկայանան մեզի և կրնան տպաւորել մեր զգայարանքներուն և մեր հոգիին վրայ : Իսկ բոլոր մնացածը կ'ընկղմի

անհուն մթութեան մը մէջ : Եւ նոյն իսկ մեր ամէնէն մօտիկը հազար բաներ ծածկուած են , որովհետեւ մենք այնպէս կտու- մուած չենք զանոնք տեսնելու :

Գեղեցիկ գործերը , որ ամէնաբարձր վկաներն են մարդ- կային իմացականութեան և անկեղծութեան , կ'ըսեն այն ամէնը՝ ինչ որ մօտէն կրնայ ըսուիլ մարդուն վրայ և աշխար- հի վրայ , ու յետոյ անոնք ըմբռնել կուտան թէ կայ ուրիշ բան մը՝ զոր մարդ չի կրնար ճանչնալ :

Ամէն հրաշակերտ ունի այս խորհուրդաւոր նկարագիրը : Մարդ միշտ անոնց մէջ կը գտնէ գլխու պտոյտ տուող բան մը : Յիշեցէք այն հարցական նշանը որ կը սաւառնի Վինչիի բոլոր նկարներուն վրայ : Բայց անիրաւ եւ՝ իբրեւ օրինակ ընտրելով այս մեծ միսթիքը , որուն մէջ իմ թէղս չափազանց դիւրութեամբ կը հաստատուի : Լաւ է որ առնենք Ճիորճիոնի վսեմ Դաւեսային Նուագահանդեսը : Ասլրելու ամբողջ քաղցր ուրախութիւնն է ան . բայց անոր կը միանայ տեսակ մը մեղա- մաղձոտ արբեցութիւն , — թէ ի՞նչ է մարդկային ուրախու- թիւնը , ո՞րկէ ուզայ անիկա և ո՞ւր կերթայ : Գաղտնի՛ք կեանքի :

Առնենք դարձեալ , եթէ կուզէք , Միլեյի Հասկաֆաղու- հիները : Մէկը այդ կիներէն որոնք սաստիկ կը յոգնին տօ- թագին արեւին տակ , գլուխը վեր կը վերցնէ և կը նայի հո- րիզոնին : Եւ մեզի այնպէս կուզայ թէ այդ հնակոչտ գլխուն մէջ՝ գիտակցութեան փայլատակումի մը ընդմէջ սա հարցումը կայ — Ի՞նչ բանի համար :

Աս է այն խորհուրդը՝ որ կը ծփայ բոլոր գործին վրայ :

Ի՞նչ բանի համար է այն օրէնքը՝ որ արարածները կը շղթայէ գոյութեան՝ զանոնք տառապել տալու համար : Ի՞նչ բանի համար է այն յաւիտենական խանձը որ անոնց սիրել կուտայ կեանքը , որ սակայն և այնպէս այնքան ցաւատանջ է : Տագնա՛պիչ առեղծուած :

Եւ միմիայն քրիստոնէական քաղաքակրթութեան հրա- շակերտները չեն որ կը թողուն այս խորհրդաւոր տպաւոր



րութիւնը: Նոյնը զգալի է նաև հին արուեստի հրաշակերաններուն առջեւ, օրինակ, Պարթևոնի Երեմ Պարկաներուն առջեւ: Ես Պարկայ կոչեցի զանոնք, որովհետև ա՛յս է նուիրագործուած անուանումը, թէև գիտուններու կարծիքով, այդ արձանները կը ներկայացնեն ուրիշ դիւցուհիներ. բայց խնդիրը ասոր վրայ չէ. . . : Խնդիրն ա՛յն է որ երեք նստած կիներ են անոնք, բայց իրենց դիրքը այնչափ պայծառ, այնչափ վեհաշուք է որ կարծես թէ անոնք մասնակից են վեհ բանի մը՝ զոր մարդ չի տեսներ: Անոնց վրայ կ'իշխէ իրապէս մեծ խորհուրդը, — աննիւթական, յաւիտենական բանականութիւնը, որուն կը հնազանդի բովանդակ Բնութիւնը և որու երկնային ազախիճներն են իրենք՝ այդ կիները:

Այսպէս, բոլոր վարպետները կը յառաջանան մինչև այն ցանկապատը՝ ուրկէ անդին Անճանաչելին է: Անոնցմէ ոմանք անոր դէմ ողբագին կը ջախջախեն իրենց ճակատը: Ուրիշներ, որոնց երեւակայութիւնը աւելի գեղածիծաղ է, կը կարծեն թէ պատին անդի կողմէն կը լսեն գաղանի մրգաստանը լեցնող քաղցրանուագ թռչուններու գեղգեղանքը:

ՕԿԻՍԹ ՌՕՏԷՆ

Ռուս Գրականութիւն

## Լ Ո Յ Ս Ե Ր Ը

Չեմ յիշեր թէ երբ, շատ ժամանակ առաջ, աշնան մութ խաւար գիշերով ինձի վիճակուեցաւ նաւակով ճանապարհորդել Սիպիրիոյ մռայլ մէկ գետին վրայ: Յանկարծ, գետին պտոյտ եկած տեղը, մեր առջև մութ լեռներուն տակէն փայլեցաւ լոյս մը:

Փայլեցաւ պայծառ, ուժգին, բոլորովին մօտիկ . . .

— Է՛հ, փա՛ռք Աստուծոյ — ըսի ևս ուրախացած, — գիւղ է, մօտ է գիշերատեղին:

Թիավարը ևս դարձաւ, ուսերուն վրայէն նայեցաւ լոյսին և նորէն ծանրացաւ թիերուն:

— Հեռու է դեռ :

Ես չհաւատացի . լոյսը անքան մօտ կը թուէր , և անորոշ խաւարին մէջէն առաջ կը խաղար : Բայց թիավարը իրաւացի էր . պարզուեցաւ որ իսկապէս հեռու էր :

Գիշերային այդ լոյսերուն յատկութիւնն է խաւարը պատուելով՝ մօտենալ , քալել ու խոստանալ , խաբել և գրաւել՝ իրենց մօտիկութեամբ : Կը թուէր թէ անա մէկ երկու թի ևս և ճանապարհը կը վերջանայ . . . Մինչդեռ—չա՛տ է հեռու :

Եւ դեռ երկար կ'ընթանայինք մենք այն դաժան ու թանաքի պէս սև գետով : Կիրճերն ու ժայռերը դուրս կը լողային , կը մօտենային ու կը հեռանային , մնալով ետեւ և կարծես կորսուելով անծայր տարածութեան մէջ . իսկ լոյսը կը մնար , միշտ կը մնար , մեր առջեւ փայլելով ու գրաւելով՝ առաջուայ պէս մօտիկ և առաջուայ պէս հեռու :

Այժմ շատ անգամ ես կը յիշեմ և՛ այդ ժայռոտ լեռներուն սառուերներովը ծածկուած մութ գետը , և՛ այդ պլպլացող լոյսը : Միայն դիտ չէ որ շատ լոյսեր , առաջ ալ , յետոյ ալ գրաւեր են իրենց մօտիկութեամբ : Բայց կեանքը դեռ կը հոսի նոյն մռայլ ափերուն մէջէն , իսկ լոյսերը դեռ շատ են հեռու : Եւ նորէն պէտք կ'ըլլայ ուժ տալ թիերուն . . .

Բայց և այնպէս . . . բայց և այնպէս Լոյսերը մեր առջեւն են . . .

Վ. ԿՈՌՕԼԷՆԿՈ

## Ա Ն Ա Ռ Ա Կ Ը

Անէ՛ծքող, Հա՛յր, փոխեց ոսկիս մութ պրղինձի,  
Բայց քանի որ շամբուշ կուռք մը պէտք էր ինձի՝  
Ես պրղինձով ալ պատրանքներս ծուլեցի:

Անէ՛ծքող, Հա՛յր, դարձուց նաշի՛հրս սեւ հացի,  
Բայց քանի որ սեղան մը շուայտ պէտք էր ինձի՝  
Ես սեւ հացովս ալ հեշտ պատա՛ւրս ծամեցի:

Անէ՛ ծքդ, Հա՛յր, փոխեց կրնդրուկս անարգ գուղծի,  
Բայց քանի որ ըզգլխանք մը պէտք էր ինծի,  
Ես այդ գուղծովն ալ երազներս ծրխեցի:

Անէ՛ ծքրդ, Հա՛յր, պերճ պատմունեանս դարձուց քուրծի,  
Բայց քանի որ կուշտ վայելք մը պէտք էր ինծի՝  
Ես այդ քուրծովն ալ կուշտիս հե՛ւքը ծածկեցի:

Անէ՛ ծքրդ, Հա՛յր, երազըս դարձուց ճայրոտ բոցի,  
Բայց քանի որ հրրայրք մը տենդ պէտք էր ինծի՝  
Ես այդ բոցովն ալ շիւ աչքե՛րըս վառեցի:

Անէ՛ ծքրդ, Հա՛յր, գոհար քարերս դարձուց խեցի.  
Բայց քանի որ գիրկ մը գրրգանք պէտք էր ինծի՝  
Թամարներու կուրծքէն զանոնք ես կախեցի:

Անէ՛ ծքրդ, Հա՛յր, ցուպս ալ դարձուց բարկ խայթոցի,  
Որ արիւնեց զիս խածուածքով պատիժ օծի,  
Բայց քանի որ ապրիլ մը կար, ա՛հ, վա՛յ ինծի,  
Աղտոտ խոզի երամակներ արածեցի...

\*  
\* \*

Օրհնութի՛ւնդ, Հա՛յր, փշրած եմ կուռքս անհանճար՝  
Որ զիս խաբեց չարաչար.  
Ալ չեմ մօտիր այն սեղանին ես երբեք  
Որ զիս լըքեց սովաբեկ:

Օրհնութի՛ւնդ, Հա՛յր, ըզգրլխանքիս անդունդին  
Չափած եմ խո՛րքը մըթին.  
Ալ կը սոսկամ այն վայելքէն՝ որ կիրքի  
Ամպրոպներով կը մրըրկի:



Օրհնու թի՛ւնդ, Հա՛յր, բոցը մարած է հրայրքիս՝  
 Որ մոխրակոյտ մ՛ըրաւ զիս.  
 Ա՛լ զիրկէդ զատ տեղ մը չունիմ ապահով՝  
 Ուր թաղուիմ պի՛նդ գորովով:

Օրհնու թի՛ւնդ, Հա՛յր, խոզի լրպիրշ ախտերէն  
 Ա՛լ սրբբւլած է հոգիս.  
 Վարձկանդ ըլլամ, ըզքեզ պաշտեմ, դու նորէն  
 Իբրեւ Աստուած օրհնէ՛ զիս:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ



ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ

ԵՍՆ.— Բանասէր, գրագէտ եւ բանաստեղծ հաւասարապէս: Իր ներշնչումները քաղած է կրօնական աղբիւրներէ, զգայուն եւ քաղցր տաքութեամբ մը. իր քերթուածները կը կրեն իմաստասիրական խորք եւ քրիստոնէական գորով: Հրատարակած է Հովուական Սրիկը, ուր ամփոփուած են իր կրօնական տաղերը:

## ԱՐՆՈՒՆ ԴԱՏԱԻՈՐԻՆ ՊԱՏԱՀԱՐԸ

### 1

Արնոյտ դատաւորը սովորութիւն ունէր ամէն ամառ գալ հանգչիլ Հուենոսի եզերքը՝ Պինկէնի մօտ, փոքրիկ խաղաղ աւանի մը մէջ՝ ուր իր պաշտօնին հոգերը կը մոռնար: Հոն երկու ամիսի չափ հեշտ ու բուսական կեանք մը կ'անցընէր՝ իր պարտէզին վարդենիները հատանելով, իր հաւերուն կերտալով, և օրուան տաք ժամերուն՝ կարդալով հաւաքածոներ վաղեմի առասպելներու, որոնց յաւիտենական հերոսը իր ոտքին տակ պոռոչող մեծ գեան էր: Իրիկունները, կ'երթար կը



նատէր դարարագարդ հովանոցին տակ կապելայի մը որ ջուրին վերեւ կը գահէր :

Օրուան լուագոյն վայրկեանն էր ատ, այն վայրկեանը ռը դատաւորը էակներու լուսթիւնն ու իրերու մրմունջը կը վայելէր : Կը լսէր ճողփիւնն ալեակներուն որոնք ափունքին վրայ կը մարէին, հեռու ժխորէն մեծ կոհակին որ դէպի ծովը կը դիմէր . և անուշ խանդաղատանքով մը կը տոգորուէր՝ մտածելով ճակատագրին վրայ այդ ջուրի կաթիլներուն, գորս սպինգային հողը կը ծծէր և որոնք Մայանսի զանգակատուններն իրենց մէջ հայելայնելէ յետոյ՝ Բոլսնէիները պիտի չտեսնէին . որովհետեւ Արնոլտ դատաւորը զգայնու էր, և եթէ տարուան ընթացքին մէջ պաշտօնին բերումով՝ գիտէր անզգայ մնալ մարդկային ցաւերուն, գիւղագնացութեան միջոցին՝ չափազանց զգայուն կը դառնար անտառներու հեծեճանքին և ալիքներու ողբին :

Այս անգամ, իր մեկնումին նախընթաց օրը, Արնոլտ դատաւորը, հովանեակին տակ իր սովորական տեղը նստած, փոքրիկ փոքրիկ ումպերով կը խմէր թուխ գարեջուրը զոր իրեն ամէն օր կը հրամցնէին և որ հէնց այդ աւանին մէջ կը պատրաստուէր, համեղ ու զով գարեջուր մը, զոր միմիայն այդ տեղը կը խմէր և որուն կարօտը կը քաշէր ամբողջ ձմեռը : Մեղամաղձօրէն կ'երազէր, միայն խմելու համար թօթափելով մերթ իր երազանքը, անճնատուր ըլլալով սիրական խմելիքին զգլխիչ հրապոյրին . բաժակները բաժակներուն կը յաջորդէին, և ինքը մափկ կ'ընէր գետին շշուկին : Բոլոր իրիկունը՝ զուարթօրէն ծանրաբեռն նաւեր հոսանքն ի վար իջած էին դէպ ի Պինկէն տանելով նուագածուններու և երգիչներու խումբեր, որոնք կ'երթային երաժշտական խրախճանք մը հանդիսաւորել և հնչուն ձայներէ թնդացուած յանկերգները բլրակներու ու ափերուն խաղաղութիւնը վրդոված էին :

Երբ կէս գիշերը հասաւ, լուսթիւնը վերատին տիրած էր գիւղին, և Արնոլտ իր տունն ու պարտէզը դառնալէ առաջ . որոշեց Հուկնոսին եղերքն ի վար պարտիլ : Ոտքի ելաւ գլուխը

քիչ մը ծանրացած, և թէպէտ աչքը՝ գարեջուրին գոլորչիններէն թեթեւ մը պղտորած՝ կը խաղար, մանրաքայլ յառաջացաւ: Գեշերը շատ սև էր. խորհեցաւ թէ լուսինը, որ արդէն քարծուները կը կապուտցնէր, իր վերադարձը պիտի դիւրացնէր եւ վճռապէս շարունակեց քայլել:

Արնուրա կը կարծէր իր առջեւէն անցնիլը տեսնել, շարժուն ու խուսափուկ հայելիին մէջ ցոլացած, այն բնական գեղեցիկ դիրքերուն՝ որոնք գետին վրայ հակած էին զայն հմայելու և կեցնելու համար: Կը տեսնէր քաղաքներու կիսադէմքեր, հեռաւոր կիսադէմքեր որոնք կը փախչէին երբ կը ծռէր զանոնք լաւ եւս զանազանելու համար. յետոյ՝ տափակ մարգագետիններ բոժոժներով սարսուռն. և ծառաշատ պուրակներ զորս կ'ոգեւորէր մեծ թռչուններու թեւածումը: Փափաք կը զգար բռնել ամէնքն ալ, պուրակները, մարգագետիններն ու քաղաքները: Ուժեղ տենչ մը զինքը համակեց մեկնելու, հեռու երթալու աւանէն ու նոյն իսկ կապելայէն ուր այնքան լաւ գարեջուր մը կար խմելու. բազուկները դէպի առաջ երկնցուց, ոտքի ելաւ, աւելի մօտ եկաւ գետին, ականջ դնելով թիակներու հեռաւոր բախումի մը. այն նաւակն էր որուն կը սպասէր, զոր կը գուշակէր և որ եկաւ, երկայն նաւակ մը զոր կը վարէր լռիկ թիավար մը:

Ան կանգ առաւ իր առջեւ. թիավարը նշան մը ըրաւ. Արնուրա, անասելի հրճուանքով մը, ցատկեց նաւակին մէջ և դէպի խելաց կողմի նստարանն ուղղուելով, դեկին կրթնեցաւ, սրունքները երկնցնելով ու գլուխը դէպ ի նստ նետելով: Երանութիւն մը կը համակէր զինքը. ձեռքերը նաւակին եզերքներն ի վար կախեց. և խուսափող ջուրը կը փայփայէր իր մատները:

## 2

Հիմա, կը լսէր հազարաւոր ձայներ որ ալիքներէն կ'ելլէին. և որպէս թէ նոր զգայարանք մը ստացած ըլլար, կը



հասկնար ջուրի կաթիլներուն ողբը, փրփուրներուն երգը, գետային ամբոխին շշուռը. կը զուարճանար քրքիջներովը խուժանին որ իր շուրջը կը կուտակուէր: Ձինքը կը հրէին չարաճճի կերպով, կատակներ կը փափաային իր ականջին, ստիպողական կոչեր կը գոռային, և ամբողջութիւնը կը հալէր միօրինակ ալեժիտրի մը մէջ, որմէ երբեմն երբեմն ճիչ մը, հեղնական ծիծաղ մը կամ հեկեկանք մը դուրս կը ցատկէր: Արնոլտ մտածեց թէ նպատակին հասնելու մօտ էր, թէ ընդհուպ պիտի կոխէր այն ճերմակ ու բարակ աւազին վրայ որ գետին յատակը կը գտնուէր. աւելի թոյլ կերպով անձնատուր եղաւ. ջուրերուն ամբողջ բուրումը իր ունեցերուն մէջ մտաւ. զանգակներ թնդացին աներևոյթ զանգակատուններու մէջ ճօճուած, նախ՝ արծաթահունչ, բարակ ձայներ հոսեցնելով որոնց թրթռումները դատաւորին մորթին վրայ կը վազէին հազարաւոր հնչուն միջատներու նման, յետոյ արոյրի մրրիկ մը յարուցանելով և հզօր զօղանջով գլուխը ծեծելով Արնոլտին, որուն բովանդակ մարմինը կը սարսուար:

Նաւակին մէջ էր, միշտ խելաց կողմը պառկած, ու նաւակը հոսանքն ի վար կ'իջնէր:

Բան մը զինքը դէպի գետին խորը կը քաշէր, իր բազուկները ջուրին մէջ կախուած կը բռնէր. ու նոյն ատեն՝ նաւավարին ձեռքը զինքը նստարանին վրայ սեւեռած կը պահէր:

Լռիկ, անշարժ, կը դիտէր ընկերը որուն մատներն իր մարմնին մէջ կը մխուէին: Յաղթահասակ մարդ մըն էր ան, երկայն թուխ կրկնոց մը հազած: Արնոլտ անոր դէմքէն աչքերը միայն կրցաւ տեսնել, տիրական ձգողութեամբ աչքեր որ սաստիկ փայլով մը կը շողային: Փորձեց նայուածքն անդին դարձնել, բայց չկարողացաւ. որովհետեւ հասկցաւ յանկարծ թէ նաւավարը մտադիր էր խօսիլ, և իր հանդարտութիւնը վերստացաւ, իբր արհեստին մէջ ծերացած մարդ՝ պատրաստ ի դերեւ հանելու խորամանկութիւնները հարցաքննութեան մը որուն խարդախ ու նենգաւոր ըլլալիքը կը գուշակէր. բայց իր

խօսակցին հանդարտ ուղղամտութիւնը զինքը յուսախար  
րբաւ :

— Չե՞ս կարծիր, ըսաւ ան, թէ վայրկեանը եկած է որ  
ա՛յլ քեզ ճանչնամ: Իմ հիւրընկալութիւնս խնդրեցիր, տուի.  
բայց ինձի հաճելի պիտի ըլլար գիտնալ թէ անձանօթ մը չէ որ  
ասպնջականամ եմ:

— Ինչպէ՞ս, պատասխանեց Արնոյտ, դուն Պինկէնի մօտ  
նաւավար ես և զիս չե՞ս ճանչնար: Չե՞ս գիտեր որ Արնոյտ  
կանուանեն զիս:

— Չէի գիտեր, յարկեց նաւավարը, որովհետեւ ես յաճախ  
չեմ անցնիր այս ափունքներուն մօտ ուր դուն քաջածանօթ  
ես: Ուրախ եմ անունդ ճանչնալու:

Վայրկեան մը մտամիտի կեցաւ, յետոյ ձեռքը դատա-  
ւորին ուսէն վար առաւ, նստաւ և թիակներն ափելով նաւա-  
կը նորէն առաջ մղեց: Սմայեր երկինքը պատած էին ու լու-  
սինը ծածկած. թանձր աղջամուղջ մը կը տարածուէր գետե-  
զերքներուն վրայ. փոքրիկ կապուտակ փոսփորափայլութիւն-  
ներ ալիքներուն կատարը կը պարէին՝ մերթ դէպի նաւակը  
սուրալով:

— Ի՞նչ ես դուն մարդոց մէջ, հարցուց այդ տարօրինակ անձը:

— Իստաւո՞ր եմ, պատասխանեց Արնոյտ:

— Իստաւո՞ր, ըսաւ նաւավարը. ի՞նչ բան է այդ: Ըսել  
կ'ուզես արդեօք թէ քու նմաններուդ արարքները կը չափես,  
թէ կարո՞ղ ես զանոնք ճշմարիտ կշիւքին վրայ կշուել և թէ  
անոնց ծանրութիւնը ճիշտ ու ճիշտ կ'որոշե՞ս:

— Այդպէս համարէ՛, հաւանեցաւ Արնոյտ:

— Իստաւո՞ր, շարունակեց նաւավարը, դատաւո՞ր ես  
դուն: Այդ կը նշանակէ ուրեմն թէ դուն բոլոր սրտերուն  
խորը կը տեսնես անսխալօրէն, թէ բոլոր արարքներուն շար-  
ժառիթը գիտես. թէ քու աչքիդ կը պարզուին մտքերու ա-  
մէնէն մռայլ խորշերը, ուղեղներու և հոգիներու ամէնէն  
խաւարչափն քառուղիները:

— Չափազանց մեծ կարողութիւն մը կը վերագրես ինձի,

ըսաւ Արնոյտ, — այդ վայրենիին սքանչելի պարզամտութեանը վրայ քմծիծաղ մը ունենալով :

Դատաւորին պատասխանը թուեցաւ խորապէս զարմացնել նաւավարը . թիակները ձեռքէն ձգեց , խոր խակումի մը մէջ սուզուեցաւ , մինչ դատաւորը , այդ միամիտ հարցաքննութենէն զուարթացած , իր Լայփցիկի դատասրահը միաքը կը բերէր : Ականջ կը դնէր պատասխաններուն երեւակայական ամբաստանեալի մը , որուն՝ ոչ առանց հեշտանքի՝ մտատանջութեամբ համակուած դէմքը կը տեսնէր իր առջևը , և սկսաւ խնդալ , քիչ մը կծու ծիծաղով մը , որ կարծես ջուրին մէջ լինկաւ անձրևի նման , և ոստոսակց փոքրիկ թնայանկոտ բողբոջ մէջտեղը , որոնցմէ ոմանք աւելի ուժով խածին Արնոյտի ձեռքը . այն ատեն դող մը եկաւ վրան , ու նորէն լուռ ու մունջ դարձաւ :

— Այսպէս , ըսաւ դարձեալ նաւավարը , դուն մարդէ՞րը կը դատես :

— Այո՛ , պատասխանեց Արնոյտ , այդ պնդումէն նեղացած :

— Բացաարէ թէ ի՞նչպէս :

Արնոյտ ուսերը բարձրացուց , բայց թաքուն բնազդ մը իրեն զգացուց թէ պէտք չէր նեղացնել զինքը հարցաքննողը , և բարեցակամ հաճոյակատարութեամբ մը ըսաւ անոր թէ ի՞նչպէս որոշեալ օրեր , մասնաւոր պատմուճան մը հագած , յատուկ գտակ մը գլուխը դրած , ու բարձր թիկնաթուռի մը վրայ նստած՝ կը քննէր ընթացքը մէկ քանի խեղճ ողորմելիներու զոր պահասպաններն իր առջևը կը բերէին :

— Ի՞նչ բրած են այդ մարդիկը , հարցուց նաւավարը :

— Ոճրագործներ են , յայտարարեց Արնոյտ :

— Ի՞նչ կը հասկնաս այս բառով , ըսաւ նաւավարը :

— Սա կը հասկնամ որ պարսաւելի գործեր են կատարած :

— Հը՛մ , ի՞նչ են այն գործերը զորս պարսաւելի կ'անուանես :

— Այն գործերը զորս օրէնքը կը դատապարտէ :

— Ի՞նչ անշուշտ կը ճանչնաս այդ մարդիկը որ դատարանդ կը բերուին :



— Ի՞նչպէս կ'ուզես որ ճանչնամ, երբ առաջին անգամ ըլլալով կը տեսնեմ :

— Ուրեմն դուն ծանօթ չես անոնց կեանքին, ինչպէս և այն պարագաներուն որոնց մէջ ծնած են անոնք : Չես գիտեր թէ ճակատագիրն անոնց համար քաղցր կամ ահեղ է եղած . իրենց ուրախութիւններն ու ցաւերը քեզի անծանօթ են : Չես իմացած թէ որո՞նք եղած են անոնց դաստիարակիչներն ու առաջնորդները . քեզի չեն տուած իրենց ծնողքին անունը , քեզի չեն ըսած թէ ո՞վ էին անոնք և թէ ի՞նչպիսի օրերու մէջ ծնած այն անձը զոր զինուորներով պաշարուած դիմացդ բերել կուտաս :

— Բոլորին անծանօթ եմ ես :

— Ուրեմն գուշակողական կարողութիւն ունիս դուն . գերազանց էակ մըն ես, կամ այդպէս կ'ընդունիս ինքզինքդ, պաշտօնաւորեալ մը, օժեպ մը, որ ամէն տկարութենէ, ամէն սխալումէ զերծ է : Դուն անազօք ես, արդար, ուղղադատ, անատգիւտ, աներկիւղ, աներկբայ : Թո՛ղ տուր ուրեմն որ սքանչանամ վրադ :

Նաւավարը գլուխը ծռեց դատաւորին առջեւ, որ նեղ-սրբութիւն մը զգաց և չկրցաւ հանդուրժել այդ խոնարհութեան որ հեզնական թուեցաւ իրեն :

— Մի՛ սքանչանար վրաս, ըսաւ պարզմտաբար, ես ալ մարդ մըն եմ ուրիշ մարդոց պէս :

— Այն ատեն, հարցուց նաւավարը, ինչո՞ւ կը դատես քու եղբայրներդ :

— Որովհետեւ ես օրէնքը գիտեմ :

— Օրէնքը գիտես :

— Այո՛, տղայ հասակէս ինձի սորվեցուցին անոր մանրահիւս ցանցը ճանչնալ՝ իր բոլոր օղակներով, այն օղակները զորս հայրախնամ իշխանութիւնը օրէ օր աւելի կը սեղմէ . կը ճանչնամ այն անձերը որոնք կը ջանան անոր պարուրանքէն խուսափիլ, անոնք որ կրնան մէջէ մէջ անցած թելերուն արանքէն դուրս սպրդիլ, անոնք որ չեն կրնար :

— Ուրեմն ա՛յդ է որ դատել կ'անուանես :

— Հէնց այդ է :

— Եւ դուն երբեք խղճի խայթ մը ունեցած չե՞ս . չե՞ս վախցած երբեք քու տգիտութենէդ կամ ինքնահաւանութենէդ :

— Կատակ կ'ընես :

— Օ , չէ' : Կ'ուզեմ գիտնալ թէ կարո՞ղ ես հիմա , առանց սարսափի , դիմացդ տեսնել բոլոր անոնք զորս դատած ես կեանքիդ մէջ :

Արնոլտ պահ մը վարանեցաւ , յետոյ՝ շատ ցած ձայնով մը ըսաւ . « Այո՛ » :

Այն ատեն նաւավարը գլուխը բարձրացուց , և ,

— Եկո՛ւր հետս ո՛րեմն , ըսաւ . անշուշտ հաճոյք պիտի զգաս անոնց հետ երես երեսի գալով :

### 3

Մատը երկնցուց : Դատաւորը տեսաւ որ նաւակը հասած էր Կղզիի մը մօտ , զոր երբեք չէր տեսած գետին մէջ : Տարօրինակ սարսուռ մը ղինքը ցնցեց , նորանչան զարհուրանք մը զգաց . և յանկարծ նաւավարը ղինքը բռնեց քաշեց նստարանին վրայէն ու անձանօթ հողին վրայ նետեց :

Ամայի ու մերկ գետեզերք մըն էր , որուն աւազները անվախճանօրէն կը փախչէին : Արնոլտ ուզեց իր առաջնորդին հարցնել թէ ո՞րն էր այդ խորհրդաւոր երկիրը , բայց՝ կտին դառնալուն՝ ինքզինքը մինակ գտաւ , մինչ հեռուն՝ գետին վրայ՝ կը հեռանար այն որ ղինքը բերած էր : Իր սրունքները ծանրացած էին , և սակայն քաշելու անդիմադրելի փափաք մը կը մղէր ղինքը : Պահ մը նստաւ ժայռի մը վրայ որ իր բեռին սակ կարծես կակուղցաւ . չկրցաւ հոն մնալ , որովհետեւ անորոշ , նոյն իսկ անհունչ ձայն մը կ'ըսէր իր ականջին . — « Եկո՛ւր » : Ոտքի ելաւ և առանց ո՞ւր երթալը գիտնալու քաշեց , ինչպէս որսորդին ձեռքէն խալրսած կղզերու մը որ իր որջը կը դառնայ : Յոգնած ըլլալը հոգը չընկելով , բանի մը կը սպասէր , և իմանալու անձգակէն բռնուած , իր քայլը կ'երազէր : Գետափը որմէ կ'անցնէր , անձայրածիր կը թուէր իրեն . անոր աւազներուն կոհակները կ'երկարաձգուէին , ու զարմացաւ յան-

կարծ՝ հորիզոնին վրայ նշմարելով մանիշակագոյն մշուշը զոր կը ձեռնդէ ծառերուն շունչը։ հովը իրեն բերաւ ունտիններու սիրական բուրուճը, անտառային հզօր ու բարերար հոտը, յետոյ լսեց մրմունջ մը աւելի մեղմ քան գետին հուժկու աղաղակը, գիշերային մրմունջը քնացած ծառերուն։

Կենսատաներով ու մայրառներով ծածկուած դաշտավայրէ մը անցաւ, ուր հոս ու հոն ճուղած շոճիներ կը կանգնէին, ու մասիլ փորթիէ մը նման՝ անտառը բացուեցաւ իր առջեւ։ Տերեւախիտ կամարներուն ներքեւ մտնելու ատեն՝ կանգ առաւ, ինչու որ ոտնաձայն մը ախանջին էր եկեր։ Ստուեր մը դէպ իր կողմը կու գար՝ ծառուղիներուն մէջէն, իր ուղեկիցն էր։ Ինքնին խորհեցաւ որ թերեւս նաւակը սարած նաւամատոյց մը ձգած էր, ու զայն վերատին տեսնելուն չզարմացաւ։

— Եկու՛ր, ըսաւ նաւավարը։ Բե՛զի կը ապանեն։

Դատաւորը ձեռքը մարդուն ձեռքին մէջ դրաւ և թողուց որ ան զինքը քաշէր սանէր կածաններուն մէջէն։ Գինչերուան մթութիւնն այնքան խորունկ էր, որ զինքն առաջ որդողին դէմքը չէր տեսներ։ Իր շուրջը կը լսէր վազող մարդոց հապշտապ ու հեւ ի հեւ շունչեր։ Հրոսի մը մէջտեղը կը կարծէր գտնուիլ։ Աչքերը կը գոցէր՝ քայելը շարունակելով հանդերձ, այդ բանակին զինուորները կը փորձէր համրել՝ առանց յաջողելու, ուրիշ բան չիմանալով բաց եթէ շփոթ չափաձայնութիւն մը, և սրտնեղութիւն զգալու վրայ էր, երբ նաւավարը իրեն ըսաւ.

— Հառանք։

Դատաւորը չորս կողմը նայեցաւ։ Ընդարձակ բացաստանի մը մէջ կը գտնուէր, որուն մէջտեղը կը կանգնէր բարձրաւանդակ մը զոր անխօս ամբոխ մը կը սլաշարէր։ Բարձրաւանդակին վրայ նստած էր ծերունի մը, անոր առջեւ մարդ մը կեցած էր։ Արնոլտ հասկցաւ թէ այդ մարդը պիտի դատուէր։ Մեծ հետաքրքրութիւն մը զինքը համակեց։ Ուղեց գիտնալ թէ ի՞նչ կերպով դատ կը տեսնէին այդ տարօրինակ երկրին դատաւորները, յառաջացաւ, ամբոխը մէկդի քաշուեցաւ՝



ձգելու համար որ սնցնի ան, և քիչ յետոյ առաջին կարգը հասաւ, իր դէմն ունենալով ամբաստանեալը որուն երեսը չէր կրնար տեսնել:

— Ի՞նչ բրած է այս մարդը, հարցուց:

— Իր յանցանքովը՝ իրեն նման արարածներ մեռած են, պատասխանեց իր քովը գտնուողներէն մէկը:

— Ինչո՞ւ գինքն ալ չեն մեռցներ, հարցուց:

— Շատ կ'աճապարես դուն, ըսաւ իր ականջն ի վար հեգնական ձայն մը: Գիտե՞ս թէ ինչո՞ւ և ի՞նչ բանի համար զանոնք մեռցնել տուաւ:

— Ի՞նչ փոյթ, պատասխանեց Արնոլտ:

Սօսքը սխալի շարունակէր, երբ ծերունին ձեռքով նշան մը ըրաւ և լնդհանուր լուսթեան մէջ աղաղակեց.

— Ամբաստանողները թող մտենան:

Ժողովուրդէն մէկը յառաջացաւ և բարձրաւանդակին աստիճաններէն վեր ելաւ: Անոր դէմքը ծանօթ էր Արնոլտին. անշուշտ իրեն հետ արդէն գործ մը ունեցած էր, և որովհետև ողորմելի ցնցոտիներով էր ծածկուած, մտածեց՝ իրը ճշմարիտ դատաւոր՝ թէ այդ դանգատողը ատենով իր դատած մարդոցմէն մէկն էր եղած:

— Կամբաստանե՞ս, ըսաւ ծերունին:

— Կամբաստանեմ, պատասխանեց մարդը: Արտ մը ունէի ատենով, և այդ արտէն կ'ապրէի, բայց ստակ փոխ տուողն ալ այդ արտէն կ'ապրէր. և օր մը եկաւ ուր միայն ինքը ապրեցաւ անկից: Իրիկուն մը զարկի վաշխառուն որ եկեր էր իր փրկանքը պահանջելու, և իր բակեղեթին մէջէն առի փոքրիկ մաս մը այն դրամէն զոր իմ քրտինքէս և իմ նեղութենէս քաղած էր. այս մարդը որ հոս կեցած է՝ զիս դատապարտեց:

— Կը իշեմ, գոչեց Արնոլտ, յետոյ սկսաւ խնդալ, որովհետև եթէ ատենօք նմանօրինակ յանցանք մը դատած էր, հիմա ինքը չէր որ ատոր համար կ'ամբաստանուէր: Թերևս պարտազանց կամ ոճրագործ դատաւոր մըն էր որ ատեան էր բերուած. ըսելու վրայ էր թէ պէտք չէ անվատահելի վկայութիւններ ընդունել, բայց մարդը շարունակեց.

— Զիս տարի մը բանտը պահեցին, երբ արձակեցին՝ արտա ուրիշի մը կը պատկանէր, և իմ տունս ա՛լ իմս չէր. ա՛լ այնուհետեւ տպրեցայ առանց պատուարանի, առանց երդիքի, առանց հողի. ամէնքը զիս կը հալածէին՝ ինչպէս թափառիկ շուները կամ անտառի անասունները կը հալածեն. և անոնց պէս մեռայ, խրամի մը եզերքը, կամ ջրակոյտի մը քով, և կամ իրիկուն մը՝ հարուած կրելով, ինչպէս և հարուածուեցան եղբայրներս, ինչպէս և հարուածուեցաւ մայրս որ իր դատավճիռը կրեց, ու բոլոր անոնք որ պատժուեցան՝ որովհետեւ տառապած էին ու տառապելու համակերպած չէին, բոլոր անոնք զորս այս մարդը չարչարեց, բոլոր անոնք զորս մեռցուց, բոլոր անոնք որ հոս զինքը կը շրջապատեն:

Այս խօսքերն իմանալով, ամբոխը խուժեց դէպի բարձրաւանդակը ու ամբաստանողին շուրջը խռնուեցաւ. և այն մարդը զոր կը դատէին՝ գոչեց.

— Ես իմ գործս կատարեցի, իմ պարտականութիւնս ըրի, օրէնքին ծառայեցի:

— Իրաւունք ունի, ըսաւ Արնոլտ, ես ալ իրեն պէս եմ ըրած. մենք պատասխանատու չենք այն վէրքերուն՝ զորս կը բանայ օրէնքին կոյր սուսերը:

Այս խօսքին, բարձրաւանդակին վրայ կանգնած մարդը անհետացաւ, և Արնոլտ տեսաւ որ ինքն իսկ էր որ կ'ամբաստանէին: Ճանչցաւ ան որ կը խօսէր և ճանչցաւ նաև անոնք որ իր քովիկը կեցած էին, բոլոր աւազակները, բոլոր խեղճ ողորմելիները, բոլոր թափառաշրջիկները զորս պատժած էր, որովհետեւ անօթի էին ու ծառաւ, որովհետեւ դրացիին հացը կերած էին և ուրիշին գինին խմած, որովհետեւ՝ մենաւոր ու կարծր ճամբաներէն ա՛լ խոնջ՝ ուզած էին ճանչնալ գաղջ ու կակուղ անկողիներ ուր կարելի է քնանալ:

Ետ ետ քաշուեցաւ՝ զանոնք տեսնելով, և ծերունիին ծանր ձայնը արտասանեց վճիռը.

— Զեզի կը յանձնեմ այս մարդը որ միշտ օրէնքը գործադրած է և երբեք արդարութիւնը չէ ճանչցած:

Այն ատեն, որսի շուներու խուճբի մը նման, ներկաները դատաւորին վրայ խոյացան, և ան հազիւ կրցաւ խաւարչտին անտառին մէջէն փախչիլ: Վազեց անընդհատ, վրէժխնդիր հայհուչէն հարածուած, չարակամ ծառերու մէջակողը սայթաքելով, թշնամի տատասկներէն բռնուած, մինչև ազատարար գետը՝ որուն կոհակները զինքը կը կանչէին և իրենց ծոցն ընդունեցան, երբ ինքզինքն անոնց յանձնեց՝ ինչպէս մանուկ մը որ իր մօրը գիրկը կը քնանայ, չլսելու համար ահաւոր արձագանգը որ կը կրկնէր. «Արնօլտ դատաւորը արդարու թիւնը չէ ճանչցած:»

ՊԵՐՆԱՐ ԼԱԶԱՐ

## Կ Ռ Ո Ւ Ի Ե Ր Թ

Այս գիշեր նորէն կ'անի, կը մեծնայ, կը շատնայ հոգիս,  
կըռիւի գացող բանակի մը պէս.

Ո՛վ դափնեպրսա՛կ, այս գիշեր նորէն ինծի կ'երեւիս  
Լերան մը ծայրէն եւ զիս կը փորձես...:

Ճամբուս վրայ, հեռո՛ւն մընացած ամբողջ յոյսերըս նրկուն  
Կը վերադառնան մի առ մի, ահա՛,

Եւ խոր քունի մէջ նիրհող ուժերուս պարն այս իրիկուն  
Յանկարծ հաւատքով կը թըռի կ'ելլայ...:

— «Ո՞ւր կ'երթանք այսպէս. ո՞ր յաղթանակին կամ ո՞ր փառաւոր

Պարտութեան առաջ...» կը հարցընէք դուք,

Ո՛վ իմ անհամար արշաւանքներէս դարձած կորակոր

Զինուորնե՛րս արի, զոհե՛րս անշուք...:

Քանզի կը յիշէք թէ քանի՛ անգամ ըզձեզ կանչեցի

Երազի մը վառ դրրօշին ներքեւ,

Երթալ յարձակմամբ առնելու համար նրսեհին կծծի

Քաղաքն ու գանձե՛րը երկնապարգեւ...:



Քանզի կը յիշէք նաեւ թէ ի՛նչպէս կամքըս՝ պօրապետ ,  
 Որ կ'աշտանակէր առոյգ , ուղղաբարձ ,  
 Կ'երկմըտէր մէկէն ու կը պաշարուէր խոհերով անպէտ .  
 Եւ ճամբուն մէջտեղ կը կենար յանկարծ . . .

Թէ այնպէս , յաճախ , չը մղուած մարտին տրտմութեամբ լի ,  
 Ետ դարձաք հիւանդ ու ամօթահար ,  
 Մինչդեռ անձնասպան ինկան ձեր մէջէն քաջեր՝ մէկ քանի ,  
 Եւ հեծեալն , անզօր , անոնց վրայ կուլար . . . :

— Բայց այս իրիկուն բազմամբոխ հոգիս ոտքի է նորէն ,  
 Նայուածքներուն տակ աստեղց նորածագ ,  
 Իր հի՛ն դարաւոր անցեալին անխոյզ խորութիւններէն  
 Պարպելով իր հարց զինարանն համակ ,

Չարին , սրտութեան եւ թշնամութեանց դիմաց անհամար  
 Ուխտելով նետուիլ , կռուիլ անփրհատ ,  
 Թերեւս յաղթելու , գուցէ վերստին խաբուելու համար ,  
 Թերեւրս , ո՛վ մահ , իյնալու վրրադ . . . :

Քանզի անիկա իր ճակատագրին կոչն է զոր մօտէն ,  
 Ա՛լ շատ մօտիկէն լրսեց այս անգամ ,  
 Եւ կանգնած յանկարծ հորիզոնին դէմ՝ լուրջ ու վնասօրէն  
 Պատասխան տրլաւ . « Ահա , Տէ՛ր , կուգամ . . . » :

ՎԱՀԱՆ ԹԷՔԷՆԱՆ

Վ.Ա.ՎԱՆ ԹԷՔԷՆԱՆ. —

Հրապարակագիր եւ բանաստեղծ : Մշակած է քնարերգութիւնը : Իր քերթուածներուն յատկանիշն է հանդարտ եւ անկեղծ շեշտը եւ յաճախ Սեփօրիզմի ներգործութիւնը : Հրատարակած է Հոգեւ եւ Հրաշալի Յարուքիան անունով բանաստեղծութեանց հատորները , ինչպէս նաեւ Շիրակ հանդէսը Եգիպտոսի ու Պոլսոյ մէջ : Աշխատակցած է հայ լրագրութեան եւ հանդէսներու :





## Գ Ա Ր Ն Ա Ն Ա Ն Ձ Ր Ե Ի

Զարդագեղ ծառերը, թարմաշունչ ծաղիկներն ու կանաչագոծ մարգերը՝ ձմրան սառուցիկ շունչին տակ, պիտի չորնան, պիտի դեղնին ու փեմանան. տերեւները պիտի թափթփին, ծաղիկները պիտի թուլատին, խոտերը պիտի խամրին: Բնութիւնն ալ պիտի մեռնի:

Սակայն, օր մը, յորդագեղ անձրեւներու տակ, այդ ծառերը, ծաղիկներն ու մարգերը նորէն պիտի թրթուան ու սփռուին: Նոր կեանք մը պիտի զայ, ճանանչները պիտի կենդանանան, յոյսերը պիտի թարմութին: Նոր գարունն է որ կուգայ:

Իմ ալ պճնագարդ յոյսերս, անվերջ բաղձանքներս եւ երանաւէտ սէրերս՝ թաքուն յոյզերու, անզգած ցաւերու նուաճող ձեռքին տակ չորցան, դեղնեցան ու խամրեցան: Հոգիս մեռաւ: Եւ իմ հոգիիս, իմ այս թշուա՛ռ չորցած հոգիիս գարունն է որ չի գար:

ՄԷՅՄԷՏ ԲԷՈՒՑ

## Լ ՈՒ Ս Ի Ն Ը

Ծովը դիմացի եզերքին աւազներուն վրայ յուշիկ յուշիկ շունչ կ'առնէ: Տեսարանը, խոր լուսթեան մը մէջ, լուսնի ծագելուն կը սպասէ: Գիշերը առարկաները մթազօծած է խաւարով մը, բայց ահա Պէյքօզի կռնակէն ծլող լուսնի բիւրեղեայ ցոլքեր՝ որոնք առտուան շողերուն կը նմանին, այդ առարկաները ճանանչներով կը դրուագեն: Ծովը, սնդիկի անշարժութեամբ, հանդարտ եւ լռիկ քնացեր է. իսկ ալիքները, մինչեւ հեռո՛ւն երկնցող ալիքները, խորին, խորին կը հեծկտան...:

Ու ահա, յանկարծ, լուսնին դէմքը կը ծաթի, վճիտ



ու թմրած երկինքին բոլոր աստղերը կը թրթռան ոսկեզօծ ժպիտով մը, ջուրերուն վրայ լիաշող ժպիտներ կը սկսին թրվուալ, ծովեզերքին թախծոտ լուսթիւնը արքայական պատկառանք մը կը զգենու:

Լուսինին հետզհետէ հերմկցող ցուքերը եւ Եէնի Քէօյի ծովախարիսխին կանանչ նշոյլները կը սկսին կապուտնալ՝ գիշերուան կամաց կամաց լազուարթացող մթու թեան խորը: Ումուր Եէրիի կարմիր հառազայթները աղերսարկու լուռ նայուածքով կը սպասեն: Լուսնի լոյսը այնքան սկսեր է պաղիլ ու տժգունիլ, որ կարծես թէ մշուշ է, կարծես թէ լուսին չէ...:

Ա՛հ, ես այդ գաղտնապահ լուսինէն կը խորշիմ. ես լոյս ու գոհարէ լուսիններ կ'ուզեմ: Բայց ոչ. մթու թիւններ ալ թող ըլլան, ոչ մէկ նշոյլով չարատաւորուած մթու թիւններ թող ըլլան, ոչ մէկ մարդկային կոծով չժակուած լուսթիւններ թող ըլլան. ու ես, երթամ բաղձանքներուս թախիծը հեծկլտամ հոն, մեռած յոյսերս հոն թաղեմ...:

ՄԷՀՄԷՏ ՐԷՈՒՑ

**ՄԷՀՄԷՏ ՐԷՈՒՑ.**—Մէհմետ Րէուֆ ամէնէն եռանդուն դէմ-

քերէն մէկն է թուրք նոր գրականութեան: Խալիտ Ջիայի եւ ուրիշներու հետ՝ աշխատեցաւ թուրք վիպագրութեան մէջ նոր ու կորովի հոսանք մը մտցնել: Ինք գլխաւորաբար վիպասան, ունի գրագէտի լաւ խմոր, յղացման նորութիւն եւ ներդաշնակ լեզու: Իր վէպերուն մէջ առատօրէն կարելի է հանդիպիլ զգայուն պատկերներու, նկարուն տեսարաններու եւ գեղեցիկ մտածումներու: Իր գլխաւոր վէպերն են Սեպեմբեր, Ինչպէս նաեւ Մեխակ եւ Յաւմիկ. յաջող պատմուածքներու հաւաքածոներ են ձիրան, Վերջին Բաղձանի, Սիրայիլ եւ ուրիշներ: Ունի նաեւ թատերական փորձեր, ինչպէս Պայխա, եւ Ֆերսի եւ շնկերուքիւն:







## ԱՐՏԻՍՏԸ

Օղևոսայի նաւահանգիստը քաղաքի հետ միացրած է մի հսկայական քարէ սանդխատով, որի բարձրութեան վրայ բուրվարի մէջտեղում կանգնած է քաղաքի հիմնադիր Ռիշլիլիէի արձանը, իսկ ստորստում կառուցւած է մի փոքրիկ եկեղեցի նաւահանգստի բնակչութեան համար: Մենք իջանք այդ սանդխատով, մտանք մի աղեղնաձեւ լայն փողոց: Այդ վերջին փողոցն է դէպի ծովափը, այնուհետեւ ամբողջ նաւահանգստի երկայնութեամբ բարձրանում է «Էսթակադան» — երկաթուղու բևեռակիր գնացքների համար կառուցւած կամուրջը: Գիշեր-ցերեկ այս հսկայական կամրջի վրայով սուրկով անցնում են շոգեկառքերը, քարշ տալով վագոնների երկայն շարքերը, նսկ ներքեւ, բազմաթիւ կամարների տակով անց ու դարձ են անում բևեռակիր սայլեր, նաւաստիներ, բանւորներ: Այդ — մի աղմկալի վայր է, մի բարդ հանգոյց ծովային և ցամաքային կիանքերի միջեւ: Շոգենաւերի թանձր ծուխը, նաւաստիների կոշտ ձայները, էսթակադայի խուլ թնդիւնները գնացքների ծանրութիւնից, կայարաններում կուտւած քարածխի փոշին — այս բոլորը ընդհանուր առմամբ անսովոր մարդու վրայ ճնշող սպաւորութիւն են գործում:

Իցկօ Մարգուլիսը մեզ աւաջնորդեց քարածխի փոշիով ծածկւած փողոցի խորքը: Երբ եկեղեցուց հեռացանք երկու հարիւր քայլ դէպի աջ, մեր առջեւ բացւեց օղևաների, ստորին տեսակի թէյաանների ու պանդոկների մի ամբողջ աւան: Այստեղ էր վրտում նաւահանգստի բնակչութեան մեծ մասը: Պանդոկներից լսում էին հարմօնիայի և ուսական ողորմելի «բալալայկա»ի հնչիւններն ամբոխի աղաղակների, երգերի, դռում-գոչիւնների, յիշոցների ու անէծքների հետ: Նրանք, որոնք ժամանակ ու միջոց ունէին, ուտում, խմում ու հարբում էին պանդոկներում, վայելելով էժանագին հուրիների ընկերութեան հաճոյքը: Իսկ նրանք, որոնք միմիայն խմելու

համար փող ունէին, մտնում էին «Մօնօպօլի» կրպակները: Այստեղ, վերցնելով կնքւած շիշերը, դուրս էին գալիս փողոց և բովանդակութիւնը դատարկում իրանց բերանները: Օղին արգելում է խմել «Մօնօպօլի» կրպակներում, ուստի հարբեցողութիւնը, որ առաջ քիչ թէ շատ աւօթ ունէր և թագնրում էր օղեսնների պատերի մէջ, այժմ թագաւորում է փողոցում ամենայն համարձակութեամբ: Եւ ահա նրա ողորմելի զոհերը թաւալւած էին կրպակների առջեւ, մայթերի վրայ, փողոցի մէջանդում—սայլերի ու կառքերի տակ ջարդւելու վտանգին ենթակայ:

Իցկօն կանգ առաւ մի մեծ պանդոկի առջեւ, որի դռների ճակատին գրւած էր. «Արքայական Եախտա»:

— Ահա այստեղ է Լեւոնը, —ասաց նա. — անցեալ շաբաթ «Ոսկէ խարխալումն» էր նուագում:

— Հը՞մ, — արտասանեց Չառչէնկօն, դառնալով ինձ, — տատանւո՞ւմ էք: Վախենո՞ւմ էք մտնել: Քա՛ջ եղէք, ձեզ չեն ուտիլ, մեզ նման մարդիկ են...

Նա գաւազանը բարձրացրեց և յաղթական քայլերով մտաւ Իցկօի հետ պանդոկ: Ես մի քիչ նշանից լաւ էի հագնւած: «Աղա» չհամարւելու համար, վերարկուիս օծիքը բարձրացրի, գլխարկիս եզրը քաշեցի աչքերիս, յուսալով որ ամէնաչատր յոյն որմնադիր կը համարեն ինձ:

Պանդոկը լի էր յաճախորդներով: Առաջին պահուն ոչինչ չկարողացայ որոշել, այնքան մթնոլորտը տոգորւած էր ծխով, փոշիով ու կերակուրների շոգիով: Իժւար էր ընդհանուր աղմուկի, գոռում-գոչիւնների ու հայհոյանքների մէջ մի բան հասկանալ: Այցելուների մի մասը խմբւել էր բուֆէտի առջև, որ գտնւում էր ուղիղ մուտքի դիմաց: Մենք հրհրւում էինք այս ու այն կողմ: Չառչէնկօի նիհար մարմինը պնդակազմ նաւաստիների ուսերի հարուածներից տաշեղի պէս թռչկոտում էր: Երբեմն նա իրան դիմող մէջքերին դէմ էր տալիս գաւազանի կոթը, ինքը յետ կանգնում: Իցկօն, իր փոքրութեան շնորհով, կատուի ճարպիկութեամբ սկզբում էր առաջ՝ մարդ-



կանց արանքով : Ես հազիւ էի կարողանում քիթ ու պոռնոզա ազատ պահել օդի մէջ անխմատ շարժող ձեռների ու արմուկների պատահական հարուածներից :

Մենք անցանք երկու շաբթ կեղտոտ ու մերկ սննհակների միջով , որոնց շուրջը նստած էին նաւաստիներ և երկաթուղու ծառայողներ : Մի քիթը ուռած , կարմրած , աչքերի սակերը կապրած կին , ինձ տեսնելով , գոչեց .

— Էյ , բա՛սուրման , արի միասին «տրեպակա» պարենք :

Ես հազիւ կարողացայ ազատուել նրա սիրալիր թեւերից , որ բացել էին ինձ գրկելու համար : Չսուշէնկօն , գլուխը փիլիսոփայօրէն շարժելով , արտասանեց .

— Թաչո՛ւն , ո՞ւր է քո փետուրը :

— Քեռի Սիւօրի կատուն պոկոտել է , — ասաց Իցկօն , ծիծաղելով :

Քեռի Սիւօրը «Արքայական Եախտայի» տէրն էր , կատուն՝ — օղին :

Վերջապէս , հատանք ընդարձակ պանդոկի համեմատաբար մի ապահով անկիւն , ուր մեր կողերը ջարդուելու վտանգից ազատուեցին : Այստեղ մի երկայն սեղանի քով նստած էին տասնի չափ նաւաստիներ : Սեղանը ծածկւած էր կեղտոտ ամաններով , հացի կտորներով , ուտելիքների ու ծխախոտի մնացորդներով , գարեջրի և օղու շիշերով ու բաժակներով :

— Ահա՛ և ձեր արտիստը , — ասաց Իցկօն . ցոյց տալով սեղանի ծայրը :

Այնտեղ նստած էր Լեւոնը : Նա կիթառ էր նուագում և զուարճացնում սեղանակիցներին : Չնայելով իր չքաւորութեանը , ես մինչեւ այդ օրը նրան կեղտոտ չէի տեսել : Գոնէ շապիկը միշտ անարատ էր , ձեռներն ու երեսը մաքուր , կօշիկները վաքսած , փայլուն : Իսկ այժմ նա նմանւում էր գործարանական բանւորի ,

Իմ երեւալը նրան զարմացրեց : Նա չընդհատեց նուագումը , բայց չափազանց շփոթեց , կարմրեց : Նաւաստիները նրան

լսում էին ուշադիր, թէեւ արդէն բոլորն էլ հարբած էին :  
Իրանց հիացմունքն արտայայտում էին գոռում-գոչիւններով :  
Երբեմն մէկը կամ միւսը վեր էր կենում, գրկւում ու համ-  
բուրւում նրա հետ, կամ, մէջքին զարկելով, արտասանում էր .

— Մալադէց, Լե՛վա, մալադէց . . .

Չառւշէնկօն մեզ հրաւիրեց նստել մի դատարկ սեղանի  
քով, ստելով թէ Լեւոնին չի կարելի խանգարել, նաւաստի-  
ները կը կատաղեն : Մի շիշ գարեջրի պատրուակով կարելի էր  
նստել, և մենք նստեցինք : Լեւոնը շարունակ մեզ էր նայում  
ու ժպտում : Այդ տասն օրուայ ընթացքում նա աւելի նիհա-  
րել էր ու թորչումել : Առաջին անգամ այդ օրը նրա բերանի  
անկիւններում նկատեցի թեթեւ խորշեր :

Սեղանի մօտից վեր կացաւ լայն թիկունքով ու մեծ մի-  
րուքով մի նաւաստի և օրօրւելով մօտեցաւ Լեւոնին : Չեռը  
դնելով պատանու նիհարիկ ուսի վրայ, գոչեց .

— Է՛յ, ճպուռ, նուագելո՞ւ ես ինձ համար՝ «Ո՛հ իմ վիշտ»  
թէ չէ՞. ես ուզում եմ՝ «Ո՛հ, իմ վիշտ» լսել :

— Տե՛ղդ նստի՛ր, է՛յ, Սիրի՛րի ուեխ, — գոչեցին ընկեր-  
ները, — մի՛ խանգարի՛ր Լեվային :

— Չեմ նստիլ, մինչեւ որ չի լսեմ՝ «Ո՛հ, իմ վիշտ» : «Ո՛հ,  
իմ վիշտ» : Լե՛վա, Լե՛վայ, «Ո՛հ, իմ վիշտ» :

— Յի՛մարի գլուխ, — նկատեց մէկը, — Լեվան հէնց «Ո՛հ,  
իմ վիշտ» է նուագում : Չե՞ս լսում, անո՛ւս . . .

— Լե՛վա, սուտ չի՞ ասում :

Լեվան գլխով հաստատեց, թէ նւագածը հէնց «Ո՛հ, իմ  
վիշտն» է :

— Սատանան տա՛նի, գոռաց Սիրի՛րի ուեխը, — ի՛նչ լաւ  
էիր նւագում : Լսեցինք, լսեցինք. հիմա նւագիր «Դունայի  
գեղեցկուհի» : Լեվա՛, Լեվա՛, «Դունայի գեղեցկուհի» :

— Ա՛յ քեզ «Դունայի գեղեցկուհի», — ասաց մի յաղթան-  
դամ և, ետեից ձեռները գցելով Սիրի՛րի ուեխի կոների մի-  
ջով, փորը դէմ տուեց մէջքին, բարձրացրեց ու բերեց,  
նստեցրեց իր տեղը :

—է՛, դու Կալուզայի արջ, ի՞նչպէս համարձակեցիր,—  
գոռաց Սիբիրի ուեխը, — թաթերդ կը փշրեմ . . .

Եւ բռունցքն այնպիսի ուժով զարկեց սեղանին, որ շի-  
շերն ու բաժակները միմեանց դիպչելով փշրուեցին :

Բարձրացաւ աղմուկ, վէճ, իրարանցում : Օդի մէջ երե-  
ւացին մի քանի սպառնալի բռունցքներ : Գուցէ «Սիբիրի ուե-  
խը» և «Կալուզայի արջը» միմեանց քիթ ու պռունգը ջար-  
դէին, եթէ չլինէր մի ալեւոր նաւաստի, որին ընկերները  
«Դեադուշկա» էին անուանում : Նա մէջ մտաւ նրանց բաժնե-  
լու : Օգնութեան հասաւ Լեւոնը : Նա նւագումը ընդհատեց  
և, տեղից վեր կենալով, ասաց .

—Պա՛րոններ, թո՛ղ տուէք ինձ գնալ «Խերսօնցիների» մօտ :

Վէճն իսկոյն դադրեց . բոլորը շրջապատեցին երաժշտին :

—Լե՛վա, աղա՛ւնեակ, մի՛ անիր, Լե՛վա, հոգեակ, նու ա-  
գի՛ր . ի՞նչպէս կարելի է, — խնդրեցին բոլորը :

—Նւագի՛ր . . . ի՞նչպէս նուագեմ, պարոններ, քանի որ  
չէք լսում, կուում էք անկիրթ «բօսեակների» պէս : Միթէ  
վայել է «Ռուսաց ընկերութեան» նաւաստիներին :

—Վայել չէ, ի հարկէ վայել չէ, — գոչեց «Դեադուշկան» :

—Դուք ինձ «Տիրասպօլցիների» մօտից բերեցիք այստեղ,  
որ ձեր կռիւլի տեսնեմ : Դուք լաւ չէք գնահատում երաժշ-  
տութիւնը . . .

«Խերսօն», «Տիրասպօլ» նաւեր էին, և նաւաստիները  
կրում էին իրանց նաւերի անունները :

—Կը գնահատենք, Լե՛վա, յիմարներ չենք . . .

—Ի՞նչ է, փո՞ղ է ուզում այդ ձպուռը, — գոչեց Սիբիրի  
ուեխը և վարտիկի գրպանից հանելով արծաթէ դրամներով լի  
քսակը, գցեց Լեւոնի գիրկը, — ահա՛, վերցրո՛ւ, խեղդւ՛ր . . .

— Մենք էլ կը տանք, մենք էլ կը տանք, — աղաղակե-  
ցին ամէնքը, ձեռները տանելով իրանց գրպանները :

— Տեսէ՛ք, տեսէ՛ք, Լեւոնը հարստանալու է, — գոչեց  
Իցկօն, հրճուանքից ձեռները միմեանց զարկելով, երբ տեսաւ  
փողի քսակները :



— Հայա, կը տեսնենք թէ ինչպէս, — արտասանեց Չառլէնկօն, որ, արմուկները սեղանին յենած, դիտում էր կատարուող տեսարանը:

Լեւոնը հանգիստ վերցրեց իր գիրկն ընկած քսակները, և, դնելով սեղանի վրայ, ասաց.

— Ես իմ գնից մի կոպէկ էլ աւելի չեմ վերցնիլ: Համարը 10 կոպէկ, ո՛չ աւելի, ո՛չ պակաս: Դրէ՛ք ձեր գրպանները, նստեցէ՛ք, նւագում եմ...

— Բրա՛վօ, Լեւոն, բրա՛վօ, դու մեր երեսը սեւ չարիր, — գոչեց Չառլէնկօն ոգեւորւած և նաւաստիների ուշադրութիւնը գրաւեց մեր վրայ:

### ՇԻՐՎԱՆՁԱՏԷ

**ՇԻՐՎԱՆՁԱՏԷ.** — Շիրվանդատէ ուսաստայ գրականութեան

առաջին, եւ ամբողջ հայ գրականութեան մէջ առաջնակարգ իրասպաշտ գրողն է՝ թէ՛ իբրեւ վիպագիր, թէ՛ իբրեւ թատերագիր: Իր վէպերուն, ինչպէս եւ իր թատերագութեանց մէջ պատկերացած է հայ կեանքը իր յատկանշական կողմերով, այն կեանքը որ կը բնորոշէ ժամանակակից հասարակական խաւերն ու անոնց տիպերը: Բարացուցական տեսակէտով, Շիրվանդատէի գործերը կը մնան անբաղդատելի եւ գերազանցօրէն յաջող: Լեզուն նուրբ է, յաճախ նոյն իսկ հում, բայց նկարագրութիւնները ճիշտ են եւ պայծառ:

Գրած է բազմաթիւ վիպակներ, վէպեր եւ թատերագութիւններ: Իր գործերուն գլխաւոր մէկ մասը ամփոփուած է երեք հաւաքածուներու մէջ՝ Ժողովածու անունով: Յայտնի գրողներն են՝ Նաւուա, Արշիւսը, Արուկ Դիւսֆուտան, Յաւագարը, Բառն վէպեր, եւ Եւգիեն, Ալեքանդրի վրայ, Կործանւածը ու մանաւանդ Պասլի հաւար՝ թատերագութիւններ:



Երեք հաւաքածուներու մէջ՝ Ժողովածու անունով: Յայտնի գրողներն են՝ Նաւուա, Արշիւսը, Արուկ Դիւսֆուտան, Յաւագարը, Բառն վէպեր, եւ Եւգիեն, Ալեքանդրի վրայ, Կործանւածը ու մանաւանդ Պասլի հաւար՝ թատերագութիւններ:



## Ե Ր Գ Ձ Ի Ա Ն Է Ծ Ք Ը

Դարեր առաջ կար բարձրաբերձ պարիսպներով մի դղեակ,—  
Հոյակապ էր, փառքն հասել էր մինչեւ ովկիան կապուտակ.  
Շուրջը փռուած ծաղկեպսակ անուշաբոյր պարտէզներ,  
Թարմ, զովաշունչ շադրուաններ ցայտում էին վառ շիթեր:

Եւ բազմայաղթ այնտեղ նստած գոռոզ արքան հողաշատ,  
Բազմած էր իր գահի վրայ մռայլ դէմքով ու գունատ.  
Ամէն խորհուրդն արհաւիրք էր, կատաղութիւն աչքերում,  
Նրա ամէն խօսքը կորուստ, արիւն էր նա միշտ գրում:

Այս ամրոցը երկու ազնիւ երգիչ գացին մի անգամ՝  
Մէկն ալեգարդ, միւսը մանուկ ոսկեզանգուր ու փարթամ.  
Տաւիղն ուսին, մի գեղեցիկ նժոյգ հեծած ծիրունին,  
Նրա կողքին ընթանում էր ծաղկահասակ պատանին:

Ծերուկն ասաց իր ընկերին. «Պատրա՛ստ եղիր, ի՛մ որդեակ,  
Մեր սրտառուչ տաղերն յիշի՛ր, երգիր ազատ, համարձակ.  
Երգի՛ր ե՛ւ վիշտ, ե՛ւ խնդութիւն մատաղ ծայնով դու հզօր,  
Գոռ արքայի քարէ սիրտը պիտի շարժենք մենք այսօր»:

Արդէն շքեղ եւ սիւնազարդ նրանք սրահումն են կանգնած,  
Գահի վրայ թագաւորը եւ թագուհին են բազմած:  
Նա սիգապանձ՝ ինչպէս փայլը արիւնավառ հիւսիսի,  
Իսկ թագուհին քնքուշ՝ նման արուսեակին յուսալի:

Զարկեց ծերուկն ոգեւորուած նուրբ լարերին մատներով,  
 ձոխ արծազանգ տլուին նրանք լիահնչիւն ձայներով,  
 Եւ գեղեցիկ տաղ երկնարժան չքնադատես պատանին,  
 Ինչպէս համերգ ոգիների, եւ խլածայն ծերունին:

Նրանց երգն էր գարուն եւ սէր, երանաւէտ ոսկեդար,  
 Ազատութիւն, խօսք նշմարիտ, արիութեան գործ արդար,  
 Եւ հեշտութեան ամէն վայելք, որ յուզում է սիրտ մարդկան,  
 Եւ այն ամէնն, որ կարող է մարդուն տալ տիպ վեհութեան:

Պալատական ասպետները ծաղրի խօսքեր մոռացան  
 Եւ անվեհեր զինուորները հրգօր երգիցն յաղթուեցան:  
 Իսկ թագուհին, սիրտը շարժւած, աչքին արցունք բերկրալից,  
 Ահա հանեց, ձգեց երգչին չքնաղ մի վարդ իր կուրծքից:

«Գայթակղեցիք դուք իմ ազգը», — գոռաց արքան մոլեգին,  
 Զգեց սուսերն, օդում ցոլաց, մատաղ կուրծքը պատռոտեց,  
 Ոսկեհնչիւն երգերի տեղ կուրծքիցն արիւն դուրս ցայտեց:  
 Ասես մրրիկն իսկոյն ցրեց այն ունկնդիր ամբոխին:

Իր վարպետի գրկումն հոգին փչեց անբաղդ պատանին,  
 Ծածկեց մարմինն նա թիկնոցով, նստեցրեց երիվար,  
 Ամուր կապեց եւ ամրոցից նա հեռացաւ վշտահար:

Եւ դուրս եկաւ, կանգնեց բարձր դարբասի դէմ ծերունին  
 Եւ ձեռքն առաւ տաւիղն, ամէն տաւիղներից մեծագին.  
 Զարկեց նրրան կնեայ սեանը, փշուր—փշուր խորտակեց,  
 Դէպի ամրոց ու պարտէզներն սոսկալի ձայն արծակեց:



«Վա՛յ քեզ, խրոխտ դու ապարանք, թող ոչ մի ձայն քաղց-  
րութեան,

«Լարի հնչիւն, երգ չըլսուի քո յարկի տակ յաւիտեան,

«Այլ ստրուկների երկչոտ քայլեր եւ հառաչանք, հեծութիւն,

«Մինչ չար ոգին վրէժխնդրութեան քեզ դարձրնէ սեւ աճիւն:

«Վա՛յ ձեզ եւ դուք անուշաբոյր, գարնանագեղ պարտէզներ,

«Տեսէք ահա՛ մանուկ երգչի դէմքին վառուած տանջանքներ.

«Թո՛ղ սրբա տեղ դուք թառամիք, աղբիւրներից ցամաքեն.

«Գալ օրերին թո՛ղ քար կտրած եւ ամայի ձեզ տեսնեն:

«Վա՛յ քեզ, նզովքդ երգիչների, վա՛յ քեզ, անա՛րգ մարդասպան,

«Արիւնապսակ փառքի համար մարտըդ լինի թո՛ղ ունայն.

«Թո՛ղ մոռացուի քո անունը մշտագիշեր Խաւարում,

«Ինչպէս մահուան վերջին հառաչք, սին ձայն ցնդի թող օդում»:

Ծերուկն ասաց, եւ երկինքը լըսեց նրբա պաղատանք.

Պարիսպները փոշի դարձած, կործանուած է ապարանք:

Բարձրը մի սիւն դեռ վկայ է հին օրերի փառաւոր,

Այն էլ շուտով պիտի լինի մի փլատակ սրգաւոր:

Չրկայ բուրմունքն այգիների, շուրջը միայն անապատ,

Չրկայ վտակ, սաղարթախիտ, չրկայ մի ծառ ստուերաշատ,

Եւ չի յիշում մի տարագիր կամ երգ անուն արքայի.—

Այսպէս ահա՛ կատարուեցաւ անէծքն ահեղ ծեր երգչի:

## ԻՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ ԱՐՈՒԵՍՏԻ ՄԷՋ

Կը խոստովանիմ թէ արուեստագէտը չի տեսներ Բնութիւնը այնպէս՝ ինչպէս որ անիկա կ'երեւի ռամիկին, քանի որ իր յուզումը երեւոյթներու տակ իրեն կը յայտնէ ներքին ճշմարտութիւններ :

Ինչ որ ըլլայ սակայն, արուեստի մէջ միակ սկզբունքն է՝ ընդօրինակել այն զոր կը տեսնէ մարդ : Թող ասիկա տհաճութիւն չպատճառէ գեղագիտութեան վաճառականներուն, ուրիշ ամէն մէկ մեթոտ ձախորդ է : Բնաւ դեղագիր չկայ Բնութիւնը գեղեցկացնելու համար :

Խնդիրը միայն սեսնելուն վրայ է :

Օհ, անտարակոյս միջակ մէկը, ընդօրինակելով, երբեք արուեստի գործ մը չպիտի ստեղծէ. պատճառն այն է որ անիկա կը դիտէ՝ առանց սեսնելու և պարապ տեղը պիտի նշանագրէ իւրաքանչիւր մանրամասնութիւն մտախօսով, — արդիւնքը պիտի ըլլայ տափակ և առանց դրոշմի : Բայց արուեստագէտին արուեստը միջակներուն համար ստեղծուած չէ և այդպիսիներուն չեն կրնար տաղանդ տալ լաւագոյն խորհուրդները :

Արուեստագէտը, — ընդհակառակը, կը սեսնէ, այսինքն թէ իր աչքը, պատրուսուած իր սրտին վրայ, խորը կը կարդայ Բնութեան սրտին մէջ :

Ահա ինչո՛ւ համար արուեստագէտը հաւատարու է միայն իր աչքերուն :

Ռամիկը յօժարակամ կ'երեւակայէ թէ ինչ որ տգեղ կը դատէ ինք իրականութեան մէջ՝ արուեստագիտական նիւթ չէ : Կ'ուզէ արգիլել մեզ որ չներկայացնենք ինչ որ Բնութեան մէջ հաճելի չէ իրեն և կը վիրաւորէ զինք :

Մեծ սխալ մըն է ասիկա իր կողմէն :

Ինչ որ սովորաբար սգեղութիւն կը կոչուի Բնութեան մէջ՝ կրնայ արուեստի մէջ դառնալ մեծ գեղեցկութիւն մը :

Իրական բաներու կարգին մէջ զգեղ կը կոչուի այն՝ որ տնու է, այն՝ որ վատառողջ է, այն՝ որ կը թելադրէ հիւանդութեան, վատութեան և տառապանքի գաղափարը, այն՝ որ հակառակ է կանոնաւորութեան, նշան ու սրբան սուղջութեան և ուժի. կուզ մը զգեղ է, կորսորուն մը զգեղ է, ցնցոտապատ թշուառութիւնը զգեղ է :

Տգեղ նաև հոգին ու վարքը՝ անբարոյական մարդուն, ախտաւոր և ոճրագործ մարդուն, որ կը վնասէ բնկերութեան. տգեղ՝ հոգին ծնողապանին, մասնիշին, անխղճահար փառասէրին :

Եւ օրինաւոր է որ՝ այն էակներն ու առարկաները, որոնցմէ միայն չարիք կը սպասուի, նշանակուին պժգալի վերադիրով մը :

Բայց երբ մեծ արուեստագէտ մը կամ մեծ գրագէտ մը կը գրաւուի այս տգեղութիւններէն մէկովը կամ միւսովը, վայրկենապէս կը փոխակերպէ զայն . . . մոգական գաւազանի հարուածով մը զայն կը վերածէ գեղեցկութեան. ալքիմիական հումթիւն, կախարդութիւն է ասիկա :

Թող Վլասքէզ նկարէ «Սերաստեան»ը, Փիլիպպոս Դ. ի թղուկը, և ահա անոր փոխ կու տայ այնքան յուզիչ նայուածք մը՝ որ մենք անոր մէջ կը կարդանք խելոյն ցաւագին գաղտնիքը այս տխուր էակին, որ հարկադրուած է՝ ապահովելու համար իր գոյութիւնը, ձեռքէ հանել իր մարդկային արժանապատուութիւնը, բլսոյ խաղալիկ մը, կենդանի մարեակ մը (marotte) . . . : Եւ ո՛րքան կսկծագին բլայ այս տգեղ մարմնին մէջ լնակող խղճին մարտիրոսութիւնը՝ այնքան արուեստագէտին գործը գեղեցիկ է :

Թող Ֆրանսուա Միլէ ներկայացնէ ամէակոշտ խեղճ մարդ մը՝ որ շունչ կ'առնէ կոթնելով իր բրիչի կոթին, յոգնապառ, արեւախանձ թշուառ մը, այնքան անանպաճ՝ որքան չարաչար ծեծ կերած գրաստ մը. իրեն կը մնայ որ այս դատապարտեալին արտայայտութեանը մէջ դուրս բերէ Բախտին կողմէ հրամայուած տանջանքին մէջ անոր համակերպութիւնը,



որպէս զի այս մղձաւանջային արարածը ըլլայ բովանդակ  
Եւրոպական մէկ սքանչելի խորհրդանշանը :

Պատճառը սա է որ արդարեւ Արուեստի մէջ գեղեցիկ  
է միմիայն այն՝ որ դրոշմ ունի :

Դրոշմը ներուժ ճշմարտութիւնն է ո՛ր և է բնական տև-  
սարանի մը , ըլլայ ան գեղեցիկ կամ տգեղ . և նոյն իսկ է այն  
որ կարելի է կոչել կրկնակ նշանաբան մը , որովհետև ներ-  
քին ճշմարտութիւնն է ան՝ թարգմանուած արտաքին ճշմար-  
տութեամբ . հոգին , զգացումը , գաղափարն է ան՝ զորս կ'ար-  
տայայտեն մարդկային էակի մը դիմագծերը , շարժուձևերն  
ու գործերը , երկնքի մը ձևերը , հորիզոնի մը գիծը :

Արդ , մեծ արուեստագէտին համար ամէն ինչ Բնու-  
թեան մէջ դրոշմ կ'ընծայէ , որովհետև իր դիտողութեան  
անհաշտ ինքնիշխանութիւնը խորապէս կը թափանցէ ամէն բա-  
նի թագուն իմաստին :

Եւ ինչ որ տգեղ կը նկատուի Բնութեան մէջ՝ յաճախ  
կը ներկայացնէ աւելի դրոշմ քան այն որ գեղեցիկ որակուած  
է , որովհետև հիւանդագին դիմագծութեան մը կծկումի մէջ ,  
ախտաւոր դիմակի մը խուռչայումին մէջ , ամէն ձեւազեղ-  
ծութեան մէջ , ամէն կղծման մէջ՝ ներքին ճշմարտութիւնը  
կը շողայ նոյնքան հեշտիւ որքան կանոնաւոր և առողջ դի-  
մագծերու վրայ :

Եւ որովհետև միմիայն դրոշմի ուժն է որ գեղեցկու-  
թիւն կը ստեղծէ Արուեստին մէջ , յաճախ կը պատահի որ  
ինչքան էակ մը տգեղ ըլլայ Բնութեան մէջ , այնքան գեղեցիկ  
կ'ըլլայ արուեստի մէջ :

Արուեստին մէջ տգեղ է միայն այն որ դրոշմ չունի .  
այսինքն այն որ՝ ոչ մէկ արտաքին կամ ներքին ճշմարտու-  
թիւն կը յայտնէ :

Տգեղ է արուեստի մէջ՝ ինչ որ կեղծ է , ինչ որ արուես-  
տական է , ինչ որ կը ջանայ սիրուն կամ գեղեցիկ ըլլալ՝ փո-  
խանակ արտայայտիչ ըլլալու , ինչ որ թոյլ և արուեստակեալ է ,  
ինչ որ կը ժպտի՝ առանց դրդապատճառի , ինչ որ կը պաճու-

ճազարդուի անխմաստ կերպով, ինչ որ կը կորանայ և կը սի-  
գայ առանց պատճառի, ամէն ինչ որ զուրկ է հոգիէ և  
ճշմարտութենէ, ամէն ինչ որ ուրիշ բան չէ, եթէ ոչ գեղեց-  
կութեան կամ շնորհի ցուցամոլութիւն, ամէն ինչ որ՝ կը ստէ:

Երբ արուեստագէտ մը՝ Բնութիւնը գեղեցկացնելու դի-  
տաւորութեամբ կանաչ կ'աւելցնէ գարնան վրայ, բոսորագոյն՝  
արշալոյսին, ծիրանի՝ մատաղ շրթներու, — տգեղութիւն կը  
ստեղծէ, որովհետեւ կը ստէ:

Երբ կը նուազեցնէ վշտին դիմակծկումը, ծերութեան  
լկումը, վատթարութեան տգեղութիւնը, երբ կը յարդարէ  
Բնութիւնը, երբ կը քողքըւորէ դայն, կը ծպտէ, կը բա-  
րեխառնէ դայն՝ հաճելի ըլլալու համար տգէտ հասարակու-  
թեան, — տգեղութիւն կը ստեղծէ, որովհետեւ կը վախնայ  
ճշմարտութենէն:

Արուեստագէտին համար, որ արժանի է այս անուան, ամէն ինչ գեղեցիկ է Բնութեան մէջ, որովհետեւ իր աչքերը  
անվեհերօրէն ընդունելով ամէն արտաքին ճշմարտութիւն, հոն  
կը տեսնէ դիւրութեամբ, որպէս բաց գրքի մը մէջ, ներքին  
ամէն ճշմարտութիւն:

Բաւական է որ անիկա դիտէ մարդկային դէմք մը և հոն  
կը կարգայ հոգի մը. չի կայ դիմագիծ մը որ խաբէ զինքը.  
կեղծաւորութիւնը անոր համար նոյնքան թափանցիկ է՝ որքան  
անկեղծութիւնը. ճակատի մը ծռութիւնը, յօնքերու ամէնա-  
փոքր պռատումը, նայուածքի մը խուսափանքը՝ անոր կը  
յայտնեն սրտի մը գաղտնիքները:

Կը հետազոտէ կենդանիին ծալուած միտքը: Ուրուագիծ  
զգացումներու և մտածումներու, խուլ իմացականութիւն,  
նախատարերք գորովի, ան կ'ըմբռնէ անասունին բովանդակ  
բարոյական խոնարհ կեանքը՝ իր նայուածքին և շարժումնե-  
րուն մէջ:

Ան նոյնպէս մտերիմն է անզգայ Բնութեան: Ծառերը,  
բոյսերը անոր կը խօսին հոգիներու պէս:

Հինաւուրց ուռոտ կաղիները անոր կ'ըսեն իրենց բար-

եացակամութիւնը՝ մարդկութեան համար, զոր կը պաշտպանեն իրենց թեւատարած ճիւղերովը:

Ծաղիկները կը խօսակցին անոր հետ իրենց ցօղունին շնորհալի կորագծովը, իրենց թերթերուն երգող նրբերանգովը. խոտին մէջ իւրաքանչիւր պսակ գորովալի բառ մըն է՝ զոր անոր կ'ուղղէ Բնութիւնը:

Կեանքը անոր համար անսահման վայելք մը, տեւական յափշտակութիւն, խելացնոր արբեցում մըն է:

Ո՛չ թէ այն պատճառով որ ամէն ինչ բարի կը թուի իրեն, — վասն զի տառապանքը՝ որ կը յարձակի այնքան յաճախ իր փայփայածներուն ու իր խակ վրայ, կը հերքէ անգթօրէն այս լաւատեսութիւնը:

Այլ այն պատճառով, որ ամէն ինչ գեղեցիկ է անոր համար, որովհետեւ ինք անդադար կը քալէ հոգեկան ճշմարտութեան լոյսին մէջ:

Այո՛, նոյն խակ տառապանքին մէջ, նոյն խակ սիրելի էակներուն մահուան մէջ և մինչև անգամ բարեկամի մը մասնութեան մէջ՝ մեծ արուեստագէտը, — և ես այս բառով կը հասկնամ նոյնքան բանաստեղծը որքան նկարիչը կամ քանդակագործը, — կը գտնէ սքանչացման ողբերգական հեշտութիւնը:

Երբեմն սիրտը կը խշխշայ, բայց աւելի զօրաւոր քան իր յոգնութիւնը՝ անիկա կը զգայ հասկնալու և արտայայտելու դժնեայ հրճուանքը: Իր տեսած բոլոր բաներուն մէջ պայծառօրէն կ'ըմբռնէ ճակատագրի դիտաւորութիւնները: Իր սեփական անձկութեանց վրայ, իր ամէնէն խոր վէրքերուն վրայ, կ'ուղղէ խանդավառ նայուածքը այն մարդուն՝ որ գուշակած է բախտին վճիռները: Թաքուելով սիրելի էակէ մը, կը դողդոջէ հարուածին տակ, յետոյ կ'ամրասկնդուի, մտապիշ կը նայի դրուժանին՝ իբրեւ ստորնութեան գեղեցիկ օրինակի մը կ'ողջունէ ապերախտութիւնը՝ որպէս փորձառութիւն մը, որով կը հարստանայ իր հոգին: Իր մտայափշտակութիւնը երբեմն ահարկու է, բայց երջանկութիւն է դարձեալ, որովհետեւ ճշմարտութեան անդուլ պաշտումն է ան:



Երբ կը նշմարէ կակներ որ մէկզմէկ կը ջնջին, ամէն երիտասարդութիւն որ կը խամրի, ամէն ուժ որ կը տկարանայ, ամէն հանճար որ կը մարի, երբ կը տեսնէ դէմ առ դէմ այն կամքը՝ որ հրամանագրեց բոլոր այս միջին օրէնքները, — սուելի քան երբեք կը հրճուի դիտնալով և, ճշմարտութեամբ յագեցած, անհղօրէն երջանիկ է ինք:

ՕԿԻՒՍԹ ՌՕՏԷՆ

Թուրք Գրականութիւն

## ՄԱՀՈՒԱՆ ՎԱՂՈՐԴԱՅՆ

ԳՐՈՒԱԾ ԽՈՍՏՄՆԱԼԻՑ ԳՐՈՂԻ ՄԸ ՎԱՂԱԺԱՄ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻՅՈՎ

Ամէն բոսէ նուազում մ'է փոքրիկ կեանքէն մարդկութեան.  
Վաղանցիկ են ու խուսափուկ բոլոր իրերն աշխարհի.  
Կարծես զօղուած են իրարու այստեղ սկիզբն ու վախճան.  
Ու մարդ գիտէ թէ աշխարհն ալ իր պէս պիտի սպառի...

Աշխարհն յաւէտ նոյն աշխարհն է, ժամանակն ալ միեւնոյն:

Սակայն ինչո՞ւ անկարեկիր բախտն հարուածեց այսքան խոր՝  
Երիտասարդ սա խեղճ տղան երկինքէն իսկ գուրգուրուած.  
Յուսացի թէ պիտի սգան մարդիկ գոնէ երկու օր.  
Բայց ի՞նչ, մարդիկ զլարթ են հոս՝ մինչդեռ մեռնողն է  
մեռած:

Աշխարհն յաւէտ նոյն աշխարհն է, ժամանակն ալ միեւնոյն:



Կարծեցի թէ պիտի ողբան զայն ժամանակն ու զետեր,  
Յուսացի թէ առաւօտն ալ պիտի տխրի թախծագին.  
Բայց, ահա ի՛նչ, արեւն ելեր, լեռներն հրճուանք է պատեր,  
Սոխակն երգին է սկսեր, առուակն ալ իր կարկաչին:

Աշխարհն յաւէտ նոյն աշխարհն է, ժամանակն ալ միեւնոյն:

### ՄԱՀՄՈՒՏ ԷՔՐԷՄ

**ՄԱՀՄՈՒՏ ԷՔՐԷՄ.**— Մահմուտ էքրէմ նկատուած է թուրք  
նոր գրականութեան նախահարապետներէն մէկը՝ ֆէմալ պէյի եւ



Ռայտիւլ-Հագ-Համիտի հետ: Ինք եղած է  
գրեթէ առաջինը որ փորձած է թուրք  
գրականութիւնը պատուաստել արեւմտ-  
եան գրականութեամբ: Թէ՛ արձակի եւ  
թէ՛ ոտանաւորի մէջ՝ բաղդատմամբ իր  
շուրջիններուն՝ անստգիւտ յատկութիւն-  
ներ ունի, ըլլալով զօրաւոր երեւակայու-  
թեան տէր, ծայրայեղօրէն զգայուն, եւ  
գեղեցկապէս արտայայտելու ընդունակ:  
Իր գլխաւոր գործերն են Խորհուրդ, Մըր-  
մունչներ, Միւնեվիեր, եւ ուրիշ բազմաթիւ  
արձակ ու ոտանաւոր երկեր:

Եղած է նաեւ նուրբ քննադատ եւ  
վարպետ վիճաբանող. իր դրական պայ-  
քարներուն մէջ ամէնէն նշանաւորն է  
այն զոր ունեցաւ Մուալլիմ Նաճիի հետ:  
Իբրեւ խղճամիտ ուսուցիչ, կրցած է իր

գրական ուղղութեան համաձայն պատրաստել բազմաթիւ սերունդ-  
ներ, մասնաւորաբար Միւրիէ եւ Սուլթանիէ վարժարաններուն մէջ:  
Վարժ է հիւստիստիական պաշտօններ, եղած է Պետական Խորհուրդի  
անդամ, Կրթական Նախարար, եւ մեռած՝ 1914 թուականին Պուսոյ  
մէջ: Մահմուտ էքրէմ թուրք գրականութեան մէջ վարպետ տիտղոսին  
արժանացած է:



## Ա Ն Ձ Ա Յ Ն Գ Ի Շ Ե Ր Ն Ե Ր...

Գիշերուան հանդէպ սէր մ'աննիւթական,  
Կ'ողողէ մէջըս հրճուանքներ աղուոր :  
Միշտ պիտի սիրեմ սիրով մ'անսահման՝  
Մթութիւններու երկիւղն ահաւոր :

Ականջիս մէջէն կ'անցնին այն ատեն  
Գոռ արծազանգներ յաւերժակուտակ.  
Չայներ ալ կարծես կ'առնեմ մեղմօրէն՝  
Այդ սեւ գիշերուան եւ լուռ մութին տակ :

Ու հանելուկներ կուգան կարդացուիլ՝  
Միտքըս զարմանքի մէջ թաւալելէն :

Այդ լռութեան մէջ թռիչքն աստղերուն՝  
Միշտ պիտի սիրեմ հրճուանքով խորին.  
Ու գիշերներն ալ լռութեամբ զեղուն  
Պիտի տան միշտ սէրն ինձ Մտածումին :

ՐԻԶԱ ԹԷՎՖԻԳ

**ՏՕՔԹ. ՐԻԶԱ. ԹԷՎՖԻԳ.** — Թուրք գրականութեան մէջ սակաւաթիւ են այն տեսակ դէմքեր՝ որոնք ունենալով գրողի խմոր եւ մտաւորականի խառնուածք, ունենային նաեւ իմաստասիրական որոշ ըմբռնումներ եւ որոշ հայեացքներ: Տօքթ. Րիզա Թէվֆիգ մէկն է այդ սակաւաթիւ դէմքերէն, իր գրողի խառնուածքին մէջ դրած ըլլալով նաեւ իմաստասէրի ոգի: Տօքթ. Րիզա Թէվֆիգ հետեւող մըն է ԺԹ. դարու անգլիական իմաստասիրական դպրոցին, մասնաւորաբար Սփէնսըրեան վարդապետութեան: Վերջին քսան տարուան թուրք լրագրութեան մէջ ցանցնած է բաղմաթիւ էջեր: Րիզա Թէվֆիգ եղած է նաեւ եւրանդուն յեղափոխական, մանաւանդ Սահմանադրութեան հռչակման միջոցին: Էտիրնէէն ընտրուեցաւ Օսմ. Փարլամէնթին պատգամաւոր:











ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ



## ՀԱՄԲՈՒՐԷՆԻ ԼՈՒԷ

Հինգ տերօրիսաներու մահավճիտը յայտարարուեցաւ վերջնական և նոյն օրն ալ հաստատուեցաւ: Իատապարտեալներուն չքսին թէ երբ պիտի գործադրուի մահու պատիժը, բայց այն քանի հիման վրայ՝ որ սովորաբար կը պատահէր, անոնք գիտէին թէ զիրենք պիտի կախէին նոյն գիշերը կամ ամէնէն ուշը՝ հետեւեալ գիշերը: Եւ երբ անոնց աւազարկեցին տեսնուիլ հետեւեալ օրը, այսինքն հինգշաբթի, ծնողներու, ազգականներու հետ՝ անոնք հասկցան որ մահապատիժը պիտի գործ դրուի հինգշաբթի, լուսարացին:

Առաջիկայ տեսակցութենէն առանձնապէս կը տանջուէր Սէրկէյ Կոլովինը: Շատ կը սիրէր իր հայրն ու մայրը. երկարատեմն անցած չէր որ տեսնուած էր անոնց հետ և այժմ կը սարսափէր թէ ի՞նչ պիտի ըլլար այն հանդիպումը: Ինչո՞ք կախաղանը իր ամբողջ այլանդակ արտակարգութեամբ և ուղիղը շանթահարող խենդութեամբ՝ կը ներկայանար իր երեակայութեան աւելի հեշտ բան մը և կը թուէր ոչ այնքան սաստիկի, որքան այդ տեսակցութեան մէկ քանի բոպէները՝ կարճ ու անհասկնալի, որոնք կանգնած էին ժամանակէն և իրմէ՝ կեանքէն ալ դուրս: Ի՞նչպէս նայիլ, — ի՞նչ մտածել — ի՞նչ ըսել, — կը հրաժարէր ըմբռնել անոր մարդկային ուղեղը: Ամէնապարզը և սովորականը — բռնել ձեռքը, համբուրել և ըսել. «բարև, հայրի՛կ» կը թուէր անբացատրելի կերպով սարսափելի՝ իր այլանդակ, ոչ-մարդկային և խելացնոր կեղծիքին մէջ:

Իատապարտութենէն յետոյ, մահապարտները իրարու քով չքերին՝ այլ ամէն մէկը փակեցին իր խուցին մէջ մինակ: Եւ ամբողջ առաւօտը, մինչև ժամը տասներմէկը, երբ եկան իր ծնողքը, Սէրկէյ Կոլովինը կատաղօրէն կը քալէր խուցին մէջ, կը փետտէր իր մօրուքը, կը կնճռոտէր դէմքը ողորմե-



լիօրէն . և բան մը կը մըթմըթար : Երբեմն իր հապշտապ ընթացքին մէջ կանգ կ'առնէր , ամբողջ կուրծքը կը լեցնէր օդով և կ'արտաշնչէր հեւուքով՝ նման մարդու մը որ չափազանց երկար ստուն ջրին տակ մնացած է : Բայց ինք այնքան առողջ էր , այնքան հաստատուն նստած էր իր մէջ երիտասարդ կեանքը՝ որ նոյն իսկ տաժանագին տանջանքներու այդ բուպէներուն արիւնը կ'նուար իր մորթին տակ և կը գունաւորէր իր սյտերը , ու պայծառօրէն և միամտաբար կը ծաւիանային իր աչքերը :

Սակայն սմէն բան տեղի ունեցաւ շատ աւելի լաւ՝ քան ինչ որ կը սպասէր Սէրկէյ :

Այն սենեակը ուր տեղի պիտի ունենար տեսակցութիւնը , առաջին մտնողն եղաւ Սէրկէյի հայրը՝ հանգստեան կոչուած գնդապետ , Նիկոլայ Սէրկէյեւիչ Կօլօվին : Ամբողջութեամբ ան սպիտակ էր հաւասարապէս , — դէմքը , մօրուքը , մազերը և ձեռքերը , կարծես ձիւնէ արձանի մը հագցուցած էին մարդկային զգեստ . և վրան ունէր նոր ուսնոցներով , հնամաշ , բայց լաւ մաքրուած նոյն համազգեստը , որմէ պէնզինի հոտ կու գար . ու ներս մտաւ ան հաստատուն , հանդիսաւոր , ամուր և որոշակի քայլերով : Իր սպիտակ , չոր ձեռքը երկնցուց և բարձրաձայն բռնու .

— Բարև՛ , Սէրկէյ :

Անոր ետեւէն , մանր քայլերով կու գար մայրը և տարօրինակ կերպով կը ժպտէր : Բայց ան ալ սեղմեց տղուն ձեռքը և բարձրաձայն կրկնեց .

— Բարև՛ , Սէրեօթինկա՛ :

Համբուրեց զաւելին շրթունքները և լուռ նստաւ : Վզին չփաթթուեցաւ , չլացաւ , չճչաց , տեղի չունեցաւ այն սարսափելի բանը՝ որ կը սպասէր Սէրկէյ . — այլ համբուրեց և լուռ նստաւ : Եւ նոյն իսկ դողդոջուն ձեռքերով շտկեց իր սե , մտաքսէ շրջազգեստը :

Սէրկէյ չէր գիտեր թէ ամբողջ նախընթաց գիշերը գնդապետը , փակուած իր առանձնասենեակին մէջ , բոլոր ուժերը

լարած՝ չափեր ձեւեր էր հանդիպման բոլոր մանրամասնութիւնները: Մենք պարտական ենք ո՛չ թէ ծանրացնել, այլ թեթեւցնել մեր զաւկին վերջին րոպէն, և գնդապետը հաստատամտօրէն վճռեց ու մանրակրկիտ կերպով կշռադասեց վաղուայ խօսակցութեան իւրաքանչիւր հնարաւոր նախադասութիւնը, իւրաքանչիւր շարժումը: Բայց երբեմն թելը կը կտրանցնէր, կը կտրանցնէր նաև այն բանը՝ որ արդէն պատրաստեր էր, ու դառնագին կու լար մուշամպայով ծածկուած բազմոցին անկիւնը նստած: Իսկ առտուն հասկցուց իր կնոջը թէ ի՛նչպէս պէտք է ինքզինքը պահէ տեսակցութեան միջոցին:

— Եւ որ գլխաւորն է, համբուրէ՛ ու լռէ, կը սորվեցնէր ան. յետոյ կրնաս խօսիլ, քիչ մը ետքը, իսկ երբ համբուրես՝ լռէ՛: Չխօսիս անմիջապէս համբուրէն ետքը, կը հասկնաս, թէ չէ՛ այն տեսակ բաներ կ'ըսես որ աւելորդ են:

— Կը հասկնա՛մ, Նեկօլա՛յ Սէրկէյեւիչ, կը պատասխանէր մայրը լալով:

— Եւ չի՛ լաս: Աստուած մի՛ արասցէ որ լա՛ս: Կը սպաննեսս գինքը, եթէ լաս, պառա՛ւ:

— Հապա դուն ի՛նքդ ի՛նչու կուլաս:

— Ձեզիպէսներու հետ ամէն մարդ ալ կուլայ: Չպիտի լաս, կ'իմանա՞ս:

— Լաւ, Նիկօլայ Սէրկէյեւիչ:

Կառքին մէջ, ան ուղեց անգամ մըն ալ կրկնել խրատը, բայց մոռցաւ: Եւ այսպէս, կ'երթային անոնք լուռ, կ՛ծկուած, այդ երկու ալեւոր ծերունիները, և կը մտածէին. իսկ քաղաքը զուարթօրէն կ'սղմկէր, — բարեկենդանի շաբաթ էր և փողոցները լեցուն էին ժխորով ու բազմութեամբ:

Նստան: Գնդապետը բռնեց նախամտածուած դիրքը՝ աջ ձեռքը դրած համադգեստին ծոցին մէջ: Սէրկէյ նստած մնաց վայրկեան մը, մօտէն դիտեց մօրը կնճռալիբ դէմքը և վերցատկեց.

— Նստի՛ր, Սէրիօթի՛նկա, խնդրեց մայրը:

—Նստի՛ր, Սէրկէ՛յ, պնդեց հայրը :

Հռեցին : Մայրը տարօրինակ կերպով կը ժպտէր :

—Ո՛րքան քեզի համար հոս ու հոն ինկանք, Սէրի՛ օփին-  
կա : Հայրդ . . .

—Ի զո՛ւր, մայրիկ . . .

Գնդապետը հաստատուն ձայնով ըսաւ .

—Պարտաւոր էինք ընելու, Սէ՛րկէյ, որպէսզի չմտածէիր  
թէ ծնողներդ լքեցին քեզ :

Նորէն լռեցին : Սարսափելի էր խօսք արտասանելը, կար-  
ծես իւրաքանչիւր բառ կորսնցուցած էր լեզուի մէջ իր ի-  
մաստը և կը նշանակէր միայն մէկ բան—մա՛հ : Սէրկէյ նայե-  
ցաւ հօրը մաքուր, պէ՛նզին հոտող համազգեստին վրայ և  
մտածեց— այժմ սպասարկու գինուոր չկայ, ուրեմն ինքն  
է մաքրեր զայն : Ի՞նչպէս էր որ առաջ ես չէի նկատեր թէ  
ն՛րբ կը մաքրէր ան իր համազգեստը : Կ'երեւի առաւօսները :  
Եւ յանկարծ հարցուց .

—Իսկ ի՞նչպէս է քոյրս, առօ՞ղջ է :

—Նինոչկան բան չգիտեր, շուտով սլատասխանեց մայրը :  
Բայց գնդապետը խստօրէն կեցուց զայն .

—Ինչո՞ւ ստենք : Երեխան կարդաց լրագիրներուն մէջ :  
Թո՛ղ Սէրկէյը իմանայ որ բոլոր . . . անոր մերձաւորներ . . .  
այս պահուս . . . կը մտածեն և . . .

Այլևս չկրցաւ շարունակել ու կանգ առաւ : Յանկարծ  
մօրը դէմքը, չես գիտեր ի՞նչպէս, մէկ անգամէն ճմրթկուե-  
ցաւ, այլայլեցաւ, երեքաց, դարձաւ թաց և վայրենի : Գու-  
նակորոյս աչքերը յիմարաբար շրջուեցան, շնչառութիւնը  
դարձաւ աւելի արագ, և՛ կարճ, և՛ բարձրաձայն :

—Ս . . . Սէր . . . Սէ . . . Սէ . . . ,— կը կրկնէր ան՝ առանց  
չրթունքները շարժելու : Սէ . . .

—Մայրի՛կ :

Գնդապետը քալեց առաջ և ամբողջովին դողդողագին՝  
իր համազգեստին ամէն մէկ ծալքովը, իր դէմքին ամէն մէկ  
կնճիռովը, և չհասկնալով թէ ի՞նչպէս սարսափելի է ինք իր



մեռելատիպ սպիտակութեան, իր տանջանագին, յուսահատական դիմացկունութեան մէջ՝ խօսեցաւ կնիանը .

— Լռէ՛ , մի՛ տանջեր զայն , մի՛ տանջեր , մի՛ տանջեր . ան պիտի մեռնի , մի՛ տանջեր :

Մայրը վախէն արդէն լռեր էր , իսկ ան դեռ կը շարունակէր, ինքզինքը զսպած , անոր կուրծքին առջև դողդողագին շարժել իր սեղմած բուռնցքները և պնդել .

— Մի՛ տանջեր :

Յետոյ ետ գնաց . դողդոջուն ձեռքը դրաւ համազգեստին ծոցը , և բարձրաձայն , բռնազրօսիկ հանդարտութեան արտայայտութեամբ՝ հարցուց սպիտակ շրթունքներով .

— Ե՞րբ :

— Վա՛ղը , առտո՛ւն , — նոյնպիսի սպիտակ շրթունքներով պատասխանեց Սէրկէյ :

Մայրը կը նայէր վար , կը ծամէր շրթունքները և կարծես ոչինչ չէր լսեր : Եւ շարունակելով ծամել , կարծես վար ձգեց սա պարզ և օտարոտի խօսքերը .

— Նինոջկան պատուիրեց որ համբուրեմ քեզ , Սէրիօժինկա՛ :

— Համբուրէ՛ զինքը իմ կողմէս :

— Լա՛ւ : Կը բարեւեն նաեւ քեզ Խվոստովները :

— Ո՞ր Խվոստովները : Ա՛ն , հա՛ :

Գնդապետը ընդհատեց .

— Դէ՛հ , պէտք է մեկնիլ : Ո՛տքի ելիր , պառա՛ւ , ժամանակ է :

Հայր ու տղայ ոտքի հանուցին թուլացած մայրը :

— Մնաս բարով ըսէ՛ , հրամայեց գնդապետը : Խաչակնքէ՛ :

Մայրը կատարեց այն բոլորը , ինչ որ իրեն ըսին : Բայց խաչակնքելով , և համբուրելով զաւակը կարճ համբոյրով , ան կը շարժէր գլուխը և կը պնդէր անխմաստ կերպով .

— Ո՛չ , այս այսպէս չէ՛ : Ո՛չ , այսպէս չէ : Ո՛չ , ոչ : Հապա ինչպէ՛ս ես յետոյ . . . Հապա ինչպէ՛ս ես ըսեմ : Ո՛չ , այսպէս չէ :

— Մնա՛ս բարով , Սէրկէ՛յ , ըսաւ հայրը :

Անոնք սեղմեցին իրարու ձեռք և պինդ բայց կարճ համբույրով մը համբուրուեցան :

— Դուն . . . սկսաւ Սէրկէյը :

— Է՞, կերկերածայն ըսաւ հայրը :

— Ո՛չ, այդպէս չէ՛ : Ո՛չ, ո՛չ : Հապա ես ի՛նչպէս ըսեմ , կը կրկնէր մայրը՝ երեքցնելով գլուխը , ու արդէն նորէն յաջողած էր նստիլ և ամբողջ մարմնով կ'երերար :

— Դուն . . . նորէն սկսաւ Սէրկէյը : Յանկարծ անոր դէմքը սղորմելիօրէն , մանկան մը պէս կնճռոտեցաւ և աչքերը մէկէն ի մէկ լեցուեցան արցունքներով : Անոնց կայծկոտուն շղարշին մէջէն մօտէն տեսաւ հօրն սպիտակ դէմքը՝ նոյնպիսի աչքերով :

— Դո՛ւն , հա՛յր , աղնիւ մարդ ես :

— Ի՞նչ կ'ըսես , ի՛նչ կ'ըսես , վախցաւ գնդապետը : Եւ յանկարծ կարծես կոտորած , գլուխը ձգեց զաւկին ուսին վրայ : Փամանակով հայրը բարձր էր Սէրկէյէն , իսկ այժմ կարճցեր էր , և իր թաւամազ չոր գլուխը , սպիտակ գնտիկով , կը պառկէր զաւկին ուսին վրայ : Եւ երկուքն ալ լուռ , ազահուլթեամբ կը համբուրուէին , — Սէրկէյ՝ թաւամազ սպիտակ մազերը , իսկ հայրը՝ բանտային տառասուկը :

— Հապա ե՞ս , յանկարծ ըսաւ բարձր ձայն մը :

Ետեւնին նայեցան . — մայրը կանգնած էր և գլուխը ետ ձգած , կը նայէր բարիութեամբ , գրէթէ ասելութեամբ :

— Ի՞նչ է , պառա՛ւ , պոռոպ գնդապետը :

— Հապա ե՞ս , կ'ըսէր ան՝ շարժելով գլուխը խելակորոյս արտայայտութեամբ : Դուք կը համբուրուիք : Հապա ե՞ս : Հապա ե՞ս :

— Մայրի՛կ , գոչեց Սէրկէյը և փաթթուեցաւ մօրը վզին : Այս պահուն տեղի ունեցաւ այն՝ որ կարելի չէ և պէտք ալ չէ պատմել :

Գնդապետին վերջին խօսքերն էին .

— Կ'օրհնե՛մ քեզ մահուան համար , Սէրև'օժա : Մեռի՛ր արիարար՝ որպէս զինուորական :

Եւ անոնք մեկնեցան : Չես գիտեր ի՛նչպէս մեկնեցան :  
 Կային, կանգնած էին, կը խօսէին, — և յանկարծ մեկնեցան :  
 Ահա այստեղ նստած էր մայրը, ահա այստեղ կանգնած էր  
 հայրը, — և յանկարծ չես գիտեր ի՛նչպէս՝ մեկնեցան : Վերա-  
 դառնալով իր խօսքը, պառկեցաւ խշտեակին վրայ, դէմքը  
 պատին ուղղած՝ պահակ զինուորներէն պահելու համար ինք-  
 զինք, և երկա՛ր ատեն կուլար : Յետոյ յոգնեցաւ արցունք-  
 ներէն և խո՛ր քնացաւ :

ԼԷՈՆԻՏ ԱՆՏՐԷԷԻ

## Հ Ո Գ Ե Ի Ա Ր Ք

Հոգեւարքիս՝ դուք որ ինձ սիրտ պիտի տաք,  
 Բնաւ պէտք չէ որ խօսիք,  
 Զգեցէ՛ք որ լսեմ քիչ մը ներդաշնակ  
 Երգ, որ ըլլայ մահս հեզիկ :

Երկրի հոգէն մենք կը հանգչինք նուազին  
 Կարթող թուքովն հեշտօրօր .  
 Սիրտս օրրեցէք. բայց՝ կը կրկնեմ թախծագին՝  
 Բնաւ մի՛ խօսի, ո դուք անոր :

Ա՛լ զգուած եմ բառերէ, չեմ ուզեր ա՛լ  
 Ինչ որ սուտ է ու ցաւ է,  
 Հիմա ծայներ լոկ կ'ուզեմ՝ զոր հասկնալ  
 Պէտք չէ, — զգալ կը բաւէ :

Մեղմ նըլազ մը՝ ուր մեր հոգին կը սուզի  
 Եւ որ առանց զգալու .  
 Զառանցանքս պիտի փոխէ երազի  
 Եւ երազս ալ մահու :



Հոգեւարքիս դուք որ ինձ սիրտ պիտի տաք՝  
 Բնաւ պէտք չէ որ խօսիք,  
 Թեթեւցնէ զիս քիչ մը երգ ներդաշնակ  
 Ու թող ըլլայ մահս հեզիկ :

Գացէք գտէք խեղճ կաթնտուս գիւղացի,  
 Որ ոչխարներ կ'արածէ,  
 Եւ ըսէք թէ քմահաճոյքս է օրհասի՝  
 Գերեզմանի եզերքէ՝

Մտիկ ընել իր երգերը մեղմ շեշտով,  
 Հին անուշ մէկ եղանակ,  
 Պարզ, քաղցրածայն եղանակ մը հոգեթով,  
 Կիսածայն ու միօրինակ :

Զայն կենդանի պիտի գտնէք, շատ երկար  
 Գիւղին մարդիկը կ'ապրին.  
 Իմ պատկանած սերունդս արդէն չի կրնար  
 Շատ հեղ կրկնել քսան տարին :

Զիս առանձին պիտի ձգէք անոր քով՝  
 Սրտով յարած իրարու.  
 Պիտի երգէ ան իր շեշտով հոգեխռով,  
 Զեռքը ճակտիս՝ հոգածու :

Գուցէ սիրոյ միակ ցուքը տակաւին  
 Պիտի պարտիմ այդ կնկան.  
 Իր երգը զիս պիտի տանի սրտովին՝  
 Հին օրերուս մանկական,

Որ սրտիս մէջ վերջին ժամուս չզգամ ես  
 Աւերումը փնայման,  
 Չխորհիմ այ. մարդը մեռնի թող այնպէս  
 Ինչպէս ծնած էր տրդան :

Հոգեւարքիս դուք որ ինձ սիրտ պիտի տաք՝  
 Բնաւ պէտք չէ որ խօսիք,  
 Չզեցէք որ լսեմ քիչ մը ներդաշնակ  
 Երգ՝ որ ըլլայ մահս հեզիկ :

ՍԻՒԼԼԻ ՓՐԻՒՏՕՍ

ԹՈՒՐԲ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

## Օ Ս Մ Ա Ն

Իր շուրջը թնդանօթները և հրացանները անվերջ հա-  
 ուաչանքով մը կրակ կը սփռէին : Հանդիպակաց գագաթներուն  
 մէջտեղէն կայծակի արագութեամբ ամպի ծուէն մը կը փր-  
 թէր . հրացայտ ուսմբ մը թաւալզլոր կը սուրար , ահեղագոռ  
 անկումով մը կ'իյնար , օդապատառ շառաչով մը հորիզոնները  
 կը ցնցնէր . յետոյ ուրիշ մը , երրորդ մը , չորրորդ մը , ան-  
 վերջ ուսմբեր—ամբողջ ապառաժներ՝ կենդանացած արտա-  
 սովոր ուժով մը , որոնք կը փրթին մաս առ մաս , վիշապներ  
 որ հրավառ ամպերու մէջ դժոխային թռիչով մը կը սուրան—  
 մահուան սարսափներու այս անվերջ , անսպառ շղթան կ'անց-  
 նէր անոր գլխուն վրայէն և շուրջէն . . . :

Անոնք գումարտակ մըն էին և թնդանօթ մը ունէին .  
 կեցած գագաթի մը առկնփին վրայ , որ կը բարձրանար ա-  
 հարկու սեւ ժայռերով , գիշերային դեւի մը պէս , կը հետե-  
 ւէին ամպերն արհամարհող ամենի և հրավառ նայուածքով  
 մը՝ իրենց սպային սուրի ծայրին՝ որ կը փայլատակէր սպի-  
 տակաշող կայծակի մը կտորին պէս : Այդ գագաթը մագլցիլ ,  
 եթէ ոտքերը չբաւէին՝ իրենց ակռաներովը , եղունգներովը

այդ լերի ժայռերը կրծելով, ճանկրտելով կ'ուզէին բանալ արիւնազանգ ծաղիկներով զարդարուն վսեմ պողոտայ մը՝ յաղթանակի դիցուհւոյն քայլերուն համար:

Այն ասուն գերմարդկային գրոհով մը պարանները իրենց թևերուն փաթթեցին և սկսան քաշել, կոխկրտելով այս բլուրը, որ կը բարձրանար քարէ ամրակուռ պատնէշի մը պէս:

Մտերէն վառօդի մուխ մը բարձրացաւ, բլուրներուն վերեւ և ահա սա լեռնային աւազանին մէջ պարփակուած հովիտին շուրջը կը կենայ ալեծփելով՝ սպիտակ դօտիի մը նման, յանկարծ գազաթէ մը ռումբ մը կը սուրայ, կը ցնցէ օդային խաւերը, որոնք կը ծփացնեն մուխը, այս գուռացող և պարող ամպին տակ զինուորներ՝ որ կը մազլլին զառիվերերէն, հեծկազօրքեր՝ որ կը սուրան գահալէժներէն դէպի վեր կենդանի թաթառի մը նման, վաշտեր՝ որ իրենց կուրծքն ուռեցուցած կը յառաջանան հովիտին մէջ, սեւ ժայռերուն ահարկու երախէն վիժող կրակէ հեղեղին դէմ, գնդակներ՝ որ խաւրաղանելով մթնոլորտը՝ կը սուլեն օդային օձի մը պէս, շեփորներու դառն աղաղակներ՝ որ մերթ ընդ մերթ կը խաչաձեւուին շրջապատի լեռներուն ցաւակոծ հեծկտանքներէն, ու յետոյ ըս՛ր . . . ըս՛ր . . . ըս՛ր . . . ոտնաձայները վաշտերուն՝ որ յառա՛ջ, միշտ յառա՛ջ կ'երթան, սեւ, կենդանի զանգուածի մը ահաւորութեամբ, և Ալլահ . . . Ալլահ . . . աղաղակները՝ որ կ'ուռին ու կը բարձրանան դէպի բարձունքները՝ արշաւող հեղեղի մը մրրկակոծ վեհութեամբը:

Օսման ամէնէն առջեւն էր. իր շուրջը նայեցաւ, տեսաւ այս ամէնը, յետոյ աչքերը յառեց դէպի գազաթը այն լեռան, որուն լանջին ստորոտէն վեր կը մազլլէին: Անգամ մը այդ գազաթը բարձրանա՛յին . . . կարենային զետեղել այդ թլնդանօ՛թը . . . :

Հիմա այս թնդանօթը իրենց թանկագին սիրուհին, իրենց քնքուշ հոգին էր:

Օսման «օ՛ն» ըսաւ, պարանները ճռնչեցին բազուկներու



շուրջ . թնդանօթը , այս հազելի հարսը՝ գումարտակ մը սիրահարներուն աշխուժ եռանդէն կազմուած սիրոյ կառքին վրայ պզրոտ քայլ մը եւս ըրաւ :

Օսման ամէնէն առջեւն էր , իւրաքանչիւր քայլին միացընելով իր սրտին խորերէն փրթած աղաղակ մը , « օ՛ն . . . » կ'ըսէր . այն ատեն զետինը պառկելով , քարերուն փակչելով , հողերը փորելով , սողալով , իյնալով , թաւալելով , սակայն միշտ առաջ , միշտ առաջ երթալով—պատուած իրենց զգեստները , ճմլուած իրենց բազուկները , կոտրուած իրենց ուսերը , փրթած իրենց կողունները—քաշեցին թնդանօթը . դազաթը կը բարձրանային . տասը , տասնըհինգ թափ եւս , ե. դազաթը պիտի հասնէին , հո՛ն պիտի զեռնդէին թնդանօթը . այն ժամանակ թերեւս այս գումարտակը , այս փոքրիկ թնդանօթը ամբողջ զօրաբաժնի մը յաղթութեան ոահահորդը պիտի ըլլար . . . :

Օսման ամէնէն առջեւն էր . ա՛յ հիմա բարձունքներէն կրնար ընդգրկել ամբողջ տեսարանը . հանդիպակաց դազաթները՝ ուր թշնամին ամրացած էր՝ այդ ահարկու , սակայն վեհերոտ վիշապները որ կարծես ժայռէ զգեստները անրաւական գտնելու երկաթակուռ սաղաւարտներու տակ կրակ կը փսխէին , մօտիկցած կը թուէին այս բարձունքին :

Օսմանի այնպէս կը թուէր թէ՛ իր բազուկները երկնցնելով , պիտի կրնայ բոլոր այս դազաթները հաւաքելով իր ամենի կուրծքին վրայ՝ սեղմել , ճզմել և ջարդ ու փշուր ընել :

Հիմա թիրախն էին թշնամիին . հիմա հրետանին այս գումարտակը փճացնելու համար , իր հրեղէն բերանները բացած՝ կայծակներ կը տփռէր : Օսման անգամ մըն ալ դէպի վար նայեցաւ . ամբողջ զօրաբաժինը կարծես իր գլուխը վերցուցեր , զինքը կը բարեւէր , աչքերով երկինքը ցոյց տալով « դէպի առաջ » կ'ըսէր :

Անգամ մըն ալ « օ՛ն . . . » ըսաւ . թնդանօթը քայլ մը եւս առաւ . ա՛հ , եթէ այսպէս քանի մը քայլ եւս առնէր , պիտի հասնէին դազաթը . . .

Յանկարծ , ճիշտ իրենց մշտեղը , թնդանօթին եզերքին վրայ ամպի կտոր մը ինկաւ . ակնթարթի մը մէջ այս ամպէն բոց մը ելաւ : Օսմանի աչքերը մթադնեցան , յետոյ այս մթութեան մէջ քանի մը ինկած մարդ տեսաւ . իսկոյն ահաւոր ճշմարտութիւնը ըմբռնեց . դուշակեց թէ՛ թշնամին այս յաջողութիւնը տեսնելէ վերջ , պիտի շարունակէր նոյն կէտը ծեծել : Այլ վայրկեան մը իսկ կորանցնել չէր կարելի . պաղատանքի տարտամ ակնարկով մը իր ընկերներուն նայելով , դարձեալ « օ՛ն . . . » բաւ : Նորէն պարաններուն կառչեցան , սակայն Օսմանի թեւը կախուեցաւ . բազուկին ճիշտ վերելք պաղ բան մը կը զգար . այն ստեն ինք իր վրայ դարձաւ , պարանը մէջքին փաթթեց և նորէն պուռաց : Գերազոյն ճիգով մը կախուեցան պարաններէն . այս անգամ Օսման ցնցուեցաւ և « պարանը փրթա՛ւ » սրտաձմիկ աղաղակը լսելի եղաւ :

Այն ստեն Օսման տեղէն ցատկեց . երկվայրկեանի մը տեւողութեամբ շիտթութեան մէջ՝ նշմարեց որ թնդանօթը պարանէն դատուեր , սայթաքելով կը թաւալէր : Եթէ այս թրնդանօթը իրենց ձեռքէն ելլէր , ամէն ինչ պիտի փճանար : Ուստի Օսման առաջ նետուեցաւ , փաթթուեցաւ թնդանօթին որ սկսած էր թաւալգլոր դալ , սակայն չէր կրնար զսպել զայն . թնդանօթին ծանրութիւնը իր ուժասպառ մարմինը քաշկրտելով , երբեմն վրան , երբեմն տակը առած՝ ժայռերուն զարնելով , զայն դէպի անդունդները կը քաշէր ահարկու անկումով մը :

Օսման ինքզինքը կորանցուցած էր , այլևս ոչինչ կը տեսնէր , ոչինչ գիտէր , անդիմադրելի ուժով մը իր թաւալգլոր անկումին մէջ մէկ բան միայն կը խորհէր . — թնդանօթը չի՞ողուլ . . . :

Աչքերը բաց՝ կը թաւալէր — երբեմն տեսնելով նայուածքին սակ՝ վառօղի ամպերով բեռնաբորուած երկինքը , երբեմն նայուածքին վերեւ՝ լերկ անդունդներն ու հովիտները՝ որոնց գոգին մէջ կը վխտային բիւրաւոր մարդիկ . եկաւ ժամանակ մը՝ ուր ա՛լ ոչինչ տեսաւ :



Մէկէն ամէն բան լուեց : Ամէն բան գոյութեան հորիզոնէն սրբուեցաւ : Ո՛չ այն հրացայտ գազաթները , ո՛չ այն գնդակ ժայթքող վաշտերը . . . ոչինչ , ոչինչ կալ :

Օսման ուզեց թոթուրուիլ , այս անգոյութեան մէջէն ելլելու համար՝ ուզեց փարատել անէութեան այս մղձաւանջը , սակայն ասոր համար ալ ուժ չէր մնացած : Հիմա ամպի մը , խեղդող , թմրեցուցիչ ամպի մը մէջ էր՝ որ իր շնչառութիւնը կ'արգիլէր : Ուզեց պօռալ , չի կրցաւ . իր թոքերը սեղմուած , իր ամբողջ էութիւնը կը հալէր ու կը վազէր պարապութեան մը մէջ :

Երբ ընկերները հասնելով , Օսմանը գտան երկու ժայռի մէջ սեղմուած , ուզեցին իր թեւերը բանալ , սակայն թեւերը չբացուեցան :

Միայն բացուեցան անոր աչքերը . «Օսման , վիրաւորուած ես» հարցուցին . այնպէս մը նայեցաւ իր ընկերներուն երեսին՝ որ կարծես թէ անոնց ըսածը չէր հասկնար : Ապա , աչքերը յառելով դէպի այն գազաթը՝ ուր անպատճառ բարձրանալ կ'ուզէր . «Թնդանօթը ո՞ւր է» ըսաւ . այն ատեն խնդացին ամէնքը . թնդանօթը դեռ Օսմանի բազուկներուն մէջ էր . . .

ԽԱԼԻՏ ԶԻԱ

**ԽԱԼԻՏ ԶԻԱ** կը պատկանի Զմիւռնիոյ տոհմիկ ընտանիքներէն՝ Ուշագի Զատէներուն : Իր գիտական առաջին տպաւորութիւններն ու քաջալերութիւնները գտած է այդ տան մէջ : Դասական գրականութեան ծանօթացած է Միւթարեաններու վարժարանը՝ ուր յաճախած է իբրեւ աշակերտ : Մեծ հակում ունենալով բնական գիտութիւններու եւ ծանօթանալով բնապաշտական դպրոցին՝ Ֆրանսացի ուսուցիչներու առաջնորդութեամբ , հիմը դրաւ թուրք իրապաշտ վէպին՝ իր «Նեմիսե»ով :

Իր գրական գործունէութիւնը սկսած է Զմիւռնիա , ուր հիմնած է «Խրս-վեթ» ւրագիրը :





Շինասի եւ Քէմալ ահագին պայքար մղեր էին՝ թուրք լեզուն ստեղծելու համար. խալիտ Զիա ստեղծեց նորագոյն լեզուն՝ որ իր շարադասութեամբ, նախադասութիւններու կազմութեամբ ահագին գուռում գոչում պատճառեց թէ՛ Պոլիս եւ թէ՛ Զմիւռնիա, բայց յաղթանակը մնաց խալիտ Զիա պէյի՝ որ իր շուրջը բոլորելով ժամանակակից յառաջադէմ մտաւորականութիւնը՝ ստեղծեց «Նոր գրականութիւնը»:

Խալիտ Զիա արդէն ստուար գրականութիւն մը ունի եւ կը շարունակէ արտադրել գեղարուեստական գեղեցիկ էջեր, աշխատակցելով Թանիկի:

## Հ Ա Յ Ա Ս Պ Ե Տ Ն Ե Ր

Գարնանամուտ երեկոյ մ'իր պալատին մէջ մարմար՝  
 Բակուր, Սիւնեաց Նահապետ, շքեղ հանդէս մը կուտար,  
 Երբ Ուղեւոր մը յանկարծ մրրրկարշաւ կը հասնի  
 Լուսնկափայլ ճամբայէն՝ մեծ դրրան քով արքենի:  
 Զին կը հեւայ, ու բերնին փրրփուրն՝ հողմէն միշտ խլուած՝  
 Կը թրջէ թամբն համօրէն, ասպանդակներն ոսկեմած:  
 Հեռուներէն ան կուգայ. զայն կը մատնէ թէ՛ փոշին  
 Որ դիզուեր է խաւերուն մէջ թիկնոցին թաւիշին,  
 Թէ՛ նրժոյզին վրրնջիւնն աստեղացունց մաքրութեամբ՝  
 Որ կը խնդրէ ախոռին գոլուտ հանգիստը անթամբ:  
 Բակուր այդ հիւրն իր անձէն եւ անունէն կը ճանչնայ,  
 Բագրատունին Տրդատն է, հրգօր իշխան, ու Փեսայ  
 Տիրան Հայոց արքային, որ կը փախչի Մարաստան:  
 Կը փախչի ան՝ զի կինն իր, Տիրանի դուստրն աննրման,  
 Գանագոծեր էր խըստիւ, պալատէն դուրս արտաքսեր,  
 Խուզելով, իբր անարգանք, անոր խարտեաշ զանգուրներ:  
 — «Տրդա՛տ, կ'ըսէ Նահապետն, այս գիշեր քուկդ է իմ տուն.  
 Մարաց աշխարհն հեռու է, եւ դու անշուշտ պարտասուն.  
 Մըտի՛ր սրբահը տօնին, թող իրարու դէմ փրշրին  
 Մեր բաժակներն, ու մեր սէրը մըկրտէ թող գինին:»

Եւ կոչունքի կը բազմի Բագրատունին վտարանդի,  
 Աջ կողմը ճիշտ Բակուրին՝ որ իր կարգին կը նըստի

Գահի մը վրայ՝ որուն լայն թիկնաանունն է քանդակուած  
 Բագուսը՝ եզ մ'որթերով պրսակելու ըզբաղած :  
 Սեղանին շուրջը արդէն Մեծամեծներն հայկազուն  
 Դէմ յանդիման բազմեր են՝ բայց ո՛չ իրենց մեծանուն  
 Աստիճանին համեմատ, այլ սուրերու մեծութեան.  
 Հո՛ն են ճորտերը Սիւնեաց գաւառներուն երկտասան,  
 Լերան ազատ գաւակներ, միշտ զրահի մէջ կուրծքերնին՝  
 Որոնք հրզօր Քումբի պէս ջահերուն տակ կը փայլին :  
 Հոն կան նաեւ բրդեշխներ, ազատանին քաջարի՝  
 Որ կը պատմեն թէ ի՛նչպէս կ'որսան վարազը վայրի,  
 Ազնււատոհմ սեպուհներ ոսկեհարմանդ խլաներով  
 Գինւոյ բաժակ ի ձեռին կը ծիծաղին կէս գինով :  
 Պալատին մէջ ծով մը կայ ծիծաղներու եւ լոյսի՝  
 Որ գաղջօրէն ծուփ առ ծուփ դռներէն դուրս կը հոսի :  
 Կոջնականները զարմիկ պատերն ի վար կախեր են  
 Որսի գալար շեփորներն ու վահաններն ոսկեղէն.  
 Եւ նիզակները, դեռ թաց՝ վարազներու արիւնով,  
 Տրրծակ տրրծակ կը հանգչին հրսկայափեղկ դրրան քով :  
 Լայնակոնք սրահը քրսան սիւներով է կառուցուած՝  
 Որոնց վրայ կը շողան քրսան ջահեր դէմ դիմաց :  
 Եւ այն քրսան սիւներուն մէջէն քրսան գերիներ  
 Կը բերեն թանկ սաներու վրայ՝ խորոված երէներ՝  
 Որոնց շոգին քրմպարար կը բարձրանայ ոլորուն,  
 Ջահերուն շուրջ կազմելով խըլատեռեր ծրփծրփուն :  
 Ըսպասներն ալ սեղանին մեծարժէք են. եւ կարծես  
 Արծաթազօծ դրգալներն ու դանակները նոյնպէս  
 Փողփողումին տակ լոյսին փայլակներ են աղմըկոտ՝  
 Որ կը ծփան դիպակեայ նւարտանին վրայ փութկոտ :  
 Ծաղկակալներ են դրրւած երկայնքն ի վեր սեղանին,  
 Որոնցմէ եղկ բուրումներ շուրջը արբշիռ կը սրփռին.  
 Ծաղիկներուն ընդմէջէն, քրքրիչներուն հետ թրրթռուն,  
 Կը նշմարուին ըսպիտակ ակռաներն յոյր ճորտերուն.  
 Եւ գինիին թանձր հոտն եւ խահերուն գոլորշին

Վեր բարձրացած՝ կրսքօղեն կատաղութիւնն այդ նաշին :  
 Կուգայ համեղ գերերին՝ որով Սիւնիքն է առատ,  
 Զոր եփեր են տատրակի սրբոյներով անարատ :  
 — «Աղաւնիի սիրտ ուտենք, կը գոչէ նորտը Բալի,  
 Որ ունենանք վագրի լեարդ»... :

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

## ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՎԱՆՔԸ

Այսօրուան ժամերս՝ սխաի անցընեմ Հայոց մէջ :

Երբ Յունաց Գանձարանը բաւական դժուարաւ կը  
 բացուի այցելուներուն առջեւ, Հայոց Գանձարանը բնաւ բաց-  
 ուած չէր մինչեւ այն օրը, և այդ արտօնութիւնը ձեռք բե-  
 րելու համար հարկ եղաւ ֆրանսական բնդհանուր հիւպատո-  
 սին սիրալիր թախանձանքը բարեացակամ Պատրիարքին քով :

Հայոց վանքը Սիօն լերան գրեթէ կէսը կը բռնէ. միւս  
 մասը, արեւելեան՝ կողմը՝ Հրեաներուն կը պատկանի :

Այդ շատ յատկանշական թաղին մէջ մեր պայտը սկսել է  
 առաջ, կ'ուզենք շնորհակալութեան այցելութիւն մը տալ Սրբ-  
 բաղան Պատրիարքին, և ապարանքի սրահին չափ մեծ ընդու-  
 նելութեան սրահ մը կը մտցնեն մեզ՝ անոր սպասելու հա-  
 մար : Քիչ մը ետքը ներս կը մտնէ դռնէ մը, որուն վարա-  
 գոյրը կրօնական երկիւղածութեամբ վեր կ'առնեն սե վեղար  
 դրած երկու վարդապետներ, և մեր մօտը կը նստի իր աթո-  
 ոյն վրայ : Հրաշալի գլուխ մը ունի դժխեմ սեւ վեղարին տակ,  
 ճգնաւորական տեղունութեամբ նուրբ դիմագիծեր, սուրբի  
 ճերմակ մօրուք մը, արեւելեան սեւութեամբ աչքեր և յօն-  
 քեր : Իր ընդունելութեանը, իր ժպիտին, իր ամբողջ անձին  
 մէջ վայելուչ և յանկուցիչ շնորհ մը կայ, և տեսակ մը ասի-  
 ական ինքն : յատուկ դրոշմ : Այս վաղնջուց հիւրամեծարու-  
 թեան և վաղնջուց վայրին մէջ, հին ժամանակներու եկեղե-  
 ցականի մը կերպարանքը ունի : Արդէն թրքական եղանակով



կ'ընդունի մեզ, — խահուէով, սիկառէթով և աւանդական վարդի անուշով :

Եկեղեցիէն և վանքէն դատ, հայ թաղը կը բովանդակէ անհուն և հինաւուրց օթեւան մը որ կրնայ իբր երեք հազար ուխտաւոր առնել, երեք չորս մեթր հաստութեամբ պատերով, գետնափոր շտեմարաններով և չորս տարի ջուր տալու բաւող ջրամբարով մը :

Եկեղեցին, ուր կը մանենք ամէնէն վերջը, Երուսաղէմի եկեղեցիներուն ամէնէն հիներէն և հետաքրքրականներէն մէկն է : Արտաքին դռան մօտ, դեռ կը գտնուի՝ հաւատացեալները կանչելու համար՝ նախնի կոչնակը զոր արդէն տեսած էինք Սինայի վանքին մէջ :

Եկեղեցիին ներսը կը յիշեցնէ յունական կաթողիկէները, ինչպէս նաեւ արաբական ապարանքները՝ թանկագին կապոյտ յախճապակիներու դրուադներով, որոնք կը ծածկեն անոր բոլոր պատերը և հաստաբեատ սիւները : Պատրիարքանիստ աթոռները, սրբատուններուն և յարակից մասերուն դուռները արեւելեան շատ հին արուեստով մը բանուած սատափէ ու խեցիէ խճանկարներ են : Կամարէն վար կախուած են հաւիրթաձեւ բաղմաթիւ կանթեղներ, որոնք բանուած արծաթի տարօրինակ ադոյցքներու մէջ ընդելուզուած են : Աւագ խորանին վրայ դրուած է նուրբ ոսկիէ զրքակալ մը, կիսաթափանց կիտուածանկարներով : Թուրքիոյ դորգեր, կապոյտ, դեղին կամ կարմիր, սալաքարերուն վրայ կը փռնն իրենց թաւիչի թանձր խաւը : Եւ վերէն վար իջած սեւ քօղեր կը ծածկեն խորի երեք տապանակները : Մեզի ըսին թէ ամէն շաբաթ կը փոխեն զանոնք. մէկ քանի օրէն, Զատիկի տօնին համար, աւելի շքեղները մէջտեղ պիտի հանուին. մէջտեղ դրուածները, որոնց վրայ կը տեսնուին նուիրական անձերու շարքեր, հարիւր տարիի չափ առաջ դրկուած են Հնդկաստանի Հայերուն կողմէ :

×

Հոն, այդ աւագ խորանին առջեւ, այդ վաղնջական և

չքեղ շրջանակին մէջտեղ է որ սեւ վեղարով ու սեւ մօրուքով շրջանակուած գեղեցիկ դէմք ունեցող վարդապետներ մէկիկ մէկիկ մեղի կը բերեն Գանձարանին առարկաները :

Անկասկած Յոյները Ս. Գերեզմանին մէջ ճոխութեանց աւելի մեծ առատութիւն մը ունին : Բայց Հայոց գանձը աւելի հազուագիւտ ճաշակով առարկաներէ կը բաղկանայ : Ոսկի կողքով խորհրդամատեան մը կայ վեց հարիւր յիսուն տարի առաջ նուիրուած : Ոսկեհուռ և աղամանդակուռ նրբակերտ չաթալթաղեր, եպիսկոպոսական խոյրեր՝ մարգարիտներով ու դմրուխտներով զարդարուն : Ու կերպասներ, կարծես պարիկներու ձեռքով հիւսուած կերպասներ, մէկը մանաւանդ, թուամած վարդի, կեռասի գոյնով ճամկաւոր դիպակ մը՝ որուն վրայ ճերմակ դոնդողի բիւրեղներ ցրցքնուած են արծաթացօղ, և որ ասեղնագործուած է նուրբ մարգրիտէ տերեւներով, դմրուխտի ծաղիկներու և վարդագոյն տպագիտններու հետ : Որպէս զի այդ առարկաները հնութենէն չճեղքուտուին, չկտրուտուին, երկար գաւազաններու վրայ պլորած պահած են դանոնք, և վարդապետները իւրաքանչիւրը մէյ մէկ ծայրէն բռնած կը բերեն : Ամէն անգամ որ ներս կը մտնեն, խոնարհութիւն մը կ'ընեն աւագ խորանին առջեւ, և յետոյ այդ դիպակները գետինը կը տարածեն հաստ գորգերուն վրայ. Միջին դարու տեսարաններ ևն ասոնք, կերպասներու այս յարգալիք ցուցադրութիւնները, այս անշարժ սրբավայրին մէջ, պատի յախճապակիներուն կապոյտ փողփողման մէջտեղ, — մինչդեռ մեր շուրջը սարկաւազներ, անոնք ալ անփոփոխելի սեւ վեղարը դրած, փութով կ'աշխատին աւագ շարթուան դարաւոր պատրաստութեանց, վարսագոյրներ կը կախեն սիւներէն, արծաթ շղթաներու միջոցով կը բարձրացնեն կամ կ'իջեցնեն կանթեղներ :

×

Եկեղեցիէն հերս մտած ատենդ ձախ կողմը մարմարիոնէ տեսակ մը խորշ կայ, կարծես պատին մէջ փորուած. այդ տեղն է ուր Ս. Յակոբ գլխատուեցաւ և ուր պահուած է ա-

հոր գլուխը (մարմինը, ինչպէս յայտնի է, Սպանիա կը գտնուի) :

Երկրորդական մատուռներու մէջ, որոնք եկեղեցիին հետ կը հաղորդակցին սատափէ պղտիկ դուռներով, մեզ այցելել կուտան ուրիշ հետաքրքրական տապանակներ, արտակարգ ու գրեթէ հնդկական կերպարանքով, որոնք ծածկուած են Գամասկոսի թաւիշէ կամ Պրուսայի մետաքսէ վարագոյրներով :

Արեւելքի հիւրամեծարութեան համեմատ, երբոր պատկառելի վաղնջուց եկեղեցիէն դուրս կ'ելլենք, երիտասարդ սարկաւազ մը դրան առջեւ մեզի կը սպասէ՝ արծաթէ երկայնավիզ անօթով մը ձեռքերնուս վարդի ջուր լեցնելու համար :

Յիրաւի, բացառաբար իրենց Գանձարանը մեզի ցուցնելով, այդ քանի դիմագծութեամբ սիրալիր հայ վարդապետները անցեալին մէկ շատ յանկուցիչ տեսիլքը տուին մեզի՝ իրենց յախճապակիի և սատափի եկեղեցւոյն մէջ, պահ մը մեզի մոռցընելով մեր անսահման յուսախարութիւնները :

ԲԻԷՌ ԼՕԹԻ

## Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Ն Ա Մ Ա Կ

1907 տարւոյն Յուլիան էր :

Հիւանդ հայրս ու ես ստիպուած ենք ութ օրուայ հարկեցուցիչ ճամբորդութեամբ մը տաժանքներ կրել համբերութեամբ :

Հասանք Պիթլիսի կուսակալութեան Ճապաղջուրի գաւառակին Փատվան գիւղը, մեր մեկնումին երրորդ օրը, իրիկուան դէմ : Հայրս հիւանդութեամբ չափազանց տկարացած ուժասպառ էր, գիշերը տուն անցընելու էինք :

Հայրս ճամբորդի փոքր, առանց սիւնէ վրանի մը տակ իր մահճակալին մէջ երկնցած, իր վերջին ժամերուն անցքը կը դիտէր՝ կորովի, անդորր նայուածքով մը :

Այո՛, մահը իր սեւ թեւերը տարածեր էր անոր տկար



մարմնին վրայ, առանց սակայն կարենալ յաղթահարելու ա-  
նոր կորովին:

Հորս հիւանդագին վիճակը, աւերակ երկրին վիճակը՝ որ  
առջեւս կը պարզուէր... շուրջս, առջեւս ամէն կողմ հառաչող  
ոգեւար հայրենիքին վիճակը, այդ տազնապալից դժնդակ  
վայրկեաններուն մէջմէկ նիւթ էին յաւազին խորհրդածու-  
թեան:

Էքրէմ, մեր վարպետը, կ'ըսէ.

Խոհերն հոգւոյս մտերիմներն են,  
Խոկմանց պահը կեանքիս էն քնքուշ պահերն են:

Սակայն Անատոլուի մէջ խորհրդածութիւնը հաճոյք մը,  
փափաք մը չէ, սովորութիւն մը, բնաւորութիւն մըն է: Այդ  
երկրին մէջ ամէն ինչ լուռ, անժպտուն, բայց խորհրդ-  
դածող է:

Ճամբան կը հանդիպի ծերունի գիւղացիի մը. հեռա-  
ւոր լեռներու ձիւնածրար գագաթներէն քանի մը ճիւղ փայտ  
բեռցուցեր է իր իշուն վրայ, սայթաքելով կ'երթայ այս նեղ,  
անդնդաւոր, վտանգաւոր ճամբաներէն որ աւելի տարերա-  
յին հոսանքներուն ընթացքէն կաղմուած է, քան մարդոց աշ-  
խատութեան արդիւնքով:

Արտին մէջ հողն հերկող աղքատ մը կը տեսնես: Վրան՝  
աղգին սպառութեան հրովարտակին պէս պատառ պատառ  
եղած հագուստ մը, ձեռքը արօր մը կայ՝ տկար, անուժ,  
երերուն, կտորած որքան Հայրենիքի փրկութեան յոյսը: Յոգ-  
նած ու վաստակարեկ, սակայն մտածկոտ կ'աշխատի իր ճա-  
կատագրին պէս կարծր և սեւ հողերէն քանի մը հատիկ դուրս  
բերել, որոնք անխիղճ կառավարութեան մը տրուելիք փրկ-  
կանքը պիտի ըլլան՝ քան թէ իր կեանքի սնունդը:

Արօտավայրերուն մէջ արածող կենդանիներն ալ խոր-  
հրդածող երեւոյթ մը ունին: Բլուրի մը գագաթին վրայ մէկ  
հատիկ սօսի մը կամ թթենի մը կ'երեւայ: Կուրջ, խորհր-

դածող դիրք մը առեր է ան, իբր թէ գիւղին ճակատագրին վկան, իր հովանիին տակ մշանջենապէս հանգչողներուն աղօթողը, մտերիմը, յիշատակարանն եղած ըլլար: Աւելի հեռուն, շարժի մը ասեմ տեղէն խախտելով, ս'վ գիտէ ս'ր հեղեղէն հո՛ն նետուած հսկայ ժայռ մը՝ մարդոց տկարութեան դէմ կը խորհրդածէ, պատկառազդս'ւ:

Ահ, Անաստուլի մէջ լսուած ամէնէն անհող քրքիչներուն մէջ իսկ խորունկ... շատ խորունկ խորհրդածութեան մը ողբագին արձագանդը կայ:

Այս քրքիչը, այս ողբը պիտի լացնէ ապագայ սերունդները և դուք ալ պիտի լաք, ս'վ ժամանակակից անգիտակիցներ...:

Ահա ես ալ կը խորհրդածէի ինչպէս ամէն իր... ինչպէս ամէն ոք:

Գեղացիք մի առ մի, սակայն մտածկոտ և խոկուն՝ սկսան քովս գալ: Անոնք որ մտքիս մէջն էին և ասոնք որ առջեւս են՝ վաղնջական ծանօթներ էին. խոկոյն սկսան խօսակցութեան:

Եթէ թշուառութիւնը, զգուշութիւնը, յուսահատութեան արհամարանքը մարմնանալ ուզեն, չեն կրնար տարբեր մարմին առնել քան մեր գիւղացիները:

Բայց ես կը սիրեմ խօսակցիլ այս կրօնքի և հայրենիքի եղբայրներուն հետ:

Ինձի համար այս խօսակցութիւնը պարտականութիւն մը, հակակշիռ մը, պաշտամունք մըն է: Հոգիս ուր որ տեսնէ աշխատասէր, անմեղ մարդ մը, կը փափաքի բարձրանալ մինչեւ Աստուած՝ պարուրուելով անարուեստ, պարզ խօսքերուն որ կուգան ջինջ սիրտերէ:

Խօսակցութիւնը տակաւ յանգեցաւ կառավարութեան՝ որ մեր մէջ ամէն տարտի, ամէն դժբախտութեան միակ պատճառը, ամէն ցաւի միակ աղբիւրը, ամէն թշուառութեան բացարձակ ազդակն է:

Կառավարիչը հոգիներ կը վառէ և օճախներ կը մարէ

եղեր . փոխ-կարավարիչը՝ կառավարիչին հլու , հնազանդ հետև-  
 ւող և ծառայող է եղեր : Այս կառավարիչին և փոխ-կառա-  
 վարիչին հարստահարութեանց ու աւերման գործիք եղողն ալ  
 Արդարութեան պաշտօնեաներն են եղեր :

Չեմ յիշեր ո՞ր կառավարիչին հին մէկ ոտանաւորը միտքս  
 եկաւ .—

Արդարութիւնը հարստահարեալներու ողբը պիտի  
 դադրեցնէր, սակայն աւանդ,  
 Հարստահարեալները կը գանգատին հիմակուան  
 արդարութենէն :

Արդարութեան պաշտօնեաները հարստահարութեան ու ա-  
 ւերման գործիք—ի՞նչ գործիք , իրենք իսկ հարստահարիչ և  
 աւերող են եղեր . . .

Ասիկա ո՛չ ոք կրնայ ուրանալ : Որովհետեւ ոչ ոք կրնայ  
 ուրանալ ճշմարտութիւնը՝ որ աչք կը ծակէ :

Ուղեցի հասկնալ թէ այս խեղճերը տասներկու տարուան  
 մէջ ի՞նչ գաղափար կազմած են պատժական խմատութեան  
 վրայ : Քանի որ կը տեսնեն , քանի որ կը զգան , մանաւանդ  
 քանի որ կը տառապին՝ անշուշտ ունենալու են , խորհեցայ ,  
 գաղափար մը , ներքին համոզում մը :

Հարցուցի .

—Արդարութեան պաշտօնեաները ձեզ ինչո՞ւ կը բան-  
 տարկեն և ի՞նչպէս կը թողուն :

Իրենցմէ ամէնէն երիտասարդները՝ որ ամենէն քիչ փոր-  
 ձառուներն ըլլալու էին , ամէնայն վստահութեամբ պատաս-  
 խանեցին .

—Մեզ կը բանտարկեն ամիս մը . . . երեք ամիս . . . հինգ  
 ամիս : Եթէ դրամ ունինք՝ կուտանք ու կ'ազատինք : Եթէ  
 ո՛չ , մեզ կը դատաւարտեն հինգ տարուան . . . եօթը տար-  
 ուան . . . տասը հինգ տարուան :

Ո՛վ ժողովուրդ , Աստուծոյ սիրո՞յն որ արդարութիւն կը  
 հրամայէ , մարգարէին սիրո՞յն որ արդարութիւնը կ'ուսուցա-



նէ և կը յանձնարարէ, Սալիֆաներու և Իսլամական սուրբերու սիրո՞յն, որ արդարութիւնը իրենց սկզբունք ըրած են, անգամ մը ուշադրութեամբ քննեցէք ներկայ վիճակը:

Հեռուները երթալու պէտք չկայ, վայրկեան մը, երկվայրկեան մը աչքէ անցուցէք բոլոր այն երեւոյթները որ կան ձեր տուներուն և խրճիթներուն ներսը, տեսէ՛ք թէ Սրբազան Արդարութիւնը ի՞նչ ազեղ ձեւ մը առած է անգութ Գահակալի մը ձեռքը:

Բաղէշի կուսակալութիւնը չորս հարիւր հազարէ աւելի բնակիչ չունի: Ասով ճանդերձ, Ասլիէյի կազմութենէն ի վեր միմիայն սոյն կուսակալութեան մէջ քառասուն հազարէ աւելի մարդոց քաղաքային իրաւունքներէ զրկման որոշում տրուած է:

Այս դժբաղդները՝ գիւղացի և հողագործ, մեծ մասով անմեղ են: Ենթադրենք թէ՛ յանցապարտ, ոճրագործ, արիւնարբու են... ո՞ր իրաւունքէն է որ զրկուած են, ո՞ր քաղաքացիութիւնն է որ կը խլուի իրենցմէ: Մէկդի թողունք քաղաքային իրաւունքները — որովհետեւ այդ տեսակ իրաւունք ո՛չ մէկ տեղ կայ — ,որքան ցաւագին, նոյնքան ծիծաղելի բան է քաղաքային իրաւունքներէ զրկել բազմամբոխ դժբաղդներ՝ որոնց վաչկատուն հանգստաւէտութիւնն իսկ ապահովելու անփութութիւն ցոյց կը տրուի:

Անէ՛ծք Ձեզի, ո՛վ հայրենիքի քանդիչներ:

. . . . .

ՍԻԼԷՅՄԱՆ ՆԱԶԻՑ

**ՍԻԼԷՅՄԱՆ ՆԱԶԻՑ**

— Թուրք գրականութեան ամէնէն վարպետ արձակագիրն է, մեծափարթամ, աղմկայոյզ ոճ մը որ ամէն գեղեցկութիւն ունի, առանց ուռուցիկ ըլլալու: Աղատութեան համար պայքարողներէն մէկը եղած է եւ վերի նամակը «էլ ձեզիտէ Մեֆրուպարը» գրքոյկէն քաղուած, ցոյց կուտայ թէ ո՛րպիսի ուժգնութեամբ պայքարած է բռնապետութեան դէմ:

Համիտեան շրջանին աքսորուած էր Պրուսա, եւ Սահմանադրութեան վերյայտարարութենէն ետք վարած է կուսակալի պաշտօններ:

Զաւակն է Տիարպէքիրլի Սաիտ փաշայի՝ որ նշանաւոր գրադէտպատմագիր մըն է:



## Կ Ո Տ Ր Ե Լ Է Ն Ե Տ Ք Ը



Հարկաւ ազնիւ յախճապակի էր այս սուրճի սկահակը իր պղտիկ պնակին մէջ, երբոր նուէր բերին ինծի օր մը:

Տուողը, բարեկամներէս մէկը, որուն պղտիկ ծառայութիւն մը մատուցեր էի, ըսաւ թէ չնչին բան մըն էր տուածը:

Բայց իր երթալէն վերջը, անուշադիր և հարեւանցի աչք մը պատցուցի վրան:

Ասիկա զատեր էր՝ որպէս զի սուրճս անոր մէջէն խմեմ և միշտ յիշեմ զինքը այդ առիթով:

Թափանցիկ խմորը, իրօք, ակասակին ազնուութիւնը երեւան կը հանէր, և Սէվրի հաշակաւոր արուեստարանին նշանը վրան էր, կարմիր պղտիկ բոլորակով մը, որուն մէջ 1844 թուականը կը կարդացուէր:

Բաւական ատեն գրասենեակիս փոշիներուն մէջ սպասեց, անկիւն մը դրուած. ևս, որ արուեստագան բաներու կարեւորութիւն կ'ընծայեմ, ասիկա իմ գրասենեակիս մէջ ունենալու փառասիրութեամբ բաւականացեր էի սկիզբը. յետոյ բոլորովին մոռցեր էի զայն. օր մըն ալ այս սուրճի ըմպանակը ծիծաղելի թուեցաւ ինծի իր անօգուտ սպասումին մէջ. խորհեցայ որ այս լքումէն աղէկ էր եթէ երբեմն անով սուրճ մը խմուէր. առի տուն տարի զայն:

Հոն՝ աւելի բախտաւոր չեղաւ. նիւթերն ալ մարդոց կը նմանին քիչ մը. իրենց ճակատագիրն ունին. ոչ ոք երեսը նայեցաւ աս խեղճ սկահակին. մէկ հատ մըն էր ու նմանը և օրինակը չկար, որպէս զի օրական գործածութեան մէջ ընդունուէր:

Պարզ զարդի համար տեղ մը գրինք. քանի մը օր վերջը հոս ու հոն նետուեր էր. անգամ մը պղտիկ զաւկիս ձեռքը տեսայ. հետը կը խաղար, ու ժամանակ կ'անցընէր. օրին մէկն ալ ձեռքէն վար ինկաւ, կտոր կտոր եղաւ:

Անցած օր անոր պղտիկ պնակը ձեռքս անցաւ . սրտի նեղութեան մէկ վայրկեանիս , անոր նուրբ գծագրութիւններն ու գունազեղ կիտուածները կը զննէի . ստուգի՛ւ գեղեցիկ արուեստի մը հրաշակերտն էր . դիծերուն շնորհալի ընդելուզմները , նկարէն երաններուն գիրկընդխառնումները ուշագրութիւնս գրաւեր էին . յանկարծ իրար փաթթուած երկու տառեր նշմարեցի , վրան արքայական գինանշանով . ճիշտ դիմացի կողմը շրջանակին , միեւնոյն գինանշանը ու միեւնոյն սկզբնատառերը :

Այս տառերը ֆրանսերէն V և P գիրերն էին , և ահա լոյսը խեղոյն ծագեցաւ մաքիս մէջ . Լուի-Փիլիբի կը վերաբերէր այս սուրճի սկահակը իր պնակով . Սէվրի արուեստարանին նշանին քով Փօնթէնէպլոյի գլեակին անունն ալ կար գրութեամբ , զոր հիմա կը նշմարէի :

Ա՛յ տարակոյս չկար : Ֆրանսայի թագաւորինն էր ասիկա . իր զարդարուն ու նրբակերտ յօրինուածքը բաւելու էր արդէն , ճանչցողի մը համար , մէկ նայուածքով ճշտելու թէ ասիկա սովորական մահկանայուի յատուկ բան մը չէր կրնար ըլլալ :

Եւ հիմա որ կտորած փշրուած էր այդ խեղճ սկահակը , որուն արժէքը չէի կրցած ըմբռնել , երկար տարիներ մնացեր էր քովս , ձեռքիս տակ . հիմա ո՛րքան կը զղջայի ըրածիս վերայ , ո՛րչափ կը կշտամբէի ինքզինքս՝ քիչ մը հոգ և ուշագրութիւն չդարձնելուս համար արուեստական ու պատմական այսքան թանկագին բան մը հասկնալու և պահպանելու :

×

Այս պղտիկ դէպքը կը թելագորէ ինծի կարգ մը խորհրդածութիւններ , որոնք այս տողերը կարդացողներուն միտքն ալ պիտի գան հարկաւ :

Ընդհանուր կանոն մըն է որ մարդիկ իրենց կենդանութեանը մէջ չճանչցուին ու չզնահատուին անոնցմէ , որոնց քովն ու մօտը ապրած են շարունակ . մահը , անդարձ կորուստը պէտք է գայ՝ որպէս զի անաչառ դատաստան մը ու արդար



վճիռ մը ընել կարելի ըլլայ . գերեզմանին անջրպետը պէտք է որպէս զի մեր ակնարկը կարենայ ճշտիւ տեսնել գիծերը այն գէմքերուն որոնք անոր միւս կողերքն անցած են հիմա . անոնց վերադարձին անկարելիութեան համոզումը պէտք է մեզի , որպէս զի կուրցած աշուրնիս բացուին ճշմարտութեան , ու գիշանինք խոստովանելու և հրապարակելու անոնց առաւելութիւնները՝ որոնց վրայ անդիտակցարար գուցէ չզջարէինք , ցորչափ կենդանի էին անոնք :

Կը խորհիմ որ բարեկամութիւնները , անձնուիրութիւններն ալ ասանկ են շատ անգամ . ոչ ոք ամէնադոյզն արժէք մը կուտայ այն սրտերուն , որոնք յօժարափոյթ ու լուռ հաւատարմութեամբ իրեն կը սպասեն . ու հարկ է որ այդ սիրտերը խորտակուին , որպէս զի կորուստին մեծութիւնը կարելի ըլլայ զգալ և չափել :

Այսպէս պատահեցաւ իմ սուրճի սկահակիս համար ալ . ես զայն ճանչցայ . . . կոտորելէն ետքը :

Գ. ԶՕՂԱՊ

## Լ ՈՒ Ս Ն Ի Ն Ն Ե Տ

Նորէն մութ է ամէն կողմ,

• Նորէն ծով ու լուսին . . . :

Աղամանդէ ծաղիկներ թափթփեր է ծովուն մէջ .

Լուսինն հիւանդ հեշտանքով,

Հորիզոնն ալ նուրբ ու սեւ սնգոյրներով պարուրուած՝

Խոր քունի մէջ է թաղուեր . . .

Ահա նորէն առանձին

Մնացի ես տխրագբաղ . . .

Ո՛վ լուսինս, զգացումիս հեշտ հուրին,

Դուն փոխանակ սփոփելու իմ հոգիս,

Խօսէ՛ , ինչո՞ւ վերստին

Կ'ուզես զայն ինձ յիշել տալ,

Որպէս թէ զայն իմ մօտս դուն փնտռել ուզէիր . . .



Գիշեր մ'առաջ շուքիդ տակ՝  
Ինձ հետ շրջող կինն այդ սէգ  
Հրաշագեղ չէ՞ր, ըսէ՛...:

Իր սպիտակ քօղին ներքեւ շղարչէ՝  
Կարծես թէ քե՛զ էր կեղծած...:

Որովհետեւ, դուն ալ, չէ՞,  
Նրբին ամպէ շղարշով երեսդ ամբողջ պարուրուած  
Սիրարբուքի մէջ էիր  
Մովուն հետ...

Ու մինչդեռ դուն այս գիշեր ալ գիրկընդխառն  
Քու սիրական ծովիդ հետ,  
Սհա ես,  
Յուսահատեր եմ կեանքէն...

Գթա՛ վրաս, սի՛րուն լուսնակ,  
Ու սրբտիս մէջ վնիտ սիրով սա բացուող  
Քերթուածներու փունջերէն՝  
Գնա՛ անոր պատմելու...

ԹԱՀՍԻՆ ՆԱՀԻՏ

**ԹԱՀՍԻՆ ՆԱՀԻՏ.** — Թահսին Նահիտ թուրք նորագոյն գրականութեան խոստմնալից դէմքերէն մէկն է, որ վերջին 5-6 տարիներու միջոցին կրցած է որոշ դիրք մը գրաւել թուրք երիտասարդ մտաւորականութեան մէջ: Ինք թէեւ դեռ չկազմուած գրող, սակայն հրատարակած է բազմաթիւ գլուխածրներ, որոնց մէջ թէ՛ ինքնատպու-  
թիւն կայ եւ թէ արժանիք: Այս շարքէն դուրս կը մնան, անշուշտ, Սահմանադրու-  
թեան վաղորդայնի գինովութեան մէջ իր գրած զանազան էջերը, ինչպէս Ժեոն-  
թիւրք անունով թատերասաղ մը՝ զոր գրած է թուրք գրագիտուհի Բուխսան Հիւվարայի աշխատակցութեամբ: Թահսին Նահիտ տեղ տեղ Սէմաօլիսթի անյաջող հակումներ ցոյց տուած է, սակայն, ամէն պարագայի մէջ, ունի լաւ սճ, լաւ ներշնչում եւ յաջող արձակ-քերթուածներ:





## ԱՐԴԻ ԱՐՈՒԵՍՏԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՇԻՆԻՆ ԲԱՂԴԱՏՄԱՄԲ

Արդարեւ, ամէն ժամանակի մէջ արուեստի տեսական գործը ամփոփած է իրական կեանքը: Եթէ մարդ քննէ արդիական հոգին, կը հանդիպի անոր մէջ աղաւաղումներու, աններդաշնակութեանց, հիւանդութիւններու, և, այսպէս ըսենք, զգայման ու կարողութեանց անդադանցութիւններու՝ որոնց հակափորձն է իր արուեստը:— Միջին դարուն մէջ, հոգեկան և ներքին մարդուն չափազանց զարգացումը, վսեմ և քաղցր անուրջին որոնումը, ցաւին պաշտամունքը, մարմնին՝ արհամարհանքը՝ կը տանին գերազրոյնուած երեւակայութիւնն ու զգայականութիւնը մինչեւ սերտութեան տեսիլքի ու պաշտումի: Ծանօթ են նմանութեան և Ֆիօրէթիթի, Տանթէի ու Փէթրարքայի տեսիլքները, ասպետութեան և սիրային դարպասներու նրբազգայիկ փափկութիւններն ու հրակայական յիմարութիւնները: Այս պատճառով, նկարչութեան և քանդակագործութեան մէջ անձնաւորութիւնները տգեղ են կամ գեղազուրկ, յաճախ անհամեմատ ու անկենդանական, գրեթէ միշտ նիհար, ցամքած, մահացած անձով և մտաւճիգ մտածման մը մէջ՝ որ կը խլէ իրենց աչքերը ներկայ կեանքէն, անչարժ սպասման կամ յափշտակման մէջ, վանքին տրտում քաղցրութեամբը կամ հոգեզմայլանքի ճառագայթումովը, խիստ դիւրարեկ և խիստ խանդավառ՝ կարենալ ապրելու համար և արդէն նշանո՛ւած երկնքին:— Վերածնութեան ատեն, մարդկային վիճակի համաշխարհային բարեղաւումը, վերագտնուած և հասկցուած հնութեան օրինակը, ազատագրուած և իր մեծ գիւտերովը հպարտացած մտքի թռիչքը՝ կը վերահորոգեն հեթանոսական զգացումը և արուեստը: Բայց միջին դարու հաստատութիւններն ու ծէսերը կանգուն կը մնան տակաւին, և Իտալիոյ ինչպէս Ֆրանսայի ամէնագեղեցիկ



գործերուն մէջ դուք կը տեսնէք դէմքերու և նիւթի ակնա-  
 բուխ հակադրութիւն , — մարտիրոսներ՝ որ շանթարձակ Ա-  
 րամազդներ կամ խաղաղ Ապոզոններ են , Ս . Կոյսեր՝ արժա-  
 նի պիղծ սիրոյ մը , հրեշտակներ Կուպիտոններու չափ շնորհա-  
 լի , երբեմն նոյն խակ Մագդաղինացիներ՝ որ Սերէնաներէն  
 խիստ քաջառողջ , և Սէն Սէպաստիէններ՝ որ Հերակլեսներէն  
 խիստ քաջառողջ . կարճ խօսքով , սուրբերու և սրբունիներու  
 հաւաքոյթ մը որոնք ապաշխարանքի և չարչարանքի գործիք-  
 ներուն մէջտեղ , կը պահեն այն քաջառողջութիւնը , գեղեցիկ  
 մարմնամօցնքը , խրոխտ կեցուածքը՝ որ պիտի պատշաճէր աղ-  
 նիւ կողովակներու և անիթերի ըմբիշներու երջանիկ մէկ տօ-  
 նին : — Այսօր մարդկային գլխուն խափանումը , վարդապե-  
 տութեանց բազմապատկութիւնն ու անհամաձայնութիւնը ,  
 ուղեղային կեանքի ծայրայեղութիւնը , հսկողական սովորու-  
 թիւնները , մայրաքաղաքներու արուեստական կեանքը և հե-  
 տաքրքրութիւնը՝ չափազանցած են ջղային յուզումը , չափն  
 անցուցած են զօրաւոր և նոր զգայութեանց պէտքին , զար-  
 գացուցած են խուլ տխրութիւններ , տարտամ բողձանքները ,  
 անսահման ցանկութիւնները : Մարդն այլևս ան չէ՝ ինչ որ էր  
 և ինչ որ թերեւս լուրջրած պիտի ըլլար մնալով միշտ , —  
 բարձր տեսակէ կենդանի մը , գո՛հ գործելով և մտածելով այն  
 երկրին վրայ՝ որ դինքը կը մնուցանէ և այն արեւակին տակ  
 որ պինք կը լուսաւորէ , — այլ առասպելական ուղեղ մը , ան-  
 հուն հոգի մը , որուն համար իր անդամները յաւելուածներ են  
 միայն և որուն զգայարանները ծառաներ միայն՝ անյա-  
 գո՛ւրդ իր հետաքրքրութեան և փառասիրութեանց մէջ , միշտ  
 վնասուելու և դիտելու ետեւէ , սարսուռներով և շաչիւններով՝  
 որոնք կը խառնակեն իր կենդանական կազմուածքը և կ'աւե-  
 րեն իր մարմնային հաստատութիւնը , տարո՛ւած ամէն ուղ-  
 ղութեամբ՝ մինչև իրական աշխարհի ծայրերը և երեւակայա-  
 կան աշխարհի խորութեանց մէջ , երբեմն գինովցած , երբեմն  
 ընկճուած իր ստացումներուն և իր գործին անբաւութենէն ,  
 կատղած անկարելիէն ետք կամ ամփոփուած արուեստի մը

վրայ, նետուած ցաւատանջ երազի մէջ, ներզօր և վեհաշո՛ւք որպէս Պէթհովէնը, Հայնէն և Կէօթիի Փառւսթը, կամ սեղմուած իր ընկերային խորշին ճնշումին տակ և մէկ կողմի վրայ ծուած մասնագիտութեամբ մը, մենամոլութեամբ մը՝ ինչպէս Պալզազի անձնաւորութիւնները: Այս մտքին այլևս Բաւականութիւն չեն տար ձեւակերտական արուեստները. ինչ որ զայն կը հետաքրքրէ՝ դէմքի մը մէջ անդամները, իրանը, ամբողջ կենդանի կազմածը չե՛ն. արտայայտիչ գլո՛ւխն է, շարժուն դիմագծութիւնն է, հոգի՛ն է թափանցիկ՝ արտայայտուած շարժու. ձեւով, կիրքը կամ մտածումն է անմարմին, համակ բարբախուն և զեղուն ձևին և արտաքինին ընդմէջէն. եթէ կը սիրէ ան քանդակային գեղեցիկ ձեւը՝ դաստիարակութեան հետեւանքով, երկար և յառաջընթաց մշակումէ մը յետոյ, արուեստապաշտ խորհրդածուած ճաշակի մը պատճառով է որ կը սիրէ: Բազմապատիկ աշխարհաքաղաքացի, ան կրնայ շահագրգռուիլ արուեստի բոլոր ձեւերովը, անցեալին բոլոր պահերովը, կեանքի բոլոր աստիճաններովը. կրնայ ճաշակել օտար և հին ոճերու վերածնունդները, գեղջկական, խուժանային կամ բարբարոս բարքերու սեսարանները, տարաշխարհիկ և հեռաւոր բնանկարները, ամէն ինչ որ սնունդ մըն է հետաքրքրութեան համար, փաստաթուղթ մը՝ պատմութեան համար, նիւթ մը՝ յուզման. ան արուեստէն կը պահանջէ անակնկալ և ուժգին զգայնութիւններ, գոյներու, դիմագծութեանց և կիրքերու նոր տպաւորութիւններ, շեշտեր՝ որ ամէն գնով զինքը յուզեն, խթեն կամ զբօսցնեն, կարճ խօսքով, ոճ մը որ երթայ շափաղանցութեան, կանխամտածութեան և ծայրայեղութեան:

Այսպէս չէր սակայն հին Յունաստանի մէջ. զգացումները հոն պարզ էին, և հետեւաբար ճաշակն ալ պարզ էր: Դիտեցէք անոնց թատերախաղերը. դուք չէք գտներ անոնց մէջ բարդ և խոր նկարագիրներ՝ նման Շէյքսպիրիներուն. չէք գտներ խելացի կերպով հիւսուած և քակուած հանգոյցներ. չէք գտներ անակնկալներ: Թատերախաղը կը թաւալի

դիւցազնական հէքեաթի մը վրայ՝ զոր անդադար լսած են իրենց մանկութենէն սկսած . անոնք առաջուց գիտեն խաղին դէպքերը և անոնց ստանալիք լուծումը :

Գալով դէպքերուն , անոնք ամէնքն ալ ընտանեկան փոքր տեսարաններ են , որոնց վսեմութիւնը ամբողջովին կը կայանայ գերընտիր ընականութեանը մէջ . ոչ մէկ ուժգին շեշտ , ոչ մէկ բարկ և բուռն գիծ . մարդ հազիւ կը ժպտի , և սակայն կը դիւթուի՝ ինչպէս դաշտերու մէկ ծաղկին կամ վճիտ առուի մը առջեւ : Անճնաւորութիւնները կը նստին , կ'ելլեն , իրարու կը նային , ըսելով սովորական բաներ , առանց աւելի ճիգերու՝ նման այն դէմքերուն , որ նկարուած են Պոմպէի պատերուն վրայ :

Հետեւեցէք այս տրամադրութեան՝ անոնց արուեստին և մասնաւորաբար քանդակագործութեան մէջ . մտքի այս պայմանին շնորհիւ է որ անոնք քանդակագործութիւնը հասցուցած են կատարելութեան և որ ճշմարտապէս անոնց ազգային արուեստն է , որովհետեւ չկայ արուեստ մը որ այնքան աւելի պահանջէ պարզ միտք մը , պարզ զգացումներ և պարզ ճաշակ :

ԻՓՈԼԻՏ ԹԷՆ

## Տ Ի Գ Ր Ի Ս

Արարական հանճարին չափ ընդարձակ , արարական հոգիին չափ զօրաւոր՝ Տիգրիս կը հոսի . . . երբեմն տղմագոյն ալեծուփ ընդարձակութիւն մը , երբեմն երկնագոյն մետաքսեայ ժապաւէն մը . . . հիմա Պաղատատի փողոցներուն պէս ոլորապտոյտ , քիչ մը աւելի վարը՝ Փարիզի պողոտաներէն աւելի շիտակ . . . այստեղ՝ կը գալարուի ցաւագին , անդին՝ կը ծաւալի հանդարտօրէն . . . :

Այս նուիրական գետը՝ որ իր գրկին մէջ բեղմնաւոր հսկայական գարուն մը կը կրէ , Գուրնայի մօտերը՝ մարդկային շէնքերուն մէջէն ազատելով երբ արմաւենիներու անտառները կը թափանցէ , կարծես թէ՛ իր սիրելի միջավայրը



կը հասնի: Իր ալեակները ա՛լ աւելի ազատ, ալ աւելի շա-  
ռաչուն, ալ աւելի պատկառազգու և համարձակ են...

Քարեխառն և հիւսիսային երկիրներուն մէջ բոյսերը  
կ'ապրին մարդոց աշխատանքին շնորհիւ. հոս, այս այրեցեալ  
գօտիներուն տակ, ընդհակառակը, մարդիկ կարծես կեանքը  
կը վայելեն սունկերու և խոտերու, մանաւանդ արմաւենի-  
ներու շնորհիւ...: Քանի կը դիտեմ ու կը տեսնեմ, կը հա-  
ւատամ թէ այս երկրին իրական բնակիչները՝ այդ պատկա-  
ռանքով լի ծառերն են. մարդկային զաւակները անոնց հո-  
վանիլն հիւրերն են միայն...:

Հիմա աչքիս առջեւ կայ անսովոր արմաւենի մը. Տէ՛ր  
Աստուած, ո՛րքան վե՛հ և ինքնավստահ ազատութեամբ մը  
բարձրացեր է. գագաթին ստերնն ու տերեւները որքա՛ն ար-  
տասովոր շքեղութեամբ արձակուեր են ու կը տարածուին...:  
Այս ծառը՝ իր բովանդակ շուքով ու վեհութեամբ կ'աղաղակէ  
թէ՛ այս հողը ի՛նչ է, իրմէ զատ մէկը չի կրնար այս հողին  
բնական տէրն ըլլալ...:

Հոն ուր արմաւենիի անատունները կը վերջանան՝ իրենց  
նաութագոյն գլխանոցներով, կեանքը կը մարի դետափին  
վրայ. ահա՛, այս պահուս, հորիզոնին շրջագիծէն ներս, անա-  
պատին տխրութիւնը կ'այլայլեն միայն աւազի բլուրները՝  
գերեզմանի չափ փոքր և դեղնորակ...:

Այլեւս երկու կողմերնիս՝ աւազի անասնման ծով մը...  
կը քալենք անապատին համատարած լռութեան մէջէն...  
քար չկայ, ծառ չկայ, կենդանի չկայ, շուք չկայ. լոյս,  
ամէն կողմ շրայուցիչ միօրինակ լոյս մը. իբրեւ նշանակ շար-  
ժումի՝ միայն լոյսի խաղեր կ'երեւին: Շրջապատի բոլոր իրե-  
րուն մէջ թմբիր մը, անձայնութիւն մը, լոյս մը կայ՝ որ  
մշտնջենական և անխփփփ կը թուի: Այս երկու ասիունք-  
ները կարծես բնաւ չեն շարժիր, բնաւ չեն աղմկեր, բնաւ  
չեն ստուերաւորուիր. կենազրաւ ծներ են սկիզբէն և յաւի-  
տենականութեան պիտի անցնին անկենդան...:

Այս ոսկիի անապատը անմարդաբնակ բացուեր է, ազատ

մնացեր է արուեստի ձեռքէն, սուր է անվախճանօրէն նիրհուն գեղեցկութիւն մը . . . :

Այլ եւս տեսածներս պիտի նշանակեմ սինէմաթօկրաֆի մը պէս հաւատարմօրէն և անսկիզբէթ .— ահաւասիկ աւազի աւերակի մը վրայ քանի մը անթուրծ աղիւսի խորանտրդով կազմուած աղքատ գիւղ մը, հողի մը գունաթափ, անապատի պէս անկեանք, լքուած աւերակոյտէ մը աւելի ամայի . . . կարծես գիւղ մը որ դոյապեր է երբ աւազները ցեխոտած և ուռած են :

Եթէ մէկ կողմը չտեսնեմ պզզած քանի մը պէտեվիներ, պիտի համոզուիմ թէ կուղբեր են որ կառուցած են այս տըխրաբոյր գեղը որ այնքան խնդճուկ, այնքան անհաստատ, այնքան նախնական է . . . :

Այս պէտեվիները ո՛րքան տարօրինակ դժբաղդ մարդկային բոյսեր են .— ո՛չ լուրջ ուղեղային աշխատանք, ո՛չ ալ մկանային մեծ ճիգ . կենդանական բոլոր ուժը կը վաանուի պառկելու, մարսելու և սերնդագործելու . . . կը հասնի արմաւենիի բունի մը պէս, կը մեծնայ, կը պտղաբերի և . . . կը չորնայ . ահա՛ւասիկ անապատաբնակի մը համառօտ կենսագրութիւնը :

Բոլոր պէտեվիները չորս բանէ կը գանգատին .— ճանճէն, տապէն, անօթութենէն և հարկահաւաքներէն : Ճանճերը կը վռնտէ, տապին դէմ կը հողմահարուի արմաւենիի տերեւներով, իր փորը կշտայնելու համար անչափելի բրինձ կուլ կուտայ, իսկ երբ հարկահաւաքները կը յիշէ՝ ակռաները կը կճրտէ պեխերուն սակէն . . .

Բոլոր այս անապատի զաւակներուն, մեծին թէ փոքրին քով, մանկական սիրուն հոգի մը կայ .— ամէն բանէ ուրախութեան և քրքիչի բաժին մը, ամէնէն անկարելոր միջադէպէն խօսուըռտութի անվերջ նիւթ մը կը տանին . շուք մը, ոչինչ մը շարունակ կը խօսեցնէ և կը խնդացնէ ժամերով . երբ չեն քնանար՝ կը խօսին ու կը խնդան, կը խնդան ու կը խօսին . . . անոնց համար աշխարհ մեծ խաղալիկ մըն է, և

աշխարհի դէպքերը՝ խաղեր են . . . պէտէվին քիչ կ'աշխատի , հարեւանցի կ'աշխատի , և կ'աշխատի միմիայն կրկնելու համար այն ամէնը՝ որ իր պապերէն ժառանգ մնացած է : Փոփոխութիւնը չի սիրեր , իրերու խորքին անտարբեր , անցեալը մոռցած , գալիք օրերը կը նկատէ որպէս սաղմ՝ որ տակաւին չին արգասաւորուած . իր շահ ու զէնի հաշիւը քսանրչորս ժամուան ժամանակամիջոցով մը կը սահմանափակուի . ուրախութեան համար հոգի կուտայ , գոյնի և փայլի սիրահար է , կը խնդենայ անուշահոտութեան և շաքարեղէնի համար . . . երջանիկ է այն առաւօտը՝ ուր մեզը կ'ուտէ , դժբախտ է այն գիշերը՝ երբ սոխով կ'ուրաւանանայ . իր երջանկութեան կշիռը կը շարժի մտքով ու սոխով : Քիչ մը անուշահոտութիւն , պատճառ մը անուշեղէն և փայլալու համար երբ կին մը ունենայ՝ աշխարհի ամէնէն երջանիկ ինքնակայն է : Անկողինը՝ աւազ , վերմակը՝ երկինք , ամէնէն գեղեցիկ երազը ոտ մը յասմիկ , սկահակ մը վարդաւենի և կոնիկի նայուածքով լեյլա մը : Արդէն ըսի , երախայ մը և լաւ երախայ մը . . .

Ամէն գեղ իր ուշագրաւ հպատակ անասուններն ունի : Ահաւասիկ ուզտեր՝ որ իրենց շուրջի պատերուն և խրճիթներուն գաճաճութիւնը իրենց երկայն վիզերումն արհամարհելով , կ'աւազեն , կը պոռոչեն . . . ահաւասիկ այծի հօրան մը , բղթակով անապատին տխեղձ գեղմը՝ որ մոխրագոյն մացառ մըն է միայն . . .

Քետարէն շուն մը , շոգենա ին կը հաչէ , հաւերը աւլուքի մէկ դէզէն միւսին կը վազեն . մէկ քանի աղաւնի օղին մէջ կը բարձրանան . . . գոմէշ մը գլուխը դէպի գետը երկնցուցեր , անմիտ ճակատին շքեղ կոտոշները կը դիտէ ջուրին մէջ , երբեմն կը ծռի և գետէն կը խմէ երկինքի ցօլքէն լայն ումպ մը :

Մերթ խրճիթի մը ծակէն կնոջական գլուխ մը դուրս կ'ելլէ . մունջ , զարմացկոտ , բերանը պատռած՝ ապուշ ժպտով մը , դէմքը համակ չոր կաշիէ դիմակ մը . . . ամբողջ զարդարանքը , զգեստը , արդուզարդը տղմագոյն լաթէ մը կը



բաղկանայ : Այդ կիները իրենց բոլոր երեւոյթին մէջ այնքան զուրկ են կեանքէ՝ որ անոնցմէ իւրաքանչիւրը կը թուի սեւ պատանքի մէջ փաթթուած անհոգի մարմին մը : Մեզ կը դիտեն իր որսին նայող վարանոտ եղնիկի մը նայուածքով . անոնց համար ամէն այր մարդ՝ բռնակալ տէր մըն է :

Պէտէվի տղաքներն ե՛ն որ ամէնէն խորունկ գուժը կը շարժեն . — թեւերնին մէյմէկ բարակ ճիւղատ, աչքերնին լի տառապանքի անփայլ ժպիտով մը , իրենց ամբողջ մարմինը՝ որ մուժ կապոյտ լաթէ շապիկի մը մէջ կը շարժչտի , կմախքի մը պէս նիհար , տեղոյն և վատուժ է . . . մէկ հատիկ արմաւի կամ պատառ մը հացի յոյսով ժպտուն և աղմկալի՛ր՝ կը վազեն վայրկեաններով , շոգենաւին կը հետեւին և գետափը կը կէտադրեն իրենց սեւ մարմիններով . . . ա՛խ , այս Արաքի խեղճ ձագուկները . . .

Անտապատները բնական մէկ ինքնակալ միայն ունին , իրենց վրայ ս՛ր դրօշակն ալ ծածանի , — ա՛րեւը . . . : Արեւը , միայն արեւը կը կառավարէ այս անվերջ միայնութիւնը , իր լուսեղէն և հրաջերմ ճառագայթներովը : Կարծես հոս արեւը բոլոր իրերը կը վառէ , կը բոցավառէ :

Արեւածագէն մինչև մայրամուտ՝ շրջապատի բոլոր մարմինները լուսեղէն երփներանգ խաղերու մէջ կը լողան . երկինքը , բլուրները , անաստառը , հորիզոնը և նոյն խակ գետինն ջուրը արշալոյսէն մինչև իրիկմուտի պահը գրեթէ ամէն որ ցոյց կուտան վարդի , ոսկիի , զմրուխտի , եղրեւանիի , յակինթի , լուրթ կապոյտի բոլոր երփներանգները . . . հոս լոյսը ամէն որ կը ծագի , կ'երանգաւորուի , կը շողայ , կը սարբալուծուի , կը հաւաքուի , կը հալի և կ'անհետանայ . յետոյ գիշերը՝ որպէս աստղերու անձրեւ , կը վերապրի գետինն խորութեանցը մէջ . . . .

Հիմա կ'ապրինք ամէնէն անուշ ժամը , արեւհատնումի պահը : Գետը զօծուեցաւ արեւամուտի հորիզոններուն յակինթի և սաթի ցոլքերովը : Կամրջակին ճամբորդներուն մէջէն մուէզլլին մը աղօթքի պահը ազդարարեց . — գիշերային

լուսթեան մէջ դողացող այս հրաւերի ձայնը՝ բիւրեղային, ինքնամփոփող, կարճ դադարներով ընդհատուած, կը թռչի, կը բարձրանայ, երկինք կը սաւառնի՝ կարծես Աստուծոյ դահլին կը հպի, — Ալլահ, էքպէր, Ալլահ էքպէր . . . :

#### ՃԷՆԱՊ ՇԷՀԱՊԷՏՏԻՆ

**ՃԷՆԱՊ ՇԷՀԱՊԷՏՏԻՆ.** — Ծնած է Մանասթըր, գրականութիւնը իր մէջ ժառանգական հարստութիւն մըն է: Հայրը եւ մեծ հայրը, ինչպէս նաեւ իր երկու եղբայրները՝ ունեցած են գրական աշխատութիւններ: Պոլսոյ բժշկական համալսարանի ուսանող եղած ատեն՝ արդէն խոստմնալից գրագէտ մըն էր, երբ յետոյ չորս տարի Բարիզի ուսանողական կեանքին միջ, մօտէն ուսումնասիրեց ֆրանսական արուեստն ու գրականութիւնը:

Իր վերադարձին, Քէմալ-Համիտ-էքրէմ սերունդը հրապարակէն սրբուած էր եւ կը մնային Նաճի ու Նաճիականները՝ իրենց տժգոյն, յետադարձ գրականութեամբ: Չեւի եւ խորքի կրկին տեսակէտներէն գրական վեանսրոգումի մը պէտքը, միացուց գեղարուեստասէր երիտասարդ գրագէտները եւ կազմուեցաւ նոր դպրոց մը, իր «Միֆրեպ» պարբերականով՝ որուն խմբագրապետութիւնը ստանձնեց Ճէնապ Շէհապէտտին պէյ: Քիչ յետոյ երբ Սերվիքի Ֆիկուռնի խումբագրապետութիւնը տրուեցաւ Թէվֆիգ Ֆիքրէթ պէյի, «Միֆրեպ»ի բոլոր աշխատակիցները իրենց ժամադրավայր ըրին սոյն հանդէսը որուն թուրք գրականութեան պատմութեան մէջ կատարած դերը շատ մեծ եղաւ: «Միֆրեպ»ի եւ «Սերվիքի Ֆիկուռնի» խմբագիրներն ու աշխատակիցները արեւմտեան մտածաւաչութիւնը, իմաստասիրական մտքերը, գեղարուեստը եւ գրական շարժումները կը փոխադրէին Թուրքերուն մէջ, լեզուով մը՝ որ թօթափած էր պարսկա-արաբական բառային արուեստներու ծանրութիւնը: Ճէնապ պէյ գրական այս բեղմնաւոր շարժումին մէջ իր փառքի տեղն ունի՝ ճիշտ Խալիտ Չիայի եւ Թէվֆիգ Ֆիքրէթի մէջտեղ:

Իբրեւ քերթող, թուրք գրականութեան ամէնէն հմայիչ դէմքն է, իսկ իբրեւ արձակագիր, ոչ ոք կրնայ բաղդատութեան դրուել իր հետ, որովհետեւ եթէ չունի Խալիտ Չիայի նկարուն ոճը՝ որ մանրամասնութեանց հիանալի պատկերները կը գծէ, Ճէնապ Շէհապէտտին իր աննման հեգնութեամբ, իր գաղափարներու վճիտ պայծառութեամբ, իր նախադասութիւններու հոյակերտ կազմուածքով՝ իր ինքնուրոյնութիւնն ունի. ահա թէ ի՛նչու թուրք երիտասարդութիւնը կը ցաւի որ Չճ տարուայ այս գրական մեծ տաղանդը սկսած է շատ ցանցաւորէն միայն երեւնալ: Իր դործերն են Հան Եօյրլեսա, Էվրագը Էյվալ, Աֆագը Իրագ:

## Գ Ի Ի Տ Ի Ն Փ Ա Ռ Ք Ը

Մեսրոփայ, հայ դարերու դիմաց կեցող՝  
 Դուն ադամանդեայ ապառաժ.  
 Դուն մանուկներու մերկ ուղեղէն  
 Մինչեւ հանճարը ցոլքեր ցանող,  
 Գիտակցութեանց անզիւտ փարոս...  
 Դուն որուն կոփիւնը կռանին,  
 Ժամերուն պէս, ըռպէին հետ անդադար,  
 Իմացական թանգարանին արձանները մեզ կը ձուլէ...  
 Դուն աննինջ հսկող, դուն տիտանեան Տեսանող,  
 Մեր մէն մի խօսքին, մէն մի շունչին  
 Գեղեցկածայն բացատրիչ...

Դուն բարբառի արարիչ, Բանի իշխան,  
 Դուն անբամբ բաւիջ տեւողութեան,  
 Դուն գոյացութեան արզաւանդ հայր,  
 Դուն լոյսի անիւ, դուն հաւատքի հրաւէր,  
 Դուն հայրենի հողին վրայ մրրկին պէս բարձրացող  
 Անտառ անհուն, անտառ սրտի,  
 Որուն մէն մի հաստատարուն ծառերն հսկայ,  
 Մէկ մէկ քնար, մէկ մէկ փանդիւռ են մեր շունչին...  
 Մէկ մէկ շեփոր մեր հագագին ռազմական,  
 Մէկ մէկ պատնէշ նակատագրի պատուհասին...  
 Դուն անվատնելի ցորեանի դաշտ, դուն ձրի հաց,  
 Դուն հունձք հարուստ, եւ դուն հնձան հրաշեկ,  
 Դուն արբեցութեանց եւ զինիի աւազան,  
 Որուն մէջ ես ալ ոսկի սափորս եմ մխրճեր...  
 Արեւներու ծարաւէս խենթ...  
 Դուն մեծաթափանց նայուածքներով առաքեալ,  
 Դուն էիր որ զքեզ երգող ցեղդ այսօրուան,  
 Հեղիններէն ե՛ւ հանճարեղ եւ հրավա՛ռ,



Ու աշխարհակալ մեծ Հռովմի որդիներէն  
 Ու հրապաշտ Պարսիկներէն դրացի,  
 Մայր-բարբառ-իդ հիմնաքարովը յակինթ,  
 Հայկազունեաց մեր շառաւիղն ազատեցիր...:  
 Դուն երկրո՛րդ Աստուած,  
 Եւ մտածման Դո՛ւն առա՛ջին արարիչ...:  
 Դուն բեղուն բարիք, սրտի աղբիւր,  
 Գոյներու գանձ, գթութեանց գահ,  
 Դուն թռչող դարերը մէկգմէկու կամարող՝  
 Կամուրջ անգիծ, ուրկէ ցեղդ միլիոններով՝  
 Կամ պերճօրէն կամ վատաբար,..  
 Կեանքէն ի մահ կուգայ կ'անցնի...:  
 Դուն Հեյլէններէն հռչակուած,  
 Մեծատիտղոս Ա.կումիդ,  
 Ռ՛վ մենակեաց, ռ՛վ Մագիստրոս, ահաւասիկ,  
 Երկու Հայքերն «Ովսաննա՛յ քեզ» կը գոռան...  
 Եւ ովսաննայ Վաղարշապատի Հայրապետին  
 Սահակ Պարթեւ զուգակշիռ արբանեակիդ,  
 Եւ Վռամշապուհ Արքային,  
 Որովհետեւ քու մեծ գիւտիդ զօրավիգ՝  
 Մէկն իր Խաչին, միւսն իր Սուրին համազօր  
 Քու քայլերուդ հետ՝ քալելով՝  
 Արարատեան արշալոյսին,  
 Դպրութեանց դուռը մեզ բացին...:

. . . . .  
 Եւ այսօր, քու սրբութեամբդ սնած՝  
 Ես ապաժաման քնարահար,  
 Եւ անվճար ու անարժան երախտագէտ,  
 Ես՝ քու ցեղիդ հոգիին հայելին քեզ կը բերեմ...  
 Աչքերուս մէջ անոր աչքէն հուր առի...  
 Ու իմ խօսքերս անոր սրտէ՛ն եմ քաղեր,



Եւ ինչ որ կարդաս ճակտիս վրան,  
 Ինչ որ կարդաս ժպիտիս մէջ՝  
 Անոր Յոյսովն եմ ես գրած... :  
 Եւ թող տուր այսօր, ո՛վ Մեսրոպ,  
 Որ՝ Հայոց հողէն մինչեւ աստղերը հասնող  
 Քու ոսկիէ սանդուղէդ վեր բարձրանամ,  
 Եւ հաստատաքայլ, աստիճանէ աստիճան,  
 Ու պսակէ ի պսակ, եւ լոյսէ ի լոյս,  
 Իբր զաւակ մը մտածումիդ,  
 Ես ի քե՛զ գամ, իմ այս երգս երգելու... :

ԱՏՈՄ ԵԱՐՃԱՆԵԱՆ





# ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ



Յաջորդ էջերով, ընդհանուր գի-  
ծերու մէջ կը ներկայացնենք գրա-  
կան գլխաւոր սեռերու էութիւնն  
ու զարգացումը՝ զանազան Երջան-  
ներու եւ սարքեր երկիրներու մէջ:





# ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ



Գրականութիւնը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ մէկը ամէնէն նշանաւոր ձևերէն, որոնց միջոցով ազգ մը երեւան կը բերէ այն ոգին՝ որ յատուկ է իրեն, այն կեանքը՝ որ կը կրէ իր մէջ: Ազգի մը ոգին կ'արտայայտուի իր կրօնքովը, իր օրէնքներովը, իր բարքերովը, իր լեզուովը, իր գիտութիւններովը, և իր արուեստովը. ասոնք ամէնքն ալ իրարու հետ կապ ունին և կը լուսաբանեն դիրար: Առանց նախապէս տեղեակ ըլլալու ազգի մը քաղաքակրթութեան ընդհանուր պայմաններուն, կարելի չէ ըմբռնել անոր արուեստները, որոնց կարգէն է և Գրականութիւնը (Թատրոն, Բանաստեղծութիւն և Արձակ):

Այս պատճառով ալ, որպէս զի կարելի ըլլայ խորապէս ըմբռնել ո և է ազգի գրականութիւնը և ճշտել անոր արժէքը, անհրաժեշտ է դիմել այդ ազգին պատմութեան և ուսումնասիրել անոր քաղաքակրթութիւնը: Անհրաժեշտ է տակաւին այդ Գրականութիւնը բաժնել զանազան շրջաններու՝ համաձայն իրեն ծնունդ տուող ազգին կրած պատմական բարեշրջութեան, հասկնալ իւրաքանչիւր շրջանի կրօնական ու քաղաքական վիճակը, բարքերն ու սովորութիւնները, տնտեսական ու կլիմայական պայմանները, որոնց ներգործութեան տակ արուեստագէտը շնչած, ապրած և արտադրած է իր գործը:

Ինչպէս որ պուտտայական մը և իսլամ մը, կաթոլիկ մը և բողոքական մը՝ չեն մտածեր, չեն դգար, չեն դատեր և չեն գրեր նոյն եղանակով, այնպէս ալ բացարձակ միապետութեան մը հպատակը, չափաւոր սահմանադրութեան տակ

ապրող քաղաքացին և հանրապետական մը չեն մտածեր, չեն զգար, չեն դատեր և չեն գրեր միևնոյն եղանակով: Եւ այս հանգամանքներուն վրայ պէտք է աւելցնել տակաւին երկրին կլիմայական ազդեցութիւնը՝ որ նոյնպէս իր որոշ կնիքը կը դնէ մտածման, զգացումի և անոնց արտայայտութեան ձևին վրայ. — մշուշապատ, ցուրտ և արևազուրկ հիւսիսի գրականութիւնը՝ խորապէս կը զանազանուի փողփողուն, սաք և արփաւէտ հարաւի գրականութենէն:

Եւ սակայն սխալ պիտի ըլլար այս իրողութիւններէն հետեւցնել թէ ազգի մը գեղարուեստը արդիւնքն է ամբողջովին ու միմիայն այդ ազգին կրօնական ու ընկերային, քաղաքական ու կլիմայական, տնտեսական ու քաղաքակրթական ազդակներուն: Ճիշտ է, այդ բոլորը կը ճառագայթեն անոր մէջ և կը բացատրեն զայն, բայց և այնպէս անիկա գոյութիւն ունի նաև անկախ այդ բոլորէն՝ ըլլալով ինքնիրմով որպէս նպատակ մը, այսինքն արտադրել գեղեցիկ գործեր: Իսկ Քեղեցկութիւնը անկախ է ժամանակի և տեղի արտաքին պարագաներէն: Այսպէս նաև կարելի է մեծ արուեստագէտի մը գործին մէջ տեսնել զրոշմը իր ցեղական ոգիին և ազդեցութիւնները իր միջավայրին ու ժամանակին, կարելի է բացատրել և հասկնալ զայն՝ այդ ազդեցութիւններուն լոյսովը, բայց և երբեք կարելի չէ ո՛չ անտեսել և ո՛չ ալ ժխտել այն ստեղծագործ կարողութիւնը, հանճա՛րը, որ անհատը բարձրացուցած է իր ժամանակակիցներէն վեր և անոր մտքի արտադրութեանց սահմանած է յաւիտենական կեանք: Անհատին ստեղծագործական դերը նոյնքան մեծ է և հզօր՝ որքան ցեղին, միջավայրին և պատմական ազդակներունը գեղարուեստական գործին մէջ:

Գրականութիւնը, որպէս մէկ դաշտը մարդկային մտքի ստեղծագործութեան, նախապէս փոքր ու սահմանափակ, ընդլայնուած, ընդարձակուած է աստիճանաբար՝ որքան ընդլայնուած են մտքի ծանօթութեանց սահմանները և առաջ խաղացած մարդկային քաղաքակրթութիւնը, երթալով պարզա-

գոյնէն դէպ ի բաղմաձեւութիւն : Այսպէս ուրեմն Գրականութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ հայելի մը, ուր կը ցոյանան զինքն արտադրող ազգին կենսագործ ուժն ու կարողութիւնները, անոր քաղաքակրթական ընդունակութիւնները ու աստիճանը :

Գրականութիւնը ունի արտայայտութեան երկու ձեւ, — Բանաստեղծութիւն և Արձակ :

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Բանաստեղծութիւնը, ընդհանուր սահմանումով մը, կարելի է ըսել թէ զգայու և արտայայտելու եղանակ մըն է՝ որ գոյութիւն ունեցած է ամէն երկնքի տակ, սկսած ժողովուրդներու ամէնէն հախնական ժամանակներէն մինչեւ ամենաբարձր քաղաքակրթական շրջանները, մէկը մարդկային հոգիին էական արտայայտութիւններէն, որ կը ցոյացնէ իւրաքանչիւր ազգի և իւրաքանչիւր դարու ոգին : Պարզ խօսքով, ստեղծագործութիւն մըն է Բանաստեղծութիւնը :

Բայց, որովհետեւ ասիդերական է ան և ենթակայ անդադրում բարեշրջութեան՝ դժուար է բացարձակ սահման մը տալ իրեն : Սա է միայն ճշմարտար թէ՛ մարդկային հոգին է որ ինքզինք կը թարգմանէ Բանաստեղծութեան մէջ, իր ներքին յուզումներովն ու գայարումներովը, , բնութենէն ստացած իր բաղմազան ու անհուն ապաւորութիւններովը, զինքը պաշարող խորհուրդներուն սարսուռովը, իր վշտերովն ու հրճուանքովը, իր խանդավառութեամբն ու խտէպներովը : Ահա էութիւնը Բանաստեղծութեան :

Բանաստեղծութիւնը հախընթաց է Արձակէն՝ որ մտածողութեան լեզուն, մտածողութիւնը թարգմանելու ձեւն է : Նախնական մարդը բաղդատելէ, արամաբանելէ և եզրակացնելէ առաջ, նախ կրցած է զգալ, — այսինքն ունեցած է վիշտ ու բերկրութիւն, , բաղձանք և կիրք, որոնք արտայայտած է իրրեւ ճիշ, իրրեւ ձայն և իրրեւ երգ : Եւ ծնած է



Բանաստեղծութիւնը , որ ապա դարձած է արուեստ մը , և իբր այդպիսին՝ ունի իր քեֆնիք զանազան ձեւերր : Եթէ դժուար է բացարձակօրէն սահմանել Բանաստեղծութեան էութիւնը , կարելի է սակայն միւս կողմէն տեսնել թէ ի՞նչ է այդ վսեմ արուեստին ձգտումը , ի՞նչ է անոր նիւթը և ի՞նչ են անոր զանազան ձեւերր :

Քերթողական արուեստին ձգտումն է , դիմել զգայականութեան՝ ո՛չ թէ մտքին , մտատեսական գիտակցութեան՝ ո՛չ թէ արամախոհութեան , երևակայութեան՝ ո՛չ թէ տրամաբանութեան : Բանաստեղծութիւնը կը ջանայ ոչ թէ ապացուցանել , այլ յուզել և սրտին մէջ արթնցնել երկարատև արձագանգներ :

Գալով իր ձեւերուն և նիւթին , կը մնայ միայն ուսումնասիրել այդ ձեւերը և անոնց նիւթը , որոնք պահպանելով հանդերձ իրենց հիմնական ձգտումը , սակայն նոյնպէս ժամանակէ ժամանակ և միջավայրէ միջավայր կրած են որոշ ներդրութիւններ և զգեցած են զիրենք ստեղծագործող ժողովուրդին , դարուն և հանճարին կնիքր :

Բանաստեղծութիւնը սկիզբէն արտայայտուած միմիայն շտիական ձեւով (ոտանաւոր) , հետզհետէ աւելի լնդլայնուած է և այսօր կը մշակուի հաւասարապէս նաև Արձակով ալ :

Ամբողջական Բանաստեղծութիւնը կարելի է ըսել թէ Քնարական բանաստեղծութիւնն է , բայց և կան երեք գլխաւոր ձեւեր , — Դիւցազներգական , Քնարերգական և Թասերական :

## Ա. ԴԻԻՑԱԶՆԵՐԳՈՒԹԻՒՆ

Դիւցազներգութիւնը Բանաստեղծութեան մեծ ձեւերէն մէկն է և ծնունդ առած , աղբերու պատմութեան ամէնէն վաղնջական շրջաններուն մէջ , ուր մարդը կ'ապրէր ընկերային կեանքով և խորհրդաւոր զօրութիւններովը շրջապատուած , ընդունակ աստուածացնելու տարեբային ուժերը , որոնցմէ կը սարսափէր և կ'ընկճուէր . ուր պատմական անցքերն ու

պատմական անձնաւորութիւնները շուտով կը դասուէին, աւանդութեանց և ժողովրդական միամիտ երեւակայութեան շնորհիւ, հրաշայիքներու և աստուածային զօրութեանց կարգը. ուր վերջապէս կրօնքը, հաւատայիքները, բարքերն ու անհատական առաքինութիւնները, ինչպէս՝ հնարամտութիւն, քաջագործութիւն, ևն., կը խաղային տիրապետող ներգործութիւն՝ ժողովուրդներու մտքին և հոգիին վրայ:

Այսպէս, կարելի է բնիկ թէ Դիւցազներգութիւնը կազմուեցաւ երեք տարրեր պատմական դարաշրջաններու ընթացքին:

Առաջին շրջանին կը պատկանին ի պատիւ աստուածներու երգերն ու աղօթքները. — Հնդկական Վէտաներու դարաշրջանը:

Երկրորդ շրջանը կ'ընդգրկէ իր մէջ ցեղերու բաժանումները, տեղափոխութիւնները և բաղիտումները, երբ, պատերազմներու մէջ կարգ մը մարդիկ նշանաւոր կը դառնան՝ իրենց քաջագործութեամբ ու զանազան ճիրքերով. ժողովրդական երեւակայութիւնը՝ այս շրջանին, ինքնաբերաբար կը սկսի փառաբանել այդ մարդիկը նուրբական երգերու մէջ՝ որոնք կը փոխանցուին սերունդէ սերունդ ու այսպէս մէկանձի մը մէջ կ'ամփոփեն ցեղի մը բոլոր առաքինութիւնները:

Այն ատեն, և երրորդ շրջանն է ասիկա, երևան կուգան առաջին բանաստեղծները՝ երգիչ և հագներգու, որոնք կը տիրանան դիւցազներգական աւանդութեանց զանազան հատակոտորներուն, և քնարերգական երգերը վերածեն պատմութիւն: Մեծ դիւցազներգութիւն մը ուրիշ բան չէ ուրեմն, եթէ ոչ սերունդներու հաւաքական ստեղծագործութիւնը՝ որ կը խտանայ, կը փոխակերպուի և կը միանայ մեծ բանաստեղծի մը հանձարին մէջ: Ահա թէ ի՞նչ եղած է Հոմերոսի դերը, որուն Ելիականն ու Ոդիսականը կը մնան մինչև այժմ անմահ գործեր: Բնածին դիւցազներգութեան շրջանն է աս:

Այս շրջանէն ետքն է որ կուգայ նաև շրջան մըն ալ, ուր բանաստեղծը երկար բարակ ուսումնասիրելէ և խորհրդա-

ծուծեան նիւթ ընէլէ ետք նախնական Դիւցազներգութիւնը , կ'առաջագրէ վերարտադրել անոր ձեւը ,— ինչ որ ըրած է Վիրգիլիոս իր Նեհակաւով , ինչ որ ըրած է Բագրատունին իր Հայկ Դիւցազնով : Կարելի է կոչել ուրիմն այս և՛ս արուեստական Դիւցազներգութեան շրջանը :

Դիւցազներգութիւնը էապէս պատմող նկարագիր ունի , հետեւաբար կարելի է սահմանել զայն՝ որպէս դիւցազնական և հրաշախատն սրկածախնդրութեանց պատմութիւն մը : Այդ պատմութիւնը կազմուած է լնդհանրապէս այնպիսի արկածներէ , կամ դէպքերէ՝ որոնք վեր են մարդկային բնութեան ու վորակսն ուժերէն : Հետեւաբար Դիւցազներգութիւնը կարելի է շիտովել ոչ Քնարերգութեան հետ՝ որ ամէն բանէ առաջ երգ մըն է , ոչ Տաամին հետ՝ որուն էութիւնը գործողութիւնն է , ոչ ալ Պատմութեան հետ՝ որ իրեն առարկայ ունի ճշմարիտ , մինչդեռ Դիւցազներգութիւնը կ'ախորժի մտացածիցէն : Այս պատճառով իր մէջ կարեւոր տարր մը կը կազմէ հրաւազանը , որ ամէն բանէ առաջ , պէտք է գտնուած ըլլայ յերթուածին գլխաւոր հերոսին հոգւոյն մէջ և ներկայացնէ կեանքի , ճակատագրի , կրօնի , հայրենիքի մէկ գաղափարը : Բանաստեղծը հարկ է որ ինքն իսկ ապրի այն զգացումներն ու հաւատալիքները որոնք փոխ կուտայ իր հերոսին :

Ամէնահին Դիւցազներգութիւններն են հնդկական դիւցազներգութիւնները ,— Վեհաներ որոնք տեսակ մը աղօթերգեր են , Մահապարմարան , Ռամայանան որ կը վերագրուի Քրիստոսէ տասներէնգ դար առաջ ապրող Վալմիքի բանաստեղծին , և Պուրանները՝ որ աստուածային ու մարդկային հէքեաթներու հսկայ հաւաքածու մըն է :

Ապա կուգան յունական Դիւցազներգութիւնները : Յունաստանի դիւցազներգական առաջին շրջանը կը համարուին այն թուականները , ուր կ'երեւին որիէոսեան քերթուածները՝ որոնցմէ հազիւ մէկ քանի հատակոտորներ մնացած են :

Հոմերոսով կը սկսի և կը փակուի յունական Դիւցազներգութեան երկրորդ և ամենամեծ , ամենաշքեղ շրջանը , ուր



մարմինն առած են Իսրայէլի և Ռդիսակայի նման երկու անմահ գործեր, որոնց մէջ բանաստեղծը հոյակապ վրձինով մը կը նկարէ յունական նախնի դարաշրջաններու կրօնական հաւատալիքներուն, բարոյական ըմբռնումներուն, ընտանիքին և անհատական առաքինութիւններուն բովանդակ պատկերը :

Հռոմայեցիները իրենց պատմութեան սկիզբը շին ունեցած, ինչպէս կը կարծուի, ինքնաձին ու նախնական դիւցազներգութիւններ, այլ փոխ առած են կաթէն Յոյներէն : Իրաւ է թէ Վիրգիլիոսէն առաջ մէկ քանի հռոմայեցի բանաստեղծներ փորձած են ազգային դիւցազներգութիւնը, բայց անկատար և անյաջող կերպով : Հռոմէական գրականութեան մէջ Դիւցազներգութեան միակ հանճարեղ ներկայացուցիչն է Վիրգիլիոս իւր Ենեականովը, որ հակառակ իր կարգ մը թերութիւններուն՝ կը նկատուի միշտ դիւցազներգութեան հրաշակերաններէն մէկը :

Իտալական գրականութեան մէջ Տանթէի Երկնային Կասակերգութիւնը նոյնպէս հրաշակերտ մըն է, ուր կը յայտնուին նոյն դարուն բովանդակ կրօնական փիլիսոփայութիւնը և ժողովրդական հաւատալիքները՝ արտակարգ երեւակայութեան մը ստեղծագործութեամբ : Արիոսթօ, իր կարգին, Կասադիսի Ռօլանի զմայլելի երգիծական դիւցազներգութեան մէջ կը միացնէ ասպետութեան հրաշալւան հէքեաթները՝ արուեստին և հնութեան յիշատակներուն : Թանասոյի Չերբազատուած Երուսաղէմը, յղացուած Իլիականի ծրագրէն, բայց թրթռուն թուրքերու դէմ Սպանիայիներուն մղած ժամանակակից պայքարովը, կը գծէ վիպային և զգայական կիրքերու այն պատկերը՝ որ շահագրգռական է ընդհանուր մարդկութեան համար :

Փրանսայի ամէնահին և ճշմարիտ դիւցազներգական քերթուածները կ'երեւան Շանսօն սը Ռօլանի մէջ միայն :

Փորթուկալի Գամօէնա բանաստեղծը՝ երգելով Վասքօ տէ Կամայի երկրախուզական ճամբորդութիւնը, իրապէս կ'երգէ իր Լիւզիանսին մէջ փորթուկալ ժողովուրդին փառայեղ քաջագործութիւնները :

Անգլիական գրականութիւնը Միլտոնն ունի, որ իր Դրախտ Կորուսեալով պատկերը կը գծէ մաքրակրօն բողոքական ընկերութեան դիւցազներգութեանը, ուր քաղաքային պատերազմը կը նկարագրուի առաջին ընտանիքին մաքուր և կրօնական երջանկութեան հանդիպողորէն :

Հայերը նոյնպէս հնագոյն ժամանակներու մէջ ունեցած են դիւցազներգութիւններ, որոնց դժբախտաբար ամբողջութիւնը չէ հասած մինչև և մեզի, այլ հազիւ մէկ քանի հատուկատորներ միայն : Հայկական հնագոյն այդ դիւցազներգութիւնները, որ կը կրէին վիպասանի, թուելեաց, երգեր, առասպելներ, զրոյցներ անուաները, կը վերաբերին հուշակաւոր անձերու և պատմական անցքերու փառաբանութեան : Նախաքրիստոնէական շրջանին մէջ, ինչպէս կը տեսնուի Խորենացիի պատմութենէն, Հայերը ունեցած են և՛ կրօնական երգեր՝ կաղմուած քրմական դասին կողմէ, և՛ ժողովրդական դիւցազներգութիւնը՝ ստեղծագործուած նախապէս նոյն ինքն ժողովուրդին միջոցով և ապա մշակուած ու ընդլայնուած յաջորդ սերունդներու գուսաններուն կողմէ : Այն՝ ինչ որ հասած է մեր ձեռքը, իր ձեւով, վճիտ նկարագրութիւններով և բանաստեղծական գունագեղ, վառվռուն պատկերներով, կը յիշեցնէ հոմերական քերթուածները և վէտայական երգերը, ապացուցանելով թէ հայ ցեղը գերազանցօրէն քնարական ձիրքերով օժտուած ժողովուրդ մըն է : Եւ եթէ հնագոյն այդ երգերէն ևս քը, քրիստոնէական շրջանին և գրեթէ մինչև և մերօրեայ թուականները, կը տիրէ մահաթեւ լուութիւն հայ դիւցազներգութեան վրայ, — պատճառը պէտք է փնտռել ո՛չ թէ ցեղային ամբողջութեան, այլ քաղաքական անխիտանութեան, հարածանքներու ճնշիչ պայմաններու մէջ : Հակառակ այն ամէն աննպաստ պայմաններուն, որոնք անհնար կը դարձնէին հայ դիւցազներգական երգերու ծաղկումը միջին դարուն մէջ, ժողովուրդը դարձեալ սակայն կրցած է գտնել հազուագիւտ առիթներ՝ փառաբանելու համար այս կամ այն քաջագործն ու անոր յաղթանակները, այս կարգէն է, օրինակ, Սասունցի Դաւիթին դիւցազներգութիւնը :

Հայ վերածնունդի գրականութեան մէջ նորագոյն դիւ-  
ցազներգութեան հիմը կը դնէ Հ. Արսէն Բագրատունին,  
հրատարակելով իր Հայկ Դիւցազնը, որ կը պատմէ Հայկ նա-  
հապետի գործը և Հայ ազգին հիմնարկութիւնը: Հայկ Դիւ-  
ցազնը, իբրև դասական գործ, անտարակոյս մեծարժէք է և  
հայ գրականութեան կոթողներէն մէկը, բայց իբրև դիւցազ-  
ներգութիւն՝ արուեստական է և կեղծ, վերարտադրուած  
Հոմերոսի Իլիականին և Վիրգիլիոսի, Թասոսի և ուրիշ դա-  
սականներու երկերուն վրայէն: Հեղինակը չէ ապրած ո՛չ այն  
շրջանը, ո՛չ այն բարքերը, ո՛չ այն անցքերը և ոչ այն ժա-  
մանակի ոգին, զորս ստեղծագործել և կեանքի կոչել կ'աշ-  
խատի և որոնց վրայ կը հիմնէ իր դիւցազներգութիւնը: Բնա-  
կան է որ, այս պայմաններով, գործէ միայն իր անձնական  
երեւակայութիւնը՝ որ հաղորդակից չէ երբեք իր վերստեղ-  
ծելիք աշխարհին արեւուն ու կեանքին, և այս պատճառով  
ալ գործը ըլլայ թերեւս շքեղ բայց ցուրտ, հոյակաւոյց բայց  
անկենդան:

Այդպէս չէ սակայն Խ. Աբովեանի Վեբ Հայաստանին,  
որ գերազանցօրէն կը պատկերացնէ իր ժամանակակից հայ  
կեանքը՝ իր ներքին մռայլ հոսանքին և իր քաղաքական  
ծիւանքներուն մէջ, — հայ գիւղացիին տգիտութիւնը, նիստ ու  
կացը, հայ եկեղեցականութիւնը իր յետադիմական խաղաց-  
քով, պարսիկ իշխաններու բռնակալութիւնը հայ ժողովուրդի  
վրայ և ընդվզումի, ըմբոստութեան այն բուռն զգացումը՝ որ  
կը բարձրանայ այդ բոլորին դէմ: Վեբ Հայաստանին կարելի  
է ընդունիլ հայ դիւցազներգութեան միակ մեծարժէք գործը:

1850-1890 թուականը ուսման թիք դիւցազներգուներու  
ծաղկումին շրջանն է հայ գրականութեան համար, ուր բա-  
նաստեղծները փոքր քերթուածներու մէջ կը վերակոչեն պատ-  
մական դէմքեր ու անցքեր, մինչեւ որ կը սկսի հայկական  
յեղափոխութիւնը, ալեկոծելով հայ կեանքը, առաջ բերելով  
պատմական ցնցումներ և ծնունդ տալով ֆէտայական տիպին  
ու գործունէութեան, — աղբիւր իսկական դիւցազներգութեան:



Այս շրջանին մէջ բացառութիւն են երկու դէմքեր : Նիւթ առնելով ժողովրդական աւանդութիւններ՝ դիւցազներգական սեռը փորձած են նաեւ Ղազարոս Աղայեան և Յովհաննէս Թումանեան : Ղազարոս Աղայեան գրած է «Տորք Անգեղ»ը, իսկ Յովհաննէս Թումանեան՝ «Սասունցի Դաւիթ»ը, որ իր հիւսուածքովը, իր պատկերներովը և իր ատաղձովը՝ կարող ենք ըսել թէ ժամանակակից հայ դիւցազներգութեան ամէնագեղեցիկ և ամէնակատարեալ մէկ էջն է՝ «Վէրք Հայաստանի»ի հետ, ու թերեւս անկէ ալ առաջ՝ իր արուեստով : Հայ աղուշները կովկասի մէջ արդէն կ'երգեն հայ Ֆէտային և կ'արժարժեն անձնութեան եռանդը՝ պանծացնելով քաջագործութիւնն ու դիւցազնը. ժողովրդական հին տխուր և լալկան երգերը յանկարծ կ'այլափոխուին դիւցազնական տաղերու. և այս փոթորիլալի, հոյակապ անձնութեամբ լի ու հայ հերոսական ոգիի շքեղ յատկութեամբը յատկանշուած շրջանն է որ կը ծաղկեցնէ թրքահայ ժամանակակից մեծագոյն դիւցազներգակը՝ Ատոմ Եարճանեան : Եարճանեանի քերթուածներուն մէջ է որ կը հնչեն հայ ազատատենչ կեանքի և կռուողներու բոլոր մեծ զգացումները :

## Բ. Ք Ն Ա Ր Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն

Քնարերգութիւնը ծնունդ առած է հին ազգերու ամենավաղնջական կրօնային երգերէն : Քնարերգութիւնը նախ, սերտ առնչութիւն ունեցած է սրբավայրերու արարողութեանց, ապա կեանքի բոլոր կարեւոր գործառնութեանց հետ : Նախնական ժամանակներուն մէջ Յոյները, ինչպէս Հայերը և այլ արեւելեան ժողովուրդներ, ունէին տարուան մէջ կրօնական հանդիսաւոր օրեր, ուր տեղի կ'ունենային պարեր, երգակցութեամբ քնարի, բամբուի, վինի և այլ նուագարաններու. այս երգերն էին ահա որ ստացան քնարերգութիւն անունը :

Քնարերգական բանաստեղծութիւնը միւս սեռերէն կը զանազանուի իր գերազանցօրէն անձնական նկարագիրովը :

Անիկա ներշնչուած ըլլայ առօրեայ այժմէական պարագաներով թէ յաւիտենական նիւթերով՝ ինչպէս բնութիւնը, սէրը, մահը, միշտ բանաստեղծին անձնական ամէնաներքին զգացումներն է որ կը յայտնագործէ: Իր ձեւով այնքան անհատական որքան էութեամբը, բնականաբար կշռութեան մէջ ալ կը պահպանէ մեծ զանազանութիւն ու տարբերութիւն, համաձայն զինքը ոգեւորող յուզումին:

Քնարերգութիւնը եղանակաւորուած է՝ որքան եղանակաւորուած է մարդկային հոգին, ժամանակի և քաղաքակրթութեան զարգացման հետ:

Այսպէս, Յունաստանի քնարերգական սեռերը կարելի է բաժնել երկու գլխաւոր տեսակի.

ա) Անոնք որ տարամերժօրէն անձնական են. օրինակ՝ Եղերգ, Տաղ և Եամպիկ:

բ) Անոնք, ուր բանաստեղծին անձնութիւնը թարգման կ'ըլլայ ամբողջի մը զգացումներուն:

Եղերգը (Élégie) ծագում առաւ Յունաստանի այն շրջանին՝ երբ ծաղկեցան հարստութիւնն ու քաղաքական կեանքը և արթնցաւ անհատականութեան ոգին: Եղերգութեան նիւթը կը կազմեն սովորաբար այն սէրերը որ իրարու դէմ կը բարձրանան կամ անոնք որ կ'ընդհատուին անհաւատարմութեամբ ու մահով: Այնպէս որ, կարելի է ըսել թէ բոլոր բանաստեղծութեանց մէջ ալ կը գտնուի որոշ չափով եղերգութիւն կամ եղերգական զգացումներ:

Եղերգութիւնը նոր գրականութեան մէջ ուրիշ բան չէ, եթէ ոչ փոքր քերթուած մը՝ հիւսուած քնքուշ ու տխուր նիւթի մը վրայ: Յունական եղերգութեան ներկայացուցիչներն եղան՝ Գալլինոս, Արքիլոզ, Դիրատէ, Միմնէրմ, Սողոն, Դէոգլինէս և Ֆոսիլտ: Ֆրանսական գրականութեան մէջ եղերգական զգացումներով հարուստ են ռոմանթիքները՝ Էլեկօ, Կամարթին, Վինետի և Միւսէ:

Տաղ կը կոչուի այն քերթուածը՝ որ կ'երգէ գինիի, զուարթութեան, սեղանի և սիրոյ հաճոյքները: Յունական

տաղերգակներն են Ալկէոս , Սաֆօ և Անակրէոս : Այս սևուր մշակած են նաև մեր հին ու միջնադարեան աշուղները :

Եամպիգի կամ Մեծավերջ բանաստեղծութեան նիւթն է երգիծանքը՝ մերթ ընտանեկան , մերթ պերճաբան , երբեմն յուզիչ և երբեմն խայթող , որ չի խորշիր ամէնէն ազնիւ բացատրութիւններէն մինչև ամէնէն կոշտերէն :

Հասիները , որոնց հանճարը բնականօրէն բանաստեղծական չէր , Հին-Յոյներէն փոխ առին առաւելապէս քնարերգութիւնը և յաջողեցան յատկապէս թեթեւ Տաղերու և Եղերգութեան մէջ : Քրիստոնէական դարուն , Պրուտանոս հիմնեց նոր քնարերգութիւն մը , որ կը ցոյայնէ քրիստոնեայ հաւաքականութեան զգացումները :

Հայց ցեղը , որուն հիմնական յատկանիշներէն մէկն է անհատականութիւնը , գերազանցօրէն ընդունակ է քնարերգութեան : Մէկէ շատ աւելի պատճառներ կան ընդունելու որ հին Հայերը ունեցած են հարուստ քնարերգութիւն մը , որմէ դժբախտաբար մեզի հասած են միայն փշրանքներ և մէկ քանի եղանակներ : Գողթան գաւառը եղած է ոստայնը մեր քնարերգուներուն , որոնք երգած են գինին , սէրը , իշխանական փառքեր ու սխրագործութիւններ , պտըտելով աւանէ աւան ու մանաւանդ մաս կազմելով թագաւորական և իշխանական խնջոյքներուն : Մեր հին մատենագիրներուն յիշատակութիւններէն ու ակնարկներէն կը հասկցուի թէ հին հայ քնարերգակները մշակած են քնարական բանահիւսութեան հետեւեալ ձևերը .—

Նուագը , որ ուրախութիւն արտայայտող երգ մըն էր և կ'երգուէր , երաժշտական գործիքներու ընկերակցութեամբ , հարսնիքի և խնջոյքներու միջոցին :

Կախաւք , Կայթիք , Վագիք , Պարը և Պարանցիկը անուններն են աստուածներու զոհաբերութեան և պաշտամունքի միջոցին կատարուած այն երգախառն պարերուն , որոնց անշուշտ համապատասխան բանաստեղծութիւններն այլ գոյութիւն ունէին և սակայն հասած չեն մեզի :



Գեղօն, Մսուրն, Ողբ և Եղերգ անունով այլևայլ քնարական բանահիւսութիւններ եւս կը յիշատակուին մեր մատենագիրներուն կողմէ: Այդ քերթուածները քնարերգական արտայայտութեան ձեւերն էին այն զգացումներուն, որոնցմով կ'ողբային սիրելիներու և աղգականներու մահուան վիշտը: Հայերն ևս ունէին, հին ատենները, եղերամայր անունով հասնականաբար կին երգիչները՝ որոնք կ'երթային նշանաւոր մեռելի մը, մանաւանդ թագաւորի մը կամ իշխանի մը դագաղին ետեւէն, և յուզարկաւորութեան միջոցին ողբայով ու կոծելով կ'ընէին անոր գովքը, կը աարփողէին անոր բարեմասնութիւնները, գեղեցիկ գործերը և կեանքին լուազոյն դրուագները: Գլխաւոր երգիչը կը կոչուէր մայր սգոյ, իսկ անոր ձայնակցող սգաւորները դստեր սգոյ:

Ինչպէս ըսինք, հայ հոգին ամէնէն աւելի օժտուած է քնարական բեղմնաւորութեամբ. — Այդ բեղմնաւորութիւնն է որ ստեղծած է մեր ժողովրդական երգերը, այդ բեղմնաւորութիւնն է որ կը տիրապետէ նոյն իսկ վանական արդիւարանի մէջ փակուած մեր հին եկեղեցական բանաստեղծներուն քով. բեղմնաւորութիւն մը՝ որ իր բարձրագոյն գեղեցկութեան կը հասնի Քուչակին քով և կը յատկանիչէ նոր ժամանակներու գրեթէ մեր բոլոր բանաստեղծները, — Տէմիրճիպաշեան, Թէրզեան, Գամսու-Քաթիպա, Յովհաննէսեան, Թումանեանց, Իսահակեան, Նար-Պէյ, Ալիշան, Պ. Գուրեան, Գանիէլ Վարուժան և ուրիշներ:

## Գ. ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂՇՈՒԹԻՒՆ

Թատերական բանաստեղծութեան նպատակն է՝ շարժումներու, ձեւերու և տրամախօսութեան միջոցով ներկայացնել ունէ դէպք, գործողութիւն: Իրական կեանքն է որ ուշագրաւ պատկերներու օժանդակութեամբ, ա՛յդ դէպքին կամ գործողութեան մէջէն, կը դրուի բեմի վրայ:

Թատերական բանաստեղծութիւն անունով կը հասկցուի Ողբերգութիւնը, Տռամը և Կատակերգութիւնը:

Ա.— Ողբերգութիւնը տխուր թատերգութիւն մըն է որ կ'աւարտի դժբախտ վախճանով, աղէտով մը: Ողբերգութեան առանցքը կը կազմէ գլխաւոր անձնաւորութեան մը մղած կռիւը՝ զինքը շրջապատող պայմանները ուժին դէմ կամ յուճախ իր հոգեկան կարգ մը զգացումներուն, կրքերու հզօր բաղխում մըն է որ տեղի կ'ունենայ, առաջ բերելով սարսափի, գթութեան սպաւորութիւն և հոգեկան աղնիւ յուզումներ: Խաղին գլխաւոր հերոսը կ'իյնայ, կը խորտակուի իր կարողութիւններէն վեր ուժերու աղղեցութենէն յաղթահարուած, բայց իր մղած բարոյական կռիւը, իր բարոյական գաղափարը կը շարունակէ մնալ կանգուն: Այդ բարոյական գաղափարը ուրիշ բան չէ, եթէ ոչ համոզումը մարդկային մտածման խեղճութեան և մարդկային կարողութիւններու անզօրութեան հանդէպ տիեզերական մեծ ուժին: Մարդը կը շարունակէ պայքարիլ տիեզերական օրէնքներուն դժած երկաթէ պարիսպներուն դէմ և երբ յաղթահարուած կ'իյնայ, համոզուած իր տկարութեան՝ առաջ կը բերէ թախճազին սպաւորութիւն և խոր յուզում:

Հին ժամանակներու մէջ Ճակատագիրն էր որ կը խորհրդանշէր տիեզերական այս անխորատակելի ուժը, մղելով մարդկութիւնը համակերպութեան, իսկ Քրիստոնէութենէն ետք աստուածային կարողութիւնը, ինչպէս և այսօր գանազան ընկերային ու փիլիսոփայական համոզումներն են որ փոխարինած են ճակատագիրը՝ հաշտեցնելով սակայն միշտ մարդկային միտքը իր տկարութեան գիտակցութեանը հետ:

Խաղին հերոսը պէտք է օժտուած ըլլայ արիութեան յատկութիւններովը, որպէս զի կարողանայ յաջողապէս դիմադրել այն դժուարութիւններուն, որ պիտի առաջացնէ ողբերգութեան թատերական բաղխումը: Պէտք է տակալ թշուառութեան, զրկանքներու և վիշտերու՝ իրաւացի ըլլան անոնք թէ անիրաւ: Պէտք է անյողդողդ դիմէ դէպ ի դժուարութիւնները, որպէս զի հետաքրքրութիւն և շահագրգրութիւն շարժէ, որպէս զի գրաւէ մեր սիրտը և մենք ներկնք հոյն իսկ իր յանձանք-

ներուն, համարելով անոնց պատասխանատուն, ո՛չ թէ զինք այլ զինքը շրջապատող պայմանները: Թոյլ ու անհաստատ բնաւորութեան տէր հերոսները չեն շարժեր ո՛չ համակրութիւն և ո՛չ գթութիւն: Պայման չէ որ խաղին հերոսը ներկայացնէ անբիծ առաքինութեան տիպ մը. ընդհակառակը, կարող է ըլլալ նոյն իսկ յանցաւոր, բաւական է որ անոր յանցանքը ըլլայ արդիւնք սխալման:

Յունական ողբերգութեան նիւթերը առնուած էին ազգ. պատմութենէն և առասպելներէն, հեռեւաբար անոնք կը կրին հին յունական հաւատքին ազդեցութիւնը և կը բղխին այն կրօնական հաւատալիքներու լմբունումէն՝ որ ունէին Յոյները այն ատեն:

Հին Յոյներուն լմբունման համաձայն՝ բնութեան մէջ կը գտնուէին ճակատագրական ուժեր և այդ ուժերը դուրս եին մարդէն, ցրուած ամէն կողմ, շրջապատող տիեզերքին մէջ: Այս պատճառով է որ յունական Ողբերգութեանց մէջ դեր ունին նաև աստուածներու յայտնութիւնը և ճակատագիրը, ինքն ալ աստուած, որ խաղի հերոսին ու անոր գործերուն կուտայ անպատասխանատու հանգամանք:

Շէյքսպիր Ողբերգութեան մէջ մայուց նոր սկզբունք մը: Իր գործերուն մէջ ողբերգական գործողութիւնը առաջ կուգար մարդկային կիրքերու, բաղձանքներու բաղխումէն:

Մինչդեռ, նոր թատերգութեան մէջ՝ Հէնրիկ Իւպոյն, Նորվեկիայի մեծ թատերագիրը, բաղխումի մէջ դրաւ անհասն ու ընկերութիւնը, և ողբերգական գործողութիւնն առաջացուց Անհասն ու Ընկերութեան մենամարտէն:

Իսկ նորագոյն ժամանակներու մէջ Մեթերլինկ կը փորձէ ողբերգական գործողութեան աղբիւրը փնտռել մարդուն ներքին գիտակցութեան, անոր ներքին գոյութեան, մենաւոր էութեան մէջ: Մարդուն ներքին ուժերն են որ կը բաղխին կամքին և առաջ կը բերեն ողբերգութիւն, առամ: Փորձ մըն է ասիկա դեռ, բայց փորձ մը՝ որ անկասկած պիտի մշակուի առաջիկային աւելի լայնօրէն ու աւելի մեծ չափերով:

Ինչպէս կը տեսնուի, դարերու ընթացքին՝ փոփոխու-



թեան ենթարկուելով մարդկային հաւատալիքները, ընկերային կազմը, ըմբռնումներն ու անոնց հետեւանք՝ մարդկային հոգեբանութիւնը, — փոխուած են նաեւ Ողբերգութեան ստեղծագործման հիմերը :

Շէյքսպիրի ժամանակակից մարդը՝ ազատագրուած ըլլալով միջին դարու կրօնական ազդեցութիւններէն, ազատասպարէզ տուած էր երկրային կիրքերուն : Անհատը, հետեւաբար, այդ դարուն՝ կը ներկայանայ իբրեւ արտայայտութիւն ուժգին կիրքերու և հզօր բաղձանքներու : Եւ Ողբերգութիւնը բեմի վրայ ցոյց կուտայ կիրքերու այդ մարտնչումը :

Կուգան նոր ժամանակները, ուր մարդը որոշ չափով ազատած երկրային կրքերու բացարձակ տիրապետութենէն, իր առջեւ կը գտնէ ընկերային կարգուսարքեր, ընկերային ծանր խնդիրներ՝ որոնց դէմ անհատը կը բաղխի և կ'ընկճի . — այսպէս՝ ամուսնական ու ընտանեկան խնդիրները, սէրը, ժառանգականութեան հարցը, ընկերային կեղծիքը, եւն . եւն . որոնք կը դնեն Ողբերգութիւնը ուրիշ հիմերու վրայ : Օրինակ, Աղեքսանդր Տիւմայի և նման ժամանակակից թատերագիրներու գործերը :

Տասներիններորդ դարու մարդը իր դէմ կը գտնէ հասարակութիւնը, որ կը կաշկանդէ, կը նեղէ, կը ջլատէ ու կը խորտակէ անհատը : Իպսըն բեմի վրայ կը հանէ ահա այդ մեծ հարցը և Անհատին ու Ընկերութեան, երկու անհաւասար ուժերու բաղխումին մէջ կը զեռեղէ սղբերգական գործողութեան հիմերը :

Մինչ, նորագոյն ժամանակներու մէջ, շնորհիւ հոգեբանութեան դարգացման՝ իբրեւ գիտութիւն, մարդը հետզհետէ արտաքին աշխարհէն — ընտանիք, ընկերութիւն եւն . — ինչպէս և իր կիրքերէն հեռացնելով ուշադրութիւնը, զայն կը խորասուզէ իր ներքին էութեան մէջ և հոն կը փնտռէ ու կը գտնէ ներքին ուժերու և կամքին պայքարները, այդ պայքարներէն ստեղծելով նորագոյն ողբերգութիւնը :

Գալով Ողբերգութեան յօրինուածքին, հիները կ'ընդունէին իբրեւ կանոն՝ երեք անհրաժեշտ պայմաններ, — ժամանակի, տեղի և գործողութեան միութիւն. այսինքն, դէպքը պէտք է տեղի ունենար ո՛չ թէ իրարմէ հեռու կամ անշատ ատեններու, այլ միեւնոյն ժամանակին մէջ, միեւնոյն տեղին վրայ և միեւնոյն գործողութեան ընթացքով:

Արդի ողբերգութեան մէջ ժամանակի և տեղի միութիւնը պայման չէ երբեք, բայց կը պահպանուի գործողութեան միութիւնը:

Ողբերգութիւնը ծնունդ առած է Յունաստանի մէջ՝ Դիւցազներգութենէն և Քնարերգութենէն յետոյ, և վերջնապէս կազմաւորուած է Մեդական պատերազմներու թուականներուն: Յունական Ողբերգութիւնը գրեթէ իր բոլոր հրաշակերանները արտադրած է Ե. դարու (Ք. Ա.) ընթացքին, իսկ Դ. դարու սկիզբը (Ք. Ա.) արդէն կը հասնի իր կատարեալ անկման:

Յունաստանի նախնական ողբերգակներն եղան՝ Թէոպիա, Քօրիլոս և Ֆրինիքոս բանաստեղծները:

Բայց Եսքիլէսն է որ կազմաւորեց ողբերգութիւնը, դերակատարներու թիւը վերածեց երկուքի, կատարելագործեց դիմակները, աւելցուց զգետներ ու տեսարանական յարդարանքներ և զարգացուց թատերական գործողութիւնը: Եսքիլէս իր ողբերգութեանց միջոցով բեմի վրայ հանեց կրօնական բարձր յղացումներ, իրարու դէմ բարձրացնելով մարդկային ազատութիւնն ու ճակատագրական անխորտակելի դժբութիւնը:

Սոփոկլէս ամբողջացուց Եսքիլէսի գործը, ողբերգութեան մէջ աւելցնելով երրորդ դերակատար մըն ալ և եղանակաւորելով տեսարանական յարդարանքը. զարգացուց գործողութիւնը և աւելի կենդանութիւն տուաւ տրամախօսութեան: Սոփոկլէս, իր ողբերգութեանց մէջ, նախապատուութիւնը տուաւ մարդկային հետաքրքրութեան և նկարագիրներու վերլուծման, — հին հէքեաթներէն հանելով բարոյական մեծ դասեր:

Սուփոկլէսէն յետոյ եկաւ Եւրիպիդէս՝ որ ջանաց վերանորոգել ողբերգութիւնը՝ նիւթերու զանազանութեամբ, փիլիսոփայական վճիռներու գործածութեամբ, կիրքերը նկարելու արուեստին մէջ իր ներմուծած իրապաշտութեամբ և կնոջ դերերու իր սուած նախապատուութեամբ:

Հռոմէական Ողբերգութեան գոյութիւնը անձանօթ մնացած էր երկար ատեն, որովհետեւ իր արտադրած գործերը ժամանակի ընթացքին մէջ կորուստի մատնուած էին: Հին հեղինակներն են որ յիշատակութիւն կ'ընեն անոր նկատմամբ և ծանօթ են միայն հատակոտորներ, որ մէջ բերուած են Կիկերոնի և ուրիշներու կողմէ: Բայց ընդունելով այն հաւատարմութիւնը, որով Կիկերոն կը յայտարարէ թէ «Հռոմէական ողբերգութիւնը մէկն է Հռոմի ազգային փառքերէն», պէտք է ենթադրել թէ ժամանակի աւերիչ անցքերը զրկած են մեզ հռոմէական հանճարի կարեւոր ստեղծագործութիւններէն: Հռոմէական ողբերգութեան նախակարապետն է եղած Լիվիուս Անդրօնիկոս՝ որ բաւականացած է թարգմանելով յունական ողբերգութիւնները: Ազգային նկարագիրը կը շեշտուի Լիվիուսի մէջ, թէեւ աս եւս թարգմանիչի դերն ունի միայն. Էննիուս, Պազուվիուս և Ատաիուս են որ իրապէս արժանի են ողբերգակ բանաստեղծի անունին: Հռոմէական ողբերգութեան լաւագոյն շրջանն եղած է Գ. դարէն մինչև Ա. (Ք. Ա.):

Փրանսայի թատերական պատմութեան մէջ Ողբերգութիւնը կը գրաւէ պատուոյ տեղերէն մէկը: Փրանսական Ողբերգութիւնը ծնունդ առաւ այդ պահուն՝ երբ Վերածնութեան ազդեցութեան տակ սկսած էր հինը ընդօրինակելու շարժումը: Փ.Չ. դարը խորխափանքի շրջան մըն է սակայն, ուր երեւցած ողբերգութիւնները պարզ ընդօրինակութիւններ են կամ նմանողութիւններ հինին, առանց ճշմարիտ արժանիքի: Փէ. դարուն սկիզբը Ալեքսանդր Հարտի, հեղինակ ուղերասան միանգամայն, կը յաջողի կեանք ներշնչել արուեստական այդ թատերգութեան, բայց չարտադրեր հրաշակերա-



մը, մինչեւ որ կուգայ Քօրնէյլ՝ տալով իր գլուխ-գործոցը, Սիսը, որուն կը յաջորդեն ապա իր Հօրասը, Կիննան, Պօլիկսը, Պօմպէն, Նիկօմէսը և ուրիշներ: Ֆրանսական ողբերգութիւնը կը գտնէ իր ձեւը: Քօրնէյլին հաւասար բարձրութեան վրայ կը կանգնի նաև Ռասին՝ իր Անտրուաֆէ, Բրիտարիֆուս և այլ գործերով:

Վերածնութեան մեծ շարժման տակ է որ Իտալիան ևս կը մշակէ Ողբերգութիւնը, որուն բարձրագոյն ներկայացուցիչը հանդիսացաւ Ալֆիէրին՝ իր Վիրնիցի, Օգթավի, Ֆիլիբ Բ. և այլ գործերով:

Գերմանիան ժէ. դարուն է միայն որ կը սկսի ողբերգութեան իր նախափորձերը: Նախ տեղի կ'ունենան յունական ողբերգութեանց թարգմանութիւնները, ապա ֆրանսական արուեստը կը սկսի տիրապետող դառնալ գերմանական ողբերգութեան վրայ: Լէսինկ եղաւ որ ջանաց գերման Ողբերգութիւնը ազատել ֆրանսականին ներգործութենէն: Լէսինկէն յետոյ կուգան Կէօթէ ու Շիլլեր՝ իրենց գործերով:

Անգլիական ողբերգութեան հանձարեղ ներկայացուցիչն է Շէքսպիրը, որուն գործերը մինչեւ այսօր ալ կը ներկայացուին համաշխարհային բեմի վրայ ու կը մնան որպէս հսկայ հրաշալերաներ:

Ինչպէս կ'երևի, հին Հայաստանի մէջ թատերագութիւնը նշանակելի զարգացման չէ կրցած հասնիլ ազգային ինքնատրտութեան և արդասաւորութեան տեսակէտով: Կը յիշուին Յուլյֆ անունով տեսակ մը ժողովրդական ներկայացումներ, որ տեղի կ'ունենան եղբ. տօնական օրերու մէջ. բայց, ասոնք շատ նախնական խաղեր եղած ըլլալ կը թուին, առանց իսկական թատերագութեան մը հանդամանքը կրելու: Օտար սլաւոնադիրներու վկայութեան համաձայն, յունարէն լեզուով ներկայացումներ կը տրուէին Տիգրան Բ.ի պալատին մէջ. անոր Արտաւազտ օրդին ալ գրած է ողբերգութիւններ: Ինչ որ ալ ըլլայ սակայն, ճշմարտութիւնն ա՛յն որ եթէ բարձր թատերագութիւնը բոլորովին օտար չէր գէթ հայ արքունական շրջա-

նակներուն, բայց և այնպէս ժողովրդական կեանքին մէջ տեղ չէ ունեցած և ինքնատիպ մեծ դրոշմ չէ կրած :

19րդ դարու կէսէն ետք է որ հայ գրողները կը սկսին մշակել թատերագական սեռը, զլիսաւ որաբար նիւթ առնելով պատմական անցքեր ու դէմքեր, և ներկայացնելով զանոնք Պոլիս ու Կովկաս : Թրքահայ թատերադիրներ հետեւած են առ հասարակ դասական գրողներուն, ինչպէս նաև ռոմանթիզներուն, արտադրելով ընդհանրապէս արուեստական, կեղծ ու բռնազբօսիկ գործեր. այսպէս են ահա Նարայէյի, Պ. Դուրեանի, Թէրզեանի և Պէշիկթաշևեանի թատերագու թիւնները : Մինչ հայահալած քաղաքականութիւնը Թուրքիոյ մասւորականութեան առջեւ, սկսած 1890 թուականէն, վերջնապէս կը փակէր թատրոնը և անկարելի կը դարձնէր թատերագու թեան մշակումը ժամանակակից թրքահայ դրականութեան համար, — Կովկասի հայութիւնը, համեմատաբար ազա՛տ քաղաքական կաշկանդումներէ, կը յաջողէր արտադրել Սոււդուկեանցի, Շիրվանդատէի, Ահարոնեանի, Վ. Փափաղեանի և ուրիշներու միջոցով կենդանի, տաք և հարազատ հայ թատերագու թիւն մը :

Բ. — Տոամին մէջ ևս, ինչպէս Ողբերգութեան մէջ, զօրաւոր կրքեր են որ կը բաղխին իրարու, բայց նուազ զօրաւոր կրքեր. ասկէ զատ, մինչդեռ Ողբերգութիւնը կը վերջանայ անպատճառ աղէտով մը, Տոամին համար, այդ՝ բացարձակ պայման մը չէ :

Տոամը ծաղում առնելով հին դարերու Յունաստանի մէջ, անցաւ միջին դարը Եկեղեցիին միջոցով և հետզհետէ դատւ իր որոշ ձեւը Փիէր Բօրնէյի և Մօլիէռի բացած ճամբով : Անդլիոյ մէջ էր միայն որ Շէյքսպիր Տոամը պատշաճեցուց Անդլիոյ աղգային նկարագրին, զայն դարձուց աւելի ազատ ու անկաշկանդ, բեմի վրայ հանելով ամէն տեսակ անձնաւորութիւններ, այնպէս ինչպէս կեանքը կը պարունակէ, և շարժման մէջ դնելով մարդկութեան կրքերը : Շէյքսպիրի հետեւողներն եղան Պէն Զօնարն, Պօմօն և Ֆլէչըր, Տրայտըն և Ատտիսըն : Քայտէրօն Սպանիոյ մէջ, հետեւեցաւ Շէյքսպիրի

Թէօրիին, անոր վրայ աւելցնելով նաև հին ճակատագրակա-  
նութիւնը՝ որ փոխ առած էր Յունաստանէն: Քալտէրօն եղաւ  
պետը դպրոցի մը, որ բացաւ սպանիական թատրոնին ու ազ-  
գային Տռամին համար խիստ փայլուն շրջան մը:

Ֆրանսայի մէջ Տռամի մասին կատարուած խարխափանք-  
ները՝ ենթարկուելով խիստ քննադատութեան, տուին այն  
արդիւնքը որ պատճառ դարձան սահմանելու արուեստին յե-  
ղափոխութիւնը, առաջ բերելով գերմանիոյ մէջ իսկական  
Տռամը: Լէօնիկ գերմանացին հետեւելով Տիարոյի տեսու-  
թեանց, զանոնք կիրարկեց իր շարք մը գործերուն մէջ և  
ունեցաւ իրեն հետեւող աշակերտներ: Ընթանալով Լէօնիկի  
դժած շաւղէն՝ Կէօթէ գրեց իր մէկ քանի գործերը: Ապա ե-  
կաւ Շիլլէր, որ շատ աւելի հետեւող եղաւ Շէյքսպիրի ուղ-  
ղութեան:

Այսպէս, Շէյքսպիր, Քալտէրօն և Կէօթէ արդէն լուսա-  
բանած էին Տռամին իսկական գաղտնիքը, որոնցմէ ետք Վիք-  
թոր Հիւկօ իր կողմէ սահմանեց զայն հետեւեալ կերպով.  
«Տռամին յատկանիշն է իրականը. իրականութիւնը առաջ կու-  
գայ երկու տիպարներու, վսեմին և անհեթեթին շատ բնական  
զուգոյստանութենէն, որ զիրար կը խաչաձեւեն Տռամի մէջ՝  
ինչպէս որ կը խաչաձեւեն կեանքի և ստեղծագործութեան  
մէջ:» Վիքթոր Հիւկօ գրեց իր Էրնանին, Ռիւ Պլասը, Արժան  
կը գբօսնուն, և իր շուրջը համախմբեց ոտմանթիգ դպրոցի  
բոլոր անուանի դէմքերը:

Սկանտինաւեան գրականութեան մէջ Տռամին ներկայա-  
ցուցիչ մեծագոյն դէմքերն են՝ Իպսըն, Պիյօրօնսօն, Պանզօն և  
Տրախման:

Գ.— Կատակերգութիւնը շարժման մէջ կը դնէ, ծիծաղա-  
շարժ եղանակով մը, նկարագիրներ, բարքեր և հանրային  
կեանքի իրողութիւններ: Կատակերգութեան մէջ իրարու շն-  
բաղխիր ուժեղ կիրքեր և խաղը չի վերջանար աղէտով: Մինչ  
Ողբերգութեան էութիւնը կը կաղմէ ծանր թախծութիւնը,  
Կատակերգութեան նպատակն է զուարթութիւնը, կատակը,



հեղինութիւնը : Ողբերգութիւնը մարդկային մտածման ու զգացումներուն խեղճութիւնը կը պատկերացնէ՝ հանդէպ տիեզերական օրէնքներու , իսկ կատակերգութիւնը՝ մարդկային յիմարութիւններն ու թերութիւնները : Ողբերգութեան մէջ հերոսը կը կռուի տիեզերական ուժերուն դէմ , իսկ կատակերգութեան մէջ , մարդոց տկարութիւններն ու տխմարութիւններն են որ ծաղրի տուարկայ կը դառնան : Ողբերգութեան հերոսը կ'իյնայ պարտուած՝ աշխարհի օրէնքներուն առջեւ՝ մինչ ընդհակառակը , կատակերգութեան հերոսը ինք է անմիտը՝ որ նպատակը ունենալով կռուիլ մարդկային թերութեանց դէմ խորամանկութեամբ կամ ճարտարութեամբ , կը դադրեցնէ այդ կռիւը այն իսկ վարկեանին՝ երբ անոր գիտակցութիւնը կ'ունենայ :

Կատակերգութեան նիւթը պէտք է առնուի անպայման ներկայի իրական կեանքէն : Անոր մէջ ոչ միայն խօսքերը պէտք է ըլլան զաւեշտական ու ծիծաղաշարժ , այլ և մտքերն ու գործերը :

Յունական կատակերգութեան ծագումը թաղուած է մթութեան մէջ . միայն սաչափ ծանօթ է որ անիկա սերտ կապ ունէր Բագոսի պաշտամունքին հետ : Կատակերգութիւնը նախ երեւցաւ Պելոպոնէսի մէջ , ապա փոխադրուեցաւ Ատտիկէ և մանաւանդ Սիկիլիա : Սակայն Աթէնքի մէջ էր որ կրցաւ զարգանալ , ունենալով երեք շրջաններ . 1. Հին Կատակերգութեան շրջանը՝ որ կը սկսի 460ին (Ք. Ա.) , ունենալով յատկապէս ներկայացուցիչ՝ Արիստոփանը : Այս շրջանի կատակերգութիւնը նիւթ ունի իրեն՝ հանրային գործերու վերաբերող խնդիրները , կատարելով , տեսակ մը , վիճարանական այն դերը զոր կը կատարեն մեր ժամանակին մէջ թերթերը : Կատակերգութիւնը ոգեւորուած , կրքոտած կուսակցական ոգիով , կը ներկայացնէ հանրային անճշաւորութեանց ծաղրանկարները : 2. Միջին Կատակերգութեան շրջանը , որ կը ներկայացնէ Հին կատակերգութեան փոխանցման մէկ վիճակը , քիչ կը զբաղի անձերով , այլ աւելի շատ՝ բարքերով և դի-

ցարանական նիւթերով : Յ. Նոր Կատակերգութեան շրջան , ուր Յունաստան կորսնցուցած է իր անկախութիւնը , անհետացած են ժողովրդապետական կարգերը , օրէնքներն ու ազատութիւնը , տեղի տալով տիրող Մակեդոնացիներու բիրտ ու կամայական իշխանութեան , որոնք արգիլած են ունէ կերպով ծաղրել կամ հեզնել իշխանութեան ներկայացուցիչները , հանրային մարդիկը : Այս պատճառով այլ Կատակերգութիւնը կորսնցուցած է իր կենդանութիւնը և կենսունակութիւնը , դառնալով պարզապէս ժամանակակից ընդհանուր բարքերու երգիծանքը . իր առարկաներն են՝ ընտանիքի դաւակը , խորամանկ գերին , պորտաբոյծը , ամուսնութիւնը , ևն . : Այս սեռին հռչակաւոր ներկայացուցիչն եղած է Մէնանարոս :

Հռոմէական կատակերգութիւնը չունի որոշ ինքնատիպութիւն մը , այլ պարզապէս հետեւողութիւնը կամ նմանողութիւնն է յունականին :

Իտալիոյ մէջ կանոնաւոր կատակերգութիւնը առաջին անգամ ներկայացուեցաւ Լեոնո ժ . Պապին բարեկամ կարտիչնալ Տօլլից սէ Պիպպիէնայի կողմէ . յետոյ եկան Մաքիավելլի , Արիսթօ , Աքէթին և ուրիշներ : Ժամանակակից գլխաւոր կատակերգակ գրողներն են՝ Բօսա , Ճիաքօզա , Փ . Ֆէրրարի , Բավալօթթի , Թորէլլի , ևն . , ևն . :

Սպանիոյ մէջ կատակերգութիւնը զարգացած է բոլորովին տարբեր ուղղութեամբ մը . ուղած է ժողովրդական մնալ , այս պատճառով զոհած է շատ մը բաներ՝ ինչպէս , բարքերու պատկերացում , նկարագիրներու ուսումնասիրութիւն և նոյն իսկ ճշմարտանմանութիւնը , որպէս զի ըլլայ զբօսեցուցիչ և խանդավառող : Սպանիական կատակերգութիւնը կազմուած է ամբողջովին էնթրիկով , կնճռոտութիւնով (imbroglio) , արկածախնդրութեամբ և սուսերամարտութեամբ : Կարգ մը գրողներ , սակայն , ջանացին Փիլիպպոս Բ . ի օրով , դարձնել Կատակերգութիւնը աւելի կատարեալ և փորձեցին յունական ձևին ընդօրինակութիւնը : Բայց այս փորձերը մնացին սեղմ շրջանակի մը մէջ , մինչ ժողովուրդը հե-

տեւեցաւ իր ազգային կատակերգութեան : ԺԷ . դարուն է որ կուգան սպանիական կատակերգութեան մեծ դէմքերը՝ Սէրվանթէս , Լօի տէ Վէկա , Քալտէրօն , Ալարքօն և ուրիշներ , որոնց ներգործութիւնը կրած է նաև այս շրջանի ֆրանսական գրականութիւնը : ԺԸ . դարուն ճիշտ հակառակ երեւոյթն է որ կը պարզուի . սպանիական կատակերգութիւնը կը կորսնցնէ իր ներգործական դերը և ինք կը սկսի հետեւիլ ֆրանսականին :

Ֆրանսան , նոյն իսկ միջին դարուն , ունէր կատակերգութեան իր ազգային մէկ ձևը՝ Պատար . բայց իր ճշմարիտ կատակերգութիւնը ԺԶ . դարուն է որ ծնունդ կ'առնէ , ազդուելով իտալականէն : ԺԷ . դարուն , արդէն կ'երեւան իր մեծատաղանդ կատակերգակները , Քօրնէյլ ու մանաւանդ Մօլիէր՝ որ 1660-1673ին բացարձակ տէրն եղաւ թատերաբեմին : Մօլիէր շանայ հետեւիլ բնութեան միայն և խնդացնել այնպիսի բաներու վրայ՝ որոնց խորքին մէջ շատ աւելի ողբերգութիւն ծածկուած է : Մօլիէր կը զննէ մարդը , և առանց շատ հոգ ընկու խաղին էնթրիկներուն , կուտայ իր ժամանակի տիպարներուն՝ ընդհանուր տարողութիւն մը , միախառնելով բարքերու և նկարագրի կատակերգութիւնը իրարու հետ : Լուի ԺԴ .ի շրջանին վերջաւորութեանը մէջ կը փայլին երեք կատակերգակ մեծ դէմքեր՝ Ռէնեար , Տանքոտ և Լը Սամ : Պօմարշէ կը խտացնէ իր բոլոր նախորդներուն՝ իտալական , սպանիական և ֆրանսական կատակերգութեանց էութիւնը և իր արձակ գործերուն մէջ կուտայ ժամանակակից կատակերգութեան ձևը : Իրմէ ետք ֆրանսական կատակերգութիւնը կը մտնէ անկումի շրջան մը՝ որ կը տեւէ մինչեւ 1850 թուականը , ուրկէ ետք կը սկսի դարձեալ կենդանանալ , նիւթ ունենալով իրեն՝ բարքերը և ընկերային գաղափարներ : Ժամանակակից ֆրանսական կատակերգութեան նշանաւոր դէմքերն են՝ Սարտու , Հալէվի , Էտմոն Ռոսթան , Պէրժըրա , եւն . եւն . :

Անգլիոյ գրականութեան մէջ Շէյքսպիրէն առաջ դո-



յուժիւն ունեցած են միայն կոչտ զաւելչաներ, առանց ճրջմարիտ արժէքի: Շէյքսպիր որքան հանճարեղ ողբերգակ, երեւան կուգայ նաեւ իբրեւ մեծ կատակերգակ՝ իր Վենեսիկի Վանառականին, Ընտելացած Մեգերային և այլ գործերուն մէջ: Իր ժամանակակիցներէն Պէն Ճօնսըն, յետոյ Պօմօնիթ և Ֆլէյչըր ցոյց կուտան մեծ կարողութիւններ, բայց ընդհանրապէս հետեւող են սպանիական կատակերգութեան և շատ փոխառութիւններ ունին անկէ: Դար մը վերջ կուգայ Բրնկրէվ՝ որ կը հետեւի Մօլիէրի, այս շրջանէն սկսեալ անգլիական կատակերգութիւնը իր ինքնատուութենէն կը կորսնցնէ ահագին բան, թէեւ Ֆիլտինկի Ագահը և Կօլտամիթի Պարզամիտը, թատերական հիւսուածքի տեսակէտէն, ունին շատ արժէք. կ'աւելի յիշատակել նաեւ Բրամպրըլէնտ և Շրայտէն: Իսկ նոր ժամանակներու մէջ անգլիական բեմին վրայ շատ աւելի տեղ կը բռնեն ֆրանսական կատակերգութեանց ներկայացումները:

Գերմանիոյ մէջ, միջին դարէն անմիջապէս ետք, առաջին անունը որ լսուած է իբրեւ կատակերգակ՝ Նիւրէմպէրկցի կոչկակար Հանս Զաքսին անունն է, հեղինակ բաղմամբիւ կատակերգութեանց: Ժէ. դարուն՝ Անտրէաս Կրիփիուս յաջող կերպով մշակեց երգիծական կատակերգութիւնը, որմէ ետք Ե. է. Շլէկէլ և Կէլէրտ ջանացին մրցիլ Մօլիէրի հետ: Այս շրջանին ֆրանսական ճաշակն է որ կը տիրապետէ, նիւթի տեսակէտով, գերման կատակերգական բեմին վրայ: Լէսինկ եղաւ, ինչպէս ըսինք, իր Մինա սը Պարնհայմով՝ ազգային թաարոնին վերանորոգիչը, ճամբայ բացողը Կէօթէի, Շիլլերի առջեւ: Մեր օրերուն մէջ ալ թէեւ մեծ տեղ մը կը գրաւեն, գերմանական բեմին վրայ, ֆրանսական կատակերգութիւնները, բայց գերման հեղինակներ ալ՝ ինչպէս է. Վիիւէրթ, Վիլպրանտ և Փաուլ Լինտաու արտադրած են ինքնատիպ գործեր:

Հայ գրականութիւնը՝ որքան հարուստ չէ թատերական գրուածքներով ընդհանրապէս, աւելի ևս չքաւոր է Կատա-

կերգութեան կողմէ մասնաւորապէս : Հակառակ անոր որ Կովկասի հայութիւնը, ժամանակակից շրջանին մէջ, շատ աւելի բախտաւոր եղած է թատրոնի տեսակէտով, չէ կրցած տալ երբեք Կատակերգութեան արժանի գործեր : Յ. Պարոնեանն է որ փորձած է այդ սեռը և նորերուն մէջ ալ Երուանդ Օտեան և Միք. Կիւրճեան :

Օփերան եւս մաս կը կազմէ թատրերգութեան սեռին : Օփերան թատրերգութիւն մըն է, որուն բաւերը ո՛չ թէ կ'արտասանուին, այլ կ'երգուին և որուն մէջ երաժշտութիւն ու բանաստեղծութիւն միացած են իրարու : Օփերային արժէքը ո՛չ այնքան թատրերգութեան մէջ կը կայանայ, որքան երաժշտութեան. իր նպատակն ու էութիւնն է երաժշտութիւնը, թէև Վակնէր հաւասար կարեւորութիւն տուաւ թէ՛ թատրերգութեան և թէ՛ երաժշտութեան, ինքն իսկ, որպէս բանաստեղծ, գրելով կարգ մը Օփերաներ, որոնց մէջ հաւասար չափով խնամք տարուած է նաև թատրերգութեան արհեստագիտական մասերուն :

Օփերան կը բաժնուի շատ մը տեսակներու. ինչպէս՝ Լուրջ Օփերան, որ իր էութեամբ նման է ողբերգութեան կամ տուամի, Կատակերգական Օփերան, որ կատակերգութիւն կը պարունակէ. Օփերեթր՝ որ կը բաղկանայ շատ հասարակ բնաւորութիւն կրող անկապ տեսարաններէ. Մելոսքամբ, որ կը բաղկանայ տեսարանէ մը, ուր ստանաւորին արտասանութիւնը կամ ճառախօսութիւնը տեղի կ'ունենայ երաժշտութեան ընկերակցութեամբ :

## ԹԱՏՐԵՐԳՈՒԹԵԱՆ ՅՈՐԻՆՈՒԱԾՔԸ

Հին յոյները թատրերգութիւնը կը բաժնէին սովորաբար երեք մասի, մինչդեռ ժամանակակից թատրերգութիւնները բաժնուած են առ հասարակ հինգ արարուածներու. այս կանոնը, սակայն, բացարձակ չէ շատերուն համար : Այսպէս, սովորութիւն եղած է,

Ա. Արարուածին մէջ դնել խաղին յառաջաբանը :

Բ . Արարուածին մէջ երեւան բերել խաղին հանգոյցը :

Գ . Արարուածին մէջ գործողութիւնը հասցնել իր զարգացման գագաթնակէտին :

Դ . Արարուածին մէջ երեւան դնել իրադարձութիւնը :

Ե . Արարուածին մէջ առաջացնել աղէտը կամ լուծել խաղին հանգոյցը :

## ԲԱՆԱՍՏԵՂՇՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՍԵՌԵՐ

Երգիծանք — Հովուերգութիւն — Առակ

Կան անտարակոյս Բանաստեղծութեան շատ մը երկրորդական սեռեր, որոնցմէ կ'արծէ յիշատակել Երգիծանքը, Հովուերգութիւնը և Առակը :

Եթէ դիւցազներգութիւնն ու քնարերգութիւնը կը ցոլացնեն մարդկային բնութեան աղնիւ պատկերները, եթէ ողբերգութիւնն ու տուամը կը ներկայացնեն զարհուրելի կիրքերով մոլորած հոգիներ, զո՛հ ճակատագրին — նոյն արուեստը, Երգիծանքի միջոցով, կը վերակենդանացնէ՝ իրենց մասնայատուկ յատկանիշներուն մէջ, ստորին տիպարները : Դարէ դար, սերունդէ սերունդ կը փոխուին բարքերը, իրարու կը յաջորդեն նորաձեւութիւնները, և մոլութիւններն ու ծիծաղելի կը զգենուն զանազան երեւոյթներ : Երգիծարանը օրը օրին կ'ապրի այն բոլորը՝ ինչ որ իրեն կը բերէ մարդոց և իրերու շարժումը : Անիկա հարկադրուած է շառանձնանալ կեանքէն, չմեկուսանալ իր խոկումներուն մէջ, այլ մտնել ամբոխին, հասարակութեան մէջ՝ դիտել բոլոր թերութիւնները, նախապաշարումները, կեանքի բոլոր ծաղրելին և խնդալ անոնց վրայ :

Երգիծանքի ճշմարիտ հայրենիքը Յունաստանէն աւելի Իտալիան եղաւ : Հռոմայեցին բնածին հակում մը ունի դէպ ի երգիծանքը, հակում մը՝ ըմբռնելու ամէնափոքր ծաղրելի բաները և զանոնք կարկառուն գիծերով դուրս ժայթքեցնելու : Եւ յետոյ, ինչպէս յայտնի է, հռոմայեցի ժողովուրդը հռչակաւոր է պերճախօսութեան մէջ. արդ՝ երգիծական բանաստեղծութիւնը էապէս հրապարակախօսական է. ասինարանա-



կան, փաստաբանական հրապարակային ճառ մըն է ան՝ այս կամ այն հակառակորդին դէմ, նպատակ ունենալով ցոյց տալ այդ հակառակորդին սխալները, խարդախութիւնը կամ ստորնութիւնները և այսպէս դրգուել անոր հանդէպ ատելութիւն ու արհամարհանք: Երգիծանքը, այս պատճառով, մշակուեցաւ՝ իբրև քաղաքական դէնք, Հռոմի Պօրուսի հրապարակին վրայ ուր տեղի կ'ունենային քաղաքային ատենախօսութիւններն ու վիճաբանութիւնները: Այսօր երգիծանքը նոյնպէս պերճախօսութեան ամէնասուր դէնքերէն մէկն է, լայց գործ կը դրուի նաև կեանքի բոլոր կողմերուն համար, ծաղրելու, հեգնելու և արհամարհանքի անթակայ ընելու ինչ որ մարդկութիւնն ունի տգեղ ու ստոր:

Ժամանակակից հայ գրականութեան մէջ թրքահայերն են, որ, Երգիծանքի տեսակէտով, ունին բացարձակ գերազանցութիւն Ռուսահայերու վրայ: Մեր գլխաւոր երգիծաբաններն եղած են՝ Յ. Պարոնեան, Ե. Օտեան, Յ. Ալիխար, Ա. Փանոսեան, իւրաքանչիւրն ունենալով սեռին մէջ իր առանձնայատուկ ուղղութիւնը:

Հովուերգութիւնը ծնունդ առած է դիւցազնական շրջանէն ետք, երբ կը սկսի խաղաղ անդէորդութեան և երկրագործութեան կեանքը՝ արտալից երկնքին տակ և կանաչազարդ դաշտերուն մէջ: Հովուերգութիւնը կ'երգէ դաշտային, հովուական կեանքը, ամէն ինչ որ մաս կը կազմէ այդ կեանքին, — հովիւները, հօտը, բնութիւնը, անոնց քաղցրութիւնը ու անոնց խորհուրդը: Կ'ըսուի թէ նախնական հովուերգակ բանաստեղծներէն ամէնէն տաղանդաւորը ապրեցաւ Սիկիլիոյ մէջ, որուն անունն է Դիօրնոս: Բայց իր և իր քերթուածներու հերոսին, Դափնիսի, անունները միայն հասած են մեզի: Դափնիս, հովիւ մըն էր որ սիրականն եղաւ յաւերժահարսի մը և որմէ սպաննուեցաւ նախանձի նոպայի մը մէջ: Դիօրնոս կ'երգէ թշուառ հովիւին դժբախտութիւնը: Այսպէս ուրեմն, առաջին երգը որ արտասանած է մարդկային շրթունքը, եղած է սուգի երգ մը:

Հովուերգութիւնը չի պատկանիր սակայն խաչնարած և գեղջկական կեանքի շրջաններուն միայն . անիկա ծաղկեցաւ նաև քաղաքակրթական բարձր շրջաններու մէջ , ինչպէս և այսօր իր տեղն ունի բոլոր ազգերու գրականութեանց մէջ , — որովհետեւ , քաղաքներու տնտեսային կեանքը խեղդուած տուններու , գործարաններու , բարդ քաղաքակրթութեան մը յուզումնալից մեքենականութեան մէջ՝ կարօտը կը քաշէ բնութեան հանդարտ և խաղաղ քաղցրութիւններուն , արեւին , լոյսին , լեռներուն և գեղջկական պարզութեան անդորրացումին :

Հին գրականութեան մէջ Վիրգիլիոս կը մնայ անմահ վարպետը հովուերգութեան :

Ժամանակակից հայ գրականութեան մէջ՝ հովուերգութիւնը մշակած են՝ Խրիմեան , Յ . Թումանեան , Ա . Իսահակեան , Ա . Յարութիւնեան , Դանիէլ Վարուժան և ուրիշներ :

Առակին ծագումը ծածկուած է ժամանակի մթութեան մէջ , բայց հաւանական ամէնամեծ ենթադրութիւնն այն է որ՝ Արեւելքն եղած է անոր ծննդավայրը : Առակը ուրիշ բան չէ եթէ ոչ այլաբանութիւն մը , այսինքն բան մը արտայայտել այն ձևով՝ որ ուրիշ բան մը հասկցուի անով . անիկա տեսակ մը պատկեր է , տեսակ մը հանելուկ՝ որուն ներքին նշանակութիւնը հարկ է ըմբռնել : Արդ , Արեւելքի Ժողովուրդները առանձնայատուկ ճաշակ մը ունին՝ մտքի այս տեսակ ճկուն • փորձերու համար . անոնց երեւակայութիւնը շատ կ'ախորժի այդ փորձերէն . Արեւելքցիները կը սիրեն իրենց մտածումները ներկայացնել հանճարարուեստ և միանգամայն խորհրդաւոր ձեւերու տակ : Ասկէ զատ , բնականութիւնը՝ որ Արեւելքի պետութիւններուն տիրապետող կողմն է եղած , հարկադրեր է մարդիկը զգուշաւոր ըլլալ ճշմարտութիւնն ու արդարութիւնը խօսելէ համարձակօրէն կամ յայտնապէս . այս պատճառով Արեւելքի միտքը դիմած է կողմնակի միջոցներու . դիմած է այլաբանութեան՝ կարենալ ըսելու այն , ինչ որ անհնար է արտայայտել բացէ ի բաց : Առակը , իր սկզբնական ծագումով , լեզուն է եղած ստրուկին , խօսիլ տալով ճշմարտու-

թիւնները կենդանիներու և անշունչ իրերու շրթունքներով: Առականերուն մէջ կը խտանայ եթէ ոչ ժողովուրդներու իմաստութիւնը, գէթ փորձառութիւնը: Օտար յայտնի առակագիրներն եղած են՝ Եզովբոս, Լաֆոնդէն, Քուլլով, Էւայն: Հայ առակախօսներն եղած են Խիկար, Մխիթար Գօշ, Գաբրիէլ Այվազովսկի, Հ. Քերովբէ Վ. Քուչներեան, Վահան Վ. Տ. Մինասեան, Ա. Փանոսեան և ուրիշներ:

## ԲԱՆԱՍՏԵՂՇԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Ռոմանթիզներ — Պառնասեաններ — Սեմպոլիսթներ

Ֆրանսական Մեծ Յեղափոխութիւնը՝ չխորտակեց միայն միապետական կարգերը, այլ և առաջ բերաւ՝ փիլիսոփայական նոր հայեացքներու ազդեցութեան տակ, որքան ընկերային, նոյնքան մտքի մեծ յեղաշրջում: Մտաւորական այդ յեղաշրջումը անկարելի էր որ չանդրադառնար ինչպէս գրականութեան, նոյնպէս և բոլոր արուեստներու վրայ: Ահա այդ յեղաշրջման հետեւանքով է որ կազմուեցաւ Ռոմանթիզմը՝ Ֆրանսայի մէջ, գրաւելով 19րդ դարուն մէջ ամբողջ առաջին կէտը: Ռոմանթիզ կոչուեցան այն բանաստեղծները՝ որոնք ուզեցին խորտակել դասականներու գծած նեղ սահմանները գրականութեան մէջ, տալով անկաշկանդ ազատութիւն քնարերգութեան: Դասականները կը հետեւէին հիներուն, կ'ընդունէին հին հրաշակերտներու մէջ գործածուած ձեւերը, ոճերը, բացատրութիւններն ու կանոնները իբրև անխախտ և բացարձակ պայմաններ, կաշկանդելով այսպէս ձեւի և արտայայտութեան նոր ստեղծագործութիւնը: Ռոմանթիզները ահա արուեստի այդ բացարձակապաշտութեան ըմբռնումին և նուիրագործուած ձեւերու շղթային դէմ էր որ ըմբոստացան, անցնելով պայմանադրական կանոններու և ըմբռնումներու բոլոր ցանկապատներէն անդին և առաջ բերելով գրականութեան բոլոր սեռերուն, ինչպէս և Բանաստեղծութեան



մէջ՝ արմատական յեղափոխութիւն մը: Անհատականութեան ոգին էր, պարզեւ դարուն փիլիսոփայական ըմբռնումներուն և Յեղափոխութեան, որ կը շղթայազերծուէր, կը հոսէր շատրուանի մը պէս հազար ձեւերով և կը ցրցքնէր իր զգայութիւններն ու յուզումները ազատօրէն, անկախօրէն ու սանձարձակ: Ռոմանթիզմը, ուրեմն, ֆրանսական գրականութեան մէջ նշանակեց երկու բան՝ ժխտում և հակադրութիւն.— ժրխտում գրական սեռերու համար սահմանուած ընդհանուր և մասնաւոր կանոններու, ինչպէս նաև այն կաշկանդումներուն՝ որ կը սահմանափակէին արուեստագէտին նիւթի ընտրութեան և բացատրութեան եղանակներուն ճաշակը. հակադրութիւն՝ այն տեսակէտով, որ դասականները իրենց իբրև օրինակ կ'ընդունէին հին հեղինակները, իսկ ռոմանթիզները՝ միջին դարն ու օտար գրականութիւնները:

Այսպէս, ֆրանսական ռոմանթիզները յեղաշրջեցին գրական սեռերը, կանոնները, ճաշակը, լեզուն և տաղաչափութիւնը: Լեզուն դարձաւ աւելի թանձրացեալ, աւելի զգայուն և նկարչական, ստացաւ աւելի հնչեղութիւն և տուաւ նոյնը կշռաչափութեան:

Ռոմանթիզմի չորս մեծ վարպետներն եղան, ֆրանսական քնարերգութեան՝ մէջ՝ Լամարթին, Ալֆրէտ Թր Վիսենի, Վիքթօր Հիւկօ և Ալֆրէտ Թր Միւսէ:

Ռոմանթիզմը, սակայն, օտար գրականութեանց մէջ ունի բոլորովին սարբեր իմաստ, և յաճախ կը նշանակէ վերածնութեան շրջանը:

Հայ քնարերգութեան մէջ, իբրև ռոմանթիզմի հանձարեղ ներկայացուցիչ՝ Պետրոս Դուրեանը կայ:

Պառնասեան դպրոցը կազմուեցաւ, նոյնպէս Ֆրանսայի մէջ, ընդդէմ Ռոմանթիզմի: Պառնասեանները, որոնց ղեկավարներն եղան Թէօֆիլ Կօթիէ, Պօտրլէռ, Լըքօնթ Թր Լիլ և Թր Պանվիլլ, կը յայտարարէին թէ՛ հարկ է կռուիլ ռոմանթիզներու «ես»ի լալկանութեան և անոնց զգացումներու և

զգայութեանց անհեթեթ ծայրայեղութեան դէմ, հարկ է որ բանաստեղծութիւնը դառնայ նուազ անձնական և ըլլայ շատ աւելի իմացական: Պառնասեաններուն նշանաբանն էր «արուեստը արուեստին համար», այս պատճառով անոնց նպատակն եղաւ ձգտիլ ձեւի, գրական արուեստի կատարելութեան, ջանալով հաւատարմօրէն ներկայացնել որքան ձեւերու և գոյներու վերարտադրումը, նոյնքան գաղափարներու տրամաբանութիւնը: Բայց իրենք եւս մէկ ծայրայեղութենէն ինկան ուրիշ ծայրայեղութեան մը մէջ, իրենց գործերը եղան նկարչագեղ, վերլուծող և ներկայացնող (représentatif), բայց զուրկ կենդանութենէ և ցուրտ: Պառնասեան բանաստեղծութեան առաջին փորձը, հայ գրականութեան մէջ, ըրաւ Ա. Չօպանեան, հակազդելով դուրեանական լալկանութեան որ տիրապետողն էր մինչև այն ատեն հայ քնարերգութեան վրայ:

Սեմպոլիս, խորհրդանշանապաշտ բանաստեղծները՝ պաշտպանեցին այն սկզբունքը թէ ճշմարիտ բանաստեղծութեան նպատակն ըլլալու է թարգմանել այն ինչ որ հոգին կը պահէ իր մէջ ամէնէն խորունկը և գրեթէ անգիտակցօրէն: Սեմպոլիստական հոսանքը հակադիր շարժում մը եղաւ Պառնասեաններու կարծր, մետաղային և մարմարեայ ձեւերուն: Պատմական կամ բարացուցական պատկերները, ճշգրիտ և գրեթէ հաստատուն բնանկարները, գիտական և փիլիսոփայական ճառերը, վերջապէս բոլոր առարկայական և անանձնական բանաստեղծութիւնը՝ որ մշակուեցաւ Պառնասեաններու կողմէ, դարձած էին այլևս ճանձրալի: Նոր բանաստեղծները կ'ուզէին վերադառնալ նորէն իրենց հոգեկան, ներքին յուզումներու աղբիւրին, բայց երբեք միտք չունէին վերակենդանացնելու ուժանթիզմը: Նոր շարժման կողմնակիցները կը պաշտպանէին այն փիլիսոփայական թէզը թէ՛ իրերը գոյութիւն չունին առանց մեր զգայութեան, կամ ուրիշ խօսքով, անոնք կ'ըմբռնենք մեր զգայութեանց միջոցով. իրերը մեր մէջ են, իրերը մենք ենք: Բնութենէն մարդու մը ստացած պատկերը ուրիշ բան չէ՛ եթէ ոչ նոյն մարդուն մտքի կեանքն իսկ. մարդուն եսը՝

ինքն է որ կը զգայ, ինքն է որ կը գտնէ զինք իրերուն մէջ : Երբ ես կը նկարագրեմ իմ տեսած բնակարաններս իրենց նրբաբանգներուն մէջ՝ զոր կը տեսնեմ, երբ ես կը հաւաքեմ իմ ոտանաւորիս մէջ հատակոտորները այն իրերուն՝ որոնք կը գոյակցին կամ զիրար կը քաշեն իմ մտածմանս մէջ, ուրիշ բան ըրած չեմ ըլլար, եթէ ոչ պատմել իմ հոգիիս գաղտնիքը, ըսել շրթունքներուս վրայ իմ զգացած կեանքի համը և ըսել տակաւին թէ ի՞նչպէս մարդկային ճակատագրի օրէնքները կը բեկբեկին իմ անհատական եզակիանութեանս մէջ : Ամբողջ բնութիւնը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ իմ էութեանս և իմ կեանքիս խորհրդանշանը : Եւ արդէն խորհրդանշանը կազմուած է երկու առարկաներու կցորդութենէն, որոնցմէ մէկը ընդհանրապէս կը վերաբերի նիւթական աշխարհին, իսկ միւսը՝ բարոյական աշխարհին :

Այսպէս, երբ Պառնասեան արուեստը ուղղակի ներկայացում (représentation) մըն էր, սէմպոլիզմը, իբրև անոր հակադրութիւնը, եղաւ տեսակ մը ոգեկոչութիւն : Սէմպոլիսթներու բանաստեղծութիւնը նման է երաժշտութեան՝ իր նպատակով, այսինքն թարգմանել վերլուծումէ խուսափող զգացումներ ու յոյզեր, իր կշռութեան, իր չափին և իր հնչիւններուն միջոցով : Այս պատճառով, սէմպոլիսթները ոչ միայն պաշտպանեցին ձևի մեծ ազատութեան սկզբունքը, այլ և հիմնովին յեղաշրջեցին քերականական համաձայնութիւնը, նոյն իսկ բառագիտութիւնը՝ ստեղծելով քերականական նոր ձևեր և նոր բառեր, բացատրելու համար հոգեկան ամէնանուրբ և խուսափող զգայութիւնները :

Սէմպոլիստական շարժման կազմութեանը նպատած են, իրենց ազդեցութեամբ, գերման և անգլիական գրականութիւնները, վակնէրեան երաժշտութիւնը և նախառաֆայէլեան կոչուած նկարչութիւնը :

Սէմպոլիստ դպրոցին նախաձեռնողն ու օրէնադիրն եղաւ Սթէֆան Մալաուէ, բայց վարպետը կը մնայ Փոլ Վէռլէն՝ իր ինքնատիպ և անկեղծ ներշնչումովը : Յայտնի են իբրև սէմ-



պօլիստ բանաստեղծներ՝ Կիւսթաւ Քահն, Ժիւլ Լաֆօրկ, Վիէլէ Կրիֆէն, Ռօտէնսպախ և Վէրհարէն :

Հայ բանաստեղծութեան մէջ, սէմպօլիստական արուեստի ամէնէն տաղանդաւոր ներկայացուցիչն է Ատոն Եարճանեան :

## Ա Ր Ձ Ա Կ

Մինչ Բանաստեղծութեան նպատակն է դիմել երեւակայութեան, Արճակին նպատակն է դիմել խորհրդածութեան : Արճակագիրը իր երեւակայութեան քմահաճոյքին համաձայն ձեւափոխման չենթարկեր այն տարրերը՝ զորս կ'առնէ իրականութենէն, այլ կը դասաւորէ, լոյսի տակ կը դնէ, կը գործածէ զանոնք կանխորոշ նպատակի մը համար : Բանաստեղծութեան իսկական դիտաւորութիւնն է՝ հաճոյք պատճառել, հրասլուրել . իրաւ է թէ կը պատահի որ ունենայ նաև կրթիչ հանգամանք, բայց ասիկա ընդհանրապէս իր առաջադրութիւնը չէ . Արճակը, ընդհակառակը, կ'ուզէ ուսուցանել և ամէն ինչ ստորադասել այդ նպատակին : Մինչ Բանաստեղծութիւնը ենթակայ է չափի, յանդնի և այլ մասնաւոր կանոններու կապանքին, կրելով աւելի շատ անհասական դրոշմ, — Արճակը ազատ է այդ կարգի օրէնքներէ և է ընկերային կեանքի, խօսակցութեան լեզուն : Արճակը ուրեմն բնական լեզուն է սրամարանութեան, քննադատութեան և գիտութեան՝ իր բոլոր ձևերուն տակ :

Այսպէս Արճակը ծնունդ առած է այն ասին՝ իրբ ժողովուրդները յոգնելով իրենց մանկութիւնն օրօրող առասպելներէն, պէտքն զգացած են աւելի կենսայիբ մտաւորական սնունդի մը, ճշմարտութեան : Արճակով է որ մշակուած են Պատմութիւնը, Պերճախ օսութիւնը, Փիլիսոփայութիւնը, Վէպը և մտքի կամ գիտութեան սահմաններուն մէջ ինկած բոլոր սեռերը : Պատմութիւնն ու Վէպը կ'իյնան Պատմաբանական Արճակի սահմանին, իսկ մնացած բոլոր տեսակի արճակները Ապացուցական Արճակի ստորակարգութեան մէջ :

## Ա. Պ Ա Տ Մ Ո Ւ Յ Ի Ի Ն

Պատմութիւնն է որ Արձակին մէջ կը բռնէ, ժամանակագրական տեսակէտով, առաջին տեղը: Ինչպէս դիտել տուինք ասկէ առաջ, գրական իւրաքանչիւր սեռի երեւումն ու ձեւափոխումը կը համապատասխանէ մարդկային մտքի մէկ բարեշրջմանը: Այսպէս, հին Յոյները բազմաթիւ դարեր վայելելէ ետք անհուն հաճոյքը դիւցազներգութիւններուն, այն ընդարձակ պատմութեանը՝ ուր աստուածայինն ու մարդկայինը իրարու խառնուած էին, ըւր դէպքերը առասպելական և հրաշագան նկարագիր մը ունէին, — պէտքն զգացին աւելի ստոյգ, աւելի դրական եղանակով մը ճանչնալու այն եղելութիւնները՝ որոնց վկաներն ու դերակատարները եղած էին իրենց հայրերը: Լքելով հանճարարուեստ առասպելները, ուղեցին գիտնալ, այսինքն ճշգրիտ ծանօթութիւնն ունենալ իրական բաներուն: Կարելին կամ ճշմարտանմանը չէր որ կը յանկուցանէր այլեւս մտքերը, այլ ճշմարիտը: Այն ատեն անա Բանաստեղծին յաջորդեց Պատմաբանը: Եւ արդէն յունարէնի մէջ պատմաբան կը նշանակէ գիտցող, իսկ բանաստեղծ՝ ստեղծագործող:

Պատմութիւնը ինք եւս, իբրեւ սեռ, կարելի չէր որ չունենար իր բարեշրջութիւնը: Առաջին պատմաբանը կարող պիտի չըլլար մէկ անգամէն մտնել իրականութեան կալուածին մէջ. տակաւին բանաստեղծութեան հրապուրիչ առասպելները, միամիտ հաւատալիքները մեծ տեղ պիտի բռնէին իր գործին մէջ. — այսպէս է անա Հերոդոտոսի, առաջին պատմաբանին, գործը, որ նուիրուած է Յունաստանի և Ասիոյ հսկայ մենամարտին: Ճիշտ է, Հերոդոտոսի քով իրական դէպքերը կ'երեւան պայծառ լոյսի տակ, բայց և այնպէս ո՛րքան առասպելներ՝ խառնուած այդ մեծ եղելութիւններու պատմութեան հետ: Թուգիդիտէս, որ կուգայ Հերոդոտոսէն ետք, կ'ընէ պատմութիւնը Պեղոպոնէսի զարհուրելի պատերազմին: Իր գործին մէջ այլեւս ճշմարտութիւնն է որ դրոշմուած է, ճըշ-

մարտութիւնը՝ անսքող և առանց ստուերի . ոչ մէկ առապել , ոչ մէկ միջամտութիւն աստուածներու , ոչ մէկ խորհրդաւոր զսպանակ որ վարէ պատմական եղելութիւնները . դէպքերը պատրաստողն ու ղեկավարողն է միմիայն քաղաքականութիւնը , այսինքն զուտ մարդկային շահերու , հաշիւներու և շարժառիթներու ամբողջութիւնը : Թուգիդիտէս կը տեսնէ , կ'ըմբռնէ , կը դատէ մարդիկն ու իրերը ամենաբարձր անկողմնակալութեամբ , իր միակ մտահոգութիւնն է պահպանել եղելութիւններուն և անձնաւորութիւններուն ճշմարիտ գիմագծութիւնը :

Հռովմայեցիները նկատեցին Պատմութիւնը էապէս պերճախօսական սևռ մը , արհամարհանք զգալով առաջին տարեգիրներուն , նոր ժամանակագիրներուն նկատմամբ , որոնք գեղեցկացնել չէին գիտեր դէպքերը և իրենց յաջորդներուն կը կտակէին միայն հուժմ նիւթեր : Սյսպէս Տիտոս-Լիվիանոս , և Լուկիանոս՝ պատմաբանին դերը սահմանեցին հետեւեալ կերպով ,—ճշմարիտ պատմաբանը պէտք է որ ո՛չ ատելութիւն ունենայ , ոչ սէր . պէտք չէ պատկանի ո՛չ մէկ ժամանակի , ո՛չ մէկ երկրի , այլ պէտք է ըլլայ չէզոք և անկողմնակալ . մանաւանդ պարտաւոր է իր առաջ բերած դէպքերէն դուրս հանել օգտակար բարոյական մը՝ իր ընթերցողին համար , ցոյց տալ անհասներու և Պետութեանց առաքինութիւններուն ու մոլութիւններուն մէջ անոնց բարձրացման և անկման անմիջական պատճառները : Պատմութեան էութիւնն է ասիկա , ուր , ինչպէս կը տեսնուի , ճշմարիտ քննադատութիւնն ու գիտութիւնը քիչ տեղ կը բռնեն : Գալով ձեւին , Հռովմայեցիները կուտային անոր ահագին կարեւորութիւն : Պատմաբանը պէտք էր որ կարգի ենթարկէր իր գործին զանազան մասերը , գործածէր ազնիւ և պերճ ոճ , ըլլար աշխոյժ և տրամաթիգ՝ իր պատմելու հղանակին մէջ , մտացի՝ իր կենդանագրութեանց , պերճախօս և համոզիչ՝ իր ճառերուն մէջ , եւն . եւն . , ամէնքն ալ զուտ գրական յատկութիւններ , որոնք ունենալը անշուշտ լաւ բան է , բայց որոնք շատ հեռու են բա-



ւելու սակայն պատմութեան նման խիստ դժուարին աշխատութեան մը :

Պատմութիւնը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ գիտութիւնը այն դէպքերուն և եղելութեանց՝ որոնք կը թաւալին ժամանակին մէջէն, — և արդի ըմբռնումով նկատուած է անիկա թէ՛ որպէս արուեստ, թէ՛ որպէս գիտութիւն : Արուեստին դերն ա՛յն է, պատմութեան մէջ, որ բացատրէ և իր ընթերցողներուն թափանցել տայ երեւան բերուած ճշմարտութիւնները : Նոյնքան գիտութիւն է նաև Պատմութիւնը, որովհետև ունի որոշ նպատակ և մասնաւոր մեթոտ : Պատմական ծանօթութիւնը այսօր կը կաթնի հակակշռի ենթարկուած, ճշմարիտ, ստոյգ վկայութիւններու և մարդկային գործունէութենէն մնացած յայտնութիւններու վրայ, պատմական աղբիւրները այսօր անհունապէս բազմապատկուած են, Պատմութեան բերելով մէկէ շատ աւելի օժանդակ գիտութիւններ, ինչպէս մասնախօսութիւնը, գրչագիտութիւնը, դրամագիտութիւնը, ժամանակագրութիւնը, դիւանական թղթերը, հնախօսութիւնը, հնէաբանութիւնը, ևն., ևն. : Գործ կը դրուի պատմական քննադատութիւնը՝ ճշտելու համար վկայութեանց վաւերականութիւնը, անկեղծութիւնը, արժէքը : Պատմական մեթոտին էական դէնքն է վերլուծումը, — պէտք է վերլուծել ամէն իրաստ՝ ճշտելու համար իր տեղը այն համադրութեան մէջ, որուն կը ձգտի Պատմութիւնը : Պարզ է ուրեմն որ, Պատմութիւնն ըլլալով գիտութիւն մը, պատմաբանը այն ատեն միայն կրնայ յաջողիլ իր նպատակին մէջ՝ երբ վերծ ըլլայ ամէն նախընկալ և կանխակալ կարծիքէ, պահելով բացարձակապէս անկողմնակալ և հնար եղած չափով անանձնական դեր :

Ակնարկ մը ձգելով Պատմութեան բարեշրջութեան վրայ, կրնանք բարձրանալ հետևեալ աստիճաններէն վեր. — երբ ան կ'ուսումնասիրէ անհատի մը կեանքը՝ կը կոչուի Կենսագրութիւն, երբ նիւթ ունի ազգ մը՝ կը կոչուի Ազգային Պատմութիւն, երբ կ'ուսումնասիրէ խումբ մը ազգեր՝ կը կոչուի Ընդհանուր Պատմութիւն, իսկ երբ կ'ընդգրկէ բոլոր ընկերութեանց

ամբողջութիւնը բոլոր ժամանակներու մէջ՝ կը կոչուի Տիեզերական Պատմութիւն: Տիեզերական Պատմութիւնը այլապէս պատմութեան փիլիսոփայութիւնն է, որ իբրեւ գիտութիւն պէտք է համարիլ փառաշուք ամփոփումը հնութեան և մեզի մօտ ժամանակներու ընդարձակ կալուածին մէջ գոյութիւն ունեցած մանրամասն եղելութիւններու անթիւ գիւտերուն: Անիկա մեկնակէտ ունենալով բոլոր հին ու նոր ժողովորդներու վերջնապէս լուսաբանուած պատմութիւնը՝ կը բարձրանայ յղացմանը միակ պատմութեան մը, կ'ընդգրկէ իր մէջ բոլոր մասնաւոր պատմութիւնները: Իր գլխաւոր հերոսը այլևս այս կամ այն անձնաւորութիւնը, այս կամ այն ժողովուրդը չէ, այլ ամբողջ մարդկային սեռը, որ նկատի առնուած իբրև միակ էակ մը՝ կը զարգանայ ժամանակին ու միջոցին մէջ, համաձայն մասնաւոր օրէնքներու՝ զորս գիտութիւնը կը ձգտի հասկնալ ու ցոյց առնել: Ամբողջ երկրագունդն է անոր սարիքը, որ առարկայ կը դառնայ ուսումնասիրութեան, երբ երեւցաւ մարդկային կեանքը, ինչպէս տեղի ունեցան նախաւոր սերունդներուն յամրագանդող յառաջդիմութիւնը ծնուող ընկերութեանց, անոնց տեղափոխութիւնները, ցեղերը, կրօնները, լեզուները, օրէնքները, սովորութիւնները, ինչ են այն տակաւին խորհրդաւոր կապերը՝ որ ժողովուրդները մէկզմէկու կը կապեն, վերջապէս այն աստիճանական ընթացքը՝ որ իւրաքանչիւր ազգ կ'առնէ միշտ դէպ ի լաւագոյն վիճակ մը:

Հայ պատմիչներն եւս, սկսեալ Թորենայիէն կը կրեն բոլոր այն թերութիւններն ու առաւելութիւնները՝ որ յատուկ էին հիներուն, Պատմութեան կոչումն հասկնալու իրենց անկատար ըմբռնումովը: Գիտական մեթոտն ու քննադատական վերլուծումը կը բացակայի իրենց քով, իսկ արուեստին մտահոգութիւնը կը բռնէ գերակշիռ տեղ: Այս պատճառով է որ, մեր հին պատմաբաններուն քով առասպելները և ճշմարտանմանը խառն են եղելութեանց ու իսկական դէպքերու հետ, յաճախ նոյն իսկ փոխարինելով զանանք: Նոր ժամանակներու մէջ է որ գիտական մեթոտը սկսաւ կիրարկուիլ նաև հայ ժողովուրդի հին Պատմութեան համար, զտելու համար անոր մէջէն առաս-

պելները իրականէն, ճշմարտանմանը՝ ճշմարտութենէն : Օտար և հայ բանասէրներ կը շարունակին վերլուծման ու դաման այդ արգասաբեր աշխատանքը, օգտուելով բաղդատական պատմութեան սւ լեզուագիտութեան, արձանագրութիւններու, բեւեռագիրներու, դրչագիրներու, դիւանական թղթերու, դրամագիտութեան և այլ օժանդակ գիտութիւններու բոլոր աղբիւրներէն, այսպէս ջանալով վերակազմել մեր ազգային վաւերական ու ստոյգ պատմութիւնը :

## Բ. ՊԵՐՃԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Պերճախօսութիւնը ծաղկած է, ինչպէս հին, նոյնպէս նոր ժամանակներուն, մի միայն այն երկիրներուն մէջ՝ ուր գոյութիւն ունեցած է քաղաքական ազատութիւնը : Բռնապետական երկիրներու մէջ, ուր լռութիւնը օրէնք է և քաղաքացիական ստրկութիւնը պայման, Պերճախօսութիւն բնականաբար չի կրնար տեղ ունենալ, այս պատճառով է որ ո՛չ Արևելքի հին ու նոր միապետական կայսրութիւններու մէջ, ոչ ալ նոյն իսկ Յունաստանի ու Հռովմի միապետական կարգերութուականին՝ երեւան եկան պերճախօսներ : Հանրապետական Աթէնքն ու հանրապետական Հռովմն էին որ ծնան Գեմոսթիւնեաներն ու Կիկերոնները, որովհետեւ ժողովրդապետութիւնը ինքնին հարկադրական կը դարձնէ որ երկրին քաղաքական ու պատմական ճակատագիրը վարող անձնաւորութիւնները պաշտպանն իրենց սկզբունքները հասարակութեան առջեւ և հակառակորդներու դէմ, կարող ըլլան խօսքի և համոզման ուժով վարել հանրային կարծիքը՝ որ ամէն վայրկեան ատտաման և ծփանքի մէջ է, կարող ըլլան վերջապէս պաշտպանել բոլոր այն գործերն ու ձեռնառկները՝ որոնք կ'իրագործեն պետութեան մէջ, յանուն հանրային բարօրութեան : Բեմախօսական կանոնները չեն որ— ինչքան ալ, իբրեւ արուեստի թէքնիք պայմաններ, առատ ըլլան—մարդը կը դարձնեն պերճախօս : Անհատը պէտք է օժտուած ըլլայ անձնապէս բնական յարմարութիւններով, ուսումնասիրած ըլլայ դինքը



չրջապատող կեանքը և իր պերճախօսութեան նիւթը գտնէ այն միջավայրին մէջ ուր ծնած է ինք :

Ազատութիւնը պայման է ոչ միայն քաղաքական պերճախօսութեան , այլ նաև դատարանական պերճախօսութեան համար , քանի որ առանց քաղաքական ազատութեան՝ դատարաններու մէջ ևս իշխողն է կամայականութիւնը , — դատաւորները կը դատեն առանց լսելու փաստաբանը , ինքնին աւելորդ դարձնելով յանուն օրէնքին ու յանուն ամբաստանեալին անմեղութեան ամէն պերճախօս պաշտպանողական :

Քրիստոնէութիւնը , իբրև նոր վարդապետութիւն մը՝ որ յեղաշրջեց հին ընկերութիւնները , հաղորդելով նոր միաք մը իր ժամանակին , կարելի չէր որ չունենար նաև իր դրոշմը բոլոր արուեստներուն , ինչպէս և Պերճախօսութեան վոյս : Իր հալածանքի օրերուն մէջ՝ ունեցաւ իր ջատագովները , Յուստիանոսները , Տէրտուղիանոսները , և երբ յաղթանակեց՝ ունեցաւ իր վարդապետները , ու եկեղեցիին բեմէն սկսան ուսուցանել աւետարանական բարոյականը , ծնունդ տալով այսպէս Եկեղեցական Պերճախօսութեան կամ Քարոզին :

Այսօրուան ազատ երկիրներու մէջ Պերճախօսութիւնը ընդարձակած է իր սահմանները այնքան որքան բաղմապատկուած են հանրային կեանքի ասպարէզները և որքան այդ ասպարէզներուն համար թօսքը ստանձնած է առաջնորդողի անմիջական դեր :

## Գ. Վ Է Պ

Վէպը՝ որ արդի արձակին մէջ կը բռնէ ամէնէն գերակշիռ տեղը , հաղիւ ճանչցուած հին Յոյներէն և նախազգայուած Հռովմայեցիներէն , միջին դարուն մէջ խառնուած էր ազգային դիւցազներգութեան , հնութեան վերյուշումներուն , ժողովրդական աւանդավէպերուն և Արեւելքի հէքեաթներուն հետ : ԺՁ. դարուն մէջտեղը ու վերջերն էր որ երկու անձեր , Ռապրլէ ու Սէրվանթէս , առաջինն իր գաղափարներու դիտողութեամբ

և երկրորդը՝ ծայրայեղութեանց դէմ ողջմտութեան յաղթանակին ծառայող իր սուր հեգնութեամբը, իրական հիմը դրին վէպին :

Վէպը ուրիշ բան չէ արդարեւ, եթէ ոչ միշտ պատկերը ժամանակակից ընկերութեան մը : Իբրեւ ստեղծագործող արուեստի ընդհանուր օրէնք, վէպին մէջ դէպքերը իրենք է որ պէտք է վարեն անճնաւորութիւնները, ոչ թէ անճնաւորութիւններն են որ պէտք է ստեղծեն քմահաճօրէն դէպքերը : Վիպագիրը կամ վիպասանը ջանացած է նկարել իր ժամանակի բարքերն ու անձերը, արտայայտել իր ժամանակի ընկերային կեանքը՝ համաձայն այն դարու ոգիին և մտաւորական տիրապետող հոսանքներուն : Այսպէս, ժէ. դարէն մինչև ժԹ. դարը՝ վէպն արդէն կը ստանայ շատ ձևեր, իսկ ժԹ. ի ընթացքին կը դառնայ գրեթէ բոլոր սղգերու գրականութեանց գերիշխող տարրը, Ֆրանսայի մէջ մանաւանդ հասնելով փայլուն դարգացման : Այսօր անիկա արդէն կը ներկայանայ հազար ձևով—փիլիսոփայական, բարոյական, գիտական, քաղաքական, կրօնական, պատմական, հոգեբանական, ևն., ևն. : Բայց այդ բոլոր ձևերուն մէջ՝ կան երեք յայտնի վիպական ուղղութիւններ, որոնք թէև իրենց ծագումով և իրենց բանաձևումով կը պատկանին ֆրանսական գրականութեան, բայց դարձած են տիեզերական՝ իբրև գրական որոշ դպրոցներ : Այդ դպրոցներն են Ռումանթիզ, Իրապառես և Բնապառես վիպասանութիւնը :

Ռումանթիզմը՝ որ ծագկեցաւ ժԹ. դարու առաջին կիսուն, ինչպէս ըսինք Բանաստեղծութեան բաժնին մէջ, հետեւանք էր ֆրանսական Մեծ-Յեղափոխութեան առաջ բերած մտաւորական ու ընկերային խոր յեղաշրջման : Գրականութեան վրայ կը տիրապետէր քնարերգութիւնը, որ ինքն ևս ուրիշ բանի արդիւնք չէր, եթէ ոչ անհատականութեան ձերբազատումին և հոգեկան զգացումներու յորդառատ զեղումին : Գրագէտները դարձած են զգայապաշտ, երեւակայոտ, խանդավառ և մելամաղձոտ : Անոնք հրաժարած են ուղիղ և նուրբ վերլուծումներէ և անճնատուր են եղած զգայականութեան. հոգեկան ազդակրութիւններէն (sensations) իրենց մէջ դեր կը

խաղան միմիայն անոնք՝ որ ուղղակի արդիւնքն են տիեզերքի նիւթական իրերէն մեր ստացած զգացումներուն, ինչպէս սիրոյ և յոյսի, ատելութեան և յուսահատութեան, խանդավառութեան ու տրամութեան զգացումները, նկատողութեան չեն առներ երբեք այն ազդակրութիւնները՝ որ անուղղակի հետեւանքներն են այդ վերջիններուն: Իրենց ներշնչումը տենդագրգիւ, խռովայոյզ և անբարեխառն է: Անոնք գիտնալ չեն փնտռեր՝ բանականութեան միջոցով, այլ հեշտանալ՝ զգացումներու միջոցով. այս պատճառով է որ իրենց գործերուն մէջ ճշմարտութիւնը նոյնացած է բաղձանքի կամ սիրոյ հետ: Գրագէտը իր կանոնը կ'առնէ իր խառնուածքէն: Մէկ խօսքով, ռոմանթիզ վիպագրողներու էական յատկանիշներն են՝ անսահման ներշնչում և հեծեծանք, ախորժանք արցունքի, տրամութեան և մահուան, հետամտութիւն յուզիչ կամ ահեղ հակադրութիւններու: Ռոմանթիզ վիպասանները չեն ներկայացներ կեանքը՝ ինչպէս որ է, չեն բացատրեր զայն առարկայական և անանձն վերլուծումով, այլ կը ներկայացնեն զայն այնպէս՝ ինչպէս կը փափաքէին որ ըլլար:

Ճշմարիտ իրապատէս դպրոցը ա՛ն է որ 1850 թուականներուն ջանաց արուեստը տանելու իրականին ուղղակի դիտողութեան. բայց նոյն իսկ ԺԹ. դարու առաջին կիսուն մէջ կարգ մը հեղինակներ՝ ինչպէս Սթանտալ, Մէրիմէ և մանաւանդ Պալզազ արտատրեցին էտպէս իրապաշտ գործեր: Սթանտալ գործ դրաւ վերլուծման մեթոտը, փնտռելով մարդկային գործերու դրդապատճառները, մանրամասնելով զգացման մը նրբերանգները, զանց առնելով բնանկարներու, արտաքին իրերու և բնական պարագաներու ամէն նկարագրութիւն: Մէրիմէ իր խորքին մէջ սկեպտիկ, թերահաւատ դէպ ի մարդը և մարդկային յառաջդիմութիւնը, ներկայացուց, ամենայն պաղարիւնութեամբ, ամէն տեսակ ոճիրները, վատութիւններն ու մոլութիւնները, արտատրելով իր վիպակներուն մէջ՝ չափազանց կենդանի և կատարեալ տիպեր: Պալզազ նկարեց պուրժուա և ժողովրդական դասակարգերու բարքերը, տալով



այդ բարքերէն այնպիսի իրական նմոյշներ, որ ոչ միայն կը յատկանշեն այն ժամանակի ֆրանսական ընկերութիւնը, ֆրանսական պուրժուազին՝ իր թերութիւններովն ու մոլութիւններովը, իր ստոր բնազդներովն ու եսապաշտ ձգտումներովը, այլ և ճշմարտապէս զինքը կը դարձնեն Իրապաճ գայրոցին հայրը: Բայց Իրապաշտութիւնը այն ատեն միայն դարձաւ տիրապետող և որոշ՝ երբ ռամանթիզմը հասաւ ծայրայեղութեան. ահա այն ատեն, երեւակայութեամբ և զգայնութեամբ կազմուած գրականութեան յաջորդեց ուրիշ մը՝ ամբողջովին գրական, որ կ'առաջադրէր շրջափիւռ կեանքը վերարտադրել միմիայն այն եղանակաւորումներով՝ զորս լոկ արուեստի օրէնքները անհրաժեշտութիւն կը դարձնէին արուեստագէտին համար: Այսպէս, գրական բոլոր սեռերն ալ ենթարկուեցան վերանորոգման, — քննադատութիւնը, պատմութիւնը, բանաստեղծութիւնը և մանաւանդ երկու գերիշխող սեռերը՝ վէպն ու թատրոնը: Ինչ որ նախապէս կոչուեցաւ Իրապաճ-Տուքիւն, յետոյ առաւ Բնապաճ-Տուքիւն անունը: Ռոմանթիզմէն դէպ ի Բնապաշտութիւն տանող փոխանցման հանգոյցը կը ներկայացնէ Կիւսթավ Ֆլօպէռ՝ իր ուղղութեամբ: Ֆլօպէռ կը ջանայ սահման դնել երեւակայութեան և հանդարտօրէն, համբերատարութեամբ ընդօրինակել բնութիւնը՝ դայն պատկերացնելու համար իր իսկական և ինքնայատուկ դրոշմին մէջ:

- Ֆլօպէռի վէպը առարկայական է, անանձնական, անզգած:
- Անոր նախատակն է ընթերցողին յուզում կամ կարեկցութիւն ազդել ոչ թէ վիպագրողին ուղղակի միջոցովը, ուղղակի անոր ճնշումովը, այլ թողուլ որ այդ տպաւորութիւնը բղխի նոյն ինքն իրերու ընթացքէն, իրերուն ծոցէն. վէպը պէտք չէ որ ըլլայ վիպագրողին երեւակայութեան մէկ խաղը, այլ մէկ հայելին մարդկային հոգիին և մէկ պատկերը կեանքին:

Բնապաճ-Տուքեան իսկական միմնադիրն հռչակուեցաւ սակայն Էմիլ Զոլան, որ ոչ միայն ընդունեց իրապաշտ արուեստի եղանակները, այլ վէպին իբրեւ հիմ դաւանեցաւ փիլիսոփայական և բարոյական վարդապետութիւն մը՝ կռթնած

գիտութեան վրայ : Զօլա իր վարդապետութիւնը բանաձեւեց՝ ազգեցութեանը տակ Ֆլօպէսի , Թէնի և հոգեբան գրողներու , ջանալով մարդկային զգացումներն ու կիրքերը , մոլութիւններն ու թերութիւնները պարզաբանել միմիայն բնախօսական պայմաններու , մրջավայրի , տեղի , կլիմայի ժառանգականութեան ազգեցութեանց շնորհիւ :

Բնապաշտ դպրոցին վարդապետներն են Զօլա , Տօտէ , Կոնքուռ Կըրայրներ , բայց անոնցմէ ոչ մէկը ճշմարտապէս անթերի կերպով համապատասխան եղաւ բնապաշտական վարդապետութեան՝ որքան Կի տը Մօքսան :

## ՆՈՐԱՎԷՊ, ՀԷՔԵԱԹ ԵՒ ՍԵՌԻՆ ԱՅԼ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Նորավեպ պարդապէս խտայած վէպ մըն է , ուր աւելի սեղմ շրջանակի և անձուկ սահմանի մը մէջ վեր առնուած է կեանքի մէկ կողմը կամ բարքերու մէկ նկարը , համառօտելով ամբողջութիւն մը մանրանկարչական գծերով :

Հեքեաթն ալ կը կազմէ վիպադրութեան մաս , ըլլալով հրաշաղան վէպ մը՝ որուն յաջողութիւնը կը կայանայ իր անճշմարտանման հանգամանքին մէջ , արտայայտելով երբեմն , այդ ձևով , քմայքն ու երեւակայութիւնը , փիլիսոփայութիւնն ու հոգին ժողովուրդի մը կամ պատմական շրջանի մը :

Պատմական կը կոչուի վէպը , երբ իր անձնատրութիւնները , ինչպէս նաև անոնց գէրծունէութեան շրջանակ ծառայող անցքերը առնուած են պատմութենէն , կրելով վիպասանին երեւակայութեան համաձայն աւելի կամ պակաս եղանակաւորումներ :

Հովուական վէպը կը նկարագրէ գիւղի մարդոց բարքերը և գեղջկական կեանքը :

Հոգեբանական վէպը նպատակ ունի նկարագրել հոգին , հոգեկան վիճակները , անոր կազմութիւնն ու ձևափոխութիւնը , վերլուծումը անոր խորհրդաւոր հանդոյցներուն և





## Բ Ա Ռ Ա Ց Ա Ն Կ



- Ա.ժեսուս**, էժասուսար, առասպելական հսկայ, դեւերու պետ
- Անգան**, (թուրքերէն **հան** բառէն) առանց հողիի, անկենդան, կենսազուրկ, վտիտ
- Անիփուսիա**, Պայքար օրէնքի եւ բանականութեան միջեւ, հակօրինութիւն
- Առք**, աղօս
- Արթիստ**, Artiste, Արուեստագէտ
- Արուսի**, (թուրք.) մէջտեղէն (երկու աւարկայի)
- Բալէ**, Չաւակ
- Բասուրման**, (Ռուս. ռամկական) երեւութօրէն «մոլորակման» բառին ազաւազումն է եւ կը գործածուի ոչ-քրիստոնեաներու նկատմամբ. ինչպէս որ մահմետականներու կողմէ կեաւոր, վայրագ, անհաւատ բառերը
- Բին**, հիւղ
- Բուլվար**, Boulevard, Ծառուղի
- Բուֆէթ**, Buffet, ճաշարան (որ կից է ո եւ է ուրիշ հիմնարկութեան, պահարան ճաշի պարագաներու համար (ամաններու, դանակներու, աղի, գինիի եւն.))
- Բուրան**, Ձիւնախառն փոթորիկ
- Բոլ**, (թուրք.) Առատ, առատօրէն
- Գալերէյ**, Galerie, Նրբանցք, ճեմավայր, դեմնուղի
- Գգիւ**, Գիւղապետի օգնական, անոր գործադիր պաշտօնեան
- Գժուկ**, խենդենալ
- Գնացք**, կառախումբ, կառաշար
- Գարսել**, իրերը կարգով իրարու վրայ շարել
- Գէն գցել**, Անդին հրել
- Գէտ**, Դեւ
- Ջարգանդ**, Սարսափ, արհաւիրք
- Էնդուր**, Անոր համար, այդ պատճառով (էնդուր առանձին չի գործածուիր, այլ «էնդուր որ», «էնդուր համար որ»)
- Էվոլիցիա**, Evolution, Բարեշրջում, բնաշրջում
- Էրօտիկ**, Erotique, Սիրային, տարփական արուեստի մէջ գործածուող եղանակը կամ միջոցները
- Թեխնիկ**, Technique, Արուեստի վերաբերեալ գիտութիւնը
- Թէկուզ**, Մինչեւ իսկ, եթէ նոյն իսկ

- Թեօլջի** (թուրք. **Թեօլզի**) Հարկի բաշխում, հարկաբաշխութիւն  
**Ժեռ**, ժայռ, կարծր (քարի նկատմամբ)  
**Ինտիմ**, Intim, ներքին, մտերմական  
**Ինտելիգէնտ**, Intelligent, Մտաւորական կեանք ունեցող, մտաւորական  
**Լալէ**, կակաչ  
**Լափին**, Ալիք. լափին տալով՝ ալիք բարձրացնելով  
**Օէգր**, ծագումը արեւի, արշալոյս, առաւօտուն կանուխ  
**Կատեգորիա**, Catégorie, Դաս, կարգ, կարգով դասաւորուած համայն-  
 ցեղ առարկաներու ամբողջութիւնը  
**Կարիէր**, Ասպարէզ (կեանքի)  
**Կիսար**, Այծեամ  
**Կոռ ու բէգեար**. Տարապարհակի հարկ. աւատապետական ապօրինի  
 տուրք որ կը վճարուի անձնական աշխատանքով  
**Կուռ**, Կուռներ, Թեւ (մարդու), Թեւեր  
**Կուչ գալ**, Կծկուիլ  
**Հօռօվէլ**, (Առաւել բառին աղաւաղումը) Կը նշանակէ վերջը հա-  
 սանք, աւարտեցաւ, խրախուսական բացագանչութիւն  
**Չիաբարօ**, Չիով քաշուած թրամվէյ  
**Ճրնի**, Որդ  
**Ճիպսի**, ճիպոտ, ճպտա  
**Ճիլուած**, ձգմուած, ջարդուած (կակուղ իրերու, օրինակ՝ պտուղնե-  
 րու մասին)  
**Մալադեց**, (Ռուս.) Իբրեւ դովասանական բացագանչութիւն՝ ապրի՛ս,  
 բառացի ըսել է՝ կտրիճ  
**Մադարէ**, (Թուրք.) Քարանձաւ, քարայր  
**Մարալ**, Եղնիկ  
**Մըուրնին կախած**, Խոժուադէմ, յօնքերնին կիտած (Մըուր  
 անել)  
**Մշակոյթ**, Culture, Մտքի միջոցով կատարուած մշակութիւն  
**Մոզայիկ**, Mosaïque, Երփներանգ խճերով նկարուած, խճանկա-  
 րութիւն  
**Մտանց անի**, Մոռնալ, մտքէ հանել  
**Նիմֆա**, Nymphe, Հին աղգերու մօտ՝ կիսաոտուածուհիներ, որոնք  
 կը մարմնացնէին բնութեան երեւոյթները՝ լեռները, ծովերը,  
 գետերը, անտառները, հովիտները, եւ ասոնցմէ ալ կը ստա-  
 յին իրենց մասնաւոր անունները (Նէրէիտ, Նայատ, Տրիատ եւն.)  
**Շրջկուիլ**, Ապշահարիլ, ապշութենէն քարանալ  
**Շըւաք**, Շուք, ստուեր  
**Շուռ տալ**, Դարձնել, միւս կողմ դարձնել

- Ուրբ**, (թուրք. եուրա) Երթիք, տուն, օճախ  
**Չուկ**, Լայն լայն բանալ  
**Պազայս**, (Լասին.) Երկաթաքար  
**Պազիլիք**, Հին յունական բառ, որ կը նշանակէ ա. թաղաւորական պա-  
 լատ, բ. ծածկուած շէնք դատաւարութեան համար, **Պ.** եկեղեցի:  
**Պակդէոն**, (Յոյն.) Հին ազգերու մօտ այն շէնքը, ուր կը դրուէին բո-  
 լոր աստուածներու արձանները, այն շէնքը՝ ուր կ'ամփոփուին,  
 մեր օրերուն մէջ, հայրենիքին մեծ ծառայութիւններ ընող  
 քաղաքացիներուն դամբարանները, ականաւոր մարդոց կեն-  
 սաւորութիւններու ժողովածու  
**Պնդոց**, Ամուր տեղեր, ամբողջիւններ  
**Պոկեյ**, **Պոկոսեյ**, Կտրել, փրցնել, փրցնել հանել  
**Պօէս**, Poète Պօէտ, բանաստեղծ  
**Ջահէլ**, Երիտասարդ, ծաղկահասակ  
**Ռեխ**, Երախ  
**Սիլուէթ**, Silhouette, Դիմաստուեր, երեսի մը շուքին պատկերը  
**Սկուիլ**, Սայթաքիլ  
**Սկի**, Երբեք, ամենեւին  
**Վասէ**, (թուրք.) Պայմանաժամ  
**Վասուս**, (Ռուս.) Կօշկաներկ, **Վասուս**՝ ներկուած (կօշիկ)  
**Վոքեյ**, թափել  
**Տապանակ**, Զարդարուն տուփ ուր կը դրուին սուրբի նշխարներ  
**Տափ**, Գետին  
**Տէր-ոգոսնա**, Համբիջ  
**Փօրթիք**, Portique, Անդաստակ, սիւնաղարդ նրբանցք  
**Քամէ**, Camée, Գունաւոր փոքր քար, որուն վրայ նրբօրէն քան-  
 դակուած են դէմքեր կամ ուրիշ դարձեր  
**Քարվանսարայ**, Պանդոկ, խան  
**Քէօխուէ**, Քէհեա, գիւղապետ  
**Օպէլիսկ**, Obelisque, Եգիպտական քարէ քառանկիւնի կոթող մեհե-  
 նագիր արձանաւորութիւններով:



Ն Ի Թ Ե Ր Ո Ւ Յ Ա Ն Կ

Հ Ա Յ Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Յ. ԱՐՁԱԿՆԵՐ

		Էջ
Յնարոնեան Աւետիս	Կենսագրական	51
» »	Արիւնտտ ԹԹխմոր	42
Ասատուր Հրանց	Կենսագրական	170
» »	Ծերուկ Մալթէզը	167
Արփարեան Արփիար	Կենսագրական	240
» »	Օրհնեալ դերդաստանը	228
Բաշայեան Լեւոն	Կենսագրական	151
» »	Նոր դգեստը	147
Բարսեղեան Գեղամ	Կենսագրական	197
» »	Գամ շինողները	195
Եսայեան Չապէլ	Կենսագրական	104
» »	Նպաստի օր մը	98
Ջարդարեան Ռուբէն	Այս գրքին նպատակը	5
» »	Պուտ մի ջուր	155
» »	Գրականութիւն	361
Չօհրապ Գրիգոր	Կենսագրական	28
» »	Մեղա՛յ Տէր	22
» »	Արփիար Արփիարեան	243
» »	Կոտրելէն ետքը	344
Քլիասինցի (Յ. Յար.)	Կենսագրական	203
» »	Ըսէ ինձի, ի՞նչ կայ	190
Խրիսեան Մկրտիչ	Կենսագրական	13
» »	Պապկէ պսակ	9
Հրանդ Մ. Կիրճեան	Կենսագրական	84
» »	Պանդուխտի կեանքէն	79
Մալուսեան Խ. (Ակնունի)	Կենսագրական	177
» »	Դէպի երկիր	173
Մալախեան	Գիտութեան վճիռները	214

Յովհ. Մ. Վարանդեան	Կենսագրական	76
» »	Հայ հերոսները	69
» »	Դէպի Պոմպէի	185
Շիրվանզաւէ	Կենսագրական	309
»	Արտիստը	304
Զօպանեան Արշակ	Կենսագրական	18
» »	Ես ի՞նչ ընեմ հոգիով	19
» »	Գրիգոր Նարեկացի	275
Պարոնեան Յակոբ	Կենսագրական	59
» »	Մկրտիչ Տիգրանեան	53
Սրուանձեանց Գարեգին	Կենսագրական	115
» »	Բինգէօլ	113
Րաճճի (Յ. Մելիք Յակոբեան)	Կենսագրական	127
» » »	Վանքը	121
Փափազեան Վրթանէս	Կենսագրական	135
» »	Մերի դէրվիշը	131
Օսեան Գրիգոր	Կենսագրական	225
» »	Կանալէթթա	221

**Բ. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ**

Աբովեան Խաչատուր	Կենսագրական	220
» »	Վաթանի երգեր	219
Ալիբեան Ղեկունդ	Կենսագրական	15
» »	Հուսնկան գերեզմանաց Հայոց	14
Աղայեան Ղազարոս	Կենսագրական	64
» »	Տորք Անգեղ	60
Ասատուր Զապէլ (Սիպիլ)	Կենսագրական	31
» »	Անցնելու մօտ	10
Դուրեան Եղիշէ	Կենսագրական	288
» »	Անառակը	286
» Պետրոս	Կենսագրական	162
» »	Տրտունջք	160
Եարնանեան Ա. (Սիամանթօ)	Կենսագրական	78
» »	Մօր մը երազը	77
» »	Գիւտին փառքը	357
Զարդարեան Ռուբէն	Աստուածներ	20
Թերզեան Թովմաս	Կենսագրական	213
» »	Իմ կեանքը	212

Թեֆէեան Վահան	Կենսագրական	300
» »	ԿՈՒԼԻ ԵՐԹ	299
Թուևանեան Յովհաննէս	Կենսագրական	41
» »	Անուշ	40
» »	Գուլթանի երգը	25
Իսահակեան Աւետիս	Կենսագրական	204
» »	Որսկան Աղբեր	203
Կուրղինեան Շուշանիկ	Կենսագրական	280
» »	Բանուորները	278
Մեծարենց Միսաք	Կենսագրական	242
» »	Ջրտուք	241
Յարութիւնեան Արսաշէս	Կենսագրական	144
» »	Վերջալուսային	143
Յովհաննէսեան Յ.	Կենսագրական	166
» »	Արագն եկաւ	166
Նալբանեան Միքայէլ	Կենսագրական	154
» »	Մանկուլթեան օրեր	152
Նարայէլ Խորէն	Կենսագրական	268
» »	Ծիծառնիկ	267
Որբերեան Ռուբէն	Կենսագրական	194
» »	Գիւղիս ճամբան	193
Զօպանեան Արշակ	Կովք	183
Զիւանի	Կուզան ու կ'երթան	227
Պասկանեան Ռ.	Կենսագրական	119
» »	Արաքսի արտասուքը	116
» »	Վանեցի գեղջուկի տաղը	256
Պէշկիթաշեան Մկրտիչ	Կենսագրական	179
» »	Քաջօրդ-Լոյն թաղումը	178
Պէշկէօթիւրեան Դ.	Կենսագրական	98
» »	Սրինգ	97
Սեդրոսեան Լ. (Շանթ)	Կենսագրական	247
» »	Գիշերապահը	246
Վարուժան Դանիէլ	Կենսագրական	69
» »	Կարմիր հողը	67
» »	Հայ ասպետներ	334
Տէմիրհիպաւեան Ե.	Կենսագրական	261
» »	Խօսք ընդ Աստուծոյ	259
Փանոսեան Ա.	Կենսագրական	172
» »	Հայոց արեւին	170



**Թ Ո Ւ Ր Ք Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն**

Ապսուլլան ճեվեթ	Կենսագրական	273
» »	Ազատութեան հերոսի մը	273
Թահսին Նահիս	Կենսագրական	347
» »	Լուսնին տակ	346
Թեվփիֆ Ֆիքեթ	Կենսագրական	130
» »	Զինորսները	129
Խալիս Զիա	Կենսագրական	333
» »	Օսման	329
Հիսուէյին Ճահիս	Կենսագրական	164
» »	Մանուկի մը	163
» »	Նաւաւարը	163
Ճենապ Շեհապէսսին	Կենսագրական	356
» »	Տիգրիս	351
Մահմուտ Էֆեւ	Կենսագրական	319
» »	Մահուան վաղորդայն	318
Մեհմէտ Էսին	Կենսագրական	184
» »	Զգէ՛, մի՛ շիներ	183
Մեհմէտ Բեուճ	Կենսագրական	302
» »	Գարնան անձրեւ	301
» »	Լուսինը	301
Սիւլէյման Նազիփ	Կենսագրական	343
» »	Հինգերորդ նամակ	339
Րիզա Թեվփիզ	Կենսագրական	320
» »	Անձայն գիշերներ	320

**Օ Տ Ա Ր Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն**

Ասամ Միցֆիէվիչ	Ալպուլսարա	65
Ասա Նէկրի	Ողջո՛յն ձեզ	145
Բիւլիս սը Շափան	Ի՞նչ է Արուեստը	180
Բիեր Լօթի	Հայոց երուսաղէմի վանքը	336
Ժան Կոալ	Ինչո՞ւ յեղափոխական ենք	269
Ժիւլ Լըսէթր	Եօթը քնացողներուն Բ. կեանքը	137
Ինկա Նալբանեան	Կենսագրական	266
» »	Պիլէօրնսթիլեռնը Պիլէօրնսօն	262
Իփոլիթ Թէն	Արդի արուեստին նկարագիրը	348

Լեռնոցնոյ	Մծերի	105
Լերրի Հօ	Երկու բնակարաններ	303
Լեռնիս Անտէիւ	Համբուրէ եւ Լուէ	321
Լեռն Տիւրքս	Հազարոս	257
Լեռն Գրափիէ	Մարտկոց	87
Լրճոնք սը Լիլ	Փիլիբրը	85
Լուդվիկ Ուլանդ	Երգչի անէծքը	310
Կոռոյէնկօ	Լոյսերը	285
Մելիցն (Եագուպովիչ)	Պայքարի երգեր	226
Մոնիս Մէթերլից	Մուսյլ ժամեր	52
Պերնար Լազար	Արնուտ դատաւորին պատահարը	288
Պուլկիցն	Կովկաս	136
Սիւլի Փրիւսով	Շղթաները	197
» »	Հոգեւարք	327
Տասեւէն Հ.	Անիի աւերակներուն վրայ	322
Օկիւսթ Ռօսէն	Խորհուրդը արուեստի մէջ	281
» »	Իրապաշտութիւնը արուեստի մէջ	313
Օսկար Ռայլս	Մահուան պատիժ	205
Ֆրէտրիք Փասի	Ազգերու համերաշխութիւնը	248


Վ Ր Ի Պ Ա Կ



Էջ	Տող	Սխալ	Ուղիղ
72	9 վարէն	grnade	grande
82	11 »	սանոմատի	սա նորատի
85	7 »	իրենց,	իրենց,
86	17 »	պատիճնին	պատիճնին
86	14 »	Մըշուշի պէս.	Մըշուշի պէս,
90	8 »	ոչխարը	ոչխարը
166	4 »	դարդ	դարդով
181	17 »	անարտայայտէ	անարտայայտ է
195	6 »	կ'իջնէ	կ'իջնէ
214	13 »	ուէր	ուէնէր
235	10 »	չէի վերջացներ	չէր վերջացներ
253	11 »	սա կա	սաիկա
277	25 »	անձնական	անանձնական
283	11 1 վերէն	Տոգիին	Տոգիէն
304	13 »	նսկ	իսկ
321	13 »	ինքը	(ջնջել)
323	3 վարէն	դիտեր	դիտեց
334	7 վերէն	զայն	զայս
334	8 »	թիկնոցի	թիկնոցին
335	8 »	խուժքի	կուժքի
347	1 վարէն	աւ	լաւ
357	17 »	անբան բաւիչ	անբաւ բաւիղ
366	10 »	Մահապամաթան	Մահապարաթան









“ԼՈՒՍԱՂԲԻՒՐ” ՀՐԱՏԱՐԱԿԶՍԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՍԱԸՆԹԱՑՔ

- Մեղրագես, Ա.** ԳԻՐՔ (*surrusliani zilpangf*), պատկերագարդ, 128 էջ. ունի նաեւ գունաւոր նկարներ. ԳԻՆ 4 ՂՐՈՒՇ
- Մեղրագես, Բ.** ԳԻՐՔ (*surrusliani zilpangf*), պատկերագարդ, 160 էջ. ունի նաեւ գունաւոր նկարներ. ԳԻՆ 5 ՂՐՈՒՇ
- Մեղրագես, Գ.** ԳԻՐՔ (*alshani zilpangf*), պատկերագարդ. 176 էջ եւ գունաւոր նկարներ. ԳԻՆ 5 1/2 ՂՐՈՒՇ
- Մեղրագես, Դ.** ԳԻՐՔ (*alshani zilpangf*), պատկերագարդ, 192 էջ եւ գունաւոր նկարներ. ԳԻՆ 6 ՂՐՈՒՇ
- Մեղրագես, Ե.** ԳԻՐՔ (*Ushusliani zilpangf* յերի երկու կարգերուն համար), 320 էջ. կը բովանդակէ հայ եւ օսար գրողներու բազմաթիւ նկարներ՝ իրենց համար օտ կենսագրութիւններով, ունի նաեւ գունաւոր նկարներ. ԳԻՆ 10 ՂՐՈՒՇ
- Մեղրագես, Զ.** ԳԻՐՔ (*Ushusliani zilpangf* յարժարաններու յատկ) Բ. *տպագրութիւն*. կը բովանդակէ հայ եւ օսար գրողներու նկարներ եւ ընդարձակ կենսագրականներ. ԳԻՆ 12 1/2 ՂՐՈՒՇ
- Բաներ, բաներ, ի՛նչ բաներ, Ա.** ԳԻՐՔ (*braghisliani zilpangf*), 7-9 տարեկան մանուկներու համար, նորութիւն մը՝ իր տեսակներուն մէջ եւ գունաւոր մանկական տպ շուկայով:

ՆԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ — ԳԻՐՎԱՏԵՏԵՍԱԿԱՆ

- Ներագործին Բարեկամք, Ա.** ԳՐԳՈՅԿ, կը ծանօթացնէ այն հիմնական գիտելիքներ՝ որոնք անհրաժեշտ են յայտնի գրողներու նկարներու ըմբռնումին համար:
- Ներագործին Բարեկամք, Բ.** ԳՐԳՈՅԿ՝ կուտայ հողին ուսումնասիրութիւնը, անոր կազմութիւնը, ժիզիքական, էմփիական եւ մանրէաբանական կրկին տեսակետով:

**ԼՈՒՍԱՂԲԻՒՐ ՀՐԱՏԱՐԱԿԶՍԿԱՆԸ** (ՕՆՆԻԿ-ԺԻՐԱՅՐ) կը ներկայանայ գլխաւոր կեդրոնաւանդին Պ. Գեորգ-Մետրոպի Հայոց Պատմութեան դասագրքներուն, որոնք արդէն հրատարակուած են: Հրատարակ ելած է նաեւ այս շաբթիւն *բարձրագոյն շնորհակալ* Ա. ԳԻՐՔԸ, — Բնական Պատմութեան Հայոց:

**ԼՈՒՍԱՂԲԻՒՐ ՀՐԱՏԱՐԱԿԶՍԿԱՆԸ** միակ կեդրոնաւանդին է նաեւ Պ. Փոքարեանի Մարդակազմութիւն դասագրքին, կարելի է բոլոր դպրոցներու համար:

Գիտել մեր հասցէին—Կ. Պոլիս, Ասմա Ալթը, ճամբը իսան N° 6-8